UNIVERSITA DELLO STATO DI EREVAN

DANTE ALIGHIERI

LA DIVINA COMMEDIA

Traduzione di ARPUN DAYAN

Terza edizione, riveduta

CASA EDITRICE UNIVERSITA' DELLO STATO DI EREVAN

EREVAN—1983

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴԱՆՏԵ ԱԼԻԳԻԵՐԻ

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Թարգմանիչ ԱՐԲՈՒՆ ՏԱՅԱՆ

Երրորդ, բարեփոխված հրատարակություն

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1983

ԳՄԴ 84.4Իտ
Դ 181

«Ուսանողի գրադարան» մատենաշարի
խմբագրական հանձնաժողով.
ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Ս. Ա. (նախագահ), ԱՂԱՅԱՆ Է. Բ.,
ԱՆԱՆՅԱՆ Գ. Գ., ԹԱՄՐԱԶՅԱՆ ՀՐ. Ս., ՂԱԶԱՐՅԱՆ Հ. Մ.,
ՄԿՐՏՉՅԱՆ Լ. Մ.

Դանտե, Ալիգիերի.

Դ 181 *Աստվածային կատակերգություն /Թարգմ.՝ Ա. Տայան.— 3-րդ, բարեփոխ. հրատ.— Եր.։ Երևանի համալս. հրատ., 1983.— 600 էջ.— (Ուսանողի գ-րան/Երևանի պետ. համալս.).*

Վերածննդի իտալացի մեծ բանաստեղծի հանճարեղ ստեղծագործությունը վերահրատարակվում է նոր բարեփոխումներով։

Նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար։

4703020000—10
29—1982
704(02)—1982

ԳՄԴ 84.4Իտ
Ի (իտալ.)

ДАНТЕ АЛИГЬЕРИ

БОЖЕСТВЕННАЯ КОМЕДИЯ

(На армянском языке)

Издательство Ереванского университета
Ереван—1983

© *Երևանի համալսարանի հրատարակչություն, թարգմանչի համար, 1983*

ԴԺՈԽՔ՝

ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

Կ

իսաճամփին մեր այս կյանքի ճախրնթաց
Ես կորցրրի ճանապարհը ճշմարիտ
Եվ ինձ գտա մի անտառում մթամած:

4 Օ՜, դժվար է արտահայտել, թե որքան
Վայրի, դժնի ու մռայլ էր անտառն այդ.
Պակուցիչ է հիշելն անգամ սոսկական:

7 Նա դառնաշունչ ու աճեղ էր մահվան պես.
Բայց ցույց տալու համար բարիքն իմ գտած՝
Կպատմեմ, թե ինչեր տեսա այնտեղ ես:

10 Չգիտեմ, թե ինչպես մտա ես այնտեղ,
Այնքան էի քնաթաթախ այն պահին,
Երբ բաց թողի ճամփան ուղիղ ու անշեղ:

13 Բայց երբ հասա ստորոտը մի լեռան,
Ուր փակվում էր այն հովիտը չարաշուք,
Որ իմ սիրտը ահաբեկել էր այնքան,

16 Վեր նայեցի և տեսա, որ գագաթն իր
Ծողերով էր արդեն պատած արևի,
Որ լուսեղեն ուղեցույց է անպատիր։

19 Այնժամ մի քիչ մեղմեց սոսկումն իմ խորին,
Որ իմ սրտի խոռոչում էր լճացել
Իմ անցկացրած անդոհալի գիշերին։

22 Եվ ինչպես նա, ով հևհևուն ու թասուն,
Ծովից դեպի ծովեզերքը նետվելով,
Նայում է ետ՝ ալիքներին փոթորկուն,

25 Այսպես հոգիս, որը տալիս էր դեռ խույս,
Դարձավ ետև՝ նայելու այն անտառին,
Ուրկից ոչ ոք դուրս չի եկել անկորույս։

28 Երբ քիչ հանգիստ տվի մարմնիս հոգնաբեկ,
Ճամփա ընկա դեպի բարձունքն ամայի,
Հենվելով միշտ իմ պինդ ոտի վրա մեկ։

31 Եվ ահա ճիշտ իմ վերելքի սկզբին,
Թեթևաշարժ ու ժիրաժիր մի հովազ,
Որ պատված էր պիսակներով երփներփին,

34 Դեմըս ելավ ու չթողեց բարձրանալ,
Այլ մանավանդ ճամփաս այնպես խափանեց,
Որ քանիցըս ես ուզեցի ետ դառնալ։

37 Նախաժամն էր արշալույսի վաղորդյան,
Եվ արևն այն աստղերի հետ էր ծագում,
Որոնց հետ էր այնժամ, երբ Սերն աստվածյան

40 Շարժում տվեց մարմիններին գեղատես։
Գտնելով պահն ու եղանակն հուսալի,
Արդեն այնքան երկյուղ չէի զգում ես։

43 Այն գազանից պատած մորթով գայլազգայն.
Բայց ես նորից համակվեցի սոսկումով,
Երբ երևաց ինձ մի առյուծ հանկարծույն:

46 Սա կարծես թե իմ վրա էր հարձակվում,
Աճիպարան ու մոլեգին կեցվածքով,
Որից օդն իսկ սարսափահար էր թվում:

49 Նույն պահին ես տեսա մի գայլ էգ ու չոր,
Որ սովահար ու անհագ էր երևում
Եվ շատերի կյանքն էր դարձրել տանջավոր:

52 Սա ինձ այնքան պատճառ դարձավ խռովքի
Քստմնելի ու ահռելի իր տեսքով,
Որ ես արդեն կորցրի հույսը վերելքի:

55 Եվ ինչպես նա, ով դիզում է անընդհատ,
Բայց երբ հանկարծ իր ձեռք բերածն է կորցնում,
Տխրում է և իրեն զգում հույժ վհատ,

58 Այսպես վհատ ինձ զգացի, հիրավի,
Երբ գայլը ինձ ետ էր քշում դեպ այնտեղ,
Ուր շողերը չեն թափանցում արևի:

61 Մինչ ես դեպի հովիտն էի թավալվում,
Իմ աչքերին ներկայացավ մի հոգի,
Որը վաղուց ի վեր լռած էր թվում:

64 Տեսնելով այդ ամայության մեջ նրան,
Ես գոչեցի. «Ողորմիր ու փրկիր ինձ,
Իրական մարդ դու լինես, թե ուրվական»:

67 Պատասխանեց. «Մարդ չեմ արդ, մարդ եղել եմ.
Ես սերել եմ ծնողներից լոմբարդցի
Եվ ծնվել եմ Մանտովայում աննսեմ.

70 Ծնվել եմ ուշ, օրոքն Հուլիոս Կեսարի,

Ապրել Հռոմում Օգոստոսի շուքի տակ,
Երբ դեռ կային սուտ աստվածներն ազգերի:

73 Եղա պոետ և երգեցի փառքն անանց
Անքիսորդու, որ հեռացավ Տրոյայից,
Երբ հրկիզվեց Իլիոնը սիգապանծ:

76 Բայց դու ինչո՞ւ վայրն ես գնում տանջանքի,
Ինչո՞ւ համար չես ելնում լեռն հեշտավետ,
Որ սկիզբն է, պատճառն ամեն բերկրանքի»:

79 Ես պատասխան տվի դեմքով պատկառուն.
«Դո՞ւ ես Վիրգիլն և այն աղբյուրը, ուրկից
Պերճ խոսքերի գետ է հորդել լայնահուն:

82 Օ՜, դու բոլոր պոետների փառք ու լույս,
Արժեն սերն ու տքնությունը հարատև,
Որով հատորդ վերծանեցի խորասույզ:

85 Դու ես վարպետս ու հեղինակս իմ երեց.
Դու ես լոկ նա, որից էլ ես ստացա
Գողտրիկ ոճը, որը պատիվ ինձ բերեց:

88 Տես գազանը, որ ճամփաս է խափանում,
Օգնիր ինձ, ո՛վ հոչակավոր իմաստուն,
Նա իմ բոլոր մարմինը դող է հանում»:

91 Պատասխանեց ի տես իմ մեծ երկյուղի.
«Եթե կուզես պրծնել հովտից այս մռայլ,
Պետք է ընտրես բոլորովին այլ ուղի.

94 Քեզ չարչարող այդ գայլ-գազանը դժնյա
Ոչ ոքի չի թողնում անցնել իր ճամփով
Եվ տեսածին սպանում է անխնա:

97 Նա բնությամբ այնքան չար է, գարշելի,
Որ խժռելով չի հագենում երբևէ

Եվ լափելուց հետո քաղցում ավելի։

100 Մարդիկ շատ կան, որոնց է նա կպչում հար,
Եվ ավելի կշատանան, մինչև որ
Քերծեն գա ու նրան մեռցնի չարաչար։

103 Սա ոչ հողով, ոչ մետաղով կսնվի,
Այլ պատիվով, իմաստությամբ ու սիրով.
Նա Ֆելտրի և Ֆելտրի միջև կծնվի։

106 Նա կփրկի ստորանկյալ Իտալիան,
Որի համար զոհ գնացին կարեվեր
Տուռնոն, Նիսոն, Էվրիալն ու Կամիլլան։

109 Նա կվանի գայլին ամեն քաղաքից,
Մինչև նորից Դժոխքի խորքը խրի,
Ուրկից դուրս էր եկել մղված մախանքից։

112 Արդ ի խնդիր քո փրկությանն ապահով՝
Հետևիր ինձ, քեզ կլինեմ առաջնորդ
Ու կանցկացնեմ հավերժական կայանով։

115 Անդ կլսես անհույս ճիչեր ցավագին
Եվ կտեսնես հին հոգիներ տանջահար,
Որոնք երկրորդ մահ են տենչում անձկագին.

118 Ապա նրանց, որ տանջվում են հաճույքով
Կրակի մեջ, զի հույս ունեն, որ մի օր
Կհամբառնան երանելի հոգվոց քով։

121 Իսկ սրանց մոտ եթե ելնել փափագես,
Կա ինձանից արժանավոր մի հոգի,
Որին պիտի հեռանալիս հանձնեմ քեզ.

124 Քանզի կայսրը, որ գերիշխանն է երկնի,
Չի կամենա իմ մուտքը իր քաղաքում,
Զի ես չեղա իր օրենքին ընտանի։

127 Նա ամենուր տեր է, երկնում՝ տիրական.
Նրա քաղաքն ու գահույքը այնտեղ են.
Երջանիկ է նա, ով դառնում է ընտրյալ»:

130 Եվ ես նրան. «Հայցում եմ քեզ, ո՛վ պոետ,
Հանուն Աստծու, որին դու չես ճանաչել,
Ազատիր ինձ այս վիճակից չարաղետ.

133 Տար ինձ այնտեղ, որի մասին խոսեցիր,
Որ ես տեսնեմ դարպասը սուրբ Պետրոսի
Եվ նրանց, որ ներկայացրիր տանջակիր»:

136 Այնժամ շարժվեց, և ես հետքով գնացի:

ԵՐԳ ԵՐԿՐՈՐԴ

Օրն անցել էր, և օդն արդեն մթնշաղ
Հանգչելու էր հրավիրում աստվորաց.
Ապրողներից լոկ ես էի անխաղաղ,

4 Որ պատրաստվում էի պայքար մղելու
Այն կրկնակի դժվարությանց դեմ, որոնք
Ես կպատմեմ հետո առանց թյուրելու:

7 Արդ ինձ օգնեք, ո՛վ Մուսաներ, ո՛վ հանճար,
Տեսածներդս արձանագրած ո՛վ իմ միտք,
Աստ կերևա ազնվությունդ անաչառ:

10 Ես դիմեցի. «Ո՛վ բանաստեղծ առաջնորդ,
Զեռնարկելուց առաջ քայլը այդ դժվար,
Տես, թե ունե՞մ բավական ուժ անհողդողդ:

13 Դու ասում ես Սիլվիոսի հոր մասին,
Որ նա գնաց անմահ աշխարհն հանդերձյալ,
Մահկանացու մարմնից չելած տակավին:

ԱԱ

16 Սակայն եթե Արարիչը չարատյաց
Շնորհ արեց նրան, ապա, երբ խորհենք,
Թե ով էր նա և ինչի էր սահմանված,

19 Խելոք մարդուն այդ չի թվա անպատեհ.
Չի երկնքում նա ընտրվեց նախահայր
Ե՛վ Հռոմի՝, և՛ կայսրության նրա վեհ։

22 Այս երկուսը հաստատվեցին, որպեսզի
Պատրաստեն տեղն այն գահույքի սրբազան,
Ուր փոխանորդն է նստում մեծ Պետրոսի։

25 Նա այդ այցով քո տաղերգած՝ բավական
Բաներ լսեց, որ դարձան հիմք ու պատճառ
Իր հաղթության և ծիրանուն պապական։

28 Ապա այնտեղ գնաց Անոթն Ընտրության
Ներզորություն բերելու այն հավատին,
Որ սկիզբն է ճանապարհի փրկության։

31 Իսկ ես ինչո՞ւ, ո՞ւմ շնորհիվ այնտեղ գամ.
Ես ոչ Էնեաս, ոչ առաքյալ Պողոսն եմ.
Ես այդ պատվին արժանի չեմ էլ անգամ։

34 Եթե ես քո առաջարկը ընդունեմ,
Վախենում եմ, որ խոլություն ինձ թույլ տամ.
Հասկացիր ինձ, դու խելոք ես ու խոհեմ»։

37 Եվ ինչպես նա, ով իր ուզածը հանկարծ
Է՛լ չի ուզում և, իր միտքը փոխելով,
Իսպառ ետ է կանգնում գործից ձեռնարկած,

40 Այսպես արի ես այն լանջի վրա մութ.
Չի վարանոտ՝ ետ կացա այն ձեռնարկից,
Որ սկզբում ես հանձն առա այնքան շուտ։

43 Այնժամ ասաց առաջնորդը մեծարգո.

«Եթե ես քո խոսքերը լավ հասկացա,
Երկչոտությամբ է պաշարված հոգին քո.

46 Դա շատ հաճախ այնպես ընկնում է մարդուն,
Որ խզում է նրան ազնիվ ձեռնարկից,
Ինչպես շուքն է խրտնեցնում կենդանուն:

49 Որպեսզի դու այդ երկյուղից ազատվես,
Կասեմ ինչու եկա և ինչ լսեցի,
Որի համար ես վշտացա խորապես:

52 Կանգնել էի հոգիների մեջ առկախ,
Երբ ինձ կանչեց մի կին այնքան գեղեցիկ,
Որ ուզեցի նրան լսել անհապաղ:

55 Ծողում էին աչքերն ինչպես վառ աստղեր.
Նա մեղմանուշ, հրեշտակային ձայնիկով
Սկսեց ոգել այս խոսքերը համոզկեր.

58 «Ո՛վ մանտուացի ազնիվ հոգի, հիրավի,
Որի փառքը դեռ տևում է աշխարհում
Եվ կտևի որքան աշխարհը տևի.

61 Իմ սիրելին, բայց ոչ բախտի սիրելին,
Ճանապարհին այնքան արգելք է տեսել,
Որ երկյուղից ետ է դարձել տրտմագին:

64 Վախենում եմ, նա այնքան է մոլորվել,
Որ, դատելով նրա մասին լսածից,
Նրան ուշ եմ ես օգնության դուրս եկել:

67 Արդ դու գնա և խոսքերով քո խոհեմ,
Եվ ինչով որ հարկ է նրան փրկելու,
Օգնիր նրան, որպեսզի ես սփոփվեմ:

70 Բեատրիչեն եմ ես, որ քեզ հղում եմ.
Ես եկել եմ գրգարանից երկնային.
Սերն ինձ մղեց, որ այստեղ գամ ու խոսեմ:

73 Երբ ես նորից իմ Տիրոջ մոտ համբառնամ.
Քեզ բազմիցս պիտի գովեմ նրա մոտ»:
Ի պատասխան բարբառեցի ես այնժամ.

76 «Ո՛վ բարի ու առաքինի կին երկնի,
Որով մարդը վսեմանում է հոգով
Ավելի քան ամեն էակ կենդանի.

79 Քո հրամանն այնքան է ինձ հաճելի,
Որ կաշխատեմ այն կատարել անհապաղ.
Հարկ չկա, որ կամքդ հայտնես ավելի:

82 Բայց դու ինչո՞ւ չես վախեցել իջնելու
Խորխորատն այս այն երկնքից լայնարձակ,
Ուր դառնալու փափագով ես այրվում դու»:

85 «Քանի որ դու այդքան ուզում ես գիտնալ,—
Պատասխանեց,— կարճ խոսքերով քեզ կասեմ,
Թե ես ինչու չեմ վախենում այստեղ գալ:

88 Պետք է միայն այն բաներից վախենալ,
Որ կարող են թաքուն վնաս հասցրնել,
Մյուսներից երկյուղ պետք չէ ունենալ:

91 Արարիչը ինձ այնպես է ստեղծել,
Որ չի դիպչում ինձ ձեր վիճակը տխուր,
Եվ չի կարող Դժոխքի հուրն ինձ խանձել:

94 Երկնքում կա մի կին ազնիվ ու բարի,
Որ գթալով տառապյալին մոլորյալ,
Բեկանում է խիստ դատաստանը վերի:

97 Սա Լուչիային կանչեց իր մոտ և ասաց.
— Հավատարիմդ օգնությանն է քո կարոտ,
Քեզ եմ նրան հանձնարարում առ ի տած:—

100 Լուչիան, ամեն անգթության թշնամի,

Վեր կացավ և եկավ այնտեղ, որտեղ ես
Նստել էի Հոաքելի հետ հնամի,

103 Եվ ինձ ասաց,— Բեատրիչե, գովք անմար,
Ինչո՞ւ համար չես օգնում քեզ սիրողին,
Որ ամբոխից վեր բարձրացավ քեզ համար:

106 Չե՞ս լսում դու նրա ճիչերն արցունքի,
Չե՞ս տեսնում մահն, որի դեմ է նա կռվում
Հեղեղատում իր կրքերի հորձանքի:—

109 Ոչ ոք այնպես չի փութացել իր շահին,
Կամ վնասից խույս չի տվել, ինչպես ես,
Երբ լսեցի այդ խոսքերը Լուչիայի.

112 Իջա այստեղ իմ գահույքից երկնային,
Վստահելով քո խոսքերին խելացի,
Որ պատիվ է բերում քեզ և լսողին»:

115 Երբ նա ինձ հետ այսօրինակ բարբառեց,
Արտասվափայլ աչքերն ուղղեց առ երկինք,
Եվ դա իմ գալն էլ ավելի փութացրեց:

118 Այսպես եկա, ինչպես նա էր փափագել.
Քեզ փրկեցի այն գազանից ամեհի,
Որ լեռն ի վեր քո կարճ ճամփան էր փակել:

121 Ուրեմնն ի՞նչ, էլ ինչո՞ւ ես առել կանգ,
Ինչո՞ւ սիրտդ սնուցում ես երկյուղով,
Ինչո՞ւ չունես արիություն, տոկուն կամք,

124 Երբ քո մասին երեք կանայք երանիկ
Հոգ են տանում արքունիքում երկնային,
Եվ երբ ես քեզ խոստանում եմ շատ բարիք»:

127 Ինչպես ցայգի ցրտից բեկված ու փակված
Ծաղիկները հենց որ արև են տեսնում,
Ցողունների վրա ցցվում են բացված,

130 Այսպես ոգի առավ կորովն իմ կաշկանդ.
Եվ ես այնքան տոգորվեցի եռանդով,
Որ ասացի ինչպես մի մարդ անվկանդ.

133 «Օ՛ գթած կին, որ օգնությանն ինձ փութաց.
Իսկ դու ազնիվ, որ անսացիր անհապաղ
Նրա ազդին ճշմարիտ ու հոգատած:

136 Քո խոսքերով ես այնքան եմ խթանվել,
Եվ այնքան եմ քեզ հետևել ցանկանում,
Որ ես ոչ մի առարկություն չունեմ էլ:

139 Հիմա քայլիր, երկուսով մի կամք ունենք.
Դու առաջնորդ, դու տեր, և դու ուսուցիչ»:
Այսպես նրան ես ասացի, ապա մենք

142 Մեկտեղ մտանք ուղին խուլ ու սարտուցիչ:

ԵՐԳ ԵՐՐՈՐԴ

ԻՆՁԱՆՈՎ ԵՆ ԳՆՈՒՄ ԳԵՀԵՆՆ ԱՀԱՎՈՐ,
ԻՆՁԱՆՈՎ ԵՆ ԳՆՈՒՄ ՀՈԳՎՈՑ ՀԱՐԱՏԱՆՁ,
ԻՆՁԱՆՈՎ ԵՆ ԳՆՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ ԱԽՏԱՎՈՐ:

4 ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՁՆՈՐԴԵՑ ԱՐԱՐՉԻՍ.
ԻՆՁ ՀԱՍՏԵՑԻՆ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՐԱԳՈՒՅՆ,
ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՀ ԵՎ ՍԵՐՆ ԱՌԱՁԻՆ:

7 ԻՆՁՆԻՑ ԱՌԱՁ ՍՏԵՂԾՎԵԼ ԵՆ ՄԻՄԻԱՅՆ
ՀԱՎԵՐԺ ԳՈՅԵՐՆ, ԵՎ ԵՍ ՀԱՎԵՏ ԿՏԵՎԵՄ:
Ո՛Վ ՄՏՆՈՂՆԵՐ, ԹՈՂԵՔ ՁԵՐ ՀՈՒՅՍԸ ՀԱՄԱՅՆ:

10 Մոայլ գույնով գրված խոսքերն այս անանց
Կարդալով մի դռան վերև՝ ասացի.
«Վարպետ, ինչքան իմաստն աճեղ է դրանց»:

13 Նա, խորագետ, պատասխանեց ինձ իսկոյն.
«Այստեղ հարկ է մեկ կողմ թողնել ամեն աճ.
Այստեղ հարկ է լինել հոգով անկկուն:

16 Ես ասացի, որ կհասնենք այնտեղ, ուր
Դու կտեսնես բազմաչարչար հոգիներ,
Որ կորցրել են մտքի բարիքը մաքուր»:

19 Ապա զվարթ դեմքով, որ ինձ հուսադրեց,
Նա իր ձեռքը երկարելով իմ ձեռքին,
Խորհրդավոր, անհայտ աշխարհն ինձ մտցրեց:

22 Անդ հառաչներ, հեծեծանքներ, ճիչեր սուր
Հնչում էին աստեղազուրկ այրերում,
Որոնց ի լուր արտասվեցի ես նախ լուռ:

25 Ամեն լեզվով գոչեր, ահեղ հայհոյներ,
Ցավի կանչեր և մռունչներ մոլեգին,
Ջիլ ու նվաղ ձայներ, ձեռքի շաչյուններ

28 Կազմում էին աղմկահույզ մի ժխոր,
Որ շարունակ պտտվում էր մութ օդում,
Ինչպես ավազ՝ հուզված հողմից մեծազոր:

31 Գլուխս այդ արհավիրքով պաշարված՝
Ես հարցրի. «Այդ ի՞նչ ճիչեր են, վարպե՞տ,
Այդ ովքե՞ր են տանջանքների մատնված»:

34 Եվ նա ասաց. «Այս վիճակը առանձին
Ունեն ճղճիմ հոգիները այն մարդկանց,
Որոնք անգով և անպարսավ ապրեցին:

37 Նրանց հետ է հրեշտակների դասն այն վատ,
Որ Աստծուն ոչ դեմ եղավ, ոչ էլ թեր,
Այլ պայքարում մնաց չեզոք ու անջատ:

40 Երկինքն ի բաց վանեց նրանց, իբրև բիծ.

Ոչ էլ նրանց խոր Դժոխքն է ընդունում,
Որ նրանց մոտ չպարծենա հոգին պիղծ»։

43 Եվ ես. «Վարպե՛տ, ի՞նչ անձկություն հատկապես
Նրանց այդպես ուժգին հեծել է տալիս»։
Պատասխանեց. «Ես համառոտ կասեմ քեզ։

46 Նրանք չունեն ամենևին հույս մահվան,
Եվ այս կյանքը այնքան նվաստ են գտնում,
Որ խանդում են ուրիշ ամեն կացության։

49 Նրանք երկրում աննիշատակ մնացին.
Բարձրյալն անգամ արհամարհում է նրանց.
Նրանց մասին լռենք, նայիր ու անցիր»։

52 Եվ, նայելով, հեռվում տեսա մի դրոշ,
Որ հիո գալով սլանում էր սրընթաց,
Եվ կարծես թե չուներ կայան մի որոշ։

55 Հետևում էր հոգիների մի շարան
Այնքան երկար, որ դժվար էր հավատալ,
Թե մահն այդքան լայն դուռ ունի ու դարան։

58 Երբ ես ոմանց ճանաչեցի նրանցից,
Նկատեցի, տեսա ստվերը նրա,
Որ վատությամբ հրաժարվեց մեծ գործից։

61 Իսկույն ևեթ ես իմացա ճշտորեն,
Որ դա խումբն էր հոգիների փոքրոգի,
Որ ոչ Աստծուն, ոչ դևերին հաճո չեն։

64 Անարգներն այս, որ չունեցան կենտուղի,
Մերկ էին և խայթվում էին հարաժամ
Գոռեխներից ու բոռերից այնտեղի։

67 Միշտ արյուն էր հոսում նրանց դեմքերից,
Եվ արյունը, արցունքի հետ շաղախված,

Թափվում էր ցած ու ծծվում պիղծ որդերից:

70 Եվ երբ մի քիչ ես նայեցի անդրագույն,
Տեսա մարդիկ մի մեծ գետի եզերքին:
«Վարպե՛տ, ասա,— վրա բերի ես իսկույն,—

73 Այդ ովքե՞ր են, և ի՞նչ ուժով կամ հույսով
Շտապում են նրանք անցնել այդտեղից,
Ինչպես ահա նշմարում եմ թույլ լույսով»:

76 Եվ նա ասաց. «Այդ դու ինքդդ կտեսնես,
Երբ քայլ առ քայլ մոտենանք ու կանգ առնենք
Գետի ափին Ախերոնի տխրատես»:

79 Վախենալով, որ հարցերով ընդունայն
Կպատճառեմ նրան ձանձրույթ ու տաղտուկ,
Լուռ մնացի, մինչև որ գետն հասանք այն:

82 Եվ մակույկով ահա դեպ մեզ գալիս էր
Գիսախոիվ ու ալեհեր մի ծերուկ,
Գոչելով մեզ. «Վա՛յ ձեզ, անարգ հոգիներ.

85 Երկինք տեսնել ամենևին մի հուսաք.
Ես գալիս եմ ձեզ տանելու ափը մյուս,
Հավերժական խավարի մեջ ցուրտ ու տաք:

88 Իսկ դու, հոգի՛ կենդանի, որ այդտեղ ես,
Շուտ հեռացիր մեռյալներից այս բոլոր»:
Բայց երբ տեսավ, որ տեղից չեմ շարժվում ես,

91 Հարեց. «Այստեղ ճամփա չկա քեզ համար.
Տարանցելու համար պետք է դու գտնես
Այլ նավակալք և այլ նավակ քեզ հարմար»:

94 Վարպետս ասաց. «Քարոն շատ մի զայրագնիր.
Այդ են կամում անդ, ուր կարող են անել
Ինչ որ կամին: Էլ ուրիշ բան մի՛ հարցնիր»:

97 Այս խոսքերից փուքը իջավ համրորեն
Թավամորուս նավավարի, որ ուներ
Աչքերի շուրջ շրջանակներ բոցեղեն:

100 Երբ հուսաբեկ հոգիները լսեցին
Անհագորույն այն խոսքերը Քարոնի,
Գունատվեցին և ատամներ կրճտեցին:

103 Անիծեցին Աստուծուն և մարդկության,
Ժամանակն ու տեղը, որում ծնվեցին,
Պատճառն իրենց ծագման, իրենց գոյության:

106 Ապա, լալով, բոլորը մեկ խռնվեցին
Գետի ափին, որ սպասում է նրան,
Ով Աստուծուց երկյուղ չունի բնածին:

109 Ոլորելով իր աչքերը զայրագին,
Դև Քարոնը համախմբում է նրանց
Եվ թիակով զարնում դանդաղ շարժվողին:

112 Աշնանն ինչպես տերևները ծառերի
Մեկիկ-մեկիկ ցած են թափվում, մինչև որ
Հողն ընդունի ողջ պճնանքը ճյուղերի,

115 Այսպես հոռի սերունդները Ադամի,
Ցանցում բռնված թռչունների նմանակ,
Նետվում էին նավակի մեջ մի առ մի:

118 Մռայլ գետով անհա առաջ են շարժվում,
Եվ չհասած հանդիպակաց ափը դեռ,
Այս կողմ ուրիշ մի նոր խումբ է հավաքվում:

121 «Որդյա՛կ,— ասաց բարեհամբույր վարպետս ինձ,—
Նրանք, ովքեր մեղքերի մեջ են մեռնում,
Հավաքվում են այստեղ ամեն մի երկրից.

124 Եվ փութկոտ են նրանք գետով անց կենում,
Զի Աստուծո դատաստանը այնպես է
Նրանց խթում, որ վախն իրՁի է փոխվում:

127 Բարի հոգուն չի կարելի այստեղ գալ,
Եվ Քարոնը եթե քո դեմ զայրացավ,
Դու կարող ես նրա միտքը հասկանալ»:

130 Հենց որ լռեց, խորխորատը խավարչտին
Այնպես ցնցվեց, որ, երբ հիշում եմ ես այն,
Իմ սարսափից դեռ քրտնում եմ տենդագին:

133 Մի փոթորիկ ծագեց հովտում արտոսրի,
Ապա մի լույս փայլատակեց այնպես վառ,
Որ ես ամեն զգայություն կորցրի.

136 Եվ քնահար մարդու նման ընկա վար:

ԵՐԳ ՀՈՐՈՐԴ

Մի թունդ որոտ խզեց քունը ծանրացած,
Եվ ես ընդոստ սթափվեցի ակամա,
Ինչպես մի մարդ բռնի կերպով արթնացած:

4 Վեր կենալով՝ ես իմ աչքերը հանգչած
Շուրջ հածեցի և սևեռուն նայեցի,
Իմանալու թե ուր էի ես ընկած:

7 Եվ ահա ես ինձ գտնում եմ եզերքին
Արհավրալի ու ահալի անդունդի,
Ուրկից ճիչեր էին պոռթկում ցավագին:

10 Այնտեղ այնքան խորունկ, մթար ու մառ էր,
Որ ինչքան էլ հայացքս ներս սուզեի,
Ես ոչ մի բան չէի կարող նշմարել:

13 «Արդ մենք իջնենք դեպի աշխարհը անլույս,
Ես առջևից, դու ետևից կընթանանք,—
Ասաց պոետն համակ դալկուն և ի հույզ:

16 Նկատելով գույնն իր փոխված՝ ասացի.
«Ես ինչպե՞ս գամ, երբ դու երկյուղ ես զգում,
Դու, որ միակ իմ ձեցուկն ես առնացի»:

19 «Տանջանքն անձանց, որ ցածում են գտնվում,
Դեմքիս վրա մի դալկություն է սփռել,—
Պատասխանեց,— որ քեզ աչից է թվում:

22 Այժմ շտապենք, քանզի երկար է ուղին»:
Այսպես մտավ և այսպես ինձ մտցրեց
Վիճը պատող պարունակը առաջին:

25 Այնտեղ, որքան կարողացա լսել ես,
Լաց-կոծ չկար, այլ կար միայն հառաչանք,
Որ հուզում էր հավերժ օդը մշտապես:

28 Դա այն անվիշտ տվայտանքից էր անանց,
Որ կրում էր բազմությունը անհամար
Մանուկների, տղամարդկանց և կանանց:

31 «Չես հարցնում, թե ի՞նչ հոգիներ են սրանք,—
Ասաց վարպետս:— Արդ դու նախքան մեր
ճամփան
Շարունակելն հասու եղիր, որ նրանք

34 Չեն մեղանչել, չեն էլ փրկվել հավատի,
Քանզի նրանք մկրտություն չստացան,
Որը մասն է քո դավանած հավատի:

37 Իսկ նրանք, որ նախքան Քրիստոսն ապրեցին,
Պատշաճորեն չպաշտեցին Աստուծուն,
Ես ինքս էլ պատկանում եմ այդ դասին:

40 Մենք այստեղ ենք այս թերությանց պատճառով,
Եվ ոչ ուրիշ, և մեր վիշտը այն է լոկ,
Որ ապրում ենք երկնի անհույս տենչանքով»:

43 Ես իմ սրտում ցավ զգացի դժնդակ,
Երբ իմացա, որ շատ անձինք մեծարժեք
Լիմբոսի մեջ ունեն առկախ մի վիճակ։

46 «Ասա ինձ, տե՛ր, ասա, վարպե՛տ թանկագին,—
Ասացի ես, որ ես վստահ լինեմ միշտ
Ամեն կասկած հաղթահարող հավատքին,—

49 Մեկն այստեղից ելա՞վ աշխարհն երանյալ՝
Իր կամ այլոց արժանիքի շնորհիվ»։
Կռահելով նա խոսքերն իմ քողարկյալ,

52 Պատասխանեց. «Ես նոր էի ասա եկած,
Երբ տեսա, որ այստեղ իջավ մի Հզոր,
Հաղթանակի սուրբ խաչվառով պսակված։

55 Նա այստեղից դուրս բերեց մեր նախահոր,
Եվ Աբելին, նրա որդուն, և Նոյին,
Եվ Մովսեսին-տեր ու ծառա պատվավոր.

58 Աբրահամին և թագավոր Դավիթին,
Իսրայելին և նրա հորն ու որդվոց,
Եվ Հռաքելին, սիրված սիրով կաթոգին.

61 Եվ շատերի, որոնց հասցրեց նա փառքի։
Պետք է գիտնաս, որ անձերից այս առաջ
Չէր փրկված մարդկային ոչ մի հոգի»։

64 Այսպես էր նա խոսում առաջ շարժվելով,
Եվ մենք այսպես գնում էինք ու անցնում
Բազմահազար հոգիների հոծ ցանցով։

67 Դեռ շատ չէինք հեռացել մենք վիհեզրից,
Երբ ես հանկարծ տեսա մի լույս հրեղեն,
Որ ցրում էր մի որոշ մաս խավարից։

70 Թեև լույսից հեռու էինք բավական,
Բայց ես արդեն կռահեցի, որ տեղն այդ
Սահմանված էր անձանց համար պատվական:

73 «Օ՜, գիտության և արվեստի ջատագով,
Այդ ովքե՞ր են, որ հարգ ունեն այդքան մեծ
Եվ մյուսներից տարբերվում են վիճակով»:

76 Պատասխանեց. «Անունն իրենց փառապանծ,
Որ հնչում է ամենուրեք աշխարհում,
Այդ պատվին է արժանացնում հենց նրանց»:

79 Այդ միջոցին ինչ-որ մի ձայն ես առա.
«Պատիվ տվեք բանաստեղծին վեհագույն:
Ահա ետ է դառնում ստվերը նրա»:

82 Եվ ես տեսա, երբ այն ձայնը մնաց լուռ,
Որ չորս ստվեր գալիս էին դեպի մեզ.
Նրանց դեմքը ոչ ուրախ էր, ոչ տխուր:

85 Բարի վարպետս այն ժամանակ ասաց ինձ.
«Նայիր նրան, որ սուր բռնած իր ձեռքին՝
Ընթանում է այն երեքի առջևից:

88 Նա Հոմերն է, բանաստեղծը տիրական.
Հետևյալը Հորատիոսն է երգիծող,
Օվիդիոսն է երրորդ, վերջինը՝ Լուկան:

91 Մենք կապված ենք այն պանծալի տիտղոսով,
Որ նրանք նոր հոչակեցին միաձայն,
Ուստի լավ են անում պատիվ ինձ տալով»:

94 Այսպես տեսա հավաքույթը այստեղ ես
Այն կաճառի, որի երգերը վսեմ
Այլոց վրա սավառնում են արծվի պես:

97 Զրուցելով նրանք մի պահ միասին,
Մոտեցան ինձ ողջույններով սիրալիր,
Եվ դրանից ժպտաց վարպետն իմ անգին:

100 Ապա նրանք առ ի հարգանս ինձ դարձյալ,
Ինձ միացրին իրենց խմբին իմաստուն.
Եվ նրանց մեջ ես վեցերորդը դարձա։

103 Մենք բոլորս դեպի լույսը շարժվեցինք,
Զրուցելով բաներ, որ լավ է լռել,
Ինչպես լավ էր խոսել այնտեղ, ուր էինք։

106 Եկանք առջև մի դղյակի փառահեղ,
Որ պատած էր յոթնապատիկ որմերով
Եվ պաշտպանված մի գետակով յուրագեղ։

109 Մենք գետակը, ինչպես ցամաք, անց կացանք,
Եվ մտնելով իմաստնոց հետ յոթ դռնով՝
Դալարազարդ մարգագետին մի հասանք։

112 Այնտեղ կային մարդիկ դեմքով ծանր ու լուրջ
Եվ հայացքով պատկառազդու չափազանց.
Խոսում էին սակավ, ձայնով քաղցրահունչ։

115 Մենք բարձրացանք մի բլրակի վրա ջինջ,
Տեղի վրա մի լուսավոր ու արձակ,
Ուրկից տեսնել կարելի էր ամեն ինչ։

118 Միշտ մեր դիմաց մարգի վրա այն դալար
Երևացին մեծապայծառ հոգիներ,
Որոնց տեսնելն իսկ պարծանք էր ինձ համար։

121 Այնտեղ տեսա Էլեկտրային՝ զարմերով,
Որոնց միջև Հեկտորը և Էնեաս,
Եվ Կեսարին՝ կորովաբիբ աչքերով։

124 Այնտեղ էին Պենտեսիլեն, Կամիլլան.
Այնտեղ էին Լատինոսը թագավոր
Եվ նրա հետ իր աղջիկը՝ Լավինան։

127 Անդ Բրուտոսն էր, որ արտաքսեց Տարկվինին,
Հուլիան, Մարկիան, Լուկրետիան ու Կորնելիան,
Եվ Սալատինն, որին տեսա առանձին։

130 Ապա երբ որ ես նայեցի քիչ հետուն,
Տեսա ամեն իմաստության ուսուցչին,
Շրջապատված ընտանիքով իմաստուն:

133 Նրան էին նայում բոլորն հարգանքով.
Այնտեղ էին Սոկրատը և Պլատոնն,
Որ ամենքից մոտիկ էին նրա քով.

136 Այնտեղ էին իմաստուններ Դեմոկրիտ,
Դիոդենեսն, Անաքսագորն ու Թալես,
Էմպեդոկլը, Զենոնը և Հերակլիտ:

139 Այնտեղ էր և Դոսկորիդք բուսաբան,
Այնտեղ էին Օրֆեոսը և Լինոն,
Կիկերոնն ու բարոյագետ Սենեկան:

142 Եվկլիդեսն ու Պտղոմեոսն աստղաբան,
Հիպպոկրատը, Գալիենն ու Ավիկենն,
Ավերրոյսը, որ եղավ մեծ մեկնաբան:

145 Ես չեմ կարող այստեղ թվել բոլորին,
Զի երկար նյութն ինձ խթանում է այնպես,
Որ խոսքերս պետք է զիջեն փասաներին:

148 Մեր վեցյակը վերածվում է երկուսի.
Խաղաղ օդից իջանք օդում հողմաճույզ
Վարպետս ու ես մի ուղիով մեկուսի.

151 Եկա մի վայր, ուր չէր շողում ոչ մի լույս:

ԵՐԳ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Այսպես իջա պարունակից առաջին
Երկրորդի մեջ, որ նվազ է տարածքով,
Բայց ավելի լի է ողբով ցավագին:

4 Մուտքի մոտ է Մինոսն անհեղ կեցվածքով.
Մեղավորներ է նա քննում ու դատում
Եվ ուղարկում ներքև պոչի գալարքով:

7 Այսինքքն, երբ ներկայանում է նրան
Մի պիղծ հոգի իր մեղքերը հայտնելու,
Մեղքերի այդ դատավորը անվարան

10 Որոշում է նրա տեղը Դժոխքում,
Եվ գալարում այնքան անգամ պոչը իր,
Որքան հարկ է որ նա խրվի անդնդում:

13 Նրա առջև միշտ հոգիներ կան բազում.
Նրանք հերթով մոտենում են դատվելու
Եվ վճիռը լսելուն պես խոր սուզվում:

16 «Դու, որ եկար այս կայանը տանջալի,—
Բացականչեց Մինոսը, ինձ տեսնելով
Եվ թողնելով մի պահ պաշտոնն ահալի,—

19 Ո՛ւր ես մտնում, և ո՛ւմ ես դու վստահում.
Թող չխաբի քեզ լայնությունը մուտքի»:
Առաջնորդը նրան. «Ինչո՞ւ ես գոռում.

22 Մի՛ խափանիր նրա ճամփան պարտադիր.
Այդ են կամում անդ՝ ուր կարող են անել,
Ինչ որ կամին. էլ ուրիշ բան մի՛ հարցնիր»:

25 Ահա ողբի ձայներ էին ինձ հասնում.
Ահա արդեն եկել-հասել եմ այնտեղ,
Ուր ինձ խոցում էին ջայլերը բազում:

28 Եկա այնտեղ, ուր չի շողում ոչ մի լույս,
Ուր փչում են քամիները հակամարտ
Եվ շառաչում, ինչպես մի ծով հողմահույզ:

31 Եվ մրրիկը, որ երբեք չի դադարում,
Հոգիներին իր հորձանքի մեջ առած՝
Պտտոտքում է, քշում, իրար ընդհարում:

34 Երբ հասնում են նրանք ժայռին եզրային,
Հեծեծում են, ողբում, գոռում ու գոչում
Եվ անիծում արդարությունն երկնային:

37 Ես իմացա, որ այս տեսակ տանջանքին
Մատնված են մարմնասերները մեղսոտ,
Որոնք միտքը ենթարկել են կույր կրքին:

40 Եվ ինչպես որ սարյակները խուռներամ
Թռնածում են արագ, մղված ցուրտ հովից,
Այսպես և այն հոգիները թուլակամ

43 Հողմից քշված սլանում են ամեն դի.
Նրանք չունեն սփոփարար ոչ մի հույս
Տանջանքների մեղմացման կամ հանգստի:

46 Եվ ինչպես որ կռունկները կառաչող
Սավառնում են օդում երկար շարքերով,
Այսպես տեսա ես հոգիներ հառաչող,

49 Որոնք տարվում էին հողմի հորձանքից:
Ես ասացի. «Վարպե՛տ, ովքե՞ր են դրանք,
Որոնք այդպես չարչարվում են սև օդից»:

52 Եվ նա ասաց. «Առաջինն այն պիղծերից,
Որոնց մասին դու ուզում ես իմանալ,
Կայսրուհին էր բազմալեզու ազգերի:

55 Նա այնքան մեղկ ու անառակ կյանք վարեց,
Որ խույս տալու համար մարդկանց պարսավից,
Ամեն հաճույք օրինական համարեց:

58 Շամիրամն է, որ, ինչպես գիրքն է գրում,
Եղավ կինը և հաջորդը Նինոսի.
Նա իշխեց անդ, ուր արդ Սուլթանն է տիրում:

61 Իսկ այն մյուսը եղավ սիրուց ինքնասպան,
Զպահելով հիշատակը Սիքեի.
Ետևում է Կլեոպատրան ճակատան:

64 Ահա այնքան չարյաց պատճառ Հեղինեն.
Ահա և մեծն, անպարտելին Աքիլլես,
Որ, ի վերջո, պարտվեց սիրուց հրեղեն:

67 Ահա Պարիսն ու Տրիստանը»: Եվ այսպես
Անունները շատ բազում ստվերներ,
Որոնք մեռել էին սիրուց բոցակիզ:

70 Եվ երբ այսպես իմ ուսուցչից իմացա
Անունները հերոս արանց ու կանանց,
Ես հուզվեցի և գրեթե թալկացա:

73 Ես ասացի. «Պոե՛տ, սիրով կուզեի
Ես տեսակցել այն զույգի հետ համընթաց,
Որ թեթև է քշվում հողմից ամենի»:

76 Եվ նա ասաց. «Կտեսնես, երբ մոտ հասնեն,
Այնժամ նրանց վարող սիրո անունով
Կանչիր նրանց, նրանք կգան կիսոտեն»:

79 Հենց որ հողմը նրանց ուղղեց դեպի մեզ,
Ես ձայնեցի. «Ո՛վ տառապյալ հոգիներ,
Եկեք խոսենք, եթե չունեք արգելք ձեզ»:

82 Ինչպես կանչված աղավնիները հեզիկ
Բնազդաբար, բաց և անշարժ թևերով,
Ցած են թռչում դեպ իրենց բույնը քաղցրիկ,

85 Այսպես նրանք ելան խմբից Դիդոնի
Եվ ժանտ օդի միջով եկան դեպի մեզ,
Այնքան ազդու եղավ ձայնս կենդանի:

88 «Ո՛վ արարած բարեգութ և մարդասեր,
Որ այցի ես մեզ եկել այս գորշ օդով,
Մեզ, որ աշխարհն արյունով ենք ներկել մեր.

91 Տիեզերքի արքան եթե մեզ լսեր,
Կաղոթեինք խաղաղության համար քո,
Զի գթացիր դժխեմ բախտի վրա մեր:

94 Այն, ինչ որ դու կուզես լսել և խոսել,
Մենք պատրաստ ենք խոսելու և լսելու,
Քանի քամին արդ լռել է ու կասել:

97 Ես ծնվել եմ այն քաղաքում ծովամերձ,
Որտեղ Պոն է իշխում հանգիստ առնելու
Աշտահոսուն վտակներով իր հանդերձ:

100 Սերը, որ շուտ է այրում սիրտը քնքուշ,
Վառեց սրան գեղեցկությամբ իմ մարմնի,
Որ գրավվեց կերպով այնքան խուժադուժ:

103 Սերը, որ սեր է պարտադրում սիրվածին,
Ինձ սիրահար դարձրեց սրան այնքան թունդ,
Որ այստեղ իսկ մենք կապված ենք միասին:

106 Սերը հասցրեց մեզ երկուսիս նույն մահվան.
Մեզ սպանողն սպասվում է Կայենում»:
Այս խոսքերը նրանց բերնից դուրս եկան:

109 Լսելով այդ հոգիներին վշտակեզ,
Ես գլուխը տխուր կրծքիս հակեցի:
Վարպետս հարցրեց. «Ի՞նչ ես խորհում դու
այդպես»:

112 Ի պատասխան ես ասացի. «Օ՜, ավա՛ղ,
Ինչքա՛ն հույզեր ու երազներ խանդակաթ
Հասցրին սրանց այս վախճանին կանխավաղ»:

115 Ապա նրանց ես դիմելով խոսեցի,
«Ո՛վ Ֆրանչեսկա, քո պատմությունը տխուր
Ես վշտով ու կարեկցությամբ լսեցի:

118 Բայց ինձ ասա՝ ձեր հույզերի ժամանակ
Սերն ինչ ձևով և ինչ դեպքում թույլ տվեց,
Որ դուք ձեր լուռ զգացումներն իմանաք»:

121 Եվ նա ասաց. «Ավելի մեծ վիշտ չկա,
Քան երջանիկ ժամանակները հիշել
Դժբախտ ժամին, քո ուսուցիչն է վկա:

124 Բայց եթե դու տեղեկանալ ես ուզում
Պատճառը մեր անբախտ սիրո, ես կասեմ,
Ինչպես նա, ով արտասվում է և խոսում:

127 Իբրև ժամանց կարդում էինք մի օր մենք
Լանչիլոտտի պատմությունը սիրային.
Մենակ էինք և չունեինք մտքեր նենգ:

130 Ընթերցումն այդ մեր հայացքները շատ հեղ
Հանդիպեցրեց և մեր դեմքերն այլայլեց,
Բայց մեր խելքը կորցնել տվեց լոկ մի տեղ:

133 Երբ կարդացինք, որ տարփածուն ցանկալից
Սիրեցյալի ժպտուն բերանն համբուրեց,
Սա, որ երբեք չի բաժանվի ինձանից,

136 Համբուրեց իմ բերանն համակ հուզադող:
Գիրքը դարձավ Գալեոտտո մեզ համար:
Է՛լ այն օրը չկարդացինք ոչ մի տող»:

139 Մինչ այսպես էր բարբառում այն մի հոգին,
Մյուսն այնպես դառնորեն էր հեկեկում,
Որ հուզմունքից նվաղեցի մահագին.

142 Եվ ես ընկա, ինչպես դիակն է ընկնում:

ԵՐԳ ՎԵՑԵՐՈՐԴ

Հենց որ արդեն վերադարձավ ուշքը իմ,
Որ այլայլվել, մթագնել էր հուզումից,
Ի լուր ողբին սիրող զույգի մտերիմ,

4 Ես ամենուր տեսա շուրջը իմ բոլոր,
Ուր որ դարձա և կամ ուր որ նայեցի,
Տանջանքներ և տանջակիրներ նորանոր։

7 Ահա արդեն պարունակումն եմ երրորդ,
Ուր տեղում է անդադար ու միալար
Մի ցուրտ անձրև անիծյալ ու գարշահոտ։

10 Մեծ-մեծ կարկուտ, և ձյուն, և ջուր աղտեղի
Թափվում են ցած օդի միջով մթամած,
Հոտեցնելով տղմուտ տարածքը տեղի։

13 Կերբերոսը, գազանն անգութ, արտառոց,
Երեք գլխով կաղկանձում է շան նման
Այնտեղ խրված հոգիների վրա հոծ։

16 Նրա աչքերն հուր են, մորուքը մթար,
Փորը խոշոր և թաթերը ճապաղավոր,
Հոգիներին ճանկռում, ցրցում է նա հար։

19 Անձրևի տակ սրանք ոռնում են շան պես,
Եվ ջանալով ծածկել մեկ կողը մյուսով՝
Շրջշրջվում են, շուռ-մուռ գալիս մշտապես։

22 Երբ մեզ տեսավ Կերբերոսը անհագին,
Բացեց ռեխերն ու ժանիքներ ցույց տվեց.
Նա դողում էր բարկությունից մոլեգին։

25 Առաջնորդը պարզեց ձեռքերն իր անփակ
Եվ գետնից հող վերցնելով լիաբուռ՝
Նետեց նրա երախների մեջ անհագ։

28 Ինչպես շունը, որ ոռնում է քաղցից սուր,
Հանդարտվում է, հենց որ ոսկորն է կրծում,
Եվ զբաղվում հոշոտելով լոկ այն լուռ,

31 Այսպես սկսվեց դև Կերբերոսն հողակուլ,
Որի ոռնոցն հոգվոց այնպես էր լլկում,
Որ կուզեին նրանք լինել հավետ խուլ։

34 Անցնում էինք ժանտ անձրևից կուացած
Հոգիների վրայով և կոխկրտում
Ուրուները նրանց՝ մարմին թվացած։

37 Բոլոր նրանք պառկած էին գետնամած,
Բացի մեկից, որ վեր կացավ ու նստեց,
Երբ տեսավ, որ իրեն էինք մոտեցած։

40 «Օ՜ դու, որ այս Դժոխքի մեջ ես բերվել,—
Ասաց նա ինձ,— իմացիր, թե ով եմ ես.
Իմ մեռնելուց առաջ էիր դու ծնվել»։

43 Եվ ես նրան. «Տանջանքները քո կրած
Դիմագծերդ այլակերպել են այնքան,
Որ թվում է, թե քեզ երբեք չեմ տեսած։

46 Բայց ասա ինձ՝ ո՞վ ես, որ այս չարատանջ
Վայրն ես եկել և կրում ես մի պատիժ,
Որ մյուսներից թեթև է, բայց շատ տհաճ»։

49 Եվ նա ասաց. «Քաղաքդդ, որ չարությամբ
Այնքան լի է, որ չափն անցել է արդեն,
Եղավ օրրանն իմ կենցաղի անտաղտապ։

52 Քաղաքացիքդ անվանեցիք ինձ Չակկո։
Ես որկորի իմ մոլության համար վատ
Լլկվում եմ այս անձրևի տակ հարագո։

55 Եվ ես՝ թշվառս, այստեղ մենակ չեմ հարկավ.
Սրանք էլ նույն մեղքի համար են կրում
Նույն պատիժը»։ Եվ նա մի պահ կանգ առավ։

58 Ես ասացի. «Չարչարանքներդդ, Չակկո,
Ինձ հուզում են արտասվելու աստիճան,
Բայց ասա ինձ՝ ո՞ւր կհանգեն ի վերջո

61 Երկպառակված քաղաքացիք քաղաքի.
Մի՞թե արդար մեկը չկա նրանց մեջ.
Ի՞նչ է պատճառն այդ գժտությանց անհարկի»։

64 Եվ նա ասաց. «Երկար վեճից հետո տաք
Կռվի կանցնեն. գեղջուկները կհաղթեն,
Իսկ մյուսները կհալածվեն բովանդակ:

67 Ապա նրանք երրորդ տարվա ընթացքում
Կտապալվեն և մյուսները կհաղթեն
Ուժով մեկի, որ նենգությամբ է գործում:

70 Սրանք նրանց երկար ատեն կնեղեն
Ու կենթարկեն ստորացման վիսաբար,
Թեկուզ նրանք արտասվեն կամ կատաղեն:

73 Արդարներ կան, սակայն չունեն ունկնդրող:
Գոռոզություն, ագահություն ու նախանձ—
Երեք կայծեր եղան սրտեր բռնկող»:

76 Նա վերջ տվեց իր խոսքերին ցավալի:
Եվ ես նրան. «Տեղեկություն տուր խնդրեմ,
Շնորհելով ինձ երկու խոսք ավելի:

79 Արժանավոր Ֆարինատան և Մոսկան,
Ռուստիկուչչին, Տեգիայոն և Արիգոն,
Եվ այլք, որոնք եղան անձեր պատվական,

82 Ո՞ւր են, ասա, որ ես նրանց գեթ տեսնեմ.
Մեծ իղձ ունեմ իմանալու, թե նրանք
Երկնքո՞ւմ են, թե՞ Դժոխքում են դժխեմ»:

85 Եվ նա ասաց. «Դժոխքում են, բայց ցածում,
Եթե իջնես, նրանց կարող ես տեսնել.
Նրանց վրա այլ մեղքեր են ծանրանում:

88 Բայց երբ դու քաղցր աշխարհ ընկնես վերստին,
Խնդրում եմ քեզ հիշատակիս պահել տաս.
Այս է իմ խոսքն ու պատասխանը վերջին»:

91 Եվ նայելով աչքերով խեթ ու մռայլ,
Իր գլուխը վայրահակեց ու ընկավ
Տղմաթաթախ հոգիների միջև այլ:

94 Վարպետս ասաց. «Էլ չի ելնի այլոց պես
Մինչև հնչելն հրեշտակային փողերի
Եվ գալուստը դատավորի խորատես,

97 Երբ կգտնեն նրանք շիրիմն իրենց լուռ,
Կառնեն մարմինն ու տեսքն իրենց սեփական
Եվ կլսեն դատավճիռն ահալուր»:

100 Այսպես ահա մենք անցկացանք համրաքայլ
Գարշ խառնուրդով ստվերների ու ցեխի,
Զրուցելով կյանքի մասին հանդերձյալ:

103 Եվ ես. «Վարպե՛տ, այս տանջանքները դաժան
Ահեղ վճռից հետո կաճե՞ն ավելի,
Թե՞ կպակսեն և կամ նույնը կմնան»:

106 Եվ նա. «Դիմիր քո գիտությանն, ըստ որի
Էակն ինչքան ավելի է կատարյալ,
Այնքան ուժեղ կզգա չարը և բարին:

109 Թեպետ և այս հոգիները հուսաթափ
Չեն դառնալու ճշմարտապես կատարյալ,
Բայց հույս ունեն հուսկ դառնալու որոշ չափ:

112 Խոսակցելով այլ բաների մասին դեռ,
Շուրջանակի պտտվեցինք միասին
Եվ եկանք անդ, ուր վայրէջքն էր բացվում մեր.

115 Այստեղ գտանք մեծ թշնամի Պլուտոսին:

ԵՐԳ ՅՈԹԵՐՈՐԴ

«Պապե Սատան, պապե Սատան, ալեպպե»,—
Գոչեց Պլուտոսն իր ձայնով խուլ ու խոպոտ:
Եվ իմաստունս, որ ամեն ինչ լավ գիտե,

4 Փարատելու համար անը՝ ինձ ասաց.
«Մի վախենար, նա ինչ անի, չի կարող
Մեզ արգելել իջնելու այս ժայռից ցած»։

7 Եվ դառնալով ոեխին դևի զայրալիր՝
Ասաց. «Լռի՛ր, անիծյալ ու անհաց գայլ.
Բարկությունից ինքզինքդ կե՛ր, սպառի՛ր։

10 Մեր վայրէջքը ունի որոշ մի պատճառ.
Այդ են կամում այնտեղ՝ բարձրը երկնքում,
Ուր Միքայելն ընկնեց ջոլիրն հեստ ու չար»։

13 Ինչպես հողմից առագաստները ուռած
Ցած են ընկնում, երբ հանկարծ կայմն է
ջարդվում,
Այսպես վայրագ գազանն անզոր ընկավ ցած։

16 Այսպես չորրորդ պարունակը մենք հասանք,
Ընթանալով անդունդն ի վար Դժոխքի,
Որ պատժում է ամեն չարիք ու հանցանք։

19 Օ՛ երկնային արդարացի դատաստան։
Ի՛նչ տանջանքներ ու պատիժներ են տեսնում,
Ինչո՞ւ մեղքերն աղետաբեր են այսքան։

22 Ինչպես երկրում Քարիբդեսի վրա ճիշտ
Ալիքները մեկը մյուսին են բախվում,
Այսպես այստեղ մարդիկ պետք է բախվեն միշտ։

25 Նրանք այստեղ անթիվ էին երևում,
Որոնք կազմած երկու խմբեր տարանջատ՝
Ծանրը բեռներ էին կրծքով գլորում։

28 Ապա նրանք իրար էին ընդհարվում
Ու ետ քաշվում, մեկը մյուսին գոռալով.
«Ի՞նչ ես գանձում», մյուսը՝ «Ի՞նչ ես դեն գցում»—

31 Եվ, շարժվելով պարունակով մթաբոր,
Գնում էին դեպի կետերն հակադիր,
Միշտ կրկնելով այդ խոսքերը ծանակող։

34 Ապա նրանք կիսաշրջանն անցնելով՝
Վերադառնում էին նորից բախվելու:
Ես սրտիս մեջ դառը կսկիծ զգալով՝

37 Հարցրի. «Վարպե՛տ, սրանք ովքե՞ր են իրոք,
Ձախակողմյան այս ստվերները խուզված
Բոլորեքյան կղերակա՞ն են արդյոք»:

40 Եվ նա ասաց. «Սրանք բոլորը, որ կան,
Իրենց կյանքում եղան այնքան թյուրամիտ,
Որ ծախսի մեջ չդրին չափ ու սահման:

43 Այդ է ասում նրանց գոռոցը վայրագ,
Որ հանում են, երբ հասնում են այն կետին,
Ուր զատվում են հանցանքներով հակառակ:

46 Նրանք, որոնց գլուխներն են հերաթափ,
Քահանաներ, կարդինալներ, պապեր են,
Որոնց եղծեց ագահությունը անչափ»:

49 Եվ ես. «Վարպե՛տ, անտարակույս ես այստեղ
Կկարենամ մի քահիսին ճանաչել,
Որ պղծվել են այդ ախտերով ծանրամեղ»:

52 Եվ նա ասաց. «Զուր բաներ ես մտածում.
Այն կյանքն անմիտ, որը նրանց տխեղծեց,
Այժմ նրանց անճանաչ է դարձընում:

55 Նրանք հավետ բախվելու են այս կերպով.
Ոմանք իրենց գերեզմանից դուրս կելնեն
Փակ ափերով, ոմանք կտրած մազերով:

58 Նրանք իրենց ժլատ, շռայլ կենցաղով
Մատնվել են այս պայքարին անվախճան,
Որ չեմ ուզում մանրամասնել խոսքերով:

61 Արդ տես, որդյա՛կ, թե որքան են խաբուսիկ
Բարիքներն այն, որ հանձնված են Բախտին,
Որոնց համար իրար գզում են մարդիկ.

Այս խոնջաբեկ հոգիներից ոչ մեկին»:
64 Չի արդ երկրում եղած չեղած ողջ ոսկին
Չի կարող տալ հանգստություն ու դադար

67 Եվ ես. «Ասա դարձյալ, վարպե՛տ իմ բարի,
Քո ակնարկած Բախտը ի՞նչ է, որ նրա
Ճանկերում են բարիքները աշխարհի»:

70 Եվ նա ասաց. «Ո՛վ էակներ կարճամիտ,
Ինչպիսի՛ խոր տգիտության մեջ եք դուք.
Արդ ընդունիր իմ մտքերը ճշմարիտ:

73 Նա, որ գեր ի վեր է ամեն գիտությամբ,
Երկինքների համար կարգեց վարիչներ
Եվ իր լույսը բաշխեց այնպես համաչափ,

76 Որ նրանք այն ցոլարձակեն փոխադարձ.
Նմանապես աշխարհային փայլերին
Նա սահմանեց մի ընդհանուր հոգաբարձ,

79 Որ փոխանցի սին բարիքներն երկրային
Ազգե ի ազգ, տոհմե ի տոհմ կամոք յուր,
Ի հեռուկս ընդդիմության մարդկային:

82 Դրանից են ոմանք իշխում, այլք՝ ընկնում,
Դատաստանի համաձայն հենց այս Բախտի,
Որ պահված է, ինչպես օձը թավ խոտում:

85 Նրան ոչինչ չի հակազդի խելքը ձեր.
Նա վարում է, տնօրինում իր մարզում,
Ինչպես իրենց մարզում ուրիշ աստվածներ:

88 Դադար չունեն փոխանցումներն իր անսանձ,
Անհրաժեշտ հարկն շտապեցնում է նրան.
Այս է պատճառն հաճախադեպ փոփոխման:

91 Մարդիկ, ի դեպ, պետք է նրան գովեին,
Նույնիսկ նրանք, որ անիրավ ու անճահ
Հայհոյանք են ուղղում նրա հասցեին:

94 Բայց նա, զվարթ, փույթ չի անում այդ մասին.
Իր ոլորտն է ղեկավարում գոհությամբ
Մյուս նախաստեղծ գոյերի հետ միասին:

97 Այժմ ավելի չարչարանքի վայրն իջնենք.
Աստղերն աճա խոնարհվում են դեպի ցած,
Եվ մենք պետք չէ մեր ընթացքը դանդաղենք»:

100 Պարունակի միջով անցանք մենք դիմաց
Եվ մոտեցանք մի առվակի խոխոջուն,
Որ հոսում էր իր իսկ փորած ձորով ցած:

103 Գույնն ավելի թխորակ է, քան թե մութ,
Եվ մենք նրա գորշ հոսանքին զուգընթաց
Ներքև իջանք մի շավիղով տաժանուտ:

106 Տխրատեսիլ այդ գետակը հասնելով
Ստորոտը սեպ ու մթին ժայռերի,
Մի ճահիճ է կազմում Ստիքս անունով:

109 Մինչ ես նայում էի սևեռ աչքերով,
Ճահճում տեսա տղմաթաթախ հոգիներ,
Բոլորն էլ մերկ և զայրագին դեմքերով:

112 Լոկ ձեռքերով նրանք չէին կռվտում,
Այլև իրենց գլխով, կրծքով, ոտքերով
Եվ իրարու ատամներով բզկտում:

115 Վարպետս ասաց. «Արդ դու տեսնում ես, որդյակ,
Նրանց, որոնք կյանքում ցասկոտ են եղել.
Բայց իմացիր, որ այս պղտոր ջրի տակ

118 Կան այլ մարդիկ, որ արձակում են հառաչ
Եվ պղպջակ հանում ջրի երեսին,
Ինչպես տեսնել դու կարող ես քո առաջ:

121 Ճահճում սուզված՝ նրանք այսպես են ասում.
«Տխուր եղանք զվարթ օդում երկրային,
Անթեղելով մաղձությամբ ծուխ մեր ներսում.

124 Արդ տխրում ենք, խրված տիղմում այս մոայլ»։
Նրանց կոկորդն այս երգն է միշտ կարկաչում,
Զուր ճգնելով արտաբերել խոսք մի այլ»։

127 Նայելով այն հոգիներին ցեխակուլ,
Մենք բավական երկար պտույտ գործեցինք
Տղմուտ ճահճի և չոր ափի միջով խուլ,

130 Եվ հասանք տակն աշտարակի մի վերձիգ։

ԵՐԳ ՈՒԹԵՐՈՐԴ

Սակայն, ասեմ, որ չհասած տակավին
Ստորոտը աշտարակի բարձրաբերձ,
Մեր աչքերը նրա գագաթն ուղղվեցին.

4 Քանզի այնտեղ երկու լույսեր դուրս եկան,
Մի երրորդն էլ, որ հազիվ էր նկատվում,
Վառվեց հեռվում իբրև նրանց պատասխան։

7 Ես դիմելով ծովին ամեն գիտությանց,
Հարցրի. «Վարպե՛տ, այդ ի՞նչ լույսեր են դրանք.
Ի՞նչ ասում ու պատասխանում են միմյանց»։

10 Եվ նա ասաց. «Հիմա ինչ որ կերևա
Տղմուտ ճահճում, դու կարող ես նկատել,
Եթե մեգը քեզ արգելակ չդառնա»։

13 Նետը երբեք այնպես թեթև ու արագ
Չի արձակվել պրկված լարից աղեղի,
Ինչպես տեսա փոքրաձավալ մի նավակ,

16 Որ սրընթաց խոյանում էր դեպի մեզ,
Թիավարված մի հոգուց, որ գոռում էր,
«Դժվեմ հոգի՛, ահա եկար վերջապես»։

19 «Ֆլեգիաս, Ֆլեգիաս, զուր ես գոռում այս
անգամ,—
Ասաց տերը։— Մենք քոնը չենք, եկել ենք
Անց կենալու այս ճահիճով ապականն»։

22 Ինչպես նա ով խաբեության մի ի լուր
Սրտնեղվում ու սրտմտում է խորապես,
Այսպես սրտնեց Ֆլեգիասը զուսպ ու լուռ։

25 Առաջնորդը նրա մակույկը իջավ,
Եվ ապա ինձ իջեցրեց իր կողքին.
Իմ մտնելով լոկ մակույկը ծանրացավ.

28 Հենց որ այսպես զետեղվեցինք երկուստեք,
Հին մակույկը առաջ շարժվեց սրընթաց,
Ճեղքելով ջուրն ավելի խոր, քան երբեք։

31 Մինչ մենք ճահճով ճեպում էինք անարգել,
Ինձ հանդիպեց տղմոտ մեկը և ասաց.
«Ո՞վ ես դու, որ ժամիցըդ վաղ ես եկել»։

34 Եվ ես նրան. «Եկել եմ ոչ մնալու.
Իսկ դու ով ես, որ աղտեղված ես այդպես»։
Ասաց. «Մեկն եմ դատապարտված ողբալու»։

37 Եվ ես նրան. «Ողբա, ագա դու այդպես,
Անիծյալ ու լպիրշ հոգի, վասնզի
Կեղտիդ մեջ էլ լավ ճանաչում եմ ես քեզ»։

40 Այնժամ ցասմամբ նա ինձ մեկնեց ձեռքերն իր.
Բայց առաջնորդս հրեց նրան, ասելով.
«Շուտ դեն գնա, մյուս շների հետ կորչիր»։

43 Ապա բազկով վզիս փարվեց դող ի դող,
Ինձ պագավ ու ասաց. «Հոգի զայրասիրտ,
Քեզ հղացողն հավետ օրհնյալ լինի թող,—

46 Նա աշխարհում մեծամիտ մեկն է եղել
Եվ թողել է վատ հիշատակ իր մասին,
Դրանից է այստեղ այնպես կատաղել։

49 Երկրում ինչքան մեծամեծներ կան անհարգ,
Որոնք այստեղ թավալվում են խոզի պես,
Իրենց մասին թողած անուն մի անարգ»։

52 Եվ ես. «Վարպե՛տ, շատ պիտի գոհ լինեի,
Եթե մենք դեռ ճանճալճից դուրս չեկած՝
Այս ջրի մեջ նրան սուզված տեսնեի»։

55 Եվ նա «Դեռևս դեմի ափը չհասած,
Դու կստանաս քո փափագին գոհացում.
Արդար է, որ դու քեզ զգաս գոհացած»։

58 Քիչ անց տեսա, որ ընկերները պղծուն
Նրա վրա այնպես գրոհ գործեցին,
Որ գոհությամբ ես փառք տվի Աստծուն։

61 «Զա՛րկ Արջենտուն»— գոռում էին համորեն,
Իսկ կատաղած ֆլորենտացի այն հոգին
Ատամներով կծոտում էր ինքն իրեն։

64 Եվ ես նրան այդ վիճակում թողեցի։
Սակայն հանկարծ ճիչեր հասան ականջիս,
Եվ ես ուշի ուշով առաջ նայեցի։

67 Բարի վարպետս ինձ բացատրեց. «Որդյա՛կ, արդ
Մոտեցել ենք մենք Դևպետի քաղաքին,
Ուր բազմաթիվ հոգիներ կան մեղապարտ»։

70 Եվ ես. «Վարպե՛տ, արդեն տեսնում եմ ի ցած
Բոսորագույն պարիսպները նրա ձիգ,
Կարծես դուրս են եկել հրից շիկացած»։

73 Եվ նա ասաց. «Դա Դժոխքն է ստորին,
Ուր վառվում է հավերժական մի կրակ,
Որից որմերն հեռվից տալիս են կարմրին։

76 Մենք ի վերջո հասանք խորունկ ջրանցքին,
Որով շուրջ էր պատած երկիրն այս ցավոտ,
Որի որմերն ասես երկաթ լինեին:

79 Կատարելով մի շրջանցում շեղակի,
Եկանք մի տեղ, ուր նավարարը գոչեց.
«Դեռ դուրս եկեք, մուտքն այստեղ է քաղաքի»:

82 Դռների վրա տեսա դևեր բազմաթիվ,
Որոնք միմյանց ասում էին զայրագին.
«Ո՞վ է սա, որ դեռ չմեռած ստուգիվ,

85 Մեռյալների բնակավայրն է եկել»:
Այնժամ վարպետս նշանացի հասկացրեց,
Որ ուզում է մի պահ հետները խոսել:

88 Քիչ զսպելով իրենց զայրույթը ահեղ,
«Մենակ դու եկ, թող նա գնա,— ասացին,—
Նա, որ այդպես հանդգնել է գալ այստեղ:

91 Թող նա մենակ վերադառնա ճամփով խոլ.
Իսկ դու հավետ այստեղ մեզ մոտ կմնաս,
Դու որ նրան այս զնդանն ես բերել խոր»:

94 Թե ես որքան զարհուրեցի, ընթերցող,
Զարագուշակ այդ խոսքերից, դու դատիր,
Կարծեցի թե էլ ետ դառնալ չեմ կարող:

97 Ես ասացի. «Ո՛վ առաջնորդ թանկագին,
Դու որ հաճախ իմ զորավիգն ես եղել
Եվ ինձ փրկել վտանգներից ահագին,

100 Մի՛ թողնիր ինձ այստեղ այսպես անպաշտպան,
Եվ եթե մեզ խոչընդոտ են հարուցում,
Իսկույն բռնենք վերադարձի մեր ճամփան:

103 Եվ իմ տերը, որ ինձ այդտեղ էր բերել,
Ասաց. «Վանիր քո երկյուղը, ասա՛ ոչ ոք
Չի կարող մեր առաջընթացին արգելել։

106 Ինձ սպասիր և քո հոգին հուսաբեկ
Ամրապնդիր, սնիր բարի հույսերով.
Այս խորքերում քեզ չեմ թողնի ես երբեք»։

109 Եվ հեռացավ մի պահ հայրը բարեծին,
Ինձ թողնելով երկբայության մեջ այնպես,
Որ իմ գլխում «Ոչ»-ն ու «այո»-ն վիճեցին։

112 Նրա խոսքերն հնար չեղավ ինձ լսել.
Բայց նա երկար դևերի մոտ չմնաց,
Քանզի նրանք շտապեցին ներս վազել։

115 Նրանք իսկույն դռներն ամուր փակեցին
Առաջնորդիս առջև, որ դուրս մնալով,
Վերադարձավ դանդաղաքայլ ու լռին։

118 Աչքերն հական և ժրությունը կորցրած՝
Նա հառաչով այս խոսքերն էր մրմնջում.
«Ո՞վ երեսիս փակեց որջն այս մեղսամած»։

121 Եվ ինձ ասաց. «Հակառակ իմ խոովքին,
Դու հանգիստ կաց, ես այս մարտում կհաղթեմ,
Ով էլ թեկուզ ընդդիմանա մեր մուտքին։

124 Նորություն չէ այդ լրբությունը նրանց.
Նրանք նույն բանն արին դռանն արտաքին,
Որ դեռ մինչև հիմա բաց է մնացած։

127 Վրան տեսար արձանագիրը դժնյակ։
Ահա արդեն այդ դռնից ներս է անցել
Եվ իջնում է ներքև մեկը միայնակ,

130 Որ կարող է այս քաղաքը մեզ բացել»։

ԵՐԳ ԻՆՆԵՐՈՐԴ

Այն գույնը, որ վախը դեմքիս դրոշմեց
Առաջնորդիս վերադարձը երբ տեսա,
Նրան իսկույն վանել տվեց հույզքն իր մեծ:

4 Նա կանգնեց ու նայեց, աչքը կիսագոց,
Չի հայացքը հեռու ուղղել չէր կարող
Աղջամուղջի և մշուշի միջով հոծ:

7 «Բայց,— ասաց նա,— պետք է հաղթենք այս մարտում,
Ապա թե ոչ... Կա այնպիսի մի նեցուկ.
Օ ուր է նա և ինչու է ուշանում»:

10 Ես լավ տեսա, թե ինչպես նա քողարկեց
Առկախ թողած իր այն խոսքը մյուսով,
Որոնց միջև տարբերություն կար մի մեծ:

13 Բայց և այնպես վախ զգացի առժամայն,
Չի այդ ընդհատ խոսքին գուցե ես տվի
Ավելի վատ իմաստ, քան թե ուներ այն:

16 «Զեզնից մեկը այս անդնդում խորասույզ
Իջա՞վ արդյոք պարունակից առաջին,
Ուր պատիժը լոկ սպասելն է անհույս»:

19 Այսպես հարցրի. և նա տվեց պատասխան.
«Մինչև հիմա հազվադեպ է պատահել,
Որ մեզնից մեկն անցած լինի այս ճամփան:

22 Ես մի անգամ եղել եմ այս խոռոչում,
Կախարդանքով Երիքթոնի այն անգութ,
Որը հոգվոց իրենց մարմնոց էր կանչում:

25 Ես նոր էի զրկվել մարմնից կենդանի,
Երբ նա ինձ այս պարսպից ներս մտցրեց,
Որ դուրս բերեմ մեկին մարզից Հուդայի:

28 Իսկ սա վայրն է ամենից խոր ու նսեմ
Եվ հեռագույնն համայնածիր երկնքից.
Վստահ եղիր, ես ճանապարհը գիտեմ։

31 Այս ճահիճը, որ արձակում է գարշ հոտ,
Օղակում է այս քաղաքը տանջալի,
Ուր չենք կարող մենք ներս մտնել վեհերոտ»։

34 Չեմ հիշում, թե ուրիշ ինչեր դեռ ասաց,
Քանզի ամբողջ ուշադրությունս ուղղված էր
Դեպի գագաթն աշտարակի իմ տեսած։

37 Անհա հանկարծ նրա վրա կանգնեցին
Դժոխքի երեք ֆուրիաները արնաներկ,
Որ ունեին տեսք ու կեցվածք կանացի։

40 Նրանց պատել էին կանաչ հիդրաներ,
Իսկ գլուխներն ահեղ՝ փոխան մազերի
Կրում էին եղջերավոր օձիկներ։

43 Եվ վարպետը, որ ճանաչեց վաղվաղի
Նաժիշտներին տարտարոսի տիրուհու,
Ասաց. «Նայիր Երիններին կատաղի։

46 Աջ կողմինը Ալեկտոն է դառնահեծ,
Ձախ կողմինը Մեգերան է, իսկ նրանց
Մեջտեղինը Տիսիֆոնն է»։ Եվ լռեց։

49 Ամեն մեկն իր կուրծքն էր ցտում և ապա
Իրեն ծեծում ու ճչում էր այնպես զիլ,
Որ ես ահից առաջնորդիս պինդ կպա։

52 «Մեդուսան գա, մենք նրան քար կդարձնենք,—
Ասում էին նրանք ներքև նայելով.—
Թեսեոսին զուր անպատիժ թողինք մենք»։

55 «Ծուտ շուռ արի և քո աչքերը փակիր,
Քանզի եթե Գորգոնն այստեղ երևա,
Էլ չես կարող վերադառնալ դու երկիր»։

58 Այսպես ասաց տերս և անձամբ ինձ շրջեց,
Եվ շատ վստահ չլինելով ձեռքերիս՝
Իր ձեռքերով երկու աչքերըս փակեց։

61 Դուք, որ ունեք ողջմտություն սեփական,
Ուշ դարձրեք բարոյական իմաստին,
Որ կա խորքում իմ տողերի այլաբան։

64 Ահա արդեն գորշ ջրերի վրայով
Հասնում էր մեզ շոնդալի մի աղմուկ,
Որ ցնցում էր երկու ափերն ալեխռով,

67 Այնպես, ինչպես փոթորիկը սաստկահույզ,
Որ ծագում է հոսանքներից օդային,
Թնդացնում է անտառները նորաբույս,

70 Քանդում ոստերն և դես ու դեն է գցում,
Եվ փոշու ամպ բարձրացնելով իր առջև՝
Հոտաղներին ու հոտերին հալածում։

73 Բաց անելով աչքերս ասաց. «Հիմա դու
Տեսողությունդ ուղղիր ճահճի այն կետին,
Ուր ավելի հոծ է մշուշն ու ազդու»։

76 Գորտերն ինչպես թշնամի օձ տեսնելիս
Բոլորը մեկ չքանում են ջրի տակ
Եվ սահմոկած՝ հատակին կուչ են գալիս,

79 Այսպես տեսա ես հոգիներ հազարյակ,
Որոնք փախչում էին մեկի առջևից,
Որ անցնում էր Ստիքսն ինչպես մի ցամաք։

82 Նա ձախ ձեռքը ստեպ առաջ էր տանում,
Հեռացնելով իր աչքերից մեգը խիտ,
Եվ կարծես նա լոկ դրանից էր նեղվում։

85 Ճանաչելով սուրհանդակին երկնքի,
Դարձա տիրոջս, և սա նշան արեց ինձ,
Որ խոնարհվեմ լռին՝ ի ցույց հարգանքի։

88 Ո նա որքան լի էր թվում բարկությամբ։
Եկավ կանգնեց դռան առջև ամրափակ
Եվ ճպռտով այն բաց արեց հեշտությամբ։

91 «Ո՛վ երկնքից վտարվածներ, անարգ ցեղ,—
Սաստեց նրանց, կանգնած մուտքին անավոր,—
Որտեղի՞ց է հանդգնությունը այդ ձեր.

94 Ինչո՞ւ եք դուք հակառակվում այն կամքին,
Որ երբեք իր նպատակից չի շեղվում,
Եվ կարող է պատուհասել ձեզ կրկին։

97 Ի՞նչ օգուտ ձեզ հեստել վճռի դեմ հաատված.
Ձեր Կերբերոսն, եթե լավ եք դուք հիշում,
Դեռ կրում է քիթն ու մոռթը ջարդված»։

100 Վերադարձավ ապա ճամփով գարշելի,
Առանց մի բառ մեզ ասելու, ինչպես նա,
Ով դիմացի անձի հոգսից ավելի

103 Մտահոգված, տարված է այլ հոգսերով։
Եվ մենք այսպես դեպի քաղաքն ուղղվեցինք,
Սրտապնդված սրբազանի խոսքերով։

106 Մենք ներս մտանք բոլորովին անարգել.
Ես, որ այնքան ուզում էի իմանալ,
Թե ամրոցն այդ ինչ էր իր մեջ ներփակել,

109 Մտնելուս պես իմ աչքերը շրջեցի
Եվ ամենուր տեսա մի դաշտ ընդարձակ,
Լի ցավերով ու կոծերով անոելի:

112 Ինչպես Աոլում, ուր Ռոդանն է լճանում,
Ինչպես Պոլում, Կառնարոյի ծոցի մոտ,
Ուր Իտալիո սահմաններն են վերջանում,

115 Շիրիմներ կան, որ վայրն անհարթ են դարձնում,
Այնպես այստեղ կային բազում շիրիմներ,
Որոնք տխուր պատկեր էին ընծայում:

118 Նրանց շուրջը բոցեր էին բարձրանում,
Շիկացնելով նրանց այնպես սաստկորեն,
Ինչպես երբեք երկաթը չի շիկանում:

121 Բացված էին կափարիչները նրանց,
Ուրկից ելնում էին ողբերը հոգվոց,
Որոնք ներսում տանջվում էին հրախանձ:

124 Ես ասացի. «Վարպե՛տ, ովքե՞ր են դրանք,
Որոնք թաղված դագաղների մեջ նման՝
Արձակում են դառնակսկիծ հեծեծանք»:

127 Եվ նա ասաց. «Հերձվածների պետերն են
Իրենց բոլոր հարողների հետ մեկտեղ,
Եվ լեցուն են դամբարանները այս ամեն:

130 Նմանն այստեղ նմանի հետ է թաղված,
Շիրիմներն են առավել կամ նվազ տաք»:
Եվ ապա մենք դեպի աջ կողմը ուղղված՝

133 Դամբարանների և պարսպի մեջ մտանք:

ԵՐԳ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Դամբարանների և պարսպի արանքով
Առաջացանք մեկը մյուսի ետևից:
Հուսկ վարպետիս ես դիմեցի այս հարցով.

4 «Ո՛վ վեմ միտք, որ համաձայն բաղձանքիս
Ինձ տանում ես պարունակից պարունակ,
Խոսիր ինձ և տուր գոհացում փափագիս:

7 Կարելի՞ է շիրիմների մեջ պառկած
Մարդկանց տեսնել: Խուփերն ահա բացված են,
Եվ նրանց մոտ պահապան էլ չի կանգնած:

10 Եվ նա ասաց. «Այդ բոլորը կփակվեն,
Երբ հոգիներն Հովսափաթից այստեղ գան
Մարմինների հետ, որ երկրում կրել են:

13 Այս կողմ ունեն գերեզմաններ առանձին
Էպիկուրն ու հետևորդները նրա,
Որոնք մարմնի հետ մեռցնում են և հոգին:

16 Ասա կգտնես պատասխանը քո հարցի
Եվ կատանաս գոհացումը փափագիդ,
Որի մասին դու լռում ես մտացի»:

19 Եվ ես նրան. «Բարեհոգի՛ իմաստուն,
Բան չեմ խոսում և սիրտս չեմ բաց անում,
Որպեսզի քեզ չպատճառեմ ձանձրություն»:

22 «Ո՛վ տոսկանցիդ, որ քաղաքով բոցավառ
Անցնում ես ողջ, այդպես համեստ խոսելով,
Խնդրում եմ քեզ այստեղ մի պահ դու կանգ առ:

25 Քո բարբառը ցույց է տալիս հայտնապես,
Որ ծնվել ես հայրենիքում այն ազնիվ,
Որի հանդեպ գուցե շատ խիստ եղա ես»:

28 Հանկարծ ահա այս խոսքերը դուրս եկան
Մի դամբանի խորքից, և ես առ ահի
Կիպ մոտեցա առաջնորդիս պատվական:

31 Եվ նա ասաց. «Այդպես ինչո՞ւ ես վեհեր:
Նայիր այնտեղ Ֆարինատան է կանգնել:
Երևում է, ահա, մեջքից մինչև վեր»:

34 Աչքերս այնժամ նրա վրա առան կանգ.
Իսկ նա կուրծքն ու ճակատը վեր էր ցցել,
Դժոխքի դեմ ասես ուներ քամահրանք։

37 Այն ժամանակ առաջնորդդս ինձ թափով
Դամբանների միջով մղեց դեպի նա,
Ասելով ինձ. «Խոսիր նրա հետ չափով»։

40 Երբ ես նրա դամբարանի մոտ հասա,
Նա ինձ նայեց և վեսորեն ինձ հարցրեց.
«Ովքե՞ր էին քո նախնիները, ասա՛»։

43 Ես նրանից ոչինչ ծածկել չուզելով,
Մերոնց մասին իմ գիտցածը պատմեցի։
Եվ նա ասաց հոնքերը վեր քաշելով.

46 «Նրանք եղան հակառակորդ չափազանց
Ինձ, իմ նախնյաց և իմ մարդկանց կուսակից.
Երկու անգամ աքսորեցի ես նրանց»։

49 «Աքսորվեցին, բայց ամենուստ ետ դարձան,—
Ես պատասխան տվի նրան անհապաղ,—
Սակայն ձերոնք այդ արվեստը չիմացան»։

52 Այնժամ ահա նույն դամբանի միջից բաց
Մի հոգի էլ ելավ ծնոտը մինչև։
Երևում էր, որ նա ծնկի էր եկած։

55 Շուրջս նայեց, ասես ուներ բուրդն իրդ
Ինձ հետ նաև մի ուրիշին տեսնելու,
Բայց երբ զրկվեց բոլորովին այդ հույսից,

58 Լալով ասաց. «Եթե զնդանն այս դժնյա
Դու եկել ես քո հանճարի վեհությամբ,
Ո՞ւր է որդիս և ինչո՞ւ չէ քեզ հետ նա»։

61 Եվ ես նրան. «Ես ինքնակամ չեմ եկել.
Ինձ սպասողն այնտեղ՝ տանում է առ այն,
Որին, կարծեմ, Գուիդոն չի հարգել»։

64 Պատժի կերպից և խոսքերից հայտարար
Ես արդեն իսկ հասկացա, թե ով էր նա,
Որով եղավ պատասխանը բավարար:

67 Հանկարծ ցցված՝ գոչեց ձայնով կորովի.
«Ի՛նչ ասացի՞ր: Նա չի հարգե՞լ: Ողջ չէ՞ նա:
Էլ չի՞ տեսնում քաղցրը լույսը արևի»:

70 Երբ նա տեսավ, որ իր հարցերն ինձ ուղղած
Անպատասխան ես թողեցի միառժամ,
Մեջքին ընկավ և այլևս չերևաց:

73 Իսկ անձն այն սեգ, որ ինձ կանգնել էր տվել,
Մնացել էր տեղում անշարժ, անայլայլ,
Եվ իր դեմքը ամենևին չէր փոխել:

76 «Եթե մերոնք այդ արվեստը չիմացան,—
Շարունակեց,— ապա այդ բանն ավելի
Տանջում է ինձ, քան այս դամբանը դաժան:

79 Սակայն նախքան հիսուն անգամ շողա վառ
Դեմքն այն կնոջ, որ տիրակալ է այստեղ,
Կիմանաս, թե այդ բան ինչքան է դժվար:

82 Իցիվ թե դու տեսնես աշխարհն անուշակ:
Բայց ասա ինձ՝ ձերոնք ինչո՞ւ մերոնց դեմ
Եղան այնքան անագորույն ու վայրագ»:

85 Եվ ես նրան. «Այն կոտորածը դժնյա,
Որից Արբիան շառագունեց արյունով,
Մեզ ստիպեց ձեր դեմ լինել անխնա»:

88 Նա ճոճելով գլուխն ասաց ի խորոց.
«Այդ կռվում ես մենակ չէի և առանց
Պատճառի չէր, որ միացա ես այլոց:

91 Բայց երբ մի օր որոշեցին կործանել
Եվ հիմնովին բնաջնջել Ֆլորենցիան,
Լոկ ես էի նրա պաշտպանը կանգնել»:

94 «Երանի թե հանգչեր զարմը ձեր մի օր,—
Ասացի ես:— Բայց լուծեցեք հանգույցն այն,
Որ իմ միտքը պարապատեց աստանոր:

97 Ինձ թվում է, եթե ես չեմ սխալվում,
Դուք ապագան նախատեսում եք կանխավ,
Մինչդեռ ներկան բոլորովին չեք տեսնում»:

100 «Մենք տեսնում ենք հեռու ընկած ապագան,—
Պատասխանեց,— նման մարդկանց հեռատես.
Երկինքը մեզ դեռ տալիս է լույս այդքան:

103 Երբ դեպքերը մերձակա կամ ներկա են,
Մենք չենք տեսնի, և ձեր մասին մենք ոչինչ
Չենք իմանա, եթե մեզ լուր չբերեն:

106 Արդ կարող ես մակաբերել պարզ ու ճիշտ,
Որ մեր ամեն իմացություն կջնջվի,
Երբոր փակվի ապագայի դուռն ընդմիշտ»:

109 Այնժամ սխալն իմ զղջալով լիովին,
Ես ասացի. «Այն ընկածին դուք կասեք,
Որ իր որդին կենդանի է տակավին.

112 Կասեք, եթե իմ պատասխանն ուշացավ,
Պատճառն այն էր, որ ունեի մի կասկած,
Որ դուք հիմա ինձ պարզեցիք այնքան լավ»:

115 Առաջնորդը ինձ կանչում էր արդեն ետ.
Ուստի հոգուն ես խնդրեցի, որ շտապ
Ինձ հաղորդեր, թե ուրիշ ով կար իր հետ:

118 Եվ նա ասաց. «Այստեղ մարդիկ կան բազում.
Ֆեդերիկ Բ-ն և Կարդինալն այստեղ են.
Ուրիշների մասին արդեն չեմ խոսում»:

121 Եվ ներս քաշվեց: Իսկ ես, կարի վշտահար,
Մոտեցա իմ առաջնորդին, խոկալով
Չարագուշակ այն խոսքերի մասին հար:

124 Առաջնորդը այնժամ ասաց ինձ ճամփին.
«Ինչո՞ւ այդքան մտատանջ ես երևում»:
Ես պատասխան տվի նրա այդ հարցին:

127 «Դու քո մասին լսածներդդ միշտ հիշիր»
Պատվիրեց ինձ իմաստունը, և ապա
Բարձրացնելով մատը ասաց. «Ինձ նայիր.

130 Երբ դու հասնես լույսին չքնաղ աչքերի,
Որ ամեն ինչ պարզ ու որոշ են տեսնում,
Կյանքիդ ուղին դու կիմանաս անթերի»:

133 Այս ասելով դեպ ձախ թեքվեց հապշտապ.
Մենք գնացինք մի շավիղով գաղտամես
Դեպի եզրը պարունակի զառիթափ,

136 Ուրկից մի սուր գարշահոտ էր հասնում մեզ:

ԵՐԳ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

Մենք մոտեցանք դարավանդի եզերքին,
Ուր ժայռերի կարկառները մեր ներքև
Պարզում էին մի խորխորատ ահագին:

4 Այնտեղ բուրող հոտից սուր ու գարշելի,
Որ փչում էր խորահատակ անդունդից,
Մենք քաշվեցինք սալի ետև մի շիրմի,

7 Որ ուներ այս տապանագիրը մթար.
«Այստեղ ներսում պառկած է պապն Անաստաս,
Որին ճամփից շեղեց Փոտինն այլափառ»:

10 «Հիմա այստեղ պետք է մի քիչ կանգ առնենք,
Որպեսզի մենք ընտելանանք գարշ հոտին.
Այնուհետև ուշ չենք դարձնի դրան մենք,—

13 Ասաց վարպետս։ Եվ ես. «Այնպես դու արա,
Որ մեր այստեղ սպասելը զուր չանցնի»։
Եվ նա. «Ես էլ մտածում եմ դրա վրա»։

16 Ապա հարեց. «Որդյա՛կ, տակն այս ժայռերի
Ուրիշ երեք պարունակներ կան, որոնք
Նեղանում են տակավ նման մյուսների։

19 Դրանք լի են հոգիներով նզովված.
Որպեսզի դու սրանց տեսքով գոհանաս,
Կասեմ ինչպես և ինչ կարգով են դասված։

22 Նպատակը ամեն տեսակ չարության
Իրավունքի խախտումն է, որ գործվում է
Խաբեության միջոցով կամ բռնության։

25 Խաբեությունն, իբրև մարդուն հատուկ ախտ,
Հոռեգույն է, և խաբողներն ավելի
Վարն են տանջվում ու ավելի են դժբախտ։

28 Բռնավորք են պարունակում առաջին.
Սա կազմում է երեք գոտի, ըստ որում
Բռնացվում են երեք անձեր առանձին։

31 Աստված, մարդը և մերձավորը մարդու
Բռնացվում են իրենց անձով և ինչքով,
Ինչպես պիտի արդ ինձանից լսես դու։

34 Մերձավորի դեմ գործում են բռնություն՝
Սպանելով ու խոցելով, կամ նրան
Կողոպտելով և քանդելով տեղ ու տուն։

37 Մարդասպաններն ու խոցողներն ստորին,
Ավազակներն ու քանդողները բոլոր
Պատժվում են ուստի գոտում առաջին։

40 Մարդ կարող է իր անձի և ինչքի դեմ
Բռնագործել, ուստի երկրորդ գոտու մեջ
Հարկ է կրի արդար պատիժը դժխեմ

43 Նա, ով իրեն վերացնում է աշխարհից,
Ով խաղի մեջ ժառանգությունն է վատնում
Եվ ողբում անդ, որտեղ կապրեր բերկրալից:

46 Աստուծո դեմ գործադրում են բռնություն,
Հայհոյելով նրան մտքով կամ խոսքով,
Կամ խախտելով նրա կարգը հաստատուն:

49 Դրա համար գոտին անձուկ, փոքրագույն
Իր հրով է դաղում Սոդոմն ու Գոմորն,
Եվ նրանց, որ հայհոյում են Աստուծույն:

52 Խաբեությունը, որ սրտեր է այրում,
Մարդ գործում է ընդդեմ նրա, ով իրեն
Վստահում է կամ իրեն չի վստահում:

55 Վերջին կերպով խախտվում է ու խզվում
Բնությունից ստեղծված կապը սիրո,
Ուստի երկրորդ պարունակում են տանջվում

58 Կեղծավորներ, շողոքորթներ, կախարդներ,
Կեղծարարներ, սրբապիղծներ, կավատներ,
Զեղծարարներ, գողեր և այլ անարգներ:

61 Իսկ մյուս կերպով խախտվում է ոչ միայն
Բնական կապն, այլև կապը հավելյալ,
Որից հատուկ մի հավատ է ծնվում լայն:

64 Ուստի վերջին պարունակի մեջ դաժան,
Ուր կենտրոնն է երկրի, կայքը Դևպետի,
Պատժվում է հավետ ամեն դավաճան»:

67 Եվ ես. «Վարպե՛տ, դու պարզեցիր ինձ լրիվ
Այս անդունդի բաժիններն ու ասացիր,
Թե ովքեր են պատուհասվում անդ խստիվ:

70 Բայց ասա ինձ՝ նրանք, ովքեր տանջվում են

Մրրիկներից, անձրևի տակ, ճահճի մեջ,
Եվ նրանք, որ ընդհարվում են ուժգնորեն,

73 Ինչո՞ւ չկան հրատոչոր քաղաքում,
Եթե իրոք բարկացրել են Աստուծուն,
Իսկ եթե չէ, այդպես ինչո՞ւ են տանջվում»:

76 Եվ նա ասաց. «Ինչո՞ւ շեղվում ես այդպես
Ողջմտության բնականոն ընթացքից.
Մի՞թե միտքդ անդամում է այլապես:

79 Չե՞ս հիշում քո հետազոտած **Էթիկան**,
Ուր լայնորեն քննության են առնված
Երեք հոռի հակումները մեղսական—

82 Անզսպություն, անբանություն, չարություն.
Եվ թե ինչպես անզսպությունը նվազ
Բասրելի է և նվազ տույժ ընդունում:

85 Եվ եթե դու լավ մտածես այս մասին,
Ու միտք բերես, թե ովքեր են պատժվում
Քաղաքից դուրս, ոլորտների մեջ վերին,

88 Կիմանաս, թե նրանք ինչու են ջոկված
Այս պիղծերից, և թե ինչու են նրանք
Ավելի մեղմ պատիժների ենթարկված»:

91 «Ո՛վ արեգակ, որ ցրում ես ամեն մուժ,
Լուսաբանումդ այնքան է ինձ գոհացնում,
Որ ինձ համար հարցեր տալը քաղցր է հույժ:

94 Վերադարձիր այնտեղ, ուր ինձ ասացիր,
Թե ինչպես է վաշխառությունը խախտում
Կարգն Աստուծո, և այս հանգույցը լուծիր»:

97 Եվ նա ասաց. «Փիլիսոփան անվանի
Իր երկերով ուսուցանել է հանախ,
Որ բնության ակնարքյուրը կենդանի

100 Իմաստությունն ու արվեստն են Աստուծու.
Եվ եթե դու քո **Ֆիզիկան** լավ քննես,
Անդ կգտնես, առանց երկար թերթելու,

103 Որ ձեր արվեստն հետևում է բնության,
Ինչպես սանը հետևում է ուսուցչին.
Նա Աստուծու թոռն է գալիս ըստինքյան:

106 Այդ երկուսով՝ բնությամբ և արվեստով,
Միայն պետք է մարդիկ ապրեն ու ծաղկեն,
Ինչպես գիտես Դանդոցի ասույթով:

109 Իսկ վաշխառուն ուրիշ ճամփա է բռնում
Եվ անարգում թե՛ բնություն, թե՛ արվեստ,
Զի իր հույսը այլ բանի մեջ է տեսնում:

112 Բայց էլ շարժվենք, մենք կարող ենք հապաղել,
Ձկներն արդեն հորիզոնում կայտռում են,
Սայլն էլ ահա դեպի Կավրոսն է թեքվել:

115 Մի քիչ այն կողմ ժայռը իջնում է նորեն»:

ԵՐԳ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Վայրէջքի տեղն, ուր մենք եկանք, շատ դիք էր,
Անդ կեցողն էլ տեսքով այնքան էր ահեղ,
Որ տեսնողը սարսափահար կլիներ:

4 Ինչպես ժայռն այն, որ ոչ հեռու Տրենտոյից,
Փուլ է եկել Ադիջեի ափերին
Երկրաշարժից կամ նեցուկի խախտումից,

7 Եվ գագաթից մինչ ստորոտը լեռան
Դարը այնքան փլուզված է, որ բարձրում
Գտնվողներն հազիվ իջնել կարենան,

10 Այսպես էր և այս գահավանդն ամեհի,
Իսկ անդունդի վրա կախված բարձունքին
Տարածվել էր նախատինքը Կրետեի,

13 Որ ծնվել է կեղծ ու պատիր կովի մեջ:
Տեսնելով մեզ՝ նա ինքնիրեն կծոտեց
Բարկությունից անզսպելի ու անշեջ:

16 Իմ վարպետը նրան ասաց համարձակ.
«Կարծում ես թե սա՞ է դուքսը Աթենքի,
Որ քեզ երկրի վրա արեց շանսատակ:

19 Կորի՛ր, գազա՛ն: Սա չի եկել քո քրոջ
Հրահանգով, այլ եկել է տեսնելու
Պատիժներն ու տանջանքները ձեր ամբողջ»:

22 Ինչպես ցուլը, որ կապանքներն է քանդում,
Երբ մի հարված է ստանում մահացու,
Եվ վազելու անզոր՝ վեր-վեր է ցատկում,

25 Այսպես արեց Մենոտավրը չարալից.
Զգոն վարպետս ինձ հորդորեց. «Վար վազիր,
Քանի դեռ նա կուրացած է զայրույթից»:

28 Այսպես իջանք քարակույտի վրայով,
Որը հաճախ գլորվում էր ոտքիս տակ,
Իմ կենդանի մարմնի բեռան պատճառով:

31 Մինչ մտորում էի, վարպետս ինձ ասաց.
«Այս փլվածքի մասի՞ն ես դու մտածում,
Որի պահակն այն գազանն է գազազած:

34 Արդ իմացիր, որ առաջին անգամին,
Երբ ես իջա այս ստորին Դժոխքում,
Այնտեղ դեռ այս փլվածքները չկային:

37 Սակայն նախքան Դժոխք իջնելը Նրա,
Ով այնտեղից երկինք տարավ շատերին,
Որ Դևպետի գերին էին հնօրյա,

40 Այս խոր վիհը այնքան ուժգին սասանվեց,
Որ կարծեցի՝ աշխարհ սիրով սարսռաց,
Որի համար, ինչպես մեկը ենթադրեց,

43 Տիեզերքում առաջացել է քաոս.
Այդ միջոցին այս ժայռն այստեղ և այլուր
Այսպես փլվեց ու գոյացավ դարուփոս:

46 Բայց դու նայիր արյան գետին այն եռուն,
Որտեղ սուզված պատուհասվում են նրանք,
Որ այլոց դեմ գործադրել են բռնություն»:

49 Օ՛, մոլի շահ, օ՛ բարկություն խոլական,
Դուք մեզ այնպես գրգռում եք կարճ կյանքում,
Հետո հավետ սուզում գետի մեջ արյան:

52 Ես տեսա լայն ու ծռաձև մի խանդակ,
Որ, ինչպես ինձ իմ առաջնորդն էր ասել,
Ընդգրկում էր հարթությունը բովանդակ:

55 Խանդակի և դարի միջև խմբովին
Վազում էին կենտավրոսներ նետազեն,
Ասես որսի էին գնում միասին:

58 Մեզ տեսնելով դարի վրա՝ կանգնեցին,
Եվ նրանցից երեք հոգի ջոկվելով
Աղեղով ու նետով մեր կողմ ուղղվեցին:

61 Նրանցից մեկն հեռվից գոռաց զայրադեմ.
«Ո՞ւր եք գնում, շուտ ասացեք այդտեղից,
Ապա թե ոչ՝ աղեղս ահա կարձակեմ»:

64 Վարպետս ասաց. «Մենք լոկ կտանք պատասխան
Ձեր Քիրոնին, երբ ավելի մոտենանք:
Հախուռն մտքերդ միշտ ի վնաս քեզ եղան»:

67 Եվ ինձ դարձավ. «Սա հենց Նեստոն է մախիզ,
Որ մահ գտավ Դեյանիրի պատճառով,
Բայց իր վրեժն ինքը լուծեց մեռնելիս:

70 Մեջտեղինը, որ կանգնել է գլխահակ,
Քիրոնն է մեծ, Աքիլլեսի հոգածուն,
Իսկ երրորդը Ֆոլոսն է ժանտ ու վայրագ:

73 Նրանք խմբով պտտվում են գետի շուրջ,
Նետհարելով նրան, ով դուրս է գալիս
Ավելի, քան նշված է իր մեղքով լուրջ»:

76 Մենք մոտեցանք հրեշներին նետընկեց:
Քիրոնն այնժամ իր մորուքը թավարծի
Նետի ծայրով ծնոտի տակ հավաքեց.

79 Եվ բանալով իր բերանը լայնածիր,
Ընկերներին ասաց. «Արդյոք դիտեցի՞ք,
Ետևինը երերցնում է դիպածն իր.

82 Մեռյալների ոտքերն այդպես չեն անում»:
Վարպետը, որ նրա կրծքին էր հասել,
Անդ ուր երկու բնույթներն են միանում,

85 Պատասխանեց. «Նա ողջ է ու գիտակից.
Ես էլ նրա առաջնորդն եմ այս վայրում.
Նա եկել է հարկից և ոչ քմայքից:

88 Մի կին երկնում ալելուիան ընդհատեց
Եվ եկավ ինձ այս նոր պաշտոնը տալու.
Ոչ սա է գող, ոչ ես հոգի չարաստեղծ:

91 Սակայն հանում այն գերագույն զորության,
Որ քայլերս է վարում վայրով այս վայրի,
Թող ձերոնցից մեկը ցույց տա մեզ ճամփան,

94 Եվ սրան էլ իր գավակին թող վերցնի
Ու անցկացնի գետի հունով ծանծաղուտ,
Որովհետև նա ստվեր չէ, որ թռնի»:

97 Քիրոնն ուղղվեց դեպի Նեսոսն ու ասաց.
«Դու տար սրանց, և եթե ձեզ հանդիպեն
Այլ ջոկատներ, կհեռացնես դու նրանց»։

100 Մենք շարժվեցինք մեր ուղեկցին առընթեր
Այդ եռացող արյան գետի երկայնքով,
Ուր խաշվողներն հանում էին սուր ճիչեր։

13 Տեսա ոմանց մինչև աչքերը սուզված։
Նեսոսն ասաց. «Բռնակալներ են սրանք,
Որ արյան ու ինչքի էին ծարաված։

106 Աստ տանջվում են ոճրի համար իրենց մեծ.
Աստ Ալեքսանդրն ու Դիոնիսն են դաժան.
Սա Սիկիլիան երկար ատեն կեղեքեց։

109 Նա, ով գլխին ունի մազեր այնքան սև,
Անձոլինն է, իսկ այն մյուսը շիկահեր
Օբիձոն է Էստեցի, որն, արդարև,

112 Երկրում խեղդվեց իր զավակից հարազատ»։
Երբ զարմանքով ես նայեցի վարպետիս,
Նա ինձ ասաց. «Դա ստույգ է ու հաստատ»։

115 Ապա Նեսոսն աչքերն հառեց քիչ հեռուն՝
Մի խումբ մարդկանց, որոնք մինչև վիզն իրենց
Սուզված էին արյան գետի մեջ եռուն։

118 Մեզ ցույց տվեց մեկին ընկած մեկուսի,
Եվ ասաց. «Սա ժամում խոցեց սիրտը այն,
Որ հարգվում է ցարդ կամուրջի վրա Թայմզի»։

121 Ապա տեսա հորձանքի մեջ այլ անձանց,
Որոնց գլուխն ու կուրծքն էին երևում
Եվ որոնցից ծանոթ էի ես ոմանց։

124 Այսպես քիչ-քիչ ծանծաղում էր գետը այն
Եվ միմիայն նրանց ոտներն էր ծածկում.
Եվ այստեղ մենք անցանք նրա հունով լայն։

127 «Եթե այս կողմ գետը տակավ ու տակավ
Ծանծաղում է,— ասաց Նեսոսը դարձյալ,—
Ապա հունից այն կողմ սակավ առ սակավ

130 Խորանում է և դառնում է հորդառատ,
Մինչև որ նա հասնում է մեծ բարձրության,
Ուր հեծում են բոնակալներն ապիրատ:

133 Այնտեղ Աստծու դատաստանով տանջվում են
Ատտիլասը՝ պատուհասը աշխարհի,
Եվ Քսիստոսը, և Պյուռոսը անօրեն:

136 Այնտեղ հորձքում հեծեծում են անդադար
Ռինիեր Կորնետն ու Ռինիեր դե՝ Պացցին,
Որոնք եղան հուղկահարներ անպատկառ:

139 Այս ասելով նա ետ դարձավ առանձին:

ԵՐԳ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

Նեսոսը դեռ գետից այն կողմ չէր անցել,
Երբ մենք մտանք արտասովոր մի անտառ,
Ուր ամեն մի շավիղ ի չիք էր դարձել:

4 Կանաչ չէին տերևները, այլ տմույն,
Ուղիղ չէին ուղեշները, այլ խոտոր,
Չիք պտուղներ, այլ լոկ փշեր լիաթույն:

7 Զեչինայից սկսած մինչև Կորնետո,
Ուր ապրում են կենդանիները վայրի,
Չկան այդքան թավաթփեր հախճթոր:

10 Անդ բույն ունեն Հարպիաները նողկալի,
Որ տրովացոց Ստրոֆադից վանեցին,
Գուշակելով տխուր դեպքերը գալիք:

13 Նրանք ունեն կանացի դեմք, լայն թևեր,
Կեռ մագիլներ և փետրալից խոշոր փոր,
Եվ ծառերից արձակում են կոիչներ:

16 Ինձ դառնալով ասաց վարպետս առաջնորդ.
«Մենք քանի դեռ չենք խորացել անտառում,
Իմացիր, որ հիմա գոտում ենք երկրորդ,

19 Որից այն կողմ ավազուտն է հրակեզ:
Իսկ այժմ այստեղ դու տեսնելու ես բաներ,
Որոնք պիտի հավատալի չլինեն քեզ»:

22 Ամեն կողմից լսում էի ողբ ու ճիչ,
Բայց ոչ ոքի չէի տեսնում շուրջը իմ,
Եվ զարմացած սպասեցի ես մի քիչ:

25 Կարծեմ թե նա կարծեց, որ ես կարծեցի,
Թե ճիչերն այդ հանում էին նրանք, որ
Փակված էին թփերի մեջ թավարծի:

28 Եվ ասաց ինձ. «Եթե երբեք դու պոկես
Այս տունկերից որևիցե մի ճյուղիկ,
Իրողությունն հայտնի պիտի դառնա քեզ»:

31 Այնժամ ձեռքըս ես մեկնեցի քիչ առաջ
Եվ մի թփից փոքրիկ մի ճյուղ պոկեցի:
«Ի՞նչ ես կտրում»— գոչեց բունը ցավատանջ:

34 Եվ երբ ճյուղը ամբողջ արյամբ սևացավ,
Դարձյալ գոչեց. «Ինչո՞ւ ես ինձ կտրատում,
Ի՞նչ խղճով ես ինձ պատճառում այդպես ցավ:

37 Մարդիկ էինք, հիմա դարձել ենք բույսեր,
Բայց օձերի հոգիներ իսկ լինեիք,
Պետք է մի քիչ դու լինեիր գթասեր»:

40 Ինչպես դալար մի բարունակ նրբեռի,
Երբ մի ծայրից այրվի, ապա մյուս ծայրից
Ջուր դուրս կտա և ճտճտոց կհանի,

43 Այսպես ելան այն փրցված ճյուղիկից
Խոսք և արյուն, և ես սաստիկ վախեցած՝
Անմիջապես այն բաց թողի իմ ձեռքից։

46 «Եթե երբեք նա հավատար այն դեպքին,—
Պատասխանեց առաջնորդը իմաստուն,—
Որ իմ երկում ես պատմել եմ տրտմագին,

49 Ձեռք չէր տա քեզ, ո՛վ հեգ հոգի վշտակեզ.
Բայց որպեսզի նա իսկությունն իմանա,
Ես ցավ ի սիրտ նրան կտրել տվի քեզ։

52 Բայց ով ես դու, ասա նրան, որպեսզի
Նա պահել տա հիշատակդ աշխարհում,
Ուր նա պիտի վերադառնա հավաստի»։

55 Եվ բունն ասաց. «Դու այնպես ես գերում ինձ
Քո խոսքերով, որ չեմ կարող ես լռել.
Արդ թույլ տվեք մի քիչ պատմել իմ կյանքից։

58 Ես նա եմ, որ ձեռքիս էի պահում սեղմ
Ֆեդերիկի բանալիները սրտի,
Եվ պտտացնում դրանք այնպես զգույշ, մեղմ,

61 Որ նա միայն ինձ էր գաղտնիք վստահում։
Իմ պաշտոնին այնպես էի նվիրված,
Որ ես հանգիստ ու քուն չէի խնայում։

64 Բայց պոռնիկը, կործանարարն աշխարհի,
Որ իր պիղծ ու խենթ աչքերը երբեք
Չի հեռացնում արքունիքից Կեսարի,

67 Դրանիկներին բոլոր իմ դեմ բորբոքեց,
Եվ վեհապետն, հրահրված նրանցից,
Իմ լավ վարկը տխուր սուգի փոխարկեց։

70 Եվ այնժամ ես, խոր զայրույթով տենդահար,
Կամենալով մահով պրծնել անկումից,
Ինձ՝ արդարիս հանդեպ դարձա անարդար։

73 Երդվում եմ նոր արմատներով այս բնի,
Որ ես երբեք չխաբեցի իմ տիրոջ,
Որ այնքան էր հարգ ու պատվի արժանի:

76 Եվ ով աշխարհ վերադառնա ձեզանից,
Թող պաշտպանի իմ պատիվը անբասիր,
Որ խորտակվեց չար նախանձի հարվածից»:

79 «Ահա լռեց,— ասաց ինձ տերս հոգաբարձ.—
Ժամանակը սուղ է, խոսիր նրա հետ,
Հարցրու նրան, եթե ունես ուրիշ հարց»:

82 «Ինքդդ հարցրու,— ասացի ես,— դու գիտես,
Թե ինչ բան է ինձ հարկավոր իմանալ,
Ես չեմ կարող, այնքան հուզված եմ արդ ես»:

85 Վարպետս այնժամ դիմեց բնին տխրատես.
«Քո խնդրանքը սա պատրաստ է կատարել.
Իսկ արդ, բանտված հոգի, հաճիր ասել մեզ,

88 Ինչպես ընկնում ու ներփակվում է հոգին
Այս թփերում, և նրանցից ազատվել
Կարելի՞ է և հաջողվո՞ւմ է մեկին»:

91 Այնժամ բունը փչեց ուժգին մի թափով,
Եվ այդ շունչը այս խոսքերին վերածվեց.
«Ձեզ պատասխան պիտի տրվի կարճ կերպով:

94 Երբ խոլ հոգին ինքն իր կամքով բաժանվում,
Հեռանում է իր մարմնական պատյանից,
Նրան Մինոսն այս անտառն է ուղարկում.

97 Նրան մի տեղ չի սահմանվում մասնավոր.
Նա ընկնում է այստեղ մի տեղ ըստ բախտի
Եվ բողբոջում ինչպես հատիկ բեղմնավոր:

100 Նա աճում է, հետո դառնում ծառ վայրի,
Իսկ Հարպիաներն իր տերևներն ուտելով՝
Ցավացնում են և անցք բացում ցավերի:

103 Մեր մարմինները անեղ օրում կգտնենք.
Սակայն դրանք մենք այնքս չենք հագնի,
Չի արդար չէ առնել, ինչ որ թողել ենք:

106 Մենք քարշ կտանք դրանք վայրն այս տխրագին,
Եվ մարմինը ամեն մեկիս կկախվի
Այն թփուտից, ուր փակված է մեր հոգին»:

109 Մենք դեռ լարված լսում էինք բնին այն,
Կարծելով որ դեռ բան ունի ասելու,
Երբ մեզ հասավ մի վայնասուն մեծաձայն,

112 Նման նրան, ով իր տեղից թաքնված
Շների ու կինճի ոռնոց է լսում
Եվ ճրթոցը տերևների կոխկրտված:

115 Արդ ձախ կողմից երկու հոգի վատարի
Մերկ, ճանկոտված, վազում էին սրընթաց,
Զարդոտելով բոլոր ճյուղերն անտառի.

118 Առջևինը բղավում էր «Մա՛հ, հասի՛ր»,
Իսկ մյուսը, որ չէր կամենում ետ մնալ,
Գոռգոռում էր. «Լանո՛, այդքան ժիր չէիր,

121 Երբ դու փախչում էիր կռվից Տոպպոչի»:
Եվ ապա նա, շնչակտուր լինելով,
Թաքնվեց մեջն ստվարախիտ մի թփի:

124 Իսկ ետևում ողջ անտառը լեցուն էր
Սև, սովատանջ ու սուրացող քաժերով,
Ինչպես անթիվ շղթայազերծ քերծեներ:

127 Երբ շները թաքնվածի մոտ հասան,
Ատամներով բզկտեցին նրան լավ,
Ապա հոշված իր անդամները տարան:

130 Առաջնորդս այնժամ բռնեց իմ ձեռքից
Եվ ինձ տարավ այն թփի մոտ, որ իզուր
Բողոքում էր իր արյունոտ ջարդվածքից:

133 «Զակոմո դա Սանտ՝ Անդրեա,— ասում էր,—
Ի՞նչ շահեցիր ինձ դարձնելով քեզ պատվար.
Ինչո՞ւ ցավերս ծանրացրիր կարեվեր»:

136 Մոտենալով վարպետս ասաց այն հոգուն.
«Ո՞վ ես դու, որ խոցվածքներիդ միջով այդ
Դուրս են տալիս ցավոտ խոսքեր և արյուն»:

139 «Ո՛վ հոգիներ,— ասաց թուփը այնժամ մեզ,—
Որ եկել եք տեսնելու ջարդն այս անխիղճ,
Որ քրքրեց ու քայքայեց ինձ այսպես,

142 Հավաքեցեք տերևներրս բնիս քով:
Ես ծնվել ու ապրել եմ այն քաղաքում,
Որ հին տիրոջ փոխարինեց Մկրտչով.

145 Ուստի նա մեզ կոխարեցնի անդադար,
Եվ եթե դեռ անցքի վրա Առնոյի
Չպահպանվեր նրա մասունքն անվթար,

148 Ապա նրանք, որ նոր քաղաք հիմնեցին
Ատտիլասի ավերների հենց վրան,
Իզուր պիտի ջանքեր թափած լինեին:

151 Բնակարանս ես դարձրի ինձ տանջարան»:

ԵՐԳ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ

Հուզված հուշից իմ հայրենյաց սիրատուն,
Հավաքեցի այն տերևները ցիրցան
Եվ հանձնեցի արդեն լռած այն հոգուն:

4 Մենք անտառով եկանք հասանք այն եզրին,
Ուր գատվում է երկրորդ գոտին երրորդից
Եվ երևում աճեղ վճիռը վերին:

7 Արդ որպեսզի դառնա ամեն ինչ հայտնի,
Ասեմ, որ մենք հասանք մի կորդ հարթավայր,
Ուր չէր աճում և ոչ մի բույս կենդանի:

10 Ցավոտ անտառն օղակում էր բացատն այն,
Ինչպես արյան գետը՝ անտառը հիշյալ.
Մենք կանգնեցինք նրա եզրին առժամայն:

13 Գետինն ամբողջ չոր ավազով էր պատած,
Ճիշտ ինչպես այն ավազուտը հրաշեկ,
Որ Կատոնը ոտքերով էր կոխկրտած:

16 Օ՜ Աստուծո պատուհասիչ դատաստան,
Որքա՛ն պետք է ահուդողով համակվի,
Ով տեսնի այն, ինչ իմ աչքերը տեսան:

19 Այնտեղ տեսա բազմաթիվ մերկ հոգիներ,
Որոնք ողբում-կոծում էին դառնորեն,
Բայց ունեին այլատեսակ վիճակներ:

22 Ոմանք գետնին պառկած մեջքն ի վար,
Ոմանք նստած-պպզած էին ինքնամփոփ,
Իսկ ոմանք էլ քայլում էին անդադար:

25 Քայլողները շատվոր էին ամենքից,
Իսկ պառկածներն ամենաքիչը թվով,
Բայց ավելի ուժգին ճչում տանջանքից:

28 Ավազի վրա դանդաղորեն, շարունակ
Բոց էր տեղում ծվեններով լայնածիր,
Ինչպես ձյունը սարում անհողմ ժամանակ:

31 Ինչպես հնդկաց գավառներում հրատապ
Ալեքսանդրը իր զորքերի վրա հոծ
Տեսավ տեղալն հուր բոցերի մի տարափ,

34 Եվ հրամայեց զինվորներին կոխկրտել
Բոցերն ընկած, իմանալով որ դրանք
Հեշտ է հանգցնել, քանի դեռ չեն ծավալվել,

37 Այսպես այստեղ միշտ տեղում էր հուր ու բոց.
Եվ ավազն էլ շիկանում էր դրանից,
Սաստկացնելով չարչարանքները հոգվոց:

40 Սրանք շարժում էին ձեռքերը յուրյանց,
Մերթ այս կողմից, մերթ այն կողմից թափ տալով
Իրենց վրա ընկած բոցերն հրախանձ:

43 Ես ասացի. «Վարպե՛տ, դու որ հաղթում ես
Ամեն ինչի, բացի այն ժանտ դևերից,
Որ այն դռան մուտքին արգելք եղան մեզ,

46 Ո՞վ է մեծն այն, որ պառկած է անզարհուր,
Քամահրելով կրակները տեղացող,
Ասես նրան չի խեղճացնում անձրևն հուր»:

49 Երբ նկատեց, որ իր մասին էի ես
Առաջնորդիս հարցնում, հոգին մոնչաց.
«Ինչպես եղա կյանքում, հիմա էլ եմ վեհ:

52 Զևսը նորից թող հոգնեցնի իր դարբնին,
Որի ձեռքից առավ շանթը սայրասուր
Եվ ինձ խոցեց իմ օրհասի մեջ վերջին,

55 Կամ մյուսներին թող փոխնիփոխ չարչարի
Մոնգիբելլի դարբնոցի մեջ սևամած,
Բղավելով «Օգնիր, Վուլկան քաջարի»,

58 Ինչպես արեց Ֆլեգրայի գոռ մարտում,
Եվ թող նա ինձ զարկի ամբողջ զորությամբ,
Իր վրեժը չի ստանա գոհացում»:

61 Վարպետս այնժամ խոսեց կրքով բացահայտ,
Ինչպիսին ես չէի լսել նրանից.
«Ո՛վ Կապանևս, գոռոզությանդ համար այդ

64 Արժանի ես պատժվելու այդպես միշտ.
Այդ պատիժդ քեզ տեղին է ու հարմար
Քո վարքի ու բարքի հպարտ ամբարիշտ»:

67 Եվ հանդարտած դեմքով դարձավ դեպի ինձ.
«Սա մեկն է յոթ արքաներից այն վեր,
Որոնք Թեբեն պաշարեցին չորս կողմից։

70 Նա քամահրեց և քամահրում է Աստծուն.
Սակայն նրա շարժումները ժպիրն
Նրա անձի զարդարանքներն են սազում։

73 Հիմա արի իմ ետևից, բայց նայիր,
Որ ոտքերդ բորբ ավազին չհպես,
Այլ անտառի եզերքներին միշտ պահիր»։

76 Մենք լուռ ու մունջ հասանք մինչև մի գետակ,
Որ անտառից էր դուրս ցայտում և որի
Կարմրությունը առաբեկեց ինձ համակ։

79 Բուլիկամից ինչպես առվակ է հոսում,
Որից ջուր են վերցնում կանայք վուշ գզող,
Այսպես և նա ավազն ի վար էր վազում։

82 Նրա հատակն ու ափերը ապալեր
Պնդացել ու դարձել էին քարակոփ.
Ես հասկացա, որ այդտեղ էր անցքը մեր։

85 «Այն ամենում, ինչ որ ես ցույց տվի քեզ,
Այն պահից, երբ անցանք դռնից Դժոխքի,
Որի մուտքը բաց է եղել մշտապես,

88 Քո աչքերը այնպիսի բան չտեսան,
Ինչպիսին է այս գետակը շառագույն,
Որ հանգցնում է ընկած բոցերը վրան»։

91 Այս խոսքերը առաջնորդը ինձ ասաց.
Եվ ես նրան թախանձագին խնդրեցի,
Որ անունդ տար ախորժակիս իր բացած։

94 «Կա մի ավեր երկիր ծովում միջերկրյա,—
Պատասխանեց,— որ կոչվում է Կրետե,
Ուր երջանիկ էին մարդիկ հնօրյա։

97 Այնտեղ Իդա կոչված մի լեռ կա հայտնի,
Որ ծաղկուն էր ջրերով ու ծառերով,
Իսկ ներկայիս տխուր է ու ամայի:

100 Ռեան այնտեղ ընտրեց մանկան թաքստոց,
Եվ ծածկելու համար ճիչերը նրա,
Աղմուկ հանել հանձնարարեց յուրայնոց:

103 Լեռան մեջ կա ծերի արձան մի հսկա,
Որ կոնակը դեպի Դամիատ է դարձրած
Եվ հայացքը դեպի Հռոմն հեռակա:

106 Նրա գլուխն անեղծ ոսկուց է կազմված,
Իսկ կուրծքը և բազուկները՝ արծաթից,
Եվ պղնձից՝ մինչև ազուկն երկայնուված:

109 Այնտեղից ցած ամբողջ ընտիր երկաթ է,
Միայն թե աջ ոտքը կավից է թրծած,
Եվ կանգնած է սրա վրա գրեթե:

112 Գլխից քացի, մյուս մասերն ունեն ծերպ,
Ուրկից շիթ-շիթ արտասուքներ են կաթում
Եվ այս ծայրն են փորում հոսքով միակերպ:

115 Ու իրենց այդ անդունդն ի վար ընթացքով
Ախերոն, Ստիքս ու Ֆլեգեթոնն են կազմում.
Ապա դարձյալ գահավիժում են անցքով

118 Մինչև հատակն, ուր տեղ չկա իջնելու
Եվ կազմում են Կոկիտոնը, որ հետո
Դու կտեսնես, այժմ հարկ չկա խոսելու»:

121 Ես ասացի. «Եթե այս գետը ոչ լայն
Հաստատապես մեր աշխարհից է ծագում,
Ապա ինչո՞ւ լոկ այստեղ ենք տեսնում այն»:

124 Եվ նա ասաց. «Գիտես, որ վայրս է կլոր,
Թեպետև մենք միշտ քայլեցինք դեպի ձախ,
Իջնելով ստ անդունդն ի վար խորախոր,

127 Բայց բոլորքով մենք չենք անցել տակավին.
Ուստի եթե նոր քան է մեզ երևում,
Դու դրանից մի զարմանա բնավին»:

130 «Ֆլեգեթոնն ու Լեթեն ո՞ւր են գտնվում,—
Հարց տվի ես:— Մեկի մասին լռում ես,
Մյուսն, ասում ես, այս շիթերից է կազմվում»:

133 «Քո հարցն,— ասաց,— տեղին է ու խելացի,
Բայց եռումը այս ջրերի շառագույն
Քեզ պետք է տար լուծումը քո մի հարցի:

136 Դու կտեսնես Լեթեն ոչ այս անդնդում,
Այլ այնտեղ, ուր մաքրագործվում է հոգին
Եվ զղջումով իր մեղքերից ազատվում»:

139 Ապա հարեց. «Էլ հեռանանք անտառից,
Դու աշխատիր ինձ հետևել հիմա լուռ.
Մեր ճանապարհն ընթանում է գետեզրից,

142 Որի վրա շիջանում է ամեն հուր»:

ԵՐԳ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ

Արդ գնում ենք մի քարափի երկայնքով.
Իսկ գետակից վեր բարձրացող գոլորշին
Ափերն հրից զերծ էր պահում իր մեգով:

4 Ինչպես ֆլամանք կառուցում են ամբարտակ
Գուիսսանտի ու Բրյուգի միջև, որպեսզի
Վանեն գրոհն ալիքների սանձարձակ,

7 Եվ կամ ինչպես Բրենտա գետի երկայնքին
Պատնեշներ են բարձրացնում պադուացիք,
Որ պաշտպանեն կայքերն իրենց թանկագին,

10 Այդպես էին շինված քարե ափերն այն,
Բայց վարպետը նրանց, ով էլ որ լիներ,
Չէր կառուցել նույնքան բարձր ու նույնքան լայն:

13 Մենք անտառից այնքան էինք հեռացել,
Որ ինչքան էլ ես նայեի դեպի ետ,
Էլ անկարող կլինեի այն տեսնել:

16 Մեզ հանդիպեց հոգվոց մի խումբ ներքևում,
Որ մատչելով նայում էին մեզ այնպես,
Ինչպես մարդիկ մեկը մյուսին են նայում

19 Երեկոյան մթնշաղին տարաժամ,
Եվ քիթերը ուղղել էին մեզ այնպես,
Ինչպես ասղան անցքին դերձակը զառամ:

22 Մինչդեռ նրանք նայում էին մեզ այդպես,
Նրանցից մեկն ինձ ճանաչեց ու բռնեց
Իմ քղանցքից, գոչելով. «Ի՜նչ հրաշք, տես»:

25 Երբ բազուկը նա դեպի ինձ երկարեց,
Ես նայեցի նրա դեմքին հրախանձ,
Բայց այդ տեսքը ինձ բնավ էլ չարգելեց

28 Իմանալու թե ով էր այդ հոգին հեգ,
Եվ գլուխը խոնարհելով դեպի նա,
Ես ասացի. «Տե՛ր Բրունետտո, այդ դո՞ւք եք»:

31 Եվ նա ասաց. «Որդյա՛կ, դժգոհ մի լինի,
Եթե մի քիչ Բրունետտո Լատինոն
Քեզ հետ խոսի և մյուսներից ետ ընկնի»:

34 Ես ասացի. «Խնդրեմ, սիրով ամենայն,
Եթե կուզեք այստեղ ձեզ հետ կկանգնեմ,
Միայն թե սա դրան լինի համաձայն»:

37 «Որդյակ,— ասաց,— մեզանից մեկը եթե
Մի պահ կանգնի, մի դար անշարժ կպառկի
Այս հրեղեն անձրևի տակ դժպատեհ:

40 Ուստի քայլիր. ես քեզ մոտից կուղեկցեմ,
Ապա դարձյալ կմիանամ իմ խմբին,
Որ կրում է պատիժն իր դառն ու դժխեմ:

43 Ես սիրտ չէի անում իջնել քարափից
Եվ նրա հետ համհավասար ընթանալ,
Բայց գլխահակ էի քայլում հարգանքից:

46 Եվ նա հարցրեց. «Ի՞նչ բախտ կամ ի՞նչ որոշում
Մահիցդ առաջ այս անդունդը քեզ բերեց.
Եվ ո՞վ է սա, որ ճանապարհդ է նշում»:

49 «Այնտեղ վերև պայծառ կյանքում երկրային,—
Ասացի ես,— մոլորվեցի մի հովտում,
Հազիվ հասած իմ լիարժեք հասակին:

52 Ես դեռ այնտեղ էի երեկ առավոտ,
Երբ իմ դարձին երևաց սա, որ հիմա
Առաջնորդում է ինձ ճամփով այս ցավոտ»:

55 Եվ նա ասաց. «Թե հետևես քո աստղին,
Դու կհասնես նպատակիդ փառավոր,
Որքան կյանքում լավ դիտեցի քո ուղին.

58 Եվ եթե ես չմեռնեի վաղաժամ,
Ապա, ի տես քո ընթացքին երկնահամ,
Քո գործերում քեզ կօգնեի հարաժամ:

61 Բայց ժողովուրդն այն ապերախտ ու անսիրտ,
Որ վաղնջուց Ֆիեզոլից է իջել
Եվ տակավին մնում է բիրտ ու անկիրթ,

64 Բարվույդ համար կլինի քո թշնամին.
Եվ իրավամբ, զի սիների մեջ վայրի
Քաղցրը պտուղ չի կարող տալ թզենին:

67 Մի հին առած անվանել է նրանց կույր.
Նրանք ագահ, նախանձոտ են ու գոռոզ.
Նրանց մեջ քեզ պահիր անեղծ ու մաքուր:

70 Ի պատիվ քեզ երկու կողմերն ահոյան
Կկամենան քեզ հոշոտել, բայց իզուր,
Կտուցները խոտից հեռու կմնան:

73 Թող ֆիեզոլյան անասունները անտեր
Իրար ուտեն և ձեռք չտան այն բույսին,
Որ աճում է գոմաղբի մեջ նրանց դեռ,

76 Պահպանելով սերմը ջինջ ու անարատ
Այն հոռոմալեցոց, որոնք այնտեղ մնացին,
Երբ հիմնարկվեց որջը այնքան ապիրատ»:

79 «Եթե բաղձանքս հաշվի լիներ առնված,—
Ասացի ես ի պատասխան,— ապա դուք
Դեռ աշխարհից չէիք լինի հեռացած:

82 Իմ հոգու մեջ դրոշմված է խորապես
Ձեր բարի ու քաղցր պատկերն հայրական,
Երբ աշխարհում ուսուցանում էիք մեզ,

85 Թե ինչպես մարդ կանմահանա գործերով:
Եվ իմ կյանքում երախտիքս ձեր հանդեպ
Հարկ է, որ ես հայտնեմ անկեղծ խոսքերով:

88 Ձեր ծանուցը մյուսների հետ կհիշեմ,
Որ տիրուհուս լուսաբանել տամ հետո,
Եթե երբեք մի օր նրա մոտ հասնեմ:

91 Բայց ուզում եմ, որ ձեզ մի բան պարզ լինի.
Թող միմիայն չկշտամբի խիղճս ինձ,
Ես կտոկամ բախտի ամեն հարվածի:

94 Այդ ազդերը նորություն չեն ինձ համար.
Բախտն ու մարդիկ ինչ ուզում են թող անեն,
Ես կլինեմ հաստատակամ ու համառ»:

97 Վարպետս այնժամ դառնալով ետ, դեպի ինձ,
Մի պահ նայեց և այս հորդորն ինձ տվեց.
«Ով խելոք է, խրատվում է ուրիշից»:

100 Բայց ես նորից Բրունետտոյին դիմեցի
Եվ հարցրի, թե իր խմբի մեջ որո՞նք են
Ընկերները ամենից մեծ, մտացի:

103 Եվ նա ասաց. «Մի քանիսին կնշեմ,
Իսկ մյուսների մասին կանցնեմ լռությամբ,
Չի ժամանակ չկա, որ ես երկարեմ:

106 Ամփոփակի իմացիր, որ բոլորն էլ
Կղերական ու գրական դեմքեր են,
Որոնք երկրում նույն մեղքով են աղտեղվել:

109 Այդ ցավալի շրջանակի մեջ են լայն
Պրիշիանոն և Ֆրանչեսկո դ՝ Ակկորսոն,
Դու կարող ես այնտեղ տեսնել և պիղծն այն,

112 Ում ծառայից ծառան շուտով փոխադրեց
Առնոյից դեպ Բակկիլյոնե, ուր և նա
Իր հույժ լարված ջղերն հավետ հանգչեցրեց:

115 Կարող էի ես անվանել դեռ այլոց,
Բայց ժամանակ չկա երկար խոսելու.
Տես ավազից բարձրանում է ծուխ ու բոց.

118 Մի նոր խումբ է, պետք է խույս տամ նրանից:
Գանձը, որում ապրում եմ դեռ, լավ պահիր,
Ես միմիայն այդ եմ խնդրում քեզանից»:

121 Նա շուռ եկավ և վազ տվեց դեպի աջ,
Ինչպես նրանք, որ վազում են Վերոնում
Ստանալու համար դրոշը կանաչ,

124 Եվ նմանվեց նա հաղթողին այդ վազքում:

ԵՐԳ ՏԱՍՆՎԵՅԵՐՈՐԴ

Լսում էի արդեն շռինդը ջրի,
Որ թափվում էր պարունակը հետևյալ,
Ինչպես բզզոց մեղուների պարսերի,

4 Երբ որ հանկարծ երեք հոգի-ստվերներ
Միահաղույն անջատվեցին մի խմբից,
Որ անցնում էր բոցերի տակ տանջաբեր:

7 Ուղղվելով մեզ, նրանք հեռվից գոչեցին.
«Կանգ առ մի պահ: Քո հագուստից իմացանք,
Որ եկել ես մեր քաղաքից չարաձին»:

10 Օ ի՜նչ խոցեր նրանց վրա տեսա ես,
Որոնք կիզիչ հրից էին գոյացել.
Երբ հիշում եմ, դեռ ցավում եմ դառնապես:

13 Նրանց ձայնից առաջնորդդս խորագետ
Ինձ դարձավ և ազդարարեց. «Սպասի՛ր,
Պետք է լինել քաղաքավար սրանց հետ:

16 Եթե այստեղ հուր չտեղար հարակեզ,
Ես կասեի, որ դու պետք է փութայիր
Դեպի նրանք, ոչ թե նրանք դեպի քեզ»:

19 Հենց որ կեցանք, նրանք նորից շարժվեցին.
Եվ երբ նրանք արտորանքով հասան մեզ,
Երեքով մեկ տեղում պտույտ գործեցին:

22 Եվ ինչպես մերկ ըմբիշները կորովի
Ուշիուշով հետաքննում են միմյանց,
Նախքան անցնելն իրարու դեմ գրոհի,

25 Այսպես նրանք ինձ նայեցին պշնորեն,
Պտտվելով այնպես, որ վիզը նրանց
Ու ոտները շարժվում էին տարորեն:

28 «Թեև տեղն այս, ուր ընկել ենք մենք այսպես,—
Ասաց մեկը,— և մեր դեմքերն հրախանձ
Քամահրանքի արժանի են դարձնում մեզ,

31 Սակայն հանուն մեր համբավի ու փառքի
Մեզ զիջանիր ասելու թե ո՛վ ես դու,
Որ անցնում ես անվախ միջով Դժոխքի:

34 Ահա սա, որ իմ առջևից է գնում,
Թեև մերկ է ու մարմինը խանձայոյց,
Բարձրաստիճան մի դիրք ուներ աշխարհում:

37 Նա հենց թոռն է Գուալդրադայի բարեգով.
Նա կոչվում է Գուիդո Գուերրա, և կյանքում
Շատ գործեր է արել թրով ու խելքով:

40 Իսկ մյուսը, որ իմ ետևից է քայլում,
Ալդոբրանդի Տեգիայոն է, այր խելոք,
Որի խոսքը պետք է լսվեր աշխարհում:

43 Ես, որ այսպես չարչարվում եմ նրանց հետ,
Ռուստիկուչչի Ցակոպոն եմ, և անշուշտ
Իմ կորստյան բուն պատճառը կինն էր հեստ»:

46 Եթե հրից ես մնայի անվթար,
Կանեմի ճերքն՝ նրանց գրկելու,
Որ իհարկե վարպետը ինձ թույլ կտար:

49 Բայց որ վտանգ կար այրվելու, մրրկվելու,
Իմ երկյուղը հաղթեց կամքին իմ բարի,
Որ տենչ ուներ նրանց ամուր փարվելու:

52 Ես ասացի. «Հենց որ տերս պատվական
Ասաց խոսքեր, որ կոաՀել ինձ տվին,
Թե դուք իրոք հոգիներ եք պատվարժան,

55 Իմ արտի մեջ ձեր վիճակը դժնդակ
Ծնեց ոչ թե արհամարհանք, այլ մորմոք,
Որ կմնա իմ մեջ երկար ժամանակ:

58 Ես ինքդս ձեր համերկրացին եմ բնիկ.
Ես սիրով ու հարգանքով եմ միշտ հիշել
Ձեր գործերն ու անունները ազդեցիկ:

61 Դառը թողնում, քաղցրը տեղանքն եմ գնում,
Որ ինձ անսուտ առաջնորդդ է խոստացել.
Բայց պետք է նախ իջնեմ երկրի կենտրոնում»:

64 «Իցիվ թե դու դեռ ապրեիր ընդերկար,—
Պատասխանեց այն ատեն ինձ նույն հոգին,—
Եվ համբավդ էլ մահից հետո շողշողար:

67 Արդ ասա մեզ, բարքերն ազնիվ ու տիպար
Մեր քաղաքում շարունակո՞ւմ են ապրել,
Թե այնտեղից անհետացել են իսպառ:

70 Քանզի Գուլլելմ Բորսիերեն, որ այստեղ
Նոր է եկել և մեր խմբում է հիմա,
Մեզ բերել է տխուր լուրեր սրտակեղ»:

73 «Նոր-նոր մարդիկ և վաստակներ նյութական,
Օ՜ Ֆլորենցիա, քեզ դարձրել են սնապարծ
Ու սանձարձակ, որից տուժում ես այնքան»—

76 Գոչեցի ես, բարձրացնելով դեմքդս վեր.
Այդ լսելով երեքն իրար նայեցին,
Նման նրանց, որ լսում են ճիշտ բաներ:

79 «Թե ամեն ինչ այսպես շիտակ ես ասում,—
Երեքով մեկ նրանք տվին պատասխան,—
Երանի քեզ, որ դու անկեղծ ես խոսում.

82 Բայց եթե դու դուրս գաս տեղից այս մոայլ՝
Նորից չքնաղ լույս աստղերը տեսնելու,
Եվ ուզենաս հիշել աշխարհն հանդերձյալ,

85 Ասա մարդկանց, որ տեսել ես այստեղ մեզ»:
Ապա նրանք թեթևասույր սլացքով
Մեզնից փախան ու հեռացան փութապես:

88 Չի կարելի արտասանել մի «ամեն»
Ավելի շուտ, քան որ նրանք չքացան։
Եվ վարպետը մեկնել վճռեց այն ատեն։

91 Եվ ահա մենք առաջացանք, և քիչ անց
Ջրի շառաչն այնքան մոտից հասավ մեզ,—
Որ խոսելիս չէինք լսում մենք միմյանց։

94 Ինչպես գետն այն,— որ իր ուրույն հունով նախ
Մոնվիզոյից դեպ արևելք է հոսում,
Երբ բխում է Ապենինի լանջից ձախ,

97 Եվ որ վերին, սկզբնական հոսանքում,
Նախքան իջնելն հարթավայրը Ֆոռլիի,
Իր անվան տեղ Ակուակետա է կոչվում—

100 Շառաչյունով թավալվում է դարն ի վար,
Սուրբ Բենեդիկտ կոչված գյուղի վերևում,
Ուր կարող է բազում սահանք գոյանար,

103 Այսպես այստեղ թավալվում էր ժայռն ի վար
Գորշ ջրվեժը այնպիսի գոռ բոմբյունով,
Որ կարող էր խլացնել մեզ իսպառ։

106 Մեջքիս կապած ես մի պարան ունեի,
Որով բռնել մտածեցի մի անգամ
Խայտաճամուկ մորթով հովազն ամեհի։

109 Առաջնորդիս հրամանի համաձայն
Ես իմ մեջքից արձակեցի պարանն այդ
Եվ կծկելով երկարեցի նրան այն։

112 Առաջնորդը այնժամ դարձավ դեպ աջ դին
Եվ եզերքի կարկառներից քիչ հեռու
Արձակեց այն անդունդն ի վար խավարչտին։

115 «Արդ պետք է որ,— ներքուստ ասում էի ես,—
Այդ նշանին մի պատասխան հետևի,
Եթե վարպետս ուշով նայում է այդպես»։

118 Մարդիկ պարտ են զգուշավոր միշտ լինել
Այն անձանց մոտ, որոնք գիտեն ոչ միայն
Գործը տեսնել, այլև միտքը թափանցել:

121 Նա ինձ ասաց. «Կբարձրանա վեր շուտով
Այն, ինչ որ մենք սպասում ենք՝ ես ու դու.
Այդ դու հիմա կնկատես քո աչքով»:

124 Ճշմարիտն այն, որ նմանվում է սուտի,
Պետք է պահել ամուր փակած շրթներով,
Այլապես նա մեզ կենթարկի ամոթի:

127 Սակայն այստեղ ես չեմ կարող մնալ լուռ.
Երդվում եմ իմ Կատակերգով, ընթերցող,
— Երանի նա շնորհ գտներ ամենուր,—

130 Ես տեսա, որ մութ ու մռայլ վիհն ի վեր
Բարձրանում էր լողով ճիվաղ մի աճեղ,
Որ վախ կազդեր նույնիսկ սրտին անվեհեր.

133 Նավազն այսպես բարձրանում է ծովալքից,
Երբ խարիսխը պոկում է ու արձակում
Խոր խութերից կամ այլ ծածուկ արգելքից,

136 Եվ մարմինը մեկ ձգում է, մեկ կծկում:

ԵՐԳ ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ

«Ահա գազանն իր տտունով սուր, երկայն,
Ահա նա, ով արգելակներ է փշրում
Եվ գարշությամբ պղծում աշխարհը համայն»:

4 Այսպես ասաց ինձ առաջնորդը անմեղ,
Եվ գազանին հրավիրեց մոտենալ
Այն քարափին, որով անցել էինք մենք:

7 Խաբեությանն այդ պատկերը գարշելի
Առաջ եկավ և, պոչն հեռու պահելով,
Ափի վրա քաշեց իրանն ահռելի:

10 Նրա դեմքը արդար մարդու տեսք ուներ,
Այնքան հեզ ու բարեմույն էր արտաքուստ,
Իսկ մնացած մասը մարմնի լոկ օձ էր:

13 Ուներ երկու բոչոտ թաթեր ճապաղավոր,
Մեջքը, կուրծքը և զույգ կողերը նրա
Նիշված էին խայտուցներով օղավոր:

16 Թաթարներն ու թուրքերն երբեք չեն գործել
Այնքան նախշուն ու խայտաբղետ պաստառներ,
Արաքնեն էլ նման ոստայն չի հյուսել:

19 Ինչպես մակույկը մերթ ափին է հանգչում,
Մասամբ ջրի վրա, մասամբ ցամաքի,
Ինչպես շվայտ գերմանների աշխարհում

22 Սպասում է կուղբը պայքար մղելու,
Այսպես ավազն եզրապատող քարափին
Սպասում էր այն գազանը ահարկու:

25 Նա իր պոչը խաղացնում էր շարունակ,
Գալարելով նրա ծայրը թունավոր,
Ինչպես կարիճն իր խայթոցը կենտունակ:

28 Հիմա պետք է ճանապարհից քիչ շեղվենք,—
Ասաց տերը,— որպեսզի մենք հասնենք անդ,
Ուր փռված է այն գազանը չարանենգ»:

31 Այսպես իջանք աջակողմյան ուղղությամբ
Եվ ծայրեզրով տաս քայլ անցանք, որպեսզի
Խույս տանք հրից և ավազից հրատապ:

34 Երբ մոտեցանք այն նենգավոր գազանին,
Մի քիչ անդին տեսա մարդկանց մի զանգված,
Որ նստած էր ավազուտի երկայնքին:

37 Վարպետս ասաց. «Որպեսզի դու այս գոտին
Կարողանաս ամեն կողմից ճանաչել,
Գնա, նայիր նրանց վիճակը հետին:

40 Բայց թող այնտեղ քո զրույցը կարճ լինի.
Իսկ ես մինչ այդ կբանակցեմ սրա հետ,
Որպեսզի իր գավակը մեզ հատկացնի»:

43 Եվ յոթներորդ պարունակի եզրով ես
Մեն-միայնակ առաջացա դեպ այնտեղ,
Ուր նստած էր այն ամբոխը տխրատես:

46 Նրանց ցավը դուրս էր պոռթկում աչքերից.
Նրանք ձեռքով ջանում էին պաշտպանվել
Մերթ բոցերից, մերթ հրաշեկ ավազից:

49 Այսպես շներն ամռան շոգին տոթալից
Պաշտպանվում են մերթ թաթերով, մերթ դնչով,
Երբ խայթվում են ճանճերից կամ լվերից:

52 Ես դիտեցի ուշով դեմքերը ոմանց,
Որոնց վրա հուր էր տեղում անհավոր,
Բայց ճանաչել չկարեցա ես նրանց:

55 Ամեն մեկի պարանոցից կախված էր
Որոշ գույնով ու նշանով մի քսակ,
Որով նրանք ապրում էին կարծես դեռ:

58 Ես նրանց մեջ տեսա դեղին մի քսակ,
Որի վրա կար մի կապույտ ուրվագիծ,
Որ նման էր մի առյուծի պարարակ:

61 Եվ քիչ հեռու տեսա ուրիշ մի քսակ,
Արյան նման կարմիր, որի կենտրոնում
Երևում էր մի սագ կաթից սպիտակ:

64 Մեկը, որի ճերմակ պարկի վրա կար
Կապույտ գույնի մի խոզ, մատակ ու հղի,
Ինձ բարբաջեց. «Այստեղ ինչո՞ւ դու եկար:

67 Շուտ հեռացի՛ր։ Եվ քանզի ողջ ես դեռ դու,
Իմացիր որ Վիտալիանոն, երկրացիս,
Այստեղ գալու և կողքիս է նստելու։

70 Ֆլորենտացոց մեջ այս ես եմ պադուացին.
Սրանք հաճախ իմ գլուխը տանում են,
Ինձ ասելով. «Թող գա ասպետն հոյածին,

73 Հետ բերելով քսակն երեք կտցանի»։
Եվ բերանը ծռեց, լեզուն դուրս հանեց,
Ինչպես պինչը լիզող եզը կենդանի։

76 Վախենալով, որ չլինի թե երբեք
Իմ ուշացմամբ առաջնորդիս բարկացնեմ,
Հեռացա այն հոգիներից տանջաբեկ։

79 Առաջնորդըս մինչ այդ նստել էր արդեն
Լայն գավակին զարհուրելի գազանի։
Նա ինձ ասաց. «Արիացիր դու այժմեն։

82 Այսուհետև այսպես պետք է ցած իջնել։
Նստիր առաջ, ես ետևում կնստեմ,
Որ պոչը քեզ չկարենա վնասել»։

85 Ինչպես նա, ով սարսռում է, կափկափում,
Երբ զգում է տենդի գալը, և հենց որ
Շուք է տեսնում, մարմինը դող է պատում,

88 Այսպես եղա այդ խոսքերից ահազդու.
Սակայն շուտով ինձ զգացի սրտապինդ,
Ինչպես ծառան տիրոջ առջև հուսատու։

91 Ես նստեցի նուսի վրա այլանդակ.
Ուզում էի իրոք ասել՝ «Գրկիր ինձ»,
Սակայն ձայնըս խզվեց կամքիս հակառակ։

94 Բայց վարպետըս, որ զորավիգս է եղել
Ուրիշ դժվար իմ պահերին, արդեն իսկ
Բազուկներով ինձ գրկել էր ու պահել։

97 Եվ նա ասաց. «Գերիո՛ն, հիմա ընթացիր,
Սակայն իջիր շուրջանակի ու դանդաղ.
Քո ուսերին նոր բեռ ունես, իմացիր»:

100 Ինչպես նավակն, անջատվելով կայանքից,
Նախ գնում է ետ ետ, այսպես նա մեկնեց.
Եվ երբ ազատ զգաց ամեն արգելքից,

103 Անմիջապես պոչը կրծքի կողմ տարավ,
Ապա ձգվեց օձաձկան ճիշտ նման
Եվ թաթերով օդ վերցնելով ցած թռավ:

106 Ֆայետոնը գուցե այնքան չերկնչեց,
Երբ բաց թողեց ձիասանձերը ձեռքից,
Որից մասամբ երկնակամարը այրվեց.

109 Կամ Իկարը, երբ նա զգաց, որ տաքից
Մոմն հալվում է, և փետուրներն են թափվում,
Մինչ գոչում էր հայրը՝ «Շեղվել ես ճամփից»--

112 Ինչքան որ ես, երբ տեսա, որ չորս կողմից
Կախվել էի պարապ օդում և ոչինչ
Չէի տեսնում, բացի ահեղ գազանից:

115 Նա ճախրելով դանդաղ իջնում էր ներքև.
Այդ զգացի լոկ նրանից, որ տակից
Ու ճակատից փչում էր հովը թեթև:

118 Մեր ներքևում լսում էի ես արդեն
Ահագնագոռ շառաչյունը ջրվեժի,
Եվ գլուխս երկարեցի մի քիչ դեն:

121 Երբ ես բոցեր տեսա, ողբեր լսեցի,
Իմ երկյուղը կրկնապատիկ սաստկացավ.
Եվ ես դողով կուչ եկա ու սմքեցի:

124 Ստորակա պարունակին մատչելով,
Ես նոր միայն որոշակի իմացա,
Որ մենք իջնում էինք պտույտ գործելով:

127 Ինչպես բազեն, սավառնելով ընդերկար՝
Առանց թռչուն կամ խրտվիլակ տեսնելու,
Ցածրանում է պտույտներով օդապար,

130 Եվ իջնում է այնտեղ, ուրկից սրընթաց
Խոյացել էր, և հեռու իր տիրոջից
Կանգ է առնում, գժդմնած ու սրտմտած,

133 Այսպես Գերիոնն իջավ հատակն անդունդի,
Ստորոտը քարաժայռի սեպաձև.
Եվ հազիվ թե բեռնաթափեց մեզ գետին,

136 Նետի նման թռավ-գնաց սրաթև:

ԵՐԳ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ

Դժոխքում կա գեշ ձորերով մի տեղանք,
Վիմակերտ ու երկաթագույն, ճիշտ ինչպես
Նրա շուրջը պատող դարը գորշերանգ:

4 Այդ չարաշուք վայրի ուղիղ կենտրոնում
Բացվում է լայն ու խորասույզ մի ջրհոր,
Որի մասին ես կպատմեմ իր տեղում:

7 Այն տարածքը, որ նման է ջրհորի
Ու շրջակա դարի միջև, կլոր է,
Եվ հատակը բաժանված է տաս ձորի:

10 Եվ ինչպես որ խրամատներ կան ջոկ-ջոկ
Ամրոցների պարիսպների շուրջբոլոր,
Ու ծառայում պաշտպանության համար լոկ,

13 Այսպես էին այստեղ ձորերն երևում.
Եվ ինչպես որ ամրոցների շեմերից
Դեպի հեռուն կամրջակներ են ձգվում,

16 Այսպես դարից ձգված էին պարեխներ,
Որոնք թմբերն ու ձորերը հատելով,
Հասնում էին և հավաքվում ձորն ի վեր:

19 Ահա այդտեղ իջավ Գերիոնը ճիվաղ
Եվ երկուսիս իր շալակից ցած նետեց:
Այն ժամանակ մենք ուղղվեցինք դեպի ձախ:

22 Իմ աջ կողմում տեսա նոր-նոր պատիժներ,
Նոր տանջվողներ և տանջողներ նորանոր,
Որոնցով այն առաջին ձորը լի էր:

25 Այնտեղ կային երկու խմբեր տարբնթաց.
Մոտի խումբը դեպի մեր կողմ էր գալիս,
Իսկ հեռվինը քայլում մեզ հետ համընթաց:

28 Այսպես հոռմցիք, հոբելյանի մեծ տարում,
Բազմությանը Սուրբ Հրեշտակի կամրջով
Անցկացնելու հեշտ միջոց են հնարում,

31 Որով ոմանք գնում են դեպ մայր տաճար,
Դեմքերն իրենց ամրոցի կողմը ուղղած,
Իսկ ուրիշներ վերադառնում դեպի սար:

34 Ձորի երկու ոլորներում տեսա ես
Եղջերավոր դևեր, որոնք մտրակով
Հոգիներին ծաղկում էին սաստկապես:

37 Ինչպե՛ս սրանք հարվածից իսկ առաջին
Կրնկափոխ փախչում էին, և ոչ ոք
Չէր սպասում այլևս հաջորդ հարվածին:

40 Մինչ ես առաջ էի գնում անվարան,
Տեսա մեկին և ասացի յուրովի.
«Ուրիշ անգամ կարծես տեսել եմ սրան»:

43 Ես կանգ առա, որ նրան լավ ճանաչեմ,
Կանգնեց նաև իմ առաջնորդը բարի,
Ինձ թույլ տալով, որ նրա հետ զրուցեմ:

46 Մտրակյալը, կամենալով քողարկվել,
Դեմքը թեքեց, սակայն իզուր եղավ դա.
Ես ասացի. «Դո՛ւ, որ գլուխդ ես հակել,

49 Վենեդիկո Կաչչանեմիկն ես կարծեմ,
Դիմագծերդ եթե լավ եմ ես հիշում.
Բայց ինչո՞ւ ես այս տանջանքի մեջ դժխեմ»:

52 Եվ նա ասաց. «Այդ քեզ կասեմ ակամա.
Պարզ խոսքերըդ ինձ ստիպում են սակայն,
Որ ես հիշեմ մեր աշխարհը հնամյա:

55 Ես դրդեցի իմ Գիզոլա Բելլային,
Կատարելու ցանկությունը Մարկիզի,
Ինչ էլ խոսվի այս լուրի շուրջ գարշային:

58 Մենակ ես չեմ բոլոնիացին մեղապարտ,
Նրանք այստեղ այնքան շատ են, որ Ռենի
Եվ Սավենի միջև ընկած հովտում արդ

61 Sipa բառը չի կրկնվում այնքան շատ,
Որքան այստեղ. եթե կուզես ապացույց,
Հիշիր դու մեր ագահությունն ապիրատ»:

64 Եվ մինչդեռ նա ինձ բարբառում էր այսպես,
Մի դև նրան խարազանեց ու ասաց.
«Կավա՛տ, այստեղ կանայք չկան, որ խաբես»:

67 Ես միացա առաջնորդին իմ նորից.
Մի քանի քայլ անցնելով մենք հասանք անդ,
Ուր մի պարեխ էր երկարում դարափից:

70 Մենք հեշտությամբ նրա վրա բարձրացանք,
Եվ աջ կողմից դարավանդի վրայով
Մշտաչարչար այն ամբոխից հեռացանք:

73 Երբ հասանք անդ, ուր կազմում է նա կամար,
Որի տակով մտրակյալներն են անցնում,
Առաջնորդըս ասաց. «Այստեղ դու կանգ առ

76 Եվ նայիր այն երկրորդ խմբին չարածին,
Որոնց դեմքը դու տակավին չես տեսել,
Քանզի քայլում էին մեզ հետ միասին»:

79 Հին կամրջից նայում էինք նոր խմբին,
Որ մյուս ծայրից առաջանում էր դեպ մեզ,
Նույնպես ծեծված մտրակներով դիվային:

82 Բարի վարպետս ասաց՝ հարցրս կանխելով.
«Տես այն մեծը, որ գալիս է, և կարծես,
Ցավի մեջ իսկ երևում է անխոով.

85 Վեհ ու վես է տեսքով, ինչպես գահերեց:
Նա Յասոնն է, որ քաջությամբ ու խելքով
Կոլխիդայից ոսկեգեղմը ձեռք բերեց:

88 Ծանապարհին Լեմնոս կղզին մտավ նա,
Որտեղ կանայք քաջահանդուգն ու անգութ
Բոլոր արանց մեռցրել էին անխնա:

91 Նա ցույցերով ու խոսքերով սիրախաղձ
Այնտեղ խաբեց Հիսիպիլին դեռատի,
Որն իր հերթին նախ խաբել էր մյուս կանանց:

94 Այնտեղ խեղճին թողեց հղի վիճակում.
Դրա համար դատապարտված է այսպես:
Մեդեայի համար էլ է պատժվում:

97 Նրա հետ են խաբողները իր նման.
Այս առաջին ձորի և անդ պատժվող
Անձանց մասին բավ է գիտնալը այսքան»:

100 Եկանք այնտեղ, որտեղ պարեխը երկար
Երկրորդ թմբի հետ հատվում է խաչաձև
Եվ կազմում է նրա վրա նոր կամար:

103 Մեզ այնտեղից հասան հաջորդ վիրապի
Ողբերն հոգվոց, որ փնչում են ու ծեծում
Կրծքերն իրենց հարվածներով կոուփի:

106 Զորի խորքից փչող շնչից գանելի
Պատերն ամբողջ պատած էին բորբոսով,
Որ ոչ աչքին, ոչ քթին էր տանելի:

109 Հատակն այնքան խորունկ էր ու խավարին,
Որ տեսնելու համար թե ինչ կար այնտեղ,
Պետք է ծայրը մենք ելնեինք կամարի:

112 Այնտեղ ելանք. ձորում տեսա անարգել
Մարդկանց մի խումբ կղկղանքի մեջ սուզված,
Ասես այնտեղ արտաքնոց էր դատարկել:

115 Մինչ ցած էի նայում տեսքով անհամբեր,
Տեսա մեկին, գլուխն այնքան աղտեղված,
Որ հայտնի չէ աշխարհիկ էր, թե կղեր:

118 Նա ինձ ասաց. «Այդպես ինչո՞ւ ես ձգտում
Նայելու ինձ ավելի քան մյուսներին»:
Ես ասացի. «Եթե լավ եմ ես հիշում,

121 Ուրիշ անգամ պետք է տեսած լինեմ քեզ.
Դու Ալեսսիո Ինտերմնելն ես լուկկացի.
Ահա ինչու քեզ ետ նայում հատկապես»:

124 Այնժամ ինքն իր գլխին տալով նա գոչեց.
«Այստեղ ընկա իմ քծնանքի պատճառով,
Որից լեզուս ամենևին չհոգնեց»:

127 Այնուհետև առաջնորդը ինձ ասաց.
«Հայացքդ հիմա մի քիչ հեռու արձակիր,
Որպեսզի դու տեսնես դեմքը աղտեղված

130 Այն աղծապիղծ ու հերարձակ պոռնիկի,
Որ նստած է եղունգներով ինքն իրեն,
Եվ մեկ պառկում, և մեկ կանգնում է ոտքի:

133 Թայիան է նա, այն բոզը, որ հոմանվուն,
Երբ նա հարցրեց՝ «Ունե՞մ քեզ մոտ մեծ շնորհ»,
Պատասխանեց. «Օ, ինչպե՛ս չէ, մեծագույն»:

136 Մեր աչքերը թող կշտանան սրանով»:

ԵՐԳ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ

Ո՛վ մոգ Սիմոն, ո՛վ հետևորդքդ նսեմ,
Դուք, որ ոսկու և արծաթի համար լոկ
Փչացնում եք սրբությունները վսեմ,

4 Որոնք պետք է տրվեն մարդկանց պատվավոր.
Արդ հարկ է որ շեփորն հնչի ձեզ համար,
Որ խրված եք երրորդ ձորում ահավոր:

7 Հասել էինք արդեն հաջորդ խանդակի
Կոր կամարի բարձրակետին, ուրկից ցած
Մենք ամեն ինչ տեսնում էինք հայտնակի:

10 Ո՛վ Գերիմաստ, ի՞նչ արվեստ ես ցուցադրում
Երկնում, երկրում և աշխարհում այս դժպիհ,
Օ՜, դու ինչքա՛ն արդարորեն ես դատում:

13 Ես հատակին ու պատերին ձոր-խորշի
Տեսա բազում սալաքարեր գորշերանգ,
Որոնց վրա անցքեր կային բոլորշի:

16 Այդ անցքերը այնպես էին երևում,
Ինչպես ունի Սան-Զովաննին իմ չքնաղ,
Ուր ծեսերն են մկրտության կատարվում:

19 Արանցից մին, շատ տաքիներ դեռ չկան,
Ես ջարդեցի մի խեղդվողի պատճառով,
Եվ սա ոչ ոք չվերագրի այլ դիտման:

22 Ամեն անցքից վերև էին կարկառված
Սրունքները մեղավորի մի ուրուն,
Իսկ իրանը անցքի մեջ էր մխրճված։

25 Այրվում էին ներբանները բոլորի,
Եվ հոդերը պրկվում այնպես ուժգնորեն,
Որ կապերն իսկ կքանդեին լարերի։

28 Ինչպես եթե յուղոտ մի բան է այրվում,
Բոցը նրա երեսին է շրջում լոկ,
Այսպես էին այստեղ ոտքերը վառվում։

31 «Վարպե՛տ, ասա,— ասացի ես,— ո՞վ է նա,
Որ մյուսներից ավելի է գալարվում
Եվ ավելի կիզվում հրից անխնա»։

34 Եվ նա ասաց. «Արդ եթե դու կամենաս,
Քեզ կտանեմ այս դարն ի վար զառիթափ,
Եվ պատասխանն հենց նրանից կիմանաս»։

37 «Իմ կամքն այն է, ինչ որ դու ես կամենում,—
Ասացի ես.— դու ես տերը և գիտես
Իմ բաղձանքը, թեև լուռ եմ ես մնում»։

40 Այնժամ չորրորդ թմբի վրա մենք եկանք,
Եվ, ձախ կողմից ցած իջնելով դարն ի վար,
Անցքերով լի ձորի հատակը հասանք։

43 Բարի վարպետս ինձ բաց թողեց լոկ այնժամ,
Երբ մենք եկանք-հասանք անցքի մոտ նրա,
Ով ոտներն էր ջղաձգում հարաժամ։

46 «Ով էլ լինես, ո՛վ դու հոգի տանջակեզ,
Որ տնկվել ես ցցի նման գլխիվայր,—
Ասացի ես,— խոսի՛ր, եթե կարող ես»։

49 Կանգնած էի այնտեղ ինչպես քահանա,
Ում կանչում է մարդասպանը գետնամուխ,
Որպեսզի իր մահվան ժամը ուշանա։

52 Նա ինձ գոչեց. «Բոնիֆակիոս, այդ դո՞ւ ես,
Ասա, դո՞ւ ես, որ եկել ես այսքան վաղ.
Շատ տարիներ գիրքը խաբեց ինձ այսպես:

55 Ունեցվածքից այդպես շուտով կշտացա՞ր,
Որի համար դու ենեգորեն խաբեցիր
Զքնաղ կնոջ, ապա նրան տիրացար»:

58 Ես, շփոթված, նմանվեցի ճիշտ նրան,
Ով իր լսած խոսքերը չի հասկանում
Եվ չգիտե՝ ինչ պետք է տա պատասխան:

61 Եվ Վիրգիլն ինձ. «Ասա՛ նրան, շուտ արա՛.
«Այն չեմ, այն չեմ, որին ես դու սպասում»:
Կատարեցի ես պատվիրածը նրա:

64 Այնժամ հոգին ցնցեց ոտներն և ապա,
Հառաչելով, ասաց ձայնով լալագին.
«Ուրեմն ինձնից ի՞նչ ես ուզում դու հապա:

67 Եթե դու այս ձորի հատակն ես եկել
Իմանալու թե ով եմ ես, արդ գիտցիր՝
Ես պապական մեծ պատմուճանն եմ կրել:

70 Ճշմարիտ է, որ ես եղա արջի ձագ.
Եվ հոգացի արջուկների մասին մյուս
Այնքան հաճախ, որ ընկա այս անցքը ծակ:

73 Ինձ նախորդած սիմոնական այլ պապեր
Քարշ են տրված այնտեղ, ներքև իմ գլխից,
Եվ ծվարած այս հողանցքում տանջաբեր:

76 Ես էլ պիտի խորանուզվեմ այս անցքով,
Երբ որ գա նա, որի հետ քեզ շփոթած՝
Քեզ դիմեցի անակնկալ իմ հարցով:

79 Բայց նա այստեղ այնքան երկար չի մնա
Ոտնատոչոր ու գլխիվայր վիճակում,
Ինչքան որ ես մնացել եմ մինչ հիմա.

82 Քանզի շուտով արևմուտքից պիտի գա
Ավելի վատ ու անօրեն մի հովիվ,
Որ երկուսիս մոռացընել պիտի տա:

85 Նա կլինի մի նոր Հասոն Մակաբյանց.
Եվ ինչպես սա զիջող եղավ արքային,
Այսպես կլինի նա արքային ֆրանկյանց»:

88 Հիմարություն չարի՞ արդյոք, չգիտեմ,
Երբ ես նրան այսպես տվի պատասխան.
«Դեհ դու հիմա պատասխանիր ինձ տեսնեմ՝

91 Մեր Տերն ինչքա՞ն գանձ պահանջեց Պետրոսից,
Երբ որ նրան եկեղեցու պետ ընտրեց.
Ոչինչ, միայն ասաց. «Եկ իմ ետևից»:

94 Ոչ Պետրոսը, ոչ էլ մյուսները, անշուշտ,
Մատաթիացից ոսկի, արծաթ չուզեցին,
Երբ նա բռնեց տեղը հոգու ժանտաժուտ:

97 Արդ կաց այդպես, պատիժդ արդար է քանզի,
Եվ պինդ պահիր դրամները քո շորթած,
Որ քեզ ժպիրն դարձրին ընդդեմ Կաղլոսի:

100 Եվ եթե ես չտածեի խոր հարգանք
Այն պաշտոնի հանդեպ վեհ ու սրբազան,
Որ վարեցիր, երբ ապրեցիր ուրախ կյանք,

103 Կասեի դեռ ծանրը խոսքեր ավելի.
Քի դուք աշխարհն ագահությամբ փչացրիք,
Բարձրացնելով անարգներին ատելի:

106 Հովհաննեսը ձեզ ունեցավ նկատի,
Երբ տեսավ այն, որ ջրերի վրա նստած,
Պոռնկում էր արքաների հետ երկրի.

109 Այն, որ տեսավ յոթ գլխով ու տաս եղջրով,
Որոնցից նա ուժ ու սատար ստացավ,
Մինչև այրն իր հաճի ապրել լավ վարքով:

112 Ոսկին, արծաթն աստվածացրիք դուք կյանքում,
Կռապաշտներից տարբերվում եք նրանով,
Որ մեկի տեղ հարյուր կուռք եք դուք պաշտում:

115 Օ Կոնստանդի՛ն, ո՛րքան չարյաց մայր դարձավ
Ոչ քո դարձը, այլ այն պարգևը խոշոր,
Որ քեզանից հովվապետը ստացավ»:

118 Մինչ ես նրան այսպես էի բարբառում,
Նա զայրույթից և կամ խղճի խայթերից
Ուժգնորեն իր սրունքներն էր թափհարում:

121 Ես կարծում եմ իմ խոսքերը ճշմարիտ
Ուրախություն պատճառեցին վարպետիս,
Որ լսել էր դեմքով գոհ ու լրջամիտ:

124 Ապա նա ինձ իր թևերի մեջ առած
Եվ իր կրծքին ամուր սեղմած՝ բարձրացավ
Այն դարվերով, ուրկից իջավ քիչ առաջ:

127 Ամենևին չհոգնելով իր բեռից,
Նա ինձ բերեց գագաթը այն կամարի,
Որ հինգերորդ թումբն էր տանում չորրորդից:

130 Այնտեղ բեռը գետին դրեց շատ զգույշ,
Այն տեղանքի համար վայրի ու դերբուկ,
Ուրկից այծերն իսկ կանցնեին դժվար հույժ.

133 Այստեղ պարզվեց մի այլ ձորակ չարաշուք:

ԵՐԳ ՔՍԱՆԵՐՈՐԴ

Արդ հարկ է, որ նոր պատիժներ տաղերգեմ
Ներկա երգում իմ առաջին նվագի,
Որի նյութն են դատապարտյալքը դժխեմ:

4 Պատրաստ էի ես նայելու արդեն ցած,
Դեպի խորքը երևացող նոր ձորի,
Որ թրջվում էր արցունքներով դառնամած։

7 Եվ բոլորշի ձորակի մեջ տեսա ես
Մեղապարտներ, որոնք, լուռ ու լալագին,
Քայլում էին դանդաղ թափոր մի որպես։

10 Երբ նայեցի ավելի լավ և ուշով,
Նկատեցի, որ պարանոցը նրանց
Ոլորված էր զարմանալի մի կերպով։

13 Նրանց դեմքը դեպի կոնակն էր շրջված,
Եվ զի զրկված էին առջև նայելուց,
Նրանք ետ-ետ էին քայլում ստիպված։

16 Պատահել է գուցե նման հաշմանդամ
Պարանոցով այսպես լրիվ գալարված,
Բայց չեմ տեսել և հազիվ թե հավատամ։

19 Ո՛վ ընթերցող, Աստված տա, որ օգտվեիր
Ընթերցումից իմ պոեմի այս երկար,
Բայց ես կարո՞ղ էի չլալ, դու դատիր,

22 Երբոր տեսա պատկերը մեր մարմնույքի
Այնքան ծռված, որ արցունքները կաթող
Հոսում էին ճեղքի միջով հետույքի։

25 Լալիս էի հենված ժայռի ելուստին։
Այն ժամանակ առաջնորդս ինձ ասաց.
«Արդյոք անմիտ բան չե՞ս անում վերստին։

28 Գթությունը այստեղ մեղք է մահացու։
Ո՞վ ավելի մեղադրելի է քան նա,
Ով հուզվում է դատաստանից Աստուծու։

31 Նայիր նրան, ով գետնի տակ կուլ գնաց
Թեբայեցուց աչքի առջև, երբ նրանք
Գոչում էին. «Անֆիա՛ր, ո՞ւր ես սուզվում ցած.

34 Ի՞նչ ես թողնում դու մարտադաշտը Մարսի»։
Ու նա այսպես անդունդն ի վար գլորվեց
Եվ ի վերջո ընկավ ճանկը Մինոսի։

37 Տես ինչպես է նա կոնակը կուրծք դարձրել
Եվ քայլում է ետ-ետ, նայում է ետև,
Չի շատ ուզեց առաջիկայքը տեսնել։

40 Ահա Տիրեսն, ում կերպարանքը փոխվեց,
Երբ, փոխվելով իր անդամները բոլոր,
Տղամարդուց կնոջ սեռի վերածվեց։

43 Եվ հետո, երբ գանգահարեց վերստին
Ջույգ օձերին իրար ամուր պլլված,
Նա ստացավ իր արությունը կրկին։

46 Ահա Արոնտն, որ հետևում է նրան.
Նա լեռների մեջ Լունիի, որոնց տակ
Կարրարացին հող է հերկում հարաջան,

49 Բնակվում էր մի քարայրում մարմարյա,
Եվ այդտեղից դիտարկում էր անարգել
Ծովը անհուն և աստղերը հեռակա։

52 Իսկ նա, որի վարսերն առատ ու խոիվ
Արձակվել են կրծքի վրա, ծածկելով
Ստինքները և ամոթույքը լրիվ,

55 Դյութ Մանտովն է, որ շատ տեղեր ման եկավ,
Հուսկ կանգ առավ այնտեղ, ուր ես եմ ծնվել.
Արդ այս մասին լսիր ինձ պահ մի սակավ։

58 Երբ Մանտովի հայրը կյանքից հեռացավ,
Եվ Բաքոսի քաղաքն ստրուկ հոչակվեց,
Շատ տարիներ թափառական նա դարձավ։

61 Բենակ կոչված մի լիճ ունի Իտալիան,
Ստորոտը այն լեռների բարձրաբերձ,
Որ փակում են Տիրոլլի մուտ Լամանիան։

64 Կամոնիկի և Գարդայի միջև կան
Շատ աղբյուրներ, որ թափվում են այդ լճում,
Ողողելուց հետո լանջերը Ալպյան:

67 Անդ կոզյակ կա, որը օրհնել կարող են
Վերոնայի, Բրեշիայիի և Տրենտոյի
Հովիվները, եթե այնտեղ այցելեն:

70 Անդ, ուր ափը ցածրադիր է առավել,
Կառուցված է Պեսկիերա բերդն ամուր,
Որ կարող է թշնամու դեմ դիմադրել:

73 Այն ջուրը, որ չի պարփակվում լճի մեջ,
Դուրս է հորդում բերդի մոտից իբրև գետ
Եվ հոսում է արոտներով թարմ ու գեջ:

76 Բայց հենց որ ջուրն այդտեղից դուրս է հոսում,
Անվանվում է Մինչո մինչև Գովերնո,
Որի մոտ էլ նա թափվում է Պադոսում:

79 Մի քիչ ներքև հասնելով մի հարթավայր,
Նա տարածվում ու կազմում է մի ճահիճ,
Ուր ամռանը օդը շնչվում է դժվար:

82 Վայրի կույսը, երբ այդտեղով էր անցնում,
Ճահճի մեջտեղ ինչ-որ ցամաք նկատեց,
Որ անմշակ ու անբնակ էր թվում:

85 Մարդախույսը ահա այստեղ կանգ առավ
Եվ նվիրվեց գուշակության արվեստին.
Այստեղ ապրեց և այստեղ էլ նա մեռավ:

88 Ապա մարդիկ շրջաբնակ վայրերից
Հավաքվեցին այս ցամաքում անմատույց,
Որ ճահճով էր շրջապատված չորս կողմից:

91 Նրա թաղված տեղում քաղաք հիմնեցին,
Եվ, անունով առաջնական գտնողի,
Առանց վեճի այն Մանտովա կոչեցին:

94 Նա նախապես բնակչությամբ շատ էր խիտ,
Երբ դեռ անմիտ Կազալոդին չէր խաբվել
Պինամոնտե Բոնակոլսից նենգամիտ:

97 Եվ եթե դու երբևէ այլ կերպ լսես
Ծագումը իմ հայրենական քաղաքի,
Ճշմարիտն ու սուտը իրար չխառնես»:

100 Եվ ես. «Վարպե՛տ, քո պատմությունը հայտնի
Այնքան ստույգ հավաստիք է ինձ համար,
Որ ուրիշը ես բանի տեղ չեմ դնի:

103 Բայց ինձ ասա՝ այս թափորի մեջ արդյոք
Կա՞ն ուրիշներ ուշադրության արժանի.
Զի ես հիմա այդ մասին եմ խորհում լոկ»:

106 Ասաց. «Ահա նա, ում մորուքը անարդ
Տարածվել է մեջքի վրա թխորակ,
Գուշակ էր, երբ Հունաստանում տղամարդ

109 Կարելի էր օրորոցում լոկ գտնել.
Այդ նա էր, որ Կալկանտի հետ Ավլիդում
Ազդանշեց նավաթոկերն արձակել:

112 Նրա անունն Եվրիպիլ է, այր մի վեհ,
Որի մասին վեմ Ողբերգս հիշում է.
Դու այդ գիտես, զի երկիս լավ ծանոթ ես:

115 Իսկ այն մյուսը, որ նիհար է չափազանց,
Սկոտիացի Միքելեն է, որ գիտեր
Նենգ խաղերը ամեն տեսակ մոգությանց:

118 Ահա նաև Բոնատտին և Աստենդեն.
Այս վերջինը թելն ու կաշին զուր թողեց,
Սակայն հիմա զղջալը ուշ է արդեն:

121 Ահա կանայք, որոնք մեկդի թողնելով
Ճախարակը, իլն ու ասեղը իրենց,
Կախարդություն արին խոտով, պատկերով:

124 Բայց էլ գնանք, Կայենը իր փշերով
Հասել է զույգ կիսագնդոց սահմանին
Եվ Սեպիիոտ մոտ իջնում է ընդհուպ ծով:

127 Երեկ գիշեր լիալուսին էր արդեն,
Կհիշես այդ. զի նա մթին անտառում
Լուսավորեց քո ճանապարհն այն ատեն»:

130 Նա, գնալիս, այսպես էր ինձ բարբառում:

ԵՐԳ ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ

Մի կամուրջից մյուսը անցանք մենք այսպես,
Զրուցելով այլ բաների մասին դեռ,
Որ չեմ ուզում Կատակերգումս հիշել ես:

4 Մենք լսեցինք ուրիշ ճիչեր ներքևում,
Սպա տեսանք պարունակի ձորը նոր,
Որ սևամած ու մթին էր երևում:

7 Այնպես, ինչպես նավարանում Վենետկի
Եռացնում են ձմռանը ձյութը մածան,
Ծեփոտելու համար նավերն ըստ կարգի.

10 Եվ նավազներն աշխատում են անարգել—
Ոմանք նոր նավ են պատրաստում, ուրիշներ
Նորոգում այն, որը շատ է նավարկել.

13 Սա նավի խելն, իսկ նա ցռուկն է կոփում,
Մին թի սարքում, մյուսը փաթթում է պարան,
Իսկ մի ուրիշն առագաստ է կարկատում,—

16 Այսպես այստեղ աստվածային արվեստով,
Եվ ոչ հուրով, եռում էր ձյութ մի թանձրիկ,
Որ ծածկում էր պատերն ստվար մի շերտով:

19 Տեսնում էի համատարած այդ ձյութում
Պղպջակներ, տաքությունից գոյացող,
Որ բարձրանում, ուռչում էին ու պայթում:

22 Մինչ ես ներքև էի նայում ակնդետ,
Առաջնորդը «զգույշ, զգույշ» ինձ ասաց,
Ու ինձ քաշեց կանգնած տեղից դեպի ետ:

25 Ես քաշվեցի ինչպես նա, ով աչքերն իր
Չի հեռացնում սպառնացող վտանգից
Եվ, անարկված արհավիրքից անպատիր,

28 Թե նայում է և թե փախչում շտապով:
Եվ ահա ես տեսա մի սև սատանա,
Որ մեր կողմ էր վազում ժայռի վրայով:

31 Օ՛ նա տեսքով ինչքան ժանտ էր ու վայրագ:
Օ՛ որքան ինձ անագորույն երևաց
Բաց թևերով և ոտներով իր արագ:

34 Նա իր ցցուն ու բարձրաբերձ ուսերին
Շալակել էր մեղավորի մի նորեկ
Եվ ճանկերը խրել նրա ազդրերին:

37 Ժայռ-կամուրջից գոռաց. «Էհե՛յ, Չարճանկեր,
Ահա ձեզ մի ավագ Սանտա Զիտայից:
Ներս խոթեցեք: Այսպիսիներ շատ կան դեռ

40 Այն քաղաքում, ուր նորից եմ ես գնում:
Բոնտուրից զատ գոփողներ են բոլորն անդ.
Փողի համար ոչն այո է անդ դառնում»:

43 Նա նետեց բեռն և վազ տվեց ժայռից ցած.
Գոռի ետև արձակված շունը երբեք
Չսլացավ այդօրինակ սրընթաց:

46 Երբ սուզվածը երևան ելավ խայծղանի,
Կամրջի տակ պահված դևերն ասացին.
«Սուրբ Դեմքն այստեղ ոչ մի օգուտ քեզ չունի.

49 Այստեղ լողում են այլ կերպ, քան Սերկիոյում.
Մեր ճանկերից եթե ուզում ես պրծնել,
Մի՛ բարձրանա, սուզված մնա խայծղանում»:

52 Եվ ձողերը խրելով կողը նրա,
Ավելացրին. «Թալթալ խաղա կուպրի տակ,
Եվ այնտեղից դուրս գալու փորձ մի՛ արա»:

55 Կաթսայի մեջ խոհարարները այսպես
Ընկղմում են միսը երկար շերեփով,
Որպեսզի այն չբարձրանա մակերես:

58 Վարպետս առ ինձ. «Արդ որպեսզի ոչ մի դև
Ձնկատի, որ դու այստեղ ինձ հետ ես,
Ծուռ թաքնվիր քառաժայռի մի ետև:

61 Իսկ իմ մասին դու անհոգ կաց, վասնզի
Ոչ ոք ոչինչ ինձ չի կարող սպառնալ.
Ես սովոր եմ ընդդիմությանց այսպիսի»:

64 Եվ վարպետը թողեց ծայրը կամարի,
Ու երբ եկավ հասավ թումբը վեցերորդ,
Պարտավորվեց իրեն ցույց տալ քաջարի:

67 Ծներն ինչպես կատաղությամբ ահարկու
Հարձակվում են մուրացկանի վրա խեղճ,
Որ եկել է ողորմություն խնդրելու,

70 Այսպես դևերն ելան տակից կամրջի
Եվ ուղղեցին կեռ ձողերը նրա դեմ.
Բայց նա գոչեց. «Թող ոչ ոք ինձ չդիպչի.

73 Ձեր ձողերը նախքան ուղղելը իմ դեմ,
Թող ձեզնից մեկն առաջ գա ու ինձ լսի.
Հետո միայն կմտածեք ինձ խշտել»:

76 Բոլորն ասին. «Դե՛հ, Զարագի՛, դու գնա՛»:
Եվ այնժամ սա առաջնորդիս մոտեցավ
Ու մոլտաց. «Խոսիր տեսնեմ, ես եկա»:

79 Եվ առաջնորդս. «Ի՞նչ ես կարծում, Զարագի՛,
Մի՞թե այստեղ կարող էիր ինձ տեսնել,
Եթե այդպես չհանեին ուղղակի

82 Աստծու կամքն ու ճակատագիրն անհեղլի։
Ճանապարհն տուր. ես երկնքի վճիռով
Պետք է մեկին ցույց տամ վայրն այս ցավալի»։

85 Այնժամ իջավ հոխորտությունը դևի,
Եվ նա նետեց կեռաձողը ոտներին
Ու մյուսներին ասաց. «Պետք չէ սա խոցվի»։

88 Եվ տերը ինձ. «Օ՜ դո՛ւ, որ կուչ ես եկել
Ու թաքնվել քարերի մեջ կամրջի,
Արդ կարող ես վերադառնալ անարգել»։

91 Ես նրա մոտ շտապեցի այն ատեն.
Բայց դևերը երբ ընդառաջ շարժվեցին,
Վախեցա, որ իրենց խոսքը կդրժեն։

94 Այսպես տեսա վախը գնդի հանձնվող,
Որ դաշինքով Կապրոնայից դուրս գալով՝
Իրեն գտավ զորախմբի մեջ ոսոխ։

97 Ամբողջ մարմնով առաջնորդիս ես կպա,
Իմ աչքերը չհեռացնելով նրանցից,
Որոնց տեսքը ահեղ էր ու անոպա։

100 Կեռ ձողերը ուղղած դեպ ինձ՝ իրարու
Ասում էին. «Նրա մեջքին տա՞մ մի հատ»։
Եվ պատասխան տալիս. «Այո, հասցրու»։

103 Բայց այն դևը, որ բանակցել էր մի քիչ
Վարպետիս հետ, անմիջապես ետ դարձավ
Ու ձեղացավ. «Լռի՛ր, լռի՛ր, Խառնակի՛չ»։

106 Այնուհետև նա մեզ դարձավ ու ասաց.
«Դուք չեք կարող առաջ գնալ այս ճամփով,
Զի վեցերորդ կամուրջը փուլ է եկած։

109 Իսկ եթե դուք առաջանալ ուզում եք,
Կգնաք այս քարաժայռով, որի մոտ
Կա մի այլ ժայռ, որտեղով էլ դուք կանցնեք:

112 Երեկ, հինգ ժամ անց այս ժամից, լրացավ
Հազար երկու հարյուր վաթսունվեց տարին
Այն պահից, երբ այս ժայռուղին փուլ եկավ:

115 Ուղարկում եմ մերոնց այդտեղ ես պարետ,
Որ նայեն, թե կուպրից մարդ չի՞ բարձրացել.
Մի՛ վախենաք, դուք գնացեք նրանց հետ»:

118 «Էհե՛յ Ծուոթե, էհե՛յ դու Շուն, դու Ծերուկ,
Առաջ եկեք,— հրամայեց դևերին,—
Իսկ դու նրանց առաջնորդիր, Թա՛վ Մորուք:

121 Թող առաջ գան Ժանտն ու Վիշապը ահեղ,
Ժանիքավոր Խոզն ու Գամփռը ահարկու,
Գիժ Մորոսն ու Մոլեգինը խելահեղ:

124 Գնացեք ու տեսեք լճակը եռուն.
Իսկ սրանց էլ ողջ կտանեք կամուրջն այն,
Որ մնում է ձորերի վրա դեռ կանգուն»:

127 «Վա՛յ ինձ, վարպե՛տ, ի՞նչ եմ տեսնում,— ասացի,—
Ի սեր Աստծու, եթե ճամփան դու գիտես,
Գնանք մենակ, գնանք առանց ուղեկցի:

130 Դու, որ այնքան աչալուրջ ու խոհեմ ես,
Չե՞ս տեսնում, որ նրանք ատամ են կրճտում
Եվ աչքերով սպառնալիք անում մեզ»:

133 Եվ նա ասաց. «Դու հանգիստ կաց ու անհոգ.
Ինչքան ուզեն ատամ կրճտեն թող նրանք,
Դա անում են մեղավորաց համար լոկ»:

136 Եվ դևերը վերադարձան ձախ թմբով.
Բայց նախապես ամեն մեկը իր լեզուն
Պետին ուղղեց ատամների արանքով.

139 Իսկ սա ոռից շեփորի ձայն հանեց սուր:

ԵՐԳ ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Ես տեսել եմ հեծյալների երթը կուռ
Հարձակման կամ զորատեսի ժամանակ
Եվ երբեմն էլ նահանջների պահին լուռ.

4 Օ՜ արեստինք, ես տեսել եմ մարզում ձեր
Արշավանքներ, ասպատակներ ավերիչ,
Նիզակներով ու սրերով գուպարներ՝

7 Հնչյուններով թմբուկների, փողերի,
Ահազանգով աշտարակի բարձրաբերձ
Եվ այլ զանգով մերային կամ օտարի.

10 Բայց այդպիսի փողի ձայնով արտասուոց
Ես չեմ տեսել երթն հեծյալի, հետիի,
Ոչ էլ նավի՝ դեպի որոշ նշանոց:

13 Գնում էինք դևերի հետ ընտրովի.
Օ՜, ահավոր ընկերություն: Մատռան մեջ
Սրբի հետ ենք, գինետան մեջ՝ գինովի:

16 Նայում էի կպրաձյութին հորձեռանդ,
Որ տեսնեի հատկությունը այդ ձորի,
Եվ գիտնայի, թե ովքեր են այրվում անդ:

19 Ինչպես դելփինք բարձրանում են ծովերես,
Նավազներին նշան տալով ողներով,
Որ նավն իրենց փրկեն ծովից փրփրադեզ,

22 Այսպես երբեմն, հովանալու համար գեթ,
Մի մեղավոր կուպրի երես էր ելնում,
Եվ չքանում փայլակի պես լուսաթեռ:

25 Եվ ինչպես որ գորտերն եզրին ջրփոսի
Ձիգ կանգնում են, դունչները դուրս կարկառած,
Եվ ներսուզած մյուս մասերը մարմնի,

28 Այսպես էին մեղավորները կանգնած,
Սակայն հենց որ Թավ Մորուքն էր մոտենում,
Քաշվում էին կպրաձյութի տակ հանկարծ:

31 Ես տեսա որ-և այդ ցավով եմ հիշում—
Մեկն ուշացավ, ինչպես մի գորտ շատ անգամ,
Սպասում է, մյուսը ջրի մեջ ցատկում:

34 Եվ Գամփոը, որ նրա դիմացն էր կանգնած,
Կեռով բռնեց նրա ձյութոտ մազերից
Եվ վեր քաշեց, որ ջրաղվես ինձ թվաց:

37 Գիտեի ես անունն արդեն բոլորի.
Չի երբ նրանք ընտրվեցին քիչ առաջ,
Եվ կանչեցին միմյանց ճամփին՝ ուշ դրի:

40 «Հե՛յ, Մոլեգի՛ն, բռնիր նրան ուժգնորեն
Եվ ճանկերով կաշին մի լավ պլոկիր»—
Գոռում էին նզովյալներն համորեն:

43 Ես ասացի. «Վարպե՛տ, փորձիր իմանալ,
Թե ով է այն դատապարտյալը թշվառ,
Որ ձեռքն ընկավ այն դևերի անիծյալ»:

46 Մոտենալով մեղապարտին կարեվեր,
Վարպետս հարցրեց՝ որ երկրից էր. նա ասաց.
«Նավարրայից: Մայրը, որ ինձ ծնել էր,

49 Բարոյազուրկ, զեխ ու շվայտ մի հորից,
Որ ունեցվածքն ու ինքզինքն էր փչացրել,
Մի տիրոջ մոտ ծառայության դրեց ինձ:

52 Ծառայեցի ապա արքա Տեբալդին.
Բայց պալատում կատարեցի գեղծումներ,
Որ քավում եմ այս կուրքի մեջ տապալին»:

55 Սակայն Խոզը, որ վարազի ճիշտ նման,
Բերնի երկու կողմում ուներ ժանիքներ,
Զգացրեց, որ ընդունակ է հոշոտման:

58 Մուկն ընկել էր կատուների մեջ ահեղ:
Բայց Մորուքը նրան քոնեց և ասաց.
«Հեռու կացեք, նրան սեղմել եմ ուժեղ»:

61 Եվ հայացքը իմ վարպետին ուղղելով
Ասաց. «Խոսիր հետը, եթե դեռ կուզես,
Քանի նրան չեն քգկտել ճանկերով»:

64 Վարպետս հարցրեց. «Այս կուրքի տակ դժպհի
Ճանաչո՞ւմ ես մեկին լատին աշխարհից»:
Հոգին ասաց. «Ես նոր մեկի հետ էի,

67 Որ եկել էր մի կղզիից մերձակից:
Ես նրա հետ եթե սուզված լինեի,
Չէի վախնա հիմա կեռից ու ճանկից»:

70 Այնժամ Ժանտը «է՛լ բավական է» գոչեց,
Եվ կեռ ձողը նրա թևին խրելով,
Մսի մի մեծ փերթ այնտեղից դուրս կորզեց:

73 Իսկ Վիշապը ուզեց նրա արունքին
Հարված հասցնել, բայց տասնապետը նրանց
Իր աչքերը շուրջ ղրեց գայրագին:

76 Բոլոր դևերն հանդարտվեցին այս անգամ:
Եվ նրան, որ խոր խոցեր էր ստացել,
Առաջնորդը հարցաքննեց փութակամ.

79 «Իսկ ո՞վ էր այն, որի մասին հիշեցիր»:
Եվ այնժամ նա այսպես տվեց պատասխան.
«Կոմիտան էր, վանականը Գալլուրի,

82 Անոթն ամեն ստության ու նենգության.
Նա իր տիրոջ ոսոխների հետ բոլոր
Այնպես վարվեց, որ բոլորն էլ գոհացան:

85 Նա բոլորից դրամ կորզեց և ապա,
Ինչպես ասաց, նրանց ազատ արձակեց.
Այլ գործերում չեղավ պակաս խաբեբա:

88 Լոգոդորցի Միքել Զանկեն էլ վաղուց
Նրա հետ է, և լեզուները նրանց
Զեն դադարում Սարդինիո շուրջ խոսելուց:

91 Օ՜, տեսեք, թե Գիժն ինչպես է գազազել.
Ես տակավին կխոսեի, սակայն նա
Կարող է ինձ իր կեռիքով բրդգզել»:

94 Տաճնապետը տեսնելով, որ դևը Գիժ
Պատրաստվում էր խոցել նրան, մոլտաց,
«Ծուտ հեռացի՛ր դու այստեղից, թունո՛տ իժ»:

97 «Եթե ուզում եք դուք տեսնել կամ լսել,—
Վերսկսեց դատապարտյալն ահաբեկ,—
Այլ լատինի, նրան կարող եմ կանչել.

100 Բայց Զար ճանկերն հեռու մի քիչ թող կանգնեն,
Որ ոչ մեկը չվախենա նրանցից,
Իսկ ես այստեղ նստած կարող եմ մեկեն

103 Ձեզ բազմաթիվ մեղավորներ բերել տալ,
Լոկ սուզվելով, ինչպես սովոր ենք անել,
Երբ կարենանք մեկնումեկրս աւի դուրս գալ»:

106 Այս խոսքերից Ծունը դունչը վեր տնկեց
Եվ ճոճելով գլուխն ասաց. «Որպեսզի
Մեզնից պրծնի՝ տես ինչ նենգ բան մոգոնեց»:

109 Եվ հոգին, որ ավելի էր խորամանկ,
Պատասխանեց. «Այո, իրոք ես նենգ եմ
Պատճառելու համար մերոնց չարչարանք»:

112 Բայց Ծուռթևը չհամբերեց այս անգամ,
Եվ զայրագին ասաց նրան. «Եթե դու
Փորձես փախչել, քո ետևից ես կգամ

115 Ոչ վազելով, այլ ուղղակի թռչելով:
Թմբից իջնենք և դարի եզրը քաշվենք,
Ու տեսնենք թե մեզնից ով է հունարով»:

118 Այժմ, ընթերցո՛ղ, դու կտեսնես մի նոր խաղ.
Ամեն մեկը աչքերն ուղղեց դեպ այն կողմ,
Եվ ամենից առաջ Ծունը խստերախ:

121 Նավարրացին այդ առիթից օգտվեց.
Ոտքը ուժգին գետին զարկեց և ընդոստ
Վար ցատկելով նրանց ձեռքից ազատվեց:

124 Դա բոլորին ջղայնացրեց, հատկապես
Ծուռթևին, որ պատճառ եղավ սխալի:
Սա թռնելով գոռաց. «Ահա հասա քեզ»:

127 Սակայն իզուր, քանզի ահի ետևից
Թևերն հասնել չէին կարող. նա սուզվեց,
Իսկ Ծուռթևը վերադարձավ զայրալից:

130 Այսպես բադը իսկույն սուզվում է ջրում,
Երբ տեսնում է մոտենալը բազեի,
Իսկ սա ետ է թռչում մռայլ ու տրտում:

133 Իսկ Ծերուկը, ընկերոջ դեմ բարկացած,
Արագ թափով թռավ նրա ետևից,
Որ նրա հետ կռվի բռնվի բացեբաց.

136 Ձեղծարարը հենց որ կուպրի տակ սուզվեց,
Դևն իր ճանկերն ուղղեց ընդդեմ ընկերոջ,
Եվ նրա հետ ձյութի վրա գգվոտեց:

139 Բայց Ծուռթևը, ինչպես ճուռակ չարախանդ,
Մագիլներով բռնեց նրան ուժգնորեն,
Եվ երկուսով ընկան լիճը հորձեռանդ:

142 Տաքությունից նրանք իսկույն պոկ եկան.
Սակայն նրանք չկարեցան վեր կենալ,
Այնքան էին կպած թևերը մածան:

145 Թավ Մորուքը, մյուս դևերի պես սրտնած,
Հրամայեց չորսին թռչել կեռերով
Դեպի ձորի մյուս եզերքը ձյութամած:

148 Նրանք նշված տեղերն իջան շատ զգույշ,
Եվ կեռերը խրվածներին ուղղեցին,
Որոնք լճում խաշված էին արդեն հույժ.

151 Այսպես նրանց խառնաշփոթ թողեցինք:

ԵՐԳ ՔՍԱՆԵՐԵՔԵՐԱՐԴ

Լոկիկ, մնջիկ, անուղեկից, մենավոր
Քայլում էինք մեկըս մյուսի ետևից,
Այնպես ինչպես եղբայրները փոքրավոր:

4 Այն դևերի կռիվը միտքս է բերում
Եգիպոսի մի առակը հինավուրց,
Որ գորտի ու մուկի մասին է խոսում:

7 «Արդն» ու «այժմը» այնքան նման չեն միմյանց,
Որքան մեկ ու մյուս դեպքը, եթե մենք
Լավ քաղդատենք սկիզբն ու վերջը նրանց:

10 Եվ ինչպես մի մտքից ուրիշն է ծագում,
Այսպես իմ մեջ մեկից ծագեց մի այլ միտք,
Որ պատճառեց ինձ կրկնակի մի սոսկում:

13 Խորհում էի այսպես. «Դևերն այդ դժնի
Մեր պատճառով եղան առակ-նշավակ,
Եվ դա նրանց խիստ զայրացրած կլինի:

16 Երբ զայրույթը զուգակցվի կամքին չար,
Նրանք մեզ հետ ավելի վատ կվարվեն,
Քան թե շունը նապաստակի հետ անճար»։

19 Անից ցցվել էին մազերքս բիզ-բիզ։
Ես ճայելով իմ ետևը ասացի.
«Վարպե՛տ, նրանք մեր ետևից են գալիս.

22 Շուտ թաքնվենք մի անկյունում երկուսով.
Զարհանկերից վախենում եմ և կարծես
Նրանց ձայնը ես լսում եմ ականջով»։

25 «Թե լինեի մի հայելի,— ասաց նա,—
Դեմքդ չէի ես ընկալի այնպես շուտ,
Ինչպես միտքդ ընկալում եմ ես հիմա։

28 Քո խորհածը այնքան հար է և նման
Իմ խորհածին, որ երկուսիս համար էլ
Ես հանգեցի միատեսակ որոշման։

31 Եթե դարի աջ կողմն այնքան լինի թեք,
Որ կարենանք իջնել ձորը հետևյալ,
Ապա արդեն նրանց ձեռքից կազատվենք...»։

34 Նա տակավին իր միտքը չէր ավարտել,
Երբ ես տեսա նրանց՝ բացված թևերով,
Որ ահա մեզ ուզում էին ձեռք ձգել։

37 Վարպետքս ինձ իսկույն գրկեց առ աչի,
Նման այն մոր, որ աղմուկից զարթնելով
Եվ տեսնելով մոտից բոցերն հրդեհի,

40 Որդուն առնում ու փախչում է անդեղն
Եվ միմիայն նրա մասին խորհելով
Մոռանում է հագնել շապիկն իսկ թեթև,—

43 Եվ կռնակի վրա ասեց փոքրակի
Այն զառիթափ ու առապար դարն ի վար,
Որ փակում էր մի կողմն հաջորդ ձորակի։

46 Զուրն առվակով այնպես արագ չի իջնում
Պտտացնելու անիվն հովտի ջաղացքի,
Երբ, հոսելով, փառերին է մոտենում,

49 Ինչպես իջավ իմ վարպետը դարն ի վար,
Ինձ կրելով կրծքին իբրև զավակի,
Եվ ոչ իբրև մի ընկերոջ հավասար:

52 Հազիվ թե նա ձորի հատակը հասավ,
Դևերն աՀա երևացին մեր վերև.
Բայց նրանցից վախ չունեինք էլ բնավ.

55 Չի Բարձրյալը, որ պարտադրել է նրանց
ՊաՀապաններ դառնալ ձորի հինգերորդ,
Թույլ չի տա, որ նրանք լինեն պարտազանց:

58 Ցածում գտանք մեղապարտներ ոսկեփայլ,
Որ լալագին, հոգնաբեկ ու հուսաբեկ,
Շուրջանակի շարժվում էին համրաքայլ:

61 Նրանք կրում էին փիլոն կնգղանի,
Որոնք լայն ու փայլուն էին, այնպիսիք,
Որ կրում են մոնազները Կլունյիի:

64 Դրանք դրսից պսպղուն էին ու ոսկյա,
Սակայն ներսից կապար էին, ծանր այնպես,
Որ կթվար Ֆեդերիկինը հարդյա:

67 Օ՛ վերարկու տաժանելի առհավետ:
Մենք, ինչպես միշտ, նորից դարձանք դեպի ձախ,
Ունկնդրելով նրանց ողբին տխրավետ:

70 Սակայն նրանք ծանրը բեռան պատճառով
Մեզ ուղեկցում էին այնպես համրընթաց,
Որ նոր անձանց էինք գտնում միշտ մեր քով:

73 Ես ասացի առաջնորդիս. «Արդ նայիր
Եվ սրանց մեջ գտիր մեկին, որ երկրում
Հայտնի լինի անունով ու գործով իր»:

76 Տոսկանացու լեզուս մեկը լսելով՝
Մեր ետևից աղաղակեց. «Կանգ առեք,
Դուք, որ այդպես շտապում եք մութ օդով:

79 Քո ուզածը գուցե ինձնից կիմանաս»:
Այնժամ ասաց վարպետը՝ ինձ. «Սպասի՛ր,
Ապա նրա ոտքով առաջ կընթանաս»:

82 Ես կանգ առա և տեսա, որ երկու անձ
Ինձ հասնելու ճիգեր էին թափում մեծ,
Բայց ծանրը բեռն հապաղեցնում էր նրանց:

85 Երբ ինձ հասան, հայացքով խեթ, խուզարկու,
Նրանք մի պահ ինձ նայեցին լռելյայն,
Ապա դարձան և ասացին մեկ մեկու.

88 «Մեկը ողջ է թվում շարժից կոկորդի,
Եթե ողջ չեն, ինչ շնորհով են նրանք
Քայլում առանց ծանրակապար զգեստի»:

91 Եվ ապա ինձ. «Օ՜ տոսկանցի՛դ բարետես,
Որ եկել ես կեղծավորաց համայնքն այս,
Մի՛ քամահրիր մեզ ասելու, թե ով ես»:

94 Եվ ես նրանց. «Ծնվել եմ ու մեծացել
Մեծ քաղաքում գեղածիծաղ Առնոյի.
Ես մարմնով եմ, քանզի դեռ չեմ մահացել:

97 Իսկ դուք ո՞վ եք, որոնց այտերն հենց ի վար
Արցունքներ են հոսում, ինչպես տեսնում եմ.
Եվ ի՞նչ են այդ աքեմները ոսկեվառ»:

100 Եվ մեկն ասաց. «Մեր փիլոնները ոսկետես
Կապարե են և այնպես ծանր ու ստվար,
Որ նրանց տակ մենք տնքում ենք մշտապես:

103 Բոլոնյացի ենք, Վայելող եղբայրներ.
Ես Կատալան, նա Լոդերինգ ենք կոչվում.
Քո քաղաքը մեզ ընտրել էր իրեն տեր,

106 Որ պահպանի խաղաղությունն իր ներքին,
Բայց մենք այնպես վարվեցինք, որ հետքը դեռ
Երևում է Գարդինգոյի մոտերքին»:

109 Ես ասացի. «Եղբայրնե՛ր, ձեր գործերով...»,
Բայց կանգ առա, քանզի տեսա ես մեկին,
Որ խաչված էր գետնին երեք ցցերով:

112 Ինձ տեսնելով նա գալարվեց ու խոպաց,
Հառաչանքով մորուքի մեջ փչելով:
Երբ Կատալանն այդ նկատեց՝ ինձ ասաց.

115 «Այս մեխված, որ դու տեսար հանկարծուստ,
Փարիսեցոց խորհուրդ տվեց, թե լավ է
Ջոհովի մի մարդ, քան մի ամբողջ ժողովուրդ:

118 Ճամփի վրա նա պառկած է շեղակի
Եվ զգում է ծանրությունները նրանց,
Որ անցնում են իր վրայով ուղղակի:

121 Նույն ձևով են այստեղ տանջվում նրա հետ
Նրա աներն ու անդամներն ատյանի,
Որ հրեից համար դարձավ չարաղետ»:

124 Վիրգիլիոսը զարմացել էր չափազանց
Ի տես նրա, ով աքսորում այս հավերժ
Այդպես խաչված ու փռված էր գետնամած:

127 Ապա եղբոր այս խոսքերը ուղղեց նա.
«Բարեհաճիր մեզ ասել, թե աջ կողմում
Կա՞ որևէ մի անցուղի մոտակա,

130 Որպեսզի մենք դուրս գանք տեղից այս գնդան,
Առանց երբեք հարկադրված լինելու
Դիմելու սև հրեշտակների օգնության»:

133 Եվ եղբայրը պատասխանեց. «Քիչ հեռու
Կա մի ժայռ, որ մեծ պարսպից ձգվելով,
Խաչհատում է բոլոր ձորերն ահարկու.

136 Այս ձորից զատ նա փլված է ամեն տեղ.
Դուք կարող եք բարձրանալ այդ փլվածքով,
Որ կազմում է մի զառիթափ նվազ թեք»:

139 Առաջնորդը մի պահ կանգնեց մտախոհ,
Ապա ասաց. «Ուրեմն մեզ խաբեց նա,
Որ լլկում էր հոգիներին ճանկերով»:

142 Եղբայրն ասաց. «Դևի ամեն չարության
Մասին արդեն Բոլոնիայում խսել եմ,
Ի մեջ այլոց, թե նա հայր է ստության»:

145 Առաջնորդը արագացրեց քայլերն իր,
Բարկությունից ջղայնացած բավական.
Եվ ես թողած հոգիներին ծանրակիր՝

148 Հետևեցի իմ վարպետին պատվական:

ԵՐԳ ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ

Նորոգ տարվա այն պահին, երբ արփին վառ
Ջրհոսի տակ փափկացնում է վարսերն իր,
Եվ պակսում են ցայգի ժամերը խավար.

4 Երբ եղյամը դաշտի վրա բովանդակ
Ստանում է, թեկուզ և շատ կարճատև,
Պատկերը իր ավագ քրոջ սպիտակ.

7 Շինականը, որի խարն է պակասել,
Առավոտյան ելնում է ու նկատում,
Որ արտերը ճերմակ քողով են պատել,

10 Տուն է մտնում և իր բախտն է անիծում,
Ինչպես դժբախտն անճարության մատնված.
Բայց շատ չանցած, երբ գալիս է ու տեսնում,

13 Որ փոխվել է դիմապատկերը երկրի,
Սիրտ է առնում և ցուպը ձեռքը բռնած՝
Արածելու է քշում հոտն ոչխարի:

16 Այսպես վարպետս ինձ աճ ու դող պատճառեց,
Երբ ինձ այնքան խոովաճույզ երևաց,
Եվ այսպես շուտ նա իմ ցավը դարմանեց:

19 Քանզի հենց որ հասանք կամուրջը խորտակ,
Նա ինձ դարձավ այն հայացքով ամոքիչ,
Որ նախապես տեսել էի լեռան տակ:

22 Նա ուշադիր փլատակին նախ նայեց,
Ապա մի պահ մտմտալով յուրովի,
Բացավ թևերն ու ինձ օգնել շտապեց:

25 Եվ ինչպես նա, ով գործում է դատելով,
Ասես գալիքն առաջվանից է հոգում,
Այսպես տերս ինձ մի ժայռն ի վեր հանելով,

28 Մատնանշեց մի ուրիշ ժայռ կարկառուն
Եվ ինձ ասաց. «Հիմա այնտեղ բարձրացիր,
Բայց նախ փորձիր, թե արդյոք չէ՞ երերուն»:

31 Ճանապարհն այս բեռնավորաց համար չէր,
Զի նա թեթև, իսկ ես նրա օգնությամբ
Հազիվ էինք մենք բարձրանում դարն ի վեր:

34 Եվ եթե այս զառիվերը ստորնյա
Ներսի կողմից ավելի կարճ չլիներ,
Նա չգիտեմ, բայց ես չեի դիմանա:

37 Բայց քանի որ պարունակը թեքվում էր
Դեպի բերանն անդնդախոր ջրհորի,
Ապա ամեն ձորի դիրքը այնպես էր,

40 Որ կողերից մեկը բարձր էր, մյուսը ցած:
Մենք ի վերջո հասանք գլխին կամրջի,
Որի ծայրի քարը դուրս էր կարկառված:

43 Ծունչը այնքան սպառվել էր թոքերիս,
Որ այլևս չէի կարող շարժվել ես,
Եվ նստեցի իսկույն այնտեղ հասնելիս:

46 «Հարկ է, որ դու ծուլությունդ թոթափես:
Փափուկ տեղում նստելով կամ պառկելով
Փառք չեն գտնի,— ասաց վարպետս իրատես.—

49 Առանց որի ով իր կյանքն է սպառում,
Երկրում այնքան հետք կթողնի իր մասին,
Որքան ծուխը օդում, փրփուրը՝ ջրում:

52 Արդ վեր կաց ու վճռությանն հաղթիր քո
Այն ոգիով, որ կբառնա ամեն խոչ,
Թե չկքի մարմնի բեռան ի ներքո:

55 Բավական չէ միայն դուրս գալն այստեղից.
Կա ավելի երկարաձիգ մի սանդուղք.
Թե հասկացար, օգտվիր իմ այս ազդից»:

58 Ես վեր կացա, ինձ ցույց տալով ավելի
Կորովապինդ քան ինձ զգում էի ես.
Եվ ասացի. «Գնանք, պինդ եմ ու արի»:

61 Մենք ընթացանք ժայռաթմբի վրայով,
Որ ավելի քարքարոտ էր ու անձուկ,
Քան այն, որով անցել էինք երկուսով:

64 Խոսում էի չերևալու համար թույլ:
Մյուս ձորակից հանկարծ լսվեց սուր մի ձայն,
Որ չէր կազմում նույնիսկ մի խոսք միաձույլ:

67 Ես չիմացա, թե նա ինչ էր բարբառում,
Թեև ողնի վրան էի կամարի,
Բայց խոսողը շարժման մեջ էր երևում:

70 Հակվել էի, բայց մթության պատճառով
Չէի կարող տեսնել խորքը ձորակի,
Եվ ասացի. «Վարպե՛տ, մենք այս կամարով

73 Հաջորդ թմբի վրա իջնենք փութապես.
Ձայն եմ լսում, բայց ոչինչ չեմ հասկանում,
Ցած եմ նայում, բայց ոչինչ չեմ տեսնում ես»:

76 «Քեզ պատասխան կտամ գործով միմիայն,—
Ասաց վարպետս,— հայցը համեստ ու արդար
Բավարարել հարկ է գործով լոելյայն»:

79 Մենք կամուրջի ներքև իջանք այն գլխից,
Ուր ութերորդ թմբին է նա միանում,
Եվ նոր ձորը ինձ երևաց այնտեղից:

82 Ներսում տեսա օձերի կույտ մի մախիզ,
Այնքան սոսկալի, հրեշավոր ձևերով,
Որ քստմնում, սարսում եմ դեռ հիշելիս:

85 Թող էլ Լիբիան չպարծենա, թե ունի
Քելիդրներ, քարքեր, ծարբեր, նետօձեր
Եվ այլ օձեր անհետեթ ու անճոռնի.

88 Այնտեղ չկա այնքան զեռուն թունալից,
Ի միասին հաշված ամբողջ Եթովպիան
Եվ Արաբիան Կարմիր ծովին հարակից:

91 Այդ օձերի միջով վայրագ, արտառոց՝
Վազում էին մերկ հոգիներ անհաբեկ,
Զգտնելով հելիոտրոպ կամ թաքստոց:

94 Կապված էին նրանց ձեռքերն ետևում.
Իսկ օձերը պոչն ու գլուխը խրած
Նրանց մեջքին՝ պրկվում էին առջևում:

97 Մեկի վրա, որ մեզ մոտ էր գտնվում,
Ահա հանկարծ նետվեց մի օձ ու խայթեց
Այնտեղից, ուր վիզն ուսերին է կցվում:

100 Ո կամ i տառն այնքան արագ չի գրվի,
Որքան արագ վառվեց խայթվածն ու այրվեց
Եվ ընկավ վար՝ վերածվելով մոխիրի:

103 Հազիվ թե նա գետին ընկավ, մոխրացավ,
Փոշին եկավ ու հավաքվեց ինքն իրեն
Եվ իր նախկին կերպարանքը ստացավ:

106 Իմաստունները ասում են ու հավաստում,
Որ Փյունիկը մեռնում, ծնվում է այսպես,
Երբ հինգ հարյուր տարին է մոտենում:

109 Նրա կերը ոչ հատիկ է և ոչ խոտ,
Այլ լոկ խունկի ու համեմի կաթիլներ,
Իսկ պատանքը՝ զմուռս, նարդոս քաղցրահոտ:

112 Ինչպես նա, ով ցած է ընկնում դիտապատ
Հանկարծակա՛ն մի զորությամբ դիվային
Եվ կամ թե մի հիվանդությամբ չարաբաստ,

115 Ու, եկնելով, իր թոլորտիքն է նայում,
Դեռ շշկլված մեծ տագնապից իր կրած,
Եվ, նայելով, հառաչանք է արձակում,—

118 Այսպես էր այն մեղավորը, երբ կանգնեց:
Որքան խիստ ես, աստվածային զորություն,
Որ պատժում ես հարվածներով ահընկեց:

121 Առաջնորդը նրան հարցրեց. «Ո՞վ ես դու»:
Եվ նա ասաց. «Շատ ժամանակ չէ, որ ես
Տոսկանայից ընկա ձորն այս ահռազդու:

124 Ընտրեցի ես՝ ջորիս, կյանքը անասնի,
Ոչ թե մարդու: Վաննի Ֆուչչին եմ անբան,
Եվ Պիստոյան եղավ ինձ որջ արժանի»:

127 Ես վարպետիս. «Հիմա հարցրու դու նրան,
Թե ինչ մեղքի համար ընկել է այստեղ.
Գիտեմ, որ նա մարդ էր կռվի և արյան»:

130 Մեղավորը այս լսելով չընկրկեց,
Այլ ինձ ուղղեց իր հայացքը սևեռուն,
Եվ գրգռումից ու ցասումից կարմրեց:

133 Ապա ասաց. «Ես ցավում եմ առավել,
Որ դու ինձ այս անարգ տեղում ես տեսնում,
Քանի երբ կյանքից զրավվեցի առնավետ:

136 Ստիպված եմ ասել, ինչու եմ այստեղ.
Այս խոր վիրապն ես ընկա այն պատճառով,
Որ գողացա մատռան սպասքը շքեղ.

139 Եվ սխալմամբ մեղադրեցին ուրիշին:
Բայց որպեսզի ինձ տեսնելով չհրճվես,
Եթե երբեք դուրս գաս տեղից այս մթին,

142 Ապա լսիր իմ ծանուցումը գուժարկ.
Նախ Պիստոյան կդատարկվի Սներից,
Հուսկ Ֆլորենցիան կփոփոխի կարգ ու սարք:

145 Մարսը Մագրի հովտից մի շանթ կհանի,
Շրջապատված թխպակուտակ ամպերով,
Եվ կմղվի դաշտի վրա Պիչենի

148 Ամպրոպաճույզ ու խստաշունչ մի կռիվ.
Սակայն շանթը կպատռի թուխպն ի վերջո,
Եվ կխոցվեն Սպիտակները լրիվ:

151 Այս ասացի, որ մղկտա սիրտը քո»:

ԵՐԳ ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ

Այս խոսքերից հետո գողը անպատկառ
Ձեռքը ցցեց ու մատները հանգուցեց,
Մոնչալով. «Աստված, ահա քեզ համար»:

4 Ինձ այդ պահից օձերն եղան բարեկամ.
Քանզի մի օձ նրա վզին փաթաթվեց,
Կարծես ասեր. «Սուս կա՛ց, լռի՛ր, անզգա՛մ»:

7 Մի ուրիշն էլ նրա թևերը կապեց,
Գալարվելով ինքն իր վրա այնպես պիրկ,
Որ նա ոչ մի շարժում անել չկարեց:

10 Օ՜, Պիստոյա՛, ինչո՞ւ մոխիր չդարձար.
Ինչո՞ւ ես դու գոյատևում տակավին.
Պղծության մեջ քո արմատին դու անցար:

13 Ինձ չերևաց ոչ մի մարգում Դժոխքի
Այդքան ըմբոստ մեկը հանդեպ Աստուծո,
Ոչ իսկ նա, ով ընկավ որմից Թեբեի:

16 Նա խույս տվեց էլ ոչ մի բառ չասելով:
Եվ ես տեսա մի կենտավրոս ամենի,
Որ գալիս էր «Ուր է լիրբը» գոչելով:

19 Մարեմմայում այնքան օձեր չեն լինում,
Որքան կային նրա մեջքին մինչև անդ,
Ուր մարդկային մարմնիրանն է սկսում:

22 Իսկ ուսերից ու ծոծրակից կախված էր
Սոսկատեսիլ ու թևավոր մի վիշապ,
Որ նետում էր հանդիպողին հուր բոցեր:

25 Վարպետս ասաց. «Նա Կակոսն է կատաղած,
Որ ժայռերի ներքև լեռան Ավենտին
Կազմեց լճեր արյուններից իր թափած:

28 Եղբայրների հետ միասին չի հաճում
Նրա համար, որ նենգությամբ գողացավ
Այն նախիրը, որ մոտերքն էր արածում:

31 Բայց վերջ գտան նրա գործերն անիրավ
Լաստի ներքո Հերակլեսի, որ տվեց
Հարյուր հարված և տասն հազիվ ստացավ»:

34 Մինչ վարպետը ինձ հետ խոսում էր այսպես,
Մեր ներքևով երեք հոգի անցկացան,
Որոնք այնժամ նկատելի եղան մեզ,

37 Երբ «Ո՞վ եք դուք» մեզ գոչեցին միաձայն:
Այն ժամանակ մեր գրույցը կտրեցինք
Եվ մեր ուշքը դարձրինք նրանց միմիայն:

40 Ծանոթ չէի ես նրանցից ոչ մեկին,
Սակայն հանկարծ ահա այնպես պատահեց,
Որ նրանցից մեկն անվանեց մյուսին,

43 Հարցնելով. «Զանփան որտե՞ղ է կորել»:
Այնժամ մատնս բերնիս դրի, ուզելով
Տիրոջս ուշքը նրանց վրա բևեռել:

46 Արդ ընթերցող, չհավատաս դու անգամ
Իմ պատմությանն, չեմ զարմանա ես քնավ.
Քանզի ես որ տեսա՝ հազիվ հավատամ:

49 Մինչ ես նայում էի հառած հայացքով,
Մեկի վրա նետվեց մի օձ վեցոտնյա
Եվ փաթաթվեց նրան ուժգին պատվածքով:

52 Նրա փորը սեղմեց միջին ոտներով.
Առջիններով բռնեց թևերը նրա,
Իսկ այտերը՝ ատամնավոր բերանով:

55 Ետիններով կպավ նրա ազդրերին,
Եվ իր պոչը, նրանց միջև խոթելով,
Բարձրացրեց մինչև կոնակը վերին:

58 Բաղեղն երբեք չպատատվեց մի ծառի
Այնպես ամուր, ինչպես զեռունը ահեղ
Փաթաթվեց շուրջն այն եղկելի թշվառի:

61 Ապա նրանք, ինչպես տաք մոմ, հալվեցին,
Եվ խառնեցին իրենց գույները այնպես,
Որ ոչ մեկին էր ներհատուկ, որ մյուսին:

64 Այսպես վառվող թղթի վրայով լայնարձակ
Բոցի առջև ընթանում է մի մուգ գույն,
Որ սև չէ դեռ, ոչ էլ այլևս սպիտակ:

67 Մյուս երկուսը գոչում էին անարեկ.
«Ավա՛ղ, Անյե՛լ, այդ ինչպե՛ս ես դու փոխվում.
Ահա արդեն ոչ երկու ես, ոչ էլ մեկ»:

70 Արդեն երկու գլուխները մեկ դարձան,
Եվ մեր առջև նրանց դեմքերը երկու
Զուլվեցին ու մեկ կերպարանք ստացան:

73 Չորս մասերը դարձան երկու բազուկներ,
Իսկ ոտները, փորը և կուրծքը նրանց
Դարձան անդամ, որ տեսնված բան չէր դեռ:

76 Նախնականից չէր մնացել ոչ մի բան,
Եվ արտառոց այդ պատկերը այդ ձևով
Դանդաղորեն շարունակում էր ճամփան:

79 Ինչպես մողեսն, ամռան շոգի ժամանակ,
Մի թփուտից մյուս թփուտը անցնելիս
Սլանում է արագ, ինչպես մի փայլակ,

82 Այսպես սուրաց մոլեգնությամբ կատաղի
Դեպի մյուս երկու հոգին մի օձիկ,
Որ սև, բարկ էր, ինչպես հատիկ պղպեղի:

85 Նա նրանցից մեկին խայթեց ճիշտ այնտեղ,
Ուրկից սաղմը իր սնունդն է ստանում.
Սպամ փուվեց նրա առջև տեղնուտեղ:

88 Վիրավորը նրան նայեց անմոռանչ
Եվ հորանջեց, ասես լիներ բռնված
Ծանրը քնով և կամ տենդով մահաշունչ:

91 Նա և օձը իրար էին պիշ նայում.
Մին մխում էր վերքից, մյուսը՝ բերնից,
Եվ մուխերը իրար էին հանդիպում:

94 Թող Լուկանը այսուհետև չխոսի
Սաբելլոսի և Նասիդի մասին հեգ,
Եվ ինչ որ արդ պատմելու եմ՝ թող լսի:

97 Թող լոի և Օվիդիոսը, ըստ որում
Կաղմոսն օձի և Արեթուսն աղբյուրի
Եթե փոխեց, ես նրան չեմ նախանձում:

100 Զի նա երկու արարածներ բնության
Զայլափոխեց այնպես, որ նյութը մեկի
Զևափոխվեր մյուսի նյութի էության:

103 Այսպես եղավ այլակերպումը նրանց.
Օձն իր պոչը երկու մասի բաժանեց,
Իսկ խայթվածը կցեց ոտները միմյանց:

106 Սրունքներն ու ազդրերն այնպես կիպ կպան
Ու միացան, որ շատ չանցած արդեն իսկ
Չէր երևում ոչ մի նշան միացման:

109 Օձի պոչը այն կերպարանքն էր առնում,
Որ կորչում էր մյուսի մեջ, մեկի մոտ
Մորթն էր փափկում, իսկ մյուսի մոտ կոշտանում:

112 Մարդու թևերն անութներից ներս մտան,
Եվ գազանի զույգ կարճ ոտները այնչափ
Երկարեցին, որչափ նրանք կարճացան:

115 Հետին ոտներն, ոլորվելով միասին,
Դարձան ծածուկ պահվող անդամն առնական,
Իսկ խեղճի մոտ այն երկճղվեց անդստին:

118 Մինչդեռ ծուխը ծածկում էր այն երկուսին
Նոր գույներով, մեկին մազով օժտելով,
Հերատելով, գոնջացնելով մյուսին,

121 Մեկը կանգնեց, իսկ մյուսը ընկավ վար,
Չկասելով միմյանց նայել չար աչքով,
Որի ներքո փոխում էին դեմքերն հար.

124 Վեր կանգնողը դունչը քաշեց քունքերին
Եվ այնտեղից հոսող նյութից հորդառատ
Կազմվեցին ականջները մարդկային:

127 Իսկ ավելցած այն հեղանյութը հորդում
Դեմքի վրա կազմեց քիթը բնական
Եվ շրթներին տվեց որոշ հաստություն:

130 Ցած պառկողը իր սուր դունչը երկարեց
Եվ ականջներն, ինչպես խխունջն է անում,
Իր գլխի մեջ ներքաշեց ու ծրարեց:

133 Լեզուն, որ նախ միաձուլ էր ու խոսուն,
Ճեղքվածք տվեց, իսկ մյուսի մոտ այն փակվեց,
Եվ դադարեց նրանց մոխը ներգործուն:

136 Եվ հոգին, որ մի սողուն էր դարձել պիղծ,
Ջորի միջով փախավ-գնաց ֆշշալով,
Իսկ այն մյուսը թքեց նրա ետևից:

139 Ապա նրան իր կոնակը դարձնելով,
Ասաց մյուսին. «Թող հիմա էլ Բուոզոն
Ինձ պես սողա ու սողոսկի այս ճամփով»:

142 Այսպես տեսա փոփոխմունքը էությանց:
Թող նորությունն արդարացում լինի ինձ,
Եթե եղա երկարաբան չափազանց:

145 Թեպետ արդեն իմ աչքերը և հոգին
Շլմորել ու շշմել էին չափազանց,
Բայց երբ նրանք ծածուկ ծլկվել ուզեցին,

148 Տեսա Պուչչո Շանկատոյին հայտնապես.
Լոկ սա էր, որ չայլափոխվեց, ապաքեն,
Այն երեքից, որոնք եկան նախապես.

151 Մյուսը նա էր, որից տուժեց Գավիլլեն:

ԵՐԳ ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ

Ֆլորենցիա ցնծա, զի մեծ ես այնքան,
Որ ոչ միայն հոչակվել ես աշխարհում,
Այլ Դժոխքում էլ ես դարձել տիրական:

4 Այն գողերի մեջ հինգ հոգի գտա ես,
Որ, համոթ ինձ, քաղաքացիք էին ինձ,
Եվ այդ բնավ մեծ պատիվ չի բերի քեզ:

7 Եթե ճիշտ են երազները վաղորդյան,
Ապա շուտով կիմանաս, թե Պրատոն
Եվ ուրիշներ ինչ են մաղթում քեզ սերկյան:

10 Եվ դա որքան շուտ կատարվի, այնքան լավ,
Քանզի որքան առաջանամ տարիքով,
Այնքան պիտի ավելի շատ զգամ ցավ:

13 Մենք մեկնեցինք, և վարպետը բարեհաճ
Ինձ բարձրացրեց սանդուղքներով դարափոլ,
Որոնցով մենք իջել էինք քիչ առաջ:

16 Եվ մենք միջով քարերի ու խութերի
Զուգընթացանք ճանապարհով մենավոր,
Բայց ոչ առանց օգնության մեր ձեռքերի:

19 Ես տխրել եմ, այժմ էլ տխրում եմ էլի,
Երբ հիշում եմ իմ տեսածները բոլոր
Եվ սանձում միտքս առաջվանից ավելի,

22 Որպեսզի նա ուղիղ ճամփից դուրս չգա.
Եթե բարի աստղը ձիրք է ինձ տվել,
Դրա համար նախանձելու հարկ չկա:

25 Գեղջուկն ինչպես, որ հանգչում է բլրան տակ,—
Այն ժամանակ, երբ լուսատուն աշխարհի
Քիչ է ծածկում մեզնից իր դեմքը տուտակ,

28 Երբ մժեղը փոխարինում է ճանճին,—
Ներքև, հովտում, իր այգու մեջ կամ արտում
Տեսնում է բյուր փոսուտաներ լուսածին,

31 Այսպես տեսա ես ութերորդ ձորակում
Բազում բոցեր, հենց որ հասա ես այնտեղ,
Ուրկից մինչև խոր հատակն էր երևում:

34 Ինչպես նա, ով վրեժ լուծեց արջերով,
Աչքով տեսավ Եղիայի կառքն հրեղեն,
Որ ելնում էր դեպի երկինք ձիերով,

37 Եվ նայելով ուշով նրա ուղղությամբ,
Ուրիշ ոչինչ չնկատեց բոցից զատ,
Որ բարձրանում էր դեպի վեր ինչպես ամպ,

40 Այսպես բոցեր էին շարժվում այս ձորում,
Եվ ամեն բոց պարուրում էր մի հոգի,
Թեև աչքը գողոնը չէր նշմարում:

43 Ես վայրահակ նայում էի կամրջից,
Եվ եթե մի քարից բռնած չլինեի,
Ցած կընկնեի, չհրմշտված ոչ մեկից:

46 Տեսնելով որ ես նայում եմ ապշահար,
Վարպետս ասաց. «Կան հոգիներ հուրերում,
Որոնք ծածկում ու այրում են նրանց հար»:

49 «Վարպե՛տ, հիմա հավատում եմ քեզ իրոք,—
Ասացի ես:— Ես էլ այդպես գիտեի,
Բայց ուզում եմ քեզ հարցնել, թե արդյոք

52 Ո՞վ կա երկճյուղ այն հուրի մեջ բոցավետ,
Ասես թե նա այն խարույկից է ելել,
Ուր դրված էր Էտեոկլը եղբոր հետ»:

55 Պատասխանեց. «Նրա մեջ են չարչարվում
Ուլիսը և Դիոմեդը. մեկտեղ են,
Ինչպես մեկտեղ եղան մարտում ու դավում:

58 Անդ տանջվում են ձիու դավի համար այն,
Որի շնորհիվ բացվեց դուռը քաղաքի,
Ուրկից ելավ ազնիվ սերմը հռոմյան.

61 Եվ նենգության, որի համար Դեյդամիան,
Թեև մեռած, դեռ ողբում է Աքիլլին.
Անդ տեղն է և Պալլադիոնի հատուցման»։

64 «Եթե նրանք բոցում կարող են խոսել,—
Ասացի ես,— ապա, վարպե՛տ, խնդրում եմ,
Թույլատրիր ինձ մի քիչ այստեղ սպասել,

67 Մինչև որ այն երկնյուղ բոցը մոտենա.
Տես, թե ինչպես իղձըս նրան լսելու
Ինձ հակում ու առնգում է դեպի նա»։

70 «Քո խնդիրքը արժանի է,— ասաց նա,—
Գովասանքի, և ընդունում եմ ես այն.
Բայց քո լեզուն դու առայժմ մի՛ բանա։

73 Խոսելն ինձ թող. ինչ որ ուզում ես հարցնել,
Ես հասկացա, գուցե նրանք, որ հույն են,
Չհաճեն քեզ պատասխանել ու լսել»։

76 Երբ բավական մեզ մոտեցավ բոցը այն,
Տեղն ու պահը վարպետս հարմար համարեց
Եվ այս կերպով սկսեց խոսել նույնհետայն.

79 «Օ՛ դուք, որ մեկ կրակի մեջ եք կիզիչ,
Եթե ես ձեզ արժանացա իմ կյանքում,
Եթե ես ձեզ արժանացա շատ թե քիչ,

82 Երբ աշխարհում գրեցի երկն իմ վսեմ,
Կանգ առեք, և ձեզնից մեկը թող պատմի,
Թե ուր կորավ ու գտավ մահն իր դժխեմ»։

85 Վաղնջական բոցի ճյուղը բարձր ու մեծ
Սկսեց այնժամ օրորվել ու ճարճատել,
Ճարճատում է ինչպես հուրը հողմածեծ.

88 Ապա գագաթն իր դեսուդեն ճոճելով,
Ինչպես եթե խոսուն լեզու մի լիներ,
Ձայն արձակեց ու բարբառեց այս կերպով.

91 «Երբ ես պրծա ու հեռացա Կիրկեից,
Որ մի տարի Գայետի մոտ ինձ պահեց,
Նախքան այսպես անվանվելը Էնեասից,

94 Ոչ գորովը որդուս, ոչ գութն ալեհեր
Հորըս հանդեպ, ոչ էլ սերը պարտեցյալ,
Որ իմ կնոջ պիտի բերկրանքը կազմեր,

97 Կարող չեղան զսպել փափագն իմ ուժգին
Ճանաչելու աշխարհները հեռավոր
Եվ տեսնելու չարն ու բարին մարդկային։

100 Եվ ես մտա բացաստանները ծովի,
Նավարկելով առագաստե մի նավով
Ու փոքրաթիվ ընկերներով կորովի։

103 Տեսա ափերն երկու մինչև Իսպանիա
Ու Մարոկկո, տեսա կղզին սարդերի
Եվ այլ կղզիք հեռափնյա ու մերձափնյա։

106 Արդեն երկար ժամանակ էր անցկացել,
Երբ հոգնաբեկ հասանք նեղուցն այն անձուկ,
Ուր Հերկուլեսն իր սյուներն էր կանգնեցրել,

109 Որ ոչ մի մարդ չկարենար դենն անցնել.
Ես աջ կողմում թողել էի Սևիլյան,
Իսկ Սեուտան ձախ կողմում էր մնացել։

112 «Ո՛վ եղբայրներ,— ասացի ես,— արդ դուք, որ
Շատ փորձությանց միջով հասաք արևմուտք,
Ձեզ մնացած կյանքում կարճ ու անցավոր

115 Չլինի թե զլանաք ու ետ կենաք
Հետևելու արեգակի ընթացքին,
Ճանաչելու համար աշխարհն անբնակ։

118 Հաշվի առեք ձեր ծագումը երջանիկ.
Դուք չեք ծնվել անասնաբար ապրելու,
Այլ գիտելիք ձեռք բերելու և բարիք»:

121 Այս կարճ ճառովս ընկերներիս ես այնպես
Հրահրեցի ուղին առաջ վարելու,
Որ էլ նրանց չէի կարող զսպել ես:

124 Եվ նավախելն ուղղած դեպի արևելք՝
Մենք վարեցինք թիերն իբրև խոլ թևեր,
Ընթանալով միշտ դեպի ձախ անարգելք:

127 Մութն ընկնելով՝ տեսնում էի արդեն ես
Մյուս բևեռի բոլոր աստղերը պայծառ,
Իսկ մերերը չէին գալիս ասպարեզ:

130 Արդեն վառվել ու հանգել էր հինգ անգամ
Երկրին նայող լուսնի լույսը այն պահից,
Ինչ մենք մտանք դժվար ուղին ինքնակամ,

133 Երբ մեզ հեռվից աղոտ կերպով երևաց
Մի լեռ, որ ինձ թվաց այնքան բարձրաբերձ,
Որ նմանը երբեք չէի ես տեսած:

136 Մեր բերկրանքը շուտով վշտի վերածվեց,
Քի նոր երկրից մի փոթորիկ բարձրացավ,
Որից նավը ուժգին թափով հարվածվեց.

139 Երեք անգամ նա հորձանվեց սոսկալի,
Իսկ չորրորդին նրա խելը վեր ցցվեց
Եվ ցոուկը սուզվեց կամքով Բարձրյալի,

142 Մինչև որ մեզ ծովը իսպառ կուլ տվեց»:

ԵՐԳ ՔՍԱՆՅՈԹԵՐՈՐԴ

Բոցը արդեն անշարժացած, ուղղաձիգ,
Լռել էր և հեռանում էր մեզանից,
Արձակումով բանաստեղծի իմ քաղցրիկ,

4 Երբ մի այլ բոց, որ գալիս էր ետևից,
Գրավեց մեր ուշադրությունն երկուսիս
Սուր շչյունով, որ հանում էր իր ծայրից։

7 Ինչպես ցուլը սիկիլյան,— որ նախ խանչեց
Ձայնով նրա (և այդ արդար էր անշուշտ),
Որի ձեռքով ու խարտոցով այն շինվեց,—

10 Մոնչում էր ձայնով ներսում այրվողի
Եվ, թեպետ նա պղնձից էր պատրաստված,
Թվում էր, թե ցավ էր զգում դառնաղի,

13 Այսպես հոգին իր ցավագին խոսքերին
Մի անցք կամ ելք չգտնելով բոցի մեջ,
Հանում էր մի ձայն, որ հատուկ է հուրին։

16 Բայց հագիվ թե գտան ազատ անցք նրանք
Բոցի ծայրից, տալով նրան թրթիռն այն,
Որով լեզուն ձայն էր հանում տխրերանգ,

19 Մենք լսեցինք. «Օ՜, դո՛ւ, քեզ եմ դիմում ես,
Քեզ, որ հենց նոր լոմբարդական բարբառով
Ասել էիր. «Գնա, էլ չեմ պահում քեզ».

22 Թեև այստեղ մի քիչ ուշ եմ ես հասնում,
Բայց դու հաճիր մի քիչ կանգնել ու խոսել.
Տես այրվելով հանդերձ ես կանգ եմ առնում։

25 Եթե նոր ես եկել աշխարհն այս մոլոր
Լատինական երկրից քաղցր ու հարազատ,
Ուրկից հետս եմ բերել մեղքերն իմ բոլոր,

28 Ռոմանյոլում, ասա, կովո՞ւմ են էլի.
Չի ծնունդյամբ լեռնավայրից եմ ես այն,
Որ Ուրբինից ակն է հասնում Տիբերի»։

31 Ես դեռ հակված լսում էի ուշադիր,
Երբ վարպետը կողից դիպավ ասելով.
«Նա լատին է, դու նրա հետ բարբառիր»։

34 Եվ ես արդեն պատասխանը պատրաստած՝
Սկսեցի այսպես խոսել անհապաղ,
«Ով դու հոգի, որ հրի մեջ ես փակված,

37 Քո Ռոմանյան չի եղել և չի լինի
Առանց կռվի տիրողների սրտերում.
Բայց հիմա անդ կռիվ չկա շատ հայտնի:

40 Առաջվա պես նույնն է հիմա Ռավեննան.
Պոլենտայի արծիվը թուխս է նստել
Եվ թևերով ծածկել է այն ու Զերվիան:

43 Քաղաքը, որ պաշարման դեմ դրեց քաջ
Եվ ֆրանսացոց արյունահեղ ջարդ տվեց,
Այժմ ընկած է ճիրանների տակ կանաչ:

46 Վերուկկիոյի գամփռներն ահել ու ջահել,
Որ սովոր են հոշոտելու որսն իրենց,
Ստիպեցին Մոնտանյային սպանել:

49 Կապուլտ կորյունը, որ ամռան ու ձմռան
Փոխում է իր ուղղությունը հոսանքի,
Արդ վարում է Ֆալենցան ու Իմոլան:

52 Իսկ քաղաքն այն, որով Սավիոն է հոսում,
Եվ դաշտի ու լեռան միջև է ընկած,
Ոչ լծի տակ, ոչ էլ ազատ է ապրում:

55 Բայց ով ես դու, աղաչում եմ՝ ասա մեզ,
Զէ որ ես քեզ սիրով տվի պատասխան,—
Թող հիշատակդ երկրում մնա մշտապես»:

58 Նախ և առաջ հուրը մի քիչ շառաչեց,
Ապա սուր ծայրն օրորելով դես ու դեն,
Իր ընդերքից այս խոսքերը դուրս փչեց.

61 «Թե գիտնայի, որ պատասխանը պիտի
Ուղղվի մեկին, որ աշխարհ է դառնալու,
Ապա բոցը բարբառելու չէր միտի.

64 Բայց զի ոչ ոք ետ չի դարձել այստեղից,
Եթե ճիշտ է իմ լսածը այդ մասին,
Ես կխոսեմ, չվախենալով ամոթից:

67 Եղա ռազմիկ, ապա դարձա կապավոր,
Հուսալով որ կարժանանամ շնորհի.
Եվ հույսս, անշուշտ, կիրագործվեր, եթե որ

70 Հովվապետը, գրողի ծոցը գնա,
Ինձ չխոթեր իմ մեղքերի մեջ նախկին.
Թե այդ ինչպես եղավ, լսիր ինձ հիմա:

73 Քանի կյանքում միս ու ոսկոր կրեցի,
Որոնք ես իմ մորից էի ժառանգել,
Աղվեսի պես գործեցի, ոչ առյուծի:

76 Ճանաչեցի ամեն տեսակ նենգ ու դավ,
Որոնք այնպես վարպետորեն գործ դրի,
Որ նրանց լուրն աշխարհի ծայրը հասավ:

79 Երբ ես տեսա, որ հասել եմ իմ կյանքի
Այն շրջանին, երբ այլևս պետք է մարդ
Առագաստներն ու պարաններն հավաքի,

82 Ատեցի այն, ինչ հաճույք էր ինձ տվել,
Եվ զղջալով կրոնավոր ես դարձա.
Օ, ավա՛ղ ինձ, կարող էի ես փրկվել:

85 Վեհապետը փարիսեցոց մերօրյա,
Որ կովում էր Լատերանի մոտերքում,
Ոչ ցեղերի դեմ հեթանոս կամ հրյա,

88 Այլ հենց ընդդեմ քրիստոնեից ընտանի,
Որոնք չէին Ակրի առմանն աջակցել,
Կամ առևտուր արել երկրում Սուլթանի,

91 Չպատկառեց ոչ իր բարձրը պաշտոնից,
Ոչ իր կարգից ու վիճակից սրբազան,
Եվ ոչ էլ իմ Ֆրանկիսկյան փիլոնից:

94 Ինչպես կանչեց Կոնստանդինը Սիլվեստրին,
Որ Սորատտից գա ու իրեն բժշկի,
Այսպես նա ինձ իր մոտ կանչեց անդստին,

97 Որ բժշկեմ գոռոզության իր տենդից.
Ինձնից խորհուրդ ուզեց, բայց ես լռեցի,
Քանզի նա ինձ ցնդած թվաց խոսքերից:

100 Ապա հարեց. «Ես քեզ մեղքից կարձակեմ,
Մի՛ վախենա. դու միայն ինձ խորհուրդ տուր,
Թե ես ինչպես Պենեստրինոն խորտակեմ:

103 Ես կարող եմ բանալ երկինքն ու գոցել,
Ինչպես գիտես. ունեմ երկու բանալիք,
Որոնց հարգը նախորդը չէր իմացել»:

106 Այնժամ մղված այս փաստարկից կարևոր,
Էուս մնալը համարեցի վատագույն,
Եվ ասացի. «Հայր, սրբում ես քանի որ

109 Ինձնից մեղքն այն, ուր արդ ընկնեմ պիտի ես,
Շատ խոստացիր, բայց մի՛ պահիր խոստումներդ,
Եվ քո բարձրը գահում հաղթող կլինես»:

112 Ֆրանկիսկը ինձ մոտ եկավ, երբ մեռա,
Բայց դևերից մեկը նրան բողոքեց,
«Դու չտանես, քուն տերը ես եմ նրա:

115 Նա պետք է գա՝ գերիներիս մեջ մնա.
Ես բռնել եմ ամուր նրա մազերից
Այն օրից, երբ ճենգ խորհուրդներ տվեց նա:

118 Ով չի զղջում, նա արձակվել չի կարող.
Չի կարելի զղջալ հանցանք գործելով,
Դա կլինի հակասություն բացառող»:

121 Վա՛յ ինձ, ինչպես ես ցնցվեցի սրտաղող,
Երբ ինձ ասաց. «Չէիր կարծում դու գուցե,
Որ ես իրոք տրամախոս եմ հաշող»:

124 Նա ինձ տարավ Սինոսի մոտ մեղսիմաց.
Սա ութ անգամ պոչը իր շուրջ պատելով
Ու զայրույթից այն կծելով՝ մոնչաց.

127 «Սրան պետք է կրակների մեջ նետել»:
Եվ այսպես ես դատապարտված եմ այստեղ
Ու տանջվում եմ հրդեհի մեջ անել»:

130 Ավարտելով այսպես խոսքերն իր երկար,
Բազմաչարչար բոցը մեզնից հեռացավ,
Գալարելով իր եղջյուրը սրածայր:

133 Առաջնորդներս ու ես առաջ ընթացանք
Ժայռի վրայով մինչև կամարն հաստատուն
Հաջորդ ձորի, ուր պատժվում են նրանք,

136 Որ մարդկանց մեջ սերմանեցին գժտություն:

ԵՐԳ ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ

Ո՞վ կարող էր նույնիսկ արձակ խոսքերով
Պատմել արյունն ու խոցերը այն բոլոր,
Որ ես տեսա իմ սեփական աչքերով:

4 Ամեն լեզու հարկավ պիտի թերանար.
Զի մարդկային խոսքն ու միտքը անզոր են
Ընդգրկելու նման բաներ անհնար:

7 Եթե ի մի հավաքվեին այն մարդիկ,
Որ Պուլիայի հողի վրա տարաբախտ
Ընկան ձեռքով հռոմայեցոց քաջ մարտիկ,

10 Եվ նրանք, որ ընկան երկար մարտերում,
Ուր այնքան մեծ ափար եղավ մատանու,
Ինչպես անսուտ Տիտոս— Լիվիոսն է գրում,

13 Եվ նրանք, որ սպանվեցին կարեվեր,
Դիմադրելով զորքին Ռոբերտ Գուիսկարդի,
Նրանք, որոնց ոսկորներն են հանում դեռ

16 Չեպերանում, որտեղ ամեն պուլյացի
Դավաճանեց, և որտեղ ծեր Ալարդոն
Անզեն հաղթեց մոտակայքում ամրոցի—

19 Բոլոր սրանք անդամներով թրատված
Ոչինչ էին այն պատկերի մոտ տխուր,
Որ իններորդ ձորում տեսա ես պարզված:

22 Տակառն անտակ չունի այնպես խեղված ձև,
Ինչպես տեսա մի մեղավոր ես այստեղ,
Որ ճղված էր ծնոտից ցայլքը մինչև:

25 Աղիքները կախված էին ներքևում,
Երևում էր սիրտը պարկի հետ այն պիղծ,
Ուր կերվածը կղկղանքի էր փոխվում:

28 Մինչ սևեռուն դիտում էի ես նրան,
Նա նայեց ինձ և իր կուրծքը բանալով
Արտաբերեց. «Ահա նայիր իմ վրան.

31 Ահա տես, թե Մահմեդն ինչպես է հերձված:
Իմ առջևից լալով գնում է Ալին,
Ծնոտից վեր ամբողջ դեմքով փեռեկված:

34 Եվ բոլորը, որոնց այստեղ տեսնում ես,
Սերմանեցին գժտություն ու պառակտում,
Դրա համար ճղված-հերձված են այսպես:

37 Մեր ետևում ահեղ մի դև ունենք մենք,
Որ իր թրով մեզ խփում է բրտորեն
Ամեն անգամ, երբ մենք անում-պրծնում ենք

40 Մեր պտույտը այս ձորակում տխրերանգ.
Վասնզի մեր խոցվածքները փակվում են,
Նախքան նորից նրա առջև երևանք:

43 Բայց ո՞վ ես դու, որ նայում ես ժայռն ի վար:
Թե՞ ուզում ես դանդաղ գնալ քո պատժին,
Որ քո մեղքով սահմանված է քեզ համար»:

46 «Նա մեռած չէ, ոչ էլ մեղքերն են նրան
Այստեղ բերել,— պատասխանեց վարպետն իմ,—
Այլ եկել է իմանալու ամեն բան,

49 Եվ ես՝ մեռյալս, հարկ է նրան մահ ածեմ
Դժոխքն ի վար պարունակ առ պարունակ,
Ճշմարիտը սա է, որ քեզ ասում եմ»:

52 Այս լսելով՝ հոգիները հարյուրյակ
Կանգ առան և ինձ նայեցին զարմացած,
Մոռանալով տանջանքն իրենց դժնդակ:

55 «Դու, որ գուցե տեսնես արևը շուտով,
Ասա եղբայր Դոլչինոյին, որ եթե
Նա չի ուզում այստեղ քովը գալ փութով,

58 Թող պարենի պաշար հոգա այժմյանից,
Որ ձմռանը նովարացուն դիմադրի.
Այլապես նա հեշտ կպարտվի նրանից»:

61 Երբ Մահմեդը այս խոսքերը բարբառեց,
Իր մի ոտքը բարձրացրել էր արդեն,
Եվ ապա այն գետին դրեց ու մեկնեց:

64 Մի ուրիշը, որի կոկորդն էր ծակված
Ու կտրված քիթը՝ հոնքերը մինչև,
Եվ որի լոկ մի ականջն էր մնացած,

67 Կանգ առավ և սևեռաբիր ինձ նայեց,
Եվ բերանն իր, որ արյամբ էր կարմրած,
Ընկերներից առաջ բացավ ու խոսեց.

70 «Դու որ մեղքով դատապարտված չես թվում,
Եթե քեզ չեմ նմանեցնում ուրիշի,
Քեզ տեսել եմ լատինական աշխարհում:

73 Դու հիշիր ինձ՝ Պիետրո դա Մեդիչին,
Եթե գնաս հարթավայրն այն անուշակ,
Որ Մարկաբից տարածվում է Վերչելլի:

76 Եվ Ֆանոյի ազնիվ մարդկանց իմաց տուր,
Ինչպիսիք են Անջելելոն ու Գուիդոն,
Որ, եթե մեր գուշակությունը չէ զուր,

79 Կատտոլիկա ավանի մոտ առափնյա
Նրանք նավից պիտի ծովը շպրտվեն
Դավադրությամբ բռնակալի մի դժնյա:

82 Կիպրոս կղզուց մինչև հեռու Մայորկա
Նեպտունն այդքան ստոր ոճիր չի տեսել
Գործված հույնից և կամ հենից սրիկա:

85 Դավադիրը, որ մի աչքով է ծնվել,
Եվ որ տերն է այն քաղաքի, որ այստեղ
Մեզնից մեկը կուզեր տեսած չլինել,

88 Կանչելու է նրանց իմ մոտ՝ խորհուրդի.
Բայց այնպես է նա անելու, որ նրանց
Հարկ չի լինի ոչ աղոթքի, ոչ ուխտի»:

91 Եվ ես նրան. «Եթե ուզում ես, որ քեզ
Հիշեմ երկրում, ցույց տուր, ասա, ո՞վ է նա,
Որ տեսնելու համար տուժեց դառնապես»:

94 Այնժամ ձեռքը դրեց մեկի բերանին
Եվ, բանալով, այսպես ասաց բարձրաձայն.
«Ահա սա է, բայց մնում է միշտ լռին:

97 Սա փարատեց երկմտանքը Կեսարի,
Երբ որ ասաց՝ «Ով պատրաստ է գործելու,
Միշտ տուժում է սպասելուց անհարկի»:

100 Օ՜ որքա՛ն ինձ երևում էր սահմոկած
Կոկորդի մեջ կտրած լեզվով Կուրիոնն այն,
Որ խոսելու այնքան հախտուն էր եղած:

103 Մի ուրիշը, որ զրկված էր ձեռքերից,
Բարձրացնելով կրճատ թևերն օդի մեջ,
Որից դեմքը աղտեղվում էր արյունից,

106 Աղաղակեց. «Հիշիր նաև Մոսկային.
«Պետք է վերջ տալ» ասողն, ավա՛ղ, ես էի,
Որը աղետ բերեց տոսկան աշխարհին»:

109 «Եվ մահ ցեղիդ»— ավելացրի ես իսկույն:
Եվ նա, ճնշված կրկնակ ցավից, հեռացավ
Ծանրը վշտից գժված մարդու մի հանգույն:

112 Կանգնած նայում էի հոգվոց դժպհի,
Երբ որ տեսա մի բան այնքան անսովոր,
Որ ես չէի պատմի առանց վկայի,

115 Եթե պատմել չթելադրեր խիղճը ինձ,
Լավ ընկերն այդ, որ համարձակ է դարձնում
Այն մարդուն, որ իրեն զգում է անբիծ:

118 Ստույգ տեսա, այժմ էլ տեսնում եմ կարծես,
Առանց գլխի մի իրան, որ քայլում էր
Ընկերների նման հոտի տխրատես:

121 Նա բռնել էր հերքից գլուխն իր կտրած,
Որ կախված էր օդում, ինչպես մի լապտեր,
Եվ գոչում էր «Վա՛յ ինձ» ցավից իր կրած:

124 Նա ինքն իրեն դարձրել էր մի ճրագ.
Երկուս էին մեկի մեջ, մեկ՝ երկուսի.
Թե այդ ինչպես՝ Ամենակալն է գիտակ:

127 Կանգ առնելով կամրջի տակ բարձրադիր,
Նա գլուխը վեր բարձրացրեց բազուկով,
Որպեսզի ինձ մոտեցընի խոսքերն իր,

130 Որոնք եղան. «Տես պատիժն իմ ահռելի,
Դու որ, դեռ ողջ, այստեղ մեր մեջ ես եկել.
Տես սրանից սոսկալին կա՞ ավելի:

133 Եվ որպեսզի երկրում հիշես իմ մասին,
Գիտցիր՝ Բերտրան դը Բոռնն եմ ես, անձը այն,
Որ չար խորհուրդ տվեց ջահել արքային:

136 Ես լարեցի միմյանց դեմ հայր ու որդի.
Աքիտոփելն ավելի շատ չգրգռեց
Աբիսողոմ որդուն ընդդեմ հայր Դավթի:

139 Ես զատեցի մարդկանց իրար ընտանի.
Դրա համար ուղեղս անջատ եմ կրում
Ողնաշարից, որ մեջն է այս իրանի:

142 Եվ այսպես ես համատույժս եմ ստանում»:

ԵՐԳ ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ

Տեսքն ամբոխի և տանջանքները անլուր
Այնքան էին իմ աչքերը տամկացրել,
Որ կուզեի սիրտըս փղձկալ ու լալ լուռ.

4 Վիրգիլն ասաց. «Միտքդ ինչո՞վ է տարված.
Հայացքդ ինչո՞ւ շարունակում ես հառել
Ստվերների վրա խեղված, խաթարված:

7 Մյուս ձորերում այդպիսի բան չարեցիր,
Եթե նրանց հաշվում ես դու, գիտցիր, որ
Այս ձորն ունի քսաներկու մղոն ծիր:

10 Լուսինն արդեն գտնվում է նադիրում.
Դու տեսնելիք այլ բաներ էլ ունես դեռ,
Բայց մեզ հիմա քիչ ժամանակ է մնում»:

13 Ես ասացի. «Իսկ եթե դու գիտնայիր,
Թե ես ինչո՞ւ նայում էի այնպես պիշ,
Գուցե դու ինձ դեռ կանգնելու թույլ տայիր»:

16 Ընթանալով առաջնորդիս ետևից,
Այսպես անհա նրան տվի պատասխան,
Եվ հարեցի. «Այս ձորի մեջ տանջալից,

19 Ուր ես նայում էի այնպես ակնապիշ,
Մի զարմիկըս կարծեմ քավում է մեղքն այն,
Որը այստեղ ստանում է խիստ պատիժ»։

22 Այնժամ ասաց իմ վարպետը բարեմիտ.
«Նրա մասին մի մտածիր դու բնավ,
Եվ նա այնտեղ թող իր տեղը մնա միշտ։

25 Ես կամրջից տեսա նրան ի մոտո,
Որ զայրագին քեզ էր անում մատնանիշ։
Կոչում էին նրան Ջերի դել Բելլո։

28 Այդ միջոցին այնքան էիր դու տարված
Հոտըֆորի բերդակալով, որ նրան
Չնայեցիր, և նա թողեց ու գնաց»։

31 Եվ ես. «Վարպե՛տ, նրա մահը բռնական,
Որի վրեժն առած չեն դեռ այն անձինք,
Որ կրեցին անպատվություն տոհմական,—

34 Ահա դա է ցասման պատճառը նրա.
Ուստի գնաց առանց ինձ հետ խոսելու,
Եվ այդ բանը սաստիկ ազդեց իմ վրա»։

37 Այսպես անհա խոսակցելով մենք հասանք
Ժայռ-կամուրջի վրա հաջորդ ձորակի,
Ուր չլիներ եթե այնքան մթներանգ,

40 Կտեսնեինք մինչև հատակը նրա
Եվ ներփակյալ հոգիներին մեղապարտ.
Երբ մենք ելանք բարձրակետի ճիշտ վրա,

43 Ինձ խոցեցին հեծեծանքներ ահարկու,
Ինչպես նետեր, սրված ցավով անպատում,
Եվ փակեցի իմ ականջները երկու։

46 Այս ձորի մեջ այնքան ցավ ու տնքոց կար,
Ինչքան պիտի լիներ, եթե մի փոսում
Հավաքեին հիվանդներին ցավագար

49 Վալդիկիանի, Մարեմմայի, Սարդինիոն.
Իսկ հատակից բարձրանում էր գարշ մի հոտ,
Որ հատուկ է մարմիններին նեխածո:

52 Եվ մենք իջանք թմբի վրա արտաքին,
Առաջվա պես ընթանալով դեպի ձախ,
Ասա ավելի լավ պարզվեց իմ աչքին

55 Խորքը ձորի, ուր պաշտոնյան Բարձրյալի,
Արդար վճռի կատարածուն անվրեպ,
Պատուհաս է տալիս ամեն կեղծյալի:

58 Չեմ կարծում, որ մարդիկ այնչափ ցավ զգան
Ի տես հիվանդ ժողովրդին Եգիպտի,—
Ուր ժանտախտով վարակված էր օդն այնքան,

61 Որ կենդանի ամեն էակ մահացավ,
Ապա նախկին ժողովուրդը կղզյակի
Մրջյունների սերմով նորից բազմացավ,

64 Ինչպես որ դա պոետներն են հավաստում,—
Որչափ այստեղ, ուր հոգիները բոլոր
Տանջանքներից հալվում էին ու հատնում:

67 Մեկը գետնին փորի վրա էր պառկած,
Մյուսը հենված իր մերձակցի ուսերին,
Մի ուրիշը քարշ էր գալիս սողընթաց:

70 Դանդաղ ու լուռ անցնում էինք ձորով այս.
Նայելով և ունկնդրելով խոթերին,
Որոնք չէին կարող կանգնել հոտնկայս:

73 Տեսա երկու հոգի իրար կոթնած,
Ինչպես երկու տապակ վրան կրակի,
Գլխից մինչև ոտքը քոսով ծածկված:

76 Ձիապանը, որին տերն է սպասում,
Եվ կամ որին փութացնում է մի այլ բան,
Քերչով ձիուն այնպես շուտ-շուտ չի քսում,

79 Ինչպես սրանք եղունգներով սրասայր
Քերում էին իրենց վրա, որպեսզի
Մեղմացնեին իրենց քորը սաստկազայր։

82 Եղունգները թափում էին քոսը վար,
Ինչպես դանակն է թափում թեփն սկարի,
Կամ այլ ձկան թեփերով լայն ու ստվար.

85 «Օ՜, դու, որ քեզ քո մատներով ցտում ես,
Եվ պոկում ես միսդ ինչպես աքցանով,—
Ասաց մեկին առաջնորդը հեգնապես,—

88 Ասա մեզ, կա՞ այստեղ ձեր մեջ մի լատին.
Երանի թե քո եղունգները երբեք
Չմաշվեին քո այդ գործում դժվարին»։

91 «Մենք երկուսս էլ, որ տխեղծված ենք այսպես,
Լատիններ ենք,— պատասխանեց նա լալով,—
Բայց ո՞վ ես դու, որ հարցում ես անում մեզ»։

94 Վարպետս ասաց. «Ես այս մարդու հետ կենդան
Իջնում եմ ցած պարունակ առ պարունակ,
Որ ցույց տամ, թե Դժոխքի մեջ ինչեր կան»։

97 Այնժամ նրանք մեկը մյուսից զատվեցին
Եվ, դողալով, ինձ նայեցին այլոց հետ,
Երբ պատահմամբ այն խոսքերը լսեցին։

100 Բարի վարպետս ինձ մոտեցավ, ասելով.
«Ասա նրանց, թե ինչ ես դու փափագում»։
Այնժամ նրանց ես դիմեցի այս կերպով.

103 «Իցիվ թե ձեր հիշատակը չցնդեր
Մարդկանց մտքից՝ աշխարհի մեջ առաջին,
Եվ կարենայք շատ տարիներ ապրել դեռ.

106 Ասացեք ինձ՝ ո՛վ եք, և ո՛ր երկրից եք.
Այդ զազիր և անարգ պատժի պատճառով
Ինքնությունը ձեր հայտնելու մի՛ քաշվեք»:

109 Մեկն ասաց. «Ես Արեցցոյից եմ եկել.
Ինձ մեղադրեց սիենացի Ալբերոն,
Բայց այլ մեղքի համար եմ ես աստ ընկել:

112 Միշտ է, նրան կատակելով ասացի,
Թե ես գիտեմ կերպը օդում թռչելու.
Իսկ նա, աշխույժ, սակայն սակավ խելացի,

115 Խնդրեց, որ ես սովորեցնեմ այդ իրեն,
Բայց նա Դեդալ չդառնալով ինձ այրեց
Նրա ձեռքով, ում զավակն էր հոգեղեն:

118 Ես ալքիմիա բանեցրի աշխարհում.
Դրա համար ինձ Մինոսը ուղղադատ
Դատապարտեց տասից վերջին այս ձորում»:

121 Ես պոետիս. «Այնպես ինչպես սենացիք
Կա՞ն երբևէ մարդիկ այնքան սնամիտ,
Այդպիսիք չեն մինչև անգամ ֆրանսացիք»:

124 Մյուս բորոտը, որ այս խոսքըս լսել էր,
Պատասխանեց. «Ի բաց առյալ Ստրիկկան,
Որ ծախքերն իր չափավորել լավ գիտեր.

127 Եվ Նիկկոլոն, որ առաջինը մուծեց
Ծառոքրամի գործածությունն այն այգում,
Որտեղ նրա սերմը այնքան լավ աճեց.

130 Եվ այն խումբը, ուր շռայլեց ու վատնեց
Կաչա դ՝ Աշանն իր անտառներն ու այգին,
Իսկ Աբբալյատն իր մեծ խելքը ցույց տվեց:

133 Եվ որպեսզի իմանաս, թե ով եմ ես,
Որ սենացոց այսպես ծաղրում եմ քեզ հետ,
Լավ նայիր ինձ, և իմ դեմքը կասի քեզ.

136 Կտեսնես, որ Կապոկկիոն եմ քեզ ծանոթ:
Ես կեղծեցի ալքիմիայով մետաղներ.
Պետք է հիշես, եթե դու չես մոռացկոտ,

139 Որ բնությամբ եղա կապկող ջանասեր»:

ԵՐԳ ԵՐԵՍՈՒՆԵՐՈՐԴ

Երբ Յունոնը Սեմելեի պատճառով
Զայրացել էր ընդդեմ ցեղի թեբական,
Ինչպես ցույց էր տվել երկու առիթով,

4 Աթամանտը այնքան դարձավ խելագուրկ,
Որ տեսնելով իր կնոջը սեփական,
Որ գալիս էր զավակների հետ իր զույգ,

7 Աղաղակեց. «Լարենք ցանցերը արագ,
Որ էգ առյուծն ու կորյունները բռնեմ»:
Եվ պարզելով իր ճիրանները վայրագ,

10 Բռնեց մեկին, որ Լեարկոս էր կոչվում,
Եվ զարնելով ժայռին՝ նրան ջախջախեց,
Մայրն էլ խեղդվեց մյուս զավակի հետ ծովում:

13 Եվ երբ բախտը խոնարհեցրեց հավիտյան
Զորությունը տրոյացոց սիգապանծ,
Եվ արքան ու արքայությունը հանգան,

16 Հեգ Հեկուրը, որ գերի էր ցավագին,
Տեսնելով իր Պոլիքսենին սպանված
Եվ գտնելով իր Պոլիդոր զավակին

19 Ծովի ափին անշնչացած ու փոված,
Խելակորույս սկսեց ոռնալ շան նման,
Այնքան վշտից ցնցված էր ու ցնորված:

22 Սակայն երբեք ոչ Թեբեում և ոչ էլ
Տրոյայում կենդանացաց կամ մարդկանց մեջ
Կատաղությունն այնպես սաստիկ չի եղել,

25 Ինչպես տեսա երկու հոգու մեջ դժգույն,
Որ ամենքին կծում էին, վազելով,
Բնից փախչող սոված խոզի մի հանգույն:

28 Մեկը կծեց Կապոկկիոյին ծոծրակից
Եվ քարշ տվեց նրան, և նա, ճչալով,
Փորով քերեց չոր հատակը ձորակի:

31 Արետինը, դողդողալով, ինձ ասաց.
«Ահա Զանձի Սկիկկին է այդ ոգին,
Որ ամենքին խածատում է՝ գազազած»:

34 «Ց՜, երանի քեզ այն մյուսը չկծեր,—
Ասացի ես,— բայց դու հաճիր ինձ ասել,
Թե ո՞վ է դա, քանի դեռ չի հեռացել»:

37 Եվ նա ասաց. «Դա հոգին է հնօրյա
Այն ապիրատ ու անպատկառ Միրրայի,
Որ իր հոր հետ կապվեց սիրով մեղկյա:

40 Նա գործելու համար արարքն իր տգեղ,
Նմանեցրեց իրեն ուրիշ մի կնոջ.
Իսկ այն մյուսը, որ, տես, գնում է այնտեղ,

43 Յուրացնելու համար հոտի տիրոհին,
Նմանեցրեց իրեն Բուոզո Դոնատուն,
Եվ թելադրեց պատշաճ կտակ նոտարին»:

46 Երբ այն երկու կատաղիքը գնացին,
Որոնց վրա հառել էի հայացքն իմ,
Դարձա դեպի մյուս հոգիներն հոռեծին:

49 Տեսա մեկին, որ պիտ վինի նմանվեր,
Եթե լիներ նրա մարմինը կիսված
Երկճյուղանի ցայլից սկսած մինչև վեր:

52 Զրուռուցքը, որ նյութերով ավշային
Մարմնանդամներն այլանդակում է այնպես,
Որ դեմքը չի ներդաշնակում մեծ փորին,

55 Ստիպում էր նրան բացել շրթներն իր,
Ծյուրախտավորն ինչպես սաստիկ ծարավից
Բաց է անում իր շրթները կաս-կարմիր:

58 «Դուք, որ ամեն տեսակ պատժից ազատ եք
Եվ չգիտեմ ինչու՝ Դժոխք եք ընկել,—
Ասաց նա մեզ,— խնդրեմ մի պահ ինձ նայեք.

61 Տեսեք դաժան տանջանքն Ադամ վարպետի.
Ես ողջությանս ինչ ուզեցի ունեցա,
Արդ կարոտ եմ, ավա՛ղ, ջրի մի շիթի:

64 Առնո թափվող առվակները գլգլուն,
Որ հոսում են Կազենտինի լեռներից,
Զովացնելով ծործորները դալարուն,

67 Այստեղ միշտ իմ աչքի առջև են գալիս,
Եվ այդ պատկերն ինձ ավելի է հյուծում,
Քան այն ախտը, որ ինձ տաղտապ է տալիս:

70 Այնտեղ է, որ ես գործեցի մեղքն իմ մեծ.
Եվ հիմա ես այդ վայրերը հիշելով
Արձակում եմ հառաչանքներ դառնահեծ.

73 Հենց այնտեղ է Ռոմենան, ուր կեղծեցի
Ոսկեդրամը Մկրտիչով դրոշմված.
Դրա համար ես կենդանվույն այրվեցի:

76 Բայց որպեսզի այստեղ տանջված տեսնեի
Գուիդոյին, Ալեսսանդրին ու եղբոր,
Ֆոնտե Բրանդան հոժարությամբ կտայի:

79 Մեկն եկել է արդեն, եթե հավատամ
Այստեղ շրջող ստվերներին մոլեգին,
Բայց ի՞նչ օգուտ, անկյալ եմ ու ծանրանդամ:

82 Եթե գոնե այնքան թեթև լինեի,
Որ շարժվեի մի մատնաչափ մի դարում,
Վաղուց արդեն ես ճանապարհ կընկնեի

85 Որոնելու նրան մարդկանց մեջ այս պիղծ,
Թեպետև այս ձորը ունի կես մղոն
Լայնություն և տասնմեկ մղոն շրջագիծ:

88 Ես այստեղ եմ ընկած նրանց պատճառով.
Նրանց համար ես կտրեցի ֆլորին
Երեք կարատ այլ մետաղի խառնուրդով»:

91 Եվ ես նրան. «Այն երկուսը ովքե՞ր են,
Որ պառկած են քո աջ կողմում իրար կից,
Եվ արձակում ծուխ-գոլորշի մեղմորեն»:

94 Պատասխանեց. «Երբ այս ձորը ընկա ես,
Նրանց այդպես անշարժ գտա, և կարծեմ
Նրանք պետք է այդպես մնան մշտապես:

97 Մեկն այն կինն է, որ զրպարտեց Հովսեփին.
Իսկ այն մյուսը Սինոնն է՝ հույն խաբեբան.
Սուր տենդից են արձակում այդ գոլորշին»:

100 Երկրորդը, որ լցվեց սաստիկ զայրույթով,
Երբ իր մասին այս որակումը լսեց,
Նրա պրկված փորին զարկավ բռունցքով:

103 Հարվածից փորն ինչեց ինչպես մի թմբուկ.
Իսկ Ադամը խփեց նրա երեսին
Մի հարվածով նույնքան ուժգին ու դիպուկ,

106 Ապա ասաց. «Շարժվել կարող չեմ թեև
Իմ ծանրացած անդամների պատճառով,
Բայց խփելու համար ունեմ ազատ թև»:

109 Եվ հույնը. «Դու դեպի խարույկ գնալիս
Քո ձեռքն այդպես ծիր չէր, սակայն այդպես էր,
Եվ ավելի գուցե, դրամ կտրելիս»:

112 Եվ ցնփորը. «Այդ բանում դու իրավ ես,
Սակայն այդպես ճշմարտախոս չեղար դու,
Երբ Տրոյայում ճշմարիտը հարցրին քեզ»:

115 Եվ հույնը. «Ես խոսք կեղծեցի, դու՝ դրամ.
Իմ հանցանքը մեկն է, քոնը այնքան շատ,
Որ դու անցար սատանայից էլ անգամ»:

118 Հաստափորը պատասխանեց. «Ուխտադրուժ,
Դու հիշիր ձին և տանջվիր ամոթից,
Չի դա թողեց բոլորի մեջ հոռի հուշ»:

121 «Դու էլ տանջվիր,— ասաց հույնը,— ծարավից,
Եվ դրանից ճաքի լեզուդ, փորը քո
Փքվել է ու դառել տակառ ջրալից»:

124 Դրամանենգն այնժամ ասաց զայրալի.
«Բերանդդ լոկ չար խոսելու է բացվում.
Ճիշտ է, թե ես ծարավ եմ ու ջրով լի,

127 Քեզ էլ այրում, տանջում է տենդը կիզիչ.
Եվ առաջին կանչին պիտի վազեիր
Լափլիզելու ջինջ հայելին Նարգիսի»:

130 Նրանց խոսքերն ուշով լսում էի ես,
Երբ ինձ վարպետս զգուշացրեց. «Լսիր դեռ.
Քիչ մնաց, որ նեղանայի պիտի քեզ»:

133 Զգալով որ նա խոսում էր բարկությամբ,
Դարձա նրան մի այնպիսի ամոթով,
Որ տակավին ես հիշում եմ դառնությամբ:

136 Եվ ինչպես նա, ով տեսնում է վատ երազ,
Եվ ուզում է, որ դա երազ էլ մնա,
Ինչպես մի բան անհնարին ու անհաս,

139 Այսպես էի ես՝ անկարող խոսելու.
Ուզում էի ինձ չքմեղել, բայց արդեն
Ինձ չքմեղում էի առանց գիտնալու:

142 Վարպետս ասաց. «Մեծ հանցանքներ դրանից
Արձակվում են նվազ ամոթ զգալով,
Ուստի վանիր քո խոովքը քեզանից:

145 Բայց եթե դու ընկնես ուրիշ մի ամոթով
Այդօրինակ բանակովող մարդկանց մեջ,
Ապա պետք է պահարակեմ քեզ խստիվ.

148 Ստոր տենչ է լսել նման բանավեճ»:

ԵՐԳ ԵՐԵՍՈՒՆՄԵԿԵՐՈՐԴ

Այն լեզուն, որ ինձ խոցել էր այնպես հույժ,
Որ փոխվել էր նույնիսկ գույնը իմ դեմքի,
Այդ էլ դրեց վերքիս վրա դեղաբույժ:

4 Աքիլլեսի և հոր նիզակը այսպես
Սուր խոցեր էր նախ պատճառում, ասում են,
Ապա բուժում նույն խոցերը փութապես:

7 Մենք հեռացանք վերջին ձորից չարաշուք
Եվ, անցնելով եզրաթմբի վրայով,
Գնում էինք առաջ լուռ ու անշշուկ:

10 Այնտեղ լույսը այնքան թույլ էր և աղոտ,
Որ իմ առջև հազիվ էի ես տեսնում,
Բայց լսեցի շեփորի ձայն մի պոռոտ,

13 Որոտումից ավելի գոռ և ուժգին.
Եվ ուղղությանն հետևելով այդ ձայնի՝
Հայացքս ընկավ կետի վրա մի ներքին:

16 Այն ողբալի կոտորածի ժամանակ,
Երբ Կարոլոս Մեծն իր սուրբ փաղանգը կորցրեց,
Ոլանդն այնպես չհնչեցրեց փող-կոչնակ:

19 Եվ նայելով ձայնի կողմը ես ուղեղ,
Տեսա կարծես աշտարակներ բարձրաբերձ,
Եվ ես. «Վարպե՛տ, այդ ի՞նչ քաղաք է այդտեղ»։

22 Եվ նա. «Դու այս օդի միջով աղջամուղջ
Քո հայացքը շատ հեռուն ես արձակում,
Դրա համար մոլորվում ես կարի լուրջ։

25 Երբ մոտենաս, դու կտեսնես թե ինչպես
Պատրվում է տեսողությունը հեռվից.
Հիմա հարկ է, որ դու մի քիչ շտապես»։

28 Ապա հարեց մեղմ բռնելով իմ ձեռքից.
«Որպեսզի բանն արտասովոր չթվա,
Հարկ է, որ դու տեղեկանաս այժմյանից,

31 Որ հսկա են նրանք, ոչ թե աշտարակ.
Պորտից ներքև նրանք սուզված են հորում
Եվ նրա շուրջ կազմում են լայն շրջանակ»։

34 Ինչպես մեգը երբ փարատվում է քիչ-քիչ,
Տակավ աչքերն սկսում են որոշել
Այն, ինչ ծածկում է գոլորշին պարփակիչ,

37 Այսպես որքան հորին էինք մոտենում
Այդ հոծ ու մութ օդի միջով, այնքան իմ
Առն աճում էր և իմ պատրանքը ցնդում։

40 Եվ ինչպես որ Մոնտերեջոն, բարձունքին,
Պսակում են աշտարակներ բարձրաբերձ,
Այսպես ջրհորն եզրապատող ափունքին

43 Ցցվել էին հսկաները աճավոր,
Որոնց Զևսը սպառնում է տակավին,
Երբ երկնքից որոտում է աճագոռ։

46 Առա արդեն տեսնում էի ես մեկի
Դեմքն ու կուրծքը և որովայնն աճագին
Եվ կողերից կախված թևերն երկակի։

49 Բնությունը անշուշտ շատ լավ բան արեց,
Երբ դադարեց նման հրեշներ ստեղծել
Եվ Մարսի այդ մարտիկներին վերացրեց.

52 Եվ եթե դեռ ստեղծում է կետ ու փիղ,
Ապա ով որ կշռադատի նրբորեն,
Դա կգտնի ավելի ճիշտ և ուղիղ.

55 Վասնզի երբ խելքն ու միտքը բանական
Միանում են չար կամքին ու բիրտ ուժին,
Դրանց հանդեպ մարդ մնում է անպաշտպան:

58 Նրա դեմքը այնպես լայն էր ու երկայն,
Ինչպես կոնը Սուրբ Պետրոսի՝ Հռոմում.
Եվ մարմինն էլ մեծ էր դրա համաձայն:

61 Մեջքից ներքև ջրհորի մեջ էր թեև,
Բայց դրսից դեռ այնքան բան էր երևում,
Որ հասնելու համար գլխին իր պարթև

64 Երեք ֆրիզոն չէին լինի բավական.
Քանզի պորտից մինչև անրակը նրա
Տեսնում էի երեսուն թիզ իսկական:

67 «Ռաֆել մայի ամեք զաբի ամալմի»—
Ահեղ ձայնով գոչեց բերանն այն վայրագ,
Որին քաղցրը սաղմոս ասել չէր սազի:

70 Եվ վարպետը նրան. «Հոգի անոպա,
Փչիր փողդ ու հանգստացիր դրանով,
Երբ քեզ բռնի կատաղությանն մի նոպա:

73 Խառնակ հոգի, պարանոցդ շոշափիր,
Եվ կգտնես շիկափոկը շեփորիդ,
Որ պատում է ամբողջ կուրծքդ լայնածիր»:

76 Եվ ապա ինձ. «Նա ինքն իրեն է մատնում.
Նա Նեմբրոթն է, որի մտքի համար խոլ
Արդ մի լեզու չի գործածվում աշխարհում:

79 Թողնենք նրան, հետը իզուր ենք խոսում.
Նրա համար ամեն լեզու այնպես է
Ինչպես իրը, որ ոչ ոք չի հասկանում»։

82 Մենք անցնելով ճանապարհով մատչելի՝
Զախ թեքվեցինք և քիչ հեռու մենք գտանք
Մի այլ Հսկա, հաղթ ու վայրագ ավելի։

85 Զգիտեմ, թե նա զսպված էր ո՛ւմ ձեռքով,
Զախ բազուկը կրծքի վրա էր կապված,
Մինչդեռ աջը թիկունքին՝ մի շղթայով,

88 Որ կախված էր պարանոցից հաղթանդամ
Եվ պորտից վեր երևացող մարմնի շուրջ
Պարուրաձև փաթաթվել էր հինգ անգամ։

91 Վարպետս ասաց. «Այս գոռոզը կամեցավ
Ուժը չափել ամենազոր Զևսի հետ
Եվ հատուցումն ըստ արժանվույն ստացավ։

94 Նա Ֆիալտն է, Հսկաներից մեկը այն,
Որ գրոհով աստվածներին վախեցրին.
Է՛լ չի շարժում բազուկներն իր հաղթ ու լայն»։

97 Ես ասացի. «Եթե հնար է, վարպե՛տ,
Թույլ տուր տեսնեմ իմ սեփական աչքերով
Բրիարեսին վիթխարի ու անհեթեթ»։

100 Պատասխանեց. «Նախ կտեսնես Անթեյին,
Որ խոսում է ու կապված չէ շղթայով.
Նա կտանի մեզ հատակը անդունդի։

103 Քո ուզածը այստեղից շատ է հեռու.
Նա կապված է և այնպես է, ինչպես սա,
Միայն դեմքով ավելի է ահարկու»։

106 Մի աշտարակ երբեք այնպես ուժգնորեն
Չի ցնցվել երկրաշարժից ահավոր,
Ինչպես ցնցվեց Հսկա Ֆիալտը մեկեն։

109 Ինձ համակեց այնժամ սոսկումը մահվան.
Եվ եթե ես չտեսնեի կապերն իր,
Ինձ կսպաներ անշուշտ երկյուղը միայն:

112 Այն ատեն մենք առաջացանք անկնկուն
Եվ մոտեցանք Անթելին, որ հորից դուրս
Մինչև վիզը երևում էր հինգ կանգուն:

115 «Օ՜ դու, որ այն դաշտահովտում բարեբաստ,
Ուր Սկիպիոնն արժանացավ փառքերի,
Երբ ջախջախեց Հաննիբալին անզգաստ,

118 Իբրև ավար շատ առյուծներ ձեռք բերիր,
Եվ որ եթե, ինչպես կարծում են ոմանք,
Եղբայրներիդ հետ մեծ մարտում լինեիր,

121 Երկրի որդիք կտանեին հաղթանակ.
Խնդրեմ մեզ տար դեպի հատակն անդունդի,
Ուր Կոկիտը ցրտից սառած է համակ:

124 Է՛լ չդիմենք Տիտոնին կամ Տիֆոնին.
Սա կարող է քեզ արժանին հատուցել.
Ձիջանիր մեզ, քիթ ու մուրթ մի՛ անի:

127 Սա կարող է քեզ աշխարհում հռչակել,
Քանզի ողջ է և դեռ կապրի ընդերկար,
Եթե Տերը չուզի նրան վաղ կանչել»:

130 Այսպես ասաց իմ վարպետը Հսկային.
Սա բացավ ու նրան պարզեց թևերն իր,
Որոնց ուժը քաջ հայտնի էր Հերակլին:

133 Եվ երբ գրկված զգաց Վիրգիլը ինքզինք,
Դեպ ինձ դիմեց. «Մոտեցիր, որ քեզ գրկեմ».
Եվ երկուսով մենք մի կապոց դարձեցինք:

136 Ինչպես եթե Կարիզենդին մարդ նայի,
Երբ ամպեր են անցնում նրա վրայից,
Կկարծի, թե պիտի թեքվի ու ընկնի,

139 Այսպես Անթեյն ինձ երևաց արդ մի պահ,
Երբոր նրա թեքվելն էի ես տեսնում.
Եվ ես վախից պիտ ընտրեի այլ ճամփա:

142 Բայց նա մեզ մեղմ դրեց վիհի հատակին,
Ուր խոթված են Սադալելը և Հուդան.
Եվ ապա նա շտկվելով փութագին,

145 Ուղիղ կանգնեց նավակայմի ճիշտ նման:

ԵՐԳ ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Եթե տաղեր ունենայի խժալուր,
Ինչպես վայել էր այս տխուր խոռոչին,
Ուր հենվում են պարունակներն ընդհանուր,

4 Կարող էի մտքիս հյութը լավ քամել,
Բայց քանի որ պակասում են այդպիսիք,
Սկսում եմ վարանումով ես պատմել.

7 Քանզի խաղ չէ և կամ ձեռնարկ մի պարապ՝
Նկարագրել տիեզերքը ի հիմանց
Մի լեզվով, որ թոթովում է «մամ» ու «պապ»:

10 Բայց այն Մուսայք, որ օգնեցին Անֆիոնին
Պարսպելու Թեբեն, այստեղ ինձ կօգնեն,
Որ խոսքերիս համազորեն իմ նյութին:

13 Օ՛ հոռեգույն արարածներ չարասուն,
Որոնց մասին նույնիսկ դժվար է խոսել,
Լավ էր երկրում դուք լինեիք անասուն:

16 Երբ մեզ գտանք մութ ջրհորի հատակին,
Այն Հսկայի ոտքերից էլ ստորև,
Եվ մինչ նայում էի բարձրը պատերին,

19 Ես լսեցի մեկի խոսքերն հետևյալ.
«Զգույշ եղիր, որ ոտնակոխ դու չանես
Գլուխները եղբայրներիս ողբացյալ»:

22 Ես, հակվելով, տեսա տակն իմ ոտների
Մի սառած լիճ, որ իր սառցե ծածկույթով
Նմանվում էր ապակիի, քան ջրի:

25 Ավստրիայում, սաստիկ ձմռան ժամանակ,
Դանուբն այնպես չի ծածկվել հաստ շերտով,
Կամ Տանայիսն հեռավոր ցուրտ երկնի տակ,

28 Ինչպես սա է. արդ Տաբեռնիկը և կամ
Պիետրապանան եթե վրան փուլ գային,
Նա չէր հանի մի ճթթոցի ձայն անգամ:

31 Ինչպես գորտը դունչը ջրից դուրս հանած
Կոկռում է, այն ժամանակ մանավանդ,
Երբ գեղջկուհին հնձում է արտն իր հասած,

34 Այսպես այստեղ ստվերները տխրատես
Մինչև վիզը սուզված էին սառցի մեջ
Եվ կափկափում ատամները սագի պես:

37 Յուրաքանչյուրն իր դեմքը ցած էր պահում.
Բերանները ցրտի, աչքերը սրտի
Տվայտանքի մասին էին վկայում:

40 Երբ հայացքս ես ուղղեցի քիչ հեռու,
Ներքև տեսա երկու հոգի այնքան կիպ,
Որ մազերը խառնվել էին իրարու:

43 «Դուք, որ միմյանց այդպես կպել եք ամուր,
Ասեք՝ ո՞վ եք»— ասացի ես: Եվ նրանք
Ինձ հառեցին այնժամ հայացքն իրենց սուր:

46 Արցունքները, լցված նրանց աչքերում,
Կաթկթեցին, ապա նորից սառելով,
Քարացան ու կպան նրանց կոպերում:

49 Երկու փայտեր կեռով իրար չկպան
Այդպես ամուր: Եվ դրանից կատաղած
Հարու տվին նոխազների ճիշտ նման:

52 Մի ուրիշը, որ ականջներն էր կորցրել
Ցրտությունից, կոր ի գլուխ ինձ ասաց.
«Աչքերդ ինչո՞ւ մեր վրա ես դու հառել:

55 Այն երկուսը, որ տեսնում ես, եղբայր են.
Նրանք իրենց հայր Ալբերտից ստացան
Բիզենցիոյի հովտի կայքերն համորեն.

58 Բայց դու ամբողջ շրջանակում Կայենի
Չես հանդիպի այլոց, որոնք լինեին
Սառույցի մեջ խրման այնքան արժանի.

61 Ոչ նա, որի կուրծքն ու ստվերը մինչև
Ծակեց Արթուրն իր տեգի մեկ հարվածով,
Ոչ Ֆոկաչչան, ոչ էլ սա, որ իմ առջև

64 Գլխով ցցվել-խափանել է թմբի պես.
Նա կոչվում է Մասկերոնի Սասոլո.
Տոսկանայից պետք է նրան ճանաչես:

67 Եվ որպեսզի քեզ ամեն ինչ պարզ լինի,
Գիտցիր, որ ես Կամիչոն դե՝ Պացցին եմ.
Սպասում եմ ինձնից վատթար Կալկինին»:

70 Ապա տեսա ցրտից կապտած, սևացած
Բազում դեմքեր, և ես սարսուռ եմ զգում
Ու կզգամ միշտ, երբ տեսնեմ լիճ մի սառած:

73 Եվ մինչ դեպի կենտրոն էինք մենք գնում,
Ուր ձգվում են ծանրությունները բոլոր,
Եվ մինչ դողում էի հավերժ սառույցում,

76 Դիտմամբ էր, թե դիպվածաբար, չգիտեմ,
Բայց անցնելիս գլուխների միջով այն,
Ոտքով զարկի մեկի գանգին ձառադեմ:

79 Նա ողբալով գոչեց. «Ինչո՞ւ ես զարկում.
Թե չես եկել ծանրացնելու պատիժն իմ
Մոնտապերտու համար, է՞ր ես ինձ լլկում»։

82 Եվ ես. «Վարպե՛տ, այստեղ մի քիչ սպասիր,
Որ ես նրա մասին կասկածս ստուգեմ.
Հետո որքան կկամենաս՝ շտապիր»։

85 Կանգնեց վարպետս. և այն հոգուն այնժամ ես,
Որը դեռ ինձ նզովում էր, ասացի.
«Ո՞վ ես դու, որ նախատում ես ինձ այդպես»։

88 «Իսկ դու ո՞վ ես, որ գլուխները մերոնց
Կոխկրտում ես Անտենորում,— ասաց նա,—
Ողջ լինեիր, մեզ չէի՞ր տա ծանրը խոց»։

91 «Այո ողջ եմ,— տվի նրան պատասխան,—
Եվ եթե դու երկրում ուզում ես հիշվել,
Քեզ կհիշեմ, երբ ավարտեմ այս ճամփան»։

94 Եվ նա ասաց. «Միշտ հակառակն եմ ուզում.
Շուտ հեռացի՛ր և գլուխը մի՛ տանիր.
Դու չգիտես շողոքորթել այս մարզում»։

97 Ես բռնեցի այնժամ նրա ծոծրակից
Եվ ասացի. «Պետք է անունդ ինձ ասես,
Թե ոչ մազերդ ես կպոկեմ քո գանգից»։

100 Եվ նա ասաց. «Բոլոր մազերս էլ պոկես,
Քեզ չեմ ասի, չեմ հայտնի, թե ես ով եմ,
Թեկուզ հազար անգամ գլխիս դու թակես»։

103 Մազերն արդեն իմ ձեռքի մեջ ոլորած,
Մի խոշոր փունջ քաշեցի ու պոկեցի.
Իսկ նա ցավից աղաղակեց ու ոռնաց։

106 Հանկարծ մեկը գոռաց. «Բոկկա՛, ի՞նչ ունես.
Ծնոտիդ ձայնն հերիք չէ՞, որ հիմա էլ
Կաղկանձում ես. արդ ո՞ր դևն է տանջում քեզ»։

109 Ես ասացի. «Լռի՛ր, ստո՛ր դավաճան,
Վերև երկրում պիտի պատմեմ, համոթ քեզ,
Ինչ որ գիտեմ ես քո մասին իրական»:

112 «Գնա՛, պատմի՛ր,— ասաց,— ինչ որ ուզում ես.
Բայց պատմիր և մեղավորի մասին այն,
Որ շտապեց իմ անունը հայտնել քեզ:

115 Ֆրանսացոց փողն է քավում այստեղ նա,
Ասա՝ տեսա Դուերային ես այնտեղ,
Ուր տանջվում են դավաճաններն անխնա:

118 Եթե հարցնեն՝ այնտեղ ով կա տակավին,
Անավասիկ քո կողքին է Բեկկերիան,
Որի վիզը ֆլորենտացիք կտրեցին:

121 Քիչ հեռու են Գանելլոնը և Զանգի
Սոլդանիերին, Տեբալդելլո Զամբրազին.
Սա վաճառեց իր Ֆայենցան հայրենի»:

124 Արդեն նրան թողել էինք ու անցել,
Երբ ես տեսա երկու հոգի սառցասույզ,
Որից մեկը մյուսին գլխարկ էր դարձել:

127 Եվ ինչպես որ սովածը հաց է կծում,
Այսպես մեկը մյուսին կրծում էր այնտեղ,
Ուր ուղեղը ծոծրակին է հարակցում:

130 Եվ կամ ինչպես Տիդեոսը վշտահար
Կրծեց գանգը Մենալիպի թեբեցի,
Այսպես մեկը մյուսի գանգն էր կրծում հար:

133 «Դո՛ւ, որ այդպես գազանային նշանով
Դրա վրա քո ոխն ու մաղձն ես թափում,
Ասա՛ պատճառն,— ասացի ես,— պայմանով,

136 Որ եթե դու իրավամբ ես կկծում,
Ճանաչելով, թե ով ես դու և ով նա,
Քեզ աշխարհում կանեմ արդար հատուցում,

139 Քանի լեզուս անկապտելի կմնա»:

ԵՐԳ ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ

Նա բարձրացրեց բերանն ահեղ ճարակից,
Ապա սրբեց մազերովը այն գլխի,
Որ կրծել էր արդեն տակավ ծոծրակից:

4 Հետո սկսեց. «Ուզում ես, որ վերապրեմ
Ծանրը վիշտը, որի հուշն իսկ դժնդակ
Ճնշում է ինձ, ուր մնաց որ այն պատմեմ:

7 Բայց խոսքերդս եթե պետք է նախատեն
Դավաճանին, որին կրծում եմ այստեղ,
Ես կպատմեմ ու կարտասվեմ նույն ատեն:

10 Ես չգիտեմ, թե ով ես դու և ինչպես
Եկար այստեղ, բայց, դատելով քո լեզվից,
Դու անկասկած ֆլորենտացի կլինես:

13 Արդ իմացիր, որ Ուգոլին կոմսն եմ ես,
Իսկ սա՝ ավագ եպիսկոպոս Ռուջջերն է.
Հիմա կասեմ, թե ինչու ենք կիպ այսպես:

16 Թե ես ինչպես սադրանքներով նրա չար
Կալանվեցի և հուսկ հետո մահացա,
Դա հայտնի է և հարկ չկա ասել ճառ:

19 Բայց այն, ինչ որ դու իմացած չես լինի,
Այն, թե ինչպես մահը եղավ ահավոր,
Ես կպատմեմ, որ չմնա դա գաղտնի:

22 Նեղ բացվածքի միջով բերդի խավարչտին,
Որ այն օրից Սովի Բերդ է հորջորջվել,
Եվ ուր շատեր կբանտարկվեն տակավին,

25 Տեսել էի շատ լուսինների արդեն վառ,
Երբ ես տեսա չարագուշակ մի երազ,
Որ գալիքի քողը բացավ ինձ համար:

28 Երազիս մեջ սա շների հետ որսկան
Հալածում էր գայլին ու իր ձագերին
Դեպի լեռն այն, որ կանգնած է անսասան

31 Իմ Պիզայի ու Լուկկայի միջև դիք.
Այդ ոնմակում վազում էին առջևից
Գուալանդիք, Լաֆրանկիք ու Սիսմոնդիք:

34 Հայր ու որդիք երկար վազքից հոգնեցին:
Պառականները ետևներից հասնելով
Ժանիքները նրանց կողը խրեցին:

37 Երբ զարթնեցի առավոտյան մոտերքին,
Ես լսեցի, որ որդիքս քնի մեջ
Ճչում էին ու հաց հայցում լալագին:

40 Շատ անգութ ես, եթե հանգիստ լսում ես
Նախաբանն այս սրտակեղեք պատմության,
Թե չես հուզվում, ապա ի՞նչ է հուզում քեզ:

43 Զարթնել էին արդեն և մոտ էր ժամն այն,
Երբ բանտապանն ուտելիք էր բերում մեզ.
Մենք բոլորս դողում էինք նույն ժամայն:

46 Եվ ես հանկարծ լսեցի, որ մեր ներքին
Մեխում էին դուռը բերդի ահավոր.
Լուռ նայեցի այնժամ որդվոցս դեմքին:

49 Ես, քարացած, չէի լալիս, իսկ նրանք
Լալիս էին: Հուսկ Անսելմիկս ինձ ասաց.
«Հա՛յր, ինչո՞ւ ես դու ինձ նայում այդ տեսակ»:

52 Բայց չլացի, պատասխան էլ չտվի,
Այն օրն ամբողջ ու գիշերը վերահաս,
Մինչև հաջորդ օրը ծագումն արևի։

55 Հենց որ լույսի թույլ ու աղոտ մի ճաճանչ
Ներս թափանցեց զնդանի մեջ չարաշուք,
Չորս դեմքի մեջ տեսա պատկերս հուզատանջ։

58 Ես ձեռքերըս խածի ցավից անմեկին.
Կարծելով որ քաղցից էի այդ անում,
Նրանք չորսով ընդոստ ոտքի կանգնեցին

61 Ու ասացին. «Հա՛յր, ծանրը չէ մեզ համար,
Եթե ուտես մեզ, որդվոցդ. դու տվիր,
Դու էլ վերցրու մեր մարմինները այս թշվառ»։

64 Հանդարտվեցի, որ ավելի չհուզվեն։
Լուռ մնացինք այն օրն ու օրն հետևյալ։
Ահ, ինչո՞ւ մեզ կույ չտվիր, հող ժանտկեն։

67 Այնուհետև, երբ չորրորդ օրը հասավ,
Գադդոս ընկավ ոտքերիս տակ, հոծելով.
«Հա՛յր իմ, օգնի՛ր» և տեղնուտեղ մահացավ։

70 Եվ ես, ինչպես դու ինձ տեսնում ես հիմա,
Տեսա ինչպես հաջորդ երկու օրերում
Մյուս երեքը մեկ-մեկ ընկան սովամահ։

73 Ես, արդեն կույր, շոշափեցի բոլորին
Եվ երկու օր աղիողորմ կանչեցի.
Ապա քաղցը հաղթեց վշտին իմ խորին»։

76 Երբ նա լռեց, կատաղությամբ մի անմար
Վերսկսեց կրծել կառափն ապիրատ,
Որը կարծր էր, ինչպես ոսկրը շան համար։

79 Ա՛յ դու Պիզա, դու նախատինք մշտապես
Այն գեղեցիկ երկրի, ուր si են հնչում,
Եվ եթե այլք դանդաղում են պատժել քեզ,

82 Օն թող շարժվեն Կապրարան ու Գորգոնան
Եվ Առնոյի գետաբերանը փակեն,
Որ խեղդվեն բնակիչներդ անպիտան:

85 Չի Ուգոլինն եթե անուն էր հանել
Դավաճանի՝ ամրոցներիդ հանձնումով,
Դու պետք չէիր նրա որդվոց սպանել:

88 Անմեղ էին ու դեռատի հասակում
Ուգուչչոնն ու Բրիգադան, նոր Թեբե,
Եվ այն երկուսն, որ հիշվեցին այս երգում:

91 Մենք շարժվելով եկանք անդ, ուր լիճը սառ
Ներկալել էր մի այլ խմբի մեղապարտ,
Որոնց դեմքը ետ էր թեքված, ոչ թե վար:

94 Անդ արտասուքն իսկ արտասվել չէր թողնում.
Եվ աչքի մեջ հանդիպելով արգելքի՝
Ետ էր դառնում ու տանջանքը սաստկացնում:

97 Չի առաջին արտասուքները տխուր
Լցվում էին շիթ-շիթ աչքի խոռոչում
Եվ քարանում, ինչպես բյուրեղ ամրակուռ:

100 Թեև դեմքս ցրտից դաժան ու դժնի
Կորցրել էր զգայությունն իր բոլոր,
Ինչպես լիներ կոշտացած մասը մարմնի,

103 Բայց ես, կարծես, ինչ-որ քամի զգացի,
Ուստի հարցրի. «Ի՞նչ քամի է սա, վարպե՛տ.
Չէ՞ որ այստեղ չկա ոչ մի գոլորշի»:

106 Եվ նա ասաց. «Շուտով այնտեղ կլինես,
Ուր գտնելով պատասխանը քո հարցի,
Դու կիմանաս քամու պատճառն հայտնապես»:

109 Սառույցի մեջ սուզված մեկը գոչեց մեզ.
«Ո՛վ հոգիներ, որ եղել եք այնքան չար,
Որ տանջանքի վերջին վայրն են ղրկել ձեզ,

112 Այս կարծրը քողն հանեցեք իմ աչքերից,
Որպեսզի ես պոռթկամ վիշտը իմ սրտի,
Նախքան սառելն իմ արցունքները նորից»:

115 Եվ ես նրան. «Ես քո աչքը կբանամ,
Եթե ասես ով ես. եթե դա չանեմ,
Թող այս սառցի խոր հատակը ես գնամ»:

118 Պատասխանեց. «Ես Ալբերիգ եղբայրն եմ,
Վատ այգիից միրգ բերողը, և այստեղ
Ստանում եմ արժավ թուզի փոխարեն»:

121 «Ի՛նչ,— ասացի,— դու մահացած չե՞ս իրավ»:
Եվ նա ասաց. «Դեռ ոչ, և ես չգիտեմ,
Թե աշխարհում իմ մարմինը ինչ եղավ:

124 Այս Պտղոմյանն այն հատկությամբ է օժտված,
Որ շատ հաճախ հոգին ընկնում է այստեղ,
Ատրոպոսը նրան կյանքից չհազած:

127 Բայց որպեսզի դու ավելի շտապես
Ինձ ազատել արցունքներից քարացած,
Իմացիր, որ հենց որ մեկը, ինչպես ես,

130 Դավ է գործում, իսկույն մարմնի մեջ նրա
Դև է մտնում և այն վարում հոգու տեղ,
Մինչև նրա ժամանակը լրանա:

133 Նա ընկնում է այս ջրհորի խորքը խոր:
Գուցե երկրում կա մարմինը դեռ նրա,
Ով իմ ետև սրսփում է ակնկոր:

136 Դու կիմանաս նրան, եթե նորեկ ես.
Նա կոչվում է Բրանկա դ՝ Օրիա. վաղուց է,
Որ նա փակված, սառցապատված է այսպես»:

139 Ես ասացի. «Կարծեմ սխալ ես հայտնում,
Բրանկա դ՝ Օրիան ողջ առողջ է տակավին
Եվ ուտում է, խմում, քնում ու հագնում»:

142 Եվ նա ասաց, «Այն խոր ձորի մեջ հավերժ,
Ուր եռում է կպրաձյութը մածուցիկ,
Միքել Զանկեն դեռ չէր ընկել գահավեժ,

145 Երբ նրա մեջ մի դև մտավ հոգու տեղ,
Ինչպես նրա մի ազգակցի մեջ մոտիկ,
Որի հետ նա դավաճանեց համատեղ:

148 Բայց դու հիմա ձեռքդ արդեն այստեղ բեր
Ու բաց աչքերս»: Ես չբացի և իմ այդ
Բրտությունը նրա հանդեպ տեղին էր:

151 Օ՛ գենուացիք, դուք, որ զուրկ եք ամոթից
Եվ վարակված ամեն տեսակ ախտերով,
Ինչո՞ւ համար չեք չքանում աշխարհից:

154 Զի Ռոմանյո չար ոգու հետ մեղսամած
Հանդիպեցի, գտա ձեզնից ես մեկին,
Որի հոգին Կոկիտի մեջ է սուզված,

157 Իսկ մարմինը երկրում ողջ է տակավին:

ԵՐԳ ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ

«Դրոշք յառաջ գան թագաւորին Դժոխոց,—
Ասաց վարպետս:— Ահա նայիր, նա արդեն
Նկատվում է այս մթան մեջ թանձրահոծ»:

4 Ինչպես հեռվից հողմաղացն է երևում,
Երբ իջնում է աղջամուղջը գիշերվա,
Կամ երբ երկրում մառախուղ է բարձրանում,

7 Այսպես այստեղ ինձ երևաց նման բան:
Ես կուչ եկա առաջնորդիս ետևում,
Պաշտպանվելու համար հողմից անխափան:

10 Եկանք այնտեղ-ես այդ աճով եմ երգում—
Ուր մեղավորք ծածկված էին սառցի տակ
Եվ երևում, ինչպես շյուղը ապակում։

13 Ոմանք պառկած էին, ոմանք ուղղակաց
Գլուխն ի վեր կամ գլխիվայր դրությամբ,
Իսկ ոմանք էլ աղեղի պես կորացած։

16 Մենք լռությամբ առաջ էինք ընթացել,
Եվ վարպետը, կամենալով ինձ ցույց տալ
Այն էակին, որ վեհ տեսք էր ունեցել,

19 Առջևիցը մեկ կողմ քաշվեց, ասելով.
«Ահա Դևպետն, ահավասիկ տեղը այն,
Ուր հարկ է քեզ զոտեպնդես կորովով»։

22 Թե ես ինչքան սահմռկեցի, ընթերցո՛ղ,
Մի՛ հարցնիր և մի՛ պահանջիր գրանցել,
Զի բառերով արտահայտել չեմ կարող։

25 Ինձ զգացի ոչ մեռած, ոչ կենդանի.
Ինքդդ դատիր, եթե կարող ես դատել,
Թե ինչ եղա առանց մահի ու կյանքի։

28 Տիրակալը արքայության տանջալի
Կուրծքը կիսով դուրս էր հանել սառույցից։
Ես կչափվեմ հսկայի հետ ավելի,

31 Քան թե հսկան բազուկների հետ նրա.
Թե նա ամբողջ մարմնով ինչքան կլիներ,
Բազուկներից միայն հաշիվ դու արա։

34 Քանի որ նա Արարչի դեմ ծառացավ,
Ապա նման մեղքի համար ծանրագույն
Ամեն չարյաց սկզբնաղբյուրը դարձավ։

37 Ի զարմանքով համակվեցի ես իսկույն,
Երբոր տեսա նրա գլխին երեք դեմք.
Մեկն առջևն էր, որը ուներ կարմիր գույն.

40 Մյուսները, որ սրան էին միանում,
Ցցվել էին ուսի վրա աջ ու ձախ
Եվ երեքն էլ կցվել գլխի վերևում:

43 Աջ կողմինը դեղնավուն էր, իսկ մյուսի,
Ձախի գույնը գույնին նման էր նրանց,
Որ ապրում են վերին հովտում Նեղոսի:

46 Զույգ մեծ թևեր ուներ ամեն դեմքի տակ,
Ինչքան հարկ է հսկա թռչունն ունենա.
Ես չեմ տեսել առագաստներ այդ տեսակ:

49 Առանց փետրի էին, նման չղջիկի.
Նա շարժում էր այդ թևերն ու դրանից
Ծագում էին ցուրտ քամիներ եռակի,

52 Որոնք ամբողջ Կոկիտն էին սառեցնում:
Վեց աչքերով արտասվում էր և երեք
Երախներից արյուն, արցունք հոսեցնում:

55 Ամեն երախ ժանիքներով տրորում
Ու ձրձում էր մի մեղավոր, թակի պես,
Եվ այսպես Դևն երեք հոգու էր տանջում:

58 Առջևինին այնքան ծանրը չէր թվում
Խածվելն ինչքան ճանկռտվելը ճանկերով,
Որոնցով հար նրա կաշին էր քերթվում:

61 «Առջևինը, որ տանջվում է անխնա,—
Ասաց վարպետս,— սկարիովտացի Հուդան է.
Գլխով ներսն է, իսկ ոտքերով դուրսն է նա:

64 Մյուս երկուսից, որ կախված են գլխիվայր,
Նա, որ կախված է սև ռեխից, Բրուտոսն է.
Տես ինչպես է նա գալարվում ոգեվար:

67 Մյուսն է Կասիոն, որ հաղթանդամ է այնքան:
Սակայն արդեն մայրամուտ է, է՛լ մեկնենք,
Վասնզի մենք արդեն տեսանք ամեն բան»:

70 Ուզածին պես փաթաթվեցի իր վզին:
Պահն ու տեղը վարպետս հարմար համարեց,
Եվ երբ Դևի թևերը լայն բացվեցին,

73 Ամուր կառչեց նրա մարմնից թավարծի
Եվ սկսեց ներքև իջնել փունջ առ փունջ
Միջով բրդոտ կրծքի ու հաստ սառույցի:

76 Երբ իջնելով արդեն հասանք մենք այնտեղ,
Որտեղ կողը միակցվում է կոնքին,
Առաջնորդը, ճիգ ու ջանքով մի զորեղ,

79 Գլուխն ի վայր շրջվեց, ես էլ նրա հետ,
Եվ սկսեց վեր բարձրանալ բրչերով,
Ու թվաց, թե նորից դառնում էինք ետ:

82 «Լավ բոնիր ինձ,— ասաց վարպետս հևասպառ,—
Հարկ է, որ մենք այսօրինակ սանդուղքով
Դուրս գանք վայրից չարիքների անհամար»:

85 Ապա ժայռի մի բացվածքից դուրս ելավ
Եվ ինձ օգնեց նրա ծայրին նստելու,
Որից հետո զգուշությամբ մոտս եկավ:

88 Կարծեցի, թե Դևը դեռ այն դիրքով էր,
Ինչպես նրան տեսել էի քիչ առաջ,
Բայց երևաց սրունքները ցցված վեր:

91 Թե ես ինչքան շփոթություն ունեցա,
Թող մտածեն ռամկամիտները, որոնք
Չեն հասկանում, թե ինչ տեղով ես անցա:

94 «Ոտքի կանգնի՛ր,— առաջնորդը ինձ ասաց,—
Ճանապարհը երկար է ու դժնդակ,
Եվ արևն էլ վաղորդայնին է հասած»:

97 Պալատական մի սրահում չէինք մենք,
Այլ բնական մի փապարում ընդերկրյա,
Որի գետինն անհարթ էր ու զառիթեք,

100 «Վարպե՛տ, քանի դուրս չենք եկել անդունդից,—
Ասացի ես, հենց որ ոտքի կանգնեցի,—
Ինձ բացատրիր, որ զերծ մնամ պատրանքից.

103 Ո՞ւր է սառույցն: Ինչո՞ւ է սա շուռ եկել:
Արևն ինչպե՞ս ժամանակում այնքան կարճ
Այսքան երկար մի ճանապարհ է անցել»:

106 Եվ նա ասաց. «Դու կարծում ես, որ մենք դեռ
Այն կողմում ենք կենտրոնից, ուր կառչեցի
Բրչից Դևի, որ աշխարհն է ծակում մեր:

109 Անդին էինք ցածրանալիս մենք միայն.
Բայց շրջադարձ կատարեցինք այն կետում,
Ուր ձգվում են ծանրությունները համայն:

112 Արդ մենք տակն ենք մյուս երկնային կամարի,
Հակադիրը այն կամարի, որ ծածկում,
Պարփակում է մեր ցամաքը վիթխարի,

115 Որի մեջտեղ ծնվեց Մարդը սրբազան:
Մենք կանգնել ենք մի տարածքում փոքրածիր,
Որ կազմում է Զուդեկկայի հակոտնյան:

118 Աստ վաղ այգ է, անդ երեկո է երբոր.
Իսկ այդ Դևը, որ մեզ սանդուղք ծառայեց,
Միշտ խրված է անդունդի մեջ խորափոր:

121 Նա հենց այստեղ գահավիժեց երկնքից.
Իսկ երկիրը, որ առաջ դուրս էր ցցված,
Ծովով ծածկվեց, ահաբեկված նրանից,

124 Եվ քիչ-քիչ մեր կիսագնդի տակ քաշվեց.
Ու խույս տալու համար նրա հպումից՝
Բարձրացավ ու քավության լեռը կազմեց»:

127 Այնտեղ տեղ կա, որ հեռու է Դևպետից
Այնքան, որքան տարածվում է փապարն այն.
Դա հայտնի է մի գետակի սահանքից,

130 Որ հոսում է ստորակա հորանցքով,
Որը նա է բացել տակավ առ տակավ
Իր գալարուն ու վայրընթաց հոսանքով:

133 Արդ հասնելու համար աշխարհը պայծառ,
Առաջնորդքս ու ես մտանք մենք այնտեղ,
Ու բարձրացանք այդ անցքն ի վեր անդադար,

136 Նա առջևից, իսկ ես նրա ետևից,
Մինչև որ ես տեսա չքնաղ մարմինները
Ժայռամիջյան մի բոլորշի բացվածքից.

139 Եվ այդտեղից նորից տեսանք մենք աստղեր:

ՔԱՎԱՐԱՆ

ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

Ա
ոդ, չվելու համար հանդարտ ջրերով՝
Առագաստ է պարզում նավակն հանճարիս,
Որ ետ թողեց մի ծով այնքան ալեխռով։

4 Այժմ ես երկրորդ տեսլարանն եմ երգելու,
Ուր մարդկային հոգիներն են մաքրվում
Եվ արժանի դառնում երկինք ելնելու։

7 Աստ թող հառնե քերթողությունը մեռյալ,
Ո՛վ սրբազան ու տիրական Մուսաներ.
Թող Կալլիոպեն հաճի փոքր-ինչ վեր կենալ

10 Ուղեկցելու երգիս ձայնով սրտահույզ,
Որի հարվածն հեգ Անծեղներն զգացին,
Չունենալով ներողության ոչ մի հույս։

13 Արևելյան շափյուղայի գույնն աղվոր,
Որ անապակ օդի մեջ էր տարածվել
Մինչև պայծառ հորիզոնը հեռավոր,

16 Նորից սկսեց իմ աչքերը հմայել,
Հենց որ ելա մոայլամած օդից դուրս,
Որ իմ հոգին անդոհով էր համակել։

19 Սեր ներշնչող մոլորակը գեղապանծ
Ժպտացնում էր արևելքը բովանդակ,
Սքողելով ընթացակից իր Ձկանց։

22 Ես դարձա աջ մյուս բևեռին նայելու.
Այնտեղ տեսա լուսապայծառ չորս աստղեր,
Որ տեսան լոկ նախամարդիկը հլու։

25 Նրանց ցոլքից երկինքն հրճվում էր կարծես։
Ո՛վ որբացած հյուսիսային կիսագունդ,
Դու առհավետ նրանց տեսքից զրկված ես։

28 Երբ ես նրանց դադարեցի նայելուց
Եվ ուղղվեցի դեպի բևեռն հակադիր,
Որտեղ Սայլը անհետացել էր վաղուց,

31 Իմ մոտ տեսա մի ծերունի մենավոր,
Տեսքից այնքան ակնածության արժանի,
Որքան որդին պարտ է տածել հանդեպ հոր։

34 Նրա մորուքն երկար էր ու ալեհեր,
Ինչպես էին գլխի մազերը, որոնք
Թափվել էին կրծքին հյուսքով զուգահեռ։

37 Ճառագայթները չորս սրբազան աստղերի
Իր դեմքն այնքան լույսով էին ողողել,
Որ նա կարծես ցոլացումն էր արևի։

40 «Այդ ո՞վ եք դուք, որ գետն ի վեր ելնելով,
Խույս եք տվել հավերժական զնդանից,—
Հարցրեց նա մեզ թավ մորուքը շարժելով։—

43 Ո՞վ բերեց ձեզ, ո՞վ եղավ ձեր լուսատուն,
Որ դուրս ելնեք խորխորատից Դժոխքի,
Ուր տիրում է հավետ խավարը անհուն։

46 Ի՞նչ, փոխվե՞լ են օրենքները գեհենի,
Կամ երկնքում նոր որոշո՞ւմ է հանված,
Որ եկել եք այստեղ առանց հրամանի»:

49 Առաջնորդը այնժամ բռնեց ինձ ձեռքով,
Եվ ձայնով ու ակնարկներով հասկացրեց,
Որ ծնրադրեմ նրա առջև հարգանքով:

52 Ապա նրան. «Ես չեմ եկել ինքնակամ:
Մի կին իջավ երկնքից ու ինձ խնդրեց,
Որ ես սրան իմ օգնությունը ցույց տամ:

55 Բայց եթե դու կամենում ես ստանալ
Ավելի լայն տեղեկություն մեր մասին,
Ես չեմ կարող քո խնդիրքը գլանալ:

58 Սա չի տեսել դեռ իր գիշերը վերջին,
Բայց խոլաբար այնքան նրան մոտեցավ,
Որ քիչ մնաց պիտի կորչեր գլխովին:

61 Ինչպես ասի, ուղարկվեցի նրա մոտ,
Ազատելու համար նրան կորստից,
Դրա համար հարկ էր ճամփան այն ցավոտ:

64 Ես ցույց տվի նրան մարդկանց ծանրամեղ.
Մտադիր եմ հիմա ցույց տալ այն հոգվոց,
Որ քավում են իշխանությանդ տակ այստեղ:

67 Ինչպես բերի՝ ասելն երկար կտևի.
Բերի նրան քեզ տեսնելու, լսելու՝
Աջակցությամբ մի զորության վերևի:

70 Նրա գալը դու ընդունիր լավակամ.
Նա ձգտում է ազատության թանկագին,
Որի համար մարդ զոհում է կյանքն անգամ:

73 Դու այդ գիտես, քանզի մահը հաճույքով
Ընդունեցիր Ուտիկեում, ուր մի օր
Մարմինդ հատնած կշողշողա ողջ փառքով:

76 Մենք չենք խախտել օրենքները անվախճան.
Չի նա ողջ է, իսկ ես ազատ Մինոսից,
Պարունակս էլ այն է, որտեղ քո Մարկիան,

79 Ազնիվ հոգի, կարծես քեզ է փնտրում դեռ.
Հանուն սիրո, որ նա ունի քո հանդեպ,
Բարեհաճիր բավարարել իրենը մեր:

82 Թույլ տուր անցնենք ղորտներով քո յոթնյակ.
Իմ երախտիքս առ քեզ նրան կհայտնեմ,
Որի համար դու քեզ կզգաս գոհունակ:

85 Եվ նա ասաց. «Երկրում էի երբ ցածի,
Մարկիան այնպես իմ աչքի լույսը դարձավ,
Որ ես նրան ամեն ինչով հոգացի:

88 Արդ քանի որ նա այն կողմն է ժանտ գետից,
Էլ չի կարող ինձ հուզել այն օրենքով,
Որ հաստատվեց, երբ ես ելա այնտեղից:

91 Բայց եթե քեզ մի սուրբ կին է ուղարկել,
Էլ հարկ չկա շոյող խոսքեր անելու,
Բավ է, որ դու նրա հայցով ես եկել:

94 Արդ գնա և գոտևորիր դու սրան
Մի կնյունով և երեսն էլ լավ լվա,
Որ չմնա կեղտի ոչ մի հետք վրան:

97 Վայել չէ, որ նա աչքերով բլշակնած
Ներկայանա պաշտոնեին առաջին,
Որը մեկն է էակներից երկնակյաց:

100 Այս կոզյակը իր ափերին ստորին,
Ուր կոծում են ալիքները օվկիանի,
Ունի շամբեր հողի վրա սիկային:

103 Սաղարթավոր կամ կարծրակուռ ոչ մի բույս
Այդտեղ աճել և ուռճանալ չի կարող,
Չի չի թեքվի ալիքներից հողմահույզ:

106 Դուք այստեղից անկարող եք ետ դառնալ.
Շուտով ծագող արևը ձեզ ցույց կտա,
Թե ինչ ճամփով պետք է լեռը բարձրանալ»։

109 Այս ասելով անհետացավ ծերունին։
Ես ելնելով առաջնորդիս մոտեցա
Ու հառեցի նրան հայացքս լոին։

112 Նա ինձ ասաց. «Հիմա դու ինձ հետևիր.
Գնանք այն կողմ, զի հարթավայրն այնտեղից
Իջնում է դեպ ծովի ափը ցածրադիր»։

115 Վաղորդյան ժամն արդ ընկրկում էր ետ-ետ
Արշալույսի առջև բացվող, և հեռվից
Նկատեցի ծովածփանքը վետ-վետ։

118 Գնում էինք հարթավայրով մենավոր,
Ինչպես նա, ով կորցրած ճամփան գտնելով՝
Հրճվում է և իրեն զգում բախտավոր։

121 Գալով այնտեղ, որտեղ շաղը մանրամաղ
Պայքարում է շողերի հետ արևի,
Եվ որտեղ նա գոլորշանում է դանդաղ,

124 Վարպետը իր երկու ձեռքերը բացած՝
Մեղմ տարածեց խոտի վրա դալարուն.
Ես, որ նրա դիտումն էի հասկացած,

127 Մոտեցրի նրան այտերս արտոսրոտ.
Նա երևան հանեց գույնն իմ բնական,
Որ ծածկել էր Դժոխքը մութ ու մրոտ։

130 Ապա մեկտեղ եկանք ափը ամայի,
Ուր ոչ ոք չի կարողացել նավարկել
Ու ետ դառնալ ալիքներով ամեհի։

133 Այստեղ նա ինձ գոտևորեց անդստին:
Բայց ո՛վ զարմանք, այն խոնարհ բույսը, որ նա
Քաղեց-քանցեց, հենց նույն տեղում վերստին

136 Ընդհուպ բուսավ մի ուրիշ տունկ եղեգնյա:

ԵՐԳ ԵՐԿՐՈՐԴ

Արևն արդեն հորիզոնի վրա էր,
Որի ծիրը միջօրեական ծածկում է
Իր զենիթով Երուսաղեմն երկրի մեր.

4 Իսկ Գիշերը, պտտվելով նրա դեմ,
Դուրս էր գալիս ընդհատակից Գանգեսի,
Ուղեկցությամբ իր Կշեռքի երկնաճեմ.

7 Որով երկու այտերը վառ ու ճերմակ
Արշալույսի վարդամատն ու գեղեցիկ՝
Ժամանակից դարձել էին դեղնորակ:

10 Մենք տակավին կանգնած էինք ծովափում,
Ինչպես նա, ով քառուղիում կանգ առած,
Մտքով գնում, մարմնով անշարժ է մնում:

13 Եվ ահա ինձ երևաց լույս մի բոսոր,
Ինչպես Հրատն այգաբացից քիչ առաջ
Երևում է արևմուտքում հեռավոր,

16 Շրջապատված գոլորշիքով խտացած.
Եվ նա ծովով այնպես արագ էր չվում,
Որ նման բան չէի տեսել սրընթաց:

19 Երբ նրանից մի պահ աչքերս հեռացրի,
Որպեսզի իմ առաջնորդին հարցնեմ,
Լույսն այն դարձավ ավելի վառ ու մեծդի:

22 Եվ ապա այն լույսի երկու կողմերում
Երևացին ինչ-որ բաներ սպիտակ,
Մի ճերմակ բան էլ երևաց ներքևում:

25 Առաջնորդը դեռ չէր հասնում ոչ մի ձայն,
Երբ թև դարձան սպիտակներն առաջին:
Իմանալով թե նավավարն ով էր այն,

28 Նա ինձ ասաց. «Ծնրադրիր և աղոթիր.
Ահա Աստծու հրեշտակը, հետայսու
Դու կտեսնես այդ պաշտոնյայք տյառնընտիր:

31 Տե՛ս, ինչպես նա ավելորդ է համարում
Առագաստը և թին-գյուտերը մարդկանց,
Եվ մակույկը իր թևերով է վարում:

34 Թևերն ինչպես կարկառել է երկինք, տե՛ս,
Օդն հուզելով փետուրներով այնպիսի,
Որ չեն թափվում մահկանացու փետրի պես»:

37 Աստվածային թռչունն ինչքան մոտեցավ,
Այնքան վառ ու լուսապայծառ երևաց.
Եվ դրանից աչքս սաստիկ շլացավ:

40 Նա փույթ ընդ փույթ եկավ-հասավ ափեզրին
Մի մակույկով այնպես սահուն ու թեթև,
Որ հազիվ էր կարծես դիպչում ջրերին:

43 Անդ խելին էր կանգնած նավորդն երկնային,
Որի դեմքին երանության դրոշմ կար.
Շատ հոգիներ իր մակույկի մեջ կային:

46 **«Յեգիպտոսէ Իսրայելի յելանելն»**
Սաղմոսն էին միաբերան օրհներգում
Հոգիներն այն, որ նոր էին ժամանել:

49 Հրեշտակն օրհնեց նրանց խաչի նշանով,
Եվ բոլորը ափի վրա նետվեցին.
Իսկ նա նորից վերադարձավ շտապով:

52 Հոգիների խումբը տեղին ծանոթ չէր,
Եվ շվարած շուրջն էր նայում ուշադիր,
Նման նրան, ով տեսնում է նոր բաներ:

55 Արևն արդեն սլաքներով իր սուրսայր
Այծեղջյուրին հալածել էր երկնքից
Եվ ամենուր ափոել շողերն հրազայր,

58 Երբ ափ ելնող այն հոգիները նորեկ
Հայացքն իրենց մեզ ուղղելով ասացին.
«Եթե գիտեք՝ լեռան ճամփան ցույց տվեք»:

61 Վիրգիլիոսը պատասխանեց. «Անպայման
Դուք կարծում եք, թե մենք ծանոթ ենք տեղին.
Սակայն մենք էլ նոր ենք եկել ձեզ նման:

64 Մենք ձեզանից մի քիչ առաջ ասա՛ ենք,
Բայց այնպիսի տաժանելի մի ճամփով,
Որ վերելքը մեզ պիտ թվա զբոսանք»:

67 Հոգիները, երբ իմ շնչից իմացան,
Որ տակավին կենդանի մարդ էի ես,
Այլայլվեցին և արմացան-զարմացան:

70 Եվ ինչպես երբ գալիս է մի սուրհանդակ,
Մարդիկ մոտն են վազում լուրեր լսելու,
Փույթ չանելով իրար տալու ոտնատակ,

73 Այսպես բոլոր հոգիներն այն բախտավոր
Մոտը եկան և նայեցին ինձ ուշով,
Մոռնալով, որ քավելու են պարտավոր:

76 Նրանցից մեկն, առաջ գալով, ինձ գրկեց,
Բայց այնպիսի գորովով ու կարոտով,
Որ իմ հերթին նույնը արի ես անկեղծ:

79 Օ՜, ստվերներ անձնութական և ունայն:
Ես երեք հեղ նրան գրկել փորձեցի,
Բայց երեք հեղ գրկեցի կուրծքս միայն:

82 Ես չափազանց ապշել էի զարմանքից:
Բայց ստվերը ետ ընկրկեց ժպտալով,
Եվ ես առաջ եկա նրա ետևից:

85 Նա մեղմ ասաց, որ հետևելս իզուր էր:
Այնժամ նրան ճանաչեցի իր ձայնից
Եվ խնդրեցի, որ կանգներ ու զրուցեր:

88 Պատասխանեց. «Ինչպես մարմնով մահացու
Քեզ սիրեցի, սիրում եմ և անմարմին.
Ես կկանգնեմ, սակայն ո՞ւր ես գնում դու»:

91 «Իմ Կազելլա, ես այս ճամփան եմ անցնում,
Որ վերստին այստեղ դառնամ,— ասացի,—
Բայց դու ինչո՞ւ այսքան ուշ ես ժամանում»:

94 Եվ նա ասաց. «Նախատինք չէ ինձ համար,
Որ նավավարն հոգիներին փոխադրող
Ինձ իմ տեղում սպասեցրեց ընդերկար.

97 Չի նա արդար մի կամքի է ենթարկվում:
Հիմա արդեն երեք ամսից ի վեր նա
Ցանկացողին նավն է առնում ու տանում:

100 Ես, որ կանգնած էի ափին այն ծովի,
Որտ Տիբերի ջուրը աղի է դառնում,
Նրա մակույկն ընդունվեցի կամովի:

103 Արդ նա դեպի գետաբերանն է թռչում,
Քանզի այնտեղ հավաքվում են շարունակ
Նրանք, ովքեր դեպ Ախերոն չեն իջնում»:

106 Եվ ես. «Եթե նոր վճռով չեն զրկել քեզ
Հիշելու կամ կատարելու սիրերգերդ,
Որ ամոքում էին հոգիս վշտակեզ,

109 Մի քիչ հաճիր երգովդ հոգիս սփոփել,
Որ գալով աստ իր մարմնի հետ միասին՝
Այնքան շատ է տագնապել ու տառապել»:

112 «Սերը մտքումս ինձ հետ զրույց է անում»—
Սկսեց այնժամ երգել այնքան դաշնությամբ,
Որի ձայնը դեռ թրթռում է իմ սրտում:

115 Վարպետս ու ես և հոգիներն այն նորոգ
Լսում էինք երգը այնքան գոհությամբ,
Որ կարծես թե մենք չունեինք ուրիշ հոգ:

118 Մենք հմայված լսում էինք երգն այն դեռ,
Երբ երևաց պատկառելի ծերունին
Եվ կշտամբեց. «Այդ ի՞նչ է, ծո՛ւյլ հոգիներ:

121 Ի՞նչ անփույթ եք, այդ ինչո՞ւ եք դուք կանգնել.
Շտապեք լեռն՝ ազատվելու ձեր կեղտից,
Որ կարենաք աստվածությունը տեսնել»:

124 Ինչպես խմբված աղավնիներն հանդարտիկ,
Առանց իրենց սովորական աշխույժի,
Կտցոտում են վարսակ կամ այլ արմտիք,

127 Բայց եթե մի անազդու բան նկատեն,
Անմիջապես ճարակը բաց են թողնում
Եվ խուճապով խույս են տալիս դեսուդեն,

130 Այսպես տեսա, որ ջոկատը այն հոգվոց
Երգը թողեց և դեպի դարը փութաց,
Ինչպես մի մարդ շվարում ու մտակոծ.

133 Մեր մեկնումը չեղավ նվազ ճեպընթաց:

ԵՐԳ ԵՐՐՈՐԴ

Մինչ խուճապը նրանց մատնեց ի փախուստ
Հարթավայրով դեպ ստորոտը լեռան,
Ուր քավել է պարտադրված մեզ վերուստ,

4 Ես մոտեցա իմ ընկերոջ անձնվեր.
Առանց նրան ո՞ւր պիտի ես գնայի,
Ո՞վ պիտի ինձ առաջնորդեր լեռն ի վեր:

7 Ինձ թվաց, թե նա եղել էր խղճահար:
Օ՛ անարատ ու զգայուն խղճմտանք,
Ձնչին զանցանքն անգամ ցավ է քեզ համար:

10 Երբ Վիրգիլը դադարեցրեց շտապել
Ընթանալու համար հանդարտ քայլերով,
Իմ միտքը, որ ինքն իր մեջ էր ամփոփվել,

13 Ծրջանակն իր ուշադրությանն ընդլայնեց.
Եվ հայացքս ես ուղղեցի այն լեռան,
Որ բարձր է, քան ամեն այլ լեռ երկնաբերձ:

16 Լույսն արևի, որ շողում էր իմ ետև,
Դեմ էր առել անթափանցիկ իմ մարմնին
Եվ ստվերս երկարացրել իմ առջև:

19 Երբ տեսա, որ լոկ իմ առջևն էր մթնած,
Կողքիս դարձա բնազդաբար, ակամա,
Վախենալով, որ ես մենակ եմ թողված:

22 Առաջնորդս ինձ դառնալով այն ատեն,
Ասաց. «Ինչո՞ւ չես վստահում իմ վրա,
Կարծում ես, թե ես քեզ լքե՞լ եմ արդեն:

25 Հիմա արդեն իրիկնաժամ է այնտեղ,
Ուր թաղված է իմ մարմինը ստվերող,
Բրանդիզիում էր գտնվում նա մի հեղ:

28 Արդ, եթե ես առջևս ստվեր չեմ անում,
Մի՛ զարմանա ավելի քան այն բանից,
Որ երկինքներն իրար լույս չեն խափանում:

31 Լիազորը, որ մարմիններս մեր պես
Ընդունակ է դարձնում տանջանք կրելու,
Չի կամենում գործելակերպն հայտնել մեզ:

34 Խեղթ է նա, ով հույս ունի, որ միտքը մեր
Ի զորու է հասկանալու ամեն ինչ,
Որ անում է եռանձնյա Գոյը անմեռ:

37 Դուք, ո՛վ մարդիկ, գոհացեք լոկ արդյունքով,
Եթե ամեն ինչ պարզ լիներ ձեզ համար,
Կույս Մարիամը չէր ծնանի երկունքով:

40 Ձեր բաղձանքը զուր ունեցան և նրանք,
Որոնք եղան մտածողներ խորամիտ,
Իսկ արդ նրանց հավետ տրված է թախծանք:

43 Նրանց մեջ են Պլատոնն ու Արիստոտ
Եվ դեռ շատեր»: Նա ճակատը խոնարհեց,
Էլ չխոսեց ու մնաց լուռ, մտածկոտ:

46 Այսպես հասանք մենք ստորոտը լեռան.
Այստեղ գտանք լանջը այնքան զառիթափ,
Որ ուժասպառ կաներ մարդուն պնդերան:

49 Տուրբիա գյուղից մինչև բերդը Լերիչի
Ամենից սեպ զառիվերը սրա մոտ
Պիտի թվար սանդուղք հարմար ու լայնշի:

52 «Արդ ո՞վ գիտե՝ թե որ կողմից լեռն այս ձիգ
Նվազ սեպ է,— ասաց տերը կանգնելով,—
Որ կարենանք վեր բարձրանալ դյուրանցիկ»:

55 Մինչ յուրովի նա խորհում էր մտասթափ,
Թե ինչ ճամփով կարելի էր բարձրանալ,
Եվ մինչ նայում էի լեռան զառիթափ,

58 Մեր ձախ կողմում տեսա մի խումբ հոգիներ,
Որ շատ դանդաղ գալիս էին դեպի մեզ,
Կարծես թվում էին անշարժ, աներեր:

61 Ես ասացի. «Վարպե՛տ, նայի՛ր վեր ուղիղ.
Ահա սրանք որոշ խորհուրդ կտան մեզ,
Եթե դու չես գտնում ելքի մի ուղի»:

64 Նա նայեց ու պատասխանեց անվարան.
«Գնանք, որդի՛, դանդաղաշարժ հոգվոց մոտ,
Վստահ եղիր, մենք կիմանանք մեր ճամփան»:

67 Մենք մի հազար քայլից հետո դեռ այնքան
Հեռու էինք հոգիների այն խմբից,
Որքան հեռու կհասներ քարը նետկան,

70 Երբոր նրանք կպան ժայռին վերամբարձ
Եվ կանգնեցին միմյանց սեղմված, զերթ մարդիկ
Որ տեսնում են խիթալի բան մի հանկարծ:

73 «Օ՛ հոգիներ բարեբախտ ու ընտրովի,—
Դիմեց նրանց Վիրգիլիոսը,— հանուն այն
Խաղաղության, որին եք դուք ծարավի,

76 Ասացեք մեզ, թե ո՞ր կողմից կարող ենք
Հեշտ բարձրանալ այս լեռն ի վեր սեպաձև,
Այնպես որ մենք զուր ժամանակ չկորցնենք»:

79 Գառներն ինչպես դուրս են գալիս փարախից
Մեկ-մեկ, զույգ-զույգ, երեք-երեք, իրար կիպ,
Խոնարհելով դունչն ու աչքերը վախից,

82 Եվ առջևից քայլողներին հետևում,
Մերթ կանգնելով և մերթ նրանց հենվելով,
Իսկ թե ինչու՝ իրենք էլ չեն իմանում,

85 Այսպես ահա մոտենում էր դեպի մեզ
Առաջին շարքն այն բախտավոր ջոկատի,
Դեմքով խոնարհ և հայացքով բարեհեզ:

88 Երբ տեսան այն հոգիները նախընթաց,
Որ աջ կողմըս լույսը հատված էր այնպես,
Որ ստվերըս դեպի սարն էր երկարած,

91 Կանգ առան և ընկրկեցին մի քիչ ետ,
Եվ ետևից ընթացողները բոլոր
Նույն բանն արին բնազդաբար ու անգետ:

94 «Ես ձեզ ասեմ, դուք ինձ դեռ հարց չտված,
Ձեր տեսածը մի մարմին է մարդկային,
Դրանից է լույսը գետնին երկատված։

97 Մի՛ զարմանաք, հավատացեք, որ առանց
Երկնապարգև մի զորության չէ, որ նա
Հետամուտ է ելնելու լեռն այս անանց»։

100 Այսպես ասաց առաջնորդը և այնժամ
Նրանք խմբով «Եկեք մեզ հետ» ասացին,
Ճանապարհը մեզ ցույց տալով փութակամ։

103 «Ով էլ լինես,— ասաց մեկը նրանցից,—
Մի պահ դեմքիս նայիր առանց կանգնելու,
Եվ հիշիր թե երբևէ չե՞ս տեսել ինձ»։

106 Դարձա նրան և ուշադիր նայեցի.
Նա խարտյաշ էր, ազնվատիպ ու սիրուն,
Բայց մի հոնքի վրա ուներ մի սպի։

109 Խոնարհաբար ասացի, որ չեմ հիշում,
Այն ժամանակ նա ինձ ասաց. «Նայիր ինձ»
Եվ ցույց տվեց մի վերք կրծքի վերևում։

112 Ապա ժպտուն ասաց. «Տե՛ս, ես Մանֆրեդն եմ,
Թոռն հարազատ Կոստանցայի կայսրուհի։
Երբ դու երկիր վերադառնաս, խնդրում եմ՝

115 Գնա գտիր իմ գեղեցիկ աղջկան,
Սիկիլիո և Արագոնի տերանց մոր,
Եվ իմ մասին պատմիր ստույգը նրան։

118 Երբ ես երկու մահացու վերք ստացա,
Ինձ հանձնեցի արցունքով ու զղջումով
Նրան, որ միշտ ներող է և սրտացավ։

121 Իմ մեղքերը սարսափելի ծանր եղան,
Բայց Տերն այնքան բարի է ու ողորմած,
Որ ներում է, ով որ դիմում է նրան։

124 Կոզենցայի հովիվը, որ ուղարկված
Կլեմենտից՝ ինձ հալածեց հետմահու,
Աստծու խոսքը եթե լիներ կարդացած,

127 Իմ դիակը դեռ պահպանված կլիներ
Մոտակայքում Բենեվենտի կամուրջի,
Հովանու տակ քարակույտի ծանրաբեռ։

130 Արդ նա հողմի, անձրևի տակ հորձանուտ
Ծեծվում է ու թրջվում ափին Վերդեի,
Ուր նա տարվեց կերոններով շիջանուտ։

133 Սակայն նրանց նզովքների պատճառով
Հավերժ սերը չի կորցնում իսպառ նա,
Ով կարող է դեռ դարձի գալ զղջումով։

136 Բայց ով մեռնի բանադրված՝ սրբազան
Եկեղեցուց, թեև զղջա հուսկ ժամին,
Նա կսպասի ստորոտը այս լեռան,

139 Մի երեսուն անգամ երկար ժամանակ,
Քան նա մնաց բանադրանքում, եթե որ
Դա չկարճվի աղոթքներով երկնառաք։

142 Արդ կարող ես դու ինձ բերկրանք պատճառել,
Տեղս հայտնելով Կոստանցային իմ բարի,
Որ փութա ինձ իր ջանքերով սատարել։

145 Աստ օգնում են աղոթքները ողջերի»։

ԵՐԳ ՉՈՐՐՈՐԴ

Երբոր մեկը մեր ուժերից հոգեկան
Մորմոքով կամ հաճույքով է համակվում,
Հոգին դրան ենթակայում է այնքան,

4 Որ կարծես թե իր մեջ այլ ուժ չի զգում,
Դա հերքում է այն սխալը, ըստ որի
Մեր մեջ զատ-զատ հոգիներ են բռնկում:

7 Այնպես որ, երբ լսում ենք կամ տեսնում ենք
Մի բան, որը կլանում է մեր հոգին,
Ժամանակի անցումը չենք զգում մենք:

10 Այլ ուժ է այն, որ ժամանցն է ընկալում,
Եվ այլ է այն, որ առինքնում է հոգին.
Սա կապված է, իսկ նա՝ ճախրում երերում:

13 Ես դրանում համոզվեցի հեշտությամբ,
Երբ ուշադիր լսում էի Մանֆրեդին.
Ջի արևը բարձրացել էր հիսնաչափ

16 Աստիճանով, որ ես չէի նկատել,
Երբ բոլոր այն հոգիները միաձայն
Ասացին մեզ. «Ահա տեղն եք դուք հասել»:

19 Երբ հասնում են ողկույզները խաղողի,
Շինականը ցանկապատի մեջ այգու
Մերթ թողնում է ավելի լայն անցուղի,

22 Բան այն ուղին, ուրկից վերև բարձրացանք
Առաջնորդքս և ես իրար ետևից,
Հազիվ թե այն հոգիներից հեռացանք:

25 Կարելի է լոկ օգնությամբ ոտների
Սանկտ, Նոլի, Բիգմանտովա բարձրանալ,
Բայց աստ հարկ էր օգնությունը թևերի,

28 Ծիր թևերի անպարագիծ փափագի,
Որպեսզի ես հետևեի վարպետիս,
Որ ինձ հույս ու լույս էր տալիս մշտակի:

31 Ելնում էինք ժայռամիջյան նեղ անցքով,
Սեղմվելով միջև երկու պատերի
Եվ կառչելով գետնին ոտքով ու ձեռքով:

34 Երբ մենք լեռան նախահարթակը հասանք
Եվ մեզ գտանք մի բացատում, ասացի.
«Վարպե՛տ, հիմա ի՞նչ ուղղությամբ ընթանանք»։

37 Եվ նա ասաց. «Առաջացիր աներկբա,
Շարունակիր ինձ հետևել լեռն ի վեր,
Մինչև որ մեզ մի ուղեցույց երևա»։

40 Գագաթն այնքան բարձր էր, որ չէր նկատվում,
Եվ լանջը թեք ավելի քան գիծը այն,
Որ ուղղանկյան ճիշտ կենտրոնով է անցնում։

43 Հոգնած էի և ասացի անդեղն.
«Թանկագի՛ն հայր, մի քիչ կանգ առ դու այստեղ,
Հոգնությունից, տե՛ս, մնում եմ ետև»։

46 «Որդյա՛կ,— ասաց,— մինչև այնտեղ բարձրացիր»,
Եվ ցույց տվեց մի դարատափ մեր վրա,
Որ պատում է շուրջը լեռան լայնածիր։

49 Հույժ խթանված ես այդ խոսքից մեղմաձայն,
Ջանք թափեցի մագլցելու չորեքթաթ,
Մինչև որ ես դարատափը հասա այն։

52 Մենք հանգչելու համար մի քիչ նստեցինք,
Մեր երեսը ուղղված դեպի արևելք,
Եվ դիտելով անցած ուղին՝ հրճվեցինք։

55 Ես նայեցի դեպ ցածրադիր ափը նախ,
Ապա երկինք, և ես սաստիկ զարմացա,
Որ արևը ճաճանչում էր կողմից ձախ։

58 Իմ զարմանքը լավ նկատվեց պոետից,
Իմ զարմանքը ի տես կառքի լուսեղեն,
Որ ծածկել էր Ակուիլոնը մեզանից։

61 «Եթե Կաստորն ու Պոլլուքսը բոց ու հուր,—
Ասաց նա ինձ,— ուղեկցեին արևին,
Որ իր լույսը տարածում է ամենուր,

64 Կտեսնեիր, որ Զոդիակը բոսոր
Կպտտվեր ավելի մոտ Արջերին,
Թե դուրս չգար ճանապարհից իր սովոր:

67 Եթե կուզես գիտնալ պատճառը դրա,
Պատկերացրու, որ Սիոնն ու լեռը այս
Երկրի վրա ունեն դիրքեր հակոտնյա.

70 Ունեն տարբեր երկնակամար, բայց ունեն
Մեկ հորիզոն, և այն ուղին, որտեղից
Ֆայետոնը շեղեց կառքն իր հրեղեն,

73 Անհրաժեշտ է, որ մի կողմից երկարի
Դեպի լեռն այս, իսկ մյուս կողմից դեպ լեռն այն,
Եթե դու այդ լավ ըմբռնես ըստ կարի»:

76 Ես ասացի. «Վարպե՛տ, երբեք մինչև արդ
Չեմ հասկացել այնպես հստակ ու որոշ
Որևէ հարց իմ ըմբռնման համար բարդ,

79 Ինչպես հիմա քո խոսքերն եմ հասկանում,
Չի միջին ծիրն հասարակած անվանված,
Որ ամռան ու ձմռան միջև է մնում,

82 Համաձայն քո փաստարկության՝ այստեղից
Դեպի հյուսիս այնքան հեռու է, որքան
Դեպի հարավ նա հեռու է Սիոնից:

85 Բայց դեռ ի՛նչքան մեզ հարկավոր է ելնել.
Լեռը այնքան բարձրաբերձ է երևում,
Որ գագաթը անկարելի է տեսնել»:

88 Եվ նա ասաց. «Այս լեռն հաստված է այնպես,
Որ սկզբում բարձրանալը դժվար է,
Սակայն հետո հեշտանում է մեծապես:

91 Եվ երբ այնքան քո ընթացքը հեշտանա,
Որ վերելքը թեթև լինի քեզ այնպես,
Ինչպես նավով հոսանքն ի վար մարդ գնա,

94 Այն ժամանակ ճամփիդ եզրին կհասնես:
Այնտեղ կառնես հոգնությունդ տաժանքից.
Ահա այն, ինչ ես կարող եմ ասել քեզ»:

97 Հազիվ թե նա այս խոսքերը ինձ ասաց,
Մեր մոտերքում մի ձայն հնչեց ու լսվեց.
«Գուցե մի քիչ հանգչես վերև չհասած»:

100 Մենք այդ ձայնից ետև դարձանք երկուսս էլ
Եվ ձախ կողմում տեսանք մի մեծ քարաժայռ,
Որ նախապես բնավ չէինք նկատել:

103 Մենք մոտեցանք. ժայռի ետև միաձույլ
Ստվերի տակ խմբված էին հոգիներ
Այն տեսքով, որ ունեն մարդիկ հեղգ ու ծույլ:

106 Եվ մեկը, որ երևում էր խիստ հոգնած,
Նստած էր ու գրկած ծնկները երկու,
Իսկ գլուխը նրանց միջև էր հակած:

109 «Օ՜, ազնի՛վ տեր, նայիր վրան դու դրա,—
Ասացի ես.— նա այնքան է ալարկոտ,
Որ ծուլությունն ասես եղբայրն է նրա»:

112 Նա շուռ եկավ ու մեզ նայեց ուշադիր,
Դեմքը հազիվ բարձրացնելով ազդրերից,
Եվ ինձ ասաց. «Վեր ել, թե որ շատ ես ժիր»:

115 Իսկույն նրա ով լինելը իմացա.
Եվ թեև ես հևում էի խոնջենքից,
Բայց և այնպես փութով նրան մոտեցա:

118 Նա գլուխը բարձրացրեց հազիվ հազ
Ու ինձ ասաց. «Լավ հասկացա՞ր, թե ինչպես
Կառքն արևի ձախ կողմից է տալիս վազ»:

121 Ծույլ շարժումներն ու կարճ բառերը նրա
Անմիջապես իմ ծիծաղը շարժեցին:
Ես ասացի. «Ուրախ եմ, որ Բելակուա՛,

124 Դու փրկված ես. բայց ինչո՞ւ ես դու այդպես
Նստել այստեղ: Ուղեկցի՞ ես սպասում,
Թե քո նախկին ծուլությունն է բռնել քեզ»:

127 Եվ նա. «Եղբայր, օգուտն ի՞նչ է շարժվելու:
Տյառն հրեշտակը, որ հսկում է դռան,
Ինձ չի թույլ տա մեղքերս հիմա քավելու:

130 Նախ հարկ է, որ իմ շուրջ երկինքը պտույտ
Գործի այնքան, որքան գործեց իմ կյանքում,
Չի մինչև վերջ ես զղջալու չարի փույթ:

133 Ինձ սատարել կարող է լոկ աղոթքն այն,
Որ բխում է սրտից մաքուր ու բարի.
Այլ աղոթքը անօգուտ է և ունայն»:

136 Իմ պոետը բարձրանում էր ու ասում.
«Հետևիր ինձ, ահա արևը արդեն
Ձենիթում է, իսկ Գիշերը այն մասում

139 Տարածվել է Մարոկկոյից էլ քիչ դեն»:

ԵՐԳ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ես արդեն այն ստվերներին թողնելով՝
Գնում էի առաջնորդիս ետևից,
Երբ նրանցից մեկն ինձ մատով ցույց տալով

4 Ասաց. «Տեսեք, նա որ ցածրից է չվում,
Իր ձախ կողմում երկար շվաք է արել,
Եվ կարծես, թե կենդանի է երևում»:

7 Ես շուտ եկա այս խոսքերից շշնջված
Եվ տեսա, որ հոգիները զարմանքով
Նայում էին ինձ և լույսին բեկանված:

10 Վարպետս ասաց. «Ինչո՞ւ համար դու այդպես
Այլայլվում ես ու քայլերդդ ծանրացնում:
Թե նրանք ինչ են շշնջում, ի՞նչ փույթ քեզ:

13 Հետևիր ինձ, թող ասեն ինչ որ ուզեն:
Կանգնիր ինչպես աշտարակը հաստատուն,
Որ չի ցնցվի, հողմերն ինչքան էլ հուզեն:

16 Մարդ նպատակն հեռացնում է իրենից,
Երբ ծփում է մտքերի մեջ, ըստ որում
Մեկի թափը թուլանում է մյուսից»:

19 Ի՞նչ պետք էի ասել իբրև չքմեղանք:
Ես «գալիս եմ» ասացի այն շիկնությամբ,
Որ ներման է արժանացնում մարդուն ցանգ:

22 Այդ միջոցին լեռնալանջով իջնելով
Մեզ ընդառաջ գալիս էին հոգիներ,
Օրհներգելով **«Ողորմեա ինձ»** տներով:

25 Հենց որ նրանք նշմարեցին նույնհետայն,
Որ իմ մարմնով շողեր չէին թափանցում,
Նրանց երգը փոխվեց «Օ՛»-ի մի երկայն:

28 Եվ երկուսը դեսպանների պես հատուկ,
Մեզ ընդառաջ վազեցին և հարցրին.
«Մեզ ասացեք ո՞վ եք, ի՞նչ եք ուզում դուք»:

31 Վարպետս ասաց. «Դուք գնացեք և հայտնեք
Նրանց, որոնք ձեզ այստեղ են ուղարկել,
Որ դեռ ողջ է սրա մարմինն հոգնաբեկ:

34 Եթե նրանք մի քիչ առաջ կանգ առան
Նրա շվաքն ուշի ուշով դիտելու,
Դա հերիք է, պատիվ անեն թող նրան»:

37 Ես չեմ տեսել նախամուտքին գիշերվա
Ոչ ասուպի այնպես սլացքն օդով ջինջ,
Ոչ փայլակինն ամպի միջով ամառվա,

40 Ինչպես նրանք փութանակի հեռացան
Եվ խմբի հետ վերադարձան դեպի մեզ,
Արշավասույր վարգող գնդի մի նման:

43 «Այդ ամբոխը, որ դեպի մեզ է վազում,—
Ասաց վարպետս,— ուզում է քեզ բան խնդրել,
Ուստի գնա և տես, թե ինչ են ասում»:

46 «Դո՛ւ, որ երկինք ես բարձրանում մարմնով այ(
Որով ծնվել ու ապրել ես, քիչ կա՛նգ առ,
Բոլորեքյան ինձ գոչեցին միաձայն:—

49 Նայի՛ր, գուցե մեկնումեկիս ճանաչես.
Նրա մասին լուր կտանես աշխարհում.
Ա՛հ, սպասիր, մի՛ շտապիր դու այդպես:

52 Մենք բոլորըս եղանք զոհեր բռնության,
Եվ մեղավոր մեր մահվան ժամը մինչև,
Երբ մի լույսով լուսավորված փրկության,

55 Զղջացինք ու մեր թշնամյաց ներեցինք
Եվ մահացանք Աստուծո հետ հաշտըված,
Որին տեսնել մենք անձկագին տենչացինք»:

58 Եվ ես. «Ինչքան ձեզ նայում եմ խորասույզ,
Ոչ մեկիդ էլ չեմ ճանաչում, բայց եթե
Մի բան անել կարող եմ ձեզ ի հաճույս,

61 Ասացեք և անեմ հանուն անխոով
Խաղաղության, որ աշխարհե ի աշխարհ
Որոնում եմ առաջնորդիս հետքերով»:

64 Մեկը ասաց. «Կարիք չկա մեզ երդվել,
Հավատում ենք քո ցանկությանը բարի,
Միայն թե դա կարողանաս կատարել:

67 Ես, որ այստեղ առաջինն եմ խոսք առնում,
Խնդրեմ՝ եթե տեսնես երկիրն այն, որ կա
Ռոմանյոլ և Նեապոլի սահմանում,

70 Եվ Ֆանոյում լինես, հիշիր իմ մասին,
Որպեսզի անդ աղոթք անեն ինձ հայմար,
Որ մաքրվեմ իմ մեղքերից ծանրագին:

73 Այդտեղից եմ, բայց իմ վերքերն ապառում,
Ուրկից հոսեց իմ արյունը հորդավեժ,
Ես ստացա Անտենորի գավառում,

76 Ուր կարծեցի, թե կմնամ անվթար.
Բայց Էստեցին ինձ հալածեց ավելի,
Քան պահանջում էր իրավունքը արդար:

79 Բայց եթե ես Միրրա փախած լինեի,
Օրիակում չէի լինի ձերբակալ
Եվ դեռ երկրում մինչև հիմա կապրեի:

82 Ես վազեցի դեպի շամբուտը տղմուտ.
Այնտեղ ընկա և ես տեսա, թե ինչպես
Լիճ գոյացավ իմ արյունից հոսանուտ»:

85 Ուրիշն ասաց. «Իցիվ ածվեր ի կատար
Քո փափագը՝ լեռան բարձունքն հասնելու:
Աղոթքներովդ հանդիսացիր ինձ սատար:

88 Բոնկոնտեն եմ, Մոնտեֆելտրո հովիտից,
Ջովաննան ու մյուսները ինձ չեն հոգում.
Ես սրանց մեջ կարմրում եմ ամոթից»:

91 Եվ ես նրան. «Ի՞նչ ուժ կամ ի՞նչ պատահար
Կամպալդինից այնքան հեռու քեզ նետեց,
Որ չիմացվեց, թե ուր ընկար ու կորար»:

94 Պատասխանեց. «Կազենտինի ստորև
Արկիանո կոչված գետակն է հոսում,
Որ ծագում է Մենաստանից քիչ վերև:

97 Այնտեղ, ուր նա էլ չի կոչվում այդ անվամբ,
Հասա խոցված ու խզրատված կոկորդով
Եվ տեղանքը ոռոգեցի իմ արյամբ:

100 Գիտակցություն ու շունչս այնտեղ կորուսի
Եվ մահացա Մարիամ անունը բերնիս.
Մարմինս այնտեղ մնաց դրված, մեկուսի:

103 Արդ գտի և մարդկանց սպասմիր անվարան.
Հրեշտակն եկավ ինձ տանելու դեպ երկինք,
Բայց դևն ասաց. «Ո՞ր ես տանում դու նրան.

106 Դու տանում ես հավերժ հոգին հանցավոր
Նրա զղջման մի արցունքի պատճառով,
Իսկ ես կառնեմ նրա մարմինն անցավոր»:

109 Դու լավ գիտես, թե ինչպես են խտանում
Գոլորշիներն ու վերածվում ամպերի,
Հենց որ օդի ցուրտ խավերն են բարձրանում:

112 Միացնելով միտքը իր չար կամքի հետ
Եվ գործելով իրեն հատուկ բնությամբ,
Դևը հանեց ճողմ ու ամպրոպ չարաղետ:

115 Եվ ապա նա, երբ օրն եղավ երեկո,
Պղատոնանցից մինչև պարը մեծ լեռան,
Հովիտն ամբողջ ծածկեց թանձր մի մեգով,

118 Որից օդը հագեցավ ու ծանրացավ.
Տեղատարափի ամպերն եկավ այն ասեն
Եվ տեղումից առատ հեղեղ գոյացավ:

121 Երբ հեղեղը հեղեղատներն հասավ,
Այնքան թարիով հոսեց դեպի գետը վայն,
Որ սահանքը ոչ մի բանով չզսպվեց:

124 Հորդ Սրկիանոն իմ մարմինը սառ ու պաղ
Իր մեջ գտավ և այն նետեց Պոնտոսում,
Արձակելով բազուկներիս ահեղապաղ,

127 Որ մեռնելիս խաչել էի իմ կրծքին.
Հորձանքը ինձ ափերն ի վար թավալեց,
Ապա ծածկեց իր ալքերում տողմագին»:

130 «Ա՛հ, երբ աշխարհ վերադառնաս դու նորից,
Եվ հանգչես քո ճանապարհից շատ երկար,—
Ասաց երրորդն երկրորդ հոգու ետնից,—

133 Այնտեղ հիշիր նաև դու ինձ, Պիայիս.
Սենայում կյանք, Մարեմմանում մահ գտա.
Այդ գիտե նա, ով ինձ իր կին առնելիս,

136 Մատոս դրեց մի մատանի մարգարտյա»։

ԵՐԳ ՎԵՑԵՐՈՐԴ

Երբ ավարտվի բախտախաղը զառայի,
Ապա տարվողն հուսալքում է ապրում
Եվ զառեր է գցում տեղում ամայի.

4 Մինչ ամբոխը ուղեկցում է հաղթողին.
Մեկն առջևից, մեկն ետևից է քաշում,
Մեկն էլ կողքից հիշեցնում է իր մասին.

7 Իսկ նա քայլում ու լսում է ամենքին,
Նրանց մի բան տալով ճամփում է մեկ-մեկ,
Եվ այսպես նա հեռացնում է բոլորին։

10 Այսպես էի ես այն խմբում ուղեկից,
Դեմքս ուղղելով մերթ մեկին ու մերթ մյուսին
Եվ խոստումներ տալով պրծնում նրանցից։

13 Այդ խմբում էր արեստինը, որ զոհվեց
Բիրտ ու վայրագ ձեռքով Գին դի Տակկոյի,
Եվ մյուսը, որ հալածվելիս խեղդվեց։

16 Նրա մեջ էր Ֆեդերիկո Նովելլոն,
Եվ պիզացին, որի մահվան առիթով
Իր կոծվը ցուցաբերեց Մարցուկկոն։

19 Նրա մեջ էր Օրսո կոմսը, և նա, որ
Սպանվել էր այլոց խանդի պատճառով
Եվ ոչ թե մի մեղքի համար մասնավոր.

22 Պիեր դը լա Բրոսն է դա. արդ թող շուտ,
Քանի ողջ է, զղջա Բրաբանտ տիրուհին,
Որ չխառնվի մի օր հոտին ժանտաժուտ:

25 Երբ հեռացա ստվերներից այդ ամեն,
Որոնք այլոց աղոթքն էին աղերսում,
Որպեսզի շուտ մաքրվեն ու սրբացվեն,

28 Ես ասացի. «Վարպե՛տ, կարծեմ քո երկի
Մի հատվածում ժխտում ես, թե աղոթքով
Կարելի է փոխել վճիռն երկնքի.

31 Իսկ այս մարդիկ այդ են միայն թախանձում,
Սրանց հույսը ուրեմն իզո՞ւր կլինի,
Թե՞ քո միտքը այնքան լավ չեմ թափանցում»:

34 Եվ նա ասաց. «Իմ գրածը պարզ է շատ,
Եվ եթե այն ողջմտությամբ հասկացվի,
Զուր չի անցնի սրանց հույսը խանդակաթ.

37 Չի երկնային դատաստանը չի փոխվում
Նրանից, որ աստ անելիքը սրանց
Սիրո հուրը կատարում է վայրկյանում:

40 Եվ այնտեղ, ուր այնպես էի հավատած,
Աղոթքն այնքան չէր ծառայում քավության,
Չի չէր հասնում մինչև երկինք, առ Աստված:

43 Բայց մի՛ կանգնիր հարցի վրա այս նրբին.
Այս մասին քեզ լուսաբանում կտա նա,
Ով քո միտքը կհասցնի ճշմարտին.

46 Այսինքքն քո Բեատրիչեն իմաստուն.
Դու կտեսնես նրան լեռան գագաթին,
Ուր սպասում է նա ժպտուն ու խնդուն»:

49 Եվ ես. «Տե՛ր իմ, ջանանք մի քիչ շտապել,
Զի ես արդեն, առաջվա պես չեմ հոգնում,
Եվ լեռն էլ, տե՛ս, իր շվաքն է արձակել»։

52 «Այսօր ինչքան մենք կարող ենք կընթանանք,—
Պատասխանեց առաջնորդը,— բայց ուղին
Այնքան հարթ չէ, որ հեշտությամբ բարձրանանք։

55 Վեր գնալիս մի անգամ էլ կտեսնես
Ելքն արևի, որ արդ թաքչած է լանջին,
Այնպես որ դու շվաք անել կարող չես։

58 Բայց, տես, այնտեղ լուռ նստել է մի հոգի
Եվ հայացքը մեր վրա է բևեռել,
Նա ցույց կտա մեզ կարճ ուղին վերելքի»։

61 Մենք մոտեցանք։ Լոմբարդացի հոգի դու,
Քո կեցվածքը ինչքան վեհ էր ու խրոխտ,
Քո հայվածքը ինչքան լուրջ էր ու ազդու։

64 Նա նստած էր միայնակ ու լուռումունջ,
Եվ հայացքով հետևում էր մեզ այնպես,
Ինչպես գետնին հանգչող առյուծն անմոռուն։

67 Վիրգիլիոսը մատչեց նրան ու հարցրեց,
Թե որտեղ է հարմար ուղին վերելքի.
Բայց այդ հարցին նա պատասխան չտվեց,

70 Այլ հարցրեց, թե ովքեր և որ երկրից ենք.
Քաղցր առաջնորդս հենց որ ասաց «Մանտուայից»
Նա որ այդպես ինքնամփոփ էր և անհանգ,

73 Անմիջապես տեղից ելավ գոչելով.
«Օ՛ մանտուացի, Սորդելլոն եմ, երկրացիդ»։
Եվ երկուսով պինդ փարվեցին կարոտով։

76 Օ՛ ցավերի օջախ, ստրո՛ւկ Իտալիա,
Դու անդեկ նավ աներեսաստ հողմերում,
Դու պոռնիկ, ոչ տիրուհի վեհազգայ։

79 Այն աեգ ճոգին իր սիրասուն հայրենեաց
Քաղցրանչուն անունը լոկ լսելով
Ընդունեց իր բաղաքացուն գրկաբաց։

82 Մինչդեռ քեզ մոտ բնակիչներդ անդադրում
Պատերազմում ու բզկտում են միմյանց,
Նրանք, որ նույն շրջապատում են ապրում։

85 Նայի՛ր, թշվա՛ռ, քո ափերը Ծովանիստ,
Այդ նայիր քո ծոցի մեջ, կա՞ արդյոք
Մի անկյուն, որ լինի խաղաղ ու հանգիստ։

88 Ի՞նչ օգուտ որ Հուստինիանոսը կազմեց
Սանձ քեզ հանար, եթե թամբողդ թափուր է.
Առանց դրան ամոթդդ չէր լինի մեծ։

91 Ո՛ դուք, որոնց պարտքն էր հոգվույն նվիրվել
Եվ Կեսարին թողնել թամբին նստելու,
Ինչպես Աստված հրահանգ է ձեզ տվել,

94 Տեսեք ինչպես հետո, անզոսպ է դարձել ձին,
Անկուշելով խթանները այն ցրից,
Երբ ձեր ձեռքը դուք մեկնեցիք իր սանձին։

97 Եվ դու, Ալբե՛ռտ գերմանացի, դու որ արդ
Թողլքել ես ապերասան այս ձիուն,
Որին սանձել քո վրա էր ընկնում պարտ,

100 Թող երկնքից արդար պատիժ շուտ տեղա
Ցեղիդ վրա և այնպես խիստ ու ցայտուն,
Որ դրանից քո հաշտդդը դողդողա.

103 Վասնզի դու և քո հայրը թողլ տվիք,
Որ անապատ դառնա այգին կայսրության,
Իսկ դուք ձեզ մոտ հարստություն դիզեցիք։

106 Արի՛, անվո՛ղջ, և տես ինչ է կատարված.
Կապպելլետտիք, Ֆիլիպեսկիք, Մոնալդիք
Ու Մոնտեկիք հնչված են կամ հալածված.

109 Արի՛, անգութ, և տես տագնապն ահավոր,
Որ կրում են սեպուհները ամենուր,
Արի՛, տես, թե ինչ օրի է Սանտաֆիորն:

112 Տես, թե ինչպես քո Հոռոմը որբացած
Հեծեծում է ու քեզ կանչում ցայգ ու տիվ.
«Ո՜, Կեսա՛ր իմ, ինչո՞ւ ես ինձ դու լքած»:

115 Տե՛ս, թե մարդիկ ինչպե՛ս սիրում են իրար.
Եվ եթե դու չես խղճում մեզ, գեթ արի,
Որ ամաչես քո համբավից ոտնահար:

118 Ո՛վ Տեր, եթե ներելի է, ինձ թույլ տուր
Հարցնելու քեզ, որ խաչվեցիր մեզ համար,
Մի՞թե արդյոք աչքերդ ուղղված են այլուր,

121 Թե՞ խորհուրդդիդ անդունդի մեջ անհատակ
Պատրաստում ես դու մեզ համար մի բարիք,
Որ մեր միտքը ընմբռնելու չէ ատակ:

124 Չի տիրում են ողջ քաղաքներն Իտալիո
Բռնակալներ, և ամեն մի սինյորոր
Կուսակցելով դառնում է մի Մարկելլո:

127 Իմ Ֆլորենցիա, դու կարող ես լինել գոհ
Այս գայթումից, որ բնավ չի դիպչում քեզ,
Շնորհիվ քո ժողովրդի ողջախոհ:

130 Շատեր ունեն արդարությունը սրտում,
Բայց զգույշ են այն երևան բերելու.
Իսկ ժողովուրդդ այն ունի լոկ իր շրթում:

133 Շատեր խույս են տալիս գործից հանրային,
Իսկ ժողովուրդդ ինքնակոչ ու փութաջան
Բղավում է. «Բեռը բարձեք իմ մեջքին»:

136 Արդ, դու հրճվիր, դրա համար պատճառ կա.
Դու հարուստ ես, դու խաղաղ ես, դու խելոք.
Թե ես ճիշտ եմ, իրավիճակն է վկա:

139 Սպարտան ու Աթենքը, որ հին ու կիրթ
Օրենքներ ու վարչակարգեր ունեցան,
Համեմատած քեզ հետ, եղան սին ու բիրտ.

142 Դու այնքան նուրբ վարչաձևեր ես գտնում,
Որ այն, ինչ որ հոկտեմբերին փորձում ես,
Նոյեմբերի մինչև կեսն էլ չի հասնում:

145 Կարճ շրջանում, հիշի՛ր, քանի անգամ դու
Փոփոխել ես օրենք, դրամ, կարգ ու սարք
Եվ նոյոգել գործիչներդ աչքառու:

148 Եվ եթե դու դեռ խելք ունես դատելու,
Կտեսնես, որ նման ես այն հիվանդին,
Որ անկարող մահճում հանգիստ գտնելու,

151 Շրջշրջվում է ի դարմանում իր ցավին:

ԵՐԳ ՅՈԹԵՐՈՐԴ

Ջերմ ու զվարթ ողջագուրանքն երկուստեք
Երբ կրկնվեց մի քանի հեղ, Սորդելլոն
Ետ քաշվեց ու հարցապնդեց. «Դուք ո՞վ եք»:

4 Առաջնորդը այնժամ տվեց պատասխան.
«Ես Վիրգիլն եմ և զրկվեցի երկնքից
Զուներնալու համար հավատ իսկական:

7 Երբ հոգիներն արժանընտիր և անեղծ
Դեռ այս լեռնով չէին ելնում առ Աստված,
Օկտավիանոսն իմ ոսկորները թաղեց»:

10 Ինչպես նա, ով համակվում է զարմանքով,
Երբ տեսնում է հանկարծ մեկին չսպասված,
Եվ ասում է «Նա է, թե չէ» վարանքով,

13 Այսպես ապշեց ու կարկամեց այն հոգին,
Եվ երկյուղած մոտենալով վարպետին,
Նորից նրան ողջագուրեց կաթոգին:

16 «Օ՛ դու,— ասաց,— լատինների փառք պայծառ,
Որ մեր լեզուն ճոխացրիր մեծապես
Եվ ծննդյան վայրիս պարծանքը դարձար,

19 Ո՞ր շնորհքիս համար եմ ես տեսնում քեզ:
Թե արժան եմ քո խոսքերը լսելու,
Ասա խնդրեմ՝ դու Դժոխքի՞ց ես եկել»:

22 Վիրգիլիոսը պատասխանեց. «Դժոխքի
Պարունակաց միջով այստեղ եմ եկել,
Աջակցությամբ մի զորության երկնքի:

25 Ոչ անելուս, այլ չանելուս համար լոկ
Ես գրկվեցի վեհ Արևից քո տենչած,
Որին շատ ուշ ճանաչեցի ես իրոք:

28 Ցածում տեղ կա, ուր տխուր է խավարից,
Ոչ տանջանքից, և ողբերն անդ չեն հնչում
Իբրև ճիչ, այլ իբրև հառաչ վշտալից:

31 Ես այնտեղ եմ մանուկների հետ անմեղ,
Որոնք ընկան ժանիքների մեջ մահվան,
Դեռ չազատված սկզբնական մեղքից մեր:

34 Ես այնտեղ եմ այն մարդկանց հետ բարեծին,
Որ չիմացան լավությունները երեք,
Իսկ մյուսները իմացան ու պահեցին:

37 Բայց եթե դու ճամփան գիտես՝ ցույց տուր մեզ,
Որպեսզի շուտ կարողանանք հասնել անդ,
Ուր բացվում է Քավարանի դուռը մեծ»:

40 Եվ Սորդելլոն. «Ես անարգել կարող եմ
Շրջել, ելնել այս լանջերով ստորին,
Ուստի որքան կարող եմ, քեզ կուղեկցեմ:

43 Բայց օրը, տե՛ս, տարաժամել է արդեն,
Եվ գիշերով կարելի չէ բարձրանալ.
Արդ լավ է, որ գտնենք կայան մի աստեն։

46 Այստեղ աջ կողմ կան հոգիներ անհամար.
Եթե կուզես, քեզ կտանեմ նրանց մոտ,
Նրանց տեսնելն հաճելի է քեզ համար»։

49 Վարպետս հարցրեց. «Ինչպե՞ս, եթե մեկն ուզեր
Վեր բարձրանալ աղջամուղջի ժամանակ,
Չէ՞ր կարենա, և կամ մեկը կարգելե՞ր»։

52 Եվ Սորդելլոն մատով քաշեց գիծ գետնին,
Ապա ասաց. «Երբ արևը մայր մտնի,
Դու չես կարող անցնել գծից այս անդին։

55 Բարձրանալուն խանգարում է լոկ մի բան—
Գիշերային մթությունը անթափանց.
Դա է միայն արգելակում ձեր ճամփան։

58 Բայց քանի լույսն հորիզոնի տակ է արդ,
Կարելի է շրջագայել ստորև,
Կամ դեգերել շուրջը լեռան կորնթարդ»։

61 Այնժամ տերրս, որին զարմանք էր պատել,
Ասաց. «Ուրեմն հիմա դու մեզ տար այնտեղ,
Ուր, ասացիր, հաճելի է կանգ առնել»։

64 Մենք մեր տեղից դեռ շատ չէինք հեռացել,
Երբ տեսա, որ լեռան մեջ կար մի հատված,
Ուր գոգավոր մի հովիտ էր գոյացել։

67 Ստվերն ասաց. «Հիմա այնտեղ գնանք մենք,
Որտեղ լեռան գոգը հովիտ է կազմել,
Եվ այնտեղ էլ արշալույսին կսպասենք»։

70 Ոչ իրոք թեք, ոչ իրոք հարթ մի դարափ
Մեզ տարավ դեպ այն հովիտը գոգավոր,
Որտեղ եզրը ցածրանում էր կիսով չափ։

73 Ոսկին, արծաթն ու ծիրանին կարմրորակ,
Լուրթ լեղակն ու եբենոսը պաղպաջուն,
Թարմ զմրուխտը նոր բեկանված ժամանակ,

76 Բոլորն իրենց գույնով պիտի գիջեին
Այս ծմակի դալարիքին ու ծաղկանց,
Ինչպես խղճուկ բանը գիջում է ճոխին:

79 Բնությունն այստեղ շռայլել էր ոչ միայն
Պես պես թույրեր, այլև բույրեր պեսպիսի,
Կազմելով մի բուրմունք նոր ու աննման:

82 Այդ հովտի մեջ ծաղկածիծաղ ու հուրթի
Նստած էին առանձնացյալ հոգիներ,
Որոնք երգում էին՝ **«Ողջ լեր, թագուհի»:**

85 «Մինչ արևը դեռ իր մահին չի հասել,—
Վերսկսվեց մեզ ուղեկցող մանտուացին,—
Մենք կարող ենք այստեղ հանգիստ սպասել:

88 Այս քարձունքից ավելի լավ կարող եք
Տեսնել դեմքերն ու շարժումներն ամենքի,
Քան թե հովտում նրանց միջև գտնվեք:

91 Ահա նա, ով բոլորից բարձր է նստել,
Եվ չի երգում մյուսների հետ միասին,
Գիտակցելով որ պարտքը զանց է առել,

94 Ռոդոլֆ կայսրն, որը կարող էր բուժել
Վերքերն այն, որ սպանեցին Իտալիան,
Իսկ արդ նրան վերածնելն ուշ է էլ:

97 Նա, ով կայսրին մխիթարել է ջանում,
Վարեց երկիրն, ուր ծագում է ջուրն այն որ
Մոլտան Էլբա, իսկ Էլբան ծով է տանում:

100 Օտտոկարն է, որ հասակում մանկամարդ
Շատ ավելի արժեր, քան թե իր որդին՝
Վենցեսլավը, որ չափահաս մարդ է արդ:

103 Եվ Քթիկն այն, որ խոսում է սերտ կերպով
Մեկի հետ, որ հեզահամբույր դեմք ունի,
Մարտում ընկավ շուշանները պոծելով:

106 Տեսեք ինչպես նա իր կուրծքն է միշտ թակում:
Նայեք մյուսին, որ իր այտը հենել է
Ձեռքի ափին և հառաչ է արձակում:

109 Գաղղիո ցավի հայրն ու աներն են նրանք,
Գիտեն նրա կյանքը պիղծ ու ամբարիշտ,
Դրանից է նրանց վիշտն ու տվայտանք:

112 Իսկ այն մեկը, որ հաղթանդամ է կարի
Եվ երգում է Քթեղի հետ համաձայն,
Ամեն դեպքում եղավ արի ու բարի:

115 Թե նրանից հետո մնար թագավոր
Այն պարմանին, որ ետևումն է նստած,
Նա կունենար, անշուշտ, ժառանգ պատվավոր,

118 Ինչպիսին նա ամենևին չունեցավ.
Ծիշտ է Յակոբն ու Ֆեդերիկն են արքա,
Բայց նրանցից լավ ժառանգորդ դուրս չեկավ:

121 Հայրական լավն հազվադեպ է երևում
Սերունդի մեջ, և այդպես է կամում Նա,
Ով լավ ձիրքերն ինքն է միայն պարգևում:

124 Խոսքս ուղղված է Արագոնցուն ոչ սակավ,
Քան Քթեղին, որ ձայնակցում է նրան,
Չի Պրովանսն ու Պուլյան հեծում են տակավ:

127 Որդին հորից այնքան պակաս է, որքան
Բեատրիչն ու Մարգրիտն իրենց ամուսնով
Քիչ պարծելու հիմք ունեն, քան Կոստանցան:

130 Տեսեք այնտեղ նստած մենակ ու ազատ
Անգլիայի արքա Հենրիկը խոնարհ.
Սա ունեցավ ավելի լավ պայազատ:

133 Նա, որ նստած է մյուսներից մի քիչ վար,
Հայացքը վեր, Գուլյելմ մարկիզն է հույժ վեհ,
Որի համար ծագած մարտից զինավառ

136 Արտասվեցին Մոնֆերրատն ու Կանավեզ»:

ԵՐԳ ՈՒԹԵՐՈՐԴ

Արդեն ժամն էր երեկոյան զովասուն,
Երբ նավորդող ուղևորները հուզված,
Հրաժեշտ են տալիս անձանց սիրասուն,

4 Երբ պանդուխտը վերապրում է հույզ ու դող՝
Զանգակատան ղողանջները լսելով,
Որոնք կարծես ողբում են օրը մեռնող,

7 Երբ այլևս չլսելով ոչ մի ձայն,
Սկսեցի դիտել մեկին, որ կանգնած,
Ունկնդրություն էր աղերսում լռելյայն:

10 Կցելով ու բարձրացնելով ձեռքերն իր,
Նա հայացքը ուղղեց դեպի արևելք,
Կարծես ասեր. «Աստվա՛ծ, հույս իմ անպատիր»:

13 **«Վախճան լուսոյ»** երգեց այնքան ջերմեռանդ,
Այնպես անուշ ու դաշնոլոր շեշտերով,
Որ ինձանից ես վերացա հիախանդ:

16 Իսկ մյուսները նույն ավաչով դաշնային
Զայնակցեցին նրան ամբողջ օրհներգում,
Աչքերն ուղղած դեպի գնդերն երկնային:

19 Արդ, ընթերցո՛ղ, ճշմարտության հառիր ուշդ.
Այստեղ քողը այնքան նուրբ է ու բարակ,
Որ թափանցել խորքը դյուրին է անշուշտ:

22 Երգից հետո հոգիներն այն վեհաշուք
Սպասեցին երկյուղած ու անձկագին,
Վեր նայելով կարկամ, անխոս, անշշուկ:

25 Ես տեսա որ հանկարծ իջան բարձրերից
Երկու հրեշտակ երկու փայլուն սրերով,
Որոնք ծայրատ էին և զուրկ սայրերից:

28 Նրանց հանդերձն, ինչպես տերև նորաբույս,
Բաց կանաչ էր, և նույներանգ թևերի
Թափհարումից ծածանվում էր հողմաթույզ:

31 Մեկը թռավ ու կանգ առավ մեր կողմում,
Մյուսը իջավ հովտի եզրին հակադիր,
Այնպես որ այն խումբը մնաց մեջտեղում:

34 Տեսնում էի նրանց ծամերը դեղձան,
Բայց աչքերնս շլացան ու մթնեցին
Նրանց դեմքի փայլակումից շողացան:

37 «Նրանք իջան շրջանակից Մարիամա,—
Ասաց Սորդելլն,— այս հովիտը պահելու
Ընդդեմ օձի, որ գալու է հենց հիմա»:

40 Չիմանալով թե որ կողմով սա կգա,
Շուրջս դարձա և, սարսափը իմ սրտում,
Հավատարիմ առաջնորդիս պինդ կպա:

43 Եվ Սորդելլոն հարեց. «Հայտնի մարդկանց քով
Իջնենք հիմա և զրուցենք նրանց հետ.
Նրանք պիտի ձեզ ընդունեն հաճույքով»:

46 Ես երեք քայլ հազիվ էի ցած իջել,
Երբ տեսա, որ ինձ էր նայում մի հոգի,
Ասես թե նա ուզում էր ինձ ճանաչել:

49 Այն պահն էր, երբ օդն սկսում էր մթնել,
Բայց ոչ այնքան, որ արգելեր տեսնելու
Նրան, որին առաջ չէի նկատել:

52 Մենք քնդասաք եկանք իրար դեմ առ դեմ։
Որքան գոհ եմ, Նինո, ազնիվ դատավոր,
Որ չես ընկել հոգիների մեջ դժխեմ։

55 Ողջունելուց հետո իրար փութեռանդ,
Նա ինձ հարցրեց. «Երբվանի՞ց ես դու եկել
Տար ափերից ստորտոր այս լեռան»։

58 «Ես եկել եմ այս առավոտ, շատ մոայլ
Սի տեղանքով,— ասացի ես.— ես ողջ եմ,
Բայց հոգում եմ կյանքի մահին հանդերձյալ»։

61 Երբ ես տվի այս խոսքերով պատասխան,
Սորդելոն ու Նինոն հետ-հետ քաշվեցին,
Հանկարծակի շշմած մարդկանց ճիշտ նման։

64 Մեկը նայեց Վիրգիլին, մյուսը՝ մեկին,
Որ ճստած էր, զարմանահար գոչելով.
«Վե՛ր կաց, Կուրրա՛ղ, նայի՛ր Ցիրոջ ընտրյալին»։—

67 Եվ ասա ինձ. «Հանուն չնորհի առանձին,
Որի համար դու պարտական ես նրան,
Ով ծածկում է իր պատճառները առաջին,

70 Զովանանալիս ասա, երբ դու հետ դառնաս,
Որ ինձ համար աղոթք ուղղի առ երկինք,
Ուր լում են անմեղներին հանդարտաց։

73 Նրա մայրը էլ հազիվ թե ինձ հիշի,
Քանի որ նա փոխեց քողն իր սպիտակ,
Որի համար թշվառն անշուշտ կտուժի։

76 Օրինակով այդ հասկանալ չէ դժվար,
Թե որքան է սերը տնում կնոջ մեջ,
Եթե գգվանքն այն չի արահում հանախ վառ։

79 Եվ տոհմային նշան ինձ Միլանի
Նրա դամբանն այնպես պիտի չպճներ,
Ինչպես կաներ աքսորադը Գալլուրի»։

82 Այսպես ասաց, ունենալով իր դեմքին
Դրոշմը այն արդարացի զայրույթի,
Որ չափով է բորբոքում մաղձը ներքին:

85 Աչքերս ուղղել էի այն կողմն երկնքի,
Ուր աստղերը ծանր են շարժվում մյուսներից,
Ինչպես անվակն ավելի մոտ առանցքի:

88 Եվ տերը ինձ. «Ո՞ւր ես նայում դու, որդյա՛կ»:
Եվ ես. «Երեք ջահերին եմ նայում այն,
Որ շողում են լրությյան մեջ բովանդակ»:

91 Եվ նա ասաց. «Զորս աստղերն այն լուսազարդ,
Որ դու տեսար այս առավոտ, իջել են,
Եվ նրանց տեղ այս երեքն են ելել արդ»:

94 Իսկ Սորդելոն նրան քաշեց, ասելով.
«Նայի՛ր այնտեղ, ահա ոսոխը մեր ժանտ»:
Եվ ցույց տվեց անմիջապես այն մատով:

97 Այն կողմից, ուր հովիտը չէր պատնեշված,
Մտավ մի օձ, նման գուցե այն օձին,
Որ Եվային տվեց պտուղն արգելված:

100 Պիղծ սողունը միջով ծաղկանց ու խոտի
Սողոսկում էր, մերթ ցցելով գլուխն իր,
Մերթ լիզելով իր կռնակը զազրոտի:

103 Ես չտեսա,— և այդ մասին չեմ խոսի,—
Թե երկնային սակերն ինչպես սլացան,
Բայց լավ տեսա խոյացումը երկուսի:

106 Հենց որ լսեց թևահարումը ուժգին,
Օձը փախավ, և հրեշտակները երկու
Վերադարձան իրենց տեղերը նախկին:

109 Իսկ այն հոգին, որը մեզ մոտ էր եկել,
Այն խոյանքի ու գրոհի ժամանակ
Ամենևին չդադարեց ինձ նայել:

112 «Իցիվ թե քեզ երկինք տանող լույսն անմուղտ,—
Դիմեց նա ինձ,— քո մեջ գտներ այնքան կամք,
Որքան հարկ է հասնելու գահը զմրուխտ.

115 Եթե ստույգ ու հավաստի լուր ունես
Վալդիմագրի մարզի մասին, ասա՛ ինձ,
Քանզի այնտեղ իշխանավոր եղա ես:

118 Մալասպինա Կուրրադո եմ ես կոչվում.
Ավագը չեմ, բայց սերում եմ նրանից.
Մերոնց հանդեպ փույթը այստեղ եմ քավում»:

121 «Օ՜,— ասացի,— ես չեմ եղել մարզում ձեր.
Բայց կա՞ արդյոք Եվրոպայում մի անկյուն,
Որտեղ նրա անունն հայտնի չլիներ:

124 Եվ համբավը, որ պատիվ է ձեր տոհմին,
Հռչակել է մարզպետներն ու մարզը ձեր.
Այնտեղ չեղողն անգամ գիտե այդ մասին:

127 Երդվում եմ ձեզ իմ կենդանի հավատով,
Որ ձեր ազնիվ տոհմը հավետ կփայլի
Վեհանձնության և քաջության զարդերով:

130 Վարքն ու բարքը նրան այնպես են օժտել,
Որ թեպետ և աշխարհ շեղվել է ճամփից,
Նա կընթանա շիտակ ճամփով իր ընտել»:

133 Եվ նա. «Նախքան հեռանալդ իմացիր.
Արևն յոթ հեղ չի հանգչելու իր մահճում,
Որտեղ Խոյը տարածել է ոտներն իր,

136 Երբ մեր մասին քո կարծիքը այդ ազնիվ
Քո գլխի մեջ ավելի պինդ կմեխվի,
Քան մարդկային ամեն զրույց ու հաշիվ,

139 Եթե ընթացքն իրադրության չփոխվի»:

ԵՐԳ ԻՆՆԵՐՈՐԴ

Վաղնջական Դիթոնի հարճը չքնաղ,
Դուրս պրծնելով իր սիրածի թևերից,
Պայծառացնում էր արևելքը խաղաղ։

4 Ծողշողում էր նրա ճակատն ակներով,
Շարված ձևովն այն կենդանու տառնարյուն,
Որը մարդուն հարվածում է ագիով.

7 Եվ Գիշերը, բարձրանալով դեպի վեր,
Հորիզոնում ընթացել էր երկու քայլ,
Իսկ երրորդին խոնարհում էր իր թևերն.

10 Երբ ես, որ դեռ մարմնով էի հողածին,
Քնից հաղթված ընկա վրան սեզերի,
Որտեղ նստած էինք հինգը միասին։

13 Այն ժամին, երբ այգը մոտ է բացվելուն,
Ծիծեռնակը տխուր երգեր է ծվում,
Գուցե իր հին դժբախտությունն հիշելուն,

16 Երբ մեր միտքը, ազատվելով առօրյա
Իր խոհերից և մարմնական պետքերից,
Դառնում է մի բախտագուշակ համարյա,

19 Երազիս մեջ կարծես տեսա երկնքում
Ոսկեփետուր, սավառնաթև մի արծիվ,
Որ իջնելու, որս անելու էր միտում։

22 Ինձ թվաց թե այնտեղ էի, ուր հանկարծ
Գանիմեդին առևանգեց մի արծիվ
Եվ բարձրացրեց նրան ատյանն երկնակաց։

25 Ես խորհեցի. «Գուցե միայն այդտեղ նա
Սովորություն ունի որսի իջնելու.
Գուցե այլուր որս անելու չի գնա»։

28 Բայց նա մի քիչ պտտվելով իմ վերև,
Վար սլացավ շանթի նման ահարկու
Եվ ինձ տարավ հրեղեն գունդը մինչև:

31 Այնտեղ ես և նա այրվեցինք միասին.
Եվ տեսլական հուրը այնպես ինձ կիզեց,
Որ իմ քունը և երազը կասեցին:

34 Այնպես ինչպես Աքիլլեսը սթափված՝
Պտտացրեց շուրջը աչքերը շլմոր,
Չիմանալով թե որտեղ էր ինքն ընկած,

37 Երբ Քիրոնից վերցնելով մայրը նրան՝
Քնաթաթախ տեղափոխեց Սքիրոս,
Ուրկից նրան հետո հույները տարան.

40 Այսպես էի, երբ զարթնեցի իմ քնից,
Գունաթափված հար և նման այն մարդու,
Ում արյունը սառ է կապում սոսկումից:

43 Կողքիս միայն Վիրգիլիոսն էր մնացել.
Արևն արդեն երկու ժամ է ծագել էր,
Իսկ իմ դեմքը դեպի բաց ծով էր դարձել:

46 «Մի՛ վախենա,— ինձ ասաց տերն իմ արգո,—
Վստահ եղիր, մենք եկել ենք տեղը բուն.
Թող չպակսի, այլ թող աճի ուժը քո:

49 Ահա արդեն մենք հասել ենք Քավարան.
Ահա նրան շրջապատող դարը թեք.
Ահա մուտքը, որ խրամի է նման:

52 Լուսադեմին, որ նախորդում է օրվան,
Երբ դու հոգով քնել էիր խորապես
Այն ծաղկազարդ հովիտի մեջ հոտևան,

55 Մի կին եկավ և ասաց. «Ես Լուչիան եմ.
Այս քնածին թողեք տանեմ ես ինձ հետ.
Այսպես պիտի նրա ճամփան հեշտացնեմ»:

58 Նա քեզ վերցրեց հոգիներից փառակից.
Եվ երբ արդեն բացվեց լույսը տվնջյան,
Քեզ փոխադրեց, ես էլ եկա ետևից:

61 Քեզ բերեց աստ և աչքերով իր չքնաղ
Ինձ ցույց տվեց Քավարանի մուտքը բաց.
Հուսկ չքացավ երազիդ հետ անհապաղ»:

64 Ինչպես նա, ով նախ լինում է վարանոտ,
Բայց իր անը վստահության է փոխում,
Երբ լինում է իրողությանը ծանոթ,

67 Այսպես եղա, ինձ պահելով անայլայլ.
Առաջնորդը այնժամ ելավ դարն ի վեր,
Ես էլ նրան հետևեցի քայլ առ քայլ:

70 Այժմ, ընթերցո՛ղ, բարձրացնում եմ նյութս համեստ.
Հետևաբար մի՛ զարմանար, եթե արդ
Իմ նոր նյութին ես ընձեռեմ նոր արվեստ:

73 Մենք մոտեցանք, և այնտեղ, ուր նախապես
Ինձ խրամ էր երևացել շատ հեռվից,
Ինչպես ճեղք, որ պատն անում է երկու կես,

76 Տեսա մի դուռ և տակն երեք բազրոտներ,
Մեկը մյուսից այլազանվող գույներով,
Եվ մի պահնորդ, որ ոչինչ չէր խոսում դեռ:

79 Երբ նայեցի քիչ ավելի մոտիկից,
Տեսա նրան նստած վերին բազրոտին,
Դեմքն այնպես վառ, որ շլացա դրանից:

82 Ձեռքին ուներ մերկացրած մի սուսեր,
Որ այնպես էր ցոլարձակում դեպի մեզ,
Որ աչքերս նրան ուղղելս ի զուր էր:

85 «Ի՞նչ եք ուզում, դուք այդտեղից ասացեք,—
Դիմեց նա մեզ:— Ո՞վ է բերել ձեզ այստեղ.
Նայեցեք որ այստեղ գալուց չտուժեք»:

88 «Երկնի մի կին այս բաներին իրազեկ,—
Պատասխանեց իմ առաջնորդը նրան,—
Նոր մեզ ասաց. «Դուռն այնտեղ է, գնացե՛ք»:

91 «Եվ նա էլ թող աջակցի ձեր քայլերին,
Շարունակեց բարապանը բարեկիրթ,—
Արդ մոտեցեք մեր սանդուղքի մատներին»:

94 Մենք մոտեցանք, աստիճանը առաջին
Ծերմակ, ողորկ մարմարից էր մաքրափայլ,
Ուր իմ դեմքը հայելացավ անդստին:

97 Երկրորդը, որ ուներ մթին ու գորշ գույն,
Կոշկոռոտուն ու հրախառնձ քարից էր,
Ճաքած լայնքով ու երկայնքով իր ողջույն:

100 Իսկ երրորդը, որ վերևում էր ընկած,
Պորփյուրից էր, սակայն այնպես վառ կարմիր,
Ինչպես արյունն երակներից նոր ժայթքած:

103 Իր ոտները սրա վրա էր դրած
Բարապանը՝ նստած դռան լայն շեմին,
Որ կարծես թե ադամանդից էր կոռած:

106 Առաջնորդըս, իմ ցանկությամբ անձկակեզ,
Այդ սալերով ինձ բարձրացրեց, ասելով.
«Հեզիկ հայցիր, որ բաց անի դուռը քեզ»:

109 Ես, երկյուղած, սուրբ ոտներին նետվեցի.
Խնդրեցի, որ դուռը բանա գթությամբ,
Բայց նախ երեք անգամ կուրծքըս ծեծեցի:

112 Նա իմ ճակտին յոթը Մ-եր գծագրեց
Սուրի ծայրով և ասաց. «Երբ ներս մտնես,
Դու կջանաս քո այդ վերքերը մաքրել»:

115 Նրա հագած հանդերձն ուներ մոխրալի
Չոր հողի գույն, և հանդերձի ներքևից
Նա դուրս հանեց երկու տեսակ բանալի—

118 Մեկը ոսկե, իսկ մյուսը արծաթե:
Եվ այդ երկու բանալիքով նա բացավ
Դուռը այնպես, որ գոհ եղա ի սրտե:

121 «Երբ մեկը այս բանալիքից խաթարվի
Եվ փականքում չպտտվի այնքան լավ,—
Ասաց նա մեզ,— այս դուռը չի բաց արվի:

124 Մեկն ավելի թանկարժեք է ու հարգի.
Սակայն մյուսն էլ թեթք ու փորձ է պահանջում,
Քանզի նա է քանդում հանգույցը մեղքի:

127 Ինձ Պետրոսը դրանք հանձնեց, ասելով,
Որ չմերժեմ դուռը բանալ միշտ նրանց,
Որոնք այստեղ կգան անկեղծ զղջումով»:

130 Հուսկ հրելով փեղկերը սուրբ դպրպասի,
Ասաց. «Մտեք, բայց ձեզ հայտնեմ նախապես,
Որ ով շուտ գա ու ետ նայի՝ կարտաքսվի»:

133 Եվ ահա երբ նվիրական այն դռան
Հաստատակուռ և հնչական մետաղե
Փեղկերն իրենց ծղխնիների վրա դարձան,

136 Տարպեան ժայռը ոչ այնպես ուժգին ճռնչաց,
Երբ Մետելլոն նրա մոտքից հեռացվեց,
Որով պարպվեց գանձը այնտեղ պահպանված:

139 Երբ ներս մտա, լսեցի ձայնը թնդում
«Քեզ Աստուած գովաբանեմք» օրհներգի,
Որ երգվում էր ավաչներով թթթռում:

142 Իմ լսածը շատ նման էր այն երգին,
Որ երգվում է ձայնով կերկեր ու դողդոջ,
Ուղեկցությամբ երգեհոնի նվագին,

145 Որ բառերը մերթ լսվում են և մերթ ոչ:

ԵՐԳ ՏԱՄՆԵՐՈՐԴ

Երբ ներս մտանք շեմից դռան փրկության,
Որ սակավ է բացվում սիրուց ախտավոր,
Որ պատճառ է դառնում մարդկանց կորստյան,

Նա շխկոցով նորից փակվեց մեր ետև,
Եվ եթե ես ետ դառնալի նայելու,
Ի՞նչ չքմեղանք կունենայի արդարև:

7 Մենք բարձրացանք ժայռամիջյան մի անցքով,
Որի բարձրը պատերն երկու կողմերում
Ասես ծփում էին ամբողջ երկայնքով:

10 «Այստեղ պետք է լինենք ճկուն ու ճապուկ,—
Ասաց տերը,— որպեսզի մենք մոտենանք
Մերթ այս որմին, մերթ այն որմին խուսափուկ»:

13 Եվ դա այնքան մեր քայլերը համրացրեց,
Որ մենք դեռ այն արահետից դուրս չեկած՝
Լուսնի մահիկն իր տեղն հասավ ու հանգչեց:

16 Երբ մենք ազատ բացաստանը դուրս եկանք,
Անդ, ուր լեռը դեպի ետև է քաշվում,
Ես արդեն իսկ օգում էի հույժ խոնջանք.

19 Եվ երկուսս էլ, չիմանալով մեր ճամփան,
Կանգ առանք մի բոլորաձև հարթակում,
Որ անկուռ էր լեռնագոտու պես խոպան:

22 Այդ բոլորակն իր եզերքից արտաքին
Մինչև ոտքը դարավանդի բարձրաբերձ՝
Հավասար էր երեք մարմնի մարդկային.

25 Եվ իմ աչքը որքան հասնել կարող էր
Թե դեպի ձախ, թե դեպի աջ ուղղությամբ,
Բոլորակն այս ամենուր նույն լայնքն ուներ:

28 Սնդ դեռ մի քայլ առաջ չէինք գնացել,
Երբ դիտեցի, որ եզրապատը լեռան,
Որ, ուղղաձիգ, կարելի չէր մագլցել,

31 Մաքրամաքուր ու պաղպաջուն կճից էր,
Լի այնպիսի քանդակներով, որոնց մոտ
Պոլիկլետ չէ, բնությունն իսկ կզիջեր:

34 Հրեշտակը, որ երկիր իջավ ու բերավ
Երկար դարեր հայցված պատգամն հաշտության,
Որ մարդկության համար երկինքը բացավ,

37 Երևում էր այստեղ այնքան համոզկեր,
Այնքան ճշգրիտ ու կենդանի քանդակված,
Որ կարծես թե լիներ խոսուն մի պատկեր:

40 Կերդվեի, որ նա ասում էր **«Ողջույն քեզ»**,
- Դիմելով այն կույսին օրհնյալ ու խոնարհ,
Որ բաց արեց դուռը սիրո երկնակեզ:

43 Իսկ վերջինը քանդակի մեջ ասում էր՝
«Աւասիկ կամ աղախին Տեառն» այնքան պարզ,
Որքան մոմում դրոշմված մի պատկեր:

46 «Քո հայացքը լոկ մի տեղի մի՛ ուղղիր»—
Ասաց բարի վարպետը, որ կանգնած էր
Իմ այն կողմին, ուր մարդ ունի սիրտը իր:

49 Հայացքս այնժամ ես շեղեցի, և այն կողմ,
Ուր կանգնած էր առաջնորդը, ես տեսա
Կույս Մարիամի ետև ուրիշ մի դրոշմ,

52 Որ կուճի մեջ դրվագված էր հայտնապես.
Եվ Վիրգիլին շրջանցելով մոտեցա,
Որպեսզի այն ավելի լավ տեսնեմ ես:

55 Այդ քանդակը պատկերում էր ճշտորեն
Սուրբ տապանը քաշող սայլը եզներով,
Որ դեռ վախ է ազդում մարդուն անօրեն:

58 Սայլի մոտ մի երգչախումբ էր երևում,
Որի մասին աչքս ասում էր՝ «Երգում են»,
Իսկ ականջըս ասում էր՝ «Ոչ, չեն երգում»:

61 Նմանապես խունկի ծուխի մասին այն,
Որ իսկությամբ ներկայացված էր այնտեղ,
Քիթս ու աչքերս իրար չէին համաձայն:

64 Սուրբ տապանի առջևից էր ընթանում
Սաղմոսերգուն, կաքավելով կայթ ի կայթ,
Որ արքային ամենևին չէր սազում:

67 Ճիշտ դիմացը ապարանքի մի խոշոր
Պատուհանից Մեղքողն ապշած նայում էր,
Ինչպես մի կին ջղագրգիռ ու խոժոռ:

70 Այնուհետև կանգնած տեղը ես թողի,
Մոտից ուրիշ մի պատմություն տեսնելու,
Որ նշված էր հետսակողմում Մեղքողի:

73 Անդ նշված էր փառահեղ դեպքն Հռոմյան
Իշխանազնի, որի արարքը ազնիվ
Պատճառ դարձավ Գրիգորի հաղթության.

76 Տրայանոս կայսրի մասին եմ խոսում.
Նրա ձիու սանձի մոտ էր մի այրի,
Որ դառնալի արտասուքներ էր հոսում:

79 Շրջապատել էին կայսրին խուռն ու կուռ
Զիավորներ, որոնց գլխի վերևում
Ծփում էին արծիվները ոսկեհուռ:

82 Դժբախտ կինը կայսրին ասում էր կարծես.
«Լսիր, տեր իմ, սպանել են իմ որդուն,
Եվ դու պետք է դրա վրեժը լուծես»:

85 Կայսրը նրան. «Մինչև դարձը սպասիր»:
«Իսկ եթե, տեր, դու այլևս չդառնա՞ս»,—
Հարցրեց այրին անհամբեր ու վշտակիր:

88 Կայսրը նրան. «Պարտքըս հաջորդդս կանի»:
Այրին կայսեր. «Դա ի՞նչ օգուտ քեզ համար,
Զանց ես առնում քո անելիքը քանի»:

91 Կայսրը նրան. «Արդ ափոփվիր, ըստ որում
Պարտքըս պետք է ես կատարեմ չմեկնած:
Արդարությունն ու գութն են ինձ թելադրում»:

94 Նա, ում համար ոչինչ աննայտ չէ ու նոր,
Հեղինակն է պատկերների այս խոսուն,
Որ մեզ համար անգին են ու անսովոր:

97 Մինչ ես հրվում էի ի տես այս անգյուտ
Պատկերների՝ խոնարհության օրինակ,
Հեղինակված վարպետությամբ անստգյուտ,

100 Վարպետս հծծեց. «Տե՛ս այն կողմից գալիս են
Խուռն հոգիներ, դանդաղընթաց քայլերով.
Նրանք, անշուշտ, ելքի ուղին մեզ կասեն»:

103 Աչքերըս, որ շոյված էին տեսնելով
Քանդակներն այն նորագյուտ ու հանկուցիչ,
Առաջնորդիս կողմը դարձան շտապով:

106 Բայց, ընթերցո՛ղ, թող խոհերը քո բարի
Զվրդովվեն եղանակից այն, որով
Հատուցվում է Աստծուն պարտքը մեղքերի:

109 Նայիր ոչ թե տանջանքների ծանրության,
Այլ արդյունքին. դրանք շատ-շատ կտևեն
Մինչև օրը դատաստանի վերջնական:

112 «Վարպե՛տ, հեռվից շարժվողները դեպի մեզ,—
Ասացի ես,— չունեն մարդու կերպարանք.
Չգիտեմ, թե նրանք ինչ են իսկապես»:

115 Եվ նա. «Ծանրը տեսակն իրենց տանջանքի
Նրանց այնպես կրացրել է, որ մի պահ
Ես էլ ընկա անձկության մեջ վարանքի:

118 Սակայն նայիր ուշադրությամբ դու նրանց,
Որ գալիս են քարերի տակ ծանրաբեռ.
Տե՛ս ինչպես են ծեծում կրծքերը յուրյանց»:

121 Ո՛վ մեծամիտ քրիստոնեայքդ դժխեմ,
Դուք այնքան եք ձեր մտքերով կուրացած,
Որ չեք տեսնում ձեր քայլերը հետադեմ:

124 Դուք չգիտե՞ք, որ մենք որդեր ենք նսեմ,
Ծնված թիթեռն այն դառնալու թևավոր,
Որ թռչում է դեպի ատյանը վսեմ:

127 Ինչի՞ց եք դուք գոռոզանում ու փքվում.
Չէ՞ որ դուք դեռ միջատներ եք անկատար,
Ինչպես թրթուր, որ թերի է իր կազմում:

130 Ինչպես անդրին ձեղունին կամ տանիքին
Ծառայելու համար իբրև հենամույթ,
Կուրծքը ճկել՝ ճիգով հասցրել է ծնկին,

133 Պատճառելով տեսնողին ցավ իրական,
Թեպետև նա իրական չէ, այլ քանդակ,
Այսպես կքած էին մարդիկ վիսական:

136 Նրանք կքած էին ավել կամ պակաս,
Ըստ ծանրության իրենց բեռան չարչարող.
Իսկ նա, ով իր բեռն էր կրում հազիվ հազ,

139 Հառաչում էր. «Ես այլևս չեմ կարող»:

ԵՐԳ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

«Ո՛վ հայր մեր, որ երկնքի մեջ ես անեղծ,
Ոչ փակվելու, այլ ավելի զեղելու
Սերը դ հանդեպ էակներիդ նախաստեղծ,

4 Գովյալ լինի քո զորությունն ու անունն
Ամենայնից և արժանին հատուցվի
Քո սիրույն և իմաստությանը անհուն:

7 Պարգևիր մեզ խաղաղությունդ երկնային,
Այլապես մենք այն չենք կարող ձեռք բերել
Համաբոլոր ջանադրությամբ մերային:

10 Հրեշտակները դ ինչպես իրենց կամքը հեզ
Զոհում են քեզ, օրհներգելով **«Ովսաննայ»**
Այսպես մարդիկ թող կամքն իրենց զոհեն քեզ:

13 Տուր մեզ այսօր հանապազորդ մանանան,
Առանց որի անապատում այս դժպին
Մենք չենք կարող մի քայլ առաջ ընթանալ:

16 Ինչպես բոլոր չարիքները մեր կրած
Ներում ենք մենք, դու ևս ո՛վ մարդասեր,
Թողություն տուր չարիքներին մեր գործած:

19 Մեր կորովը, որ դյուրաբեկ է այնքան,
Մի ենթարկիր հին ոսոխի փորձությանց,
Այլ պահպանիր արարքներից մեղմական:

22 Թանկագի՛ն Տեր, այս վերջին հայցը արդեն,
Մեզ համար չէ, զի պետք չունենք մենք դրան,
Այլ նրանց, որ դեռ աշխարհում ապրում են»:

25 Իրենց և մեզ համար այսպես հայցելով,
Նրանք գնում էին կքած բեռան տակ,
Առավել կամ նվազ տագնապ կրելով,

28 Ինչպիսին մարդ մղձավանջումն է կրում.
Եվ տքնությամբ պտտվելով լեռան շուրջ
Աշխարհային մուրն ու մրուրը մաքրում:

31 Եթե այսպես են մեզ համար հայցում անդ,
Ի՞նչ չեն կարող նրանց համար աստ անել
Նրանք, ովքեր բարեսպաշտ են մանավանդ:

34 Հարկ է նրանց օգնել, որ աղտն այսերկրյա
Ծուտ լվանան, որպեսզի ջինջ ու թեթև
Կարողանան ելնել երկինքն աստեղյա:

37 «Իցիվ թե ձեզ ողորմություն երկնային
Ծուտ թոթափի, որ կարենաք թևածել
Դեպի այնտեղ, ուր ձգտում եք անձկագին:

40 Ցույց տվեք մեզ աստ կարճ ուղին վերելքի.
Եվ եթե կան վերելակներ մեկից շատ,
Ցույց տվեք այն, որ նվազ է թեքակի.

43 Վասնզի սա, որ ուղեկցում է ինձ հար,
Մահկանացու մարմնի բեռան պատճառով
Ակամայից ծանր է քայլում ու դժվար»:

46 Այն խոսքերը, որոնք եղան պատասխան
Այս խոսքերին առաջնորդիս սիրելի,
Թե ում կողմից էին՝ հայտնի մեզ չեղան.

49 Բայց մեզ ասվեց. «Եկեք մեզ հետ աջ կողմով,
Եվ քիչ անդին դուք կգտնեք մի շավիղ,
Որով ելնել կարելի է և մարմնով:

52 Եվ եթե ես չլինեի կռացած
Այս բեռան տակ, որ մեզ գլուխս է կքում,
Եվ հարկադրում ինձ պահելու դեմքս ցած,

55 Կնայեի դրան, որ ողջ է դեռևս,
Տեսնելու՝ թե ես ճանաչո՞ւմ եմ նրան.
Իմ տանջանքով շարժեի գութը, թերևս:

58 Ես լատին եմ, որդին մի մեծ տոսկանի,
Որ կոչվում է Ալդոբրանդեսկ Գուլլելմո:
Գուցե գիտեք, որ սա մարդ էր անվանի:

61 Նախնյացս անունն ու գործերը հանրաղուր
Ինձ դարձրին այն աստիճան մեծամիտ,
Որ մոռնալով, թե ունենք մայր ընդհանուր,

64 Սկսեցի արհամարհել ես մարդկանց,
Որից մեռա, ինչպես գիտեն սենացիք,
Ինչպես գիտե Կամպանյատում ամեն ոք:

67 Ես Օմբերտն եմ, գոռոզությունն ինձ միայն
Չկործանեց. նա վնաս ու պատուհաս
Բերեց նաև ազգատոհմին իմ համայն:

70 Ախտիս համար հարկ է, որ բեռն այս տանեմ,
Մինչև Աստծուն գոհացում տամ, զի ինչ, որ
Չարի կյանքում, պետք է այստեղ ես անեմ»:

73 Ես, լսելիս, հակել էի դեմքս վար.
Նրանցից մին-ոչ նա, որը խոսում էր—
Գալարվելով իր բեռան տակ ծանրաստվար,

76 Դժվարությամբ աչքերն հառեց իմ վրա.
Նա նայեց ինձ, ճանաչեց ու կանչեց ինձ,
Որ նրանց պես կքել էի համարյա:

79 Եվ ես. «Կարծեմ քո անունն է Օդերիզ.
Դու պատիվն ես Գուբբիոյի և արվեստի,
Որ կոչվում է մանրանկար ի Փարիզ»:

82 Եվ նա. «Եղբա՛յր, բոլոնյացի Ֆրանկոն
Ինձնից վառ ու գունագեղ է նկարում.
Արդ նրանն է ամեն պատիվ, բրաբիոն:

85 Ողջությանը այսպես անկեղծ, այսպես ճիշտ
Չէի խոսի այն մարմաջիս պատճառով
Առաջնության, որին սիրտս անձկաց միշտ:

88 Այս վեսության պատիժն այստեղ եմ կրում.
Եվ այստեղ էլ չէի լինի դեռ, եթե
Ժամանակին չզղջայի ես երկրում:

91 Ո՛վ ունայն փառք կարողության մարդկային.
Քո ծաղկումը ինչքան սակավ կտևեր,
Եթե անկման ժամանակներ չգային:

94 Չիմաբուեն իրեն մենակ էր կարծում
Նկարչության ասպարեզում, բայց Ջոտտոն
Նրա վրա արդեն ստվեր է գցում:

97 Այսպես զիջեց մեկ Գուիդոն մյուսին
Փառքը գրչի, և մի գուցե ծնվել է
Նա, ով պիտի բնաբարձի երկուսին:

100 Ոչ այլ ինչ է գոռ շունդը երկրային,
Եթե ոչ հով, որ փոխում է անունն իր,
Երբ փոխվում է ուղղությունը կողմնային:

103 Հազար տարի հետո համբավը կանցնի
Թե նրա, ով կվախճանվի վաղաժամ,
Թե նրա, ով ծեր հասակում կմեռնի:

106 Հավերժի մոտ դա ավելի կարճ է, քան
Ակնթարթը այն միջոցի մոտ, որում
Իր պտույտն է գործում երկինքն աստղական:

109 Նա, ով դանդաղ իմ առջևից է քայլում,
Մի ժամանակ թանդացնում էր Տոսկանան,
Իսկ այժմ հազիվ ակնարկվում է Սիենայում,

112 Որի տերն էր, երբ ջախջախվեց Ֆլորենտիան,
Որ հպարտ ու ազորեղ էր այն ատեն,
Ինչպես հիմա նկուն է ու անպիտան:

115 Վաղանցիկ է համբավն ինչպես խոտի գույն,
Եվ այն ուժը, որ ուռճացնում է նրան,
Նա էլ նրան դարձնում է գոս ու տմույն:

118 Եվ ես նրան. «Քո խոսքերը անձանձիր
Խոնարհություն ներարկեցին իմ սրտում.
Բայց ո՞վ է նա, որի մասին հիշեցիր»:

121 Պատասխանեց. «Է Սալվանի Պրովենցան.
Նա այստեղ է, որովհետև հավակնեց
Միահեծան կառավարել Սիենան:

124 Մեռած օրից կքած քայլում է այսպես.
Ահա այսպես հատուցում է պարտքը նա,
Ով իր կյանքում եղավ անչափ ժիտ ու վեհ»։

127 Եվ ես նրան. «Եթե հոգի մի բասիր
Չի զղջացել մինչ հետին պահը կյանքի,
Եվ պետք է անդ՝ լեռան ներքև սպասի—

130 Եթե նրան չօգնի աղոթքն օրհնընկալ—
Այնքան ատեն, որքան ապրեց աշխարհում,
Ինչպե՞ս սրան թույլատրվեց այստեղ գալ»։

133 «Երբ նա փառքի գագաթին էր գտնվում,—
Պատասխանեց Օդերիզին,— ինքնակամ
Գնաց մուրալ Սիենայի Կամպոյում.

136 Եվ բառնալու համար տագնապն ընկերոջ,
Որ կրում էր զնդանի մեջ Կարլոսի,
Նա դողդողաց նյարդերովը իր ամբողջ։

139 Ես գիտեմ, որ իմ այս խոսքը մութ է քեզ.
Բայց ոչ շատ անց քաղաքացիքդ անարդար
Այնպես կանեն, որ դու դա հեշտ կմեկնես։

142 Այս արարքով նա չմնաց անդ երկար»։

ԵՐԳ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Նման կքած երկու եզան լծակից
Ես գնացի այն հոգու հետ բեռնավոր,
Որքան թողեց իմ վարպետը սրտակից.

4 Բայց երբ ասաց՝ «Բաց թող նրան և անցիր.
Աստ հարկ է, որ ամեն մեկը սեփական
Առագաստով, թիով վարի նավակն իր»,

7 Ես իրանքս բոլորովին շտկեցի,
Ընթանալու համար ձևով բնական,
Թեև հոգով հեզ ու նկուն մնացի։

10 Քայլում էի, հետևելով անդեղն
Իմ վարպետի արագընթաց քայլերին,
Եվ երկուսով քայլում էինք մենք թեթև.

13 Նա ինձ ասաց. «Նայիր ձիրքն, ոտքիդ տակ,
Լավ է որ դու սալահատակը դիտես,
Որ հեշտանա ճանապարհդ դժնդակ»։

16 Ինչպես ի հուշ հանգուցելոց բախտավոր,
Նրանց շիրմին դրվագվում են պատկերներ,
Որ նշում են նրանց կյանքը անցավոր,

19 Եվ որ հանախ արցունքներով են օծվում,
Դառն ու տխուր հիշատակաց զարթնումից,
Որից միայն զգայուններն են հուզվում,

22 Այսպես տեսա պատկերներով զարդարված,
Բայց հորինված չնաշխարհիկ արվեստով,
Ամբողջ ուղին դարափից դուրս կարկառված։

25 Տեսնում էի Արուսյակին փառահեղ,
Որ երկնքից շանթի նման սրընթաց
Գահավիժեց դեպի անդունդը ահեղ։

28 Տեսնում էի Բրիարեյին մեծաստվար,
Որ երկնային սուր սլաքով հարվածված՝
Թավալված էր գետնին մարմնով ծանր ու սառ։

31 Տեսնում էի Տիմբրին, Մարսին, Պալլասին,
Որոնք զինված ու հոր շուրջը հավաքված՝
Նայում էին Հսկաների մասունքին։

34 Տեսնում էի և Նեմբրոթին ի կսկիծ,
Որ նայում էր, մեծ կառույցի տակ ընտած,
Սենաարի գոռոզներին գործակից։

37 Ո՛վ Նիոբե, ինչքան տխուր հայացքով
Նայում էիր դու՝ պատկերված նույն տեղում,
Քո յոթ և յոթ անշնչացած որդվոց քով:

40 Ո՛վ Սավուղ, դու սրիդ վրա կեռաձև
Ինչպես ընկել էիր սարում Գեղբուե,
Ուր այլևս ոչ շաղ իջավ, ոչ անձրև:

43 Ո՛վ Արաքնե, տեսնում էի, թե ինչպես
Դարձել էիր կիսով չափ սարդ ոստայնում,
Որի հյուսվածքն աղետաբեր եղավ քեզ:

46 Ո՛վ Ռոբովամ, այստեղ արդեն քո դեմքով
Ձես սպառնում, այլ դու ինքդդ սարսափած
Խուճապահար խույս ես տալիս քո կառքով:

49 Ցույց էր տալիս դեռ հատակը սալարկված,
Թե Ալկմեոն մորն ինչպես թանկ նստեցրեց
Ձարաբաստիկ զարդը՝ նրան ընծայված:

52 Ցույց էր տալիս, թե որդիները ինչպես
Սպանեցին Սենեքերիմ արքային,
Երբ մեհյանում նա աղոթում էր կարծես:

55 Ցույց էր տալիս, թե Տամիրիսը ինչպես
Նախանձի գործեց, ապա ասաց Կյուրոսին.
«Արյան էիր ծարավ, խմիր լիապես»:

58 Ցույց էր տալիս, թե ինչպես զորքն ասորոց
Փախուստ տվեց, երբ Հոլոփեռնն սպանվեց,
Թողնելով իր անդամները բազմախոց:

61 Տեսնում էի Տրոյան եղած քարուքանդ.
Ով Իլիոն, ինչպես պատկերդ հայտնապես
Ցույց էր տալիս վիճակդ անկյալ ու վկանդ:

64 Արդ որպիսի՛ վարպետի դուր կամ վրձին
Կենդանացրեց աստ այնպիսի պատկերներ,
Որ կզմայլվեր նույնիսկ հանճարը նրբին:

67 Ասես ողջը ողջ էր, մեռածը՝ մեռած,
Ոչ ոք ինձնից լավագույն բան չտեսավ
Քան այն, ինչ ես տեսա այստեղ պատկերված։

70 Արդ սոնքացեք ձեր ընթացքով սիգաձեմ,
Եվայի զարմ, և մի թեքվեք տեսնելու,
Թե ուր է ձեզ տանում հակումը դժիմեմ։

73 Մենք լեռան շուրջ քայլել էինք ավելի
Եվ գործադրել ավելի շատ ժամանակ,
Քան խորասույզ մտքիս եղավ զգալի,

76 Երբ վարպետը, որ ռահվիրաս էր սթափ,
Հանկարծ ասաց. «Գլուխդ վեր բարձրացրու.
Ժամանակն է ընթանալու հապշտապ։

79 Տես մի հրեշտակ արդեն մեզ է մոտենում.
Տես վեցերորդ սպասուհին արևի
Ավարտել է պաշտոնն ու ետ է դառնում։

82 Այժմ ընդունիր մի երևույթ հարգալից,
Որպեսզի նա հոժարի վեր ճամփել մեզ.
Մտածիր, որ այսօրն ետ չի գա նորից»։

85 Ես ժամանակ չվատնելու իր ազդին
Սովոր էի, այնպես որ այս հարցի շուրջ
Իր խոսքը չէր կարող մնալ ինձ մթին։

88 Մեզ մոտեցավ չքնաղ էակն երկնային,
Ճերմակ հագած և դեմքն այնպես վառվռուն,
Որ շողում էր առտոի նման այգային։

91 Բազուկներն ու թևերը նա բաց արավ.
Ասաց. Եկեք, առտոիճանները մոտ են,
Այսուհետև բարձրանալու եք դյուրավ։

94 Շատ քչերն են պատասխանում այս կոչին.
Ով ցեղ մարդկան՝ ծնված վերև թռչելու,
Ինչո՞ւ ես դու գայթում հովից իսկ չնչին»։

97 Մեզ տարավ անդ, ուր լեռն ուներ կտրվածք.
Անդ թևերով նա հարվածեց իմ ճակտին
Եվ ինձ մաղթեց բարեհաջող մի գնացք:

100 Ինչպես երբ ելնենք բլրան բարձունքին,
Ուր տաճարը Ռուբակոնտի կամուրջից
Իշխում է լավ կառավարված քաղաքին,

103 Դյուրացած ենք գտնում ուղին վերելքի
Մի սանդուղքով, որ պատրաստվեց այն ատեն,
Երբ դեռ զեղծում չկար հաշվի, կշեռքի,

106 Այսպես այստեղ վերելակը զառիթափ
Հեշտացած էր մի սանդուղքի շնորհիվ.
Բայց այդ անցքը նեղ ու անձուկ էր անչափ:

109 Մինչ սկսանք ելնել անցքով մատչելի,
«Օ՜, երանի,— երգվեց,— հոգով աղքատաց»
Այնպես անուշ, որ ասել չէր կարելի:

112 Ա՛հ որքա՛ն են անցուղիները տարբեր
Դժոխքում և Քավարանում. այստեղ քեզ
Ուղեկցում են երգեր, այնտեղ սուր ողբեր:

115 Երբ մենք արդեն ելնում էինք սանդուղքով,
Ես ավելի թեթև էի ինձ զգում,
Քան երբ քայլում էի ցածի հարթակով:

118 Եվ ես. «Վարպե՛տ, ասա, ի՞նչ բեռ, ծանրություն
Ընկավ ինձնից, այնպես որ ես գնալիս
Համարյա թե է՛լ չեմ զգում հոգնություն:

121 Պատասխանեց. «Մ-երը, որ տակավին
Աղոտ կերպով մնացել են ճակատիդ,
Երբ վերանան այն մեկի պես լիովին,

124 Ոտներդ այնպես պիտի կամքիդ ենթարկվեն,
Որ ոչ միայն պիտի չզգան հոգնություն,
Այլ աշխույժով պիտի վերև երագեն»:

127 Եվ, ինչպես նա, ով վրան իր մազերի
Ինչ որ բան է կրում առանց գիտնալու,
Ու տեսնելով հայացքները մյուսների,

130 Այդ ստուգում ու ճշտում է մատներով,
Ե՛վ փնտրում է, և՛ գտնում է, իր ձեռամբ
Անելով այն, ինչ չի կարող աչքերով,—

133 Այսպես և ես, մատներս լայն բաց արած,
Ընդամենը վեց տառ գտա ճակտիս սեղմ,
Ուր բարապանն իր սրով էր նշագրած.

136 Դիտելով այդ՝ առաջնորդս ժպտաց մեղմ։

ԵՐԳ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

Հասել էինք արդեն ծայրը սանդուղի,
Ուր հատվում է երկրորդ անգամ լեռը ձիգ,
Որ մաքրում է մեղքի հետքերն ելնողի.

4 Առաջինի նման մի այլ բոլորակ
Լեռան կողը շրջապատում է այստեղ,
Բայց թեքվածքն իր նվազ լայն է և արձակ։

7 Այստեղ չկար ոչ մի պատկեր կամ քանդակ.
Իսկ զառիթափն ու ճանապարհն հարթ ու մերկ
Գորշ, մղտագույն քարից էին բովանդակ։

10 «Եթե ճամփան հարցընելու համար մենք
Աստ սպասենք,— խոսքը ուղղեց վարպետս ինձ,—
Շատ կուշանանք, ընտրությունը շուտ անենք»։

18 Ապա նայեց դեպի արևն հոգեհաճ,
Եվ աջ ոտքը դարձրած առանցք հատակին՝
Իր ձախ ոտքը պտտացրեց դեպի աջ։

16 «Օ՛ քաղցը լույս, քեզ վստահած եմ մտնում
Այս նոր ճամփան,— ասում էր նա։— Վարիր մեզ,
Ինչպես հարկ է վարել այս նոր ոլորտում։

19 Դու ես երկրի լուսատուն ու ջերմատուն.
Եվ եթե մենք այլ ոահվիրա չունենանք,
Քո շողերը մեզ պետք է տան ուղղություն»։

22 Որքան երկրում մարդ հաշվում է մեկ մղոն,
Այնքան առաջ էինք շարժվել մենք արդեն
Այն եռանդով, որ մեզ տալիս էր մղոն,

25 Երբ օդի մեջ թռչող ձայներ լսեցինք
Անհերևույթ ոգիներից արձակված,
Որ կոչ էին անում սիրո գեղեցիկ։

28 Ձայնն առաջին, որ մոտեցավ թռչելով,
Բարձրաբարբաո գոչեց՝ **«գինի ոչ ունին»,**
Ու մեր ետև անցավ նույնը կրկնելով։

31 Եվ չէր մարել դեռ այն ձայնը օդաչու,
Մի ուրիշը «Ես եմ Օրեստը» գոչեց,
Ու հեռացավ դարձյալ առանց կանգնելու։

34 «Ի՞նչ ձայներ են սրանք, հա՛յր իմ»— հարցրի ես,
Երբ նույն պահին մի ուրիշ ձայն բարբառեց.
«Սիրեցեք դուք ձեր թշնամուն հեզապես»։

37 Վարպետս ասաց. «Այս ոլորտում ծանրալուծ
Մտրակվում է, քավվում մեղքը նախանձի,
Եվ մտրակի թելերն հյուսված են սիրուց։

40 Սանձը պետք է լինի ներհակ բնության.
Ես կարծում եմ դու ինքդ էլ այդ կիմանաս,
Երբոր հասնես տեղը մեղքի թողության։

43 Բայց հայացքդ հառիր օդով մեղմագին
Եվ մեր դիմաց դու կտեսնես հոգիներ,
Նստած ընդհուպ քարաժայռի երկայնքին»։

46 Այն ժամանակ ես աչքերս լայն բացած,
Նայեցի և տեսա մի խումբ ստվերներ,
Խարազնագույն վերարկուներ զգեցած։

49 Եվ երբ մի քիչ առաջացանք համարձակ,
Ես լսեցի «Մարիամ, Պետրոս, Միքայել
Եվ այլ սրբեր, աղոթեցեք մեզ համար»։

52 Չեմ կարծում, որ լինի երկրի մեջ մի մարդ
Այնքան անգութ, որ չհուզվի այն տխուր
Տեսարանի առջև, որ ես տեսա արդ։

55 Երբ բավական ես մոտեցա այն հոգվոց
Եվ պարզ տեսա նրանց տեսքը ողբալի,
Արտասվեցի, սիրտս հուզված ի խորոց։

58 Նրանք կոպիտ քուրձով էին ծածկված.
Մեկը մյուսի ուսի վրա էր հենվել,
Եվ բոլորն էլ ժայռին էին կոթնած։

61 Այսպես կույրերն աղքատ՝ տոնի օրերին
Հավաքվում են ժամի առջև մուրալու,
Գլուխներն իրենց հենելով մեկը մյուսին,

64 Որ անցորդի գութը շարժեն ավելի,
Ոչ թե իրենց ողորմաձայն խոսքերով,
Այլև տեսքով, որ նվազ չէ խղճալի։

67 Ինչպես կույրին լույսն արևի չի օգնի,
Այսպես այստեղ ստվերներին հավաքված
Չի շնորհվի առատաբաշխ լույսն երկնի։

70 Կարված էին նրանց կոպերը բոլոր
Երկաթ թելով, ինչպես վայրի բազեին
Նույնն է արվում, երբ նա նայում է խոլոր։

73 Ինձ թվում է, որ կլիներ վատություն
Տեսնել նրանց և չխոսել նրանց հետ,
Ուստի դարձա իմ վարպետին իմաստուն։

76 Տեսնելով որ ես ունեի մտմտուք,
Նա ինձ ասաց, չսպասելով իմ հարցին.
«Խոսիր, սակայն խոսիր հակիրճ ու կտրուկ»:

79 Վիրգիլիոսն ինձ ուղեկցում էր այն կողմով
Բոլորակի, ուր կարելի էր ընկնել,
Չի այդ կողմը եզրափակված չէր որմով:

82 Մյուս կողմս էին ստվերները այնտեղի,
Որոնց ամուր կերպով կարված աչքերից
Կաթում էին արտասուքներ դառնաղի:

85 Ես դարձա ու նրանց այսպես ասացի.
«Ո՛վ էակներ, որ վստահ եք տեսնելու
Լույսը վերին, միակ հոգը ձեր իղձի,

88 Իցիվ երկնի շնորհն շտապ լվանար
Ձեր խիղճն ամեն արատներից և ձեր մեջ
Մեղքի ոչ մի հիշողություն չմնար.

91 Ասացեք ինձ, ես շատ ուրախ կլինեմ,
Այստեղ ձեր մեջ լատին հոգի կա՞ արդյոք.
Գիտնալով այդ՝ գուցե նրան ես օգնեմ»:

94 «Մենք բոլորս հավերժական քաղաքի
Բնակիչ ենք դարձել այստեղ, եղբա՛յր իմ,
Կուզես ասել հայրենակից ուղղակի»:

97 Այս խոսքերը մի քիչ հեռվից ինձ եկան,
Եվ որպեսզի այդ ձայնը լավ լսեի,
Ես շարժվեցի ու մոտեցա բավական:

100 Ի մեջ այլոց տեսա մեկին այնտեղ ես,
Որ նստել էր սպասողի նմանակ
Եվ կզակը բարձրացրել էր կույրի պես:

103 «Օ՜ դու հոգի, որ քո հանցանքն ես քավում,—
Ասացի ես,— եթե խոսողը դու ես,
Որտեղի՞ց ես և ինչպե՞ս ես դու կոչվում»:

106 «Սիենայից եմ,— պատասխանեց նա այնժամ,—
Եվ սրանց հետ լալով մեղքերս եմ քավում,
Որ ըստ կարի շուտով երկինք բարձրանամ։

109 Խելոք չեղա, թեև Սապիա կոչվեցի.
Չի հրճվեցի դժբախտությամբ ես այլոց
Ավելի քան հաջողությամբ իմ գործի։

112 Եվ որպեսզի դու հավատաս իմ խոսքիս,
Լսիր, թե ես ինչպես եղա խոլամիտ,
Երբ թեքվել էր արդեն աղեղն հասակիս։

115 Իմ երկրացիք կռվում էին Կոլլեռում
Թշնամու դեմ, և ես աղոթք արի, որ
Պարտվեն նրանք, զի այդ էի կամենում։

118 Այնտեղ նրանք պարտըվեցին ու փախան.
Ես տեսնելով փախն ու խուճապը նրանց՝
Զգացի մի ուրախություն աննման.

121 Եվ ուղղելով ժպիրն դեմքըս առ Աստված,
Ես գոչեցի. «Չեմ վախենում է՛լ քեզնից»,—
Ինչպես ծվաց սարյակն օդում մեղմացած։

124 Ես ուզեցի կյանքիս վերջին վայրկյանին
Աստուծո հետ հաշտվել և իմ զղջումով
Պարտքըս այստեղ չէր նվազի տակավին,

127 Եթե Պիեր Պետտինայոն բարեգութ
Ինձ չհիշեր աղոթքներում ջերմեռանդ
Եվ չհոգար իմ փրկության համար զուտ։

130 Բայց ո՞վ ես դու, որ մեր մասին ես հարցնում.
Երևում է քո աչքերը փակված չեն,
Եվ կենդանի մարդու նման ես խոսում»։

133 Եվ ես. «Այստեղ իմ աչքերն էլ կփակվեն,
Բայց ոչ երկար, զի մեղքերն, որ գործեցի
Չարակնությամբ՝ աննշան ու սակավ են։

136 Ծատ ավելի երկնչում է իմ հոգին
Ստորակա տանջանքներից, և կարծես
Բեռան ճնշումն զգում եմ իմ կոնակին:

139 Եվ նա. «Եթե պետք է ընկնես այդ մարգում,
Ուրեմն ո՞վ քեզ բերեց այստեղ մեր միջև»:
Եվ ես. «Սա, որ ինձ հետ է և չի խոսում:

142 Ես դեռ ողջ եմ, ուստի, հոգի բարեբաստ,
Խնդրիր ինձնից, ինչ ես ուզում, որ անեմ
Վերադարձիս քո փրկության ի նպաստ»:

145 «Օ՜,— գոչեց նա,— լսածս այնքան է նոր բան,
Որ նշան է, թե քեզ սիրում է Աստված.
Մերթ օգնիր ինձ աղոթքներովդ օրհնաբան:

148 Հայցում եմ քեզ հանուն իղձիդ մեծագույն,
Որ եթե դու վերադառնաս Տոսկանա,
Մերոնց պատմիր իմ վիճակի մասին սույն:

152 Դու կտեսնես նրանց մարդկանց մեջ ունայն,
Որ հույս ունեն ձեռք բերելու Տալմոնեն,
Բայց զուր, ինչպես զուր են փնտրում Դիանան,

154 Որի համար բանողները կտուժեն»:

ԵՐԳ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ

«Ո՞վ է սա, որ կապանքներից մարմնական
Դեռ չազատված՝ շրջագայում է այստեղ
Եվ բաց ու խուփ անում աչքերն ինքնակամ»:

4 «Ես չգիտեմ, բայց գիտեմ որ մենակ չէ.
Ինքդդ հարցրու, դու ավելի մոտիկ ես.
Միայն հետը վայելչությամբ բանակցե»:

7 Այսպես երկու հոգի, հակված մեկ մեկի,
Իմ աչ կողմում խոսում էին իմ մասին,
Ապա դեմքերն ինձ դուղեցին շեշտակի:

10 Մեկն ինձ ասաց. «Ո՛վ հոգի, որ չվում ես
Դեպի երկինք դեռ մարմնիդ մեջ ներփակված,
Բարեհաճիր սփոփել և ասել մեզ՝

13 Ո՞րտեղից ես և ո՞վ ես դու իսկապես.
Քո գալն այստեղ այնքան է մեզ զարմացնում,
Ինչքան մի բան չպատահած նախապես»:

16 Եվ ես նրան. «Տոսկանայում կա մի գետ,
Որ ծագում է Ֆալտերոնից և անցնում
Ավելի քան հարյուր մղոն անջրպետ:

19 Այս մարմինը այդ ափերից եմ բերում.
Թե ով եմ ես՝ ասելն իզուր կլինի,
Չի անունը շատ չի հնչում դեռ երկրում»:

22 Եվ այնժամ նա այսպես տվեց պատասխան.
«Եթե միտքը քո միտքը լավ հասկացավ,
Առնո գետն ես դու ակնարկում անպայման»:

25 Եվ մյուսն ասաց նրան. «Ինչո՞ւ ծածկեց նա
Գետի անունն, ինչպես անում են մարդիկ,
Երբ խոսում են բանի մասին մծղնյա»:

28 Եվ այն հոգին, որին տրվեց այսպես հարց,
Պատասխանեց. «Չգիտեմ, բայց տեղին է,
Որ անունն այդ կորչի իսպառ ու անդարձ.

31 Չի իր ակից (ուր լեռնապարն ահռելի,
Որից վաղուց անջատվել է Պելորոն,
Բարձրանում է այլ տեղերից ավելի)

34 Մինչև այնտեղ, ուր իր հոսանքն է տանում,
Լրացնելու գոլորշիները ծովի,
Ուրկից գետերն իրենց ջուրն են ստանում,

37 Բոլոր մարդիկ խորշում են լավ արարքից,
Ինչպես օձից. դա կամ տեղից է դժբախտ,
Կամ տեղացոց հոռի վարքից ու բարքից։

40 Եվ այնքան են իրենց բնույթը փոխել
Բնակիչներն այդ գետահովտի չարաբաստ,
Որ կարծես թե նրանց Կիրկեն է սնել։

43 Գետն իր հոսքով նախ գնում է զազրոտի
Խոզերի մեջ, որ ավելի են արժան
Խոզկաղնի, քան մարդուն վայել սնունդի։

46 Ապա գտնում է նա շներ վայրահաչ,
Որ ոռնում են իրենց ուժից ավելի,
Եվ նրանցից խրտչած՝ թեքվում է դեպ աջ։

49 Իջնելով ու լայնանալով մի քիչ դեռ՝
Անիծապարտ ու տարաբախտ գետը այն
Հանդիպում է ոչ թե շներ, այլ գայլեր։

52 Եվ, վերջապես, կիրճերի մեջ հովունի
Նա գտնում է շատ խորամանկ աղվեսներ,
Որոնք ոչ մի ծուղակի մեջ չեն ընկնի։

55 Դեռ կխոսեմ, քանի մտիկ ես անում,
Եվ սրան էլ լավ կլինի գիտնալ, թե
Ճշմարտությանն ոգին ինչ է ինձ հայտնում։

58 Տեսնում եմ, թե ինչպես զարմիկդ հարազատ
Գետի ափին հալածում է գայլերին
Եվ ամենքին անաբեկում է զատ-զատ։

61 Նրանց միսը ողջ-ողջ ծախու է հանում.
Նա մորթում է նրանց իբրև ծեր գրաստ.
Այլոց կյանքից, իրեն պատվից է զրկում։

64 Արյամբ արբած՝ նա սփռում է մահ, ավեր,
Եվ այդ վայրը հազար տարուց չի գտնի
Իր երբեմնի ծաղկուն վիճակը վավեր»։

Ինչպես նա, ով լսելով որ լուր մի դժնյա,
Դիմափոխվում ու այլայլվում է համակ,
Որտեղից էլ թեկուզ վտանգն սպառնա,

70 Այսպես մյուսը, որ լսում էր ուշիուշ,
Վրդովմունքով ու տխրությամբ համակվեց,
Երբ հասկացավ այդ խոսքերը չարագուժ։

73 Մեկի խոսքերն ու մյուսի դեմքը հուզված
Ինձ դրդեցին գիտնալ նրանց անուններն.
Եվ այդ հարցրի աղերսանքով երկյուղած։

76 Եվ նույն հոգին պատասխանեց ինձ այսպես.
«Դու ուզում ես, որ իմ անունը հայտնեմ,
Մինչդեռ քոնը դու չես ուզում հայտնել մեզ։

79 Բայց քանի որ դու այստեղ ես ժամանել,
Ես չեմ կարող քո խնդիրքը զլանալ.
Գիտցիր, որ ես Գուիդո դել Դուկան եմ։

82 Արյունս այնքան բորբոքվում էր նախանձով,
Որ եթե ես մեկին ուրախ տեսնեի,
Կպատեր իմ դեմքը մուայլ թախիծով։

85 Արդ քաղում եմ, ինչ որ ինքս եմ սերմանել.
Ո՛վ մարդկանց ցեղ, ինչո՞ւ ձգտում ես նրան,
Ինչ չես կարող ուրիշի հետ բաժանել։

88 Սա Ռինիերն է, փառքն ու պարծանքը իրոք
Կալբոլենց տան, արժանիքները որի
Չեն պահպանել ժառանգորդները նորոգ։

91 Արդ ոչ միայն նրա տոհմն է մերկացած
— Միջև Պոյի, լեռան, ծովի, Ռենոյի—
Իր ձիրքերից, և բարքերով մեղկացած։

94 Մոլախոտերն այնտեղ այնքան են աճել,
Որ ինչքան էլ այդ շրջանը մշակվի,
Դրանք այլևս անհնար է անճիտել։

97 Ո՞ւր է Լիցիոն, ո՞ւր՝ Արրիգո Մանարդին,
Պիեր Տրավերսարն ու Գուիդո դի Կարպինյան,
Ո՛վ խորթացած ռոմանյացիքըդ արդի։

100 Ե՞րբ մի Ֆաբրո պիտի ծնի Բոլոնյան,
Ե՞րբ Ֆայենցան՝ մի Բեռնարդին դի Ֆոսկո—
Ազնիվ մի մարդ սերած զարմից ասնշան։

103 Ո՛վ տոսկանցի այժմ էլ ողբում եմ ես դեռ,
Երբ հիշում եմ Գուիդո դա Պրատային
Եվ Ուգոլին դ՝ Ացցոյին, որ մեզ հետ էր.

106 Ֆեդերիկո Տինյոզոյին հարազատ,
Տրավերսար ու Անաստաջի տոհմերին
(Երկու տոհմեր, որ չունեցան պայազատ).

109 Արանց, կանանց և նրանց փույթը տածած
Ասպետական մարտերին ու բարքերին,
Մինչ սրտերը այժմ այնքան են ժանտացած։

112 Ո՛վ Բերտինորո, էլ ինչո՞ւ չես չքանում։
Երբ չվել են քո տոհմիկները բոլոր,
Որ չաղարտվեն քո չարաշուք գեհյանում։

115 Լավ է, որ է Բանյակավալն անսերունդ,
Եվ վատ է որ Կաստրոկարոն ու Կոնիոն
Դեռ սերում են կոմսերի նոր-նոր ծնունդ։

118 Լավ կլինեն Պագանիներն, երբ գնա
Նրանց դևը, բայց ոչ այնքան, որ իրենց
Համբավն ամեն խծբծանքից զերծ մնա։

121 Ո՛վ Ուգոլին դե՝ Ֆանտոլին անվանի,
Քո համբավը ապահով է, ըստ որում
Սերունդ չունես, որպեսզի այն մթագնի։

124 Բայց, տոսկանցի, Է՛լ հրաժեշտ դու մեզ տուր.
Այժմ ավելի ուզում եմ լալ, քան խոսել,
Այնքան հուզեց ինձ մեր զրույցը տխուր»:

127 Հոգիներն այն մեր քայլերը լսեցին,
Եվ մենք նրանց լռությունից հասկացանք,
Որ ուղիղ ու ճիշտ էր բռնած մեր ուղին:

130 Երբ մնացինք մենակ, առաջ շարժվելով,
Մի ձայն, նման շառաչյունին կայծակի,
Հանկարծ հնչեց մեր հանդիման, գոչելով.

133 «Ով ինձ գտնի, ուզում է ինձ սպանի».
Եվ չքացավ ինչպես ձայնը որոտման,
Որ անցնում է, պատռելով ամպը երկնի:

136 Հազիվ թե մենք դադարեցինք լսել այն,
Ահա ուրիշ մի շառաչյուն հետևեց,
Որ նախորդի նման հնչեց բարձրաձայն.

139 «Ես Ագլաուրն եմ, որ դարձա քարի փերթ»:
Այնժամ ահից քայլերս աջ կողմ ուղղեցի
Եվ բանաստեղծ առաջնորդիս կպա մերտ:

142 Ամեն մի ձայն օդում լռել էր արդեն:
Վարպետս ասաց. «Սրանք սանձերն են այն խիստ,
Որոնք մարդուն իր չափի մեջ կպահեն:

145 Բայց խայծն է ձեզ հրապուրում անդադար
Եվ ձեզ գցում թակարդը հին ոսոխի.
Ուստի զուր են նանձն ու կոչը ձեզ համար:

148 Ձեր շուրջ դարձող երկինքը ձեզ է կանչում.
Ցույց տալով ձեզ իր հմայքներն անսպառ,
Բայց ձեր աչքը միայն երկրին է կառչում:

151 Դրա համար ձեզ պատժում է Տերն արդար»:

Որքան միջոց հարկ է լինում անցնելու
Մշտահոլով գնդին՝ օրվա սկզբից
Մինչև երրորդ ժամվա վախճանն հասնելու,

4 Այնքան միջոց էր արևին մնացել
Դեռ անցնելու, որ ավարտեր ընթացքն իր:
Ատ երեկո և անդ Գիշեր էր դարձել:

7 Նրա շողերն ուղղված էին մեր դեմքին,
Չի լեռան շուրջ շարժվել էինք մենք այնքան,
Որ արևմուտք էինք գնում երկոքին,

10 Երբ զգացի, որ աչքերդս շլացան
Այդ շողերից ավելի վառ մի լույսից.
Եվ պատճառը չիմանալով զարմացա:

13 Ձեռքերս այնժամ դեպի հոնքերդս տարա
Եվ աչքերիս վերև հովար կազմեցի,
Մեղմացնելու համար լույսը հորդառատ:

16 Ինչպես ջրից կամ հայելուց տափարակ
Ցոլքն է ցայտում ընդդիմակաց ուղղությամբ,
Բարձրանալով և իջնելով շատ արագ,

19 Եվ հավասար տարածություն անցնելիս
Քարի անկման զուգահեռ գիծ է կազմում,
Ինչպես փորձն ու գիտությունն են ցույց տալիս,

22 Այսպես ահա անդրադարձված մի վառ լույս
Զարկեց դեմքիս հանդիպակաց անկյունից,
Որից աչքերս անմիջապես տվին խույս:

25 «Այդ ի՞նչ լույս է, ասա, հայր իմ անձկալի,—
Ասացի ես,— որ աչքերս է շլացնում,
Եվ որ կարծես դեպի մեր կողմ է գալիս»:

28 Պատասխանեց. «Մի զարմանա եթե քեզ
Ծլացնում է ընտանիքը երկնային.
Հրեշտակ է, որ գալիս է վեր ճամփել մեզ։

31 Նման բաներ տեսնելը քեզ շատ շուտով
Կպատճառի ոչ թե տանջանք, այլ բերկրանք,
Որքան զգալ կարող ես քո բնույթով»։

34 Երբ մոտեցավ հրեշտակը այն օրհնյալ,
Զվարթ ձայնով ասաց. «Ելեք այստեղից,
Վերելքն այստեղ նվազ է թեք, սեպացյալ»։

37 Մենք բարձրանում էինք արդեն այնտեղից,
Երբ «Երանի ողորմածաց», «Յանձացէք»
Օրհներգերը հնչեցին մեր ետևից։

40 Վարպետս ու ես ելնում էինք միայնակ,
Եվ այնժամ ես մտածեցի գնալիս
Օգուտ քաղել իր խոսքերից խոհունակ։

43 Եվ ես դարձա նրան այսպես հարցնելով.
«Ի՞նչ կամեցավ ասել հոգին Ռոմանոյ
Անբաժնելի բարյաց մասին հիշելով»։

46 Վարպետս ասաց. «Հետևանքն իր մոլության
Հասկանում է. զարմանալի չէ, որ նա
Զգուշացնում, սաստ է կարդում մարդկության։

49 Դուք ձգտում եք բարիքներին այն վաղանց,
Որ պակսում են բաժանելով այլոց հետ,
Եվ դա ձեր մեջ առաջացնում է նախանձ։

52 Բայց եթե սերն հանդեպ բարին վեհագույն
Ձեր իղձերը դեպի երկինք ուղղել տար,
Այդ երկյուղը ձեր սրտում չէր դնի բույն,

55 Քանզի այնտեղ ինչքան շատեր ասեն «մեր»,
Այնքան ամեն մեկը հարուստ կլինի
Եվ այնքան սեր կբորբոքվի նրանց մեջ»։

58 «Հիմա նվազ գոհացած եմ ինձ զգում,—
Ասացի ես,— քան երբ հարցրի այս մասին.
Չի արդ ունեմ նոր տարակույս իմ մտքում:

61 Ինչպե՞ս բարիք մի բաշխված շատերին,
Սրանց հարուստ կդարձնի ավելի,
Քան եթե այն բաշխված լինի քչերին»:

64 Եվ նա ասաց. «Քո ուշն ու միտը նորեն
Բևեռում ես բարիքներին երկրային,
Եվ խավար ես տեսնում լույսի փոխարեն:

67 Այն անհուն և անճառ էակն երկնակալ
Հաղորդվում է իրեն սիրող էակին,
Ինչպես արփու շողը՝ մարմնին լուսընկալ:

70 Այնքան տրվում, որքան սեր է նա գտնում.
Ուստի որքան սիրով զեղուն է հոգին,
Այնքան շատ է նրան Հավերժն հաղորդվում:

73 Որքան շատ են սիրողները երկնքում,
Այնքան շատ են բարիք գտնում սիրո մեջ
Եվ բարիքի շողերն իրար արձակում:

76 Եթե գոհ չես իմ խոսքերից կարճառոտ,
Բեատրիչեն քեզ լիովին կպարգի
Այս հարցերը, ինչպես հարցերն այլ կնճռոտ:

79 Հիմա ջանա, որ շուտ բուժվեն ու ջնջվեն
Երկուսի պես հինգ վերքերդ մնացյալ,
Որոնք զղջմամբ ու քավությամբ կփակվեն»:

82 Մինչդեռ «գոհ եմ» ուզում էի ես ասել,
Հարկադրված եղա լռել տեսնելով,
Որ մի ուրիշ բոլորակ եմ ես հասել:

85 Այստեղ ասես գրավվեցի ես հանկարծ
Հափշտակիչ տեսիլքներով և տեսա
Մի տաճարում բազում մարդկանց հավաքված.

88 Եվ մի կնոջ, որ կանգնած մոտ դրանդու,
Նեղանում էր գորովանքով մայրական.
«Որդյակ, ինչո՞ւ այդպիսի բան արիր դու:

91 Հայրդդ ու ես՝ մտատանջ ու սրտացավ,
Քեզ փնտրելու էինք ելել»: Ու լռեց.
Եվ առաջին իմ տեսիլքը չքացավ:

94 Այնուհետև մի ուրիշ կին երևաց,
Այտերն օծված արտասուքի շիթերով,
Որոնցով նա վիշտն էր պոռթկում ամբարված:

97 Նա ասում էր. «Թե քաղաքի տերն ես այն,
Որի անվան համար վեճի մտան դիք,
Եվ որ ակն է իմաստության ամենայն,

100 Վրեժ լուծիր այն պատանուց անզգամ,
Որ համբուրեց մեր աղջկան, Պիսիստրա՛տ»:
Եվ Պիսիստրատն հեզահամբույր, հեզակամ,

103 Հանդարտ դեմքով պատասխանեց. «Ի՞նչ կանենք
Մեզ վատություն կամեցողին, եթե որ
Մեզ սիրողին դատապարտենք ու պատժենք»:

106 Ապա տեսա մարդկանց ցասմամբ լիարբշիռ
Որ քարկոծում էին շահել մի մարդու,
Մեկը մյուսին պոռալով՝ «Զարկ, սպանիր»:

109 Եվ նա արդեն գետին ընկած, տարածված,
Գալարվում էր օրհասական մահվան մեջ,
Բայց աչքերը միշտ դեպ երկինք կարկառած,

112 Տաճարի մեջ աղոթում էր Բարձրյալին,
Որ ներեր իր ոսոխներին հալածիչ,
Մի դեմքով որ լի էր գութով վշտագին:

115 Երբ իմ հոգին վերադարձավ արտաքին
Առարկաներն ընկալելու կացության,
Տեսիլքներից ուշքի եկա ես կրկին:

118 Առաջնորդը, տեսնելով որ նոր զարթնող
Մարդու նման ես դանդաչում եմ, ասաց.
«Ի՞նչ ունես, որ դու քեզ պահել չես կարող.

121 Աչքերդ փակ և ոտքերդ դեղնկոտ
Դու քայլեցիր կես փարսախից ավելի,
Որպես մի մարդ գինեհարյալ կամ քնկոտ»:

124 Ես ասացի. «Լսիր ինձ, հայր իմ ազնիվ,
Քեզ կասեմ թե ինչեր տեսա տեսիլքում,
Երբ գայթ ի գայթ քայլում էի ես հազիվ»:

127 Եվ նա ասաց. «Հարյուր դիմակ էլ, դիցուք,
Դու կրեիր, կկարդայի միտքը քո,
Թեկուզ ինչքան էլ նա լիներ խուսափուկ:

130 Ինչ որ տեսար, նրա համար էր որ դու
Սիրտդ բանաս խաղաղության ջրերին,
Որ բխում են Անձաղբյուրից կենսատու:

133 Ես «ինչ ունես» չհարցրի քեզ այն մտքով,
Ինչ մտքով որ պիտի հարցներ քեզ մի մարդ,
Որ տեսնում է լոկ մարմնական իր աչքով.

136 Այլ հարցրի, որ քեզ ներշնչեմ ուժ, կորով.
Այսպես հարկ է խթանել այն ծույլերին,
Որ, սթափված, տեղից շարժվում են զոռով»:

139 Վերջալույսի պահն էր արդեն, և ինչքան
Մեզ թույլ էին տալիս շողերն առկայծող,
Ուշիուշով դիտում էինք հեռական:

142 Քիչ-քիչ ահա մոտենում էր դեպի մեզ
Մի ստվար ծուխ, գիշերվա պես մթագնիչ,
Որից չկար ազատվելու ճար կարծես.

145 Դա խավարեց մեր աչքերն ու օդը ջինջ:

ԵՐԳ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ

Խոր խավարը Դժոխքի և գիշերի՝
Աստղազուրկ ու սահմանափակ երկնի տակ,
Որ պատած է խիտ խավերով ամպերի,

4 Դեմքը այնպես թանձրը քողով չպատեց,
Ոչ էլ եղավ տեսողությանն այնպես խոչ,
Ինչպես ծուխն այն, որ այստեղ մեզ պարուրեց:

7 Նա աչքերս թույլ չտվեց բաց անել:
Տեսնելով այդ՝ առաջնորդը մոտեցավ,
Որ կարենամ նրա ուսին ես հենվել:

10 Ինչպես կույրը, որպեսզի իր ճամփայից
Չմոլորվի ու չընդհարվի մի բանի,
Գնում է իր առաջնորդի ետևից,

13 Այսպես էի ծխի միջով գնում ես,
Ունկնդրելով առաջնորդիս, որ անվերջ
Ասում էր ինձ. «Զգույշ, ինձնից չզատվես»:

16 Ես լսեցի ձայներ, որոնք ի սրտանց
Հայցում էին խաղաղություն, գթություն
Աստծու գառից, որ բառնա մեղքը յուրյանց:

19 «Գառն Աստուծոյ» էին նրանք երգում հար,
Երգում այնպես ելևէջով համակերպ,
Որ կարծես թե ունեին ձայն միալար:

22 Եվ ես. «Վարպետ, հոգիների ձա՞յնն է այն»:
Եվ նա ասաց. «Այո, ճիշտ ես գուշակում.
Նրանք իրենց մեղքն են քավում բարկության»:

25 «Արդ ո՞վ ես դու, որ մեր ծխով ես անցնում
Եվ մեր մասին հարցապնդում, որպես թե
Դեռ ողջերի աշխարհին ես պատկանում»:

28 Այսպես ասա խոսեց մի ձայն մոտը մեր։
Վարպետը ինձ. «Պատասխանիր դու նրան,
Եվ հարցրու, թե այս կողմի՞ց են ելնում վեր»։

31 Եվ ես. «Ո՛վ դու, որ մաքրվում ես այդպես,
Որպեսզի քեզ Հաստողի մոտ բարձրանաս,
Կզարմանաս, եթե դու ինձ ուղեկցես»։

34 Պատասխանեց. «Ինչքան կարող եմ՝ կգամ,
Եթե ծուխը թույլ չի տալիս մեզ տեսնել,
Լսելը մեզ կդարձնի համակամ»։

37 «Վեր եմ գնում այս մարմնական պատանքով,
Որին միայն մահն է լուծում,— ասացի,—
Այստեղ եկա արհավրալի Դժոխքով.

40 Եվ եթե ինձ Աստված շնորհ է արել,
Թույլ տալով որ ես իր պալատը տեսնեմ
Մի կերպով, որ այժմ անտվոր է դառել,

43 Ապա հայտնիր, թե դու կյանքում ո՞վ եղար,
Եվ ասա թե ճի՞շտ է բռնած իմ ուղին,
Քո խոսքերը թող մեզ լինեն ղեկավար»։

46 «Լոմբարդցի եմ և Մարկո եմ ես կոչվում.
Աշխարհ տեսա ու սիրեցի լավ բարքեր,
Որոնց հիմա արդեն ոչ ոք չի ձգտում։

49 Դու գնում ես դեպի վերև ուղղապես»։
Այսպես ասաց, ապա հարեց. «Խնդրում եմ,
Երբ վեր հասնես, դու ինձ համար կաղոթես»։

52 Եվ ես նրան. «Քո բաղձանքը ես կանեմ,
Սակայն իմ մեջ մի տարակույս ծագեց արդ,
Որից եթե ես չազատվեմ՝ կպայթեմ։

55 Առաջ պարզ էր, սակայն հիմա բարդացավ
Այն հարցը, որ շոշափեցիր դու այստեղ,
Եվ որ այժմ ինձ տալիս է գլխացավ։

58 Ասածիդ պես, հիմա աշխարհը ողջամբ
Մերկացել է ամեն ազնիվ բարքերից
Եվ հղի ու լի է ամեն չարությամբ:

61 Սակայն ի՞նչն է դրա պատճառը մեկին,
Աստղե՞րն են, թե՞ մարդիկ՝ իրենք: Եվ երբ ես
Իմանամ այդ՝ կբացատրեմ ամենքին»:

64 Նա արձակեց խոր հառաչանք վշտակեզ
Եվ սկսեց. «Աշխարհը կույր է, եղբայր.
Դու այնտեղից անշուշտ եկած կլինես:

67 Դուք, ապրողներդ, աստղերին եք վերագրում
Ամեն պատճառ, կարծես նրանց ներգործման
Արդյունք լիներ, ինչ պատահում է երկրում:

70 Եթե այդպես լիներ, ձեր մեջ կբարձվեր
Ազատ կամքը և արդար չէր լինի, որ
Բարին խինդով, չարը վշտով հատուցվեր:

73 Աստղերից են ձեր հակումներն առաջին,
Ոչ բոլորը, դիցուք բոլորը, բայց ձեզ
Լույս է տրված ջոկելու չարն ու բարին,

76 Եվ ազատ կամք, որը եթե ի սկզբան
Վատ կկռվի հակումների դեմ հոգի,
Լավ կոփվելով՝ հուսկ դուրս կգա հաղթական:

79 Դուք, ազատներդ, ենթարկվում եք արարող
Մի զորության, որ ստեղծեց ձեր հոգին,
Որի վրա աստղերն ազդել չեն կարող:

82 Եթե աշխարհն արդ դարձել է ամբարիշտ,
Դուք եք պատճառն և դա ձեր մեջ որոնեք.
Հիմա ես քեզ կբացատրեմ միտքըս ճիշտ:

85 Մարդու հոգին, որ ստեղծված է Աստծուց,
Դուրս է պրծնում արարչական ձեռքերից
Եվ աշխարհ է մտնում մանկան պես մերկուց.

88 Եվ դեռ ամեն ինչի անփորձ ու անգետ,
Ուրախանում ու խայտում է մանկան պես,
Չի ի բնե հաճույքի է հակամետ։

91 Ճաշակում է նախ բարիքները ումպետ
Եվ պատրանքով վազում նրանց ետևից,
Եթե նրան ետ չպահի սանձ կամ պետ։

94 Արդ իբրև սանձ պահանջվեցին օրենքներ,
Իսկ իբրև պետ պահանջվեց մի միապետ,
Որ քաղաքի միջնաբերդը գեթ տեսներ։

97 Օրենքներ կան, բայց ովքե՞ր են պահողներ,
Հիմա ոչ ոք. իսկ հովիվը առաջնորդ
Որոճում է, բայց չունի հերձ կճղակներ։

100 Եվ ամբոխը, տեսնելով որ հովիվն իր
Ձգտում է լոկ բարիքների նյութական,
Ինքն էլ խժռում և չի դնում այլ խնդիր։

103 Ուստի պարզ է, որ վարչությունն է վատթար
Պատճառն արդի ապականման աշխարհի,
Ոչ թե մարդկանց բնությունը վատախտար։

106 Հոմը, որ հարդարիչն էր աշխարհի,
Ուներ երկու լուսատուներ, որ մարդկանց
Նշում էին ուղին երկնի ու երկրի։

109 Մեկը մյուսին մարեց, և սուրը խառնվեց
Մականի հետ, ու հետևանքն այն եղավ,
Որ թե մեկը և թե մյուսը խաթարվեց,

112 Ու վերացավ փոխադարձ վախն իրարից։
Նայիր հասկին, եթե ինձ չես հավատում.
Ամենայն տունկ ճանաչում են իր պտղից։

115 Այն երկրում, ուր հոսում են Պոն, Աղիջեն,
Հեշտ էր գտնել առաքինի վարք ու բարք,
Երբ Ֆեդերիկն սկսած չէր դեռ վիճել։

118 Այժմ այդ երկրով ազատ կարող է անցնել
Ամեն շուտիկ, առանց երկյուղ զգալու,
Որ կարող է կարգին մարդու հանդիպել։

121 Այնտեղ դեռ կան երեք ծերեր կենդանի,
Որ խրտնում են նոր բարքերից խորթացած
Եվ ձգտում են վաղուց կյանքին անդենի.

124 Անունները են Կուրրադո դա Պալացցո,
Լավ Գերարդո և Գուիդո դա Կաստել,
Որ ֆրանսիացիք կոչում են պարզ Լոմբարդո։

127 Արդ ձուլելով իր մեջ երկու վարչություն,
Ցեխն է խրվել եկեղեցին Հռոմի,
Աղտեղելով և՛ իրեն, և՛ բեռը դույն»։

130 «Ո՛վ իմ Մարկո, դատում ես ճիշտ և ստույգ,—
Ասացի ես։— Այժմ հասկացա, թե ինչու
Ղևի որդիք ձեռք չբերին կայք ու գույք։

133 Սակայն ո՞վ է այն Գերարդոն փառազուն,
Որ հանգուցյալ սերնդից է մնացել,
Ի նախատինս նոր սերնդին վայրաստուն»։

136 «Քո խոսքերը տարօրինակ են հնչում,—
Պատասխանեց,— զարմանալի է, որ դու
Տոսկանցի ես և նրան չես ճանաչում։

139 Ուրիշ անուն ես չեմ կարող նրան տալ,
Թե ոչ ասել, որ նա հայրն է Գայայի։
Աստված ձեզ հետ. էլ չեմ կարող ձեզ հետ գալ։

142 Ծխի միջով մի լույս շողում է անդ, տես.
Հրեշտակ է դա. ինձ հարկավոր է մեկնել,
Նախքան այստեղ նրա գալը ի հանդես»։

145 Այսպես ասաց և էլ չուզեց ինձ լսել։

ԵՐԳ ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ

Ո՛վ ընթերցող, եթե երբեք լեռներում
Քեզ պատեց մեգ, որի միջով դու տեսար,
Ինչպես մաշկի միջով խլուրդն է տեսնում,

4 Հիշիր ինչպես ճաճանչները արևի
Թափանցում են խիտ ու խոնավ մշուշով,
Երբ սա քիչ-քիչ նոսրանում է հիրավի.

7 Եվ կարող ես պատկերացնել, թե ինչպես
Ծխի միջով ես նայեցի արևին,
Երբ սա արդեն մայր էր մտնում համարապես։

10 Այսպես քայլերս առաջնորդիս քայլերին
Համակերպած՝ դուրս եկա այն ծխամպից,
Երբ մութ էին արդեն ափերն ստորին։

13 Ո՛վ տեսիլքներ, մերթ այնքան եք կտրում մեզ
Արտաշխարհից, որ մենք ոչինչ չենք լսի,
Թեկուզ հնչեն հազար փողեր շուրջը մեր.

16 Ձեր աղբյուրը ի՞նչ է, եթե զգայք չեն.
Ձեր աղբյուրը հարկավ լույսն է գերբնական,
Որ գործում է ի վերուստ կամ ինքնօրեն.

19 Տեսիլքիս մեջ տեսա պատկերը նրա,
Ով իր ոճրի համար փոխվեց այն թռչնին,
Որ հրճվում է իր դայլայլից առօրյա։

22 Այստեղ միտքս իր մեջ այնքան էր գոցվել,
Որ ազդակներն զգայական աշխարհի
Չէին կարող նրա վրա ներգործել։

25 Ապա տեսա իմ տեսիլքում հոգեզմայլ
Մի խաչելյալ, դեմքով գոռոզ ու վայրագ,
Որ մեռնում էր պահելով տեսքն անայլայլ։

28 Ասուերոս արքան էին նրա քով,
Եսթեր կինը և Մարդոքեն այն արդար,
Որ ուղղամիտ եղավ խոսքով ու գործով:

31 Երբ չքացավ այս պատկերը տեսլային,
Ցնդելով այն պղպջակի նմանակ,
Որ գրկվել է իր պատյանից ջրային,

34 Ինձ երևաց մի աղջնակ վշտալից,
Որ լալագին ասում էր. «Ո՛վ թագուհի,
Ինչո՞ւ մեռնել փափագեցիր զայրույթից:

37 Դու մեռար, որ Լավինիայիդ չկորցնես,
Եվ կորցրիր ինձ: Միայր, նախքան մահն իմ սիրո,
Ես քո մահն եմ հիմա ողբում դառնապես»:

40 Ինչպես մարդու քունը խզվում է հանկարծ
Ազդեցության ներքո պայծառ մի լույսի,
Եվ տակավ առ տակավ անցնում է անդարձ,

43 Այսպես անցան իմ տեսիլքներն այցելու,
Երբ իմ դեմքին հանկարծ զարկավ մի վառ լույս,
Ավելի վառ, քան սովոր ենք տեսնելու:

46 Շուրջս դարձա գիտնալու թե ուր եմ ես,
Երբ մի ձայն, որ ամբողջ ուշքս գրավեց,
«Այստեղից են վեր բարձրանում» ասաց մեզ:

49 Այնքան էի ես անհամբեր տեսնելու,
Թե ով էր այն բարբառողը, որ մինչև
Նա չերևար՝ հանգիստ չէի լինելու:

52 Բայց աչքերս նրա լույսից շլացան,
Ինչպես մարդու աչքը լույսից արևի,
Որ պատած է իր շողերով վայրացան:

55 «Սա երկնային մի ոգի է, որ առանց
Մեր խնդրանքին՝ մեզ վերելքն է ցույց տալիս
Եվ քողարկում իրեն լույսով անթափանց:

58 Նա վարվում էր մեզ հետ, ինչպես մարդն իր հետ.
Ով չի օգնում, երբ կարոտյալ է տեսնում,
Հայցը կանխավ մերժելու է հակամետ:

61 Արդ մեզ արած իր հրավերն ընդունենք.
Դեռ չմթնած ջանանք վերև բարձրանալ,
Քանզի հետո էլ չենք կարող ելնել մենք»:

64 Այսպես ասաց ինձ առաջնորդս առանձին,
Եվ քայլերըս դեպի սանդուղքն ուղղեցինք.
Երբ ոտք դրինք աստիճանին առաջին,

67 Ես զգացի թևաբախում իմ դեմքին
Եվ լսեցի **«Հաշտարարաց երանի»,**
Որոնք զերծ են բարկությունից մեղսագին»:

70 Հետին շողերն աղջամուղջին նախորդող
Արդեն այնքան շիջել էին եթերում,
Որ երևում էին աստղերն առկայծող:

73 «Ո՛վ իմ կորով, ինչո՞ւ ցնդում ես այդպես»—
Ասում էի ես յուրովի, զգալով,
Որ սրունքներս հոգնել էին մեծապես:

76 Հասել էինք արդեն սանդղի բարձունքին,
Եվ կանգ առել, ինչպես նավը լողացող,
Որ կանգնում է, երբ հասնում է ափունքին:

79 Նոր ոլորտում մի պահ ես լուռ մնացի,
Սպասելով որևէ բան լսել նոր,
Ապա դարձա վարպետիս և ասացի.

82 «Իմ բարի հայր, արդ ասա ինձ՝ ի՞նչ հանցանք.
Քավվում է այս բոլորակում, և եթե
Մենք կանգ առանք, թող խոսքերդ չառնեն
կանգ»:

85 «Այստեղ է իր հատուցումը ստանում
Թույլ ու թերի սերը բարու,— ասաց նա,—
Այստեղ են հենց ալարկոտին խթանում:

88 Բայց որպեսզի ավելի լավ հասկանաս,
Ուշի ուշով ինձ ունկընդիր և դու մեր
Այս կանգառից որոշ օգուտ կստանաս»:

91 Եվ նա սկսեց. «Լսիր, որդի սիրելիս,
Արարիչն ու արարածները բոլոր
Լի են սիրով բնական ու հոգեկան:

94 Բնականը ենթակա չէ սխալի,
Իսկ մյուսը սխալվում է վատ ձգտմամբ,
Կամ ձգտելով չափից քիչ կամ ավելի.

97 Եվ քանի նա վսեմ բարուն է ձգտում
Ու չափ պահում բարիքների մեջ նսեմ,
Վատ հաճույքի նախապատճառ չի լինում:

100 Բայց երբ սերն այդ մի վատ բանի է ձգտում
Կամ բարուն է ձգտում չափից շատ կամ քիչ,
Արարածը Արարչի դեմ է գործում:

103 Այստեղից էլ կհասկանաս առհարկի,
Որ մարդկանց մեջ սերը հիմքն է ամենայն
Առաքինի և մեղսավոր արարքի:

106 Արդ գի սերը չի կարելի անջատել
Ենթակայի օգտամատույց բարիքից,
Մարդ չի կարող սեփական անձը ատել:

109 Նմանապես չի կարելի ըմբռնել
Մի ինքնագոյ էակ՝ անկախ Արարչից,
Ուստի նրան չի կարելի անգոսնել:

112 Եթե այսպես ճիշտ եմ դատում ու դատում,
Մնում է լոկ սիրել չարիքն ուրիշի:
Եվ այդ սերը երեք տեսակ է լինում:

115 Կան, որ այլոց կործանումով հույս ունեն
Վեր բարձրանալ և հենց դրա համար լոկ
Հետամուտ են նրանց անկման բարձունքին:

118 Կան որ այլոց բարձրացումով վախում են
Կորցնել շնորհ, իշխանություն, փառք, պատիվ,
Եվ չարիք են նրանց նյութում տենդորեն:

121 Եվ կան էլ որ զայրանում են մաղձալից
Նրանց դեմ, որ վիրավորանք են հասցրել,
Եվ պատրաստ են ոխ հանելու նրանցից:

124 Այս եռակերպ սերը քավվում է ցածում.
Արդ ուզում եմ քեզ բացատրել սերը մյուս,
Որ անկանոն կերպով բարուն է ձգտում:

127 Երազում են մարդիկ վսեմ մի բարիք,
Ուր կարենան իրենց հոգին գոհացնել,
Եվ հասնելու առ այն զգում են կարիք:

130 Եթե նրան ձեզ ձգում է սերը գաղջ,
Դուք այդ մեղքը այս ոլորտում կքավեք,
Կատարելով ապաշխարանք մի պատշաճ:

133 Կա այլ բարիք, որ նսեմ է, ոչ հարգի.
Դա չի տալիս երջանկություն, չէ Աստված,
Որ պատճառն ու հիմքն է ամեն բարիքի:

136 Այն սերը, որ դրան շատ է նվիրվում,
Բոլորակաց մեջ է քավվում վերևի,
Բայց ինչպես է այն երեքի տրոհվում,

139 Ես կլռեմ, որ դու գտնես յուրովի»:

ԵՐԳ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ

Մեծ ուսուցիչս ավարտելով ճառը իր
Իմ աչքերի մեջ էր նայում տեսնելու,
Թե ես նրան լսե՞լ էի ուշադիր.

4 Ես, որ նորից տանջվում էի ծարավով,
Լռում էի և յուրովի մտածում.
«Գուցե նրան ձանձրացրեմ հարցերով»:

7 Բայց իմ հայրը ճշմարիտ ու հարազատ,
Տեսնելով որ բերան չէի բաց անում,
Ինձ թելադրեց խոսել անվախ ու ազատ:

10 Եվ ես. «Վարպետ, իմ միտքը քո ուսմունքով
Այնքան լավ է յուսավորվում, որ ես պարզ
Հասկանում եմ ճառդ ամեն մասունքով:

13 Սակայն, հայր իմ, թախանձում եմ քեզ կարի,
Բացատրիր, թե ինչ է սերը, որին դու
Վերագրում ես ամեն գործ չար ու բարի»:

16 Եվ նա. «Ուղղիր մտքիդ աչքերն իմ վրա,
Եվ կպարզվի քեզ սխալը կույրերի,
Որոնք իրենց համարում են ռահվիրա:

19 Հոգին, որին սիրո հակում է տրված,
Ձգտում է դեպ ամեն մի բան հաճելի,
Հենց որ զարթնում է հաճույքից դրդված:

22 Ընկալչությունը ձեր՝ պատկերն է առնում
Իրականից և պարզում է ձեզ այնպես,
Որ ձեր հոգին առ այն պատկերն է դառնում:

25 Եթե հոգին դեպ այն պատկերն է հակվում,
Այդ հակումը սերն է, սերը բնական,
Որ հաճույքից մղված գործում է հոգում:

28 Եվ ինչպես բոցն իր հատկությամբ բնական
Ձգտում է վեր, այնտեղ, ուր իր տարերքում
Ավելի է դառնում կայուն, տևական,

31 Այսպես հոգին մի մղումով բնածին
Դեպ հաճելին է ձգտում և չի հանգչում,
Մինչև որ նա չի տիրանում սիրածին:

34 Արդ կարող ես դու հասկանալ թե որքան
Սխալվում են նրանք, ովքեր պնդում են,
Թե ամեն սեր գովելի է ըստ ինքյան:

37 Չի գուցե միշտ լավ է սիրո առարկան,
Բայց ամեն սեր լավ չէ, ինչպես ամեն դրոշմ,
Թեև մոմը լինի լավ ու պատվական»:

40 «Քո խոսքերը և իմ միտքը հետախույզ
Ինձ պարզեցին սիրո բնույթն,— ասացի,—
Բայց դա իմ մեջ ծնեց մի նոր տարակույս:

43 Եթե սերը մեր մեջ դրսից է ծագում,
Ապա հոգին, որ գործում է բնազդմամբ,
Իր կամքով չէ, երբ լավ կամ վատ է գործում»:

46 Եվ նա. «Ինչ որ միտքն այս մասին կդատի,
Կբացատրեմ, իսկ ավելին կպարզե
Բեատրիչեն, զի դա գործ է հավատի:

49 Յուրաքանչյուր գոյացություն ձևավոր,
Որ նյութից զատ, բայց զոդված է նրա հետ,
Իր մեջ ունի մի զորություն մասնավոր,

52 Որը միայն իր գործնական արյունքով
Զգացնում է իր գոյությունը ներքին,
Ինչպես բույսն իր կյանքը՝ կանաչ սաղարթքով:

55 Մարդ չգիտե, թե նախնական գիտությանց
Իմացությունն իր ուսկից է և ուսկից
Զգացումը իր նախնական ցանկությանց,

58 Որ ձեր մեջ կան, ինչպես մեղվում բնազդ կա
Մեղր շինելու, և միտումն այս նախավոր
Գովեստի կամ պարսավի չէ ենթակա:

61 Արդ որպեսզի այլ հակումներն այս հակման
Համակերպվեն, ձեր մեջ կա ուժ բնածին,
Որ հսկում է իբրև մուտքի պահապան:

64 Այդ ուժն է այն սկզբունքը, ըստ որի
Ձեր գործերն են գնահատվում, նայած թե
Նա ընտրում է ձեր բարի, թե հոռի:

67 Նրանք, ովքեր ճշմարտախույզ են խորին,
Ճանաչեցին ազատ կամքը մարդու մեջ
Եվ բարույքի դասեր տվին աշխարհին:

70 Իսկ դիցուք թե սերն առողջ կամ անառողջ
Արծարծվում է ձեր մեջ մղմամբ ակամա,
Բայց կարող եք դուք ընդունել այն կամ ոչ:

73 Բեատրիչեն կարողությունն այս ազնիվ
Հասկանում է ազատ կամքը, հիշիր այդ,
Եթե երբեք նա քեզ խոսի այդ առթիվ»:

76 Լուսինը, որ իր ընթացքով երկնավար
Նոսրացրել էր աստղերի թիվը տակավ,
Երևում էր ինչպես մի գունդ հրավառ,

79 Եվ սահում էր ընդդեմ երկնի աստղազարդ
Այն ուղիով, ուր մայրամուտն է տեսնում
Հռոմայեցին կղզյաց մինչև Կորս և Սարդ:

82 Եվ վարպետը, որի փառքի շնորհիվ
Պիետրոյան հանդիսացավ անվանի,
Ճնշող բեռից ազատել էր ինձ լրիվ:

85 Եվ ահա ես, որ հարցերիս լուրջ ու բարդ
Առել էի պատասխաններ պարզորոշ,
Կանգնած էի ինչպես քնով տարված մարդ:

88 Բայց իմ քունը հանկարծ խզվեց մի թափով
Խուլ աղմուկից հոգիների մի խմբի,
Որ գալիս էր մեր ետևից շտապով:

91 Ինչպես Իսմենն ու Ասոպը միասին
Մութ գիշերով տեսան վազքը թեբեցոց,
Որ խուռնընթաց դիմում էին Բաքոսին,

94 Այսպես այստեղ տեսա ամբոխ մի խռնված,
Որ վազեվազ մեր ետևից էր գալիս,
Բարի կամքից, արդար սիրուց խթանված:

97 Չի վազում էր այն բազմությունն ահագին,
Վաղվաղակի բոլորը մեզ միացան:
Երկու հոգի գոչում էին լալագին.

100 «Մարիամն շտապ դեպի լեռը վազ տվեց
Եվ Կեսարը, բաց թողնելով Մարսիլիան,
Անմիջապես դեպ Իլերդա արշավեց»:

103 «Շուտ, ժամանակ չկորցնենք հեղգորեն,
Որ բողբոջի մեր մեջ փափագը բարու»,—
Ասում էին մյուս հոգիներն համորեն:

106 «Ո՛վ հոգիներ, դուք որ հիմա եռանդյամբ
Դարմանում եք անփութությունն, որ բարիք
Գործելու մեջ թույլ եք տվել գաղջությամբ.

109 Սա դեռ ողջ է-ես ստելու չեմ սովոր—
Եվ ուզում է վեր բարձրանալ վաղորդյան.
Ասացեք մեզ՝ ո՞ւր է ելքը մերձավոր»:

112 Այսպես ասաց առաջնորդը ամբոխին.
Եվ նրանցից մեկը տվեց պատասխան.
«Հետևիր մեզ և կգտնես անցուղին:

115 Մենք շարժվելու այնքան փափագ ունենք մեծ,
Որ չենք կարող կանգնած խոսել, և եթե
Մեր վարմունքը կոպիտ գտնես, ներիր մեզ:

118 Սան Զենոյի աբբան էի Վերոնում,
Բարբարոսսա վեհապետի օրերին,
Որի մասին վատ են խոսում Միլանում:

121 Եվ մեկը, որ արդեն զառամ է դարձած,
Շուտով կողբա այն վանատան պատճառով,
Ուր չարարկեց իշխանությունն ունեցած.

124 Զի նա որդուն անհարազատ ու տգեղ,
Տգեղ մարմնով և թե հոգով մանավանդ,
Նշանակեց օրինավոր հովվի տեղ»:

127 Ես չգիտեմ՝ նա դեռ խոսե՞ց, թե՞ լռեց,
Այնքան արդեն հեռացել էր մեզանից,
Բայց լսածս ինձ գոհություն պատճառեց:

130 Եվ վարպետը, զորավիգը ապահով,
Ասաց. «Նայիր, ահա երկու հոգիներ,
Որ գալիս են հեղգությունը սատելով»:

133 Ասում էին նրանք. «Մեռան այն մարդիկ,
Որոնց առջև ծովը բացվեց, բայց հետո
Հորդանանը տեսավ սերունդն երջանիկ:

136 Եվ այն մարդիկ, որ մինչև վերջ չուզեցին
Տաժանք կրել զավակի հետ Անքիսի,
Անփառունակ մի կյանքի մեջ սուզվեցին»:

139 Երբ մեզանից նրանք այնքան հեռացան,
Որ այլևս չէին կարող նկատվել,
Իմ մեջ ծնունդ առան մտքեր այլազան,

142 Ուրկից բազում ուրիշ խոհեր ծագեցին,
Եվ ես այնքան խոհից ի խոհ ծփացի,
Որ ի վերջո իմ աչքերը փակվեցին.

145 Եվ խոհերիս վերածվեցին երազի:

ԵՐԳ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ

Այն ժամին, երբ ջերմությունը ցերեկվա
Երկրից կամ մերթ Երևակից շիջանած՝
Է՛լ չի կարող մեղմել ցուրտը գիշերվա.

4 Երբ գուշակներն իրենց Բախտը մեծագույն
Արևելյան հորիզոնում են տեսնում,
Ուր կծագի շուտով օրը նորագույն,

7 Երազիս մեջ երևաց կին մի թլվատ,
Աչքերը շիլ և ոտքերը ծուռումուռ,
Ձեռքերը հաշմ և երեսը շատ գունատ:

10 Նայում էի. ինչպես արևը շողուն
Ժրացնում է անդամները ցրտահար,
Այսպես հայացքս արձակում էր կապ լեզուն,

13 Ուղղում նրա շեղությունները կարգավ
Եվ տալիս էր նրա դալուկ երեսին
Այն գույնը, որ պահանջում է սերն հարկավ:

16 Հենց որ այսպես լեզվի կապն էր արձակվել,
Նա սկսեց երգել այնպես քաղցրաձայն,
Որ ես նրան չէի կարող չունկնդրել:

19 «Ես,— երգում էր,— ես այն սիրենն եմ սիրուն,
Որ թովում է նավորդներին ծովի մեջ,
Այնքան ձայնը հաճելի է ու ծորուն:

22 Ես իմ երգով Ուլիսին էլ թովեցի.
Ով վարժվի ինձ և հմայվի ինձանով,
Հազիվ թե իմ լարացանցից դուրս պրծնի»:

25 Նա տակավին իր բերանը չէր փակել,
Երբ երևաց ինձ մոտ մի կին սուրբ ու վեհ,
Որ այն մյուսին անարգելու էր եկել:

28 «Օ՛ Վիրգիլիոս, օ՛ Վիրգիլիոս, ո՞վ է նա»,—
Գոչեց կինը բարկությամբ լի, իսկ տերն իմ
Նայում էր լոկ այդ կնոջը վեհազնյա:

31 Ապա տերը մյուսին բռնեց զայրալի
Եվ, պատռելով փեշը, փորը բաց արավ.
Ես զարթնեցի բուրած հոտից զազրելի:

34 Երբ շուտ եկա, բարի վարպետս ինձ ասաց.
«Երեք անգամ քեզ կանչեցի ես հիմա.
Վեր կաց, արի, գնանք գտնենք մուտքը բաց»:

37 Ես վեր կացա: Արդեն լույս էր շողարձակ
Լեռան բոլոր ոլորտներում. գնացինք.
Մեր ետևն էր արեգակը նորածագ:

40 Հետևելով առաջնորդիս քայլերին՝
Գնում էի կորաքամակ, գլխահակ,
Ինչպես նա, ով հանձնվել է մտքերին:

43 Հանկարծ լսվեց. «Անցքը այստեղ է, եկեք»—
Այնպես աղու և հեշտալուր մի ձայնով,
Որ մեր երկրում չենք ունկնդրի մենք երբեք:

46 Այդպես ասողն, հար և նման կարապի,
Բացավ թևերն ու մեզ ուղղեց դեպ այնտեղ,
Ուր մի անցք կար միջև երկու քարափի:

49 Թափհարելով իր թևերը փետրավոր,
Նա «**Երանի սգավորաց**,— ասաց մեզ,—
Զի կստանան մխիթարանք հոգևոր»:

52 «Ի՞նչ ունես դու, որ մտախոհ ես դարձել»—
Այսպես ասաց վարպետը ինձ, երբ արդեն
Հրեշտակից քիչ վեր էինք բարձրացել:

55 Եվ ես. «Հիմա տեսա տեսիլք մի դարձյալ.
Նա ինձ այնպես խորհուրդներով պաշարեց,
Որ չեմ կարող նրա միտքը հասկանալ»:

58 Եվ նա. «Տեսար այն կախարդին հինավուրց,
Որի համար պատժվում են վերևում,
Եվ որից մարդ ճողոպրում է մազապուրծ:

61 Բավ է դա քեզ. հիմա մի քիչ շտապիր,
Եվ ունկնդրիր կոչին երկնի, ուր Արքան
Հավերժական հոլովում է գնդերն իր»:

64 Ինչպես բազեն, որ նայում է նախ ներքև,
Ապա, ի լուր կանչին, սուրում է այնտեղ,
Ուր քաշում է նրան երէն ակներն,

67 Այսպես արի, բարձրանալով փույթ ի փույթ
Ժայռամիջյան կածանն ի վեր, որը մեզ
Տարավ այնտեղ, ուր գործվում է նոր պտույտ:

70 Երբ դուրս եկա բոլորակը հինգերորդ,
Տեսա մարդիկ, որոնք դեմքերը գետնին,
Պառկած էին ու հեծեծում սրտահորդ:

73 Ասում էին՝ **«Մերձեցաւ անձն իմ ի հող»**
Այնպիսի խոր հառաչանքով ու հեծքով,
Որ հազիվ էր լսվում խոսքն այդ անսքող:

76 «Ո՛վ հոգիներ, որ ձեր տանջանքը մոայլ,
Ամոքում եք արդարությամբ ու հույսով,
Մեզ ցույց տվեք ելման տեղը հետևյալ»:

79 «Եթե այստեղ դուք պառկելուց ազատ եք
Եվ ուզում եք գտնել ուղին կարճառոտ,
Գնացեք միշտ աջ ուղղությամբ քայլեցեք»:

82 Այսպես ասաց առաջնորդը և այսպես
Պատասխանեց նրան մեկը մոտիկից,
Որի վրա ուշ դարձրի իսկույն ես:

85 Հայացքս այնժամ ես ուղղեցի վարպետիս,
Եվ նա սիրով ինձ թույլ տվեց կատարել
Այն փափագը, որ երևում էր դեմքիս:

88 Երբ թույլ տվեց անել ըստ իմ ուզածի,
Ես մոտեցա ուշագրավ այն հոգուն
Եվ մեղմորեն նրան այսպես ասացի.

91 «Ո՛վ դու հոգի, որ ողբերով քո համառ
Հարդարում ես դարձիդ ուղին առ Աստված,
Քավությունդ քիչ ընդունարիր ինձ համար:

94 Ասա ո՞վ ես և ինչո՞ւ եք դուք պառկել
Բերանքսիվար, ուզո՞ւմ ես որ քո մասին
Խոսեմ այնտեղ, ուրկից ողջ եմ ես եկել»։

97 «Թե ինչու ենք պառկել վրան երեսի,
Դու կիմանաս,— ասաց հոգին,— բայց դու նախ
Գիտա զի ես եղէ յաջորդ Պետրոսի։

100 Կիավերի ու Սիեստրի միջև գեղադիր
Կա ուղխահոս մի գետ, որի անունից
Իմ ազգատոհմն ստացել է տիտղոսն իր։

103 Ամսից քիչ անց ես զգացի թե ինչպես
Ծանր է կրել պատմումանը, որի մոտ
Ամեն այլ բեռ թեթև փետուր է կարծես։

106 Ես մեղքերից դարձի, ավա՜ղ, ուշ եկա.
Բայց երբ դարձա եկեղեցու հովվապետ,
Հասկացա որ կյանքը փուչ է ու անշահ։

109 Հանգչելով աստիճանովս ասդենի,
Մի աստիճան, որ բարձրագույնն է երկրում,
Ես այրվեցի սիրով հանդեպ անդենի։

112 Մինչ այդ հոգիս՝ թշվառական ու վատթար՝
Ագահությամբ ուծացել էր Աստուծուց.
Արդ կրում եմ այստեղ պատիժը արդար։

115 Ագահությունն երևում է հայտնապես
Քավության մեջ հոգիների այս հեծող,
Եվ լեռան մեջ պատիժ չկա սրա պես։

118 Ինչպես երկրում մեր հայացքը միմիայն
Գետին ուղղվեց և չամբարձավ դեպ երկինք,
Այսպես այստեղ Բարձրյալն ուղղեց գետին այն։

121 Ինչպես երկրում ագահությունը մեր մեջ
Մարեց սերը բարի գործեր անելու,
Այսպես այստեղ Երկնավորը սեղմեց մեզ,

124 Կապելով մեր ձեռն ու ոտը ամրաբար.
Եվ կմնանք այստեղ անշարժ տարածված
Այնքան, ինչքան կկամենա Տերն արդար»:

127 Ակնածանքից եկել էի ես ծնկի.
Ուզում էի խոսել, բայց նա նկատեց,
Լոկ լսելով, իմ այդ ցույցը հարգանքի,

130 Եվ ինձ ասաց. «Ինչո՞ւ ես դու ծունկ չոքել»:
Եվ ես նրան. «Այնքան վեհ է անձը ձեր,
Որ իմ խիղճը թույլ չի տալիս ինձ կանգնել»:

133 Պատասխանեց. «Եղբայր, վեր կաց ու կանգնիր,
Մի սխալվիր. ծառայակից եմ ես քեզ
Եվ այլոց հետ նույն Տիրոջը փառակիր:

136 Եթե երբեք դու լսել ես **«Ոչ կանայս...»**
Խոսքերը, որ Ավետարանն է հիշում,
Իմ ասածը դու պիտի լավ հասկանաս:

139 Գնա այլևս, է՛լ հարկ չկա սպասել.
Ներկայությունդ ինձ արգելք է ողբալու,
Որով պարտ եմ ապաշխարանք կատարել:

142 Մի զարմուհի ունեմ անվամբ Ալաջա.
Նա բարի է ինքնին, միայն տոհմը մեր
Նրա համար չար օրինակ չդառնա.

145 Նա է միայն ինձ մնացել երկրի մեջ»:

ԵՐԳ ՔՍԱՆԵՐՈՐԴ

Լավ կամքի դեմ չի կռվում կամքը արդար.
Եվ ակամա ջրից սպունգն հանեցի,
Թեպետև նա հագեցած չէր դեռ իսպառ:

4 Առաջնորդդս ու ես առաջ շարժվեցինք
Լեռան եզրին ազատ թողված տեղանքով,
Ինչպես եզրով մի պարսպի շրջանցիկ։

7 Քանզի նրանք, որ արցունքով դառնագին
Քավում էին չարիքն աշխարհ համակող,
Բռնել էին մինչև եզերքն արտաքին։

10 Անիծվե՛ս դու, վաղնջական գայլ անգութ,
Որ ամեն մի այլ գազանից ավելի
Զոհ ես դարձնում մարդկանց քաղցիդ անհագուրդ։

13 Ո՛վ երկինք, որ վերագրում են քո շարժման
Փոփոխմունքը պայմանների երկրային,
Ե՞րբ պիտի գա երկրից վանողը սրան։

16 Գնում էինք ծանր ու դանդաղ քայլերով,
Մինչ իմ ուշքը կլանված էր լիովին
Հոգիների աղիողորմ ջայլերով։

19 Եվ նրանցից մեկը ձայնով ողբական
Հանկարծ գոչեց մեր առջևում «Օ՛, Մարիամ»,
Ինչպես կինն է բացականչում ծննդկան.

22 Ապա ասաց. «Դու շատ աղքատ ապրեցիր.
Դա երևաց այն մուրքից անպաճույճ,
Ուր սրբազան քո պտուղը ծնեցիր»։

25 Ապա հարեց. «Ո՛վ Ֆաբրիկիոսդ ազնիվ,
Նախընտրեցիր ապրել աղքատ, բայց պատվով,
Քան թե ապրել հարուստ, սակայն անպատիվ»։

28 Այս խոսքերն ինձ պատճառեցին մեծ բերկրանք,
Այնպես որ ես մի քիչ առաջ շարժվեցի,
Գիտնալու թե ով էր ասողը դրանք։

31 Նա տարփողեց և այն պարգևը առատ,
Որ Նիկողոսն արեց մատաղ կույսերին,
Պահպանելու նրանց պատիվն անարատ։

34 «Ո՛վ հոգի, որ այդքան բարիք ես ոգում,—
Ասացի ես,— ասա ո՞վ ես և ինչո՞ւ
Այդ գործերը միայն դու ես գովերգում:

37 Ես չեմ թողնի խոսելդ առանց հատուցքի,
Երբ ետ դառնամ ավարտելու կարճ ուղին
Մահկանացու և անցողիկ իմ կյանքի»:

40 «Ես կխոսեմ ոչ թե նրա համար որ,—
Բարբառեց նա,— երկրից բան եմ սպասում.
Այլ զի քո մեջ տեսնում եմ վառ մի շնորհ:

43 Ես արմատն եմ չարաբաստիկ այն ծառի,
Որ ստվեր է ձգել երկրում քրիստոնյա,
Ուր հազիվ է քաղվում պտուղ մի բարի:

46 Դուեն, Լիլլը, Կանդն ու Բրյուգգեն երանի
Կարենային իրենց վրեժը լուծել.
Նրանց կոգնի Արդարադատը երկնի:

49 Ես աշխարհում հորջորջվել եմ Հյուզ Կապետ,
Իմ սերունդն են Ֆիլիպներն ու Լուիներ,
Որոնք դարձան Գաղղիայի նոր կարապետ:

52 Ես որդին եմ մի փարիզցու մսագործ.
Երբ չքացան հին արքաները բոլոր,
Բացի մեկից, որ զգեցավ խորգաձորձ,

55 Արքայության կառավարման սանձը ձիգ
Իմ ձեռքն անցավ. նոր հողերով և բազում
Համհարզներով այնքան դարձա ազդեցիկ,

58 Որ իմ որդին ևս գահը բարձրացավ,
Որից հետո գահակալել սկսեց
Իմ սերունդը, երբ սուրբ օծումն ստացավ:

61 Մինչ քանի դեռ մեծ օժիտը պրովանսյան
Չէր փչացրել իմ սերնդին, սա, ճիշտ է,
Աննշան էր, բայց չէր տալիս գոնե զյան:

64 Այդ օրից նա զոռով, սուտով սկսեց
Հափշտակել, և ապա, իբր հատուցում,
Նորմանդիան, Պոնտն ու Գասկոնյան ձեռք բերեց։

67 Կառլոսն եկավ Իտալիա, իբր հատուցում,
Զոհաբերեց Կոնրադինին, և ապա
Թունավորեց Թովմասին, իբր հատուցում։

70 Ժամանակ եմ տեսնում, ոչ շատ հետագա,
Երբ Ֆրանսիայից կգա ուրիշ մի Կառլոս,
Որ իրեն և յուրայնոց լավ ցույց կտա։

73 Կգա զինված միայն տեգով Հուդայի,
Եվ դրանով կհարվածի նա այնպես,
Որ Ֆլորենցիո փորոտիքը կթափի։

76 Դրանից նա հող չի շահի, այլ հանցանք
Եվ ամոթանք, շահ այնքան ծանր իր համար,
Որքան թեթև բան է հաշվում նա դրանք։

79 Եվ մյուսը, որ գերի ընկավ բաց ծովում,
Սակարկությամբ կծախի իր աղջկան,
Ինչպես հենը ստրկուհուն է ծախում։

82 Ագահությո՛ւն, ի՞նչ կարող ես անել դեռ,
Երբ ցեղս այնքան վարակեցիր քեզանով,
Որ նա նույնիսկ չի խնայում իր դստեր։

85 Բայց կան գործեր է՛լ ավելի զազրոտի.
Դա շուշանի ներխուժումն է Անանյա
Եվ Քրիստոսի գերումն հանձին հաջորդի։

88 Ես տեսնում եմ նրան նորից այպանված,
Նորոգված եմ տեսնում քացախն ու լեղին,
Եվ տեսնում եմ նրան նորից սպանված։

91 Տեսնում եմ նոր Պիղատոսին այնքան չար,
Այնքան անհագ, որ նա առանց ամոթի
Ագահության կիրքը տանում է Տաճար։

94 Ո՛վ Տեր, ե՞րբ ես պիտի լինեմ անտրտում,
Տեսնելով քո դատաստանը երկնային,
Որ երկնում ես դու քո զանխուլ խորհրդում:

97 Իսկ իմ գոչը հարսի մասին Սուրբ Հոգու,
Որի համար դու դիմեցիր ինձ հարցով,
Ինձնից որոշ բացատրություն առնելու,

100 Մյուսների հետ մենք կրկնում ենք աղոթքում,
Երբ ցերեկ է, իսկ երբ գիշեր է գալիս,
Դրանց ներհակ օրինակներ ենք ոգում:

103 Մենք գիշերը Պիգմալիոնին հիշում ենք,
Որին ոսկու անհագ ծարավը դարձրեց
Գող, դավաճան ու մարդասպան չարաենգ:

106 Եվ տանջանքը Միդասի խոլ ու ագահ,
Որ գոհացրեց իր պահանջը անհագուրդ
Եվ առհավետ դարձավ ծաղրի առարկա:

109 Հիշում ենք և անմտությունն Աքարի,
Որ գողացավ ավարները, և կարծես
Դեռ պատժում է նրան ցասումը Հեսվի.

112 Մեղադրում ենք Անանիային ու կնոջ.
Հիշում քացին, որ Հելիոդորն ստացավ.
Հիշում նաև Պոլինեստորին մեծագոչ,

115 Որ սպանեց Պոլիդորին մերձավոր.
Հուսկ գոչում ենք. «Ո՛վ Կրասոս, ասա մեզ,
Ի՞նչ համ ունի ոսկին, գիտես քանի որ»:

118 Մերթ գոչում ենք զիլ ձայնով, մերթ ձայնով բամբ,
Ըստ այն հույզի, որ մեզ մղում է ոգել
Մերթ առավել և մերթ նվազ ուժգնությամբ:

121 Քիչ առաջ այն բարիքները մենակ ես
Չէի ոգում. ով որ այստեղ մոտերքում
Չէր ձայնարկում, որ լսելի լիներ քեզ»:

124 Մենք բաժանվել էինք արդեն խոսողից,
Եվ շտապում էինք առաջ ընթանալ,
Որքան թույլ էր տալիս նեղվածքը տեղի,

127 Երբ զգացի հանկարծ ցնցումը լեռան.
Դա ինձ անով ու սարտուոով համակեց,
Ինչպես նրան, որին տանում են մահվան:

130 Չէր տատանվում Դելոսն այնպես ուժգնակի,
Երբ Լատոնան բույն չէր դրել դեռ այնտեղ՝
Ծնանելու երկու աչքերն երկնքի:

133 Ամենուրեք հնչեց մի ճիչ ահագին,
Եվ վարպետը դեպ ինձ դարձավ ասելով,
«Մի վախենա, ես կանգնած եմ քո կողքին»:

136 Երգում էին **«Փառք ի բարձունս Աստուծոյ»**,
Որքան որ ես կարողացա հասկանալ,
Երբ այն ճիչը ունկնդրեցի ի մոտ:

139 Մենք մնացինք անշարժ և ափ ի բերան,
Առաջինն այն երգը լսող հովվաց պես.
Հուսկ դադրեցին երգն ու ցնցումը լեռան:

142 Ապա նորից առաջացանք նույն ճամփով,
Նայելով այն ստվերներին վայրանկյալ,
Որոնք դարձյալ հեծում էին տագնապով:

145 Անգիտությունն, եթե լավ եմ հիշում ես,
Ինձ չի մղել այնպես սաստիկ գիտնալու,
Ինչպես մղեց արդ գիտնալու ճշտապես,

148 Թե երգի ու ցնցման պատճառն ինչն էր բուն.
Ոչ շտապ երթն ինձ թույլ տվեց, որ հարց տամ,
Ոչ ինքս էի կարող լինել բանիբուն.

151 Այսպես գնում էի խոհուն ու տարտամ:

ԵՐԳ ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ

Սաստիկ տանջված բնական սուր ծարավից,
Որ միմիայն հագեցնում է այն ջրով,
Որը խնդրեց սամարուհին Քրիստոսից,

4 Ճեպում էի առաջնորդիս ետևից,
Հոգիների միջով խուռն ու բազմահոծ,
Հուզված նրանց արդար պատժից ու ցավից:

7 Հանկարծ, ինչպես, ըստ Ղուկասի գրածի,
Քրիստոսն երկու աշակերտի երևաց,
Երբ հառնել էր գերեզմանից փառացի,

10 Այսպես այստեղ մեկն երևաց մեր ետև,
Որ գալիս էր պառկածներին նայելով.
Տեսնելով մեզ՝ նա մեզ ասաց անդեղև.

13 «Եղբայրներ, ձեզ խաղաղություն տա Աստված»:
Իսկույն դարձանք, և Վիրգիլիոսը նրան
Համապատշաճ ողջույն տվեց ու ասաց.

16 «Երանի թե երանելյաց կաճառում
Քեզ ընդուներ խաղաղությամբ Տերն արդար,
Որ պահում է նա մշտական աքսորում»:

19 «Ի՞նչպես եթե դուք հոգիներ չեք ընտրյալ,—
Բարբառեց նա, մեզ հետ առաջ շարժվելով,—
Ո՞վ ձեզ բերեց այս ոլորտները օրհնյալ»:

22 Վարպետս ասաց. «Եթե նայես դու սրա
Նշաններին, որ հրեշտակն է նշել,
Կիմանաս, որ պետք է վերև նա գնա:

25 Բայց զի կյանքի թելը մանող տիրուհին
Չի ավարտել մանելը այն կծիկի,
Որ Կլոթոսն է տրամադրում իր հերթին,

28 Սրա հոգին, նման իմի և քոնի,
Դեպի բարձունք մենակ գնալ չի կարող,
Քանզի մեզ պես պայծառատես աչք չունի:

31 Եվ ես ելա լայն երախից Դժոխքի
Ուղեկցելու համար նրան մինչև անդ,
Ուր կարող ենք մենք բարձրանալ կողք-կողքի:

34 Բայց ասա ինձ՝ ինչո՞ւ լեռը դղրդաց,
Ինչո՞ւ ճիչը հոգիների համախումբ
Հնչեց մինչև լեռան ոտներն հարաթաց»:

37 Այս հարցումով նա փափագըս գուշակեց,
Եվ գոհացում ստանալու հույսըս լոկ.
Իմ ցանկության սաստկությունը մեղմացրեց:

40 Հոգին ասաց. «Ոչինչ չկա մասնավոր,
Որ խանգարի կարգն ու կանոնը լեռան
Եվ կամ լինի մի նորություն անսովոր:

43 Այստեղ չկա փոփոխություն տարերքի.
Փոփոխության պատճառ կարող է լինել
Լոկ սեփական ուժերի մեջ երկնքի.

46 Չի ոչ եղյամ, ոչ ցող, ոչ ձյուն, ոչ անձրև,
Ոչ էլ կարկուտ չի թափվել և չի թափվում
Եռաստիճան կարճ սանդուղքից այն վերև:

49 Այստեղ չկան ոչ խիտ ամպեր, ոչ ցանցառ,
Ոչ փայլակներ, ոչ էլ դուստրը Տավմանտի,
Որը երկրում փոխում է իր տեղը հար:

52 Չոր գոլորշի ու ցնցումներ չեն լինում
Ավելի վեր այն սանդուղքի գագաթից,
Ուր Պետրոսի փոխանորդողն է բազմում:

55 Գուցե ցածում ցնցում լինում է մեկ-մեկ,
Բայց չգիտեմ ինչպես՝ հողմերն ընդերկրյա
Այստեղ ցնցում առաջացրած չեն երբեք:

58 Ատտ ցնցվում է, երբ որևէ մի հոգի
Մաքրվում է և երկինք է համբառնում
Ուղեկցությամբ հոգիների օրհներգի։

61 Եվ մաքրության երաշխիքը իղձն է այն,
Որով հոգին իրեն պատրաստ է զգում՝
Համբառնալու դեպ օթարանն հանգստյան։

64 Առաջ էլ նա համբառնալու իղձ ուներ,
Բայց Աստուծո արդար կամքի համաձայն
Նախ պետք է իր արդար պատիժը կրեր։

67 Եվ ես, որ այս տանջանքի մեջ եմ հլու
Ավելի քան հինգ հարյուր ամ, լոկ հիմա
Ինձ զգացի պատրաստ երկինք ելնելու։

70 Հենց դրանից լեռը ցնցվեց ուժգնորեն
Եվ հոգիներն օրհներգեցին Բարձրյալին,
Որ իրենք էլ վերև կանչվեն փութորեն»։

73 Այսպես ասաց, բայց զի ծարավը մարդու
Որքան մեծ է, այնքան կուշտ է նա խմում,
Նույնքան եղավ նա ինձ համար ձեռնտու։

76 Եվ վարպետը նրան. «Տեսնում եմ ես արդ,
Թե ցանցն ինչպես ձեզ բռնում է, բաց թողնում,
Ինչից է ցունցն ու ձեր ցնծերգը զվարթ։

79 Հիմա հաճիր պարզ ու մեկին խոսքերով
Ինձ ասելու, թե ով ես դու և ինչու
Պառկել ես աստ այսքան երկար դարերով»։

82 «Երբ Տիտոսը կամքով երկնի Արքայի
Վրեժ լուծեց այն խոցերի համար խոր,
Ուրկից հոսեց ծախած արյունն Հուդայի,—

85 Խոսեց հոգին,— ապրում էի համբավով,
Որ ամենից շատ է տևում ու հարգվում,
Սակայն ես դեռ չէի ապրում հավատով։

88 Իմ երգերը այնքան քաղցր հնչեցին,
Որ կանչվեցի ես, տուլուզցիս, ի Հռոմ,
Ուր գլուխս մրտենիով պճնեցին:

91 Ստատիոս եմ կոչվում երկրում բովանդակ.
Ես երգեցի Թեբեն, ապա Աքիլլին.
Բայց ես ընկա իմ այս երկրորդ բեռան տակ.

94 Աղբյուրը իմ քերթողական ավյունի
Եղան կայծերն աստվածային բոցի այն,
Որից շատեր լույս ստացան կենդանի:

97 Ակնարկում են **Էնեականն** հիշարժան,
Որ ներշնչմանս մայրն ու դայակը եղավ.
Առանց նրան կմնայի աննշան:

100 Եվ որպեսզի ես ապրեի Վիրգիլի
Ապրած ատեն, կլինեի հույժ հոժար
Այստեղ մնալ մի տարի էլ ավելի»:

103 Այս խոսքերի վրա Վիրգիլն ուղղվեց ինձ
Մի դեմքով, որ ինձ ասում էր՝ «Լուռ մնա»,
Բայց չի կարող կամքը անել ամեն ինչ:

106 Ծիծաղն ու լացն այնքան կապված են ներքին
Զգացմունքին, որ պարզասիրտ մարդկանց մոտ
Դրանք նվազ հպատակվում են կամքին:

109 Ես ժպտացի նման մարդուն ակնարկու.
Ստվերն այնժամ մի պահ լռեց ու նայեց
Աչքերիս մեջ, որ հայտարարն են հոգու:

112 «Երանի թե դժվարագույն քո ուղին
Լավ ավարտվեր,— ասաց նա ինձ,— բայց ինչո՞ւ
Ժպտի մի շող հիմա խաղաց քո դեմքին»:

115 Երկու կողմից ես կաշկանդված մնացի.
Մեկն ուզում էր լռեմ, մյուսը՝ խոսեմ.
Հասկանալով ինձ վարպետը մտացի,

118 Ասաց. «Խոսիր առանց դուլզն ինչ վարանքի,
Բացեիբաց պատասխանիր դու նրան,
Ինչ հարցնում է այնքան փուլթով շեշտակի»:

121 Եվ ես. «Լսիր, ով հինավուրց դու հոգի,
Ժպտիս համար զարմանում ես դու գուցե.
Բայց ավելի պատճառ ունես զարմանքի:

124 Ահա սա, որ առաջնորդս է փառապանծ,
Վիրգիլիոսն է, որից դու լիցք ստացար,
Տաղերգելու աստվածներին և մարդկանց:

127 Ժպտիս պատճառն եթե այլ բան կարծեցիր,
Սխալվում ես. պատճառը այն խոսքերն են,
Որ դու հենց նոր նրա մասին ասացիր»:

130 Նա թեքվեց, որ գրկեր ոտներն ուսուցչիս,
Բայց սա ասաց. «Եղբայր, թող այդ, մի անիր,
Չի դու և ես լոկ ստվերներ ենք անմիս»:

133 Նա ուղղվեց ու ասաց. «Կարող ես դատել
Թե իմ սերը ինչքան ջերմ է քո հանդեպ,
Երբ մոռնալով, որ մենք ունայն ենք դարձել,

136 Ես ստվերը ընդունում եմ մարմնի տեղ»:

ԵՐԳ ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Հրեշտակն արդեն մեր ետևն էր մնացել,
Նա, որ մի այլ նիշ ջնջելով իմ ճակտից,
Դեպ վեցերորդ բոլորակն էր մեզ ճամփել,

4 Եվ ասել էր. «Երանյալ են նրանք որ
Արդարության ծարավի են ու քաղցյալ,
Եվ չեն ձգտում ոչ մի բանի նյութավոր»:

7 Ես զգալով թեթևացած ինձ նորից,
Առանց ճիգի քայլում էի դեպի վեր՝
Երկու փութկոտ պոետների ետևից,

10 Երբ Վիրգիլիոսն ասաց նրան. «Բարությամբ
Ջեղուն սերը միշտ ուրիշ սեր կարծարծի,
Միայն թե դա արտահայտվի եռանդյամբ:

13 Այն պահից, երբ Յուվենալը բանաստեղծ
Եկավ մեզ մոտ Լիմբոսի մեջ Դժոխքի,
Եվ ինձ հայտնեց քո սերը ջերմ ու անկեղծ,

16 Ես քո հանդեպ սեր տածեցի ավելի,
Քան մարդ տածեց հանդեպ պայծառ մի մարդու.
Արդ կլինի ճամփան քեզ հետ հաճելի:

19 Նախ ներիր ինձ որպես մոտիկ բարեկամ,
Եթե հարցրս լինի մի քիչ համարձակ,
Եվ ինձ ասա որպես ընկեր համակամ.

22 Ինչպե՞ս եղավ, որ քո սրտում տեղ գտավ
Ագահությունն իմաստության մեջ այնքան,
Որ ձեռք բերիր քո ջանքերով ոչ սակավ»:

25 Այս խոսքերից Ստատիոսը նախ ժպտաց,
Ապա ասաց. «Քո խոսքերը ինձ համար
Սիրույդ ազնիվ նշաններն են անկասկած:

28 Սակայն հաճախ երևում են մեզ բաներ,
Որոնց պատճառն անհայտ ու մութ մնալով՝
Հանիրավի հարուցում են կասկածներ:

31 Քո հարցումը այն կարծիքդ է վկայում,
Թե ես անցյալ կյանքում ագահ եմ եղել,
Որովհետև դու ինձ այստեղ ես տեսնում:

34 Արդ գիտցիր, որ ագահությունն ինձնից հույժ
Հեռու եղավ. սակայն ախտն էլ հակառակ
Ստանում է այստեղ ծանր ու երկար տույժ:

37 Եվ եթե ես ինձ չուղղեի, կարդալով
Այն տողերդ, ուր բնությանն դեմ մարդկային
Մի ժամանակ դու գոչել ես զայրույթով՝

40 «Ո՞ւր չես տանում, օ՛ անիծյալ քաղց ոսկու,
Մահկանացու մարդկանց ձգտումը անհագ»,
Արդ կզգայի բախումները ահարկու:

43 Տեսնելով որ մեր ձեռքերը ծախսելիս
Կարող էին բացվել չափից ավելի,
Ես զղջացի իմ այդ հանցանքը մախիզ:

46 Քանիներ կան, որ վարում են շռայլ կյանք,
Չիմանալով որ իրենք մեղք են գործում
Եվ չեն զղջում իրենց կյանքում բովանդակ:

49 Եվ գիտցիր, որ այն մեղքը որ ուղղակի
Հակոտնյան է մի այլ մեղքի՝ նրա հետ
Ստանում է նույն պատիժը ծանրակի:

52 Արդ եթե ես սրանց մեջ եմ զետեղվել,
Որոնք իրենց ագահությունն են քավում,
Ապա պատճառն հակառակ մեղքս է եղել»:

55 «Երբ երգեցիր այն զինամարտը վայրագ,
Որ Յոկաստին կրկնակի վիշտ պատճառեց,—
Ասաց նրան բանաստեղծը հովվերգակ,—

58 Այդ երգերից, որ ներշնչեց քեզ Կլիոն,
Դեռ հայտնի չէր հարումդ այն հավատին,
Առանց որի բարի գործը չէ գործոն:

61 Թե այդպես է, ապա ասա՝ ինչպիսի՞
Արև կամ ջահ լուսավորեց քեզ այնպես,
Որ դու դարձար հետևորդը ձկնորսի»:

64 Եվ Ստատիոն. «Դու ինքդ ինձ նախ կանչեցիր
Դեպի Պատնաս իր ակունքից ըմպելու,
Դու ինքդ ինձ նախ հավատի լույս ջամբեցիր:

67 Նմանվեցիր դու ջահակիր այն մարդուն,
Որ մթան մեջ ընթանում է առխարխապի,
Դառնալով իր հետնորդների լուսատուն»,

70 Երբ ասացիր՝ «Նորոգվում է դարը արդ.
Հաստատվում է արդարությունն հինավուրց,
Եվ երկնքից ցած է իջնում մի նոր մարդ»:

73 Քեզնով դարձա բանաստեղծ ու քրիստոնյա.
Բայց որպեսզի լավ հասկանաս միտքը իմ,
Ուրվագիծըս քիչ կընդլայնեմ ես հիմա:

76 Աշխարհն արդեն տոգորված էր ուղղակի
Այն ճշմարիտ ու սրբազան հավատով,
Որ բամբերներն էին բերել երկնքի:

79 Եվ այն խոսքդ, որ ես այստեղ հիշեցի,
Զայնակցում էր քարոզներին նոր մարդկանց,
Եվ ես նրանց հաճախ այցի գնացի:

82 Նրանք այնքան ինձ թվացին սրբակյաց,
Որ երբ նրանց Դոմիտիանը հալածեց,
Նրանց ողբի հանդեպ չեղա անզգած:

85 Եվ որքան ինձ երկրի վրա մնաց կյանք,
Սատարեցի նրանց և վարքն իրենց սուրբ,
Ինձ զզվեցրեց ամեն ուրիշ դավանանք:

88 Եվ դեռ չերգած հունաց արշավը Թեբե՝
Մկրտվեցի, սակայն վախից ծածկեցի
Քրիստոնյա իմ դառնալը գրեթե,

91 Ինձ հեթանոս ձևացնելով ընդերկար.
Այդ թուլությանս համար էլ ես մնացի
Չորրորդ գոտում ավելի քան չորեք դար:

94 Սակայն դու որ իմ աչքերին պարզեցիր
Այն բարիքը, որի մասին եմ խոսում,
Ապա, քանի միասին ենք, զեկուցիր՝

97 Ո՞ւր է արդյոք Տերենտիոսը մեր զվարթ,
Ո՞ւր են Վարրոն, Պլավտոսն ու Կեկիլիոն.
Եթե նրանք պատժված են, ո՞ւր են արդ»:

100 «Դրանք, Պերսիոն, ես և ուրիշ դեռ շատեր,—
Ասաց վարպետս,— այն հույնի հետ միասին,
Որ Մուսայից ամենից շատ շոյված էր,

103 Մութ զնդանի պարունակում ենք վերի.
Մենք խոսում ենք Պառնաս լեռան մասին միշտ,
Ուր ապրում են ներշնչողներն երգերի:

106 Անդ մեզ հետ են Եվրիպիդն ու Անտիֆոնն,
Ագաթոնը, Սիմոնիդն ու այլ հույներ,
Որոնց ճակատն արտախուրեց բրաբիոնն:

109 Այնտեղ են և կանայք, որոնց երգել ես—
Անտիգոնեն, Դեիֆիլեն, Արգիան
Եվ Իսմենեն, որ վշտահար է այնպես:

112 Այնտեղ է նա, որ ցույց տվեց Լանգիան,
Այնտեղ է նա, Տիրեսիասի դուստրը դեգ,
Եվ Թետիսը, ինչպես նաև Դեյդամիան»:

115 Լռել էին զույգ պոետները արդեն
Եվ ուշադիր նայում էին իրենց շուրջ,
Պրծած ելքից ու սանդուղքից ժայռեղեն:

118 Անցել էին չորս նաժիշտները օրվա,
Իսկ հինգերորդն առեղի մոտ էր կանգնած,
Վեր ուղղելով հրավառ ծայրը նրա,

121 Երբ ինձ ասաց առաջնորդս. «Պետք է մենք
Լեռը շրջենք բոլորակի աջ եզրով,
Ինչպես որ մենք սովորաբար արել ենք»:

124 Սովորությունն առաջնորդեց մեզ այստեղ.
Եվ մենք ճամփա ընկանք նվազ վարանքով,
Հավանությամբ մեր ուղեկցի բանաստեղծ:

127 Ես հետևում էի նրանց անվարան
Եվ ունկնդրում ուշով նրանց զրույցին,
Որից դասեր էի քաղում քերթության:

130 Սակայն հանկարծ նրանց զրույցն օգտավետ
Խզեց մի ծառ, որ մենք գտանք մեր ճամփին,
Բեռնավորված պտուղներով բուրավետ:

133 Ինչպես քիչ-քիչ բարակում է եղևնին,
Բարձրանալով, այնպես էր սա իջնելով,
Որպեսզի մարդ չբարձրանա ճյուղերին:

136 Այն կողմից, ուր մեր ճանապարհն էր միշտ գոց,
Բարձրը ժայռից մի վճիտ ջուր էր ցայտում
Եվ տարածվում սաղարթների վրա հոծ:

139 Երբ մոտեցանք արտասովոր այն ծառին,
Սաղարթների միջից մի ձայն բարբառեց.
«Ջուր եք ձգտում այս մրգերին ու ջրին»:

142 Ապա ասաց. «Մարիամ կուսանը բարի
Ոչ իր մասին, այլ այն մասին էր հոգում,
Որ հանդեսը լինի պատվով, անթերի:

145 Հին Հռոմի կանայք իբրև ըմպելիք
Ջրով միայն գոհ մնացին, Դանիելն էլ
Մերժեց ուտեստն ու ձեռք բերեց գիտելիք:

148 Նախնադարը ոսկու նման էր պայծառ,
Երբոր քաղցից բալուտն համեղ էր թվում,
Իսկ ծարավից ջուրը թվում էր նեկտար:

151 Անապատում Հովհաննեսը սնանկեց
Վայրի մեղրով ու մարախով, և այնպես
Փառավորվեց նա և դարձավ այնպես մեծ,

154 Ինչպես որ դա Սուրբ Մատյանն է հայտնում ձեզ»:

ԵՐԳ ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ

Մինչ դեռ նայում էի ծառին սաղարթուն,
Ինչպես նա, ով ճնճղուկներին է նայում,
Զուր կորցնելով իր ժամանակը զարթուն,

4 Ավելի քան հոգատար հայրս ինձ ասաց.
«Որդյակ, գնանք, մենք պետք է որ ավելի
Լավ գործածենք ժամանակը սահմանված»:

7 Ես ուղղեցի դեմքս ու քայլերս դեպի
Իմաստուններն, որոնց զրույցն այնպես էր,
Որ ես չէի զգում տաժանքը ճամփի:

10 Հանկարծ անա հնչեց մի երգ ողբալից—
«Ով Տէր, եթե զշրթունս իմ,— մի ձայնով,
Որ լսողը կզգար թե խինդ, թե թախիծ:

13 «Սիրելի հայր, այդ ի՞նչ երգ է»— ես հարցրի:
Եվ նա. «Կարծեմ ստվե՛րներ են մոտեցող,
Որ քավում են իրենց մեղքը որկորի»:

16 Ինչպես մարդիկ, խորհուրդների մեջ սուզված,
Հանդիպելիս ճամփին անձանց անծանոթ,
Հպանցելով մի պահ նայում են նրանց,

19 Այսպես հոգվոց մի խումբ, լուռ ու երկյուղած,
Արագ գալիս անցնում էին մեր կողքով,
Զարմանահար հայացքն իրենց մեզ ուղղած:

22 Աչքերն անփայլ ու փոս էին բոլորի,
Դեմքերն անգույն և մարմիններն այնքան չոր,
Որ առել էր կաշին ձևը ոսկորի:

25 Չեմ կարծում, որ Էրեսիքթոնը լիներ
Ծոմից այնքան հյուծված, ծյուրված, չորացած,
Երբ ամենից շատ դրանից վախ ուներ:

28 Խորհում էի ես ինձ, նրանց նայելով.
«Ահա ցեղն, որ Երուսաղեմը կորցրեց,
Երբ Մարիամը որդուն կերավ հոշելով»։

31 Ակնախորշերն անքար մատնու պես էին.
Ովքեր մարդկանց դեմքին կարդում են ՕՄՕ,
Այնտեղ պիտի Մ տառը լավ տեսնեին։

34 Եվ ո՞վ պիտի, պատճառն առանց գիտնալու,
Հավատար որ տեսքը պտղի ու ջրի
Ի զորու էր նրանց այսքան հյուծելու։

37 Չիմանալով հյուծման պատճառը նրանց,
Ես զարմանքով խորհում էի, թե նրանք
Ինչի՞ց էին այդպես ծյուրվել չափազանց,

40 Երբ մի ստվեր հանկարծ գանգի խոռոչից
Աչքերն ուղղեց դեպի ինձ ու պիշ նայեց,
Ապա գոչեց. «Այս շնորհն ինձ ո՞րտեղից»։

43 Դեմքից նրան չէր կարելի ճանաչել.
Սակայն նրա ձայնից հայտնի եղավ ինձ
Այն, ինչ տեսքից անհնար էր գուշակել։

46 Նրա ձայնից լուսավորվեց միտքը իմ,
Եվ ես նրա կերպարանքում խաթարված
Ճանաչեցի Ֆորեզեին մտերիմ։

49 «Օ, մի նայիր չոր ու դժգույն իմ դեմքին,—
Ասաց նա ինձ թախանձագին խնդրանքով,—
Ոչ էլ նայիր երիթացած իմ մարմնին։

52 Բայց քո մասին ճշմարիտը ինձ հայտնիր,
Եվ ասա թե ուղեկիցներդ ովքե՞ր են.
Խնդրեմ ինձ հետ զրուցելու մի քաշվիր»։

55 «Մեռած դեմքդդ ողբացել եմ ես կյանքում,—
Ասացի ես,— բայց տեսնելով այն խեղված,
Հիմա նորից նույն կսկծանքն եմ ապրում։

58 Արդ ինձ ասա՝ ի՞նչն է հյուծում այդպես ձեզ.
Ես զարմանքից դժվարանում եմ խոսել.
Զարմացողը վատ է խոսում իսկապես»։

61 Եվ նա ասաց. «Այս ծառի ու ջրի մեջ
Աստվածային կամքով մուծված է մի ուժ,
Որ հյուծում ու չորացնում է այսպես մեզ։

64 Բոլոր սրանք, որոնք երգում են լալով,
Մոլությունն ու ախտը իրենց որկորի
Աստ քավում են քաղց ու ծարավ զգալով։

67 Եվ ուտելու ու խմելու տենչը վառ
Բորբոքում են մեր մեջ մրգերը բուրյան
Եվ ջրերը, որ հոսում են ժայռն ի վար։

70 Ամեն անգամ, որ այստեղով մենք դառնանք,
Նորոգվում է մեր տանջանքը նորից նոր,
Ես կասեի ոչ թե տանջանք, այլ հրճվանք.

73 Չի մեզ ծառին ձգող կամքը կամքն է այն,
Որ Քրիստոսին ասել տվեց **«Աստուած իմ»**,
Երբ որ նա մեզ փրկեց գնով իր արյան»։

76 Եվ ես նրան. «Ով Ֆորեզե, այն օրից,
Երբ մեռնելով ընկար աշխարհն հանդերձյալ,
Մինչև հիմա դեռ չի անցել հինգ տարի։

79 Եթե զղջումդ այնքան էիր ուշացրել,
— Զղջում, որ մեզ հաշտեցնում է Աստծու հետ—
Երբ այլևս չէիր կարող մեղք գործել,

82 Ապա ինչպե՞ս այս բոլորակն եկար դու։
Կարծում էի քեզ կգտնեմ ներքևում,
Ուր կենում են զանցառուներն հարկատու»։

85 Եվ նա. «Նելլաս այնքան շուտով ինձ տարավ
Ճաշակելու այս օշինդրը դառնանուշ,
Նա էր, որ ինձ արտասուքով հորդառատ,

88 Զերմ աղոթքով և հառաչքով իր խորին
Ինձ դուրս հանեց կայանքներից սպասման
Եվ ինձ փրկեց ոլորտներից ստորին:

91 Իմ հեգ այրին, որին անչափ սիրեցի,
Համելի ու թանկագին է Աստուծո,
Չի մենակ է վարք ու բարքով ուղղացի.

94 Քանզի հիմա Սարդինիայի Բարբաջան
Ավելի շատ կանայք ունի ամոթխած,
Քան քաղաքն այն, ուր ապրում է իմ Նելլան:

97 Օ՛ եղբայր իմ, ի՞նչ ես ուզում որ ասեմ.
Ես տեսնում եմ այն ժամանակը գալիք,
Եվ այնքան էլ դա հեռու չէ, կարծում եմ,

100 Երբ կարձակվեն հրամաններ վարչական
Ֆլորենտացի կանանց ընդդեմ անպատկառ,
Որպեսզի մերկ ստինքներով դուրս չգան:

103 Բարբարոս կամ սարակինոս կա՞ մի կին,
Որ ծածկելու համար կուրծքը՝ հարկ զգա
Հոգևոր կամ աշխարհական մտրակին:

106 Բայց եթե այդ անամոթներն զգային,
Թե երկինքը ինչ է նրանց պատրաստում,
Այժմվանից բերանաբաց կոռնային:

109 Եվ եթե իմ կռահումներն ստույգ են,
Կպատժվեն նրանք, նախքան այսօրվա
Մանկանց այտերն աղվամազով ծածկվեն:

112 Այժմ ինձ ասա՝ այստեղ ինչպե՞ս ես եկել.
Ոչ միայն ես, այլև սրանք զարմանքով
Նայում են անդ, ուր քո շվաքն ես ձգել»:

115 Եվ ես նրան. «Եթե միտքդ դու բերես
Այն կյանքը, որ մենք վարեցինք միասին,
Դառն հուշերից կճնշվես ծանրապես:

118 Ահա սա, որ ուղեկիցս է, անցյալ օր
Ինձ դուրս բերեց այդ ախտավոր կենցաղից,
Երբ դարձել էր արևի քույրը կլոր։

121 Այս անպատիր ու կենդանի իմ մարմնով
Նա ինձ տարավ դեպ հոգիները մեռած՝
Դժոխքի խոր, մշտագիշեր խավարով։

124 Իր օգնությամբ ես դուրս ելա այնտեղից
Եվ եկա աստ, բարձրանալով լեռն ի վեր,
Որ մաքրում է ձեզ երկրային աղտերից։

127 Նա ասաց. որ իր պարտքն է ինձ ուղեկցել,
Մինչև անդ՝ ուր Բեատրիչեն կգտնեմ.
Այնժամ ինքը ինձ հրաժեշտ կտա էլ։

130 Վիրգիլն է սա, որ ինձ այսպես բարբառեց.
Իսկ այս մյուսը այն հոգին է խստամբեր,
Որի համար քիչ առաջ լեռը ցնցվեց,

133 Որպեսզի նա նրան ի բաց թոթափեր»։

ԵՐԳ ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ

Զրույցն ու երթն իրար չէին արգելակ,
Այնպես որ մենք գնում էինք ճեպընթաց,
Ինչպես մի նավ մղված հողմից հաջողակ։

4 Իսկ նրանք, որ թվում էին կրկնամեռ,
Փոս աչքերով նայում էին իմ վրա,
Զարմանալով որ կենդանի էի դեռ։

7 Ես ասացի խոսքըս առաջ տանելով.
«Մի գուցե նա դանդաղում է համբառնալ,
Մեզ երկուսիս ընկերակցել ուզելով։

10 Բայց թե գիտես, ասա ո՞ւր է Պիկկարդան,
Եվ ասա, թե ուշիուշով ինձ նայող
Այս խմբի մեջ կա՞ մի հոգի հիշարժան»:

13 «Իմ քույրը, որ գեղեցիկ էր ու բարի,
Բայց չգիտեմ որն ավելի, այժմ արդեն
Գտնվում է Ոլիմպոսի մեջ վերի»:

16 Այսպես ասաց, որից հետո նա հարեց.
«Անհրաժեշտ է մեր անունները այստեղ տալ,
Զի մեր դեմքը խաթարված է պասից մեծ:

19 Սա լուկկացի Բոնաջունտան է,— ասաց,
Եվ ցույց տվեց նրան մատով,— իսկ մյուսն այն,
Որի դեմքն է ամենքից շատ ազազած,

22 Եկեղեցու ղեկն ունեցավ իր ձեռքին.
Նա Տուրից է, և արդ ծոմով է քավում
Բոլսենայի օձաձկները ու գինին»:

25 Եվ շատերի մատնանշեց մեկ առ մեկ.
Ոչ ոք դժգոհ չէր երևում նշվելուց,
Զի չայլայլվեց, չմոայլվեց ոչ մի դեմք:

28 Այնտեղ քաղցից ատամացում էին զուր
Ուբալդինն ու Բոնիֆացիո Ֆիեսկին,
Որ շատ մարդկանց գավազանով հովվեց սուրբ:

31 Այնտեղ մեսսեր Մարկեզեն էր չորացած,
Որ Ֆոլիում միշտ զբաղվեց խմելով,
Որից երբեք իրեն չզգաց հագեցած:

34 Բայց ինչպես նա, ով նայում է, որ ընտրի,
Այսպես և ես նախընտրեցի լուկկացուն,
Որ խոսելու փափագ ուներ ավելի:

37 Նա հոծում էր ինչ որ անուն-Զենտուկկա—
Իր այն մասով, որ ի վերուստ սահմանված
Տանջանքներին ավելի էր ենթակա:

40 «Ո՛վ հոգի, որ ինձ հետ խոսել ես բաղձում,—
Ասացի ես,— արդ բարբառիր դու այնպես,
Որ երկուսով էլ ստանանք գոհացում»։

43 Եվ նա. «Մի կին, որ անքող է տակավին,
Իմ քաղաքը քեզ հաճելի կդարձնի,
Թեև արժան է նա մարդկանց պարսավին։

46 Դու հիշիր այս նախատեսումս անձնական.
Եթե հնծյունս այլ մտքով ես հասկանում,
Քեզ կպարզեն հետո դեպքերն իրական։

49 Բայց դու նա չե՞ս, ով հորինեց նոր տաղեր,
Որոնք կարծեմ սկսում են այս տողով.
«Կանայք, դուք որ ձեր մեջ ունեք ազնիվ սեր»։

52 Եվ ես նրան. «Ես մեկն եմ, որ նոթագրում,
Ապա հույզերս արտահայտում եմ այնպես,
Ինչպես սերն է ինձ ներշնչում, թելադրում»։

55 Եվ նա. «Եղբայր, արդ տեսնում եմ խոչն այն սուր,
Որ Նոտարին, Գուիտտոնին, նաև ինձ
Հեռու պահեց ձեր նոր ոճից քաղցրալուր։

58 Քաջ տեսնում եմ, թե ինչպես ձեր գրչով դուք
Հետևում եք սերտիվ սիրույն թելադրող,
Ինչ որ չեղավ գրարվեստին մեր հատուկ։

61 Ով շեղվում է ողջմտության կանոնից,
Տարբերությունն այդ ոճերի չի տեսնում»։
Եվ նա լռեց, բավարարված զրույցից։

64 Ինչպես հաճախ կռունկները հեռագնաց,
Որ Նեղոսի երկայնքին են ձմեռում,
Շարան-շարան պտտում են արևնթաց,

67 Այսպես բոլոր հոգիներն այն ներգևյալ,
Որ հետամուտ էին իրենց քավության,
Շուտ եկան և վերադարձան փութաքայլ։

70 Եվ ինչպես նա, ով հոգնելով վազելուց,
Ընկերներից զատվում է ու մեղմ քայլում,
Մինչև որ իր կուրծքը դադրի հևալուց,

73 Այսպես այստեղ անջատվելով սուրբ հոտից,
Դանդաղորեն ինձ հետևեց Ֆորեզեն,
Հարցնելով ինձ. «Ե՞րբ կտեսնեմ քեզ նորից»:

76 Ես ասացի. «Ինչքան կապրեմ չգիտեմ.
Բայց չի լինի աստ վերադարձս այնքան շուտ,
Որ ավելի վաղ գալու իղձ չհայտնեմ.

79 Քանզի քաղաքն, ուր տրված է ինձ ապրել,
Լավ բարքերից մերկանում է օրեցօր
Եվ կարող է իր կործանմանը հանգել»:

82 «Ով այդ բանում մեծ մեղք ունի,— ասաց նա,—
Ջիու պոչից կկապվի ու քարշ կածվի
Դեպի անդունդ, ուր փրկության հույս չկա:

85 Ձին գնալով կարագացնի վազքը իր,
Մինչև նրա հոգին բերանը բերի
Ու բաց թողնի նրա դիակը զազիր:

88 Եվ շատ պիտի չպտտվեն աստղերն այն,—
Եվ աչքերը երկինք ուղղեց,— մինչև որ
Քեզ պարզ դառնա իրողությունն ամենայն:

91 Հիմա զատվենք, ժամանակը մեզ համար
Սուղ է այստեղ, և այն իզուր կկորցնեմ,
Եթե շարժվեմ քո քայլերով համրավար»:

94 Ինչպես երբեմն հեծյալ մարտիկն առանձին
Հեռանում է հեծելազոր ջոկատից,
Ստանալու բախման պատիվն առաջին,

97 Այսպես մեզնից նա հեռացավ հապշտապ.
Ես մնացի պոետների հետ երկու,
Որոնք եղան այնքան վարպետ հոյակապ:

100 Երբ նա մեզնից այնքան շատ էր հեռացել,
Որ էլ աչքիս նրան պարզ չէր նկատում,
Ինչպես միտքիս նրան պարզ չէր հասկացել,

103 Ինձ երևաց, ոչ շատ հեռու մեր տեղից,
Մի ուրիշ ծառ պտղաբերձ ու սաղարթուն,
Որ տնկված էր անդին լեռան դարձվածքից:

106 Տեսա մարդկանց, որ ձեռքերը կարկառած
Տերևներին՝ ճչում էին ինչ-որ բան,
Ինչպես ճչում են մանուկները զրկված,

109 Երբ չեն տալիս նրանց ուզածը մարդիկ,
Այլ, սրելու համար ախորժը նրանց,
Ուզածները բարձր են բռնում սակավիկ:

112 Հուսկ հուսախաբ եղած՝ նրանք մեկնեցին:
Մենք մոտեցանք այնժամ ծառին պտղաբերձ,
Որ խուլ մնաց նրանց այնքան թախանձին:

115 «Առաջ անցեք, մի մոտենաք դուք սրան.
Սա ծլել է եդեմական այն ծառից,
Որից կերել, ճաշակել է մայր Եվան»:

118 Այսպես ասաց ճյուղերի մեջ ինչ-որ ձայն:
Մենք երեքով առաջացանք հուպ ընդ հուպ,
Միջով դարի ու բարձրաբերձ ծառի այն:

121 «Հիշեցեք այն նզովելոց ամպածին,—
Ասում էր նա,— որոնք հարբած, հղփացած,
Թեսեոսին մարտահրավեր կարդացին.

124 Եվ հրեից, որ խմեցին կշտացան,
Որի համար նրանց վանեց Գեդեոնն,
Երբ ցած իջավ բլուրներից ի Մադիան»:

127 Բոլորակի եզրով այսպես ընթացանք,
Ունկնդրելով մեղաց մասին որկորի,
Որ ունեցան դառն ու տխուր հետևանք:

130 Մենք երեքով դուրս եկանք լայն ճանապարհ,
Եվ ընթացանք հազար քայլից ավելի,
Ամեն մեկըս մտորելով անբարբառ:

133 «Ինչո՞ւ եք դուք այդպես գնում մտածկոտ»,—
Հանկարծ գոչեց մի ձայն, որից խրտչեցի
Հար և նման մի մտրուկի վեհերոտ:

136 Վեր նայեցի, տեսնելու թե ով էր այդ.
Քուրայի մեջ մետաղը կամ ապակին
Երբեք այնպես չեն շողացել հրացայտ,

139 Ինչպես շողաց մեկը, որ մեզ գոչում էր.
«Խաղաղության տանող ուղին այստեղ է.
Մուտքն այստեղ է բարձրանալու լեռն ի վեր»:

142 Նրա տեսքից ես շլացա իրավամբ,
Եվ շարժվեցի վարպետներիս ետևից,
Ընթանալով լսված ձայնի ուղղությամբ:

145 Ինչպես այգից առաջ սյուքը մայիսյան
Մեղմ փչում է, բոլորովին թաթավված
Խոտերի ու ծաղկանց շնչովը բուրյան,

148 Այսպես ճակտիս մի հով փչեց այդպիսի.
Ես զգացի թափահարում թևերի,
Ուրկից բուրմունք մի տարածվեց ամբրոսի:

151 Ես լսեցի այս խոսքերը. «Երանի
Նրանց, որոնք իրենց սրտում չեն զգում
Անհագություն որկորաժետ բերանի,

154 Եվ քաղցում են միայն արդար սահմանում»:

ԵՐԳ ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ

Այն ժամն էր, երբ ելքը պետք չէր հապաղել
Զի արևը միջօրյա ծիրը Ցուլին,
Իսկ գիշերը Կարիճին էր արդ թողել:

4 Եվ ինչպես նա, ով չի երբեք դանդաղում,
Այլ իր ճամփով ընթանում է միշտ առաջ,
Երբոր նրան հարկի խթանն է մղում,

7 Այսպես և մենք մտանք մի նեղ արահետ,
Մագլցելով մի սանդուղքով, որ, անձուկ,
Թույլ չէր տալիս մեզ բարձրանալ զուգահետ:

10 Ինչպես մատաղ ծիտը թևերն է բացում,
Թռչկոտելու տենչով, ապա կծկում է,
Սիրտ չանելով թողնել իր բույնը փցուն,

13 Այսպես ես մեկ ուզում էի բան հարցնել,
Մեկ տատամսում, իմ շրթները շարժելով,
Միշտ ինչպես նա, ով փորձում է խոսք վերցնել:

16 Բարի հայրս տեսնելով, որ ես երկմիտ
Ու վարանոտ գնում էի, ինձ ասաց.
«Դեհ արձակիր լարված աղեղը լեզվիդ»:

19 Ես անհերկբա բացի բերանս այն ատեն
Ու ասացի. «Ինչպե՞ս կարող են հյուծվել
Նրանք, ովքեր սնուցվելու պետք չունեն»:

22 Եվ նա ասաց. «Եթե հիշես, թե ինչպես
Մելեագրը խանձողի հետ սպառվեց,
Հասկանալն այդ շատ չի լինի դժվար քեզ:

25 Եթե դարձյալ մտաբերես, թե ինչպես
Ձեր պատկերն է արտացոլում հայելին,
Այն, ինչ որ քեզ բարդ է թվում, կըմբռնես:

28 Բայց որպեսզի հարցն հասկանաս անթերի,
Անավասիկ Ստատիոսը, կխնդրեմ,
Որ նա լինի բուժիչը քո վերքերի»:

31 «Եթե ինձ է ընկնում այդ հարցը պարզել,
Քանի դու կաս,— պատասխանեց Ստատիոն,—
Ներիր ինձ, որ քեզ չեմ կարող ոչ ասել»:

34 Ապա սկսեց. «Եթե խոսքերն իմ, որդյակ,
Լավ ըմբռնի ու ընկալի միտքը քո,
Քեզ կպարգևի տվյալ հարցը բովանդակ:

37 Զուտ արյունը, որ երբեք չի ներծծվում
Երակներից և մնում է ինչպես մի
Ավելորդ ճաշ, որ սեղանից է վերցվում,

40 Ստանում է սրտում հաստիչ զորություն,
Ինչպես արյունն երակների մեջ հոսող
Սնուցում է ծայրանդամները մարդուն:

43 Նորից զտված՝ նա իջնում է սեռական
Օրգաններում, ուրկից կաթում է մի այլ
Արյան վրա մի անոթում բնական:

46 Անդ խառնվում է մի արյունը մյուս արյան,
Մին ներկրում է, իսկ մյուսը ներգործում.
Ըստ որում սա ունի զորեղ զտարան:

49 Զուլված նրան՝ սկսում է սա գործել
Մակարդելով, և ապա կյանք է տալիս
Այն մակարդին, որին ինքն է ստեղծել:

52 Ներգործոն ուժն հոգևորվում է նման
Բուսականին, տարբերվելով այնու, որ
Նա ճամփին է, իսկ սա հասել իր լրման.

55 Եվ աճելով ինչպես մի սունկ ծովային՝
Շարժվում է և զգում, ապա կազմում է
Օրգանները կարողությանց մարդկային:

58 Սրտից ծագած այդ զորությունն ի հարկին
Մերթ ընդլայնվում, մերթ ծավալվում է, նայած
Անդամների կազմավորման կարիքին:

61 Բայց ինչպես է ասուն դառնում անասնից,
Դեռ չգիտես. դա այնպիսի հարց է բարդ,
Ուր մոլորվեց մի իմաստուն քեզանից:

64 Ըստ որում նա իր գիտությամբ անջատեց
Հոգեկանից իմացականը ներգոր,
Որին ոչ մի հատուկ օրգան չընծայեց:

67 Արդ միտքդ բաց ճշմարտությանն անհեղլի.
Իմացիր որ հենց որ սաղմի մեջ արդեն
Ավարտված է կազմավորումն ուղեղի,

70 Արարիչը զվարթ նայում է նրան՝
Բնության այդ ամենամեծ արվեստին
Եվ ներարկում նրան հոգի բանական:

73 Իսկ սա ինչ-որ գործոն գտնում է սաղմում,
Միակցում է և կազմում լոկ մի հոգի,
Որ ապրում է, զգում է և գիտակցում:

76 Եվ որպեսզի խոսքիս քեզ քիչ զարմացնի,
Հիշիր, ինչպես վազի հոլզը, միացած
Արեգակի տապին, դառնում է գինի:

79 Երբ Լաքեզիսն սպառում է մանածոն,
Հոգին մարմնից անջատվում է ու տանում
Նրա բոլոր հատկությունները գործոն:

82 Որոշ ձիրքեր անգործունյա են մնում.
Հիշողությունը, միտքն ու կամքը, սակայն,
Առաջվանից ավելի լավ են գործում:

85 Հոգին թռչում ու հասնում է անհապաղ
Զույգ ափերից մեկին և կամ մյուսին,
Եվ իր վիճակն իմանում է այնտեղ նախ:

88 Հենց որ այդտեղ օդը պատում է նրան,
Հաստիչ ուժը ճառագայթում է իր շուրջ,
Ինչպես արեց անդամների մեջ կենդան:

91 Եվ օդն ինչպես, երբ այն լի է գոլորշով,
Ցոլցոլում է արեգակի շողերից
Եվ զարդարվում ծիածանի գույներով,

94 Այսպես օդը, որով պատվում է հոգին,
Ստանում է այն ձևը, որ նրա մեջ
Դրոշմում է արարիչ ուժը ներքին.

97 Եվ ինչպես բոցն հետևում է կրակին,
Ուր էլ որ սա տեղափոխվի ու գնա,
Այսպես նոր ձևն հետևում է հոգիին:

100 Երևույթն այն, որը կոչվում է ստվեր,
Այս նոր ձևն է, որից կազմում է հոգին
Ամեն տեսակ զգայական օրգաններ:

103 Դրանով ենք մենք ծիծաղում, բարբառում,
Դրանով են հառաչներն ու հեծքը մեր,
Որ կարող է լսած լինես այս սարում:

106 Մեր ստվերներն այս կամ այն տեսքն են առնում,
Նայած թե ինչ գրգիռներ են վարում մեզ.
Պատճառն այդ է, որ քեզ զարմանք է առթում»:

109 Հասել էինք արդեն վերջին ոլորտին
Եվ շուռ եկել դեպի աջ կողմը ճամփի,
Երբ ունեցանք մի ուրիշ հոգ անդստին:

112 Լեռան լանջը այնտեղ բոցեր էր ցանում,
Եվ ներքևից բարձրանում էր մի քամի,
Որ այդ բոցերը բորբ ի բաց էր վանում:

115 Արդ մեզ հարկ էր մեկ մեկ գնալ ճամփեզրից.
Բայց այս կողմից երկյուղ էի ես զգում
Վար ընկնելուց, այն կողմից՝ վառ բոցերից:

118 Վարպետս ասաց. «Ասա հարկ է ու անհրաժեշտ
Աչքերը միշտ պահել լարված, անթարթափ,
Ըստ որում՝ ասա կարելի է գայթել հեշտ»:

121 Այնժամ խորքից հրի վառ ու ահագին
Ես լսեցի **«Տէր վեհագոյն գթութեան»**
Երգը հնչում, դեպ ուր դարձա փութագին:

124 Բոցերի մեջ տեսա անձինք երթևեկ,
Ուստի ուշով ես նայեցի մերթ նրանց,
Մերթ քայլերիս, չուղղելով աչքս այլուրեք:

127 Երբ ավարտում էին նրանք օրհներգն այն,
«Զայր ոչ գիտեմ» գոչում էին ուժգնորեն,
Ապա նորից էին երգում մեղմաձայն..

130 Որից հետո դարձյալ գոչում. «Դիանան
Անտառ վազեց ու վոնդեց Հելիկին,
Որ խմել էր քաղցրը թույնը վեներյան»:

133 Ապա նրանք նորից օրհներգն երգեցին
Եվ հիշեցին հետո արանց ու կանանց,
Որ ողջախոհ, անեղծ կյանքով ապրեցին:

136 Եվ կարծեմ այս երգն ու գոչերը այնքան
Պիտի մնեն, մինչև նրանք տոչորվեն.
Այդ գոչերով ու այդ պատծով քավչական

139 Վերքերն իրենց վերջ ի վերջո կփակվեն:

ԵՐԳ ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ

Մինչ մենք քայլում էինք իրար ետևից,
Ճամփի եզրով, բարի վարպետը հաճախ
Ասում էր ինձ. «Զգուշ, օգտվիր իմ ազդից»:

4 Արևը, որ դեպ արևմուտք էր թեքվել,
Պայծառելով հորիզոնը կապուտակ,
Ճաճանչներն իր իմ աջ ուսին էր զարկել.

7 Եվ այնտեղ, ուր մարմինս ստվեր էր արել,
Հուրն ավելի շառագույն էր երևում.
Հոգիներին դա զարմանք էր պատճառել:

10 Այս առիթով անա նրանք իմ մասին
Խոսք բաց արին և ասացին մեկ մեկու.
«Սա կարծես թե մարմին չունի մեզ պես սին»։

13 Ապա ոմանք ինձ մոտեցան անարգել,
Միշտ ջանալով դուրս չգալու այնտեղից,
Որտեղ նրանց սահմանված էր տոչորվել։

16 «Դու, որ կերթաս այն երկուսի ետևից
Ոչ հեղգանքից, այլ հարգանքից մի գուցե,
Պատասխանիր, տես այրվում եմ ծարավից.

19 Պատասխանիդ պետք չէ միայն ինձ համար.
Դա բոլորիս ավելի է հարկավոր,
Քան ինդիկին ու հաբեշին ջուրը սառ։

22 Սա մեզ, թե ինչպես ես դու խափանում
Ճառագայթներն արեգակի, կարծես թե
Դեռ չլինես ընկած մահվան դարանում»։

25 Այսպես հարցրեց ինձ մի հոգի. ես ընդփույթ
Պատրաստվեցի նրան տալու պատասխան,
Երբ գրավեց ուշքս մի նոր երևույթ.

28 Վասնզի այն ճամփի միջով հրավառ
Եկավ մի խումբ նախորդ խմբին ընդառաջ,
Եվ իր վրա ուղղեց հայացքս ապշահար։

31 Հանկարծ տեսա, որ այն խմբերը կրկին
Շտապեցին ողջագուրել մեկզմեկ,
Գոհանալով այդ ողջույնից սրտագին։

34 Այսօրինակ մրջյունները անպաշտպան
Հանդիպում են իրար ցուրտ ցուրտի,
Իմանալու իրենց բախտը կամ ճամփան։

37 Երբ ավարտվեց հանդիպումն այդ մտերմիկ,
Նրանք նախքան բաժանվելը իրարից
Փոփոխակի ձայնարկեցին բարձր ու ձիգ.

40 Նորեկ խումբը գոչեց «Սոդոմ և Գոմոր».
Մյուսը՝ «Մտավ Պասիֆայեն կովի մեջ,
Որ գոհացնի ցուլը կիրքն իր հախնթոր»։

43 Ինչպես ճայերն, որ թռչում են սուրալով
Մասամբ դեպի Ռիֆե, մասամբ՝ անապատ,
Սրանք ցրտից, նրանք տաքից խորշելով,

46 Այսպես խմբերն երթևեկում էին հար,
Եվ լալագին կրկնում օրհներգը հիշյալ
Ու գոչյունը՝ իրենց պատշաճ ու հարմար։

49 Եվ նույն նրանք, որ ինձ էին նախ դիմել,
Նորից դեպի ինձ մոտեցան հապշտապ,
Փափագելով իմ պատասխանը լսել։

52 Ես տեսնելով բուռը բաղձանքը նրանց,
Բարբառեցի. «Դուք որ վստահ եք, անշուշտ,
Մի օր հանգչել խաղաղության մեջ անանց,

55 Իմացեք որ ես չեմ մեռել դեռ մահվամբ,
Այլ մարմինըս այստեղ ինձ հետ եմ բերել
Իր կենդանի հոդվածներով և արյամբ։

58 Գնում եմ վեր, որ լույս գտնեմ մտավոր.
Անդ մի կին կա, որի շնորհիվ ես միայն
Այստեղ բերի իմ մարմինը անցավոր։

61 Բայց իցիվ թե ձեր իղձը շուտ գոհացվի
Եվ սիրով ու լույսով զեղուն երկնքում
Ձեզ համար պարտ ու պատշաճ տեղ հատկացվի.

64 Ասացեք ինձ, որպեսզի այն գրանցեմ,
Դուք ո՞վ եք և այն հոգիներն ովքե՞ր են,
Որ քայլում են ձեր ընթացքին հակընդդեմ»։

67 Ինչպես կոպիտ ու վայրենի լեռնցին,
Երբ առաջին անգամ քաղաք է գալիս,
Նայում է լուռ, շլմոր ասդին ու անդին,

70 Այսպես էին այն ստվերներն երևում.
Բայց երբ նրանք թոթափվեցին զարմանքից,
Որ իմաստուն մարդկանց մոտ կարճ է տևում,

73 «Երանի քեզ, որ մեր մարգերն ես եկել,—
Վերսկսեց բարբառողը քիչ առաջ,—
Որ խավագույն կյանքի հասնես անարգել.

76 Այն խումբը, որ քայլում է մեզ հակընթաց,
Գործեց մեղքն այն, որի համար ծաղրանքով
«Բամբիշ» կոչվեց մի օր/Կեսարը հաղթած:

79 Հեռանում են նրանք «Սոդոմ» գոռալով
Եվ մեղադրում իրենց, ինչպես լսեցիր,
Պիղծ արարքից իրենց ամոթ զգալով:

82 Մեր մեղքն եղավ միջև երկու սեռերի.
Չի մենք օրենքն ընդունեցինք մարդկային,
Անբանի պես հետևելով կրքերի,

85 Համոթը մեր՝ բաժանվելու ընթացքում
Միշտ կրկնում ենք անունը այն կնոջ, որ
Անասնացավ անասնաձև սարվածքում:

88 Արդ մեր մեղքն ու արարքները գիտես դու.
Անշուշտ կուզես մեր անունները իմանալ,
Բայց ժամանակ չկա մեկ-մեկ թվելու:

91 Իմ անունը ես կարող եմ քեզ հայտնել.
Ես կոչվում եմ Գուիդոյի Գուիդո.
Վաղ զղջալուս համար այստեղ եմ ընկել»:

94 Ինչ զգացին երկու որդիք հնօրյա,
Երբ մորն իրենց Լիկուրգոսի մոտ տեսան,
Նույն ապրումներն ես ունեցա համարյա,

97 Երբ լսեցի նրա անունը, որին
Համարել են իմ հայրն ու հայրը այլոց,
Որ գրել են գողտրիկ տաղեր սիրային:

100 Ես քայլեցի լռությամբ ու մտածկոտ,
Ակնապիշ ու երկար նրան դիտելով,
Սակայն հրի ահից չեկա նրա մոտ։

103 Եվ երբ նրան ես նայելուց հոգեցա,
Պատրաստակամ եղա նրան ծառայել,
Տալով հաստատ հավատիքներ նախընծա։

106 Եվ նա ասաց. «Քո խոսքերը նորավետ
Այնպիսի խոր հետք թողեցին իմ հոգում,
Որ չի կարող լեթեն ջնջել առհավետ։

109 Բայց եթե քո հավատիքներն ստույգ են,
Ապա ասա, ի՞նչ է պատճառն այն սիրո,
Որ տածում ես դեպ ինձ այնքան ջերմորեն»։

112 Եվ ես նրան. «Այդ ձեր տաղերն են քաղցրիկ,
Որոնք պիտի միշտ հաճույքով ընթերցվեն,
Քանի տևի տաղերգությունն ընթացիկ»։

115 «Եղբայր, սա որ քեզ մատնանիշ եմ անում,—
Ասաց, մատով ինձ ցույց տալով մի հոգի,—
Վարպետ եղավ իր մայրենի բարբառում։

118 Նա տաղելու, գիպելու մեջ բոլորից
Առաջ անցավ, և հիմարներն ասեն թող,
Որ Լիմոժցին գերազանց է նրանից։

121 Նրանք նայում են անվանը, ոչ փաստին,
Եվ կազմում են այսպես կարծիքը իրենց,
Չունկնդրելով ողջմտությանն, արվեստին։

124 Այսպես արին հիներն հանդեպ Գուիտտոնի,
Տարփողելով նրան բերնե ի բերան,
Մինչև եղավ ճշմարտությունը հայտնի։

127 Արդ, եթե դու ունես շնորհ այնքան մեծ,
Որ կարող ես դեպի Դրախտ բարձրանալ,
Ուր Քրիստոսն է բազմած իբրև գահերեց,

130 Սապա այնտեղ «Հայր մեր» ասա ինձ համար,
Այնքան որքան հարկավոր է մեզ այստեղ,
Որ մեղանչել էլ չենք կարող մենք իսպառ»:

133 Ապա, գուցե տալու համար տեղ նրան,
Որ իր մոտ էր, անմեռացավ հրի մեջ,
Զրալուցքը սուզվող ձկան ճիշտ նման:

136 Ես մոտեցա այնժամ մյուսին ցույց տրված,
Եվ ասացի, որ իմ հոգին անձկալի
Նրա անվանն հատուկ տեղ էր պատրաստած:

139 Նա սկսեց հոժարակամ բարբառել.
«Դուք այնպիսի շոյող խոսքեր եք ասում,
Որ չեմ կարող և չեմ ուզում ինձ ծածկել:

142 Ես Առնալդն եմ, որ երգում եմ արցունքով.
Ես զղջում եմ հիմարությունն իմ անցյալ,
Եվ տեսնում եմ հուսացյալ օրն հրճվանքով:

145 Հայցում եմ ձեզ հանուն ուժի մեծազոր,
Որ տանում է ձեզ գագաթը այս լեռան,
Պատեհ ժամին հիշեցեք իմ վիշտը խոր»:

148 Եվ չքացավ խորքում հուրի հորձեռանդ:

ԵՐԳ ՔՍԱՆՅՈԹԵՐՈՐԴ

Արևը այն կետի վրա էր երկնի,
Ուրկից շողերն արձակում է նախ այնտեղ,
Որտեղ հեղվեց սուրբ արյունը Միածնի.

4 Մինչ Էբրոսը թավալվում է Կշռի տակ,
Եվ Գանգեսը եռանփոում կեսօրին:
Օրն անցնում էր, երբ տեսանք մի հրեշտակ:

7 Նա բոցից դուրս եզրին կանգնած՝ **«Երանի**
Այնոցիկ որ սուրբ են սրտիւք» էր երգում,
Մի ձայնով, որ մերնից էր գեր կենդանի:

10 Ապա նրան երբ մոտեցանք՝ ասաց մեզ.
«Սուրբ հոգիներ, դուք չեք կարող ընթանալ,
Թե այս հուրը ձեզ չի կիզել նախապես.

13 Արդ ներս մտեք և ունկնդրեք երգ մի նոր»:
Լսելով այս՝ ես սարսեցի ինչպես նա,
Ում խրել են մի փոսի մեջ գետնափոր:

16 Անից սառած՝ գլուխս առաջ պարզեցի,
Դիտելով հուրն և հիշելով այն մարդկանց,
Որոնք կիզվել էին վրան վառ բոցի:

19 Դեպ ինձ դարձան առաջնորդներն իմ անահ:
«Որդյակ,— ասաց Վիրգիլիոսն ինձ,— ներս անցիր,
Սա կարող է ահ պատճառել, բայց ոչ մահ:

22 Հիշիր, հիշիր, ես օգնեցի եթե քեզ
Ողջ և առողջ անդունդն ի վար իջնելու,
Չօգնե՞մ հիմա, երբ երկինքը մոտ է մեզ:

25 Հավատա, որ եթե նույնիսկ դու մնաս
Հազար տարի այս կրակի կենտրոնում,
Նա չի կարող քեզնից խլել ոչ մի մազ:

28 Եթե կարծում ես, որ խաբում եմ ես քեզ,
Մոտեցիր և փեշդդ բոցին երկարիր,
Կտեսնես որ նա չի լինի հրակեզ:

31 Արդ թոթափվիր ամեն տեսակ երկյուղից.
Դարձիր այս կողմ և համարձակ ներս մտիր»:
Ես, ակամա, չէի շարժվում իմ տեղից:

34 Երբ տեսավ, որ չէի շարժվում ես նորից,
Մի քիչ հուզված ասաց. «Որդի, էլ հիմա
Այս խութն է լոկ քեզ բաժանում Բեատրիչից»:

37 Ինչպես ի լուր Թիսբե անվան անձկալի,
Պիրամոսը բացավ աչքերն ու նայեց
Թթենու տակ, որ դարձել էր արնալի,

40 Այսպես կոտրած ընդդիմությունն իմ համառ,
Նայեցի իմ առաջնորդին իմաստուն,
Ի լուր անվան, որ միշտ թանկ է ինձ համար:

43 Եվ նա գլուխն օրորելով, ինձ ասաց՝
«Էլ չսպասենք» ու ինձ ժպտաց քաղցրորեն,
Ինչպես մանկան, որին միրգ է խոստացված:

46 Ապա ինձնից առաջ մտավ հրատում,
Ստատիոսին խնդրելով մեզ հետևել,
Որ մինչև այդ մեզ զատել էր ուղերթում:

49 Հենց որ մտա կրակի մեջ հորձեռանդ,
Պիտ ուզեի հալոցի մեջ ինձ նետել
Զովանալու համար, այնքան տապ էր անդ:

52 Իմ հայրն անուշ, ինձ շնչելու համար ույժ,
Միշտ հիշում էր իմ տիրությունն, ասելով.
«Կարծես տեսնում եմ իր աչքերը մեղուշ»:

55 Մեզ մի ձայն էր առաջնորդում օրհներգի.
Եվ մենք, ուշով հետևելով այդ ձայնին,
Դուրս եկանք անդ, ուր սանդուղքն էր վերելքի:

58 Նա երգում էր՝ **«Եկայք օրհնեալք Հօր իմոյ»**,
Պատած լույսով այնպես պայծառ ու շողուն,
Որ շլացրեց երկու աչքերիս շլմոր:

61 Ապա հարեց. «Արևը մայր է մտել.
Ձեր քայլերը արագացրեք, քանի դեռ
Արևմուտքը բոլորովին չի մթնել»:

64 Ժայռի միջով բարձրանում էր ուղին վեր՝
Դեպի այն կողմ, ուր թեկվել էր իմ առջև
Ծողքն արևի, որ արդեն ցած էր թեքվել:

67 Մի քանի ոտք հագիվ էինք մենք ելել,
Երբ ստվերիս չքանալով իմացանք,
Որ մեր ետև արևը մայր էր մտել։

70 Եվ նախքան որ հորիզոնը ընդհանուր
Ամենուրեք միևնույն տեսքն ստանար
Եվ գիշերը սփռեր խավարն ամենուր,

73 Ամեն մեկըս պառկեցինք մի բազրոտին.
Չի լեռնային մութը մեր մեջ չքացրեց
Բարձրանալու ուժն ու փափագը ներքին։

76 Այծերն ինչպես, քանի դեռ չեն ճարակած,
Ժայռերն ի վեր ոստոստում են ու կայտռում,
Ապա հեգիկ արածում են լռակաց,

79 Ստվերի տակ— մինչ արևն հուր է ցանում—
Պահպանությամբ իրենց հովվի, որ հենված
Իր մականին հսկողություն է անում.

82 Հոտաղն ինչպես, որ հսկում է բացօթյա
Եվ գիշերում իր հոտի մոտ մակաղած,
Որպեսզի նա գազանի կեր չդառնա,

85 Այսպես էինք մենք երեքով այդ պահին.
Ես որպես այծ, նրանք որպես հովիվներ,
Փակված բարձրը ժայռերի մեջ եզրային։

88 Վերևում մեզ երևում էր անցք մի նեղ,
Բայց այդ անցքից աստղերն էին երևում՝
Սովորական տեսքից խոշոր և լուսեղ։

91 Մինչ, խոկալով, նրանց էի նայում ես,
Քունը տարավ. իսկ քունն հայտնում է հաճախ
Երազի մեջ դեպքերը ոչ ծանոթ մեզ։

94 Այն ժամին, երբ արևելքից Կիթերան,
Որ վառվում է հավետ սիրո հրայրքով,
Իր առաջին շողերն հղեց այս լեռան,

97 Ես երազում տեսա մի կին գեղատես,
Որ մի մարգում ծաղիկներ էր հավաքում
Եվ հաճելի ձայնով երգում էր այսպես.

100 «Ով իմ անունն իմանալու է կարոտ,
Թող իմանա՝ Լիան եմ ես. շրջում եմ,
Որ ինձ համար կազմեմ ծաղկե մի նարոտ:

103 Ի հաճույս ինձ՝ պճնում եմ ինձ ծաղկունքով,
Իսկ իմ քույրը՝ Հռաքելը, օրն ի բուն
Անշարժ անգործ նստում է իր հայելու քով:

106 Նա սիրում է գողտր աչքերին իր նայել,
Իսկ ես զուգվել ծաղիկներով իմ քաղած.
Իմ հաճույքն է գործել, նրանը՝ հայել»:

109 Արդեն այգի վաղահարույց շողերից
— Որոնք այնքան հաճելի են պանդուխտին,
Որքան նվազ հեռու է նա մայր երկրից—

112 Խույս էր տալիս խավարն ամեն կողմերից,
Քունն էլ հետը: Ես վեր կացա ու տեսա,
Որ վարպետներս ելել էին տեղներից:

115 «Քաղցը պտուղն, որին այնքան անձկությամբ
Հետամուտ են սերունդները մարդկային,
Քո քաղցն այսօր կհագեցնի լիությամբ»:

118 Վիրգիլիոսը այս խոսքերով ինձ դիմեց.
Ոչ մի լավ լուր ես չեմ լսել իմ կյանքում,
Որ պատճառեր ինձ խնդություն այդքան մեծ:

121 Այնքան աճեց տենչը բարձունքն ելնելու,
Որ ամեն մի քայլիս զգում էի ինձ
Թևավորված՝ պատրաստ թռիչք գործելու:

124 Երբ սանդուղքը մեզնից արդեն մնաց ցած,
Եվ մենք հասանք աստիճանին վերնագույն,
Վիրգիլիոսը դեպ ինձ նայեց ու ասաց.

127 «Որդյակ, տեսար հուրն անցավոր ու անանց,
Եվ դու հիմա եկել հասել ես այնտեղ,
Որտեղ պետք է մեզք հրաժեշտ տանք միմյանց:

130 Ամեն ճարով, ջանքով բերի քեզ այստեղ.
Հիմա թող քեզ առաջնորդի կամքը քո.
Դու ազատ ես ուղիներից սեպ ու նեղ:

133 Տես արևը, որ շողում է քո ճակտին.
Տես սեզերը, ծաղիկներն ու թփերն այն,
Որոնք այստեղ հողում աճում են ինքնին:

136 Մինչ նրա գալն, ում աչքերը գեղափայլ
Ու թախծալի ինձ մղեցին գալ քեզ մոտ,
Դու կարող ես այստեղ նստել կամ մաս գալ:

139 Դու այլևս ինձնից խոսք մի սպասիր.
Ազատ, շիտակ և առողջ է քո ոգին.
Հիմա շարժվիր ըստ քո կամքի անբասիր.

142 Արդ պսակ ու թագ եմ դնում քո գլխին»:

ԵՐԳ ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ

Անձկակարոտ՝ ամեն կողմից տեսնելու
Ատովածային անտառը թավ ու ծաղկուն,
Որ մեղմում էր նորածագ լույսն այցելու,

4 Ես անհապաղ մտա այնտեղ և հուշիկ
Առաջացա հարթավայրով, ուր չորս դին
Տարածվել էր մի խանկաբույր անուշիկ:

7 Մի հեշտաշունչ ու հեզիկ հով համասփյուռ
Միապաղաղ խփում էր իմ ճակատին,
Ինչպես մեղմիկ փչող անուշ մի զեփյուռ.

10 Եվ այդ հովից ծառուղեշներն ամենայն
Հակվում էին դեպի այն կողմ, ուր սուրբ լեռն
Արձակել էր ստվերածն իր վաղորդյան.

13 Սակայն ճյուղերն այնքան չէին ճկում կոր,
Որ բարձունքին թառած ծիտերն առ ահի
Կասեցնեին իրենց դայլայլը սովոր,

16 Այլ ներշնչում էին այուքերն առաջին
Ցնծապատար մի հեշտանքով, խառնելով
Դայլայլն իրենց տերևների մրմունջին,

19 Որ նման էր Քիսաֆի պուրակում՝
Սոճիների սաղարթների սոսափին,
Երբ Եվղոսը իր սղոխն է արձակում:

22 Ես համրաքայլ այնքան էի խորացել
Վաղնջական այն անտառով, որ արդեն
Չէի տեսնում՝ ուրկից էի ներս մտել,

25 Երբ ընթացքս արգելակեց խոր մի գետ,
Որի ափին աճած սեզերը դալար
Այլակներից ծփում էին վետ ի վետ:

28 Երկրի ջրերն ամենից ջինջ ու զուլալ,
Թվում էր թե պղտոր էին ու աղոտ,
Բաղդատելով այս գետի հետ մաքրափայլ,

31 Թեպետև նա ստվերախիտ ու մթին
Ջորերով է հոսում հավետ, ուր բնավ
Չի թափանցել ոչ արեգակ, ոչ լուսին:

34 Ես կանգ առա և իմ աչքերն ուղղեցի
Հանդիպակաց ափը գետի՝ դիտելու
Բազմապիսի ծաղկուն ծառերն աղարծի:

37 Ինչպես երբ մեզ հրաշք մի բան երևա,
Միտքը ուրիշ բանի մասին չի խորհի,
Այսպես մի կին ինձ երևաց գեղանձնյա,

40 Որ հանդուքով մաճ էր գալիս միայնակ,
Երգելով և թարմ ծաղիկներ քաղելով,
Որոնցով էր պատած ուղին բովանդակ:

43 «Օ՛ չքնաղ կին՝, որ ջերմանում ես սիրո
Ճանաչներով, եթե պետք է հավատալ
Դեմքի տեսքին՝, որ հայտարարն է հոգվո,

46 Բարի եղիր գետի ափին մոտենալ,—
Ասացի ես,— որպեսզի այն, ինչ որ դու
Գեղգեղում ես, կարողանամ հասկանալ:

49 Դու թվում ես Պրոզերպինը պարման,
Այն պահին՝, երբ մայրը նրան կորցրեց,
Իսկ նա կորցրեց ծաղկած աշխարհը գարնան»:

52 Հար և նման հեզիկ կայթող մի կնոջ,
Նա ոտները միացրրեց իրարու
Եվ, սահելով քայլիկներով անդողդոջ,

55 Ուղղվեց դեպ ինձ ծաղկանց միջով խատուտիկ,
Եվ կույսի պես համեստափայլ ու պարկեշտ
Խոնարհեցրեց իր աչքերը գեղեցիկ:

58 Նա դռհացում տվեց ինձ ջերմ աղերսին,
Մատչելով ինձ այնքան, որ ձայնն իր թավշյա
Հասնում էր ինձ բառերի հետ միասին:

61 Գալով այնտեղ, որտեղ ափը սիզավետ
Ողողված էր զուլալ գետի ջրերով,
Նա բարձրացրեց իր աչքերը բոցավետ:

64 Չեմ կարծում որ Վենեռայի աչքերից
Փայլատակած լիներ նման մի շողյուն,
Երբ պատահմամբ նետահարվեց իր զավկից:

67 Նա ժպտում էր գետի ափից հանդիման,
Փունջ կազմելով ծաղիկներից բազմերանգ,
Որ բուսնում են այստեղ առանց սերմանման:

70 Մեզ բաժանող երեք քայլեր լոկ կային.
Բայց Հերեսպոնտն, ուր Քսերքսեսը պարտվեց,
Դառնալով դաս հոխորտության մարդկային,

73 Լեանդրոսը ապելի չէր ասիծել,
Աբիդի և Սեստի միջև լողալիս,
Քան ես էլ թեթև, որ չթողեց ինձ անցնել:

76 «Դուք նորեկ եք, և իմ ժպիտը այստեղ,
Ուր մարդկության ապաստան է ընտրված,—
Բարբառեց նա, մեզ նայելով սակնդետ,—

79 Կարող է ձեզ որոշ չափով զարմացնել.
Բայց կարող է սաղմոսն «Ուրախ արարեր»
Ձեզ լույս սփռել և ձեր կասկածը ցրել:

82 Եվ դու, որ ինձ աղերսագին կանչեցիր,
Ուզածդ հարցրու, ըստ որում ես պատրաստ եմ
Ամեն հարցիդ պատասխան տալ անձանձիր»:

85 Եվ ես նրան. «Ջորն ու սոսափն անտառի
Հակառում են իմ մտքում այն կարծիքին,
Որ կազմեցի թղթակի մեջ վարի»:

88 Եվ նա ասաց. «Պատճառը այդ զարմանքիդ
Ես կպարզեմ հատոզարար խոսքերով
Եվ ցրեմ քեզ պարուրող մեգը խիտ:

91 Արարիչը, որ կատարյալ է ինքյան,
Մարդուն բարի, բարու համար ստեղծեց,
Տալով նրան տեղն այս հավերժ հանգստյան:

94 Մարդն իր մեղքով այստեղ սակավ բնակվեց.
Նրա մեղքով խինդն ու խնծիղը անուշ
Դառնն ողբի ու թախիծի փոխարկվեց:

97 Այս լեռն այսքան բարձրացել է դեպ երկինք,
Ինչպես անհա տեսնում ես դու քո աչքով,
Որ գագաթին ապրած մարդուն երջանիկ,

100 Զնեղեին գոլորշիներն երկրային,
Որ ունակ են բարձրանալու դեպի վեր,
Մինչև սահմանն երրորդ խավի օդային:

103 Բայց քանի որ շուրջերկրյա օրը անամպ
Պտտվում է երկինքների հետ բոլոր
(Թե պտույտն այդ չխափանվի պատահմամբ),

106 Ապա այստեղ, լեռան այս ջինջ կատարում,
Նրա պտույտն հանդիպում է ծառերին
Եվ սոսափներ առաջացնում անտառում:

109 Ծփուն ծառերն իրենց սերմերը բոլոր
Փոխանցում են օդին, իսկ սա, հիո գալով,
Ծուրջն է սփռում այդ սերմերը բեղմնավոր:

112 Իսկ երկիրը ըստ իր տեղի բնության
Արտադրում և ամեցնում է դրանցից
Բազմապիսի բույսեր պես-պես հատկության:

115 Գիտնալով այս՝ մարդիկ պետք չէ զարմանան,
Երբոր տեսնեն, որ բողբոջել է մի բույս
Առանց հայտնի և ակներև սերմանման:

118 Պետք է գիտնաս, որ այս անտառը փարթամ
Ուր եկել ես, լի է ամեն սերմերով
Եվ ձեզ անհայտ պտուղներով քաղցրահամ:

121 Իսկ այս ջուրը չի ծագում մի ակունքից,
Որ փոփոխման ենթակա է շարունակ
Եվ հոսում է մերթ թափով, մերթ զուրկ թափից.

124 Այլ ծագում է մի ակունքից համաչափ,
Որ ի վերուստ ստանում է այնքան ջուր,
Որքան հարկ է հոսել երկու ուղղությամբ:

127 Այս կողմ հոսող ջուրը հուշը մեղքերի
Վերացնում է, մինչդեռ հոսողը այն կողմ
Արթնացնում է հուշը բարի գործերի:

130 Ասա Լեթե, անդ Եվնոյե է կոչվում նա,
Եվ հարկ է նախ երկու կողմից ճաշակել,
Որպեսզի ջուրն ազդեցություն ունենա:

133 Նրա համին ոչ մի այլ համ չի հասնի:
Քո պապակը հագեցած է թեպետև,
Եվ քեզ այլ բան ասելու հարկ չի լինի,

136 Բայց ասածիս կավելացնեմ դեռ մի բան.
Չեմ կարծում, որ խոսքըս նվազ դուր գա քեզ,
Եթե թեկուզ գերազանցի իմ խոստման:

139 Նրանք, որոնք ի վաղնջյան երգեցին
Ոսկեդարն ու մարդկանց վիճակն երջանիկ,
Գուցե այստեղ պատկերացրին մտովին:

142 Այստեղ անմեղ եղան մարդիկ նախնական.
Այստեղ հավերժ գարուն ու միրգ է պես-պես,
Եվ նեկտարը հենց այս ջուրն է պատվական»:

145 Ես շուտ եկա պոետներիս ունկնդիր,
Եվ տեսա որ նրանք ժպտուն դեմքերով
Լսում էին այս հուսկ բանքը նախընտիր:

148 Նորից դարձա այն կնոջը գեղաթով:

ԵՐԳ ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ

Ավարտելով իր խոսքերը զվարթուն,
Նա սկսեց երգել որպես սիրահար.
«Երանի ում մեղաց եղև թողութիւն»:

4 Ինչպես հարսներն հավերժ, որոնք պչրելով
Ճեմում էին անտառներում հովանուտ,
Ոմանք արև, ոմանք ստվեր փնտրելով,

7 Այսպես կինն այն գետի ափով հակադիր
Առաջացավ հոսանքն ի վեր, և ես էլ
Հետևեցի հայկույս քայլքով զուգադիր:

10 Մենք հարյուր քայլ չէինք արել երկուստեք,
Երբ թեքվեցին զուգ ափերը միապես,
Այնպես որ ես ուղղվեցի դեպ արևելք:

13 Դեռ շատ չէինք ընթացակցել ափնուղով,
Երբ նա դեմքը դեպ ինձ դարձրեց ու ասաց.
«Եղբայր, նայիր և ունկնդրիր արդ ուշով»:

16 Եվ ահա այն անտառի մեջ բովանդակ
Հանկարծ ճայթեց մի լույս այնպես շողշողուն,
Որ թվաց, թե դա մի շանթ էր լուսարձակ:

19 Սակայն շանթը շողում է ու չքանում,
Իսկ այս լույսը տևում էր ու աճում հար.
«Արդ ի՞նչ է սա» խորհում էի իմ մտքում:

22 Անդ հնչում էր մի մեղեդի հմայիչ.
Դա իմ սրտում արդար զայրույթ հարուցեց
Կշտամբելու հանդգնությունն Եվայի.

25 Մինչ երկինքն ու երկիրն էին հպատակ
Աստծու կամքին, միայն կինը նորատեղծ
Չհանդուրժեց մնալու մի քողի տակ,

28 Որի ներքո եթե մնար սրբակյաց,
Անճառելի այս վայելքները բոլոր
Վաղուց անտի կլինեի ճաշակած:

31 Մինչ ես գնում էի հավերժ խնդությանց
Այս առաջին ճաշակումից զմայլված,
Եվ ծարավի ավելի մեծ ցնծությանց,

34 Մեր առջև օդն՝ ուղեշների տակ կանաչ՝
Լուսավառվեց որպես խարույկ բոցավառ,
Եվ երգ դարձավ լսված ձայնը քաղցրավաչ:

37 Ո՛վ սուրբ Կույսեր, եթե երբեք ձեզ համար
Ես տարա քաղց, ցուրտ, տքնություն տանջալի,
Արդ հայցում եմ վարձատրությունն իմ արդար:

40 Արդ ինձ համար թող Հելիկոնը հորդի.
Թող Ուրանիան ինձ օգնի իր խմբի հետ,
Որ տաղերգեմ խորհուրդներ խոր ու խրթին:

43 Հեռվից տեսա կարծես ոսկե յոթ ծառեր,
Պատրված այն տարածությամբ միջանկյալ,
Որ ընկած էր նրանց և մեր միջև դեռ:

46 Բայց երբ այնքան մոտիկացա ես նրանց,
Որ զգայքը պատրող հանուր առարկան
Ինձ իրական իր պատկերով երևաց,

49 Այն զորությամբ, որը հիմքն է ընկալման,
Իմացա, որ աշտանակներ են դրանք,
Եվ որ ձայներն այն երգում են **«Ովսաննան»**:

52 Ծողում էին չքնաղ ջահերը յոթնյակ
Ավելի վառ, քան թե լուսինը լրիվ
Կեսգիշերվա պայծառության ժամանակ:

55 Ես Վիրգիլին դարձա սաստիկ զարմանքով.
Այնժամ նա ինձ պատասխանեց նույնպիսի
Զարմացական և ապշահար հայացքով:

58 Նորից դարձա այն ջահերին լուսափայլ,
Որ ընդառաջ էին շարժվում դեպի մեզ
Նոր հարսերի նման հուշիկ, համբաքայլ:

61 Կինն ինձ սաստեց. «Ինչո՞ւ հայացքդ այդպես
Հառել ես լոկ լուսացնցուղ ջահերին,
Եվ ետևից եկողն առնում ես անտես»:

64 Այնժամ տեսա, որ ջահերի ետևից
Գալիս էին անձինք ճերմակ հագուստներով,
Որոնց վրա չէր երևում ոչ մի բիծ:

67 Իմ ձախ կողմում ցոլցոլում էր ջուրը պաղ,
Եվ հենց որ ես նայում էի նրա մեջ,
Հայելու պես ցոլանում էր կողն իմ ձախ:

70 Երբ ես եկա ափի այն տեղն, ուր միայն
Գետի հունն էր մեզ բաժանում թափորից,
Ես կանգ առա, որպեսզի լավ տեսնեմ այն:

73 Շարժվում էին առաջ ջահերն հրեղեն
Եվ փողփողում դրոշների նմանակ
Իրենց ետև թողնում գծեր լուսեղեն:

76 Եվ լույսի յոթ գծեր էին գոյանում.
Բոլորն էլ այն վառ գույներով, որոնցով
Արփին կամար, Դելիան պսակ է կազմում:

79 Այդ գծերի երկայնությունն էր այնպես,
Որ ծայրերը չէի տեսնում, իսկ նրանց
Միջև լայնքը տաս քայլի չափ էր կարծես:

82 Հովանու տակ այդ կամարի լուսավոր
Գալիս էին քսանչորս ծերեր զույգ առ զույգ՝
Արտախուրված շուշաններով պճնավոր:

85 Բոլորեքյան երգում էին համաձայն.
«Օրհնյալ ես դու դստերաց մեջ Ադամա,
Օրհնյալ լինի գեղեցկությունդ հավիտյան»:

88 Երբ ծաղիկներն ու խոտերը ուռճալիր,
Որոնցով էր պատած ափը դիմացի,
Ազատեցին մի պահ այրերն այն ընտիր,

91 Ինչպես լույսին հետևում է մի այլ լույս,
Չորս կենդանի եկան նրանց ետևից,
Արտախուրված տերևներով նորաբույս.

94 Ամեն մեկը վեց թև ուներ փետրալի,
Որտեղ կային բազում աչքեր պսպղուն.
Այդպես էին անշուշտ աչքերն Արգոսի:

97 Ես, ընթերցող, կերպարանքները նրանց
Ատ չեմ կարող ընկարագրել ավելի.
Մի այլ հարկից ես պետք է դա առնեմ զանց:

100 Բայց դու կարդա Եզեկիելին. նա նրանց
Պատկերում է ինչպես եկան հյուսիսից,
Հողմով, ամպով և կրակով պարուրված։

103 Եվ ինչպես դու նրա երկում կգտնես,
Այդպիսին էր սրանց տեսքը, միայն թե
Հովհաննեսը թևերն հաշվում է ինձ պես։

106 Չորս կենդանու միջև եղած տարածում
Ծարժվում էր մի երկանիվ կառք հաղթական,
Որ մի Գրիֆոն ուսով ընդքարշ էր ածում։

109 Սա պարզել էր իր թևերը արծվային.
Բայց, քայլելով անցուդիով միջանկյալ,
Չէր խանգարում լույս գծերին եզրային։

112 Չէր երևում թևերի ծայրն հեռարձակ.
Նրա թռչնի մասերն էին ոսկեգույն,
Իսկ մյուս մասերն՝ կարմրախառն սպիտակ։

115 Ոչ միայն չէր Ափրիկեցու կառքը կամ
Օգոստոսինն այսպես շքեղ Հռոմում,
Այլ կգիջեր Արևի կառքը անգամ,

118 Արևինը, որ, շեղելով իր ճամփան,
Այրվեց Երկրի պաղատանքով ջերմեռանդ,
Երբոր Զևսը տեսավ արդար դատաստան։

121 Աջ անվի մոտ պարում էին երեք կին.
Մեկը այնպես վառ կարմիր էր, որ հազիվ
Կնկատվեր կրակի մեջ բորբագին։

124 Մյուսը ուներ այնպիսի գույն, որ կարծես
Նրա մարմինն ստեղծվել էր զմրուխտից,
Իսկ երրորդը ճեպ-ճերմակ էր ձյունի պես։

127 Մերթ ճերմակն էր վարում պարը այդ կանանց,
Մերթ կարմիրը, որի երգի համաձայն
Մերթ արագ էր պարն ընթանում, մերթ կամաց։

130 Իսկ ձախ կողմում չորս կին, հագած ծիրանի,
Կայթում-կայտառում էին մեկի կշռույթով,
Որը ուներ գլուխ երեք աչքանի:

133 Այս տողանցող խմբից հետո տեսա ես
Երկու ծերուկ, հագնվածքով ոչ նման,
Սակայն նման շարժվածքով ծանր ու հեզ:

136 Մեկը կարծես աշակերտն էր ընտանի
Հիպպոկրատի, որին բնությունն ստեղծեց
Առողջության համար մարդկանց կենդանի:

139 Մյուսը կարծես ներհակ հոգսով էր տարված,
Կրելով սուր այնքան սուրսայր ու փայլուն,
Որ վախեցրեց ինձ ափունքից դիմակաց:

142 Ապա տեսա չորս անձ խոնարհ կեցվածքով.
Վերջում մենակ մի ծերունի էր գալիս,
Խորաթափանց ու տեսլահար հայացքով:

145 Այս յոթ հոգին տարազներով մյուսներից
Զէին ջոկվում, սակայն իրենց գլխի շուրջ
Կրում էին ոչ թե պսակ շուշանից,

148 Այլ վառ կարմիր վարդանման ծաղկունքից.
Հեռվից նայողն անտարակույս կկարծեր,
Որ այրվում էր նրանց ճակատը հուրքից:

151 Եվ երբ կառքը կանգնեց ուղիղ իմ դիմաց,
Լսվեց որոտ, և այն անձինք հարգարժան,
Դեմ գնալու չլինելով արտոնված,

154 Իրենց բոլոր շքախմբով կանգ առան:

ԵՐԳ ԵՐԵՍՈՒՆԵՐՈՐԴ

Երբ բոցավառ յոթ ջահերը կանգ առան,
Որ թափորի համար եղան ուղեցույց,
Ինչպես աստղերն ուղին նշում են նրան,

4 Ով իր նավը նավահանգիստ է տանում,—
Պատկառելի այն այրերը իմաստուն,
Որ Գրիֆոնից առաջ էին ընթանում,

7 Կանգ առնելուց հետո իսկույն շուռ եկան
Դեպի կառքը այն հոյակապ ու շքեղ,
Որպես իրենց զմայլանքի առարկան:

10 Նրանցից մեկն, ինչպես էակ ներշնչյալ,
Երեք անգամ «Եկ, հարսն» երգեց բարձրաձայն,
Եվ այդ երգը կրկնեց խումբը միացյալ:

13 Զերթ երանյալք երբ վերջին կոչը լսեն,
Փութով պիտի հառնեն իրենց դամբանից
Եվ մարմնացած՝ ալելուիա օրհներգեն,

16 Այսպես ձայնից այն ծերունու գերպատիվ
Աստվածային կառքի վրա բարձրացան
Հավերժ կյանքի բանբերները բազմաթիվ:

19 «Օրհնեալ ոգ գասդ» օրհներգեցին միախառն
Եվ սփռելով շուրջն ու վրան ծաղիկներ,
Ավելացրին. «Շուշանս ածէք լիաբուռն»:

22 Ինչպես հանախ երբ օրը նոր է ծագում,
Արևելքը վարդագունում է համակ,
Իսկ երկինքը պայծառորեն հստակում.

25 Եվ նորածագ արևի դեմքը պարկեշտ
Ծածկված է լինում այնքան նուրբ քողով,
Որ կարող է տեսանելի դառնալ հեշտ,

28 Այսպես թեթև մի ամպի մեջ վառ ծաղկանց—
Որ նետվելով հրեշտակային ձեռքերից՝
Թափվում էին չորս դին կառքի հաղթապանծ,—

31 Մի կին տեսա ձիթենիով պսակված,
Ճերմակ քողով, կանաչավուն քեռեզով
Եվ ոսկեգույն պարեգոտով պարուրված:

34 Եվ հոգիս, որ վաղուց ի վեր չէր կրել
Այն հուզումն ու այլայլությունը, որով
Կյանքում նրա ներկայությամբ եմ ապրել,

37 Առանց նրան պարզ տեսնելու կանխազգաց
Մի զորությամբ, որ նրանից էր բխում,
Վաղնջական ուժը սիրո չհանգած:

40 Հայացքս հազիվ հանդիպեց այն զորության,
Որ կարեվեր խոցել էր ինձ, երբ ես դեռ
Չէի ելած իմ հասակից մանկության,

43 Դարձա ձախ կողմ մի բնազդով ինքնամուղ,
Որով մանուկն իր մայրիկին է փնտրում,
Երբ իր սրտում ունի մորմոք կամ երկյուղ,

46 Վիրգիլիոսին հաղորդելու. «Զգացի
Համակ սարսուռ անոթներում իմ արյան.
Ճանաչում եմ ես նշաններն հին բոցի»:

49 Բայց Վիրգիլը թողել էր ու հեռացել,
Վիրգիլը, իմ հոգեհայրը քաղցրագույն,
Վիրգիլը, որ փրկությունս էր հանձնանձել:

52 Այն բոլորը, ինչ կորցրել է մայր Եվան,
Զարգելեց որ դեմքս, ցողով լվացված,
Նորից եղծվեր արցունքներով իմ ծորան:

55 «Դանտե, մի լար որ Վիրգիլիոսը գնաց,
Մի լար, մի լար ամենևին, զի հիմա
Հարկ է ուրիշ խոցի համար լինես լաց»:

58 Զերթ ծովակալն, որ տեսնելու է գալիս
Անձնակազմին իր ենթակա նավերի
Եվ ամենքին սիրտ ու կորով է տալիս,

61 Այսպես երբ ես դարձա ի լուր իմ անվան,
Որ այստեղ լոկ ակամայից է նշվում,
Կառքի ձախ կողմ տեսա կնոջ անմման,

64 Որ քիչ առաջ ինձ երևաց քողարկված
Հեղեղի տակ ծաղիկների համասփյուռ,
Իր աչքերը դեմի ափից ինձ ուղղած։

67 Թեև քողը, որ իջնում էր գլխից վար,
Շրջանակված Միներվայի ոստերով,
Թույլ չէր տալիս, որ նա որոշ երևար,

70 Բայց նա իր սեգ ու տիրական կեցվածքում
Շարունակեց, ինչպես նա, ով ամենից
Ազդու խոսքերն հարմար պահին է ձգում.

73 «Լա՛վ նայիր, լա՛վ Բեատրիչեն եմ ես արդ.
Ինչպե՞ս եղավ, որ հասնեցիր այստեղ գալ,
Չգիտե՞ս որ երջանիկ է այստեղ մարդ»։

76 Ես աչքերիս դեպի գետը հակեցի.
Երբ ինձ տեսա ջինջ ջրերի մեջ նրա,
Ամաչեցի ինձ և ամոթ զգացի։

79 Ինչպես խիստ է մայրն երևում իր որդուն,
Այսպես նա ինձ խիստ երևաց, բայց նրա
Բարկությանն մեջ ես զգացի բարություն։

82 Նա լուռ մնաց, իսկ հրեշտակներն համաձայն
Օրհներգեցին. **«Ով տէր, ի քեզ յուսացայ»**,
Եվ **«զոտս իմ»**-ով վերջացրին սաղմոսն այն։

85 Ինչպես ձյունը սառնանում է Իտալիո
Ողնաշարի անտառներում կենդանի,
Ցուրտ շնչի տակ քամիների Սլավոնիո,

88 Ապա հենց որ ստվերազուրկ աշխարհից
Հողմ է փչում, սառնը հալչում է տակավ,
Այնպես ինչպես մոմը հալչում է հուրից,

91 Այսպես եղա մինչև երգելը նրանց,
Որոնց ձայնի հնչյունները թավշային
Ուղեկցում են հավերժալուր դաշնությանց.

94 Բայց երբ նրանց ավաչի մեջ աղվական
Զգացի գութ, ավելի քան ասեին՝
«Ով կին, ինչո՞ւ նրան տանջում ես այդքան»,

97 Սառույցը, որ սիրտը սեղմել էր ուժգին,
Դարձավ արցունք և հառաչանք, և բերնից
Ու աչքերից պոռթկաց իմ վիշտը ներքին:

100 Սակայն նա միշտ կանգնած անշարժ, հոտնկայս՝
Հիշատակված կողմը կառքի սրբազան,
Ուղղեց գթոտ էակներին խոսքերն այս.

103 «Դուք հսկում եք հավերժության մեջ այնպես,
Որ ոչ մի դեպք ընթացքի մեջ դարերի
Գաղտնաձածուկ ու անհայտ չի մնում ձեզ.

106 Իմ պատասխանն անշուշտ նրան է ուղղված,
Որ լալիս է ահա այնտեղ, որպեսզի
Վիշտը լինի զուգակշիռ իր մեղաց:

109 Եվ ոչ միայն ազդեցությամբ աստղերի,
Որ ամեն գոյ մի վախճանի են ուղղում,
Ըստ իրենց մեջ պարունակած ուժերի,

112 Այլև առատ շնորհներով երկնային
(Որ հեղում են այնքան բարձր ակունքից,
Ուր չեն հասնում հայացքները մերային)

115 Նա նոր կյանքում սկսում էր զորանալ,
Եվ հակումներն, որոնցով էր նա օժտված,
Կարող էին ամեն գծով զարգանալ:

118 Սակայն մի հող, ինչքան լինում է բերրի,
Այնքան վատ ու անպտղաբեր է դառնում,
Երբ մնում է նա անմշակ ու վայրի:

121 Ես միառժամ նրան նեցուկ կանգնեցի,
Եվ միմիայն իմ կենդանի գոյությամբ
Տանում էի նրան ճամփով ուղղացի:

124 Բայց երբ հասա շեմին երկրորդ հասակի
Ու հեռացա մահկանացու աշխարհից,
Նա ինձ լքեց ու հանձնվեց այդ կյանքի:

127 Երբ որ մարմնից ես բարձրացա առ հոգի,
Եվ աճեցի գեղեցկությամբ, զորությամբ,
Դարձա նրան նվազ հաճո ու հարգի:

130 Նա ընթացավ ճանապարհով մոլորուն,
Ընկնելով սին բարիքների ետևից,
Որ չեն տալիս, ինչ խոստանում են մարդուն:

133 Ներշնչումներս անգամ անզոր մնացին,
Որոնցով ես նրան դարձի կոչ արի.
Նա այնքան քիչ փույթ ունեցավ այդ մասին:

136 Այնքան ընկավ մոլորության մեջ նա խոր,
Որ մի ճար կար միայն նրան փրկելու—
Ցույց տալ նրան հոգիների մեղավոր:

139 Դրա համար այցելեցի ես Դժոխք,
Ուղղելու իմ լալագին հայցը նրան,
Որ բերել է սրան վայրն այս լուսաշողք:

142 Ստվածային վճռի խախտում կլիներ
Լեթե հատնել և ըմպել ջուրն աննման,
Առանց գինը վճարելու քավաբեր

145 Արցունքներով ստրջանքի ու զղջման»:

ԵՐԳ ԵՐԵՍՈՒՆՄԵԿԵՐՈՐԴ

Խոսքը արդեն ինձ ուղղելով ուղղակի,
Որ ինձ այնքան սուր ու խիստ էր թվացել,
Շարունակեց. «Ով դու, որ սուրբ գետակի

4 Այն ափին ես, ասա, ասա, ճիշտ չե՞մ ես։
Այսքան ծանրը մեղադրանքները քո դեմ
Հարկ է, որ դու քո խոսքերով հաստատես»։

7 Այնպես էի ես սահմոկած ու սմքած,
Որ իմ ձայնը, բարձրանալով ի ներքուստ,
Մարեց դեռևս շնչափողից դուրս չեկած։

10 Քիչ սպասեց, ապա հարեց նույն տոնով.
«Ի՞նչ ես խորհում, պատասխան տուր, քանի դեռ
Քո մեղքերը չեն մաքրված Լեթեով»։

13 Խոովքս ու վախս, ուժեղացած առավել,
Բերնիցս այնքան թույլ մի «այո» կորզեցին,
Որ կարող էր աչքը միայն նշմարել։

16 Ինչպես աղեղն, երբ այն լարված է անչափ,
Բեկանվում է այնպես, որ նետն արձակված
Թիրախին է դիպչում նվազ ուժգնությամբ,

19 Այսպես և ես ճնշված ծանրը իմ բեռից,
Դուրս պոռթկացի արցունքներս ու հառաչներս,
Եվ իմ ձայնը թույլ դուրս եկավ իմ բերնից։

22 Եվ նա ասաց. «Հորդորներումս անցյալի,
Որ քեզ մղում էին սիրել այն Բարին,
Որից այն կողմ ոչինչ չկա անձկալի,

25 Ի՞նչ արգելակ կամ ի՞նչ կապանք դու գտար,
Որ քո հույսն ու արիությունը կորցրիր
Ընթանալու ճանապարհով ուղղատար։

28 Ի՞նչ հեշտական կամ շահեկան բան տեսար
Աշխարհային բարիքների մեջ ունայն,
Որոնց այնքան հանդիսացար սիրահար»։

31 Արձակելով կրծքից մի դառն հառաչանք,
Ես շրթներդս դժվարությամբ բաց արի
Եվ պատասխան տալու համար արի ջանք։

34 Ես ասացի. «Բարիքները աշխարհիկ
Ինձ գերեցին իրենց պատիր հաճույքով,
Երբ ձեր մահով կորավ ձեր դեմքը քաղցրիկ»:

37 Եվ նա ասաց. «Ծածկելով կամ ժխտելով
Դու չես խաբի Դատավորին երկնավոր,
Որ դատում է մարդկանց իրենց գործերով:

40 Իսկ երբ մեղքը բերանով է հայտնվում,
Այն ժամանակ մեր ատյանում երկնային
Ծեղրին հեսանն հակառակ է պտտվում:

43 Որպեսզի դու ավելի լավ իմանաս
Քո սխալը, և որպեսզի այլ անգամ
Սիրեանների դյութանքներին դիմանաս,

46 Հանգստացիր և ինձ լսիր փութակամ.
Իմ մահը քեզ պետք է դրդեր ընթանալ
Այլ ուղղությամբ, քան ընթացար դու ցայնժամ:

49 Բնությունը կամ արվեստը քեզ բնավ
Ցույց չեն տվել գեղեցկություն մի այնպես,
Ինչպես անձս էր, որ թաղվեց ու հող դարձավ:

52 Եթե մահվամ կորցրիր գանձն այդ առավել,
Ապա էլ ի՞նչ մահկանացու բան ուրիշ
Կարող էր քո արտի մեջ տեղ գրավել:

55 Հիասթափված բարիքներից սին ու սուտ,
Դու պետք էիր ինձ հետևել միմիայն,
Ինձ, որ արդեն դարձել էի ոգի զուտ:

58 Դու պետք չէիր կծկել թևերդ սլացիկ,
Ենթարկվելու նոր պատրանքի կամ կնոջ
Կամ ինչ որ այլ ունայն բանի վաղանցիկ:

61 Մատաղ ծիտն է լոկ վտանգի ենթարկվում,
Իսկ չափահաս թռչունի դեմ իզուր է
Ծուղակ լարվում կամ պարսաքար արձակվում»:

64 Մանուկն ինչպես կանգնած լուռ ու անկնկոր,
Կշտամբանքներ է լսում և ամաչում,
Լիով իրեն ճանաչելով մեղավոր,

67 Այսպես էլ ես։ Եվ նա. «Թե որ վշտացար,
Լոկ լսելով, մորուքդ վեր բարձրացրու,
Ինձ նայելով դու ավելի կզգաս ցավ»։

70 Բարձրացնելու համար դեմքս դրի ուժ,
Ոչ նվազ ուժ, քան այն, որով հաղթ կանգնին
Սասանվում է մեր հողմերից սաստկախուժ,

73 Կամ Յարբասի երկրից փչող հողմերից.
Եվ դեմքի տեղ երբ նա մորուք գործածեց,
Ես զգացի թունաւոր խայթը ակնարկից։

76 Ի վերջո երբ վեր բարձրացրի դեմքս ես,
Նկատեցի, որ հրեշտակները արդեն
Չէին ափոում ծաղիկներ խուռն ու պես պես։

79 Եվ ես տեսա, դեռ աչքերով ոչ անքուլթ,
Որ տիրուհիս հայացքն ուղղել էր դեպի
Այն գազանը, որ մի անձ էր երկբնույթ։

82 Նա քողով էր և երևում էր հեռվանց,
Բայց թվաց, թե գերազանցում էր իրեն,
Ավելի քան գերազանցեց այլ կանանց։

85 Խղճիս խայթը այնքան եղավ անհոգի,
Որ այն, ինչ ես միրել էի նախապես,
Հիմա դարձավ իմ աչքերին ատելի։

88 Այնքան ճնշեց ինձ ծանրությունն իմ մեղաց,
Որ ուշաթափ ընկա, և այն ինչ դարձա,
Գիտե նա, ով դրա պատճառն էր եղած։

91 Եվ երբ ուշքս վերստացա ես նորից,
Իմ վերևում տեսա կնոջ մենավոր,
Որ ասում էր. «Բռնիր, բռնիր իմ ձեռքից»։

94 Նա ինձ սուզեց գետում կոկորդը մինչև
Եվ, քաշելով իր եռանից, ընթացավ
Ձիի վրա ինչպես մակույկ մի թեթև։

97 Երբ մոտեցա դեմի ափին անխռով,
«Ցողեա յիս»-ը երգվեց այնքան քաղցրաձայն,
Որ չեմ կարող նկարագրել բառերով։

100 Գեղանի կինն իր թևերը բաց արավ,
Ռոնեց գլուխս և ներսուզեց ջրի մեջ,
Այնպես որ ինձ ջուրը կուլ տալ հարկ եղավ։

103 Ապա գետից ինձ ափ հանեց ու գեջ-գեջ
Ներկայացրեց ինձ չորս կանանց նազելի.
Եվ ամեն մեկն ինձ առավ իր բազկի մեջ։

106 «Նիմֆաներ ենք այստեղ, երկնում՝ վառ աստղեր.
Բեատրիչեն աշխարհ չեկած տակավին
Կարգըվեցինք նրան որպես նաժիշներ։

109 Մենք կտանենք քեզ նրա մոտ, իսկ երեք
Կանայք, որոնք ավելի խորն են տեսնում,
Քեզ կօգնեն, որ տեսնես աչքերն իր արեգ»։

112 Այսպես նրանք բարբառեցին խորիմաց
Եվ ինձ տարան Գրիֆոնի կրծքի տակ,
Որ կանգնած էր Բեատրիչեն մեր դիմաց։

115 Ինձ ասացին. «Հառիր հայացքդ անձկակեզ։
Մենք քեզ բերինք աչքերի մոտ այն զմրուխտ,
Ուրկից Սերը իր նետերով խոցեց քեզ»։

118 Հազար իղձեր, ինչպես բոցեր բորբոքված,
Ինձ մղեցին նայել պայծառ աչքերին,
Որ Գրիֆոնի վրա էին բևեռված։

121 Ինչպես արևն հայելու մեջ է ցոլում,
Այսպես երկկերպ այն Գազանը նիրանց մեջ
Մերթ մի տեսքով, մերթ այլ տեսքով էր շողում։

124 Ո՛վ ընթերցող, ինքդդ դատիր թե որքան
Ես զարմացա, երբ Գազանը չէր շարժվում,
Բայց փոխվում էր նրա պատկերն իրական:

127 Մինչ իմ հոգին, հիացքով ու խինդով լի,
Ճաշակում էր դեռ սնունդը գերբնական,
Որից բնավ հագենալ չէր կարելի,

130 Այն մյուս երեք կանայք եկան ընդառաջ
Ազնվական շարժումներով, երգելով
Հրեշտակային իրենց ձայնով քաղցրավաչ:

133 Երգում էին. «Բեատրիչե սրբափառ,
Աչքերդ ուղղիր քեզ նվիրված այս մարդուն,
Որ քեզ համար կտրեց այնքան ճանապարհ:

136 Շնորհ արա բանալ դեմքդդ լուսահորդ,
Որպեսզի նա կարողանա պարզ տեսնել
Քո քողարկած գեղեցկությունը երկրորդ»:

139 Օ՛ ցոլացում հավերժական վառ լույսի.
Ո՞ր օժտվածը քանքարներով բնատուր,
Կամ ո՞ր տքնողն ստվերի տակ Պառնասի,

142 Պիտի չզգար իրեն անզոր ու անճար,
Եթե փորձեր քեզ պատկերել այն պահին,
Երբ երկնային գեղեցկությամբ քո անճառ

145 Երևացիր անքող՝ օդում արփային:

ԵՐԳ ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Աչքերս այնքան ագահորեն հագեցրին
Իմ տասնամյա ծարավն այրող ու տանջող,
Որ մյուս բոլոր զգայարանքս հանգցրին:

4 Եվ անտարբեր դեպի իրերն արտաքին՝
Հմայվեցի նրա ժպտուն բերանով,
Որ գերում էր սիրացանցով իր նախկին։

7 Ես ակամա դեմքս դարձրի դեպի ձախ,
Երբ ինձ երեք դիցուհիներն ասացին.
«Քեզ դյութել է Բեատրիչեն քո չքնաղ»։

10 Շլացումը, որից աչքերը տարտամ
Կորցընում են տեսողությունը իրենց,
Ինձ գրեթե կուրացրեց միառժամ։

13 Բայց աչքերս երբ թույլ լույսին վարժվեցին
(Ասում եմ «թույլ» բաղդատմամբ այն լույսին վառ,
Որից նրանք ակամայից պոկվեցին),

16 Ես տեսա, որ այն թափորը փառահեղ
Թեքվել էր աջ և դառնում էր արդեն ետ,
Ունենալով իր դեմ արփին ճառագեղ։

19 Ինչպես գունդը վահանների ծածկի տակ
Պտտվում է դրոշի հետ նախընթաց,
Դեռ չթեքած ուղղությունն իր բովանդակ,

22 Այսպես փաղանգն արքայության երկնքի
Ամբողջ կազմով առաջ անցավ մեզանից,
Դեռ չշեղված ուղղությունը սուրբ կառքի։

25 Կանայք նորից անիվների մոտ եկան,
Եվ Գրիֆոնը օրհնյալ կառքը քարշ տվեց,
Անշարժ պահած իր թևերը ողջնական։

28 Չքնաղ կինը, որ ինձ գետով անցկացրեց,
Ստատիոն, ես հետևեցինք կառանվին,
Որ ավելի մանրը աղեղ գծագրեց։

31 Այսպես անցանք մենք անտառով անբընակ
— Մեղքով նրա, որը օձին հավատաց—
Ուղեկցությամբ մի օրհներգի ներդաշնակ։

34 Մեկնակետից այնքան էինք հեռացած,
Որքան նետն է անցնում երեք սլացքով,
Երբոր կադքից Բեատրիչեն իջավ ցած:

37 Ամենքն «Ադամ» մրմնջացին մեղմաձայն,
Ապա նրանք շուրջապատեցին մի ծառ, որ
Զուրկ էր ծաղկից ու տերևից ամենայն:

40 Այդ ծառը, որ ընդարձակվում էր այնքան,
Որքան դեպի վեր էր ձգվում, բարձրությամբ
Հոներ նմանն անտառներում հնդկական:

43 «Փառք քեզ, Գրիֆոն, որ չես կտցում ծառն այս լավ,
Քանզի եթե նրան վնաս հասցվի,
Ի վերջո նա կպատճառի փոքացավ»:

46 Այսպես նրանք գոչեցին շուրջը ծառի:
Եվ Գազանը երկկերպ տվեց պատասխան.
«Այսպես պահենք նիմքը ամեն արդարի»:

49 Եվ դառնալով կադքին ճոխ ու հոյակապ,
Այն քարշ տվեց դեպի ծառը մերկացած
Եվ առեղը նրան կապեց ամրակապ:

52 Եվ ինչպես մեր ծառատունկներն երկրային,
Երբ մեծ լույսը միանում է նրա հետ,
Որ շողում է Զկանց հետ երկնային,

55 Զարդարվում են ծաղիկներով գույնզգույն,
Նախքան արևն իր ճառագայթները վեր
Արշավելու աստղահոլովի հետ տրոյն,

58 Այսպես ծառն այս, որը մերկ էր վաղ առտի,
Վերածվեցավ, զարդարվելով մի գույնով,
Որ խառնվում էր մանուշակի ու վարդի:

61 Ես չիմացա այն օրհներգը արտագրավ,
Որ այդ պահին երգեց թափորն համորեն,
Չի հասկացվեց քունս տարավ իմ տակավ:

64 Եթե պատմել կարենայի, թե ինչպես
Կիպ փակվեցին աչեղ աչքերն Արգոսի,
Որին նստեց հսկումը թանկ մեծապես,

67 Հենց այդպիսի օրինակով նկարեն
Կպատմեի, թե ես ինչպես քնեցի,
Բնայց չեմ կարող ես այդ անել հմտորեն:

70 Սակայն կասեմ, թե ես ինչպես զարթնեցի.
Ահա մի լույս իմ քնի քողը պատռեց,
Եվ ես «Վեր կաց, ինչ ես քնել» լսեցի:

73 Ինչպես Պետրոսն, Հակոբոսն ու Հովհաննես
Երբ որ տեսան խնձորենու պտուղն այն,
Որ տենչում են հրեշտակները անձկապես,

76 Եվ որ հավետ զարդն է երկնի հարսանյաց,
Նվաղեցին, ապա, զարթնած մի գոչից,
Որից խոր քունն էլ կխզվեր անկասկած,

79 Նկատեցին, որ Մովսեսը և Եղիան
Իրենց խմբից հեռացել են, չքացել,
Եվ իրենց Տերն զգեցել է այլ ամպան,

82 Այսպես և ես սթափվեցի ու տեսա
Ինձ մոտ միայն այն կնոջը ողորմած,
Որ ինձ տարավ ափով գետի հեզասահ:

85 «Բեատրիչեն ո՞ւր է» հարցրի ես նրան:
Եվ նա ասաց. «Նա նստած է այն ծառի
Ստվերի տակ և արմատի հենց վրան:

88 Տես կանանց, որ պաշարել են նրան լուռ,
Իսկ մյուսները Գրիֆոնի ետևից
Վեր համբարձան օրհներգերով քաղցրալուր»:

91 Ես չգիտեմ թե ինչ խոսքեր արեց այլ,
Չի տիրուհիս առինքնել էր ինձ արդեն,
Եվ ես նրան էի նայում հոգեզմայլ:

94 Նա նստել էր գետնի վրա միայնակ,
Կարծես լիներ պահակ կարգված այն կառքին,
Որ ծառին էր կապել Գազանը կրկնակ:

97 Նիմֆաները կազմել էին նրա շուրջ
Մի շրջանակ, ձեռներին այն ջահերով,
Որ չեն շիջի քամիներից սաստկաշունչ:

100 «Դու կմնաս այս անտառում միառժամ,
Ապա ինձ հետ կբնակվես առհավետ
Այն Հռոմում, ուր Քրիստոսն է պատվանդամ:

103 Արդ դու հոգուտ վատթարակյաց աշխարհի
Քո հայացքը ուղղիր կառքին, և ինչ որ
Տեսնելու ես՝ վերադարձիդ առ գրի»:

106 Այսպես ասաց Բեատրիչեն, և ես որ
Պատրաստ էի հնազանդելու միշտ նրան,
Ուշքս ու աչքս դարձրի կառքին անսովոր:

109 Շանթը երբեք չիջավ ստվար ամպերից
Այնքան արագ, երբ նա ցած է սլանում
Այն ոլորտից, որ հեռագույնն է երկրից,

112 Ինչպես Զևսի թռչունն իջավ ծառն ի վար,
Քայքայելով թե կեղևը նրա պինդ,
Թե ծաղիկներն ու տերևները դալար,

115 Ու հարվածեց բոլոր ուժովը կառքին,
Եվ սա ցնցվեց ինչպես նավը՝ մատնված
Ալիքների ու հողմերի կոծանքին:

118 Ապա տեսա, որ կառքի մեջ հաղթական
Խուժեց աղվես մի սովահար, որ կարծես
Չէր ճարակել ոչ մի սնունդ կենսական:

121 Բայց, գիտնալով ժանտ արարքները նրա,
Իմ տիրուհին սաստեց նրան խստորեն,
Եվ նա փախավ սրունքներով իր ոսկրյա:

124 Ապա տեսա, որ արծիվը նույն ճամփով
Նորից իջավ հատակամասը կառքի,
Ուր և թողեց փետուրները մեծ չափով։

127 Նման ձայնին ելած սրտից վշտակեզ,
Տիրաթաթավ մի ձայն երկնից հեծեծեց.
«Ո՛վ իմ նավակ, ինչքա՛ն հոռի բեռ ունես»։

130 Ապա երկու անիվների արանքին
Հողը բացվեց, ուրկից ելավ մի վիշապ
Եվ կառքի մեջ խորամխեց իր ագին։

133 Եվ բոռի պես, որ քաշում է խայթոցն ետ,
Վիշապը ժանտ պոչը կառքից ետ քաշեց
Ու պոկելով մի մաս՝ տարավ այն իր հետ։

136 Մնացած մասն, ինչպես լավ հողը՝ սեզով,
Ծածկվեց ամբողջ փետուրներով, որ, գուցե,
Ընծայել էր արծիվն ազնիվ դիտումով.

139 Զույգ անիվներն ու քեղին էլ ծածկվեցին
Ավելի կարճ ժամանակում, քան հարկ է
Արձակելու համար հառաչ մի խորին։

142 Այսպես փոխված՝ սրբազան կառքը խոցոտ
Իր ծայրերից յոթ գլուխներ դուրս հանեց.
Երեք հատը քեղու, չորսը՝ անկյանց մոտ։

145 Երեք հատը ունեին զույգ եղջյուրներ,
Իսկ չորսը՝ լոկ մի-մի եղջյուր ճակատին.
Նման ճիվաղ տեսնըված չէր երբեք դեռ։

148 Անշարժ, ինչպես լեռան քերծը հաստամեստ,
Կառքի վրա նստել էր պիղծ մի պոռնիկ
Եվ շրջում էր իր աչքերը անհամեստ։

151 Նրա կողքին հաղթ մի հսկա էր կանգնած,
Որ աչալուրջ հսկում, պահում էր նրան
Եվ երկուսով պաչում էին մերթ միմյանց։

154 Բայց երբ պոռնիկն իր աչքերը անամոթ
Դեպ ինձ ուղղեց, նիա վայրագ հոմանին
Խարազանեց նրան գլխից մինչև ոտ.

157 Ապա, խանդով ու մոլուցքով սրարբած,
Կառքն արձակեց ու քարշ տվեց անտառով,
Որտեղ, ասես վարագույրով ծածկված,

160 Բոզն ու ճիվաղն աննենտացան շտապով:

ԵՐԳ ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ

Կանայք հերթով՝ մերթ երեքը և մերթ չորսք,
Սկսեցին երգել ձայնով ողբագին
Քաղցրը սաղմոսն. **«Աստուած, մտին հեթանոսք»:**

4 Բեատրիչեն, արձակելով դառն հառաչ,
Ունկնդրում էր նրանց այնպես տրտմագին,
Ինչպես Մարիամ կույսը խաչին ընդառաջ:

7 Բայց երբ նրանք ավարտեցին երգն իրենց,
Նա վեր կացավ և մի դեմքով հրաշեկ
Այսպես նրանց փութանակի բարբառեց.

10 **«Փոքրը մի՝ և ոչ. ևս տեսանէք,**
Եվ ապա, ո՛վ խանդաղակաթ իմ քույրեր,
Սակաւիկ մի՝ և զիս կրկին տեսանէք»:

13 Ապա յոթին անցկացրեց իր առջև,
Իսկ ինձ, կնոջն ու իմաստուն ուղեկցին
Ակնարկ արեց, որ շուտ անցնենք իր ետև:

16 Այսպես առաջ նա ընթացավ համարձակ,
Եվ տասներորդ քայլը գետին չէր դրել,
Երբ ես տեսա նրա աչքերն հրափայլ:

19 «Ծուտ մոտեցիր, որպեսզի երբ խոսեմ ես,—
Ասաց նա ինձ դեմքով արդեն հանդարտած,—
Կարողանաս ինձ ունկնդրել դյուրապես»:

22 Հենց որ նրան ես մոտեցա հապշտապ,
Նա ինձ ասաց. «Եղբայր, ինչո՞ւ դու հիմա
Չես համնդգնում տալ ինձ հարցեր հրատապ»:

25 Ինչպես նա, ով մեծերի հետ խոսելիս
Հույժ պատկառոտ մի կեցվածք է ընդունում,
Եվ բերանից ձայնն հազիվ է դուրս գալիս,

28 Այսպես և ես ձայնով տարտամ ու տկար
Բարբառեցի. «Ով տիրուհի, դուք գիտեք,
Թե ինչ է պետք ու կարևոր ինձ համար»:

31 Եվ նա ասաց. «Նախ դու պետք է թոթափես
Ծիծաղությունն ու երկյուղը քեզանից
Եվ չխոսես բանդագուշած մարդու պես:

34 Այն կատաղը, որ ջարդեց վիշապը խուժդուժ,
Եղավ և չէ. բայց մեղավորն այդ խնդրում
Աստծու պատժից չի խուսափի վաղ թե ուշ:

37 Արծիվը, որ կատաղին թողեց իր փետուրք,
Որից դարձավ սա նախ ճիվաղ, հուսկ ավար,
Չի մնալու ժառանգորդից ընդմիշտ զուրկ:

40 Չի տեսնում եմ արդեն աստղեր մերձավոր,
Որոնք, ազատ ամեն խուրթից ու խոչից,
Կբերեն մեզ մի ժամանակ բախտավոր,

43 Երբ Հինգհարյուր Տասնևհինգը երկնատաք
Կխողխողի ավազակին բոզացյալ
Եվ նրա հետ այն հսկային անառակ:

46 Գուցե խոսքերս Սֆինքսի ու Թեմիսի
Լեզվի նման մութ են և քիչ համոզիչ,
Նրանց նման մթամատաղ են վաղանցի,

49 Բայց դեպքերը Նայադներ են լինելու

Եվ լուծելու այս հանելուկը դժվար,
Առանց հոտերն ու արտերը տուժելու։

52 Եվ այն ինչ որ ես ասացի քեզ հիմա,
Հետո դու այն կհաղորդես ողջերին,
Որոնց կյանքը մի արշավ է դեպի մահ։

55 Եվ ասածդս երբ որ առնես դու գրի,
Մի մոռանար հիշատակել և ծառն այն,
Որ մատնվեց երկու անգամ ավարի։

58 Նրանք որ այն կավարեն կամ կավերեն,
Կհասցընեն փիրավորանք Աստուծո,
Որ ստեղծեց այն ի պետրս լոկ իրեն։

61 Կծելով այն, նախամարդը հինգ հազար
Եվ ավելի տարի տխուր սպասեց,
Որ Մեսիան գար և իր հանցանքը բառնար։

64 Միտքդ փակ է, եթե դու չես հասկանում,
Որ մի հատուկ պատճառով է ծառն այդքան
Վեր բարձրանում և գագաթին լայնանում։

67 Թե սին խոսերն, ինչպես ջրեր Էլսայի,
Զպատեին ու չեղծեին միտքը քո,
Ինչպես արեց Պիրամը թութը վայրի,

70 Այս փաստերը քեզ ըմբռնել կտային
Բարոյական իմաստը այն արգելքի,
Որ սահմանեց արդարությունն երկնային։

73 Բայց տեսնելով, որ միտքդ քար է դարձել
Եվ մթագնել ու կուրացել է այնպես,
Որ չի կարող խոսքերիս լույսն ընկալել,

76 Դու դա կրիր քո հոգու մեջ դրոշմած,
Այնպես ինչպես ցույց են կրում ուխտական,
Արմավենու տերևներով զարդարված»։

79 Եվ ես. «Ինչպես պահում է մոմն անաղարտ
Դրոշմատիպ պատկերն իր մեջ, ճիշտ այդպես
Ձեր խոսքերը կարձանագրի ուղեղս արդ։

82 Սակայն ինչո՞ւ ձեր խոսքերը տեսնչալի
Մտքիցս այնքան բարձր են ճախրում, և ինչո՞ւ
Նրանց իմաստն ինձանից խույս է տալիս»:

85 «Որպեսզի դու լավ ճանաչես դպրոցն այն,
Որին դու ցարդ հետևել ես,— ասաց նա,—
Եվ հասկանաս նրա ուսմունքը ունայն.

88 Ու տեսնես թե ձեր ճանապարհը բռնած
Աստվածային ճամփից այնքան է հեռու,
Որքան երկիրն երկնագնդից բարձրությաց»:

91 Ի պատասխան ես ասացի. «Չեմ հիշում,
Թե երբ եմ ես օտարացել ձեզանից.
Դրա համար իմ խիղճը ինձ չի տանջում»:

94 «Իսկ եթե դու դա մոռացել ես արդեն,—
Պատասխանեց նա ժպտալով,— հիշիր թե
Ինչպես այսօր հենց խմեցիր դու Լեթեն:

97 Եթե ծուխը ենթադրել է տալիս հուր,
Մոռացումդ այդ ցույց է տալիս հայտնապես,
Որ մեղավոր կամքդ ուղղված էր այլուր:

100 Բայց ես քեզ հետ այսուհետև կխոսեմ
Պարզ ու մեկին և անսքող խոսքերով,
Որ մատչելի լինեմ մտքին քո նսեմ»:

103 Ավելի վառ և ավելի համրաքայլ
Մուտք էր գործում արփին ծիրում միջօրյա,
Որ մի տեղից միշտ անցնում է տեղ մի այլ,

106 Երբ յոթ կանայք, հասնելով ծայրն անտառի,
— Որ դալարուն ու զովասուն էր ինչպես
Սաղարթախիտ անտառները Ալպերի—

109 Անդ կանգ առան, ինչպես կանգնում է նա, որ
Ընթանալով մի բազմության առջևից՝
Ճանապարհին նկատում է բան մի նոր:

112 Կարծես տեսա գետերն Եփրատ ու Տիգրիս,
Որոնք բխում էին միակ ակունքից
Եվ բաժանվում ընկերների պես հանգիստ:

115 «Ո՛վ լույս, ո՛վ փառք դու մարդկային սերնդյանց.
Ի՞նչ ջուր է սա, որ բխելով մի ակից,
Բաժանվում է հոսանքների հակընթաց»:

118 Այս ուղերձիս պատասխանեց տիրուհիս.
«Մաթելդային խնդրիր, որ քեզ բացատրի»:
Չքնաղ կինը, որ գտնվում էր կողքիս,

121 Հայտարարեց. «Ես նրա հետ այդ բանի
Եվ բաների մասին ուրիշ խոսել եմ.
Վստահ եմ, որ նա մոռացած չի լինի»:

124 Թեատրիչեն. «Գուցե հոգսերը լկիչ,
Որ խախտում են հիշողությունը հանախ,
Մթագնել են նրա ուղեղը մի քիչ:

127 Տես Եվնոյեն, որ հոսում է այնտեղ ցած.
Տար նրան անդ և սուզելով ջրի մեջ,
Վերարծարծիր նրա կորովն անթեղված»:

130 Ինչպես նա ով անսաստող չէ բնույթով,
Այլ հոժար է կատարելու կամքն այլոց,
Հենց որ կամքն այդ հայտնվում է մի բանով,

133 Այսպես կինն այն փութաց պատվերն այդ անել,
Ապա շարժվեց և կանացի քնքշությամբ
Ստատիոսին առաջարկեց հետևել:

136 Ո՛վ ընթերցող, եթե այստեղ տեղ մնար
Դեռ գրելու, կերգեի քաղցր ըմպելին,
Որից երբեք մարդ չպիտի հագենար:

139 Բայց քանի որ լրացած են էջերն այն,
Որ սահմանված էին երկրորդ նվագին,
Արվեստի սանձն ինձ պահում է առժամայն:

142 Ես ետ դարձա այն ջրերից մաքրասուրբ,
Վերածնված՝ բույսի պես նոր փթթած դեռ
Եվ ծածկված տերևներով նոր ու նուրբ,

145 Ինչ ու պատրաստ բարձրանալու դեպ աստղեր:

ԴՐԱԽՏ

ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

Փառահեղ լույսն ամեն, շարժման ակունքի
Տարածվում է տիեզերքում ու շողում
Մի տեղ լրիվ և մի այլ տեղ մասնակի։

4 Այն երկնում, որ հեղեղված է այդ լույսով,
Ես եղա և տեսա բաներ այնպիսի,
Որ չեմ կարող վերապատմել բառերով.

7 Չի մեր միտքը, երբ իր իղձին է հասնում,
Այնքան շատ է խորասուզվում նրա մեջ,
Որ հիշելու կարողությունն է կորցնում։

10 Սակայն ինչ որ ես կարող եմ վերհիշել
Այն արքազան արքայության գանձերից,
Արդ կլինի երգերիս նյութը վայել։

13 Ո՛վ Ապոլլոն, այս երկունքիս մեջ վերջին,
Քո ավյունով դու ինձ այնքան տոգորիր,
Որքան հարկ է, որ ստանամ քո դափնին։

16 Ցարդ բավ եղավ մի գագաթը Պառնասի,
Բայց հիմա ինձ հարկավոր են երկուսն էլ,
Որ մուտք գործեմ ասպարեզը նոր մարզի:

19 Մտիր կուրծքըս և շունչդ ինձ փոխանցիր,
Այն շունչդ հզոր, որ ունեցար դու այնժամ,
Երբ մրցման մեջ դու Մարսիային հաղթեցիր:

22 Եթե դու ինձ, ո՛վ զորություն աստվածյան,
Այնպես օգնես, որ կարենամ պատկերել
Թեկուզ ստվերն արքայության մշտնջյան,

25 Կմոտենամ ես քո դափնուն բաղձալի,
Պսակվելու համար նրա տերևով,
Քո շնորհիվ և իմ նյութի պանծալի:

28 Հայր, այդ տունկից այնքան քիչ են քաղում արդ՝
Մեծարելու համար կայսրի, պոետի,
— Ի մեծ ամոթ մարդկանց կամքի հանցապարտ—

31 Որ անշուշտ դու, աստվածությունդ դելֆյան,
Կհրճվեիր, եթե մեկը նկրտեր
Արժանանալ այդ տերևին պեներյան:

34 Փոքրիկ կայծին հետևում է մեծ հրդեհ.
Ինձնից հետո գուցե լինեն լավագույն
Խնդրարկուներ, որոնց Կիրրան ունկնդրե:

37 Զահն աշխարհի մարդկանց վրա է ծագում
Մերթ այս կողմից, մերթ այն, սակայն այն կողմից,
Ուր չորս ծիրերն երեք խաչեր են կազմում,

40 Նա ծագում է ավելի լավ ընթացքով
Եվ ավելի լավ աստղերի բույլի հետ,
Ու երկիրը կաղապարում իր կնքով:

43 Աստ առավոտ, անդ երեկո էր դարձել,
Եվ քիչ առ քիչ այս կիսագունդը համակ
Պայծառել էր, իսկ այն մյուսը խավարել,

46 Երբ ես տեսա իմ տիրուհուն, որ դարձած
Դեպի ձախ կողմ, պիշ նայում էր արևին.
Արծիվն անգամ նրան այնպես չէր նայած:

49 Եվ ինչպես որ շողը ծագում է շողից
Ու վերստին բարձրանում է դեպի վեր,
Ինչպես բազեն, որ թռչում է վեր նորից,

52 Այսպես նրա սևեռաբիբ նայվածքից
Առաջացավ իմ հայացքը անսովոր,
Որով արփին ես դիտեցի ներքևից:

55 Այն, ինչ երկրում անկարող ենք մենք անել,
Աստ կարող ենք, ի շնորհիվ տեղանքի,
Որ ի վերուստ մարդկանց համար է հաստվել:

58 Ես այդ լույսին չտոկացի շատ երկար,
Բայց տեսա, որ նա կայծեր էր արձակում,
Ինչպես երկաթն հանված բովից թեժ ու վառ:

61 Տվնջյան լույսն հանկարծ աճեց իմ աչքում,
Ինչպես եթե ամենակալ Տերը մեր
Մի նոր արև դրած լիներ երկնքում:

64 Բեատրիչեն աչքերն հառել էր հավերժ
Երկինքներին, ես էլ նրան հառեցի
Իմ աչքերը զմայլյալ ու այլամերժ:

67 Նրա տեսքից գերմարդացա ես տակավ,
Գլավկն ինչպես դարձավ աստված ծովային,
Երբ մի տեսակ խոտ համտեսեց ու կերավ:

70 Գերմարդանալն անհնար է բացատրել,
Սակայն բավ է այս օրինակը նրան,
Ով կարող է այդ իր փորձով հաստատել:

73 Թե ես միայն հոգով էի համբառնում,
Դու լոկ գիտես, ո՛վ երկինքը վարող Սեր,
Որ բարձրացրիր ինձ քո ուժով անհատնում:

76 Երբ գնդերը, որ հոլովվում են հավետ,
Իրենց վրա կենտրոնացրին ուշքը իմ
Հնչյուններով իրենց մեղմ ու դաշնավետ,

79 Տեսա երկինքն այնպես վառված արևից,
Որ այդպիսի լայնատարած լիճ երբեք
Չի գոյացել գետից և կամ անձրևից:

82 Զայնն այնքան նոր և լույսն այնքան առատ էր,
Որ ուզեցի դրանց պատճառն իմանալ
Մի մարմաջով, որ՝ իմ մեջ չէր եղել դեռ:

85 Տիրուհիս, որ միտքս կարդում էր դյուրավ,
Գոհացնելու համար իրձքս անձկայրյաց,
Նախքան հարց տալս՝ իր բերանը բաց արավ

88 Եվ բարբառեց. «Թյուր կարծիքովդ ինքդդ քեզ
Բթացնում ես. դու ամեն ինչ կիմանաս,
Եթե քեզնից այդ կարծիքը թոթափես:

91 Է՛լ երկրում չես, ինչպես կարծում ես դու դեռ:
Շանթն այնպես չի գահավիժել վերից վար,
Ինչպես դու արդ սլանում ես դեպի վեր»:

94 Եվ ես նրա այս խոսքերով կարճառոտ
Թոթափվեցի տարակույսից առաջին,
Բայց ընկա նոր տարակույսի մեջ կնճռոտ

97 Եվ ասացի. «Մի զարմանքից հանգչեցի,
Բայց հիմա էլ զարմանում եմ թե ինչպես
Վեր եմ թռչում միջով թեթև տարերքի»:

100 Եվ այնժամ նա հառաչանքով խորազգաց
Աչքերն ուղղեց դեպի ինձ այն նայվածքով,
Որով մայրն է նայում որդուն ցնորված.

103 Եվ բացատրեց. «Էությունները համայն
Իրենց միջև ունեն մի կարգ ներդաշնակ,
Որ տիեզերքն Աստծուն դարձնում է նման:

106 Վեհ էակներն այդ կարգի մեջ ստեղծված
Տեսնում են դրոշմն իմաստության Արարչի,
Որի համար է այն կարգը հաստատված:

109 Այդ կարգի մեջ գոյակները ամենայն
Հակում ունեն ինչ-որ բանի ձգտելու,
Իրենց տարբեր վիճակների համաձայն,

112 Եվ լողում են տիեզերքի մեծ ծովով
Դեպի տարբեր հանգրվաններ՝ խթանված
Իրենց վարող մասնահատուկ բնազդով:

115 Դա է տանում հուրը դեպի գունդը վառ,
Դա է վարում անբանական կենդանուն,
Դա է պահում երկրի զանգվածը ստվար:

118 Սակայն անբան գոյակները չեն միայն,
Որ ձգտում են դեպի որոշ նպատակ,
Այլև նրանք, որ ունեն միտք բանական:

121 Այս բոլորի տնօրինողն իմաստուն
Իր լույսով է օծում երկինքը վերին,
Որի մեջ է շրջում երկինքն արագուն:

124 Եվ հենց այնտեղ, ինչպես վերջին կայանին,
Մեզ տանում է ուժն այն լարի, որ ամեն
Գոյացություն ուղղում է իր վախճանին:

127 Սակայն ինչպես արվեստի գործն իր ձևով
Հղացվածից մերթ տարբեր է դուրս գալիս,
Նյութի հետ հաշտ չընթանալու պատճառով,

130 Այսպես էակն իր բնական ընթացքից
Մերթ շեղվում է, իր այն ուժի պատճառով,
Որ կարող է և խոտորվել ճիշտ ճամփից:

133 Ինչպես շանթը մերթ ամպերի խորքերից
Ցած է վիժում, այսպես խոյանքը մարդու
Մերթ ընկնում է, շեղված պատիր հաճույքից:

136 Մի զարմանա բարձրանալովդ արդ վերև,
Այնպես ինչպես չես զարմանա տեսնելով
Մի գետակ, որ սարից իջնում է ներքև:

139 Զարմանալին այն կլիներ քո դեպքում,
Որ դու, անխոչ, գետնին կառչած մնայիր,
Ինչպես եթե բոցը մնար իր տեղում»:

142 Եվ նա նորից երկինք ուղղեց հայացքն իր:

ԵՐԳ ԵՐԿՐՈՐԴ

Օ, դուք որ փոքր ու երերուն մակույկով
Մինչև այստեղ հետևել եք իմ նավին,
Որ անցնում է այլ ջրային տարածքով,

4 Վերադարձեք դեպ ափերը ձեզ ծանոթ.
Դուք մի դուրս գաք դեպի բաց ծով, զի գուցե
Կորցնելով ինձ՝ մնաք շվար ու շփոթ:

7 Այստեղ ոչ ոք չի նավարկել տակավին.
Ինձ վարում են Ապոլլոնն ու Միներվան,
Մուսաներն էլ ցույց են տալիս ինձ ուղին:

10 Իսկ դուք քչերդ, որ մտքերը ձեր հլու
Բարձրացրել եք դեպի հացն այն սրբազան,
Որ ուտում են առանց հագուրդ զգալու,

13 Քաջ կարող եք այս խոր ծովով նավարկել,
Հետևելով միշտ իմ նավի հետքերին,
Քանի ջրի մակերեսը չի հարթվել:

16 Հերոսներն այն, որ Կոլխիդա գնացին,
Զարմանալու այնքան պատճառ չունեցան,
Երբ երկրագործ դարձած տեսան Յասոնին:

19 Արքայության ծարավն անհագ ու անմար
Մեզ տանում էր այնպես թափով դեպի վեր,
Ինչպիսի թափ ունի երկինքը կամար:

22 Բեատրիչեն նայում էր վեր, ես՝ նրան:
Լայնալիճից արձակված նետը երբեք
Այնքան փութով չի հասնի դեպ իր նշանն,

25 Որքան փութով ժամանեցի ես մի վայր,
Որ գրավեց իմ ուշն ու միտքը համակ:
Տիրուհիս, որ կարդում էր միտքն իմ շվար,

28 Դարձավ դեպ ինձ և ցնծագին բարբառեց.
«Երախտագետ սրտով ուղղվիր առ Աստված,
Որ առաջին երկնագունդը մեզ հասցրեց»:

31 Ինձ թվաց, որ մեզ պարուրեց մի ամպ անդ՝
Ստվարախիտ, ամուր, ողորկ ու շողուն,
Ինչպես լույսից պսպղացող ադամանդ:

34 Կուռ մարմինը ընդունեց մեզ՝ երկուսիս,
Ինչպես ջուրը, միշտ մնալով անբաժան,
Ընդունում է իր մեջ ճառագայթը լույսի:

37 Եթե մարմնով էի—և այդ դեպքում մեզ
Հասկանալի չէ, թե ինչպես կարող են
Երկու մարմին ներթափանցել իրար մեջ—

40 Դա ավելի պետք է վառեր տենչը մեր
Տեսնելու այն Էությունը, որի մեջ
Զուգորդված են բնությունները տարբեր:

43 Անդ կտեսնենք այն խորհուրդները խորին,
Որ անքնին ընդունում ենք հավատով,
Այնպես ինչպես ճշմարտությունն առաջին:

46 Ես ասացի. «Ո՛վ տիրուհի սրտակից,
Ես խորապես շնորհակալ եմ նրան,
Ով ինձ հանեց մահկանացու աշխարհից:

49 Բայց ասացեք՝ ի՞նչ են բծերն այս մարմնի,
Որոնք երկրում մարդկանց առիթ են տվել
Առասպելներ հյուսելու շուրջ Կայենի»:

52 Եվ նա ասաց թեթևակի ժպիտով.
«Եթե մարդիկ սխալվում են մի հարցում,
Որ չի լուծվում զգայության միջոցով,

55 Դու պետք չէ որ շատ զարմանաս դրանից,
Զի մեր միտքը շատ չի կարող թևածել,
Ընթանալով զգայությանց ետևից:

58 Իսկ դու ինքդդ ի՞նչ ես կարծում»: Ես նրան,
«Այստեղ լուսնի տարբեր տեսքերը, ըստ իս,
Հետևանք են նյութի տարբեր խտության»:

61 «Կարծիքդ,— ասաց,— սխալ է և ընդունայն.
Դա կտեսնես, երբ ուշ դարձնես փաստարկիս,
Որով հիմա ես կաշխատեմ հերքել այն:

64 Վատ երկինքը լի է բազում աստղերով,
Որոնք իրենց լույսի չափի համեմատ
Երևում են մարդկանց տարբեր տեսքերով:

67 Թե դա լիներ նոսրի, խիտի պատճառով,
Բոլորի մեջ մի հատկություն կլիներ,
Բաշխված նվազ կամ առավել չափերով:

70 Այլատեսակ հատկություններն արդյունք են
Այլ էական պատճառների, իսկ սրանք,
Բացի մեկից, քո կարծիքով դեր չունեն:

73 Եթե նոսրը պատճառ լիներ բծերի,
Որ տեսնում ես, այս լուսինը կլիներ
Կամ նոսրացած բաղակցություն նյութերի,

76 Եվ կամ ինչպես մի մարմնի մեջ կա պարարտ
Ու նիհար մաս, այնպես և այս լուսնի մեջ
Կլիներին տարբեր շերտեր բարդի բարդ:

79 Նախորդ դեպքում կպարզվեր հարցը այդ,
Երբ արևի խավար լիներ, վասնզի
Կթափանցեր լույսը նյութով այդ անգայտ:

82 Դա չէ. ապա տեսնենք վարկածը երկրորդ.
Եվ՝ եթե ես դա էլ հերքել կարենամ,
Քո կարծիքը կհամարվի ավելորդ:

85 Եթե նոսրը ամեն տեղ չի տարածվում,
Կա ուրեմըն սահման նոսրի ու խիտի,
Որկից այն կողմ էլ լույսը չի թափանցում,

88 Այլ այնտեղից ետ է դառնում ուղղաբար,
Այնպես ինչպես պատկերը ետ է դառնում
Այն ապակուց, որի ետևն է կապար:

91 Բայց կառարկես՝ երբ խիտ խավը լինի խոր,
Լույսն ավելի մութ կերևա, քան այլուր,
Կանդրադառնա քանզի տեղից հեռավոր:

94 Այս կասկածից կարող է փորձը միայն
Ազատել քեզ, եթե նրան դու դիմես,
Որ աղբյուրն է ձեր գիտությանց ամենայն:

97 Վերցրու երեք հայելի և նրանցից
Երկուսը մոտ, իսկ երրորդը հեռու դիր,
Այնպես որ սա քեզ երևա մեջտեղից:

100 Քո թիկունքում զետեղիր լույս մի ուժգին,
Որ ցոլանա հայելիքում այն երեք
Եվ նրանց ցոլքն անդրադառնա քո դեմքին:

103 Հեռավորը թեև լույսի քանակով
Հավասար չէ մյուս երկուսին, բայց նրանք
Հավասար են իրենց լույսի որակով:

106 Արդ ինչպես ջերմ ճառագայթների շողունից
Ջլան գոյանյութն ազատվում է քիչ առ քիչ
Եվ՝ իր նախկին սառնությունից; և՛ գույնից,

109 Այսպես ես քեզ, թոթափելով սխալից,
Պիտի լույսով մի ողողեմ այնպես վառ,
Որ քո աչքին փայլատակի շողալից:

112 Աստվածության անշարժական երկնի տակ
Պտտվում է մի մեծ մարմին երկնային,
Որի ուժն է կրում ամեն մի գոյակ:

115 Հաջորդ երկինքն, ուր կան աստղեր այնքան շատ,
Հաղորդում է ուժն այդ տարբեր գոյերին,
Որ իր մեջ են և իրենից տարանջատ:

118 Մյուս երկինքներն եղանակով բնազանց
Այդ ուժերը տնօրինում են այնպես,
Որ գործադրեն ազդեցությունը յուրյանց:

121 Այսպես մեկը մյուսին են հաջորդում
Տիեզերքի օրգաններն այս և բարձրից
Առած ուժը ստորինին հաղորդում:

124 Արդ հետևիր, թե ինչպես եմ գնում ես
Քո ցանկացած ճշմարտությունը դեպի,
Որին հետո ինքդդ անձամբ կհասնես:

127 Շարժումը և ուժը երկնի գնդերի
Ձեռքի գործն է շարժիչների երանյալ,
Ինչպես դարբնած իրը դարբնի ձեռքերի:

130 Երկինքն այն, որ ունի աստղեր մշտավառ,
Ընդունում է իր մեջ դրոշմը ոգու
Եվ շարժվում է նրա ուժով մշտավար:

133 Ինչպես հոգին ձեր մարմնի մեջ մարդկային
Տարածվում է անդամների մեջ տարբեր,
Ըստ այլազան կարողությանց յուրային,

136 Այսպես ոգին աստղերի մեջ բազմազան
Տարածում է իր այդ ուժը բարերար,
Պահելով իր միասնությունն անբաժան:

139 Ինչպես հոգին ձեր մարմնի հետ մարդկային
Միաձույլ է, այսպես ուժը այդ ոգու
Միաձույլ է այդ մարմնի հետ երկնային:

142 Ունենալով հարազվարթ բնություն,
Ցուլված ուժը մարմնի միջով է շողում,
Ինչպես խիզդը աչքի միջով վառվռուն:

145 Այդ ուժից են տարբեր լույսերը ծագում,
Ոչ թե մարմնի խտությունից այս կամ այն.
Պատճառն այդ է, որը առաջ է բերում

148 Մութն ու պայծառն, իր ներգործման համաձայն»:

ԵՐԳ ԵՐՐՈՐԴ

Արևն այն, որ ջերմացրել էր ինձ սիրով,
Քաղցրը դեմքը ճշմարտության գեղեցիկ
Ինձ ցուցադրեց որոշակի փաստերով.

4 Եվ ցույց տալու համար, որ ես հասկացել,
Համոզվել եմ, գլուխը ըստ պատշաճի
Վեր բարձրացրի, որ կարենամ զեկուցել:

7 Սակայն հանկարծ ես տեսա մի երևույթ,
Որով այնպես ուշս ու միտքս կլանվեց,
Որ մոռացա իմ ասելիքը ընդփույթ:

10 Ինչպես վճիտ, ականակիտ, հանդարտիկ
Ջրերի մեջ, ուր հատակն է երևում,
Կամ ինչպես ջինջ ապակու մեջ թափանցիկ

13 Մենք տեսնում ենք մեր պատկերը այնքան թույլ,
Որքան ողորկ մարգարիտն է երևում
Ճակտի վրա սպիտակ ու աննշույլ,—

16 Այսպես տեսա դեմքեր՝ պատրաստ խոսելու.
Եվ ունեցա ներհակ պատրանքը նրա,
Ով սեր ծնեց ջրի միջև և մարդու:

19 Հենց որ նրանց նկատեցի թուլորեն,
Կարծեցի թե դիմացոլքեր են դրանք,
Եվ շուտ եկա տեսնելու թե ովքեր են:

22 Բայց հայտնապես չտեսնելով ես ոչինչ,
Նորից հայացքս իմ տիրուհուն ուղղեցի,
Որ ժպտում էր ինձ աչքերով վառ ու ջինջ:

25 «Մի զարմանար, որ ես ժպտում եմ քո այդ
Տղայական մտքի վրա,— ասաց նա.—
Չհենվելով ճշմարտությանը անգայթ,

28 Դու տարվել ես ցնորական մտքերով.
Քո տեսածներն էակներ են իրական,
Եվ այստեղ են ուխտի՝ խախտման պատճառով:

31 Խոսիր, լսիր և հավատ դու նրանց:
Ճշմարտության լույսը, որով ապրում են,
Թույլ չի տա, որ նրանք լինեն պարտազանց»:

34 Ես դիմեցի այնժամ մեկին, որ կարծես
Մեծ ցանկություն ուներ ինձ հետ խոսելու,
Եվ ասացի անձկակարոտ անձի պես.

37 «Ազնիվ հոգի, որ խորապես զգում ես
Հավերժ կյանքի քաղցրությունները բոլոր,
Որ գիտես լոկ ճաշակողներն անձնապես,

40 Ես չափազանց գոհ կլինեմ, եթե դու
Անուն հայտնես և ձեր մասին ինձ խոսես»:
Եվ նա ասաց պատրաստակամ ու ժպտուն.

43 «Արդար հայցին դուռ չի փակի սերը մեր,
Ինչպես սերը բազումողորմ Արարչի,
Որ պատրաստ է միշտ լսելու խնդրանքներ:

46 Ես աշխարհում կուսական քույր եմ եղած,
Եվ եթե դու լավ նայես ինձ և հիշես,
Ապա, իմ այս գեղեցկությանն տակ աճած,

49 Կճանաչես Պիկկարդացին անպայմանն.
Երանելյաց այս դասի հետ միասին
Երջանիկ եմ այստեղ՝ գնդում լուսնական:

52 Մեր սրտերը, որոնք այրվում են միայն
Այն սիրով, որ Սուրբ Հոգին է ներշնչում,
Վայելում են ցնծություններ լի ու լայն.

55 Մեր այս կարգը, որ այնքան ցած է թվում,
Մեզ տրված է այսքան այն պատճառով,
Որ մեր ուխտը չենք կատարել աշխարհում»:

58 Եվ ես նրան. «Ձեր դեմքերում վեհագին
Աստվածային ինչ-որ մի բան է շողում,
Որ փոխում է ձեր կերպարանքը նախկին,

61 Դրա համար չհիշեցի քեզ մեկեն.
Բայց այն, ինչ որ դու ինձ ասում ես հիմա,
Ինձ օգնում է ճանաչելու քեզ արդեն:

64 Դուք, որ այստեղ շատ երջանիկ եք կարծես,
Չէի՞ք ցանկա լինել տեղում բարձրագույն,
Աստծու գահին մոտ զգալու համար ձեզ»:

67 Նա նախ ժպտաց ընկերների հետ մեկտեղ,
Ապա ասաց խինդով այնքան համակված,
Որ այրվում էր կարծես սիրուց հրդեղեղ.

70 «Եղբայր, մեզ լոկ սերն է տպլիս գոհացում,
Սերը, որ մեզ մղում է լոկ ցանկալ այն,
Ինչ որ ունենք, և այլ տենչ չի հարուցում:

73 Թե ցանկալիներ բարձրը տեղում մենք լինել,
Դրանով մեր կամքը շեղված կլիներ
Կամքից նրա, որ այստեղ է մեզ պահել:

76 Դա չի կարող տեղ ունենալ երկնքում,
Եթե հարկ է սիրով ապրել միշտ այստեղ,
Եթե լավ ես սիրո բնույթն հասկանում:

79 Պայմանը մեր երանելի վիճակի
Կամակցելն է աստվածային կամքի հետ,
Նույնացնելով կամքերը մեր ամենքի:

82 Մեր տեղադրումն արքայության մարզերում
Հաճո է մեզ, ինչպես և այն Արքային,
Որի կամքին մեր կամքը չենք հակադրում:

85 Նա է լոկ մեր խաղաղությունն հոգևոր,
Նա է ծովն այն, որին ձգտում են հավետ
Իր ստեղծած արարածները բոլոր»:

88 Ինձ պարզ դարձավ, որ ամեն տեղ երկնքում
Դրախտ է, թեև շնորհները Բարձրյալի
Ամենուրեք նույն չափերով չեն բաշխվում:

91 Բայց ինչպես նա, ով հագեցած մի ճաշով,
Ցանկանում է մի այլ բան էլ ճաշակել,
Իր կերածից շնորհակալ լինելով,

94 Այսպես արի և հասկացրի այնժամ ես,
Իմանալու համար թե ինչ ուխտ էր այն,
Որ չէր հասցրել նա կատարել լիապես:

97 Եվ նա ասաց. «Վերին երկնում է հանգչում
Վեհ կյանքի և արժանիքի տեր մի կին:
Նա, ով նրա նշած տարազն է հագնում,

100 Մինչև ի մահ կապրի խաղաղ, անխոով
Փեսայի մոտ, որի համար ամեն ուխտ
Ընդունելի է, երբ արվում է սիրով:

103 Փափագելով այդ կնոջը հետևել,
Վաղ հասակում ես քաշվեցի աշխարհից
Եվ ուխտեցի նրա վանքին նվիրվել:

106 Սակայն մարդիկ չարակամ ու անիրավ
Քաղցրը վանքից ինձ հանեցին բռնությամբ.
Ասված գիտե, թե հետո կյանքս ինչ դարձավ:

109 Իսկ այն մյուս լուսահոգին, որ իմ աջ
Կողմն է կանգնած և որ շողում է մեր այս
Երկնագնդի ամբողջ լույսով քո առաջ,

112 Իմ խոսքերն այս վերագրում է և իրեն.
Նա էլ քույր էր, որից, ինչպես և ինձնից,
Նվիրական քողը խլվեց բռնորեն:

115 Սակայն երբ նա բռնի աշխարհ դուրս բերվեց,
Ի հեճուկըս նրա կամքի և ուխտի,
Այդ սուրբ քողը սրտի խորքում միշտ պահեց:

118 Նա կայսրունի Կոստանցան է վեհածին,
Որ Սվեվիո երկրորդ հողմից մեծազոր
Ծնեց երրորդն, իշխանավորը վերջին»:

121 Այսպես խոսեց, ապա **«Ողջույն քեզ, Մարիամ»**
Սկսեց երգել ու երգելով չքացավ,
Ինչպես ջրում ինչ-որ մարմին ծանրանդամ:

124 Իմ հայացքով հետևեցի ես նրան,
Ապա, նրա հետքը իսպառ կորցնելով,
Դարձա դեպի իմ մեծ իղձի առարկան,

127 Այսինքը դեպ Բեատրիչեն իմ անեղծ,
Բայց նա այնպես իմ աչքի մեջ ցոլացավ,
Որ սկզբում տեսողությունս այլայլվեց.

130 Այդ պատճառով իմ հարցումը ուշացավ:

ԵՐԳ ՉՈՐՐՈՐԴ

Զույգ ճաշերի միջև նույնքան գրգռալից
Մարդ ինքնակամ պիտի սովի մատնվեր,
Դեռ չկերած մեկն ու մեկը նրանցից.

4 Զույգ գայլերի միջև վայրագ, կերազուրկ,
Այսպես գառը կմատնվեր խուճապի,
Կամ թե շունը՝ այծյամների միջև զույգ։

7 Այսպես մղված զույգ հարցերից տանջալի,
Լռում էի, և լռությունս հարկադիր
Ես չեմ գտնում բասրելի կամ գովելի։

10 Լռում էի, բայց իմ հարցերն ավելի
Որոշ էին արտահայտված՝ իմ դեմքին,
Քան եթե ես դրանք խոսքով հայտնեի։

13 Բեատրիչեն, Դանիելի ճիշտ նման,
Որ ամոքեց Բաբելոնի արքային,
Երբ զայրույթը կուրացրել էր նրան,

16 Բարբառեց ինձ. «Լավ տեսնում եմ, թե ինչպես
Երկու հարցեր մեզ հուզում են այնքան շատ,
Որ մտովին կաշկանդված ես զգում քեզ։

19 Դու դատում ես. «Եթե կամքս հաստատ է.
Ապա ինչպե՞ս բռնությունը ուրիշի
Կարող է իմ արժանիքը կրճատել»։

22 Իսկ մյուս հարցը, որ պահանջում է լուծում,
Դա մեր հոգու վերադարձն է աստղերին,
Ինչպես որ դա Պլատոնն էր ուսուցում։

25 Այս հարցերն են, որոնք չափով հավասար
Հուզում են քեզ, բայց ես պիտի նախ խոսեմ
Այն հարցի շուրջ, որ ավելի է դժվար։

28 Աստվածության ամենամոտ Սերովբեն,
Մովսեսն, Սամվելն, Հովհաննեսները երկու,
Մինչև անգամ Մարիամն իրենց գահն ունեն

31 Նույն երկնային լուսապայծառ ոլորտում,
Ինչ որ Լուսնի հոգիները քո տեսած,
Եվ բոլորն էլ հավերժ կյանքով են ապրում։

34 Բոլորն էլ նույն ոլորտում են բոլորշի,
Բայց ապրում են անհամաչափ ցնծությամբ,
Չի նույն չափով չեն զգում շունչն Հավերժի:

37 Սրանք այստեղ երևացին միմիայն
Նրա համար, որ զգալի դառնա քեզ
Նրանց նվազ աստիճանը խնդության:

40 Այսպես պետք է ձեր մտքի հետ բարբառել,
Չի նա միայն զգայության միջոցով
Կընկալի այն, ինչ չի կարող ըմբռնել:

43 Դրա համար Սուրբ Գիրքը ձեր ըմբռնման
Հարմարվում է, վերագրելով Աստուծուն
Ոտներ, ձեռներ, բայց հասկանում է այլ բան.

46 Եկեղեցին էլ տեսքի տակ մարդկային
Գաբրիելին, Միքայելին է ցուցում,
Եվ այն մյուսին, որ բժշկեց Տոբիային:

49 Ինչ որ Տիմեյն հոգվոց մասին է պնդում,
Այն չէ, ինչ որ երևում է ձեզ այստեղ,
Չի նա իրոք ասում է և հավատում,

52 Որ մեր հոգին վերադառնում է կրկին
Դեպ իր աստղը, ուրկից ցած էր իջել նա
Կենդանություն տալու համար մեր մարմնին:

55 Բայց գուցե մենք նրա խոսքին տալիս ենք
Տարբեր իմաստ, քան ուզում է նա ասել,
Ուստի պետք չէ դրա վրա ծիծաղենք:

58 Թե ուզում է նա ասել, որ ամենայն
Ազդեցություն այս աստղերից է գալիս,
Ապա ճիշտ է որոշ չափով խոսքը այն:

61 Բայց այս միտքը մոլորության հանգեցրեց
Ողջ աշխարհին, որը հասավ մինչ այնտեղ,
Որ նրանց Զևս, Մերկուր ու Մարս անվանեց:

64 Իսկ մյուս հարցը, որ քեզ հուզում է նույնպես,
Նվազ կնճռոտ և նվազ է փորձանքոտ
Եվ չի կարող ճիշտ հավատից շեղել քեզ:

67 Եթե երբեմն արդարությունը երկնի
Մարդկանց աչքին անարդար է երևում,
Պետք չէ որ դա ձեր հավատը թուլացնի:

70 Բայց քանի որ ճշմարտության մեջ այս խոր
Մարդկային միտքն ի զորու է թափանցել,
Քո փափագին ես գոհացում կտամ նոր:

73 Եթե թեկուզ բռնադատյալն իր կամքով
Բռնադատչի բռնությանը չի օգնել,
Հոգիներն այս չեն չքմեղվի դրանով:

76 Քանզի կամքը չի շիջանի բռնությամբ,
Այլ բոցի պես կպայքարի անընկում,
Եթե փորձեն նրան ընկճել ուժգնությամբ:

79 Իսկ եթե նա զիջում անի շատ թե քիչ,
Կօգնի ուժին. այսպես արին և սրանք,
Զդառնալով նորից վանքի բնակիչ:

82 Եթե նրանց կամքը լիներ անսասան,
Ինչպես կամքն այն, որով Լավրենտն ու Մուկիոն
Հերոսաբար հրակիզման դիմացան,

85 Նրանց պիտի վերադարձներ դեպի վանք,
Ուրկից նրանք հանված էին բռնությամբ.
Բայց հազվագյուտ է այդպիսի տոկուն կամք:

88 Այս խոսքերիս եթե դու լավ դրիր ուշ,
Կսպառվի և քո այդ հարցը, որ հետո
Քեզ կարող էր մտատանջել նորից հույժ:

91 Սակայն հիմա ծագեց ուրիշ հարց մի բարդ,
Որի միջից դուրս չես կարող գալ անձամբ.
Դու քո միտքը կհոգնեցնես տարապարտ:

94 Ես ասացի որպես ստույգ բան ու ճիշտ,
Որ չի կարող ստել հոգին երանյալ,
Երբ Առաջին ճշմարտության մոտ է միշտ:

97 Եվ ապա դու Պիկկարդայից իմացար,
— Եվ նա կարծես հակասում է ինձ այստեղ—
Որ Կոստանցան քողի սերը պահեց վառ:

100 Եղբայր, գիտես, շատ հաճախ է պատահել,
Որ խույս տալու համար ինչ-որ վտանգից,
Մարդ անում է այն, ինչ անել չէր վայել:

103 Այսպես Ալկմեն ակնածելու համար հոր,
Սպանեց իր հարազատ մոր, և անսաստ
Չլինելու համար դարձավ հանցավոր:

106 Այստեղ, ինչպես ինքդդ կարող ես դատել,
Բռնությունը միացած է կամքի հետ
Եվ հանցանքը անկարելի է ներել:

109 Ըստ էության կամքը դեմ է բռնության,
Բայց զիջում է, քանզի եթե դիմադրի,
Կմատնվի ավելի մեծ փորձության:

112 Արդ Պիկկարդան երբոր այնպես է խոսում,
Բացարձակ կամքն է հասկանում, մինչդեռ ես
Պայմանականն, ուստի մենք չենք հակասում»:

115 Այսպես եղավ հոսանքը սուրբ առվակի,
Որ բխում էր ճշմարտության Ակունքից.
Եվ հագեցավ իմ ծարավը կրկնակի:

118 «Ո՛վ սիրեցյալ, աստվածային դու տիկին,—
Ասացի ես,— ձեր խոսքերը հորդաբուխ
Ողողում ու ջերմացնում են իմ հոգին:

121 Ես չեմ կարող ձեզ հատուցել արժանին
Ինձ մատուցած ծառայության փոխարեն.
Իմ տեղ Տերը թող հատուցի ձեզ բարին:

124 Տեսնում եմ, որ մեր միտքը չի հագենա,
Եթե լույսին Ճշմարտության չհասնի,
Որից բացի ուրիշ ստույգ բան չկա։

127 Իսկ երբ հասնի՝ կխաղաղվի միտքը մեր
Նրա ծոցում, ինչպես գազանն իր որջում,
Թե ոչ ամեն ձգտում իզուր կլիներ։

130 Ճշմարտության այդ ձգտումից է ծլում,
Ինչպես բողբոջ, տարակույսը քեղնավոր,
Որ մեզ քիչ-քիչ դեպի բարձունքն է ձգում։

133 Այս բոլորն ինձ թույլ են տալիս, ո՛վ տիկին,
Ձեզ հարգանքով հարցնելու մի այլ բան,
Որ ինձ համար դեռ մութ է ու անմեկին։

136 Ես ուզում եմ գիտնալ, թե ուխտն անկատար
Կարելի՞ է փոխարինել այլ բանով,
Որ ձեր կշռի համար թեթև դուրս չգար»։

139 Բեատրիչեն դեպ ինձ նայեց այնպիսի
Աստվածային ու սիրավառ աչքերով,
Որ շլացած իմ աչքերը հակեցի,

142 Տեսողությունս համարյա թե կորցնելով։

ԵՐԳ ՀԻՆԳԵՐՈՐԴ

«Երբ շողում եմ գեղուն սիրո հրայրքով,
Ավելի քան պատկերացվում է երկրում,
Եվ քեզ այդպես շլացնում եմ իմ տեսքով,

4 Մի զարմանար, զի դա առաջ է գալիս
Իմ բերկրանքից, որը ինչքան աճում է,
Այնքան դեմքիս պայծառություն է տալիս։

7 Տեսնում եմ, թե ինչպես արդեն քո մտքում
Ծոլանում է ճշմարտության Լույսն հավերժ,
Որի տեսքն իսկ մեր մեջ սեր է բորբոքում:

10 Եթե մարդկանց հրապուրում է այլ բան,
Դա լոկ Նրա նմանությունն է պատիր,
Որ թվում է մարդուն բարիք իսկական:

13 Դու ուզում ես գիտնալ, թե ուխտը խախտված
Կարելի՞ է փոխարինել այլ բանով,
Որով հոգին լինի հոգսից ազատված»:

16 Բեատրիչեն այս երգն այսպես սկսեց,
Այնուհետև առանց դադար առնելու
Իր արբազան միտքը այսպես ինձ պարզեց.

19 «Մեծ պարգևը, որ Արարիչն Էակին
Ստեղծելով՝ բաշխեց նրան բարությամբ,
Եվ որ նրա համար գանձ է թանկագին,

22 Դա ինքնիշխան ազատությունն է կամքի,
Որով օժտված և օժտվում են ի ծնե
Իմացական էակները հատկակի:

25 Այստեղից էլ քեզ կլինի պարզված
Մեծ արժեքը ուխտի, եթե, հնարկե,
Մարդու ուխտին հավանություն տա Աստված:

28 Զի երբ Աստված և մարդ դաշինք են կնքում,
Զոհվում է այս թանկագին գանձն իմ ասած,
Եվ այդ բանը հոժար կամքով է արվում:

31 Ուրեմն ուխտին փոխարինող էլ ի՞նչ կա.
Ուրիշ բանով փոխարինել կամ փոխել,
Դա ուզել է, որ վատից լավ բան դուրս գա:

34 Արդ հիմնական հարցը արդեն պարզ է քեզ.
Բայց զի բանը եկեղեցին է վճռում
Որ ասածիս հակասում է աստ կարծես,

37 Հարկ է, որ դու սեղանին քիչ էլ նստես,
Վասնզի այն չոր պատառը, որ կերար,
Օգնություն է դեռ պահանջում, որ մարսես:

40 Արդ միտքդ բաց իմ խոսքերին հայտնելիք,
Եվ միշտ հիշիր, քանզի մի բան իմանալ
Ու մոռանալ՝ չի տա ոչ մի գիտելիք:

43 Ուխտի համար հարկավոր է երկու բան.
Մեկը զոհի համար դաշինքն է կնքած,
Մյուսը՝ զոհի հիմքը կազմող առարկան:

46 Առաջինը ամենևին չի խախտվում,
Այլ պահվում է, և այդ մասին պարզորոշ
Բացատրություն արդեն տրվեց վերևում:

49 Հրեից մոտ զոհը հարկ էր կենսական,
Թեպետ նրանք ինչպես գիտես, երբեմնն
Փոխում էին իրենց զոհի առարկան:

52 Իսկ երկրորդը, որ առարկան է զոհի,
Կարող է և մեղքի պատճառ չլինել,
Եթե ուրիշ առարկայի հետ փոխվի:

55 Սակայն ոչ ոք թող իր կամքով սեփական
Չփոփոխի ստանձնած պարտքը առանց
Թույլտվության եկեղեցու սրբազան:

58 Փոփոխությունն անմիտ բան է համարվում,
Եթե զոհի հին առարկան նորի մեջ
Չի ընդգրկվում, ինչպես չորսը վեց թվում:

61 Բայց երբ զոհի նյութը ծանր է արժեքով
Եվ չունի իր զուգակշիռն համարժեք,
Այն չի կարող փոխարինվել այլ բանով:

64 Թող ուխտի հետ մարդիկ թեթև չվարվեն.
Հավատարիմ եղեք, բայց ոչ անխոհեմ,
Ինչպես եղավ իր ուխտի մեջ Եփթայեն:

67 Լավ կլիներ, որ նա ասեր՝ «վատ արի»,
Քան վատագույնն աներ ուխտը պահելով.
Այսպես անմիտ եղավ ավագն հույների,

70 Որի համար Իփիգենիան զոհ դարձավ,
Եվ ամեն ոք շատ ափսոսաց ու ողբաց,
Երբ այդպիսի զոհի մասին իմացավ:

73 Ո՛վ քրիստոնյայք, եղեք ուխտի մեջ զգույշ.
Ամեն հովից փետուրի պես մի թռչեք.
Մի կարծեք, թե ձեզ կլվա ամեն գուշ:

76 Դուք հին ու նոր Կտակարանը ունեք,
Եվ հովիվն է եկեղեցու ձեզ վարում.
Այսքանը ձեզ բավական է, որ փրկվեք:

79 Եթե կիրքը ձեզ թելադրի ուրիշ բան,
Դուք մարդ եղեք, ոչ թե անմիտ ոչխարներ,
Որ ձեր վրա հրեաները չխնդան:

82 Դուք մի վարվեք մատղաշ գառան պես շամբուշ,
Որ թողնելով իր մոր կաթը խոլաբար
Ցատկրտում է ու խաղ անում անզգույշ»:

85 Բեատրիչեն այսպես ճառեց ճիշտ ու ճիշտ,
Ապա դարձավ լի ըղձանքով դեպ այն կողմ,
Ուր աշխարհը ավելի է պայծառ միշտ:

88 Նրա լռելն ու փայլելը ավելի
Կարկամեցրին մի պահ իմ միտքը անհագ,
Որ նորանոր հարցեր ուներ լուծելի:

91 Եվ ինչպես նետն իր նշանին է զարկում,
Երբ դեռ լարը թրթռում է աղեղի,
Այսպես և մենք ընկանք երկրորդ երկնքում:

94 Իմ տիրուհին այնքան բերկրեց ու փայլեց,
Երբ ընդգրկվեց նոր երկնքի ոլորտում,
Որ երկնքի պայծառությունն էլ աճեց:

97 Եթե աստղն այն պայծառացավ առավել,
Ինչ եղա ես, որ բնությամբ իմ ապրեն
Ամեն կերպով փոփոխական եմ հավետ:

100 Ինչպես ձկներն հանդարտ ու ջինջ ձկնոցում
Մոտենում են շտապ ինչ-որ մի բանի,
Որ ուտելու համար հարմար են կարծում,

103 Այսպես անթիվ լուսապայծառ հոգիներ
Գալիս էին մեզ ընդառաջ, ասելով.
«Սնա նա, ով կաճեցնի սերը մեր»:

106 Որքան նրանք գալիս էին դեպի մեզ,
Այնքան խինդով զեղուն էին երևում
Իրենց խորքից ճառագայթող լույսի մեջ:

109 Արդ, ընթերցող, ինքդ դատիր ու խորհիր,
Թե այս մասին այնքան միայն նշեի,
Ինչքան պիտի դու դա թեզի գտնեիր.

112 Եվ զգայիր, թե ես ինչքան անձկագին
Ուզում էի նրանց վիճակն իմանալ,
Երբ որ նրանք երևացին իմ աչքին:

115 «Ո՛վ բարեծին, որին շնորհն երկնավոր
Թույլ է տվել տեսնել գահերն հաղթական,
Դեռ չթողած կյանքի պայքարն երկրավոր,

118 Մենք վառված ենք սիրո լույսով երկնասփյուռ.
Թե ուզում ես տեղեկանալ մեր մասին,
Մեզ հարց տուր և քո փափագը գոհացուր»:

121 Այսպես ասաց մեկն ինձ խմբից այն բարի.
Իսկ տիրուհիս ասաց. «Խոսիր համարձակ,
Եվ հավատա նրանց իբրև արդարի»:

124 «Ես տեսնում եմ, թե ինչպես քո սեփական
Լույսի մեջ ես դու պարփակվել և ինչպես
Խինդ ես գեղում քո աչքերից արփական:

127 Բայց չգիտեմ, թե, վեհ հոգի, ո՞վ ես դու,
Եվ ինչո՞ւ ես այս գնդի մեջ, որ երկրից
Քողարկված է մի այլ գնդով լուսատու»,—

130 Ասացի ես ուղղված լույսին այն խոսուն,
Այս խոսքերիս վրա իսկույն նա դարձավ
Առաջվանից ավելի վառ ու շողուն:

133 Ինչպես արևն իր արձակած լույսով վառ
Քողարկվում է, երբ ջերմությունը նրա
Կլանել է գոլորշիները ստվար,

136 Այսպես ծածկեց նա իր դեմքը սրբազան
Խնդությունից աճած լույսով անեղծյալ,
Եվ սքողված այսպես՝ տվեց պատասխան

139 Այն կերպով, որ երգում է երգն հետևյալ:

ԵՐԳ ՎԵՑԵՐՈՐԴ

«Երբ Կոստանդինն ուղղեց արծիվն հռոմյան
Ընդդեմ երկնի շարժման, որին հետևեց
Այդն հիներորդ, ում կին դարձավ Լավինիան,

4 Աստծու թռչունն ավելի քան երկու դար
Եվրոպայի ծայրամասում կանգ առավ,
Այն լեռանց մոտ, ուրկից ելավ անվթար:

7 Եվ այնտեղից, հովանու տակ թևերի,
Վարեց աշխարհն ու փոխանցվեց ձեռքից ձեռք,
Մինչև որ նա ընկավ մեջն իմ ձեռքերի:

10 Ես կայսր էի և Հուստինիան եմ կոչվում.
Ես Մարդ Հոգու ներշնչումով զտեցի
Ինչ որ զուր էր և ավելորդ օրենքում:

13 Սակայն նախքան այդ գործին ձեռք զարկեի,
Ես հավատում էի, որ կա ի Քրիստոս
Մեկ բնություն, և դրանով գոհ էի:

16 Բայց գերագույն հովվապետը Ագապիտ
Իր հոգեշահ քարոզներով ինձ բերեց
Այն հավատին, որ միակն է ճշմարիտ:

19 Ես անսացի նրան, և այդ հավատն արդ
Հասկանում եմ, ինչպես դու ես հասկանում
Միշտն ու սխալն ամեն ճառում հակամարտ:

22 Հազիվ թե ես եկեղեցուն հարեցի,
Բարձրյալն Աստված ինձ ներշնչեց ձեռնարկել
Այդ մեծ գործին, որին և ես լծվեցի:

25 Ես զենքերս Բելիսարիս հանձնեցի.
Եվ երկինքը նրան այնպես աջակցեց,
Որ նշան էր, թե պետք է ես հանգչեի:

28 Իմ պատասխանն այս է հարցիդ առաջին.
Բայց բնույթն իր ինձ ստիպում է այստեղ
Խոսքիս կցել մի հավելված առանձին,

31 Որ իմանաս, թե ինչքան են անիրավ
Նրանք, ովքեր արծվի ընդդեմ են գործում,
Ցուրացնելով կամ մերժելով այն դյուրավ:

34 Ինչ սխրանքներ նրան դարձրին հարգարժան.
Առ այդ նախ և առաջ Պալլանտը զոհվեց,
Որպեսզի նա դառնա տեր ու գերիշխան:

37 Գիտես, որ նա երեք դարից ավելի
Ալբում մնաց, մինչև որ հուսկ իր համար
Կռվի ելան երեքն ընդդեմ երեքի:

40 Գիտես, որ նա հերթով տարավ հաղթանակ
Սահմանակից ցեղերի դեմ այլազան,
Հռոմի յոթ արքաների ժամանակ:

43 Գիտես, որ նա մարտեր մղեց հաղթական
Ընդդեմ Բրենենի ու Պյուտոսի թշնամի
Եվ ընդդեմ այլ իշխանների տիրական:

46 Այդ մարտերում Կինտոն ու Տորկուատոն անվանի,
Դեկյանները ու Ֆաբյանները ստացան
Այն հռչակը, որ գովքի է արժանի:

49 Նա ջախջախեց հոխորտությունն արաբաց,
Որոնք անցան Հաննիբալի ետևից
Այն Ալպերով ուրկից Պոն է իջնում ցած:

52 Նրա ներքո՝ դեռ հասակում աննհանգիստ՝
Սկիպիոնն ու Պոմպեոսը հաղթեցին,
Որից տուժեց ձեր քաղաքը բլրանիստ:

55 Մոտենալով պահն, երբ երկինքը ուզեց
Պայծառացնել աշխարհն համայն իր նման,
Հռոմի կամքով Կեսարն իր ձեռքն այն վերցրեց:

58 Ինչ որ արեց Վարոսից մինչ Հռենոս՝
Իզեր, Լուար և Սեն գետերը տեսան,
Ինչպես տեսավ Ռոդանոսը հորդահոս:

61 Ինչ որ արեց Ռավեննայից դուրս գալով
Եվ թռչելով Ռուբիկոնից, մի գործ էր,
Որ ո՛չ խոսքով կարտահայտվի, ո՛չ գրչով:

64 Ապա փութով դեպ Իսպանիա սլացավ,
Հուսկ Դուրացցո, և Ֆարսալիան թրատեց
Այնպես ուժգին, որ տաք Նեղոսն զգաց ցավ:

67 Տեսավ Անտանդրն ու Սիմոյինն իր օրրան,
Ուր հանգչում է հավետ Հեկտորը հերոս,
Հուսկ խոյացավ Պտղոմեի շեշտ վրան:

70 Նա շանթի պես սուրաց ընդդեմ Յուբայի,
Հետո դարձավ թռավ դեպի արևմուտք,
Ուր ձայնն առավ պոմպեական շեփորի:

73 Ինչ որ արեց վեհապետի հետ հաջորդ,
Բրուտոսն ու Կասիոն կատեն Դժոխքում
Եվ Մոդենան ու Պերուջան վշտահոգ:

76 Կլեոպատրան, որ ողբում է դեռ տխուր,
Խուճապահար փախուստ տվեց Բրանից
Եվ մի ժիր մահ ստացավ դառնալուր:

79 Նա թռչելով հասավ Կարմիր ծովեզրին,
Եվ աշխարհը խաղաղեցրեց այնպես լավ,
Որ ի վերջո փակվեց տաճարն Յանոսի:

82 Բայց այն, ինչ որ արծիվն արեց և ինչ որ
Անելու էր բոլոր իրեն ենթակա
Երկրների համար մոտ ու հեռավոր,

85 Անհաշտ ու անփառունակ կերևա,
Եթե դիտենք պայծառ մտքով ու սրտով
Այն ինչ արեց երրորդ կայսեր ձեռքում նա.

88 Քանզի այնժամ Արդարությունը կենդան
Նրա վրա վեհ զարմանք դրեց մեղմելու
Խստությունը երկնի արդար բարկության:

91 Արդ ի զարմանս քեզ հայտնում եմ սա միայն.
Նա, որ լուծել էր վիճաբանը հին մեղքի,
Տիտոսի հետ փութաց պատժել վրեժն այն:

94 Երբ ատամը լանգոբարդյան կծոտեց
Եկեղեցուն, Կառլոս Մեծը՝ արծվային
Թևերի տակ օգնեց նրան ու հաղթեց:

97 Արդ դու դատիր նրանց մասին, որոնց ես
Մեղադրեցի, և նրանց այն թերությանց,
Որ պատճառն են չարիքների հասած ձեզ:

100 Մեկն հանրային դրոշին է հակադրում
Ոսկե շուշանն, իսկ մյուսը՝ զենքում այն.
Հեշտ չէ ասել, թե ով է շատ թյուր գործում:

103 Թող գիրքերինք այլ դրոշի տակ անեն
Խաղերն իրենց. վատ հետևորդ են նրանք,
Որոնց գործերն աղդարարության միշտ դեմ են:

106 Թող նոր Կապոսն այն տապալել չփորձի
Իր գուեֆիներով, այլ թող տակա ճանկերից,
Որ ճղել են մարդու իսկ ճզոր աղուծի:

109 Հաճախ որդիք տուժել են հոր հանցանքով.
Եվ թող ոչ ոք չմտածի, թե Աստված
Զինանշանն իր կփոխի շուշանով:

112 Այս երկինքը ապաստանն է քազմաթիվ
Հոգիների, որ բարեգործ են եղել,
Ձեռք բերելու համար համբավ ու պատիվ:

115 Երբ իղձերը, մոլորվելով, ձգտում են
Միայն դրանց, ապա սլացքը սիրո
Կբարձրանա վերև նվազ ջերմորեն:

118 Սակայն մասամբ մեր խնդությունը անհաս
Նրա մեջ է, որ մեր վարձքը տրվում է
Ըստ արժանյաց, ոչ ավելի, ոչ պակաս:

121 Եվ երկնային Արդարությունը կենդան
Մաքրում է մեր զգացումները այնպես,
Որ չեն կարող նրանք հակվել չարության:

124 Տարբեր ձայներ երգ են կազմում քաղցրալուր.
Այսպես տարբեր աստիճանները մեր մեջ
Կազմում են մի դաշնակություն ընդհանուր:

127 Այս երկնում է շողում հոգին բարեբախտ
Ռոմեոյի, որի գործը գեղեցիկ
Վարձատրվեց հատուցումով ապերախտ:

130 Բայց պրովանսցիք, որ նրա դեմ գործեցին,
Չխնդացին, զի վերջը վատ է նրանց,
Որ նախանձից քամբասում են ուրիշին:

133 Կոմս Ռայմոնդը ուներ չքնաղ չորս աղջիկ,
Որոնք դարձան թագուհիներ, շնորհիվ
Ռոմեոյի—մի անձ համեստ ու շրջիկ:

136 Կոմսը դրդված խոսքերից չար, բանսարկու,
Իր հաշիվը պահանջեց այն արդարից,
Որ տասի տեղ վերադարձրեց տասներկու:

139 Եվ նա մեկնեց ծեր ու թշվառ վիճակում.
Եթե աշխարհն իմանար սիրտը նրա,
Որ իր հացը մուրալով էր վաստակում,

142 Կդարձեր նրան գովքի առարկա»:

ԵՐԳ ՅՈԹԵՐՈՐԴ

«Ովսաննայ, սուրբ Աստուած համայն զորութեանց,
Որ գերափայլ լոյսդ ափոեա ի վերայ
Երանելեաց այս երկնային տէրութեանց»:

4 Այսպես ձայնով ու կշռույթով ներդաշնակ
Օրհներգում էր այն էակը հոգեղեն,
Որի վրա շողում էր լույս մի կրկնակ:

7 Իսկ մյուսները նրա երգով գոհացան,
Եվ համարյա կայծերի պես խուսափուկ
Բոլորն ինձնից իսկույն ի բաց հեռացան:

10 Ես վարանքով ասում էի յուրովի.
«Ասա նրան, քո տիրուհուն, որ շիթ-շիթ
Հագեցնում է միտքդ՝ բանին ծարավի»:

13 Բայց հարգանքն այն, որ ողջ անձս է համակում,
Ի լուր միայն **Բե** կամ **Իշե** մասնիկի,
Իմ գլուխը խոնարհել էր հարկադրում:

16 Բեատրիչեն թույլ չտվեց որ այդպես
Երկար մնամ և, մի ժպտով շողարձակ,
Որից հրճվանք կզգար մարդն իսկ հրակեզ,

19 Ասաց. «Ինչպես ես կարող եմ գուշակել,
Դու խորհում ես, թե այդ ինչպե՞ս կարող է
Արդար վրեժն արդարորեն պատժվել:

22 Բայց այդ հարցը ես քեզ հիմա կպարզեմ.
Արդ լսիր ինձ, ըստ որում իմ խոսքերով
Պիտի մի մեծ ճշմարտություն քեզ հայտնեմ:

25 Ոչ—ծնյալը, չուզելով որ դրվի սանձ
Իր քմայքի, կամքի վրա հօգուտ յուր,
Դատապարտեց իրեն և իր սերնդյանց:

28 Դրա համար մարդկային ցեղը անկյալ
Երկար դարեր մոլորության մեջ մնաց,
Մինչև հաճեց Բանն Աստուծո աշխարհ գալ.

31 Եվ մարմնացած Հավերժ Սիրո զորությամբ
Իր անձի մեջ ձուլեց մարդու բնությունն,
Որ Արարչից հեռացել էր մեղանչմամբ:

34 Արդ լսիր, թե ինչ եմ ուզում ասել քեզ.
Այդ բնությունն, երբ Արարչին միացավ,
Դարձավ անեղծ, ինչպես որ էր նախապես.

37 Բայց իր մեղքով նա արտաքսվեց Դրախտից,
Որովհետև շեղվել էր ու հեռացել
Ճշմարտության ճանապարհից ու կյանքից:

40 Արդ պատիժն այն, որ Խաչելյալը կրեց,
Եթե նայենք բնությանը մարդկային,
Ավելի քան արդարացի նկատվեց:

43 Այդ պատիժը իրավացի չէր սակայն,
Եթե նայենք աստվածային այն անձին,
Որի հետ էր բնությունը ձուլված այն:

46 Այդ նույն պատճից տարբեր արդյունք ստացվեց.
Մահն այդ պետք էր և՛ հրեից, և՛ Աստծուն.
Դա երկիրը ցնցեց, երկինքը բացեց:

49 Արդ դժվար չէ քեզ հասկանալ, թե ինչպես
Հետագայում արդար վրեժը լուծվեց
Երկնի արդար դատաստանով վճռապես:

52 Բայց տեսնում եմ, որ քո միտքը անցնելով
Խոհից ի խոհ՝ ընկել է մի հանգույցում,
Որից պրծնել կցանկանար հաճույքով:

55 Դու խորհում ես. «Դա պարզ է ու բացահայտ,
Բայց ինձ պարզ չէ՝ ինչո՞ւ Աստված կամեցավ
Մեր փրկության համար ընտրել միջոցն այդ»:

58 Հարցն այս, եղբայր, մթասքող է մնում հար
Նրանց համար, որոնց միտքը չի աճել
Աստվածային սիրո հուրի մեջ անմար:

61 Բայց քանի որ շատերն են այս հարցի շուրջ
Միտք հոգնեցրել, առանց որոշ արդյունքի,
Կասեմ՝ ինչու այդ միջոցը դատվեց լուրջ:

64 Բարձրյալն Աստված, որ այրվում է սիրով հուր,
Բարությունն իր ճառագայթում է այնպես,
Որ այն սփռում, տարածում է ամենուր:

67 Ինչ որ նա է անմիջորեն ստեղծել,
Անվախճան է, ուստի կնիքն իր դրած
Չի կարելի բնաջնջել կամ եղծել:

70 Ինչ որ նա է անմիջորեն գոյացրել,
Էի ազատ է, զի չի կարող գոյացյալն
Այլ ուժերի ազդեցության ենթարկվել:

73 Իր նմանին նա ավելի է սիրում,
Զի նրանից ճառագայթող սերը սուրբ
Նմանի մեջ ավելի վառ է լինում:

76 Մարդն օժտված է շնորհներով այս բոլոր.
Եվ սրանցից մեկը եթե պակասի,
Նա կընկնի իր վեհությունից պատվավոր։

79 Մեղքն է միայն նրան դարձնում անազատ
Եվ աննման աստվածային բարության,
Ուստի և նա լուսավորվում է կիսատ.

82 Եվ չի դառնա իր վեհությանը նախկին
Եթե արդար մի պատիժով չլցնի
Այն պարապը, որ հետևանքն է մեղքի։

85 Երբ մարդկային բնությունը մեղք գործեց
Հանձին իր հոր, արժանիքներն այս բոլոր,
Ինչպես Դրախտն իրեն տրված՝ կորցրեց։

88 Եվ նա ոչ մի այլ հնարքով կամ կերպով
Չէր կարող իր կորցրածը ձեռք բերել,
Եթե չանցներ ուղիներից այս մեկով—

91 Կամ ինքն Աստված իր անսահման բարությամբ
Պիտի ներեր նրան և կամ մարդն ինքնին
Պիտի քավեր հիմարությունն իր անձամբ։

94 Արդ դու հավերժ խորհուրդի խորքը սուզիր
Հայացքը քո և, որքան որ կարող ես,
Ուշի ուշով իմ խոսքերին ունկնդիր։

97 Մարդ չէր կարող իր ուժերով սեփական
Իրեն փրկել, որովհետև չէր կարող
Հնազանդությամբ խոնարհանալ նա այնքան,

100 Որքան ուզեց անսաստությամբ բարձրանալ.
Պատճառն այս է, որ անկարող եղավ նա
Իր փրկությունն ինքը անձամբ ստանալ։

103 Ուրեմն հարկ էր, որ Աստված ինքը մարդուն
Վերադարձներ լիակատար իր կյանքին,
Մեկ կամ երկու ուղիներով ներգործուն։

106 Բայց զի գործը գործչին այնքան ավելի
Քաղցր ու թանկ է, որքան ի հայտ է բերում
Նրա սրտի բարությունը գովելի,

109 Աստվածային վեհ բարությունը, որով
Դրոշմված է տիեզերքը ամենայն,
Ձեզ բարձրացնել ուզեց ամեն կերպերով:

112 Նախալույսից մինչ վերջալույսը վերջին
Այնքան վեհ գործ չի եղել և չի լինի,
Ինչպես մարդու այդ բարձրացումը կրկին:

115 Չի ավելի վեհանձն եղավ Տերը մեր՝
Տալով իրեն վասրն մարդու փրկության,
Քան թե միայն մեղքը ներել ողորմեր:

118 Այլ միջոցներն անզոր էին փրկելու
Անկյալ մարդուն, եթե Որդին Աստուծո
Չիջներ երկիր միս ու մարմին առնելու:

121 Արդ, որպեսզի գոհացնեմ լրիվ քեզ,
Ետ եմ դառնում պարզելու հարց մի հիշված,
Որպեսզի այն լավ հասկանաս, ինչպես ես:

124 «Հուրն ու ջուրը, հողն ու օդը և նրանց
Խառնուրդները—դու կարող ես մտածել—
Եղծանվում են, հանդիսանում են վաղանց.

127 Բայց դրանք էլ ստեղծված են Աստուծուց,
Ուստի եթե ճիշտ է ասվածը վերի,
Պետք է նրանք զերծ լինեին եղծվելուց»:

130 Հրեշտակները և երկինքները անամպ
Անմիջորեն ստեղծված են Աստուծուց,
Ինչպես որ կան, իրենց ամբողջ էությամբ.

133 Իսկ տարրերն այն, որ հիշեցիր հիմա դու,
Եվ իրերը, որ նրանցից են կազմվում,
Ստեղծված են այլ ուժերից գոյատու:

136 Անմիջորեն Աստուծուց է ստեղծված
Նախանյութը նրանց և ուժը հաստիչ;
Ուժ, որ կա այս աստղերի մեջ շրջանած:

139 Հոգիները կենդանյաց ու բույսերի
Ձեռք են բերում իրենց ուժերը ներքին
Ազդեցությամբ երկնագնդոց լույսերի:

142 Իսկ ձեր հոգին ստեղծված է ուղղակի
Աստվածային բարությունից գերագույն,
Որին սիրում ու ձգտում է մշտակի:

145 Դու կարող ես մակաբերել այստեղից
Ձեր հարությունն, եթե խորհես, թե ինչպես
Մարդու մարմինն առաջացավ այն պահից,

148 Երբ նախածնողք ստեղծվեցին զուգապես»:

ԵՐԳ ՈՒԹԵՐՈՐԴ

Աշխարհն ամբողջ կարծում էր, թե Կիպրուսին
Ներշնչում է զգայական ու խող սեր,
Երբ շարժվում է երրորդ ծիրով երկնային.

4 Եվ հեթանոս նախնիները ոչ միայն
Պատիվ էին նրան տալիս՝ անելով
Զոհեր, ուխտեր և աղոթքներ բարձրաձայն,

7 Այլև պատվում նրա մորը՝ Դիոնին
Եվ զավակին՝ Կուպիդոնին հարազատ,
Որն, ասում են, նստեց գրկում Դիդոնի:

10 Եվ նրանով, որով երգս եմ սկսում,
Կոչում էին այն աստղը, որ արևին
Մերթ ետևից, մերթ դեմից է դարբասում:

13 Ես չզգացի իմ բարձրանալը այնտեղ.
Բայց անդ հասնելս ինձ հավաստեց տիրուհիս,
Որ երևաց էլ ավելի պերճագեղ։

16 Եվ ինչպես կայծն է երևում բոցի մեջ,
Կամ ինչպես ձայնն է ձայնի մեջ որոշվում,
Երբ մեկն անշարժ, մյուսն անում է ելևէջ,

19 Այսպես տեսա լուսաստղի մեջ այլ լույսեր,
Որ պտտվում էին արագ կամ դանդաղ,
Նայած թափին հայեցության առ ի Տեր։

22 Հողմերն երբեք չսլացան ամպն ի վար
Այնքան արագ ու գահավեժ ընթացքով,
Որ չթվան ծանրաշարժ ու մեղմավար՝

25 Բաղդատմամբ այն աստվածային լույսերին,
Որ դեպի մեզ էին գալիս, վերջ տալով
Սերովբեից հետ սկսված շուրջպարին։

28 Եվ այն խումբը, որ ընդառաջ եկավ մեզ,
«Ովսաննայ» էր երգում այնքան քաղցրաձայն,
Որ կուզեի ես այն լսել մշտապես։

31 Ապա մեկը առանձնացավ նրանցից,
Ու ինձ ասաց. «Պատրաստ ենք ձեզ ծառայել,
Որ դու ուրախ ու գոհ լինես մեզանից։

34 Նույն պտույտով, նույն կշռույթով, նույն փույթով
Մենք շրջում ենք իշխանների հետ երկնի,
Որոնց մասին դու ասել ես քո տաղով.

37 «Դուք, որ երրորդ երկնագունդն եք շարժում հար».
Մենք բոլորս այնքան զեղուն ենք սիրով,
Որ հաճույքով կանգ ենք առնում քեզ համար»։

40 Երբ հայացքով հարցական ու հարգալից
Ես աչքերս իմ տիրուհուն ուղղեցի,
Եվ ստացա հավանություն նրանից,

43 Նորից դարձա դեպի լուսեղ այն հոգին,
Եվ «Ո՞վ եք դուք» հարցրի ձայնով այնպիսի,
Որ առի էր զգացումով կաթոգին:

46 Իմ այդ հարցի վրա տեսա պարզ կերպով,
Որ նա դարձավ ավելի մեծ ու պայծառ
Իր զգացած նոր բերկրության պատճառով:

49 Այսպես փոխված՝ նա ինձ ասաց. «Ես երկրում
Քիչ ապրեցի, և եթե շատ ապրեի,
Շատ չարիքներ չէին լինի աշխարհում:

52 Ինձ ծածկում է իմ խնդությունը խորին,
Որ իմ շուրջը շողում է և ինձ պատում,
Ինչպես բոժոժը պատում է թրթուրին:

55 Շատ սիրեցիր դու ինձ և շատ իրավամբ.
Եվ եթե ես կյանքում երկար ապրեի,
Ցույց կտայի սիրույս փաստեր դեռ անձամբ:

58 Այն ձախ ափը, որ Ռոդանն է ոռոգում՝
Խառնվելուց հետո Սորգա վտակին,
Որպես իր տեր մի օր ինձ էր սպասում:

61 Սպասում էր և եղջյուրը ավսոնյան
Գայետայով, Կատոնայով, Բարիով,
Ուր Տրոնտոն ու Վերդեն կազմում են սահման:

64 Ճակտիս արդեն շողում էր թագն աննման
Այն երկրի, ուր Դանուբն է ակոսում,
Ողողելուց հետո ափերը գերման:

67 Նմանապես չնաշխարհիկ Տրինակրոն,—
Որ Եվրոսի հզոր շնչի տակ հաճախ
Մշուշվում է Ֆարից մինչև Պասսարոն,

70 Ոչ Տիֆոնի, այլ ծծումբի պատճառով,—
Կսպասեր իր օրինավոր տերերին,
Սերած ինձնից Կառլոսով և Ռուդոլֆով,

73 Թե վարչությունն հոռի, որը, ապաքեն,
Միշտ լկում է ժողովուրդին հպատակ,
Պալերմացոց գոչել չտար. «Թող սատկեն»:

76 Եվ եղբայրը, եթե այս բանն հասկանար,
Կհեռացներ կատալոնցոց ընչաքաղց,
Որպեսզի իր գլխին փորձանք չբանար.

79 Ժամանակն է, որ այս մասին հոգացվի
Հենց իր կողմից, որպեսզի իր բեռնաբարձ
Նավի վրա ուրիշ նոր բեռ չբարձվի:

82 Նա, որ ազնիվ բնից ագահ էր ծնվել,
Մի այնպիսի անձնակազմի պետք ուներ,
Որ չհոգար լոկ իր քսակը լցնել»:

85 «Ես կարծում եմ, տեր իմ, որ խոր բերկրանքն այն,
Որ տալիս են քո խոսքերը իմ սրտին,
Դու գտնում ես այնտեղ, որտեղ ամենայն

88 Բարյաց սկիզբն ու վախճանն է ապահով.
Եվ այդ թանկ է առավել ևս ինձ համար,
Զի զգում ես Աստուծո մեջ նայելով:

91 Ինձ հրճվեցրիր: Հիմա մի բան պարզիր ինձ.
Քո մի խոսքից իմ մեջ ծագեց մի այլ հարց—
Ո՞նց կարող է վատ ճյուղ բուսնել լավ բնից»:

94 Ի պատասխան նա ինձ ասաց. «Եթե ես
Կարենամ քեզ ճշմարտություն մի պարզել,
Կիմանաս այն, ինչ որ հիմա մութ է քեզ:

97 Նա, ով համայն արքայությունն է վարում,
Այս երկնային զնդոց տալիս է մի ուժ,
Որ գործում է ազդեցությունն իր երկրում:

100 Նրա միտքը, որ կատարյալ է ինքնին,
Հոգ է տանում ոչ լոկ գոյի կեցության,
Այլև նրա լավ կեցության ի մասին:

103 Արդ աստղերի ազդեցությունը հիշված
Ուղղված է դեպ մի նպատակ կանխորոշ,
Ինչպես նետը դեպի թիրախը նշված:

106 Եթե այդպես տնօրինված չլիներ,
Կառաջանար կործանարար հետևանք,
Այլ ոչ որոշ կարգ ու կանոն օգտաբեր:

109 Իսկ դա պիտի նշանակեր պարզապես,
Որ աստղերի շարժիչները և նրանց
Արարիչը թերի են ու թյուրատես:

112 Ուզո՞ւմ ես որ հարցն այս պարզեմ ավելի»:
Եվ ես. «Պետք չէ, չի կարելի մտածել
Որ բնությունն իր գործերում սխալվի»:

115 Եվ նա. «Ասա, արդյոք վատ բան չի՞ լինի,
Եթե մարդիկ չապրեն կյանքով հանրային»:
Եվ ես. «Այո, այդ բանն է ինձ լավ հայտնի»:

118 «Իսկ կարո՞ղ են մարդիկ ապրել հանրապես,
Եթե տարբեր զբաղումներ չունենան:
Ոչ, թե ճիշտ է ձեր ուսուցիչն իրատես»:

121 Այսօրինակ հետևության հանգեց նա,
Ապա հարեց. «Արդ հարկ է, որ ամեն մարդ
Տարբեր հակում, տարբեր կոչում ունենա.

124 Ահա ինչու մեկը ծնվում է Սոլոն,
Մյուսը՝ Քսերքսես կամ Մելքիսեդ և կամ այն,
Ով օդի մեջ կորցրեց որդուն անզգոն:

127 Մշտահոլով աստղերն օժտում են մարդկանց
Տարբեր տեսակ բնությամբ ու հատկությամբ
Եվ չեն նայում ցեղն ու ծագումը նրանց:

130 Սաղմից Եսավն աննման էր Հակոբին,
Իսկ Կվիրինն այնքան տարբեր էր հորից,
Որ ծագումն իր վերագրվում էր Մարսին:

133 Ծնողաց ծնողների քնությունը վկիներ
Հար և նման ծնողների քնության,
Եթե վերին տեսությունը չարգելեր:

136 Ճշմարտությունն հիմա արդեն պարզ է քեզ.
Բայց որպեսզի օգտագործեմ պանը դեռ,
Ուզում եմ մի մակածություն անել ես:

139 Երբ մարդ հարմար պայմաններում չէ ընկած
Բախտի բերմամբ, միշտ տապիս է վատ արդյունք,
Ինչպես բույսը իր բուն հողից դուրս տնկած:

142 Եթե աշխարհ ուշք ընծայեր այն հիմքին,
Որ դնում է քնությունը մարդու մեջ,
Այդ կվիճեր նրա վիճակը էապես:

145 Բայց դարձնում եք դուք քահանա նրան, որ
Ստեղծված է ուրիշ կապելու իր մեջքից,
Եվ քարոզչին պատկում եք թագավոր.

148 Այդպիսով դուք դուրս եք գալիս ճիշտ ճամփից»:

ԵՐԳ ԻՆՆԵՐՈՐԴ

Երբ Կաղլոսը, չքնաղագեղ Կլեմենցա,
Հարցրեց պարզեց և ինձ հանձնեց դարձերն այն,
Որոնց զարմն իր պիտի վիներ ենթակա,

Ասաց. «Լուռ կաց, թող տարիները անցնեն»:
Իսկ ես միայն սա ձեզ կասեմ՝ նրանք որ
Ձեզ մեղել են, արդար պատիժ կկրեն:

7 Այն լույս հոգին արդեն նայում էր ուրով
Արև-Աստծուն, որով էր նա գմայված,
Ինչպես անմուն և անապատ բարիքով:

10 Ով էակներ մոլորյալ ու ամբարիշտ,
Որ ձեր արտերն հեռացնում եք այդ Բարուց
Եվ ձեր աչքերն ուռճացնում եք ուղղում միշտ:

13 Եվ մեկն, ահա, այն լույսերից ցնծալի
Մոռեցավ ինձ և գոհացում ինձ տալու
Իրեն հայտնեց շողշողալով ավելի:

16 Բեատրիչեն, որ իր աչքերն էր հառած
Իմ երեսին, հավատարմությամբ ինձ տվեց
Զրուցելու այն հոգու հետ կանգ առած:

19 «Ով երանյակ, սուր փափագիս գոհացում,—
Ասացի ես,— ցույց տալով՝ որ դու գիտես,
Թե ինչ եմ ես այս բոցերիս մնացում»:

22 Եվ այն հոգին, որ անծանոթ էր ինձ դեռ,
Լույսի խորքից, ուր երգում էր քիչ առաջ,
Սկսեց խոսել ինչպես մի մարդ բարեսեր:

25 «Ապականված Իտալիայի այն մասում,
Որ միջն է Վենետկի և այն լեռաց,
Ուրկից Բրենտան ու Պիավեն են հոսում,

28 Կա ոչ այնքան բարձրանկարկառ մի բլուր,
Ուրկից հերքն իջավ՝ մի մարդ հուր ու բոց,
Որ նախճիրներ գործեց վաղուց ու անլուր:

31 Եվ ես ու նա ծնվեցինք նույն ավտատից.
Կունիցցան եմ, և շողշողում եմ այստեղ,
Ըստ որում ես հոյժ ազդվեցի այս աստղից:

34 Դա հիշում եմ հանդարտությամբ ու խնդությամբ.
Ինձ հնամակող այս զգացումը, գուցե,
Ոսկինները չեն հասկանա հեշտությամբ:

37 Այն հոգին, որ մոտիկ է ինձ և որ մեր
Լուսաստղի զարդն է պաղպաջուն, թողել է
Մի մեծ համբավ, որ մնալու է անմեռ

40 Հնգապատիկ երկար դարեր տևական.
Հարկ է որ մարդ գործի այնպես, որ թողնի
Մի ուրիշ կյանք կյանքից հետո մարմնական:

43 Բայց չի դատում այդպես ամբոխը ներկա
Ադիջի և Տալյամենտի շուրջ ապրող,
Եվ թեպետև տուժած՝ խելքի դեռ չի գա:

46 Սակայն շուտով հեստ ու ըմբոստ պադուացիք
Ներկելու են իրենց արյամբ գետն այն, որ
Լճանում է Վիչենցայի հենց մոտիկ:

49 Անդ, ուր Սիլեն ու Կանյանն են միանում,
Հպարտորեն տիրակալում է մի մարդ,
Որի ընդդեմ արդեն ծուղակ է լարվում:

52 Ֆելտրեն նույնպես ողբալու է դառնորեն
Ոճրի համար իր վատշվեր հովիվի,
Որի նման մարդիկ զնդան ընկած չեն:

55 Հարկ կլիներ մի չափազանց լայն աման
Ընդունելու համար արյունը Ֆերրար,
Որ կթափեր այս անազնիվ քահանան

58 (Եվ որ կշռողն անգամ պիտի պարտասեր),
Որպեսզի իր կողմնակցությունը ցույց տար,
Եվ այդ զոհը երկրի բարքին պատշաճ էր:

61 Հայելիքն այն, որ դուք կոչում եք Գահույք,
Ցոլացնում են դատաստաններն Աստուծո.
Ուստի ճիշտ են այս խոսքերըս և ստույգ»:

64 Ապա լռեց և ցույց տվեց, որ իրեն
Այլ մտքեր են զբաղեցնում և սկսեց,
Ինչպես առաջ, իր դարձապարը նորեն:

67 Մյուս խնդալին, որ ծանոթ էր արդեն ինձ,
Իբրև գոհար մի թանկագին շողշողաց,
Ինչպես սուտակն է շողշողում արևից:

70 Այստեղ խինդը արտահայտվում է փայլով,
Ինչպես երկրում ժպտով, սակայն հաճախ էլ
Հոգու թախիծն հայտնվում է մռայլով.

73 «Աստված ամեն ինչ տեսնում է, հոգի հեզ,
Ու պարզում քեզ,— ասացի ես,— այնպես որ
Ոչ մի փափագ մութ չի կարող մնալ քեզ:

76 Դու որ ձայնովդ այստեղ խինդ ես պատճառում,
Երբ երգում ես Սերովբեից հետ մեկտեղ,
Որոնք վեցյակ թևերով են պատկերվում,

79 Ինչո՞ւ իղձը չես գոհացնում փութապես,
Արդեն կանխած կլինեի հարցը քո,
Եթե քեզ պես ես լինեի խորատես»:

82 Այնժամ հոգին սկսեց խոսել ծանր ու լուրջ.
«Մեծագույն ձորն, ուր թափվում են ջրերն այն
Օվկիանոսի, որ պատում է երկրի շուրջ,

85 Զույգ ափերի միջև այնքան է ձգվում
Արևմուտքից դեպ արևելք, որ անդ, ուր
Հորիզոն է, միջօրեական է դառնում:

88 Ես ծնվել եմ այնտեղ, ուր կա մի ավան
Էբրոյի և Մագրի միջև, որ կտրուկ,
Տոսկանայից բաժանում է Ջենովան:

91 Նույն արևմուտքն ու արևելքը ունեն
Բուջան և իմ ծննդավայրն առափնյա,
Որ անցյալում արյամբ ներկվեց համորեն:

94 Քաղաքացիք, որոնց եղա քաջ հայտնի,
Ինձ կոչեցին Ֆոլկո. երկրում ուժգնորեն
Ես կրեցի ազդեցությունն այս երկնի:

97 Սիրուց նվազ այրվեց դուստրը Բելոնի,
Վշտացնելով Սիքեին և Կրևսային,
Քան ես, երբ դեռ էի անբեղ պարմանի.

100 Քան Ֆիլիդը, որը եղավ հուսախաբ
Դեմոֆոնդից, քան Հերակլը, որ մեռավ
Ցոլին պահած արտի խորքում հրատապ։

103 Սակայն այստեղ պետք չէ տխրել, այլ բերկրել,
Ոչ հանցանքի համար, որ էլ չենք հիշում,
Այլ այն ուժի, որ այդպես է կարգադրել։

106 Այստեղ պետք է դիտել արվեստը վերին
Եվ հասկանալ այն նպատակը բարի,
Որի համար երկինքն ազդում է երկրին։

109 Բայց որպեսզի բավարարվեն լիովին
Հարցերը քո, որ ծագեցին այս երկնում,
Հարկ է, որ ես շարունակեմ տակավին։

112 Դու ուզում ես իմանալ, թե ով է նա,
Որ լույսի մեջ ցոլարձակում է այսպես,
Ինչպես շողը ջրի մեջ ջինջ ու պարզկա։

115 Արդ գիտցիր, որ այնտեղ Ռախաբն է հանգչում.
Նա միացած երանելյաց մեր դասին
Բոլորից շատ շողում է ու պաղպաջում։

118 Այս երկնքում, որտեղ ատվերն է ընկած
Ձեր աշխարհի, ընդունվեց վաղ բոլորից,
Որոնց Քրիստոս հաղթանակով էր փրկած։

121 Արդար էր, որ նա եթկնքում ընդունվեր,
Իբրև նշան հաղթանակի այն վսեմ,
Որ ձեռք բերվեց զոհողությամբ անձնվեր.

124 Չի նպաստեց նա Հեսուի փառահեղ
Ձեռնարկությանն այն երկրի մեջ սրբազան,
Որի մասին պապը մտքում չունի տեղ։

127 Քո քաղաքը—հիմնադրված դևից այն,
Որ առաջինն Արաբչի դեմ ծառացավ,
Եվ որի խանդն ողբ պատճառեց մարդկության—

130 Աճեցնում է այն ծաղիկը աննիշաղ,
Որ քրիստոնյա հոտին շեղել է ճամփից,
Իսկ հովիվին կացուցանել անհնագ գայլ:

133 Դրա համար բարձիթողի են արված
Ավետարանն ու մատյանները հայրերի,
Եվ սերտվում են լոկ կանոնները իրավանց:

136 Դա են տենչում կարդինալները ու պապեր,
Եվ չեն հոգում Նազարեթի մասին այն,
Դեպ ուր թռավ Գաբրիելը լուսաբեր:

139 Բայց Վատիկանն և այլ վայրերն Հռոմի,
Որոնք դարձան գերեզմանոց այն անձանց,
Որ հետևորդ հանդիսացան Պետրոսի,

142 Ծուտ կազատվեն պղծությունից այդ անսանձ»:

ԵՐԳ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Առաջին և անճառելի Ուժն երկնից
Ներհայելով իր Որդու մեջ այն Սիրով,
Որ բխում է հավետ մեկից ու մյուսից,

4 Հաստեց աշխարհն այնպես կարգով աննման,
Որ ինչ որ մեր աչքն ու միտքն է ընդգրկում,
Չի կարելի դիտել առանց հիացման:

7 Ո՛վ ընթերցող, ինձ հետ աչքերդ արդ ուղղիր
Դեպի վերև, դեպի այն կետն երկնքի,
Ուր հատվում են շարժումները հակադիր.

10 Եվ զմայլվիր այն վարպետի արվեստով,
Որին ինքը սիրահարված է այնպես,
Որ նայում է նրան հավետ ակնաթով:

13 Տես, թե ինչպես հատման կետից ծիրը շեղ
Անջատվում է մոլորակաց հետ կրած՝
Գոհացնելու երկրի պահանջը զորեղ:

16 Եթե նրա ուղին խոտոր չլիներ,
Զուր կկորչեր ազդեցությունը երկնի,
Եվ ամեն կյանք երկրի վրա կմեռներ:

19 Իսկ եթե նա ուղղությունից խոտորվեր
Առավել կամ նվազ չափով, քան հարկ է,
Կարգն աշխարհի անչափ թերի կլիներ:

22 Արդ ընթերցող, պահիր քո միտքը պայծառ
Եվ յուրովի խորհրդածիր այն մասին,
Որի դու լոկ նախաճաշակն ստացար:

25 Իմ տվածով ինքդդ սնիր քեզ հիմակ.
Զի այն նյութը, որի մասին եմ գրում,
Պահանջում է մտքիս լարումը համակ:

28 Մայր բնության ամենամեծ լուսատուն,
Որի լույսով մեր ժամանակն է չափվում
Եվ զորությամբ կնքվում աշխարհը հաստուն,

31 Միանալով այն կետին, որ հիշվեց նոր,
Պտտվում էր պարուրաձև ուղիով,
Ուր նա մեզ վաղ է երևում օրեցօր:

34 Հասել էի լուսագունդն այդ վիթխարի,
Բայց թռիչքս ես չզգացի, ինչպես մարդ
Զի զգում գալն իր առաջին խոհերի:

37 Բեատրիչեն այնքան արագ էր թռչում
Մի երկնքից դեպի երկինքն հետևյալ,
Որ սլացքն իր վայրկենական էր թվում:

40 Որքան պետք է պայծառափայլ լինեին,
Ոչ թե իրենց հատուկ գույնով, այլ լույսով,
Հոգիները այն, որ արևի մեջ էին:

43 Հանճար, արվեստ, հնարք զուր է գործ դնել
Պատկերելու համար շողյունը նրանց.
Կարելի է լոկ հավատալ և տեսնել:

46 Եթե մեր միտքն անկարող է ըմբռնել
Արևից վառ ու պայծառ լույս, զարմանք չէ,
Չի այդպիսի վառ լույս ոչ ոք չի տեսել:

49 Այդպես վառ էր հոգվոց ջոկատը չորրորդ,
Որին բարձրյալ Հայրը հագուրդ է տալիս,
Հաղորդելով իր խորհուրդները կնճռոտ:

52 Բեատրիչեն ասաց. «Եղիր լիովին
Շնորհակալ այն Արևին հոգեկան,
Որ քեզ հասցրեց այս նյութական արևին»:

55 Երբևիցե մարդկային սիրտը այնքան
Հոժար չեղավ նվիրվելու Աստուծուն
Հաճույքով ու երախտիքով ամենայն,

58 Որքան եղա ես խոսքերն այդ լսելիս,
Եվ իմ սերը այնքան սուզվեց նրա մեջ,
Որ մոռացվեց մի պահ ինձնից տիրուհիս:

61 Սա դրանից դժգոհ չեղավ, այլ ուրախ,
Եվ փայլը իր գեղածիծաղ աչքերի
Խորասուզված միտքս ցրեց անհապաղ:

64 Տեսա բազում լույս հոգիներ ես այնտեղ,
Որ պատեցին մեր շուրջ իբրև մի պսակ
Եվ երգեցին ձայնով քաղցր ու դաշնագեղ:

67 Այսպես մենք մերթ պսակազարդ ենք տեսնում
Դիանային, երբ շողյունները նրբին
Նրա շուրջը լուսե գոտի են հյուսում:

70 Իմ գտնված պալատի մեջ երկնային
Այնքան բաներ կային անգին ու չքնաղ,
Որ հնար չէ պատմել լեզվով մարդկային:

73 Այդպիսին էր երգը հոգվոց այն թեթև.
Դրա մասին ճիշտ գաղափար չի կազմի
Նա, ով վերև սավառնելու չունի թև։

76 Ապա նրանք այդպես երգում ու շողում՝
Երեք անգամ պտտվեցին շուրջը մեր,
Ինչպես աստղերն առանցքի շուրջը կայուն։

79 Ինձ թվաց, թե պարուհիներ են նրանք,
Որոնք լռին սպասում են լսելու
Պարերգության նոր խազերը դաշներանգ։

82 Մեկն սկսեց ինձ բարբառել այս կերպով.
«Ծնորհի լույսը, որ սեր է արծարծում,
Եվ որ հետո տակավ աճում է սիրով,

85 Քո մեջ այնքան շռայլորեն է շողում,
Որ քեզ վեր է տանում երկնի սանդուղքով,
Ուրկից իջնողն ի նորո է բարձրանում։

88 Ով ուզածդդ քեզ կմերժի բերանով,
Պետք է հզոր մի արգելակ ունենա,
Ինչպես ջուրը, երբ չի հոտում դեպի ծով։

91 Դու ուզում ես գիտնալ, թե ինչ կենդանի
Ծաղիկներից է կազմված պսակն այս,
Որ շուրջ պատեց քո տիրուհուն գեղանի։

94 Ես գառներից եմ այն հոտի սրբազան,
Որ տանում է Դոմինիկը այն ճամփով,
Ուրկից ովքեր չհեռանան՝ կուռճանան։

97 Սա, որ աջ կողմս ու ինձ մոտ է հանապազ,
Իմ ուսուցիչ, եղբայր Ալբերտն է Քյոլնցի,
Իսկ ես ինքս Աքվինացին եմ Թովմաս։

100 Եթե կուզես ծանոթանալ մյուսներին,
Դու հայացքով սուրբ պսակին հետևիր
Եվ մտքով էլ հետևիր իմ խոսքերին։

103 Այն մյուս լույսը Գրացիանոն է հայտնի,
Որ միացյալ կանոնագիրքը կազմեց.
Եվ Դրախտում գտավ իր տեղն արժանի:

106 Այն, որ մոտ է և մեր խմբի զարդն է մեծ,
Պիետրոն է, որ, ինչպես կինն այն աղքատ,
Իր գանձը տուրք եկեղեցուն ընծայեց:

109 Հինգերորդ լույսն, ամենավառը մեզնից,
Ներշնչված է այնպես սիրով թրթռուն,
Որ աշխարհը լուր է ուզում նրանից:

112 Նրա մեջ կա մի միտք այնքան խորատես,
Որ, Սուրբ Գիրքը եթե ճիշտ է վկայում,
Դեռ չի ծնվել մի իմաստուն նրա պես:

115 Նրա մոտ է լույսը հոգու այն երեց,
Որ բոլորից լավ ճանաչեց աշխարհում
Հրեշտակների բնությունն ու դերը մեծ:

118 Մյուս ծիծաղկոտ լույսիկի մեջ է անեղծ
Ջատագովը քրիստոնեական դարերի,
Որի գրչից Օգոստինոսն օգտվեց:

121 Իսկ եթե դու մտքիդ հայացքը ուղղես
Լույսե ի լույս, հետևելով գովքերիս,
Ութերորդ լույսն էլ իմանալ պիտ ուզես:

124 Այդ լույսի մեջ ցնծում է այն սուրբ հոգին,
Որ պարզում է ունայնությունն աշխարհի
Նրանց, ովքեր ուշ են դնում իր խոսքին:

127 Նրա մարմինն հիմա հանգչում է հավետ
Զելդորոյում. իսկ նա երկրից ցավատանջ
Եկավ խաղաղ օթարանն այս փրկավետ:

130 Տես քիչ այն կողմ շողշողալը այն հոգվոց,
Որ Իզիդոր, Բեդա, Ռիկկարդ են կոչվում.
Վերջինն եղավ խորհուրդներով մտակոծ:

133 Իսկ սա, որին տեսնում ես իմ ձախ կողքին,
Լույսն է հոգու, որ սպասում էր մահվան,
Խորասուզված խոհերի մեջ ծանրագին։

136 Նա մշտաշող, հավերժ լույսն է Սիգերի,
Որ դավանեց գաղափարներ խանդաձին,
Եվ ավանդեց նեղ փողոցում Հարդերի»։

139 Զանգերն ինչպես կանչում են մեզ վաղ պահին,
Երբ զարթնում ու ելնում է հարսն Աստուծո,
Այգորելու իր սիրասուն փեսային,

142 Եվ փոխն ի փոխ մեկ քաշվում են, մեկ հրվում,
Հնչեցնելով այնքան քաղցր ղողանջներ,
Որ մարդ սիրով ու հուզմունքով է լցվում,

145 Այսպես շարժվեց այն պսակը փառահեղ,
Օրհներգելով ձայնով այնպես դաշնավետ,
Որ լսվում է բացառապես լոկ այնտեղ,

148 Ուր վայելքը տևում է հար ու հավետ։

ԵՐԳ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

Օ՜ սին հոգսեր մահկանացու մարդերի,
Որքան թյուր են այն փաստարկները բոլոր,
Որ կոտրում են թռիչքը ձեր թևերի։

4 Մին ձգտում է իրավագետ դառնալու,
Մյուսը՝ բժիշկ կամ քահանա, իսկ մեկն էլ՝
Բռնությամբ կամ խաբեությամբ իշխելու.

7 Սա ձգտում է դիրքի, իսկ նա՝ գողության,
Մեկն անձնատուր է մարմնական հաճույքի,
Մի ուրիշը՝ դատարկապորտ ծուլության։

10 Այս բոլորից ես ինձ ազատ զգալով՝
Տիրուհուս հետ երկինք էի համբարձել
Եվ ընդունվել այնքան փառքով ու պատվով։

13 Երբ ամեն մեկն հոգիներից բարեհեզ
Պտտվելով՝ իր նախկին տեղը եկավ,
Կանգ առավ ու անշարժացավ մոմի պես։

16 Եվ այն հոգին, որ ինձ հետ էր բարբառել,
Լույսի խորքից նորից ժպտաց ու շողաց
Եվ սկսեց այսպես հոդել ու հարել.

19 «Քանի որ ես Հավերժ Լույսով եմ շողում,
Ապա նրան ներհայելով տեսնում եմ,
Թե ինչպիսի մտքեր են քեզ օրորում։

22 Հավանաբար դու ուզում ես, որ ես քեզ
Ավելի լայն ու պարզորոշ բացատրեմ,
Որպեսզի դու ավելի լավ ըմբռնես

25 Քիչ առաջվա իմ ասածը՝ «Կուռնանան».
Ապա մյուսը՝ «Դեռ չի ծնվել... նրա պես»։
Այստեղ հարկ է պարզել հարցերն այս բաժան.

28 Արարիչը, որ տիեզերքն է վարում
Այն խորհուրդով, որի խորքը թափանցել
Ի զորու չէ ոչ մի էակ աշխարհում,

31 Որպեսզի սուրբ եկեղեցին ընթանար
Իր հիմնադրի նշանակած ուղիով
Եվ հետևեր նրա խոսքին կենարար,

34 Նրա համար կարգեց երկու իշխաններ,
Որոնց վրա պարտք ու խնդիր էր դրված
Նրան վարել կանոններով խստամբեր։

37 Մեկը սիրով այրվեց ինչպես Սերովբե,
Իսկ մյուսը իր իմաստությամբ ու խելքով
Երկրի վրա փայլեց ինչպես Քերովբե։

40 Ես միմիայն կանեմ գովեստը մեկի,
Բայց մեկի գովքն երկուսին էլ վերագրիր,
Քանզի նույնն էր նպատակը երկուքի:

43 Տուպինի և Կյաշի միջև հարակից,
Որտեղ ճգնեց երանելի Ռաբալդոն,
Թեքվում է մի ծաղկուն ծմակ սարակից,

46 Որից ցուրտ ու տաք է գգում Պերուջան,
Իսկ այդ սարի ետև ծանոթ լծի տակ
Հեծեծում են Գուալդոն ու Նոչերան:

49 Անդ, ուր լեռան կողը նվազ է թեքվում,
Երկրի համար ծագեց արև մի պայծառ,
Ճիշտ ինչպես սա, որ Գանգեսից է ծագում:

52 Ուստի ով որ տեղի մասին այդ խոսի,
Ճիշտ անունով պետք է կոչի «Արևելք»,
Քանզի քիչ է այն անվանել «Աջեզի»:

55 Նա իր ծագից այնքան էլ չէր շատ հեռու,
Երբ սկսեց զգացնել աշխարհին
Իր սրբության որոշ փաստերն ակնառու:

58 Դեռ պարմանի՝ վեճի մտավ հոր հետ նա,
Մի այնպիսի կնոջ համար, ում առջև,
Ինչպես մահվան, ոչ ոք դուռը չի բանա:

61 Եվ առջևն հոր ու ատյանի հոգևոր
Հանդիսապես ամուսնացավ նրա հետ,
Եվ ավելի սիրեց նրան օրեցօր:

64 Նա առաջին իր ամուսնուց զրկված,
Մինչ սրա գալն՝ հազար տարուց ավելի
Մնացել էր արհամարհված ու լքված:

67 Հոգնեց և հուշն Ամիկլատի, որ հոռի
Մի հյուղակում կենակցում էր նրա հետ
Եվ չպլպլվեց ձայնից երկրի հզորի.

70 Հօգնեց և այն, որ նա տոկաց շարունակ,
Մինչև այն օրն, երբ Քրիստոսի հետ խաչվեց,
Մինչ Մարիամը մնաց ներքև խաչի տակ:

73 Բայց որպեսզի շատ չլինեմ մթամքող,
Իմացիր, որ ամուսիններն այդ երկու
Ֆրանկիսկն ու Աղքատությունն են սիրող:

76 Համերաշխ ու երջանիկ կյանքը նրանց,
Փոխադարձ սերն ու նայվածքները քաղցրիկ
Սուրբ խոհերի էին մղում շատ անձանց:

79 Առաջինը խանդավառվեց Բեռնարդն հեզ
Եվ բոբկացած վազեց նրա ետևից
Այնպես արագ, որ ուշացել էր կարծես:

82 Ո՛վ անհայտ գանձ և ո՛վ բարիք բազմարդյուն:
Եգիդիոն ու Սիլվեստրոն էլ բոբկացած՝
Հետևեցին Աղքատության ամուսնուն:

85 Ապա այդ հայրն ու ուսուցիչն համարձակ
Գնաց Հռոմ հանդերձ ամբողջ ընտանյոք,
Որ կապել էր մեջքին գոտի հասարակ:

88 Ամենևին նա չամաչեց այն բանից,
Որ ինք խղճուկ, անգոսնելի տեսք ուներ
Եվ սերում էր Բեռնարդոնե Պիետրից.

91 Այլ սեգորեն պարզեց հղացքն իր մտի
Իննոկենտին, և նրանից ստացավ
Նախակնիքն իր ծրագրած նոր ուխտի:

94 Երբ աղքատ դասն աճեց նրա ետևից,
Որի կյանքը սքանչելի ու պայծառ
Պիտի հավետ փառաբանվի սրբերից,

97 Այդ հոգևոր հովվի կամքը ազնիվ
Երկրորդ անգամ Օնորիոսը գոհացրեց
Հավերժական ու սուրբ հոգու շնորհիվ:

100 Իսկ երբ որ նա, տանջակրության ծարավի,
Քրիստոսի նոր ուսմունքը քարոզեց
Ներկայությամբ վսեմաշուք սուլթանի,

103 Բայց տեսավ, որ դարձի պատրաստ չէ ոչ ոք,
Վերադարձավ առ Իտալիա, ուր ցանքն իր
Պտուղներ էր տալիս առատ ու ատոք:

106 Եվ Տիբերն ու Առնոն զատող լերկ սարում
Քրիստոսից վերջին կնիքն ստացավ,
Որ նա կրեց երկու տարի աշխարհում:

109 Երբ շնորհներ բաշխող Տերը հոգատար
Ուզեց նրան վարձատուցել երկնքում,
Որին արժան էր նա կյանքով իր արդար,

112 Նա իր ուխտի եղբայրներին սիրակեզ
Հանձնարարեց իր կնոջը թանկագին
Եվ պատվիրեց սիրել նրան մշտապես:

115 Աղքատության ծոցից միայն իր հոգին
Ուզեց գնալ հանգրվանն իր վերջնական
Եվ այլ դագաղ չկամեցավ իր մարմնին:

118 Արդ դու դատիր, թե ինչպիսին եղավ նա,
Ով սրա հետ վարեց նավը Պետրոսի
Ծովի միջով փոթորկահույզ ու դժնյա:

121 Նա հենց եղավ հիմնադիրը մեր ուխտի.
Իսկ ով նրա ուղղությանն է հետևում,
Ձեռք է բերում արժանիքներ հավաստի:

124 Բայց նրա հոտն այնքան դարձել է ագահ
Եվ հետամուտ նոր ճարակի, որ, անշուշտ,
Նա կցրվի արոտներում շրջակա:

127 Որքան հոտի գառնուկները ուխտակից
Հեռանում են իրենց հովվից պահապան,
Այնքան նրանք նվազում են անունդից:

130 Կան գառներ էլ, որոնք հովվից չեն զատվում,
Վախենալով փորձանքներից, բայց նրանք
Այնքան քիչ են, որ մատներով են հաշվվում:

133 Արդ եթե ես հստակ կերպով խոսեցի,
Եվ եթե դու ինձ ուշադիր լսեցիր,
Ու հիշեցիր այն, ինչ որ քեզ ասացի,

136 Դու կլինես հիմա մասամբ գոհացած,
Կիմանաս, թե ինչու փտում է ծառն այն,
Եվ ինչ իմաստ ունի խոսքը իմ ասած՝

139 «Ուրկից ովքեր չհեռանան՝ կուռճանան»»:

ԵՐԳ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Հազիվ թե այն օրհնյալ հուրը իր վերջին
Խոսքը ասաց, հոգվոց պսակը հիշյալ
Սկսեց երգել ու պտտվել վերստին:

4 Եվ նա դեռ չէր արել լրիվ մի շրջան,
Երբ մի ուրիշ պսակ նրան շուրջպատեց,
Զուգակցելով իր պարն ու երգը նրան.

7 Երգ, որ այնպես գերազանցում է անկարծ
Սիրենների, Մուսաների երգերից,
Ինչպես ուղիղ շողը՝ շողից անդրադարձ:

10 Ինչպես երբեմն ամպերի մեջ ապրշում
Զևանում են զույգ աղեղներ մակադիր,
Երբ Յունոնը իր նաժիշտին է կանչում,

13 Եվ ներսից է ծագում աղեղը դրսի,
Ինչպես ձայնից ծագում է ձայնը նրա,
Ով հալումաշ եղավ սիրուց Նարգիսի,

16 Եվ դրանք էլ ազդարարում են մարդկանց,
Որ աշխարհում էլ չի լինի ջրհեղեղ,
Ըստ Աստուծո դաշնի Նոյի հետ կնքած,—

19 Այսպես երկու պսակներն այն լուսածին
Միասնաբար դառնում էին շուրջը մեր,
Այսպես դրսինն հարմարվում էր ներսինին:

22 Իսկ երբ նրանց երգն ու պարը զվարթուն
Եվ փոխադարձ ցոլացումը լույսերի՝
Պայծառությամբ ու խնծիղով առլցուն,

25 Դադարեցին միակամ ու նույն պահին,
Ինչպես աչքերն՝ իրենց ներքին մղումով
Փակվում են ու բացվում են միշտ միասին,—

28 Մեկի խորքից նոր լույսերի արփային
Մի ձայն ելավ և առինքնեց ինձ, ինչպես
Բևեռաստղը մագնիսական ասեղին.

31 Եվ բարբառեց. «Իմ մեջ այրվող սերը մեծ
Ինձ դրդում է խոսել պետի մասին մյուս,
Որի առթիվ իմ պետն այստեղ դրվատվեց:

34 Արդար է միշտ մեկտեղ հիշել երկուսին,
Քանզի նրանք մարտնչել են միատեղ
Նրանց փառքն էլ պետք է շողա միասին:

37 Քրիստոսի զորքն, որ թանգ գնով էր զինվել,
Վարանումով հետևում էր դրոշին
Եվ թվով էլ բավականին նվազել,

40 Երբ Արքան, որ թագավորում է երկնում,
Այն վտանգված զինվորներին աջակցեց,
Սոսկական իր ողորմությամբ անհատնում,

43 Եվ իր հարսին, ինչպես ասվեց, ուղարկեց,
Երկու պաշտպան, որոնց գործքով ու խոսքով
Ժողովուրդը մոլոր ինքզինք հավաքեց:

46 Անդ, ուրկից է ծագում Զեփյուռն աղվական
Կենդանություն տալու բոլոր բույսերին,
Որոնցով է պճնազարդվում Եվրոպան,

49 Ծովափի մոտ, ուր ալիքներն են բախվում,
Եվ ուր, ասես հոգնած երկար իր վազքից,
Արեգակը մարդկանցից է թաքնվում,

52 Գետեղված է Կալարոգան եզակի,
Հովանու տակ մեծ վահանի, որի մեջ
Կա մի առյուծ տակն ու վրան դղյակի:

55 Այնտեղ ծնվեց քրիստոնեական հավատի
Սուրբ մարտիկը՝ բարի հանդեպ յուրայնոց,
Իսկ թշնամյաց հանդեպ՝ խիստ ու տմարդի:

58 Հազիվ ծնված, նրա հոգին համակվեց
Մի այնպիսի ներզորությամբ, որ մայրն իր
Հղության մեջ նրա մասին գուշակեց:

61 Երբ հաստատվեց ավազանում սրբազան
Հավատի ու նրա միջև միություն,
Որով նրանք իրար օգնել խոստացան,

64 Կնքամայրը իր երազի մեջ տեսավ
Զարմանահրաշ այն պտուղը, որ պիտի
Հասցներ նա ժառանգների հետ սակավ:

67 Եվ որպեսզի նրա անունն հարակոչ
Իր էության արտահայտիչը լիներ,
Հատկացրին նրան անունը Տիրոջ:

70 Եվ նա կոչվեց Դոմինիկուս. ես նրան
Համարում եմ այգեպանը Քրիստոսի,
Որն իր այգում նրան ընտրեց օգնական:

73 Նա նվիրակն ու ծառան էր Քրիստոսի.
Եվ առաջին միտքը, որ նա ունեցավ,
Առաջնագույն պատվերն եղավ Քրիստոսի:

76 Դայակն հանախ նկատում էր, թե ինչպես
Արթուն ու լուռ նա հսկում էր մերկ գետնին,
Կարծես ասեր. «Սրա համար եկա ես»:

79 Նրա հայրը Երջանիկ էր իսկապես,
Եվ իսկապես նրա մայրը՝ Հովհաննա,
Թե անունն այս մեկնաբանվի ճշտապես:

82 Ոչ աշխարհի սիրույն, որի համար արդ
Հետևում են Օստիացուն ու Թադդեին,
Այլ լոկ ի սեր մանանայի անաղարտ

85 Նա դարձավ մեծ ուսուցիչ կարճ շրջանում,
Եվ սկսեց վերահսկել այս այգին,
Որ վատ տիրոջ ձեռքում շուտ է չորանում:

88 Եվ սուրբ գահից—որ նախապես հարգանքով
Վարվում էր հետն աղքատների, քան հիմա,
Եվ դա այժմյան գահակալի հանցանքով—

91 Նա պահանջեց ոչ հասույթներ հավելյալ,
Ոչ շնորհը թափուր թողված պաշտոնի,
Ոչ տասանորդն աղքատներին հատկացյալ,

94 Այլ իրավունք պայքարելու հանապազ
Մոլորությանց ընդդեմ հօգուտ այն սերմի,
Որի ծիլն են քսանևչորս տունկերն այս:

97 Ապա, զինված իր գիտությամբ ու կամքով,
Ինչպես բարձրից արտավիժող մի հեղեղ,
Հորդան տվեց հորդահոսան հորձանքով:

100 Եվ նրա թափն էլ ավելի եղավ մեծ
Հերձվածության թավուտքի մեջ, այնտեղ, ուր
Նա առավել դիմադրության հանդիպեց:

103 Եվ նրանից ելան տարբեր առուներ,
Որ ընդհանուր այգեստանն են ոռոգում,
Ուր աճում են դրա համար ճոխ թփեր:

106 Թե այդպես էր մեկ անիվը այն կառքի,
Որով ինքզինք եկեղեցին պաշտպանեց
Եվ հաղթական ելավ կռվի մեջ ներքին,

109 Քեզ պարզ պետք է լինի արժեքն երկրորդի,
Որին Թովմասն իմ գալուց ոչ շատ առաջ
Արժանացրեց այնքան բարձրը գովեստի։

112 Սակայն հիմա նրա շավիղը, ափսոս,
Անտեսված է, ուստի այնտեղ, ուր առաջ
Գինեմրուր էր, այժըմ պատած է բորբոս։

115 Այն հոտը, որ նրա շավղով էր գնում,
Արդ այնքան է շեղվել ճամփից, որ նրա
Կրունկ դրած տեղ՝ իր ոտքի մատն է դնում։

118 Եվ այդ բանի շուտով արդյունքը հոռի
Ի հայտ կգա, երբ որոմը տրտնջա,
Թե իր համար փակ է մուտքը ամբարի։

121 Անշուշտ, ով որ ուզի մեր գիրքը թերթել,
Կգտնի թերթ, որտեղ գրված կլինի.
«Ես այնպես եմ, ինչպես վայել է լինել»։

124 Սակայն դա ոչ Ակուասպարտում կգտնես,
Ոչ Կազալում, որտեղ կանոնը ոմանք
Խիստ են գտնում, ոմանք էլ թույլ պարզապես։

127 Բոնավենտուր Բանյորցին եմ ես բնիկ.
Բարձրաստիճան պաշտոններիս մեջ վարած
Ես միշտ ետ եմ դասել հոգսերն աշխարհիկ։

130 Իլլումինատն ու Ավգուստինն այստեղ են,
Առաջինները աղքատներից բոբկացած,
Որ ապրեցին միայն կյանքով հոգեղեն։

133 Սուրբ Վիկտորի Հյուգոն էլ է նրանց քով,
Պիեր Մանջադորն և այն Պիեր Իսպանցին,
Որ հռչակվեց իր տասներկու գրյանքով.

136 Եվ Նաթանը, Ոսկեբերան հորջորջված
Պատրիարքը, Անսելմն ու այն Դոնատոն,
Որ առաջին արվեստին էր նվիրված:

139 Աստ Ռաբանն է, այստեղ շողում է իմ քով
Հովակիմը, աբբահայրը Կալաբրիո,
Որ օժտված է մարգարեի ջինջ հոգով:

142 Սիրատոչոր Թովմաս եղբոր գովեստի
Խոսքերն էին, որ ինձ այսպես մղեցին
Պանծացնելու այն պաշտպանին հավատի.

145 Դրանից էլ այս ընկերներս հրճվեցին»:

ԵՐԳ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

Ով ուզում է տեսածը լավ ըմբռնել
(Եվ մինչ պատմում եմ ես, պատկերը դրա
Թող աշխատի իր մտքում լավ քանդակել),

4 Պատկերացնի թող տասնևհինգ վառ աստղեր,
Որ երկինքը լուսավորեն շողերով
Եվ թափանցեն օդի միջով մթաստվեր.

7 Պատկերացնի թող այն Սայլակը, որին
Մեր երկնքի տարածությունը քավ է
Պտտացնելու օր ու գիշեր իր քեղին.

10 Պատկերացնի թող բերանն այն եղջյուրին,
Որի ծայրը այն առանցքին է հասնում,
Որի շուրջ է դառնում ոլորտն առաջին.

13 Եվ որ նրանք կազմեն երկու աստղախումբ,
Ինչպես այն, որ կազմեց դուստրը Մինովսի,
Երբ նա զգաց մահվան սարսուռը ընդհուպ.

16 Եվ զուգորդեն շողերն իրենց լուսարձակ,
Բայց երկուսն էլ պտույտ գործեն այն ձևով,
Որ ընթանա մեկը դանդաղ, մեկն արագ.

19 Եվ պատկերն այս կտար աղուտ գաղափար
Այն լուսավոր պսակների մասին զույգ,
Որ պտտվում էին իմ շուրջ մեղմաբար.

22 Չի դա այնքան գերիվեր է մեր մտքից,
Որքան ընթացքն արագաշարժ երկնքի
Գերիվեր է Քիանայի հոսանքից:

25 Այնտեղ չէին երգվում Բաքոսն ու Պեան,
Այլ խորհուրդը աստվածության եռանձնյա
Ու խորհուրդը աստվածորդու մարդացման:

28 Եվ երբ երգերն ու պարերը վերջացան,
Այն արբազան լույսերը մեզ նայեցին
Եվ զգացին մի խնդություն անհման:

31 Այն լուսաշող հոգին, որ ինձ պատմել էր
Սխրալի կյանքն աստվածատեր աղքատի,
Լռությունը խզեց հոգվոց համատեռ

34 Ու քարքառեց. «Քանի որ ես լուծել եմ
Քո մի հարցը, ապա իմ սերը անշեջ
Ինձ մղում է, որ մյուս հարցդ էլ քեզ պարզեմ:

37 Դու կարծում ես, որ նախահայրը, որի
Կողը հանվեց ստեղծելու այն կնոջ,
Որի քիմքը շատ թանկ նստեց աշխարհին,

40 Եվ այն մյուսը, որ, քավության ծարավի,
Մարդկանց համար այնպես խոցվեց ու տանջվեց,
Որ ամեն մեղք թեթևացավ հիրավի,

43 Ստացել են ամենակալ Արարչից
Իմաստության ու գիտության այնքան լույս,
Որքան կարող է ընկալվել մարդկանցից:

46 Զարմանում ես ուստի խոսքից իմ ասած,
Թե չի ծնվել դեռ նմանը այն հոգու,
Որ հինգերորդ լույսի մեջ է պարփակված:

49 Արդ լսիր ինձ, և քեզ հայտնի կլինի,
Որ քո կարծածն ու իմ ասածը մեկ են,
Ինչպես մեկ է կենտրոնը նույն շրջանի:

52 Ինչ որ մեռնում է և ինչ որ չի մեռնում,
Անդրադարձված ցոլքն է միայն այն մտքի,
Որ Տերը մեր սուրբ սիրով է հղանում.

55 Զի Լույս-Միտքը, որը բխում է հավետ
Լուսատուից և միացած է նրա
Ու իրենց հետ եռյակ կազմող Սիրո հետ,

58 Իր բարությամբ ցոլանում է անդադար
Երկնաբնակ գոյակների մեջ ինքնյակ,
Ինքը մնալով միշտ անբաժան, միատարր:

61 Այնտեղից նա շողարձակում է ներքև
Երկինքների ոլորտներով, ի վերջո
Ստեղծում է միայն գոյեր կարճատև,

64 Իսկ գոյերն այդ գոյերն են այն երկրային,
Որ մերթ սերմով և մերթ առանց մի սերմի
Ստեղծվում են շարժմամբ գնդոց երկնային:

67 Նրանց նյութն ու ազդեցությունն երկնքի
Միակերպ չեն, ուստի ամեն գոյի մեջ
Այլապես է շողում ցոլանքը Մտքի:

70 Ահա ինչու համանման ծառերից
Ստացվում են հաճախ տարբեր պտուղներ,
Ինչպես տարբեր մտքեր՝ նման մարդկանցից:

73 Եթե նյութը կերտված լիներ անթերի,
Եվ երկինքը ամբողջ ուժով ներգործեր,
Էիակատար կլիներ կազմն իրերի:

76 Բայց բնությունն այն թերի է պատրաստում,
Միշտ ինչպես այն արվեստագետը հմուտ,
Որ դողդոջուն ձեռքերով է աշխատում։

79 Իսկ երբ Ուժը, Սերը, Լույսը միացյալ
Անմիջորեն ստեղծեին էակներ,
Ապա դրանք կլինեին կատարյալ։

82 Այսպես եղավ անթերի ու կատարյալ
Կավահողից կերտված մարդը առաջին,
Այսպես եղավ, նա ով կույսից էր ծնյալ։

85 Ոչ մեկի մեջ բնությունը մարդկային
Չեղավ այնպես կատարյալ և չի լինի,
Ինչպես երկու այն անձանց մեջ վեհային։

88 Արդ եթե ես կանգ առնեի այս կետում,
Ապա դու ինձ կարող էիր հարցընել.
«Ինչպե՞ս եղավ նա աննման իմաստուն»։

91 Բայց որպեսզի անպարզը պարզ հասկանաս,
Նկատիր, թե ով էր նա և ինչ խնդրեց,
Երբ որ ասվեց՝ «Խնդրիր ինչ որ ցանկանաս»։

94 Իմ ակնարկից դու իմացար անշուշտ, որ
Արքա էր նա, և նա խնդրեց միմիայն
Իմաստություն, որ լինի լավ թագավոր։

97 Ոչ որպեսզի իմանա, թե որքան են
Շարժիչները երկինքների, կամ գիտնա
Անհրաժեշտն ու պատահականն իսկորեն։

100 Ոչ էլ գիտնա, թե կա շարժում նախագույն,
Թե կես ծիրում հնարավոր է գծել
Մի եռանկյուն, որ չկազմի ուղղանկյուն։

103 Արդ եթե դու իմ խոսքերը լավ կշռես,
Կիմանաս, որ իմաստությունն իմ հիշած
Իմաստությունն է արքայի հեռատես։

106 Եվ եթե իմ «Զի ծնվել»-ին դնես ուշ,
Կզգաս, որ դա արքաների մասին է,
Որոնք շատ են, բայց լավերը քիչ են հույժ:

109 Այս իմաստով դու ընդունիր իմ խոսքն այն.
Դա կլինի Ադամի ու Քրիստոսի
Մասին կազմած քո կարծիքի համաձայն:

112 Դա թող լինի քո ոտքերին միշտ կապար,
Որպեսզի դու դանդաղ, զգույշ ընթանաս,
«Այո» կամ «ոչ» չեզրակացրած վճռաբար.

115 Քանզի նա է հիմարագույնը մոլոր,
Ով հաստատում կամ ժխտում է հապշտապ՝
Անտեսելով ճկատումները բոլոր:

118 Զէ՞ որ հաճախ դատողությունը հապճեպ
Մտքին դեպի սխալ ուղի է տանում,
Եվ միտումն էլ կաշկանդում է այն ստեպ:

121 Ավելի քան ի զուր է և անօգուտ
Ճշմարտությանն որոնումը այն մարդուն,
Որ որոնման արվեստին չէ խելամուտ:

124 Եվ բացահայտ օրինակներն են դրան՝
Պարմենիդը, Բրիսն ու Մելիսը և այլք,
Որոնք մտքով կույր զկուրայն ընթացան.

127 Սաբելիոսը, Արիոսն ու խենթերն այլ,
Որոնք Սուրբ Գիրքն աղճատեցին, խեղեցին,
Ինչպես սուրն է խեղում դեմքը գեղափայլ:

130 Մարդիկ պետք չէ հախտուն դատեն բնավին,
Նման նրանց, որ վճռում են արտի մեջ
Ցորենի գինն՝ այն չհասած տակավին:

133 Ես տեսել եմ մասրենին, որ ցուրտ ձմռան
Ծածկվել է չոր ու ցցուն փշերով,
Սպա վարդով է զարդարվել վաղ գարնան:

136 Եվ տեսել նավ, որ հաջողակ ընթացքով
Նավարկել է ծովի վրա, բայց հետո
Ընկղմվել է նավակայքի մուտքի քով։

139 Թող չկարծեն սեր Մարտինոն կամ Բերտան,
Որ երբ մի գող կամ բարեգործ կտեսանեն,
Աստվածային խոր խորհուրդը կկարդան.

142 Չի կարող է նա բարձրանալ, սա ընկնել»։

ԵՐԳ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ

Կլոր ամանում ջուրը շարժվում է եզրից
Դեպի կենտրոն և կենտրոնից եզրը դեպ,
Նայած դրսից է նա ծեծվում, թե ներսից։

4 Այս պատկերը ծագեց մտքիս մեջ հանկարծ,
Հենց որ հոգին փառապսակ Թովմասի
Վերջացրեց իր խոսքերը ինձ ուղղված։

7 Ապա եկավ Բեատրիչեն ի հանդես,
Դիմելով այն հոգիներին երանյալ.
«Սա պետք ունի ճանաչելու խորապես

10 Մի այլ կարգի ճշմարտություն նույնպես լուրջ,
Թեև նա դեռ ձեզ չի խոսում այդ մասին.
Ասեք նրան, թե այն լույսը, որ ձեր շուրջ

13 Ճառագայթում է, արդյոք պիտի առհավետ
Մնա ձեզ հետ, այնպես ինչպես հիմա է.
Եվ եթե դա մնալու է միշտ ձեզ հետ,

16 Ապա ասեք, երբ հարություն առնեք դուք,
Արդյոք լույսն այդ ճառագայթավառ ու պայծառ
Ձեր աչքերին չի՞ տա կոտտանք ու տպլտուկ»։

19 Ինչպես մղված ցնծությունից անպատում
Նրանք, որոնք կաքավում են ընդհոլով
Ու բարձրաձայն երգակցում են ու կայթում,

22 Այսպես համեստ ու փութեռանդ այն հարցին
Սուրբ ջոկատը արձագանքեց նոր խինդով,
Որ նա հայտնեց երգ ու պարով ժրագին:

25 Ով ողբում է, թե պետք է նախ մահանալ,
Հուսկ ապրելու համար հավետ երկնքում,
Չի ճանաչում խինդը կյանքի երանյալ:

28 Այն անհուն և համապարփակ Էակին,
Որ ապրում ու գերագահում է հավետ
Աստվածային անձերի մեջ անմեկին,

31 Հոգիներն այն օրհներգեցին երեք հեղ
Այնքան անուշ, որ լսելն այն կլիներ
Արժանի վարձք արժանիքի փառահեղ:

34 Ամենավառ լույսից լսվեց այդ ժամին
Մի մեղույշ ձայն (որին նման էր գուցե
Հրեշտակի ձայնը ուղղված Մարիամին),

37 Որ ասում էր. «Որքան տևի դրախտային
Այս խնծիղը, այնքան այս լույսը մեր շուրջ
Կճաճանչի սիրո շողքով արփային:

40 Լույսն արդյունք է այստեղ սիրո հրայրքի,
Իսկ հրայրքը՝ աստվածության տեսության,
Տեսությունն էլ՝ գերբնական շնորհքի:

43 Երբ ստանանք մեր մարմիններն հարուցյալ,
Մեր անձերը ավելի փայլ կստանան
Եվ կլինեն բոլորովին կատարյալ.

46 Ուստի կաճի շնորհքի լույսը, որ մեզ
Պարգևել է Բարերարը գերագույն,
Լույս, որ հոգուն դարձընում է սրատես.

49 Եվ աճելով տեսության ուժը հոգում,
Կաճի նաև ներքին հրայրքը սիրո,
Կաճի լույսը, որ սրանից է ծագում:

52 Բայց կայծն ինչպես, որը հրից է բխում,
Հրին զիջում է իր լույսի ուժգնությամբ,
Այնպես որ նա սրանից թույլ է շողում,

55 Այսպես լույսն այս, որ մեզ պատում է համակ,
Ավելի թույլ պիտի շողա մեր մարմնից,
Որ առայժմ դեռ թաղված է հողի տակ:

58 Այդ վառ լույսից մենք չենք կարող վատ զգալ,
Զի կդառնան զգայարանքը տոկուն
Ամեն ինչի, որ կարող է հաճույք տալ»:

61 Ի պատասխան երկու խմբերն այնքան շուտ
«Ամեն» ասին, որ ցույց տվին բուռը տենչ՝
Միանալու իրենց մարմնին հողամուտ.

64 Տենչ, որ գուցե միայն իրենց համար չէր,
Այլ հայրերի, մայրերի ու այն անձանց,
Որոնց երկրում սիրել էին ջերաջեր:

67 Եվ ահա այն պսակների շուրջ կրկնակ
Ի հայտ եկավ մի այլ պսակ լուսեղեն
Այգաբացի հորիզոնի նմանակ:

70 Եվ ինչպես որ երեկոյան երկնքում
Երևում են շողեր, հազիվ առկայծող,
Որոնք որոշ և անորոշ են թվում,

73 Այսպես տեսա նոր հոգիներ երանյակ,
Որոնք մյուս պսակների շուրջ երկու
Ձևացրին մի նոր ու լայն շրջանակ:

76 Օ՛, ճշմարիտ ճառագայթում Սուրբ Հոգու:
Ինչպես հանկարծ նա շողշողաց այնպես վառ,
Որ շլացրեց անզոր աչքերն իմ երկու:

79 Բեատրիչեն այնքան չքնաղ էր դառել
Ու զվարթուն, որ նրա տեսքը հիմա
Ես չեմ կարող հիշողությամբ պատկերել։

82 Երբ շլացած աչքերս նորից բացվեցին,
Տիրուհուս հետ փոխադրված ինձ տեսա
Նոր բարձրադիր մի երկնքում բերկրածին։

85 Իմ համբարձման անդրադարձա ես իսկույն՝
Ի շնորհիվ փայլատակման նոր երկնի,
Որ ինձ թվաց արտասովոր շառագույն։

88 Ամբողջ արտով ու բարբառով բոլորի
Ես հայտնեցի իմ գոհությունն Աստուծո,
Որ դարձրել էր ինձ արժանի նոր շնորհի։

91 Դեռ իմ սրտի ուղերձը չէր վերջացել,
Երբ զգացի, որ իմ դիմումը նրան
Ընդունելի և հաճելի էր անցել.

94 Քանզի երկու շողերի մեջ հրեղեն
Երևացին լույս հոգիներ այնքան վառ,
Որ գոչեցի. «Հելիոս, ինչքա՜ն շքեղ են»։

97 Ինչպես մեծ ու փոքր աստղերով կետկիտված
Ծիր Կաթինը ճերմակ մի շերտ է կազմում,
Որի բնույթն իմաստնոց չէր պարզված,

100 Այսպես Հրատում այն շողերը կրկնաշար
Կազմում էին Խաչի նշանն հարգելի,
Որի թևերն իրար էին հավասար։

103 Հիշողությունն աստ հաղթում էր հանճարին,
Զի Քրիստոսն էր խաչին շողում այնպես վառ,
Որ նման բան ես չեմ տեսել տակավին։

106 Բայց ով սիրով հետևում է Քրիստոսին,
Կների ինձ, որ ես թերի եմ պատմում,—
Նա կտեսնի այդ լուսափառ Քրիստոսին։

109 Խաչի աջից դեպ ձախ, վերից դեպի վար
Ծարժվում էին լույս հոգիներ ու միմյանց
Հանդիպելիս շողում էին վառ ի վառ:

112 Այսպես, հաճախ երևում են օդի մեջ
Ուղիղ և ծուռ, արագ, դանդաղ, երկար, կարճ
Մարմինների հոծ մասնիկներ փողփողէջ,

115 Որ լողում են լուսանցքների մեջ փեղկի,
Որ արևից պաշտպանվելու համար մարդ
Հորինել է ճարտարությամբ իր մտքի:

118 Նվագն ինչպես մի տավիղի կամ վինի
Դուրեկան է հնչում մինչև իսկ նրան,
Ով ծանոթ չէ մեղեդիին նրբեռնի,

121 Այսպես խաչի վրա խմբված լույսերից
Մի համերգ էր լսվում քաղցր ու ադինքնող,
Թեև չէի բան հասկանում բառերից:

124 Ես իմացա, որ դա օրհներգ էր գովքի,
Երբ ինձ հասան բառերն «Ելիր» և «Հաղթիր».
Բայց չիմացա ամբողջ խոսքերն օրհներգի:

127 Ես լսեցի այդ օրհներգը թովչանքով.
Ոչ մի հաճույք չեմ զգացել մինչև այդ,
Որ ինձ կապեր այնքան քաղցրը կապանքով:

130 Գուցե լեզուս անչափ հանդուգն է հնչում,
Եթե դասելով հմայքն աղվոր աչքերի,
Որոնց մեջ են իմ երազները հանգչում:

133 Բայց ով խորհի, որ վերելքին զուգընթաց
Դրոշմն ամեն գեղեցկությանն աճում է,
Իսկ ես այստեղ չէի աչքերն այն դիտած,

136 Կների, որ չեմ մեղադրում ինքս ինձ,
Քանզի ունեմ արդարացում դրանում.
Չի բացավում այստեղ հաճույքը անբիծ,

139 Այլ գնալով ավելի չինչ է դառնում:

ԵՐԳ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ

Բարի կամքը, որ երևում է արդար
Ցանկության մեջ, այնպես ինչպես կամքը վատ
Երևում է ցանկության մեջ խելագար,

4 Լռեցրեց քնարի ձայնն հանելի,
Կանգնեցնելով լարերը այն սրբազան,
Որոնք լարվել էին ձեռքով Բարձրյալի:

7 Կարո՞ղ էին արդար հայցին խուլ մնալ
Էակներն այն, որ լռեցին միաձայն՝
Կարենալու համար իղձերս իմանալ:

10 Արդար է, որ հավետ տանջանք կրի նա,
Ով որ ի սեր սին ու պատիր բաների՝
Ճշմարիտ ու արդար սիրուց կուծանա:

13 Ինչպես խաղաղ ու անապակ գիշերով
Մերթ սահում է հանկարծ մի բոց վառվռուն,
Ստիպելով թարթել աչքերը փութով,

16 Ասես աստղ է, որը իր տեղն է փոխում,
Թեև այնտեղ, ուր այն բոցը երևաց,
Բան չի պակսում և նա էլ հետք չի թողնում,—

19 Այսպես խաչի աջակողմյան բազուկից
Մինչև ներքև սահեց մի լույս հանկարծույն,
Որ շողշողաց ու ճաճանչեց խաչին կից:

22 Վար սահելիս չբաժանվեց նա խաչից,
Այլ լույսերի միջով անցավ ու շողաց,
Ինչպես հուրը ալաբաստրի ետևից:

25 Այսպես սիրով վառվեց ոգին Անքիսի,
Ինչպես մեր մեծ Մուսան է մեզ հավաստում,
Երբ նկատեց որդուն դաշտում Եղիպտ:

28 «Ո՛վ իմ զարմիկ, գերաշնորհ դու հոգի,
Որի՞ համար, ինչպես ահա քեզ համար,
Երկու անգամ բացվում է դուռն երկնքի»,—

31 Ասաց լույսն այն. և ես նրան նայեցի,
Ապա հայացքն իմ ուղղեցի տիրուհուս,
Եվ երկուսից էլ հիացած մնացի:

34 Զի տիրուհուս դեմքը այնպես էր փայլում,
Որ ինձ թվաց, թե գտնվում էի ես
Երանության դրախտային բարձունքում:

37 Իսկ այն հոգին, որ իմ ուշքն էր գրավել,
Իր խոսքերին հոդեց խոսքեր այնպես խոր,
Որ ես ոչինչ չէի կարող ըմբռնել:

40 Նա մութ մնաց ոչ թե դիտմամբ, այլ հարկից,
Զի այդ պահին մտքի խոյանքը նրա
Գերիվեր էր մահկանացու մեր մտքից:

43 Երբ թուլացավ թափը մտքի վերացման
Եվ ցածրացան նրա խոսքերը մինչև
Աստիճանը մեր մարդկային ըմբռնման,

46 Այսպես եղավ առաջին բանն իմ լսած.
«Օրհնյալ լինես, Աստված միակ ու երրյակ,
Որ զարմիկիս հանդեպ եղար ողորմած»:

49 Ապա հարեց. «Որդյակ, սրա շնորհիվ,
Որ քեզ թևեր տվեց երկինք ելնելու,
Դու գոհացիր քեզ տեսնելու իմ ազնիվ

52 Ու հին տենչը, որը ծագեց իմ հոգում,
Երբ կարդացի այն մատյանը մեծադիր,
Ուր գրվածը անջնջելի է մնում:

55 Դու գիտես, որ քո խոհերն ինձ են հասնում
Նախավորից, ինչպես թվերը բոլոր
Միավորի ճանաչումից է ծագում:

58 Եվ սակայն դու ինձ չես հարցնում, թե ով եմ,
Որ ավելի քան հոգիներն այս բոլոր,
Քո աչքերին երևում եմ խնդաղեմ:

61 Դու իրավ ես, քանզի այստեղ ամեն ոք
Նայում է այն Հայելու մեջ ցոլացիկ,
Ուր ամեն միտք երևում է նախօրոք:

64 Բայց որպեսզի իմ սերը սուրբ ու վճիռ,
Որով այրվում ու պապակում եմ հավետ,
Ավելի լավ գոհացում տա քո տենչիդ,

67 Թող քո ձայնը վստահ, ազատ, անվարան,
Արտահայտի բաղձանքը և ցարցը քո,
Որոնց համար ունեմ պատրաստ պատասխան»:

70 Այնժամ դեպի Բեատրիչեն դարձա ես.
Նա հասկացավ ու սիրալիր ժպիտով
Ինձ թույլ տվեց արտահայտվել փութապես:

73 Եվ խոսեցի այսպես. «Հենց որ դուք տեսաք
Առաջնագույն հավատարին, ձեր հոգում
Զգացումն ու միտքը դարձան հավասար:

76 Արև-Աստված, որ իր ջերմով ու լույսով
Ձեզ ջերմացրել, լուսավորել է այդպես,
Այդ երկուսն էլ իր մեջ ունի հայն չափով.

79 Բայց մարդկանց մեջ, ձեզ լավ հայտնի պատճառով,
Կամենալն ու կարենալը զուգորդ չեն
Եվ չեն թռչում հանգիստազոր թևերով:

82 Ես այդ բանը ինքս անձամբ եմ զգում,
Եվ հարատաբար ընդունելուդ համար ինձ
Երախտիքս միայն սրտով եմ հայտնում:

85 Այս մանկակը պնդող գոհար կենդանի,
Թախանձագին խնդրում եմ քեզ ես հիմա,
Որ դու դարձնես ինքնությունդ ինձ հայտնի»:

88 «Ես արմատդ եմ, ո՛վ իմ ընձյուղ թանկագին,
Որին այնքան սիրով էի սպասում»,—
Այսպես սկսեց պատասխանել այն հոգին:

91 Այնուհետև ասաց. «Նա որ քեզ տվեց
Ազգանունը, և որ դարից ավելի
Քավարանի նախագոտում պտտվեց,

94 Իմ որդին էր և քո մեծ պապն հարազատ.
Եվ պետք է որ նրա տանջանքը երկար
Դու կրճատես քո գործերով գթառատ:

97 Ֆլորենցիան, հին պարսպով շրջափակ,
Ուր ժամատան զանգերն էին ղողանջում,
Ապրում էր հար խաղաղ, համեստ, անապակ:

100 Նա չգիտեր ոչ մանյակներ, զարդեր ճոխ,
Ոչ հանդերձներ, ապարոշներ զարդարուն,
Ոչ գոտիներ անձը պճնող, պաճուճող:

103 Չէր վախենում հայրն աղջկա ծնունդից,
Քանզի չէին անցնում օժիտ ու հատակ
Ամուսնության համար պատշաճ սահմանից:

106 Մարդաթափուր տներ չէին գտնվում,
Եվ դեռ չկար Սարդանապալ, որ ցույց տար,
Թե ինչեր են խուլ սենյակում կատարվում:

109 Ուչելլատոն Մոնտեմալից չէր անցել,
Իսկ հիմա, որ գերազանցում է շուքով,
Կանցնի նրան և անկումով անարգել:

112 Բելլինչոնե Բերտին շքեղ չէր հագնում,
Իսկ նրա կինն հայելու մոտ անդադար
Երեսներն իր չէր շպարում ու ներկում:

115 Նեոլիներն ու Վեկկիները մեծագով
Իրենց կաշվե պարզ հագուստով գոհ էին,
Իսկ կանայք էլ՝ իրենց թելով, իլիկով:

118 Երջանիկներ։ Ամեն մեկը իր տեղում
Ապահով էր մի շիրիմով, և ոչ ոք
Ֆրանսիայի համար տուն-տեղ չէր թողնում։

121 Հարսն հսկելով օրորոցին մեղմօրոր
Քնացնում էր մանկան լեզվով մանկական,
Որ կազմում է միշտ հրճվանքը հորն ու մոր։

124 Տատն հյուսելով՝ ընտանիքին մի առ մի
Պատմում էր հին առասպելները շրջող
Տրոյայի, Ֆիեզոլի ու Հռոմի։

127 Այն ժամանակ մի Լապո կամ Զանգելլա
Տեսնելն անշուշտ զարմանալի կթվար,
Ինչպես հիմա Կինկինատ կամ Կոռնելիա։

130 Այս կենցաղում խաղաղիկ ու գեղեցիկ,
Այս ապահով ընկերային վիճակում,
Այս համայնքում բարեբախտիկ ու քաղցրիկ

133 Ինձ կյանք տվեց մայրս ծանր երկունքով,
Եվ ապա ձեր եկեղեցում հինավուրց
Կաչչագուիդա անունն առա կնունքով։

136 Մորոնտոն ու Էլիսն եղան ինձ եղբայր.
Ես Պադոսի հովտից վերցրի իմ կնոջ,
Որից եկավ քո ազգանունն ուղղաբար։

139 Ծառայեցի ապա կայսրը Կոնրադին,
Նա ինձ տվեց ասպետության աստիճան,
Հավանելով իմ գործերը սխրագին։

142 Ես նրա հետ կռվեցի այն վատշվեր
Կրոնի դեմ, դավանողները որի
Պապի մեղքով իրավունքն են խլում ձեր։

145 Անդ ընկնելով ձեռքից ցեղի ամբարիշտ,
Ես հրաժեշտ տվի այն սուտ աշխարհին,
Որի սիրուց հոգիներ են պղծվում միշտ,

148 Եվ հասա այս խաղաղությանն երկնային»:

ԵՐԳ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ

Ո՛վ սնոտի ազնվություն մեր արյան,
Եթե քեզնով պարծենում են աշխարհում,
Ուր մեր սերը խեղաթյուրվում է այնքան,

4 Ամենևին չեմ զարմանա այդ բանից.
Չի երկնքում, ուր միտումը չի խեղվում,
Ես էլ մի պահ հպարտացա դրանից:

7 Դու նման ես շուտ կարճացող լոդիկի.
Եվ եթե դու չնորոգվես օր առ օր,
Ժամանակի մկրատը քեզ կկտրի:

10 Այնժամ խոսել սկսեցի ես «դուք»-ով,
Որ գործածվեց նախ և առաջ Հռոմում,
Բայց գործածվեց նվազ երկար տևանքով:

13 Բեատրիչեն, որ քիչ հեռու էր կանգնած,
Ժպտաց, ինչպես նա, ով հազաց, երբ տեսավ
Ջինեվրայի առաջին մեղքը գործած:

16 Ես ասացի. «Դուք իմ հայրն եք թանկագին,
Դուք ինձ ներքին ուժ եք տալիս խոսելու,
Դուք ինձ շատ եք բարձրացնում իմ աչքին:

19 Հոգիս այնքան երջանկությամբ է արբշիռ,
Որ լավ է, որ չի բեկվում ու փշրվում
Հորձանքի տակ իր ցնծության ծայրալիր:

22 Արդ ասացեք, ո՛վ նախահայր իմ քաղցրիկ,
Ովքե՞ր էին ձեր նախնիներն հինավուրց,
Ե՞րբ ծնվեցիք և մանկությունն անցկացրիք:

25 Այն ժամանակ փարախը սուրբ Հովհաննի
Որքա՞ն էր, և որո՞նք էին նրա մեջ
Գերդաստաններն ամենամեծ ու հայտնի»:

28 Ինչպես հուրը սաստկանում է հողմերից,
Այսպես տեսա, որ շողյունը այն հոգու
Ուժեղացավ իմ փաղաքշող խոսքերից:

31 Նա իմ աչքին դարձավ անչափ գեղեցիկ,
Եվ ավելի քաղցր ու քնքուշ մի ձայնով,
Սակայն ոչ մեր բառուբանով ընթացիկ,

34 Ասաց. «Ողջույն ավետելու օրվանից
Մինչև օրն այն, երբ մայրը, որ սուրբ է արդ,
Բեռնաթափվեց և ազատվեց ինձանից,

37 Այս աստղը հինգ հարյուր ութսուն անգամներ
Վերադարձավ նոր ի նորո շողալու
Թաթերի տակ իր Առյուծի զուգընկեր:

40 Իմ նախնիքն ու ես ծնվել ենք այն տեղում,
Որ գտնվում է թաղի մեջ հինավուրց,
Ուր տարեկան ձիարշավներ են լինում:

43 Նախնյացս մասին այսքան կարող եմ ասել.
Թե նրանք ով և որտեղից են եկել՝
Ավելի է հարմար լռել, քան խոսել:

46 Մարսից մինչև Բատիստ թիվը այն անձանց,
Որ զենք կրել կարող էին, կազմում էր
Մեկ հինգերորդն հիմա ապրող բնակչաց:

49 Բայց քաղաքը, որ արդ խառն է Ֆիգգինից,
Չերտալդոյից, Կամպից եկած մարդկանցով,
Այն ժամանակ զերծ էր ամեն խառնուրդից:

52 Լավ կլիներ, որ այդ մարդիկ լինեին
Ձեզնից անջատ, և Գալուցցոն ու Տրեսպիան
Գտնվեին ձեր հեռավոր սահմանին,

55 Քան լինեին ձեր մեջ, և դուք տանեիք
Ագուլյացու կամ Սինյացու պես մարդկանց,
Որ անում են խարդախություն ու կեղծիք:

58 Եթե ճամփից շեղված դասը հոգևոր
Կալներ հանդեպ ժանտկեն մորու չլիներ,
Այլ ազնիվ ու բարի լիներ նման մոր,

61 Ապա նա, ով հարստացել է փողով,
Կանապարեր վերադառնալ Սեմիֆոնտ,
Անդ ուր պապն իր ման էր գալիս մաղախով:

64 Մոնտեմուլոն դեռ կլիներ Կոմսերին.
Ձերկիները կմնային Ակոնում,
Բոնդելմոնտիք էլ Գրիեվում հովտային:

67 Տարբեր տեսակ մարդկանց անվերջ խառնուրդից
Սկսեց քաղաքն աղմասերվել ու տուժել,
Ինչպես մարմինն է տուժում խառն ուտեստից:

70 Եվ կույր ցուլը ավելի շուտ է ընկնում,
Քան կույր գառը, և շատ հաճախ սուրը մեկ
Հինգ սուրերից ավելի լավ է կտրում:

73 Եթե գիտնաս թե, Ուրքիսալն ու Լունին
Ինչպես կորան և թե ինչպես են կորչում
Իրենց հերթին Սինիգալյան ու Կդուզին,

76 Քեզ չի թվա արտասովոր ու նոր բան
Լսելը, թե ազգատոհմեր են կորչում,
Չի քաղաքներն անգամ ունեն մի վախճան:

79 Ինչ որ ձերն է, կրում է սաղմը մահվան,
Ինչպես և դուք, թեև այդ չի երևում
Ամեն բանում, զի կարճ է կյանքը մարդկանց:

82 Եվ ինչպես որ լուսնի երկինքը ծածկում
Ու բացում է ծովափերը փոխնիփոխ,
Այսպես Բախտն էլ Ֆլորենցիան է դարձնում:

85 Մի զարմանար հիմա, ինչ որ ես կասեմ
Մեծատոհմիկ ֆլորենտացոց մասին հին,
Որոնց համբավն արդեն դարձել է նսեմ:

88 Տեսա Ուգի, Ալբերիկի, Օրմանին,
Կատելլինի, Ֆիլիպպի և Գրեչի
Տոհմերն ընկած, որոնք էին անվանի:

91 Սանելլա և Արկա հին ու մեծարգի
Տոհմերի հետ տեսա տոհմերը նաև
Սոլդանյերի, Արդինգի և Բոստիկի:

94 Դարպասի մոտ,— ուր ապրողներն այժմյան
Այնքան նենգ ու դրուժան են, որ շուտով
Կհասցնեն նավը իսպառ կործանման,—

97 Մի ժամանակ ապրում էին Ռավինյանք,
Որոնցից է սերել հայտնի կոմս Գուիդոն
Եվ նրանք, որ անվանվեցին Բելլինչյանք:

100 Պրեսյանց տոհմը կառավարել լավ գիտեր,
Իսկ Գալիգայք իրենց տան մեջ ունեին
Սրի ոսկե դաստապաններ ու կոթեր:

103 Մեծազոր էր Պիլյանց տոհմը, մեծ էին
Զոկիք, Գալլիք, Սակկետտիք և Ֆիֆանտիք,
Եվ նրանք, որ կեղծից ամոթ զգացին:

106 Այն բունն, ուրկից ծնունդ առան Կալֆուչչիք,
Ամրապինդ էր, բազմած էին բարձրագահ
Աթոռներին՝ Արիգուչչիք ու Սիձիք:

109 Օ ի՛նչ հզոր էին նրանք ու հարգի,
Որոնք հիմա կործանված են, և ինչքան
Ֆլորենցիան շենցրին գնդերը ոսկի.

112 Այսպես շենցում էին նախնիքը նրանց,
Որոնք հիմա հենց որ ժամն է դատարկվում,
Հավաքվում ու խրախճանում են անսանձ:

115 Ժպիրն տոհմը, որ ետևից փախչողի
Ժանտանում է և գառան պես հեզանում
Հանդեպ ատամ կամ քսակ ցույց տվողի,

118 Բարձրանում էր իր ստորին վիճակից.
Բայց Ուբերտին Դոնատոյին դուր չեկավ,
Որ աներն իր դարձավ նրանց ազգակից:

121 Կապոնսակկոն եկել ընկել էր Ծուկան
Ֆիեզոլից. քաղաքացի էին լավ
Դարձել նաև Ինֆանգատոն ու Զուդան:

124 Տարօրինակ, բայց ստույգ բան քեզ ասեմ.
Քաղաքամուտ մի դուռը հին պարսպի
Անվանվել է Պերա տոհմիցը նսեմ:

127 Ով կրում է զինանշանը գողտրիկ
Մեծ բարոնի (որի անունն հիշվում է
Սուրբ Թովմասի տոնական օրն երջանիկ),

130 Նրանից է ասպետություն ստացել,
Թեև նա, որ ոսկերիզով այն պատեց,
Ժողովուրդի հետ է այսօր միացել:

133 Ծաղկում էին Իմպորտունիք, Գալտրոտտիք,
Եվ Բորգոյում նրանք հանգիստ կապրեին,
Եթե երբեք չուներային նոր դրացիք:

136 Այն տոհմը, որ փորձանք բերեց ձեր գլխին՝
Արդարացի իր զայրույթի պատճառով,
Եվ վերջ դրեց հաշտ ու խաղաղ ձեր կյանքին,

139 Յուրայնոց հետ հարգված էր բոլորից:
Ո՛վ Բոնդելմոնտ, ինչո՞ւ այլոց դրդումով
Փախուստ տվիր հարսանեկան հանդեսից:

142 Ով տխուր է, հիմա հրճվանք պիտ զգար,
Եթե Էմա գետում խեղդված լինեիր,
Երբ առաջին անգամ քաղաք դու եկար:

145 Բայց հարկ է, որ մի զոհ աներ Ֆլորենցիան
Հին Կամուրջը պահող Մարսի բեկորին,
Երբ օրերն իր խաղաղության վերջացան:

148 Այս և սրանց նման ուրիշ տոհմերով
Ֆլորենցիան իմ ժամանակ ապրում էր
Բոլորովին անդորր, անցավ, անխռով:

151 Ժողովուրդը այնքան փառքով էր օծված
Այն ժամանակ, որ շուշանը նիզակի
Ծայրով երբեք գլխիվայր չէր շուռ տրված,

154 Ոչ էլ կարմրած կոիվներից քաղաքի»:

ԵՐԳ ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ

Ինչպես եկավ Կլիմենի մոտ, անհանգիստ,
Ստուգելու իր լսածը իր մասին
Նա՝ ով որդվոց հարանց հանդեպ դարձրեց խիստ,

4 Այսպես էի ես, և այսպես հասկացված
Իմ տիրուհուց և սրբազան այն հոգուց,
Որ քիչ առաջ ինձ համար էր տեղ փոխած:

7 Այնժամ ասաց ինձ տիրուհիս հոգածու,
«Արտահայտիր քեզ այրող միտքը այնպես,
Որ դա լինի հայտարարը քո հոգու.

10 Ոչ վասնզի դա անհայտ է մեզ համար,
Այլ որպեսզի վարժվես խոսել դու այնպես,
Որ լսողը գոհացում տա քեզ հոժար»:

13 «Ո՛վ նախանձայր, դու այնքան ես իմաստուն,
Որ ինչպես մարդ տեսնում է, որ չի կարող
Եռանկյան մեջ մտնել երկու բթանկյուն,

16 Այնպես տեսնում ես դու դեպքերն ապագա,
Նայելով այն հավերժական Կետի մեջ,
Որտեղ բոլոր ժամանակներն են ներկա:

19 Վիրգիլի հետ մինչ խարձրանում էի ես
Քավարանի մաքրագործող լեռն ի վեր,
Եվ ցածրանում Դժոխքն ի վար տանջակեզ,

22 Իմ ապագա կյանքի մասին խնդրի
Ծանրը խոսքեր, թեև ես միշտ պատրաստ եմ
Ընդդեմ բախտի ամեն տեսակ հարվածի.

25 Ուստի և ես կցանկայի իմանալ,
Թե ինչպիսի չար բախտ է ինձ սպասում.
Նախատեսված նետին հեշտ է դիմանալ»:

28 Այսպես ասա ես ասացի լույս հոգուն,
Եվ ինչպես որ Բեատրիչեն էր ուզել,
Ես պարզեցի նրան խորքն իմ թաքուն:

31 Ոչ խոսքերով մանկամտ ու մթամտաս,
Որոնցից էլ, նախքան մահը Քրիստոսի,
Խաբվում էին հեթանոսներն անզգաստ,

34 Այլ հստակ ու որոշակի խոսքերով
Պատասխանեց ինձ իմ հայրը սիրտուն,
Որ պատած էր բերկրազվարթ իր լույսով.

37 «Որևէ դեպք, որ տեղի է ունենում
Ձեր աշխարհում նյութական ու երկրային,
Հավերժ Մտքին կանխավ հայտնի է լինում,

40 Բայց անհրաժեշտ նա չի դառնում դրանից,
Ինչպես ճանի ընթացքն չի որոշվում
Նրան դիտող ու հետևող հայացքից:

43 Այդտեղից էլ երևում է իմ աչքին
Տեսլապատկերը քո կյանքի ապագա,
Ինչպես տաղվից ձայնն է հասնում ականջին:

46 Ինչպես մեկնեց Հիպպոլիտը Աթենքից
Իր մորուի սադրանքների պատճառով,
Այսպես պետք է դու հեռանաս Ֆլորենտից:

49 Քո ոսոխներն այդ են ուզում ու փնտրում,
Եվ այդ շուտով կիրագործեն հենց այնտեղ,
Ուր Քրիստոսին ամեն օր են վաճառում:

52 Եվ, ինչպես միշտ, ամբողջ մեղքը կընծայվի
Տուժող կողմին, բայց պատիժը վերահաս
Ճշմարտության վկայություն կլինի:

55 Դու կթողնես քեզ սիրելի տեղ ու տուն
Եվ հայրենիք. և մեծագույն ցավն է դա,
Որ աքսորը միշտ պատճառում է մարդուն:

58 Դու կիմանաս, թե ինչ դառն է ու նզով
Հացն օտարի, և թե ինչքան է դժվար
Ելնել, իջնել օտարների սանդուղքով:

61 Բայց այն, ինչ որ քեզ կճնշի ծանրապես,
Կլինի այն ընկերությունը հիմար,
Որի հետ դու աքսորի մեջ կլինես:

64 Անմտությունն ու խոլությունը նրանց
Դու լավ գիտես, բայց ոչ թե դու, այլ նրանք
Կշախշախեն շուտով քունքերը յուրյանց:

67 Նրանք գործքով կապացուցեն հայտնապես,
Որ անբան են, և քեզ պատիվ կլինի,
Որ կազմել ես կուսակցություն ինքըդ քեզ:

70 Քո առաջին ապաստանը աքսորում
Քեզ կտա այն մեծահոգի Լոմբարդցին,
Որ սանդուղքի վրա արծիվ է կրում:

73 Նա կվարվի քեզ հետ այնքան բարեհաճ,
Որ, հակառակ ուրիշների արածի,
Քեզ կաջակցի քո խնդրելուց դեռ առաջ։

76 Դու նրա հետ տեսնելու ես և նրան,
Ով ծնվելիս այնքան ազդվեց այս աստղից,
Որ գործերն իր նշանավոր կդառնան։

79 Նա փոքրության համար դեռ չի նկատվել.
Չի տակավին երկինքները նրա շուրջ
Ընդամենը ինն տարի են պտտվել։

82 Բայց Գասկոնցին դեռ չխաբած Հենրիկին,
Նա ցույց կտա նշաններն իր մեծ հոգու,
Քամահրելով փողն ու գանձերը անգին։

85 Վեհանձնությամբ այնքան աչքի նա կընկնի,
Որ մինչև իսկ թշնամիները նրա
Այդ չեն կարող պահել ծածուկ ու գաղտնի։

88 Դու հույս դիր այդ անձի վրա փառապանծ.
Նրա շնորհիվ վիճակները կփոխվեն
Թե չքավոր և թե հարուստ շատ մարդկանց։

91 Այս բոլորը քո մտքի մեջ թող մնա,
Բայց մի խոսիր...»— և ինձ հայտնեց դեռ բաներ,
Որ լսողը երբևէ չէր հավատա։

94 Ապա հարեց. «Որդի, ահա սրանք են
Մեկնությունը քեզ հայտնված խոսքերի.
Ահա դավերն, որ ոչ շատ անց կգործվեն։

97 Բայց մի ատիր համերկրացոց քո դաժան,
Չի դու կապրես ապագայում այնքան դեռ,
Որ կտեսնես նրանց պատիժը արժան»։

100 Երբ հասկացա, որ այն հոգին սրբազան
Վերջացրել էր հյուսվածքը իր խոսքերի,
Որոնց հենքը տվել էի ես նրան,

103 Սկսեցի խոսել նման այն անձի,
Որ ընկնելով անձկության մեջ դիմում է
Ազնիվ մարդու խորհուրդներին խելացի.

106 «Տեսնում եմ, հայր, թե ժամանակը ինչպես
Սպառնալից վազում է իմ ետևից,
Որպեսզի ինձ հարված հասցնի ծանրապես:

109 Արդ լավ է, որ խոհեմությամբ ես գիտեմ,
Որպեսզի, երբ հայրենիքից զրկեն ինձ,
Իմ սրտի մոտ այլ բաներից չզրկվեմ:

112 Հավետ տխուր ու ցավատանջ աշխարհում
Եվ այն լեռում, որի ծայրից տիրուհիս
Ինձ բարձրացրեց, և այս ու այն երկնքում

115 Ես իմացա բաներ, որոնք եթե ես
Մարդկանց պատմեմ, ապա դրանք շատերին
Կդառնացնեն ու կգրգռեն մեծապես.

118 Իսկ եթե ես ճշմարտությունը ծածկեմ,
Վախենում եմ, որ սերնդոց մեջ գալիք
Իմ անունը և համբավը կկորցնեմ»:

121 Լույսը, որով պարուրված էր հիրավի,
Գանձն իմ գտած, նախ սկսեց շողշողալ,
Ձերթ հայելին՝ ճառագայթներից արևի:

124 Ապա ասաց. «Նա, ում խիղճն է անհանգիստ
Իր կամ այլոց ամոթալի գործերից,
Հարկավ կազդվի քո խոսքերից դառն ու խիստ:

127 Բայց դու հայտնիր համարձակ ու ճշտորեն,
Ինչ որ տեսար ու լսեցիր քո ճամփին.
Թող որ մարդիկ քորեն, որտեղ բոր ունեն:

130 Քո խոսքերը սկզբնապես կնեղեն,
Բայց երբ դրանք լավ յուրացվեն մարդկանցից,
Կենսապարար անդրադարձություն կլինեն:

133 Թող քո ձայնը հնչի ինչպես փոթորիկ,
Եվ հարվածի գագաթները բարձրագույն,
Իսկ քեզ համար դա պատիվ է ոչ փոքրիկ:

136 Խորհիր, որ քեզ ցույց տրվեցին երկնքում,
Լեռան ճամփում և անդնդում ցավալի
Լոկ այն անձինք, որոնք հայտնի են երկրում.

139 Չի լսողը չի համոզվի խոսքերից,
Եթե երբեք օրինակները վերցվեն
Անհայտ ու մութ դեմքերից ու դեպքերից,

142 Եվ կամ եթե փաստարկները որոշ չեն»:

ԵՐԳ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ

Այնժամ առզվեց երանելի այն հոգին
Խոհերի մեջ, իսկ իմ խոհերը շփոթ
Խառնվել էին իմ հույզերին դառնագին:

4 Եվ տիրուհիս, որ ուղեկցում էր ինձ միշտ,
Ասաց. «Դու քեզ հանգիստ պահիր, քանզի մենք
Մոտն ենք նրան, ով մեղմում է ամեն վիշտ»:

7 Ես շուռ եկա նրա ձայնին ջերմ ու նուրբ.
Զանց եմ առնում նկարագրել լույսն այն վառ,
Որ ցոլում էր աչքերի մեջ նրա տուրբ.

10 Ոչ թե միայն լեզուս անզոր է դրան,
Այլև ուղեղս այն չի կարող պատկերել,
Եթե չօգնի մի գերբնական ուժ նրան:

13 Ես այդ մասին լոկ կարող եմ ասել այն,
Որ նայելով իմ տիրուհուն այդ պահին,
Ազատվեցի անձկությունից ամենայն,

16 Մինչև որ Լույսն հավերժական գեղեցկի,
Որ ուղղակի ցոլանում էր նրա մեջ,
Անդրադարձավ և իմ վրա մեղմակի:

19 Նա ինձ ժպտաց ու շշնջաց աղվաձայն.
«Արդ դարձիր և նորից լսիր այն հոգուն.
Դրախտի խիզդն իմ աչքերում չէ միայն»:

22 Ինչպես երբեմն երևում է մեր դեմքին
Մի զգացում այնքան ուժգին ու ցայտուն,
Որ մատնում է մեզ այրող իղձը ներքին,

25 Այսպես ես այն սուրբ հոգու մեջ լուսավետ,
Որին դարձա, նկատեցի հայտնապես,
Որ ուզում էր քիչ էլ խոսել դեռ ինձ հետ:

28 Եվ նա խոսեց. «Այս երկնքում հինգերորդ,
Որ բարձրագույն գագաթից է կյանք առնում
Եվ որ լի է երանությամբ բազմահորդ,

31 Ցնծում են այն հոգիները լուսային,
Որոնք երկրում այնքան եղան անվանի,
Որ շատ հարուստ նյութ կտային Մուսային:

34 Արդ դու դիտիր Խաչը քառյակ թևերով.
Եվ ո՛ր հոգին, որ կանվանեմ ես հիմա,
Արագ կանցնի, ինչպես շանթը ամպերով»:

37 Եվ հենց որ նա Հեսու անունը տվավ,
Տեսա մի լույս խաչի միջով սուրալիս.
Անունը տալն ու տեսնելը մեկ եղավ:

40 Եվ Մակաբե ասելուն պես տեսա ես
Մի ուրիշ լույս, որ, խնծիղից խթանված,
Արագորեն պտտվում էր հոլի պես:

43 Կառլոս Մեծ և Օլանդ անունքը տալուն՝
Աչքս հետևեց երկու լույսի սլացքին,
Ինչպես մարդու աչքը ճայի սուրալուն:

46 Ապա անցան Գուլլելմոն ու Ռենուարդոն
Խաչի միջով, երևացին ինձ նաև
Դուքս Կոֆրեդն ու ասպետ Ռոբերտ Գուիսկարդոն։

49 Հուսկ այն հոգին, որը խոսում էր ինձ հետ,
Խառնվեց մյուս հոգիներին և սկսեց
Հետներն երգել ինչպես երգիչ մի վարպետ։

52 Ես ուղղվեցի իմ տիրուհուն փութապես,
Որպեսզի նա մի խոսքով կամ ակնարկով
Ինձ հայտներ, թե ինչ պետք էի անել ես։

55 Նրա աչքերն այնքան էին վառ ու ջինջ,
Որ այդ պահին նա իր գեղով ու փայլով
Գերիվեր էր, քան իմ տեսած ամեն ինչ։

58 Եվ ինչպես մարդ զգում է, որ օր առ օր
Բարձրանում է բարի գործեր անելով
Եվ ապրում է ցնծություններ նորանոր,

61 Այսպես ի տես իմ տիրուհուն հրաշալի՝
Զգացի, որ բարձրացել եմ նոր երկինք
Եվ լայնացրել իմ պտույտը ավելի։

64 Եվ ինչպես որ դեմքը կնոջ ամոթխած
Կարմրից իսկույն սպիտակի է փոխվում,
Երբ նրանից ամոթի բեռն է ընկած,

67 Այսպես հանկարծ երկնքի գույնը փոխվեց,
Երբ դիտեցի մեղմիկ աստղը վեցերորդ,
Որ ինձ իր մեջ ընդունեց ու ընդգրգեց։

70 Ես տեսա այդ նոր երկնքում խնդագին
Լույսերն հոգվոց սիրո բոցով շողացող,
Որոնք տառեր էին գծում իմ աչքին։

73 Ինչպես ճայերն, երբ հագեցել են լիով,
Գետի ափից վեր են ճախրում սրաթև,
Մերթ շրջանակ, մերթ եռանկյուն կազմելով,

76 Այսպես և այն հոգիները լուսափայլ
Թռչում էին ու օրհներգում, կազմելով
Մերթ D, մերթ I, մերթ L և մերթ տառեր այլ:

79 Առաջ նրանք թռչում էին ու երգում,
Եվ կազմելով ապա մեկն այս տառերից,
Մի պահ անշարժ կանգնում էին ու լռում:

82 Ո՛վ վեհ Թեգաս, որ դարձնում ես փառապանծ
Հանճարներին, որոնք էլ քո շնորհիվ
Ձեռակերտներն հավերժացնում են մարդկանց,

85 Լուսավորիր ինձ քո լույսով մշտացայտ,
Որ կարենամ նկարագրել ես դրանք.
Թող քո ուժը այս տողերում գա ի հայտ:

88 Արդ երեսուն և հինգ տառեր կազմեցին
Լույսերը այն, և ես նրանց դիտեցի
Այն կարգով, որ երևացին իմ աչքին:

91 Նա սկսվեց «Diligite iustitiam»
Երկու բառով և վերջացավ հետևյալ
Երեք բառով՝ «Qui iudicatis terram»:

94 Ապա նրանք վերջին բառի M տառում
Անշարժ կեցան, իսկ Լուսնթագն արծաթյա
Ամբողջովին ոսկեկիտված էր թվում:

97 Եվ ես տեսա, որ M տառի կատարին
Ուրիշ լույսեր իջան և անդ կանգ առան,
Օրհներգելով իրենց ձգող Արդարին:

100 Ինչպես վառված երկու փայտի բախումից
Անթվելի մանրը կայծեր են ցայտում,
Տեղիք տալով գուշակությանց միամիտ,

103 Այսպես M-ից անթիվ լույսեր ցայտեցին
Եվ կանգ առան ոմանք բարձրը, ոմանք ցած,
Ըստ այն կարգի, որ նշված է ամենքին:

106 Երբ ամեն լույս իր հատուկ տեղը կանգնեց,
Ես պարզ տեսա, որ լույսերից այդ բոլոր
Մի արծիվի գլուխն ու վիզը կազմվեց։

109 Դա պատկերողն այն Վարպետն է անթերի,
Որից է միշտ բխում ուժն այն արարիչ,
Որ կազմում է էությունը գոյերի։

112 Մյուս լույսերը, որ գոհ էին երևում,
Մ-ից կազմված շուշանի մեջ մնալով,
Լրացրին արծվի պատկերն այս երկնում։

115 Ո՛վ պայծառ աստղ, գոհարներդ վերնային
Ինձ ցույց տվին, թե քո բարի ներգործման
Արգասիքն է արդարությունն երկրային։

118 Արդ հայցում եմ քեզ զորություն ու շարժում
Տվող Տիրոջ, որ նա նայի այն ծխին,
Որ քո պայծառ շողյուններն է մթագնում։

121 Թող նա նորից խարազանի այն անձանց,
Որոնք առ ու ծախ են անում տաճարում,
Որ հրաշքով ու արյամբ է հաստատված։

124 Աղոթեցեք, ո՛վ երկնային ոգիներ,
Նրանց համար, որոնք շեղված են ճամփից,
Հետևելով օրինակին վատշվեր։

127 Մի ժամանակ սրով էին մարտնչում,
Արդ կռվում են մարդկանց հացից զրկելով,
Որ ոչ ոքի գթած Հայրը չի մերժում։

130 Սակայն դու, որ բանադրում ես, որ չնչես,
Գիտցիր՝ Պետրոսն ու Պողոսը, որ մեռան
Այգու համար քո ավերած, դեռ ողջ են։

133 Դու կարող ես ասել. «Այնպես սեր ունեմ
Դեպի նա, ով մենակ ապրեց ամայքում
Եվ գլխատվեց պարի համար ճոխաճեմ,

136 Որ ոչ Պետրոս, ոչ Պողոս չեմ ճանաչում»:

ԵՐԳ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ

Իմ առջևն էր, թևերը լայն բացած արդ,
Պատկերն արծվի, որ կազմրված էր հիշյալ
Հոգվոց հույլից երանելի ու զվարթ:

4 Ամեն մեկը կարմիր հակինթ էր թվում,
Որտեղ ասես ցոլքն էր ընկած արևի,
Եվ այդ ցոլքը իմ աչքերին էր զարնում:

7 Եվ այն, ինչ ես այժմ ուզում եմ պատկերել,
Ոչ մարդու միտքն է հղացել երբևէ,
Ոչ ձայնն ասել, ոչ էլ թանաքն է գրել:

10 Ես տեսա և լսեցի իսկ, թե ինչպես
Արծվի կտուցն արտաբերեց «ես» և «իմ»:
Թեև մտքում «մենք» և «մեր» էր իրապես:

13 «Արդարությանս ու գթությանդս համար,—
Սկսեց խոսել,— ես բարձրացա այս փառքին,
Որին հասնել լոկ ցանկությամբ չէ հնար:

16 Երկրում թողի ես այնպիսի հիշատակ,
Որ չարերն իսկ գովաբանում են թեև,
Բայց ինձանից չեն վերցնում օրինակ»:

19 Ինչպես վառված մեծաքանակ ածուխից
Դուրս է գալիս մի ջերմություն սոսկական,
Այսպես մի ձայն էր դուրս գալիս այն արծվից:

22 Ես ասացի. «Ո՛վ հոգիներ վեհաշուք,
Որ մշտաշող ձեր ցնծությունը ծաղկուն
Մի ձայնով եք արտահայտում միայն դուք,

25 Հագեցրեք արդ իմ քաղցը՝ անհատնում,
Որից այնքան տառապեցի ես երկար,
Չգտնելով ոչ մի սնունդ աշխարհում:

28 Գիտեմ, եթե արքայության մեջ համայն
Ցոլանում է արդարությունն Աստուծո,
Ապա ձեր մեջ էլ կերևա որոշ այն:

31 Դուք գիտեք, որ ես պատրաստ եմ լսել ձեզ,
Դուք գիտեք, որ մի տարակույս կա իմ մեջ,
Որի լուծման կարիք ունեմ վաղուց ես»:

34 Ինչպես բազեն, երբ գլխանոցն են հանում,
Իր թևերն է թափահարում խայտանքից,
Ցույց տալով որ սավառնել է ցանկանում,

37 Այսպես խայտաց այն արծիվը երկնային՝
Կազմավորված հոգիներից խնկարկու,
Եվ երգեց երգ, որ անհայտ էր աշխարհին:

40 Ապա ասաց. «Նա, ով գծեց կարկինով
Շրջանակը տիեզերքի և այնտեղ
Լցրեց բազում հայտ ու անհայտ բաներով,

43 Կարողացավ իր միտքն այնտեղ դրոշմել
Այնպես խորունկ, որ նա գլեց ու անցավ
Այն ամենից, ինչ որ ինքն էր ստեղծել:

46 Դրա փաստը այն գոռոզն է առաջին,
Որ, թեպետև բարձր է ամեն էակից,
Գահավիժեց, չսպասելով իր ահին:

49 Նրանից ցած էակները բոլոր այլ
Փոքր անոթ են ընդունելու այն Բարին,
Որ չունի վերջ ու սահման մի որոշյալ:

52 Արդ ձեր միտքը, որ համարյա թե միայն
Մի Նշույլն է աստվածային այն Մտքի,
Որով լի են արարածներն ամենայն,

55 Անկարող է լինել այնքան զորավոր,
Որ գիտակցի, թե Նախավորը վեր է
Իրեն հասու սահմաններից հունավոր:

58 Եվ լինելով սահմանափակ մտովի,
Դուք տեսնում եք Արդարությունը հավերժ,
Ինչպես աչքն է տեսնում անհունը ծովի:

61 Նա սոսկ ափին նրա հատակն է տեսնում,
Իսկ բաց ծովում այլևս չի տեսնում այն,
Չի ալուցքը այնտեղ շատ է խորանում:

64 Լույս է լոկ այն, որ բխում է Հավերժից,
Իսկ մնացած ամենայն ինչ խավար է,
Մարմնի մթարք կամ մարմնի թույն ժանտալից:

67 Հիմա արդեն քեզ պարզ եղավ բավական
Խորհուրդը խոր արդարության կենդանի,
Որի մասին խորհում էիր դու այնքան:

70 Դու կասեիր. «Հնդկաստանում մարդ չկա,
Որ Քրիստոսի մասին խոսի ու լսի
Եվ կամ նրա մասին գրի ու կարդա.

73 Բայց նա ամբողջ իր խոհերով ու կամքով
Միշտ եղել է բարեբարո և կյանքում
Չի մեղանչել ոչ իր գործով, ոչ խոսքով:

76 Նա անկնունք և անհավատ է մեռնում.
Արդա՞ր բան է դատապարտելը նրան.
Մի՞թե մեղք է, եթե նա չի հավատում»:

79 Արդ ո՞վ ես դու, որ դատավոր ես դառնում
Եվ դատում ես հազար մղոնի հեռվից,
Երբ քո աչքը թիզից այն կողմ չի տեսնում:

82 Անշուշտ, ինձ պես մտածողը խոր ու նուրբ,
Տարակույսի շատ պատճառներ կունենար,
Եթե նրան չառաջնորդեր Գիրքը Սուրբ:

85 Ո՛վ երկրային անբաներ, ո՛վ մտքեր բութ,
Աստծու կամքը, որ բարի է ըստ ինքյան,
Չի շեղվի իր նպատակից բարեգութ:

88 Արդարն այն է, որ Նրան է կամակցում,
Նա չի դնում էակների մեջ խորհր,
Որովհետև ինքն է նրանց ստեղծում»:

91 Ինչպես ճայը, ձագուկներին սնելով,
Բույնի վրա պտտվում է ու ճախրում,
Ձագն էլ նրան հետևում է աչքերով,

94 Այսպես ճախրեց այն արծիվը սրբազան,
Նրան կազմող հոգիներից խթանված,
Այսպես աչքով հետևեցի ես նրան:

97 Նա ճախրելով բարբառում էր մեծագոչ,
«Ինչպես մութ են իմ խոսքերը քեզ համար,
Այսպես մութ են դատաստանները Տիրոջ»:

100 Երբ կանգ առան հոգիները հոգնաթիվ,
Միշտ պահելով կերպարանքը այն արծվի,
Որ Հռոմին բերեց հարգանք ու պատիվ,

103 Նա բարբառեց նորից. «Վայրն այս բերկրալից
Ձեռավ նա, ով չհավատաց Քրիստոսին՝
Առաջ և կամ հետո նրա մահվանից:

106 Սակայն շատեր, որ դիմում են Քրիստոսին,
Վերջում նրան նվազ մոտիկ կլինեն,
Քան նրանք, որ չեն ճանաչել Քիրստոսին:

109 Հաբեշն անգամ կարհամարհի այդ մարդկանց,
Երբ որ նրանք երկու մասի կջոկվեն,
Մի մասն հավետ դարձած հարուստ, մյուսն՝
աղքատ:

112 Պարսիկները ձեր տերերին ի՞նչ կասեն,
Երբ բաց տեսնեն այն մատյանը, որի մեջ
Նրանց բոլոր վատ գործերը գրված են:

115 Անդ կերևա Ալբերտի գործն իրական,
Եվ գրիչն էլ կարձանագրի դա շուտով,
Թե ինչպես է կործանվելու Պրագան:

118 Անդ կերևա անձկությունը Փարիզի,
Երբ կեղծ դրամ կհատի նա, ով հետո
Զոհ կգնա խեթկումներից վարազի:

121 Անդ կերևա տիրության տենչը անհագ
Սկովտիացու և անգլիացու խելագար,
Որ չկեցան սահմանների մեջ ներփակ:

124 Դուք կտեսնեք կենցաղը մեղկ ու պագշոտ
Իսպանացու և այն բոհեմ արքայի,
Որ ամենայն լավին մնաց անծանոթ:

127 Դուք կտեսնեք նշանակված I նիշով
Լավ գործերը Կաղոտանի արքայի,
Իսկ վատերը՝ նշանակված M նիշով:

130 Դուք կտեսնեք անարգությունն անպատկառ
Այն մարդու, որ տերն է կղզուն հրաբորբ,
Ուր Անքիսը ավարտեց կյանքն իր երկար:

133 Եվ ցույց տալու համար՝ ինչքան է նա վատ,
Նրա մասին հապավներով կգրվի,
Որ քիչ տեղում նշանակվեն մեղքեր շատ:

136 Եվ կերևան արարքները ախտածին
Նրա եղբոր ու հորեղբոր, որ իրենց
Ազնիվ զարմն ու զույգ թագերը պղծեցին:

139 Եվ կերևան գործերը պիղծ ու տխեղծ
Պորտուգալցու, նորվեգցու և այն սերբի,
Որ Վենետկի արծաթ դրամը կեղծեց:

142 Օ՛, երջանիկ է Հունգարիան, եթե է՛լ
Չկեղեքվի։ Երջանիկ է Նավարրան,
Եթե լեռով կարողանա պաշտպանվել։

145 Բայց իբրև վատ նախանշան այս բանի,
Դեռ հեծում են Ֆամակոստան, Նիկոսիան
Կրունկի տակ իրենց վայրի գազանի,

148 Որ մյուսներին ամեն ինչով է նման»։

ԵՐԳ ՔՍԱՆԵՐՈՐԴ

Երբ աշխարհը լուսավորող լուսատուն
Մայր է մտնում հորիզոնից մեր երկրի,
Եվ ամենուր լույսն է դառնում նվաղուն,

4 Երկինքը, որ նրանով էր լոկ շողում,
Պապղում է հանկարծ բազում աստղերով,
Որոնց մեջ լոկ միակ մի լույս է ցոլում։

7 Ես հիշեցի այս վիճակը երկնքի,
Երբոր լռեց օրհնյալ կտուցը նրա,
Որ դրոշն է կայսրության և կայսրերի.

10 Չի հոգիներն այն լուսազարդ ու զվարթ,
Է՛լ ավելի պայծառացած, սկսեցին
Երգել երգեր, որոնք ես չեմ հիշում արդ։

13 Օ՛, քաղցրը սեր, ուրախությամբ ջերմացած,
Ինչքա՛ն էիր վառվում նրանց խմբերգում,
Որ միայն սուրբ խոհերից էր ներշնչված։

16 Երբ հոգիներն այն թանկագին ու շենշող,
Որոնցով էր լցված գունդը վեցերորդ,
Դադարեցրին իրենց համերգն առինքնող,

19 Ես լսեցի կարկաչն, ասես, գետակի,
Որ հոսում է ժայռերն ի վար մաքրաջինջ,
Ցուցադրելով առատությունն իր ակի:

22 Եվ ինչպես որ տավիղը ձայն է հանում
Բռնատեղից, և կամ ինչպես սրնգի
Ծակտիքներից շունչը նվագ է դառնում,

25 Այսպես առանց հապաղելու՝ կարկաչն այն
Վեր բարձրացավ պարանոցով արծիվի,
Եվ այնտեղ էլ անմիջապես դարձավ ձայն:

28 Ապա ձայնն այն խոսքի ձևով դուրս եկավ
Իր կտուցից, ինչպես սիրտն էր ուզում իմ,
Ուր խոսքերն այն դրոշմեցի ես անձկավ:

31 «Իմ այն մասը, որ տեսնում է,— խոսեց նա,—
Եվ անքթիթ տոկում տեսքին արևի,
Հարկ է, որ դու դարձնես դեռի առարկա.

34 Իմ պատկերը կազմող բոլոր լույսերից
Նրանք, որոնք կազմում են աչքն իմ շողուն,
Պայծառագույնն են մնացած բոլորից:

37 Այն որ բիբի նման շողում է մեջտեղ,
Սրբազնագույն Հոգու երգիչը եղավ,
Որ փոխադրեց տապանակը տեղից տեղ:

40 Արդ նա գիտե արժանիքը իր երգի,
Քան որում դա արդյունք էր իր ներշնչման,
Որ ստացավ ի տրիտուր իր ձիրքի:

43 Հոնքիս աղեղը կազմող այն հինգ հոգուց
Նա, ով մոտ է իմ կտուցին, այն անձն է,
Որ սփոփեց այրում՝ զրկված իր որդուց:

46 Արդ նա գիտե, թե ինչքան է նստում թանկ
Քրիստոսին չհետևելն, երբ փորձով
Ճանաչում է քաղցը կյանքն ու դառը կյանք:

49 Հաջորդը, որ հոնք-աղեղիս մեջ այս կոր
Գրավում է քիչ ավելի բարձրը տեղ,
Հապաղեցրեց իր մահն անկեղծ աղոթքով:

52 Արդ նա գիտե, որ դատաստանն երկնավոր
Չի փոփոխվի, թեև երբեմն աղոթքով
Վաղվան ձգվի կատարվելիքը այսօր:

55 Մյուսը պապին տալու համար Հռոմը մեծ,
Լոկ լավ մտքով, թեև արդյունքն եղավ վատ,
Օրենքներն ու ինձ Բյուզանդիոն փոխադրեց:

58 Արդ նա գիտե, թե ինչպես իր լավ մտքից
Առաջ եկած չարիքն իրեն վատ չեղավ,
Բայց աշխարհը անչափ տուժեց դրանից:

61 Իսկ նա, որին հոնքիս ներքև ես տեսնում,
Գուլիելմոն է, ում ողբում է երկիրն այն,
Որին Կառլոսն ու Ֆեդերիկն են լացնում:

64 Արդ նա գիտե՝ ինչպես երկինքը արդար
Սեր է տածում հանդեպ արդար արքային,
Եվ դա ցույց է տալիս տեսքով իր փարփառ:

67 Ո՛վ կկարծեր ձեր աշխարհում մոլորյալ,
Որ տրոյացի Ռիֆեոսը կլիներ
Հինգերորդը այս լույսերից սրբափայլ:

70 Արդ նա գիտե շնորհի մասին երկնային
Շատ ավելի, քան որ գիտեն աշխարհում,
Թեև ամեն ինչ չիմանա հիմնովին»:

73 Արտույտն ինչպես, որ, օդի մեջ բարձրացած,
Նախ դայլայլում և ապա լուռ է մնում,
Իր վերջացրած գեղգեղանքից գոհացած,

76 Այսպես լռեց ու գոհ թվաց պատկերն այն
Արդարության, որի համար ամեն ինչ
Կատարվում է վերին կամքի համաձայն:

79 Թեև կասկածս երևում էր հայտնապես,
Այնպես ինչպես գույնը միջով ապակու,
Բայց այլևս չէի կարող լռել ես,

82 Եվ հարցրի դրդված ներքին մղումից,
«Այդ երկուսը ինչպե՞ս է որ փրկվել են»:
Մյուս հոգիներն ուրախացան իմ հարցից:

85 Արծիվն օրհնյալ իր աչքերը ավելի
Ծողացնելով պատասխանեց ինձ այնժամ,
Որ չմնամ զարմանքի մեջ տանջալի.

88 «Տեսնում եմ, որ հավատում ես եղածին,
Բայց չգիտես, թե դա ինչպես է եղել.
Հավատում ես, բայց հասու չես դիպվածին:

91 Քո վարմունքով դու նման ես այն մարդուն,
Որ լավ գիտե լոկ անունը իրերի,
Բայց չգիտե էությունը նրանց բուն:

94 **Արքայությունն երկնից** ձեռք են միշտ բերում
Բուռը սիրո և վառ հույսի զորությամբ,
Որոնք Աստծու կամեությանն են հաղթում.

97 Բայց ոչ ինչպես մարդուն՝ բռնությամբ,
Այլ հաղթում են, զի նա ուզում է հաղթվել.
Եվ հաղթված՝ նա հաղթում է բարությամբ:

100 Այն երկու լույս հոգիները իմ հոնքի
Մեծ զարմանք են քեզ պատճառում, զի նրանց
Դու տեսնում ես գրգարանում երկնքի:

103 Նրանք մարմնից ելան իբրև քրիստոնյա,
Ոչ հեթանոս, հավատալով որ Քրիստոս
Կրելու է չարչարանքներ բազմօրյա:

106 Մեկը կյանքի կոչվեց խորքից Դժոխքի
(Որտեղ չկա դեպի բարին վերադարձ)
Լոկ շնորհիվ վառ հույսի ու աղոթքի,

109 Այն վառ հույսի ու աղոթքի առ Աստված,
Որով միայն նա կարող էր փրկվել
Եվ կատարել դեպի բարին շրջադարձ։

112 Խոսքիս նյութը եղող հոգին փառապանծ,
Կարճ ժամանակ միանալով իր մարմնին,
Հավտաց նրան, ով փրկել է շատ մարդկանց։

115 Եվ հավատն այդ սիրով այնպես ջերմացավ,
Որ, երբ որ նա երկրորդ անգամ վախճանվեց,
Արժանացավ գալու Դրախտն այս անցավ։

118 Իսկ մյուս հոգին, մի երկնային շնորհքով,
Որ բխում է այնպիսի խոր Ակունքից,
Որ նկատել անկարելի է աչքով,

121 Զգտեց միայն արդարության, ուղղության,
Եվ Աստված էլ, իբրև շնորհ հավելյալ
Պարգեց նրան խորհուրդը մեր փրկության։

124 Նա հավատաց և այդ պահից սկսյալ
Հանդուրժեց պիղծ հավատը հեթանոս
Ու կշտամբեց մարդկանց բարքերը եղծյալ։

127 Երեք կանայք, որ տեսար մոտն անվի աջ,
Ծառայեցին նրան իբրև մի կնունք,
Կնունքից դեռ հազարամյակ մի առաջ։

130 Ո՛վ մեծ խորհուրդ, որքան հեռու է ընկած
Քո արմատը մշուշապատ աչքերից,
Որ չեն տեսնում աստվածությունն երկնակաց։

133 Մահկանացու մարդիկ, զգույշ դատեցեք,
Վասնզի մենք, որ տեսնում ենք Աստուծուն,
Դեռ ամենայն ընտրյալներին չգիտենք։

136 Մենք գոհ ենք մեր այս գիտությամբ անկատար.
Մեր բարիքն է լոկ կամենալ այն, ինչ որ
Կամենում է Աստուծո կամքը արդար»։

139 Այսպես պատկերն արդարության արծվենի
Բաց անելու համար միտքն իմ կարճատես,
Ինձ դաս տվեց հաճելի ու պիտանի։

142 Եվ ինչպես որ տավղահարը ախրալի
Իր նվագով ձայնակցում է լավ երգչին,
Եվ դրանով երգը դարձնում դյուրալի,

145 Այսպես երկու լույս-հոգիները օրհնյալ
Բոցկլտալով ու շողալով միասին,
Ինչպես մեկտեղ թարթող աչքեր հրափայլ,

148 Ընկերակցում էին արծվի խոսքերին։

ԵՐԳ ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ

Իմ հայացքն ու հոգին արդեն իսկ նորից
Ուղղվել էին դեպի չքնաղ տիրուհիս,
Ինձ խզելով ուրիշ ամեն խոհերից։

4 Նա չէր ժպտում։ «Եթե ժպտամ,— ինձ ասավ,—
Դու կդառնաս Սեմելեի ճիշտ նման,
Երբ նա ամբողջ իր էությամբ մոխրացավ։

7 Քանզի եթե գեղեցկությունս ռոշնական
(Որ երկինք ան երկինք ինչքան բարձրանանք,
Շողշողում ու շլացնում է այնքան),

10 Չափ չունենա, ապա և նա կշողա
Այն աստիճան, որ մարմնական աչքը քո
Նրա փայլին ամենևին չի տոկա։

13 Մենք յոթերորդ պայծառ երկինքը ելանք,
Որ, ընկնելով Առյուծի տակ, նրա հետ
Ցած է հղում իր շողերը բազմերանգ։

16 Դու մտքովդդ քո աչքերին հետևիր,
Եվ քեզ հստակ կցոլանա պատկերն այն,
Որ կերևա այս երկնքում լուսալիր»։

19 Ով որ գիտնար, թե ինչպիսի հաճույքով
Նայում էի իմ տիրուհուն երկնագեղ,
Կհասկանար այն զգացումը, որով

22 Պատրաստ էի կատարելու ես հլու
Ուշագրավ նոր ոլորտում երկնային
Այն, ինչ նա ինձ կթելադրեր անելու։

25 Այս երկնքում, որ դառնում է երկրի շուրջ
Եվ կրում է անունը այն արքայի,
Որի օրոք ոչ մի չարիք չկար լուրջ,

28 Տեսա սանդուղք մի ոսկեգույն, լուսաշող,
Այնքան բարձր ու ամբարձաձիգ դեպ երկինք,
Որ մինչև ծայրն աչքս հասնել չէր կարող։

31 Տեսա, որ այն սանդղից իջնում էին վար
Լույս-հոգիներ այնքան անթիվ, որ կարծես
Այդտեղից են ծագում լույսերն աստղավառ։

34 Ճայերն ինչպես, երբ օրը նոր է ծագած,
Թնազդաբար սլանում են տարմերով,
Որ տաքացնեն իրենց թևերը սառած,

37 Ապա մի տարմն անվերադարձ հեռանում,
Երկրորդ տարմը վերադառնում է նորից,
Իսկ երրորդը պտտվում է նույն տեղում։

40 Այսպես արին լույս-հոգիները հիշյալ,
Եվ իջնելով միասնաբար վերևից
Հասան սանդղի աստիճանին որոշյալ։

43 Եվ այն հոգին, որ մեզ մոտիկ էր կանգնել,
Այնքան շողաց, որ ես մտքումս ասացի.
«Տեսնում եմ, որ ուզում է ինձ գոհացնել»։

46 Բայց տիրուհիս, որ կերպն ու պահը գիտեր
Իմ խոսելու և լռելու, լուռ մնաց,
Իսկ իմ լռելն ակամայից ի դեպ էր:

49 Տեսնելով որ մնում էի այդպես լուռ,
Իմ տիրուհին ուղղվեց դեպ ինձ և ասաց.
«Արդ փափագդդ հայտնիր նրան և հարց տուր»:

52 Եվ ես նրան. «Արժանիքով այնպես չեմ,
Որ լինեմ քո պատասխանին արժանի,
Սակայն ի սեր իմ տիրուհու երկնաճեմ,

55 Ո՛վ դու հոգի երանելի ու պայծառ,
Խնդրում եմ ինձ պատասխանիր, թե ինչու
Հատկապես դու ինձ մոտ եկար ու կեցար:

58 Ասա նաև, թե ինչու այս ոլորտում
Լռել է այն դրախտային երգն անուշ,
Որ լսվում էր ստորակա մարզերում»:

61 «Դու թույլ ականջ ու աչք ունես,— նա ասաց,—
Այս ոլորտում այն պատճառով չեն երգում,
Ինչ պատճառով որ տիրուհիդ չժպտաց:

64 Ես ցած իջա այս սրբազան սանդուղքով
Նրա համար, որ քեզ հաճույք պատճառեմ
Իմ խոսքերով և լուսափայլ իմ տեսքով:

67 Դա չի բխում մասնահատուկ իմ սիրուց,
Չի բոլորն էլ այստեղ այրվում են սիրով,
Ինչպես հայտնի է դա նրանց շողալուց:

70 Բայց վեհ սերը, որ ծառա է դարձնում մեզ
Այն խորհուրդին, որ տիեզերքն է վարում,
Ինձ՝ բերել է այստեղ, ինչպես տեսնում ես»:

73 Ես ասացի. «Արդ ինձ պարզ է, սուրբ հոգի,
Թե ինչպես աստ ինքնաբուխ սերը բավ է՝
Հետևելու կամքին Հավերժ էակի:

76 Սակայն մի բան չեմ հասկանում ես դյուրին,
Ինչո՞ւ համար ընկերներիդ մեջ բազում
Միմիայն դու սահմանվեցիր այդ դերին»:

79 Ես դեռ չէի ավարտել հարցս արծարծ,
Երբ այն լուսեղ հոգին սկսեց ինք իր շուրջ
Պտույտ գործել երկանի պես շուտադարձ.

82 Եվ պատասխան տվեց սիրո հրայրքով.
«Աստվածային լույսը հեղում է վրաս,
Թափանցելով ինձ պարուրող շողերով:

85 Եվ այդ ուժը միանալով իմ մտքին,
Ինձ այնքան է վերացնում ինձանից,
Որ հասցնում է մինչև նրա Ակունքին:

88 Այդտեղից է բխում խինդը խանդավառ,
Եվ այն լույսը, որով շողում եմ այստեղ,
Համազոր է հայեցությանն իմ պայծառ:

91 Բայց ամենից պայծառատես մեր հոգին
Կամ ամենից խոր տեսանող սերովբեն
Անկարող է գոհացում տալ քո հարցին.

94 Զի քո հարցը այնքան շատ է խորանում
Անդունդի մեջ հավերժական խորհուրդի,
Որ մարդկային մտքից հեռու է մնում:

97 Մահկանացու աշխարհը երբ դու դառնաս,
Ասա մարդկանց, որ թող ոչ ոք չփորձի
Լուծել նման խորհուրդներ խոր ու անհաս:

100 Միտքը այստեղ լույս է, այնտեղ՝ մթասքող,
Արդ դատիր, թե ինչպես կարող են երկրում
Անել այն, ինչ երկնում անել չեն կարող»:

103 Նրա խոսքերն ընդհատեցի ընդհուպ ես,
Եվ այդ հարցը արդեն մի կողմ թողնելով,
Նրան հարցրի, թե ինքն ո՛վ էր իսկապես:

106 «Ոչ շատ հեռու քո հայրենի քաղաքից,
Ծովափերի միջև երկու՝ կամ լեռներ
Այնքան բարձր, որ անցնում են ամպերից,

109 Եվ կազմում են Կատրիա կոչված մի բարձունք,
Որի ներքև կա մի մենիկ վանատուն,
Ուր կար միայն աստվածային պաշտամունք»:

112 Այսպես սկսեց նա բարբառել երրորդ հեղ.
Ապա հարեց. «Ծառայությանն Աստուծո
Այնպես էի ինձ նվիրել ես այնտեղ,

115 Որ, անվելով միայն ձեթով ճաշերով,
Ցուրտն ու տաքը տանում էի հեշտությամբ,
Եվ գոհանում հայեցական խոհերով:

118 Այդ վանքը, որ միշտ տալիս էր Դրախտին
Առատ պտուղ, հիմա այնքան է ամուլ,
Որ դա շուտով պարզ կդառնա ամենքին:

121 Ես կոչվել եմ այնտեղ Պիեր Դամիանո
Եվ մեղապարտ Պետրոս կոչվել այն վանքում,
Որ գտնվում է ծովափին Ադրիո:

124 Ինձ ապրելու քիչ ժամանակ էր մնում,
Երբ ակամա ընդունեցի խույրը այն,
Որ միշտ վատից վատագույնին է անցնում:

127 Սիմոն Կեփասն ու Անոթը Ընտրության
Միշտ քայլել են ուտաքարիկ ու քաղցած,
Իրենց անուղղն անելով ըստ պատահման:

130 Իսկ այսօրվա հովիվները հոգևոր
Ուզում են, որ իրենց տանեն դեսպակով
Եվ բարձրացնեն փեշերն իրենց ծալքավոր.

133 Կամ շուրջառով ծածկեն իրենց հեծած ձին,
Իբրև երկու անասուն մեկ մորթի տակ.
Եվ այս բոլորն հանդուրժում ես, Աստված իմ»:

136 Այս խոսքերից շատ հոգիներ բոցալի
Բազմտանեներով ցած իջան ու հիո եկան,
Եվ հիո գալով բորբոքվեցին ավելի:

139 Ապա նրանք այն հոգու շուրջ կանգ առան
Եվ ճչացին ձայնով այնպես ահագին,
Որ չի լսվել մեր աշխարհում ձայն ենման.

142 Խոսք չլսվեց, ճիչը այնքան էր ուժգին:

ԵՐԳ ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Զարմանքից ու ահից դարձա մերձավոր
Իմ տիրուհուն, ինչպես փոքրիկ երեխան
Դիմում է դեպ վստահելի գիրկը մոր.

4 Եվ նա մոր պես, որի ձայնից փրաղաքուշ
Սիրտ է առնում իր զավակը տագնապած,
Ինձ ուղերձեց այս խոսքերը սրտաբուժ.

7 «Զգիտե՞ս, որ երկնքում ես հիմա դու,
Զգիտե՞ս, որ այստեղ աշխարհ է ամեն ինչ
Եվ ամեն ինչ քիչում սիրուց կենդանատու:

10 Արդ դատիր, թե ինչքան հուզեր պիտի քեզ
Իմ ժպիտն ու հոգիների երգը սուրբ,
Եթե մի ճիչ տպավորեց քեզ այդպես:

13 Թե լսեիր ճիչի բառերը նրանց,
Կիմանայիր այն դատապարտանը արդար,
Որ անպայման դու կտեսնես չմեռած:

16 Երկնի սուրը ոչ շատ արագ է կարում,
Ոչ շատ դանդաղ, բացի նրա կարծիքից,
Ով անձկությամբ կամ վախով է սպասում:

19 Բայց հիմա դու մյուսների կողմ դարձիր,
Եվ հայացքդ եթե ուղղես դեպ այն կողմ,
Դու կտեսնես այլ հոգիներ լուսածիր»:

22 Ես շուտ տվի իմ հայացքը երկյուղած
Եվ անդ տեսա լույս հոգիներ բազմաթիվ,
Որ զարդարված էին շողքով փոխադարձ:

25 Նման էի նրան, ով իր տենչը սուր
Ջսպում է և չի հանդգնում հարցեր տալ,
Վախենալով, որ նեղություն կտա զուր:

28 Եվ ամենից շողշողունը ու մեծդին
Այն թանկագին գոհարներից մոտ եկավ,
Որպեսզի շուտ գոհացում տա իմ իղձին:

31 Ապա ասաց. «Եթե որ դու տեսնեիր
Այն սերը վառ, որ այրում է մեզ այստեղ,
Քո մտածումն անշուշտ հայտնի կանեիր:

34 Բայց որպեսզի դու չուշանաս հասնելու
Նպատակիդ վսեմ, կտամ պատասխան
Քո հարցին, որ վարանում ես հայտնելու:

37 Կասինոյի լեռան բագինն երբեմնի
Հանախում էր ժողովուրդը մոլորյալ
Եվ քիչ հակված դեպ հավատը կենդանի:

40 Ես նա եմ, որ առաջինը տարա անդ
Նրա անունն, ով նոր հավատ էր բերել,
Բարձրացնելու մեզ մեր կյանքից հնավանդ:

43 Վերուստ վրաս այնքան շնորհ էր իջել,
Որ շատերին դարձի բերի ամբարիշտ
Պաշտամունքից, որով աշխարհ էր տարվել:

46 Այս մյուսները հայեցողներ են նման,
Բոցավառված աստվածային այն սիրով,
Որ ծնում է հույզեր, գործեր սրբազան:

49 Այստեղ Մակկարն ու Ռոմալդն են բարեծին.
Այստեղ են ողջ իմ եղբայրները, որոնք
Հոգով, մարմնով վանքերի մեջ փակվեցին»:

52 Եվ ես. «Սերը, որ դու բերում ես ի հայտ
Քո խոսքերով, և երևույթը բարի,
Որ տեսնում եմ շողյունների մեջ ձեր այդ,

55 Բաց արին իմ վստահությունն հանդեպ ձեզ
Այնպես, ինչպես ճառագայթներն արևի
Բաց են անում վարդի թերթերը պես-պես:

58 Սակայն, հայր իմ, ստույգ ասա, ինձ խնդրեմ,
Ես կարո՞ղ եմ այնքան շնորհ ստանալ,
Որ իսկական քո պատկերով քեզ տեսնեմ»:

61 Եվ նա. «Եղբայր, կկատարվի իղձը քո
Ամենաբարձր երկնագնդում. այնտեղ են
Բավարարվում բոլոր իղձերը արդո:

64 Այնտեղ լրման ու ավարտման է հասնում
Ամեն բաղձանք, այնտեղ ամեն մի մասնիկ
Հավետ անշարժ ու անփոփոխ է մնում:

67 Երկնագունդն այդ ոչ տեղ ունի, ոչ շարժում.
Մեր սանդուղքը բարձրանում է մինչև անդ,
Դրա համար նրա ծայրը չես տեսնում:

70 Այս սանդուղքը մինչև գագաթն հեռավոր
Տեսավ Հակոբ Նահապետը, երբ նրան
Երևաց այն՝ հրեշտակներով բեռնավոր:

73 Հիմա ոչ ոք չի բարձրանում այս սանդղով,
Իսկ իմ ուխտի վանականները երկրում
Զբաղված են միայն թղթեր տողելով:

76 Այն վանքերն, ուր ծաղկում էին սուրբ բարքեր,
Արդ որջեր են, սքեմներն էլ վանական
Լոկ դարձել են վատ ալյուրով լի պարկեր:

79 Վաշխը այնքան ատելի չէ երկնքին,
Որքան բաշխը հատույթների վանական,
Որ խեղում է մոնազների հենց հոգին:

82 Ինչ որ ունի եկեղեցին իբր ավանդ,
Պատկանում է աղքատներին աղցավոր,
Ոչ կղերին կամ լոքերին մանավանդ:

85 Այնքան եղկ ու մեղկ է բնույթը մարդու,
Որ լավ սկիզբն ավելի կարճ է տևում,
Քան պտկելուց մինչև պտղելը բարդու:

88 Պետրոսն սկսեց առանց ոսկու, արծաթի,
Եվ սկսեցի աղոթքներով, պասերով,
Ֆրանցիսկն էլ սկսեց կյանքով աղքատի:

91 Թե բաղդատես բարվոք սկիզբը նրանց
Այն ուղու հետ, ուր հաշորդներն են հասել,
Կտեսնես, որ ճերմակը սև է դարձած:

94 Սակայն սրանց դարձի քերելը այնքան
Մեծ հրաշք չէ, որքան հրաշքն այն, որով
Եվ քաշվեցին Կարմիր ծովն ու Հորդանան»:

97 Այսպես խոսեց և իր խմբին միացավ.
Ապա ամբողջ խումբը ի մի հավաքվեց
Եվ պտտուքող հողմի նման բարձրացավ:

100 Իմ տիրուհին այնժամ նրանց ետևից
Ինձ վեր մղեց այն ասանդուղքով երկնաձիգ,
Մի ուժով, որ գերիվեր էր իմ ուժից:

103 Երկրում ոչ ոք իր ուժերով բնական
Չի բարձրացել շարժմամբ այնպես սրընթաց,
Որ կարենար հավասարվել իմ շարժման:

106 Երանի թե ես տեսնեի, ընթերցող,
Փառքը երկնի, ուր հասնելու համար ես
Զոչացել եմ իմ մեղքերը ծանրացող.

109 Հրի միջից դու չես քաշի մատը քո
Այնպես արագ, ինչպես արագ ես հասա
Աստղահոյլն այն, որ գալիս է Ցլից հետո:

112 Ո՛վ ջինջ աստղեր, ո՛վ վառ լույսեր դուք անշեջ,
Զեզնից եմ ես անտարակույս ստացել
Մեծ կամ փոքրը հանճարը, որ կա իմ մեջ:

115 Զեզ հետ ծագում և ձեզ հետ էր մայր մտնում
Ստեղծողը մահկանացու կյանքերի,
Երբ ես ծնունդ առա Տռական աշխարհում:

118 Եվ երբ որ ինձ շնորհ արվեց ելնելու
Այն երկինքը, որի հետ եք պտտվում,
Ինձ վիճակվեց ձեր հույլի մեջ ընկնելու:

121 Հիմա ձեզ եմ դիմում հոգով երկյուղած,
Որպեսզի ձեր ներգործությունն ստանամ
Կատարելու դժվար քայլն ինձ մնացած:

124 «Դու բարձրագույն երկնին այնքան մոտեցար,—
Ասաց այնժամ Բեատրիչեն,— որ պետք է
Քո հայացքը լինի վճիտ ու պայծառ:

127 Սակայն քանի դու դեռ այնտեղ չես հասել,
Մի ակնթարթ նայիր ներքև և տես, թե
Քո ոտքի տակ ինչքան աշխարհ ես անցել,

130 Որպեսզի դու կարողանաս գոհ սրտով
Ներկայանալ հաղթանակի բանակին,
Որ ահա քեզ երևալու է շուտով»:

133 Այնժամ ես յոթ երկինքներին նայեցի,
Իսկ երկիրն ինձ այնքան ճղճիմ երևաց,
Որ նրա այդ խղճուկ տեսքից ժպտացի:

136 Եվ լիովին համամիտ եմ հիմա ես
Նրանց հետ, որ բանի տեղ չեն դնում այն
Եվ խորհում են երկնի մասին մշտապես:

139 Ներքև տեսա Լատոնայի վառ աղջկան,
Առանց սակայն այն բծերի, որոնք ես
Վերագրեցի նոսր ու ստվար խտության:

142 Ես դիմացա որդուդ դեմքին, Հիպերիոն,
Եվ տեսա թե ինչպես նրա շուրջբոլոր
Պտույտ էին գործում Մայան ու Դիոն:

145 Ապա տեսա Յուպիտերը մեղմարար
Հոր և որդու միջև, և ինձ պարզ եղավ,
Թե ինչու են սրանք տեղեր փոխում հար:

148 Այսպես տեսա ողջ երկինքները յոթնյակ
Իրենց ստույգ արագությամբ, մեծությամբ
Եվ միջակա տարածությամբ բովանդակ:

151 Մշտահոլով աստղահույլից Երկվորյակ
Տեսա երկիրն իր սարերով, ձորերով,
Որտեղ մարդիկ այնքան դարձել են վայրագ:

154 Ապա դարձա նորից դեմքին գեղաթով:

ԵՐԳ ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ

Ինչպես թռչունն, ոստերի մեջ ծվարած,
Իր ձագերի բույնի մոտ է անցկացնում
Ողջ գիշերը, երբ աշխարհն է խավարած,

4 Թե տեսնելու նրանց դեմքերն անձկալի,
Թե ճարելու նրանց համար ուտելիք,
Մի ծանոր գործ, սակայն այնքան հաճելի,

7 Եվ վաղ ժամին ճյուղի վրա է թառում
Ու ըղձակաթ սպասում է արևին,
Պիշ նայելով, թե այգը երբ է բացվում,—

10 Այսպես կանգնած սպասում էր տիրունիս,
Հայացքն ուղղած դեպի այն կողմն երկնքի,
Ուր արևը դանդաղընթաց է գալիս։

13 Ես տեսնելով նրան այդպես մտասույզ,
Նմանվեցի այն մարդուն, որ անձկությամբ
Սպասում է մի նոր բանի բարեհոլոս։

16 Սակայն անցավ շատ կարճատև ժամանակ
Սպասելուց մինչև պահն այն ցանկալի,
Երբ երկինքը լուսավորվեց բովանդակ։

19 Բեատրիչեն ասաց. «Հիմա կտեսնես
Սուրբ ընտրանին Քրիստոսի հաղթական.
Անավասիկ հիմա կգա ասպարեզ»։

22 Նրա դեմքը բոցավառվում էր կարծես,
Եվ աչքերը այնպես փայլում բերկրանքից,
Որ լռությամբ ստիպված եմ անցնել ես։

25 Ինչպես Տրիվիան լիալրման օրերում
Պսպղում է Նիմֆաների մեջ հավերժ,
Որոնք երկնի կամարի զարդն են կազմում,

28 Այսպես տեսա լույսերի մեջ բազմազան,
Մի վառ արև, որ շողում էր նրանց մեջ,
Ինչպես մերը, աստղերի մեջ այլազան։

31 Այդ փառահեղ Էությունից ակնառու
Ճառագայթում էր մի լույս այնքան փողփողուն,
Որ աչքերս անզոր էին տոկալու։

34 Բեատրիչե, առաջնորդ իմ քաղցրանուշ։
Նա ինձ ասաց. «Դա մի շողյուն է, որին
Ի զորու չէ հաղթահարել ոչ մի ուժ։

37 Դրա մեջ է Միտքն ու Ուժը վեհաձին,
Որ երկնի ու երկրի միջև անցք բացավ,
Որին մարդիկ այնքան երկար տենչացին»։

40 Ինչպես շանթը, ծավալվելով շատ արագ,
Ամպի միջից դուրս է ժայթքում ուժգնաթափ,
Եվ ցած իջնում իր բնությանն հակառակ,

43 Այսպես միտքս, գերազանցելով վայելքից,
Դուրս եկավ իր սահմանաներից բնական,
Եվ չիմացավ, թե ինչ եղավ այն պահից:

46 «Բաց աչքերդ և ինձ նայիր վերստին.
Դու այնպիսի բաներ տեսար քո աչքով,
Որ կարող ես հիմա տոկալ իմ ժպտին»:

49 Ես այն մարդու նման էի ճիշտ դարձել,
Որ ուշքի է գալիս տեսած տեսիլքից,
Բայց մոռացած՝ զուր է ճգնում այն հիշել,

52 Երբ լսեցի այդ առաջարկն ուղղված ինձ,
Արժան այնքան երախտիքի անմոռաց,
Որ չի ջնջվի հիշողության մատյանից:

55 Եթե բոլոր պոետներն ինձ օգնեին,
Որոնց Պոլիմն ու քույրերը մյուս բոլոր
Ամենաքաղցր իրենց կաթով սնեցին,

58 Չէի հասնի ճշմարտության մասնիկին,
Երգելով այն ժպիտը սուրբ ու չքնաղ,
Որ շողում էր նրա դեմքին խնդագին:

61 Այդ քանի դր, ես Դրպիտոն եմ պատկերում,
Սուրբ պոեմս պետք է ոստում կատարի,
Ինչպես նա, ով ճամփան փակված է գտնում:

64 Արդեն ցլուքը դժվարին ու դժնդակ
Այնքան ծանր է մահկանացու ուսերին,
Որ ամոթ չէ, եթե դողամ նրա տակ:

67 Ուղին, որով հանդուգնն նավս է անցնում,
Հարմար չէ ոչ փոքրաձավալ մակույկին,
Ոչ նավորդին, որ իր ուժն է խնայում:

70 «Ինչո՞ւ դեմքիս սիրահարված ես այնքան,
Որ չես նայում Քրիստոսի շողերի
Ներքո ծաղկող այս պարտեզին դյութական:

73 Այնտեղ է վարդն, որի մեջ Բանն Աստուծո
Մարմին առավ, այնտեղ են և շուշաններն,
Որոնց բույրով բացվեց ուղին հավատո»:

76 Այսպես ասաց Բեատրիչեն, և ես, որ
Պատրաստ էի նրա կոչին անսալու,
Պիշ նայեցի այն պարտեզին լուսավոր:

79 Ինչպես երկրում մերթ տեսել եմ աչքերով
Ծաղկուն մի մարգ՝ ամբողջովին ողողված
Ամպը ճեղքած արևային շողերով,

82 Այսպես տեսա այնտեղ բազում հոգիներ,
Լուսավորված վերուստ իջնող շողերով,
Որոնց աղբյուրն անհնար էր ինձ տեսնել:

85 Ո՛վ բարի ուժ, որ շողացիր այդպես վառ,
Դու բարձրացար, որպեսզի ես կարենամ
Վերատանալ տեսողությունն իմ պայծառ:

88 Այն ծաղիկը, որ ակնապիկեց տիրուհիս,
Եվ որին ես ոգեկոչում եմ հավետ,
Իր վառ լույսով հաստատակեալ էր հոգիս:

91 Հենց որ պարզվեց իմ աչքերին զուգական
Պայծառությունն ու մեծությունը նրա,
Որ երկնում ու երկրում հաղթական,

94 Երկնի խորքից մի ջահ իջավ ասպարեզ,
Որ դառնալով, պտտվելով ընդոծոլով,
Շրջապատեց նրան պսակ մի որպես:

97 Երկրում հնչող մի քաղցրավաչ մեղեդի,
Ունակ մարդու հոգին համակ դյութելու,
Թվալու էր նման ամպի որոտի,

100 Բաղդատությամբ հրեշտակային այն երգի,
Որով ջանը փառաբանեց գոհարին,
Որ ամենից թանկագին զարդն էր երկնի։

103 «Հրեշտակային սերն ու ոգին եմ բարի,
Որ դառնում եմ էակի շուրջ երջանիկ,
Որ իր ծոցում կրեց փրկիչն աշխարհի,

106 Եվ կդառնամ, ո՛վ թագուհի երկնային,
Մինչև որ դու ելնես որդուդ ետևից,
Եվ քո մուտքով պճնես երկինքը վերին»։

109 Ահա այսպես վերջանում էր երգը այն,
Իսկ մյուս բոլոր հոգիները լուսազարդ
Մարիամ անունն էին կրկնում միաձայն։

112 Կամար կազմող երկնագունդը տիեզերքի,
Որ լինելով բարձրադիրը բոլորից,
Աստծու շնչով ներգործվում է ուղղակի,

115 Իր կորությամբ այնքան հեռու էր մեզնից,
Որ այնտեղից, ուր գտնվում էի ես,
Նրա տեսքը տեսանելի չէր դեռ ինձ։

118 Բայց նայվածքս բավական ուժ չունեցավ
Հետևելու լուսապսակ թագուհուն,
Որ ետևից որդու վերև բարձրացավ։

121 Մանուկն ինչպես, երբ սնուցվել է կաթով,
Իր թևերը դեպի մայրն է երկարում,
Թելադրված խանդաղակաթ, ջերմ սիրով,

124 Այսպես այն լույս-հոգիները մի առ մի
Վեր համբարձան, հայտնելով այն սերը սուրբ,
Որ սնուցում էին հանդեպ Մարիամի։

127 Ապա նրանք անշարժ կեցան իմ դիմաց,
Օրհնելով այնպես **«Երկնից թագուհի»**,
Որի հմայքն ես տակավին չեմ մոռցած։

130 Որքան ունեն հարստություն լիառատ
Հոգիներն այն, որոնք եղան աշխարհում
Սերմնացաններ գործերի լավ, անարատ:

133 Այստեղ ապրում և այստեղ են վայելում
Այն գանձերը, որոնք գնով զրկանքի
Ձեռք բերվեցին բաբելոնյան աքսորում:

136 Աստ տոնում է իր հաղթանակը հավետ
Աստուծո և Մարիամի վեհ որդյակի
Հովանու տակ և հին ու նոր արքոց հետ

139 Նա, ում ձեռքն են բանալիներն այդ փառքի:

ԵՐԳ ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ

«Ո՛վ կոչեցյալք օրհնյալ Գառի ընթրիքի,
Ուր այնպիսի սնունդ եք դուք ստանում,
Որ ձեր քաղցը հագեցնում եք լիուլի:

4 Եթե կանխավ սա Աստուծո շնորհիվ
Ճաշակում է փշրանքը ձեր սեղանի,
Դեռ չավարտած կյանքի ընթացքը լրիվ,

7 Հաշվի առեք նրա պապակն անհատնում
Եվ գոհացրեք. դուք խմում եք այն Անկից,
Ուրկից նրա մտածումներն են բխում»:

10 Այսպես խոսեց Բեատրիչեն ոգևոր,
Եվ հոգիներն սկսեցին պտտվել,
Բոցկլտալով աստղերի պես գիսավոր:

13 Եվ ինչպես որ անիվներն են պտտվում
Ժամացույցի, բայց պտտվում են այնպես,
Որ մեկն՝ անշարժ, մյուսը շարժուն է թվում,

16 Այսպես իրենց ոչ միակերպ պտույտով
Շարժվում էին պարախմբերն այն հոգվոց,
Առավել կամ նվազ արագ ընթացքով։

19 Իսկ մի խմբից առավել վեհ, ջերմեռանդ,
Դուրս եկավ մի երանելի այնքան վառ,
Որ նրա պես պայծառություն չկար անդ։

22 Երեք անգամ նա տիրուհուս շուրջ դարձավ,
Երգելով մի այնպիսի երգ երկնային,
Որ չեմ կարող պատկերացնել ես քնավ։

25 Ուստի պետք է դա զանց առնեմ ես այստեղ,
Քանզի տալու համար պատկերը դրա,
Խոսքը պետք է լինի անչափ գունագեղ։

28 «Դվ սուրբ քույր իմ, դու միայն քո խանդակաթ
Սիրո ուժով ինձ հանում ես այն խմբից,
Որի հետ ես պտտվում եմ անընդհատ»։

31 Կանգ առնելով լուսահոգին այն օրհնյալ,
Արտաբերեց այս խոսքերը ոգեշունչ,
Դիմելով դեպ իմ տիրուհին հիազմայլ։

34 Եվ տիրուհիս՝ «Ո՛վ դու մեծ այր փառալից,
Որին Տերը բանալիները հանձնեց,
Ցած բերելու այս բարձունքից ցնծալից,

37 Քանիր սրան հարցերում ծանր ու թեթև
Էությանն շուրջ այն հավատի, որով դու
Ծովի վրա քայլում էիր անդեղն։

40 Որ նա ունի ճշմարիտ սեր, հույս, հավատ,
Գաղտնիք չէ քեզ, զի դա տեսնում ես այնտեղ,
Ուր ամեն ինչ երևում է բացահայտ։

43 Բայց քանի որ արքայությունն այս երկնի
Ձեռք է բերվում լոկ հավատով ճշմարիտ,
Թող նա խոսի և նրա փառքն հռչակի»։

46 Աշակերտը ինչպես լռին ու հլու
Սպասում է իր ուսուցչի հարցերին,
Փաստարկելու համար և ոչ վճռելու,

49 Այսպես և ես զինված ամեն փաստարկով,
Պատրաստ էի պատասխաններն իմ տալու
Այդորինակ մի քննիչի փառագով:

52 «Լավ քրիստոնյա, ասա, խոսիր բացահայտ,
Հավատն ի՞նչ է»: Ես բարձրացրի գլուխն իմ
Դեպի լույսն այն, ուրկից ձայնն էր գալիս այդ:

55 Ապա դարձա իմ տիրուհուն ուղեկից.
Նա նշանով ինձ հասկացրեց, որ հիմա
Հարկ է զեղեմ հյութը ներքին ակունքից:

58 «Եթե պետք է իմ հավատը ճշմարիտ
Խոստովանեմ նախամարտկիդ վեհագույն,
Ապա ես քեզ կարտահայտվեմ աներկմիտ,—

61 Ասացի ես:— Հայր իմ, ինչպես ճիշտ գրեց
Քո եղբայրը, որը քեզ հետ միասին
Հռոմն ուղիղ ճանապարհի մեջ դրեց,

64 Հավատն հիմքն է ամեն բանի հուսացված
Եվ փաստարկը չերևացող բաների.
Սա է նրա էությունը անկասկած»:

67 Եվ նա ասաց. «Դու շիտակ ես մտածում,
Եթե լավ ես հասկանում, թե ինչու նա
Հավատը հիմք ու փաստարկ է համարում»:

70 Ես ասացի. «Խորհուրդները իրերի,
Որ ինձ այստեղ երկնքում են երևում,
Այնքան մութ են մարդկանց համար աշխարհի,

73 Որ նրանց գոյն հավատի մեջ է միայն,
Որի վրա հիմնված է հույսը վեհ.
Դրանից էլ հիմքի բնույթ ունի այն:

76 Եվ մենք պետք է դատենք ըստ այդ հավատքի
Գոյի մասին խորհուրդների անմատույց,
Դրանից էլ բնույթ ունի փաստարկի»:

79 Եվ նա ասաց. «Եթե ամեն ինչ այսպես
Պարզ ու հստակ հասկանալին աշխարհում,
Չէր ունենա սոփեստությունն ասպարեզ»:

82 Այսպես ոգեց հուրը սիրո հավաստի,
Հետո հարեց. «Բավական լավ խոսեցիր
Էության և արժեքի շուրջ հավատի:

85 Բայց ասա, թե դու քո հոգում այն ունե՞ս»:
Ես ասացի. «Այո, ունեմ լիուլի,
Եվ այդ մասին ոչ մի կասկած չունեմ ես»:

88 Եվ նա ասաց խորքից լույսի իր պայծառ.
«Որտեղի՞ց քեզ այդ գոհարը թանկագին,
Որը հիմքն է ամեն գործի բարերար»:

91 Այնժամ նրան ես ասացի. «Սուրբ Հոգու
Շունչը առատ, որ սփռված է բոլոր
Էջերի մեջ Մատյանների Սուրբ երկու,

94 Մի փաստարկ է, որ այնպիսի մեծ ուժով
Հաստատում է հարկն ու հարգը հավատի,
Որ փաստերն այլ զուր են թվում նրա քով»:

97 Եվ նա ասաց. «Սուրբ Մատյանները երկու,
Որ այսպիսի հետևության քեզ բերին,
Ինչո՞ւ Աստծուց ներշնչված ես գտնում դու»:

100 Ես ասացի. «Ապացույցը այդ բանի
Հրաշքներն են, որոնք վեր են բնության
Միջոցներից և ուժերից կենդանի»:

103 Պատասխանեց. «Ո՞վ է դրանք հավաստում:
Հենց այդ երկու Մատյանները սրբազան,
Որոնք միայն դրանց մասին են փաստում»:

106 Եվ ես. «Եթե աշխարհն առանց հրաշքի
Քրիստոնեացավ, դա այնպիսի հրաշք է,
Որ այլ փաստերն երևում են փանաքի.

109 Զի դու աղքատ ու ծոմ մտար ասպարեզ
Բարի սերմը սերմանելու այնտեղ, ուր
Նախ այգի էր, իսկ արդ դարձել է երեզ»:

112 Երբ լռեցի, հոգիների սուրբ դասում
«Զքեզ, Աստուած, գովաբանեմ» երգն հնչեց
Մի ձայնով որ միայն երկնում են լսում:

115 Եվ հոգևոր այն իշխանը, որ կարգին
Քնել էր ինձ հարցերի շուրջ հավատի
Ու ինձ հասցրել եզրափակիչ կետերին,

118 Շարունակեց. «Սուրբ շնորհը լուսատու
Մինչև այստեղ լուսավորեց միտքը քո,
Որ կարենաս պարտ ու պատշաճ դատել դու,

121 Եվ ես գոհ եմ քո պատասխան-խոսքերից.
Սակայն ի՞նչն է քո հավատի առարկան,
Եվ քաղել ես դու ինչպիսի՞ աղբյուրից»:

124 «Հայր սուրբ, դու, որ տեսանող ես աննման,
Եվ որ երկրում հավատացիր դու այնպես,
Որ ընկերիցդ առաջ իջար գերեզման,—

127 Ասացի ես,— արդ ուզում ես, որ հայտնեմ,
Թե ի՛նչն է բուն առարկան իմ հավատի,
Եվ ո՛րտեղից այդ հավատը ես ունեմ:

130 Պատասխանեմ. ես հավատում եմ Աստծուն
Միակ, հավերժ, որ երկինքներն է շարժում,
Եվ սիրով ու բարությամբ է աղեցուն:

133 Այդ հավատիս ապացույցները չեն լոկ
Բնական ու բնազանցական, այլ նաև
Ճշմարտությունն այն, որ հայտնել են իրոք

136 Վեհ Մովսեսը, մարգարեքն ու սաղմոսներ,
Ավետարանն ու հենց դուք, որ գրեցիք,
Երբ Սուրբ Հոգին լուսավորեց միտքը ձեր:

139 Հավատում եմ երեք հավերժ անձերի,
Որոնք մեկ ու երրյակ էակ են կազմում,
Որին «է» և «են» կցվում են անթերի:

142 Աստվածության այս խորհուրդը խորիմաստ
Ավետարանն իր մասերով այլևայլ
Դրոշմել է իմ մտքի մեջ բարեբաստ:

145 Սա է հիմքը, սա է կայծը այն անշեջ,
Որ, աճելով, դառնում է բոց կենդանի
Եվ զերթ աստղը երկնում՝ շողում է իմ մեջ»:

148 Ինչպես տերը, երբ առնում է մի լավ լուր,
Ցնծությունից գրկում է իր ծառային,
Հենց որ արդեն նա մնում է մունջ ու լուռ,

151 Այսպես հենց որ ես լռություն պահեցի,
Երեք անգամ շուրջը դարձավ, օրհնեց ինձ
Այն լույս հոգին, որի դրդմամբ խոսեցի,—

154 Այնքան գոհ էր նա թվում իմ խոսքերից:

ԵՐԳ ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ

Եթե մի օր այս պոեմը սրբազան,
Որին երկինքն ու երկիրը ձեռք տվին,
Եվ ինձ արժեց շատ տարիներ տքնաջան,

4 Մեղմի ոխը, ոչ ինձ վանեց հայրենի
Այն փարախից, ուր քնեցի որպես գառ
Հակառակորդ գայլերի մեջ վայրենի,

7 Այնժամ իբրև պոետ այնտեղ կդառնամ
Այլ հասակով ու հոչակով և դափնին
Մկրտությանս ավազանում կստանամ։

10 Հավատն այն, որ մեզ դարձնում է կամակից
Աստվածության, ես ստացա հենց այնտեղ,
Եվ Պետրոսն էլ դրա համար օրհնեց ինձ։

13 Ապա դեպ մեզ շարժվեց մի լույս առանձին
Այն օղակի միջից, ուրկից ելել էր
Քրիստոսի փոխանորդը առաջին։

16 Տիրուհիս ինձ այնժամ ասաց ցնծաձայն։
«Նայիր, նայիր, ահա իշխանն հոգևոր,
Որի համար այցելում են Գալիցիան»։

19 Այնպես ինչպես մի աղավնի թառելով
Ընկերոջ մոտ՝ նրա հանդեպ հայտնում է
Սեր ու գորով, պտտվելով, մնչելով,

22 Այսպես մեկը իշխանաներից այն պայծառ
Ջերմ ընդունեց մյուս իշխանին, գովելով
Այն սնունդը, որ ջամբում է իրենց հար։

25 Երբ վերջացան ողջույնները փոխադարձ,
Ամեն մեկը շլացնելու ատիճան,
Ծողշողաց ու լռին կանգնեց իմ դիմաց։

28 Բեատրիչեն այնժամ ասաց ժպտալի.
«Ո՛վ պանծալի հոգի, դու որ գրեցիր
Վեհանձնության մասին երկնից արքայի,

31 Քնիր սրան հույսի մասին դու մի քիչ.
Դու գիտես, որ եղար նշանը դրա,
Երբ երեքիդ ընտրեց Հիսուսը փրկիչ»։

34 «Սրտով արի ու կորովի դու մնա.
Ով գա այստեղ մահկանացու աշխարհից,
Հարկ է, որ մեր ճանանչներից զորանա»։

37 Երկրորդ հոգուց այս խրախուչսն ինձ տրվեց.
Եվ հպյացքըս ես ուղղեցի վեհերին,
Որոնց լույսը ինձ նախապես շլացրեց:

40 «Մեր վեհափառ Տերը թույլ է տվել քեզ,
Որ դու դեռ ողջ՝ գաս իր սրահը ներքին
Եվ այնտեղ իր իշխաններին հանդիպես;

43 Ու տեսնելով այս բուն պալատը վերին,
Ամրապնդես քո և այլոց մեջ հույսն այն,
Որից երկրում սեր է ծագում առ բարին:

46 Արդ ասա ինձ՝ ի՞նչ է հույսը և ի՞նչպես
Քո հոգու մեջ այն ծագում է ու ծաղկում»:
Այսպես հարեց երկրորդ հոգին լուսատես:

49 Եվ ողորմած իմ տիրուհին, որ այնքան
Վսեմական բարձունքներն էր ինձ հանել,
Իմ փոխարեն այսպես տվեց պատասխան.

52 «Քրիստոնեից համընդհանուր աշխարհում
Ոչ ոք չունի այնքան շատ հույս, որքան սա,
Ինչպես գրված է դա երկնի մատյանում:

55 Ուստի սրան շնորհ տրվեց մասնավոր
Եգիպտոսից Երուսաղեմ երթալու՝
Դեռ չավարտված իր պայքարը երկրավոր:

58 Մյուս կետերը, որ դու հարցրիր հեզաբար,
Որպեսզի նա հիմք ունենա պատմելու,
Թե հույսն ինչքան հաճելի է քեզ համար,

61 Այդ հարցերին ինքը կտա պատասխան,
Քանզի դրանք դժվարին ու կնճռոտ չեն,
Եվ Աստուծո շնորհն օգնի թող նրան»:

64 Իբր աշակերտ, որ վստահ ու համարձակ
Պատմում է իր իմացածը ուսուցչին,
Որ ցույց տա իր գիտելիքը բովանդակ,

67 Ասացի. «Հույսն սպասումն է ապագա
Ստույգ փառքի, որին ծնունդ են տալիս
Երկնի շնորհն ու արժանիքը առկա:

70 Այդ լույսը ինձ շատ աստղերից է գալիս.
Բայց իմ սրտում այն ծորողը առաջին
Եղավ վսեմ օրհներգիչը Բարձրյալի:

73 Իր օրհներգում նա ասում է. «Թող հուսան
Ի քեզ նրանք, որ քո անունը գիտեն»:
Հավատացյալք կա՞ն, որոնք դա չիմանան:

76 Դու էլ Թադեոսդ համակեցիր ինձ հույսով,
Այնպես որ ես դրանով եմ տոգորված,
Եվ սիրտն այլոց ողողում եմ ձեր լույսով»:

79 Մինչդեռ ահա այսպես էի խոսում ես,
Լուսահոգին թրթռում էր ու շողում
Լուսաթրթիռ, փաղփուն փայլակ մի որպես:

82 Ապա ասաց. «Սերը, որով այրվում եմ
Հանդեպ հույսի, որ ուղեկցեց ինձ կյանքում
Մինչև վերջին իմ մարտն և մահը դժխեմ,

85 Ինձ մղում է հոժարակամ քեզ հարցնել,
Թե ինչ է քո տածած հույսի առարկան,
Որ ի վերուստ քեզ համար է խոստացվել»:

88 Ես ասացի. «Կտակարանն հին ու նոր
Ցույց են տալիս այն նպատակը, որին
Նկրտում են հոգիները բարեշնորհ:

91 Արդ Եսային ասում է, որ ամեն ոք
Հագնելու է երկու հանդերձ երկնքում
Եվ ապրելու այնտեղ առոք ու փառոք:

94 Քո եղբայրը այս հայտնությունն ավելի
Լավ է պարզում, երբ խոսում է սպիտակ
Հանդերձների մասին հոգվոց ցնծալի»:

97 Երբ վերջացրի այս խոսքերը պարզաբան,
Մեր վերևում հնչեց **«Ի քեզ յուսացին»**,
Որին ամբողջ խումբը տվեց պատասխան:

100 Հուսկ նրանց մեջ մի լույս շողաց այնպես վառ,
Որ նման աստղ եթե լիներ Խեցգետնում,
Ձմռան ամսում չէր լինի օր մի խավար:

103 Օրիորդն ինչպես վեր է կենում պարելու,
Լոկ անելու համար պատիվ նոր հարսին,
Ոչ թե իրեն ցուցադրելու, սիգալու,

106 Այսպես լույսն այդ մատչեց մյուս երկուսին,
Որոնք մղված իրենց սիրուց խանդավառ,
Երգում էին ու կաքավում միասին:

109 Նա նրանց հետ մեկտեղ երգեց ու պարեց,
Իսկ տիրուհիս լուռ ու անշարժ հարսի պես
Իր հայացքը նրանց վրա բևեռեց:

112 «Սա նա է, որ իր գլուխը հանգչեցրեց՝
Հավալուսնի կրծքին, և որ նրանից,
Մի՛ մեծագույն հանձնառություն ընդունեց»:

115 Այսպես ասաց ինձ տիրուհիս անբասիր,
Բայց խոսելով և խոսելուց հետո դեռ
Չդադարեց նրանց նայել ուշադիր:

118 Ինչպես նա, ով ճիգ ու ջանք է գործ դնում
Արեգակի խավարումը տեսնելու
Եվ նայելով հանդերձ ոչինչ չի տեսնում,

121 Այսպես եղա լույսից հոգու բարեբաստ:
Սա ինձ ասաց. «Ինչո՞ւ ես քեզ կուրացնում.
Դու ճգնում ես տեսնել այն, ինչ չկա աստ:

124 Մարմինս երկրում արդ հող է ու կլինի
Մյուսների հետ, քանի այստեղ թիվը մեր
Վերուստ նշված քանակության չի հասնի:

127 Այս երջանիկ վայրը ելան սոսկապես
Երկու էակ իրենց կրկնակ հանդերձով
Եվ այս մասին ձեր աշխարհում կպատմես»:

130 Այս խոսքերից՝ պարը հոգվոց լուսազգյաց
Դադար առավ և նրա հետ միասին
Նրանց խմբերգն երեք ձայնից կազմված,

133 Այնպես, ինչպես խոնջենքից կամ վտանգից
Խուսափելու համար թիերը ջրում
Կանգ են առնում նավապետի սուլոցից:

136 Օ՜, ինչ հուզում ես ապրեցի ներքնապես,
Երբ շուռ գալով դեպ իմ չքնաղ տիրուհին,
Չկարեցա նրան տեսնել, թեև ես

139 Իր մոտ էի և երջանիկ լիովին:

ԵՐԳ ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ

Կուրանալուց մինչ վախենում էի ես,
Այն վառ լույսից, որ ինձ այդպես շլացրեց,
Ուշագրավ մի ձայն ելավ փոթապես,

4 Ինձ ասելով. «Քանի դու դեռ չես գտել
Իմ պատճառով կորցրած լույսը աչքերիդ,
Կարող ես դա մտքիդ լույսով փոխարինել:

7 Ուրեմն ասա՝ ո՞ւր է ձգտում քո հոգին.
Իմացիր, որ տեսողությունն աչքերիդ
Թուլացած է, բայց չի հանգած լիովին:

10 Չի տիրուհիդ, որ քեզ վերև է տանում
Աստվածային այս մարգերով լուսեղեն,
Անանիայի ուժը ունի իր աչքում»:

13 Ես ասացի. «Թող դարմանվեն վաղ կամ ուշ
Իմ աչքերը, ուրկից սիրտըս թափանցեց
Այն սերը հուր, որով այրվում եմ դեռ հույժ:

16 Վեհ Բարիքը արքունիքի երկնային
Եվ սկիզբը և վախճանն է իմ սիրո,
Որով համակ տոգորված է իմ հոգին»:

19 Այն նույն ձայնը, որ իմ երկյուղն էր ցրել,
Որի պատճառն իմ շլացումն էր լույսից,
Ինձ թելադրեց նորից մի քիչ բարբառել,

22 Ինձ ասելով. «Սիրո մասին միտքը քո
Պետք է պարզվի, պետք է ասես հիմա դու,
Թե ինչն ուղղեց վերև աղեղդ սիրո»:

25 Եվ ես նրան. «Իմ մեջ սերը առ Աստված
Առաջացավ փաստարկներով բանական
Եվ հայտնությամբ, որ այստեղից է իջած.

28 Զի բարիքը, երբ այն լավ է ճանաչվում,
Սեր է հրահրում, և հրահրում այնքան շատ,
Որքան բարիք է այն իր մեջ ընդգրկում:

31 Արդ Աստուծո բարիքն այնքան է շռայլ,
Որ նրանից բացի ամեն այլ բարիք
Նրա շողի լոկ մի նշույլն է անփայլ:

34 Եվ ով որ այս ճշմարտությանն է տեղյակ,
Բուռը սիրով պետք է հակվի դեպի նա
Ավելի քան դեպի ուրիշ մի էակ:

37 Ճշմարտությունն այդ պարզում է իմ առջև
Նա, ով նշում է, թե Սերը առաջին
Հիմքն է ամեն գոյացության հարատև:

40 Այդ պարզում է Արարչի խոսքը անգամ,
Երբ մի անգամ նա ասել է Մովսեսին.
«Ամեն բարիք ես քեզ պիտի արդ ցույց տամ»:

43 Դու ևս այդ պարզում ես ինձ, երբ քո հին
Երկրդ վսեմ, ավելի քան ուրիշ երկ,
Խորհուրդները երկնի հայտնում է երկրին»։

46 Եվ նա ասաց. «Դատողությամբ մարդկային
Ու նրա հետ ներդաշնակող հայտնությամբ
Քո մեծ սերը ուղղված է առ վեհ Բարին։

49 Սակայն դու ինձ դարձյալ ասա պարզորեն
Այլ պատճառներ ունե՞ս նրան սիրելու,
Եվ հայտնիր, թե պատճառներն այդ որո՞նք են»։

52 Քրիստոսի արծվի միտքը սրբազնյա
Ես հասկացա, և ես նույնիսկ զգացի,
Թե պատասխանս ուր էր ուզում տանել նա։

55 Ես ասացի. «Այն պատճառները բոլոր,
Որ կարող են սիրտը ուղղել առ Աստված,
Նպաստել են իմ այդ սիրույն անմոլոր։

58 Գոյությունը տիեզերքի և մարդու,
Մահը Նրա, ով այն կրեց մեզ համար,
Եվ մեր հույսը հավերժ կյանքով ապրելու,

61 Այս բոլորը, ասվածի հետ միասին,
Ինձ դուրս բերին մոլար սիրո օվկիանից
Եվ ճշմարիտ սիրո ափը հանեցին։

64 Իսկ տերևներն, որ աճում են պերճորեն
Հավերժական պարտիզպանի պարտեզում,
Ես սիրում եմ այնքան, որքան արժան են»։

67 Երբ լռեցի, հնչեց ամբողջ երկնքով
Մի դաշնալուր ու քաղցր երգ՝ «**Սուրբ, սուրբ,**
սուրբ»։
Եվ տիրուհիս ձայնակցում էր հրճվանքով։

70 Եվ ինչպես մարդ, մի վառ լույսից արձակված,
Հանկարծակի արթնանում է իր քնից,
Ծնորհիվ իր կապիճների գրգռված,

73 Եվ մի որպե խուսափում է տեսածից,
Մինչև նրան աչակցությանն չհասնի
Տեսողական ունակությունը նորից,

76 Այսպես ցրվեց մշուշը իմ աչքերից
Շողյուններով իմ տիրուհու աչքերի,
Որոնց փայլը կնկատվեր շատ հեռվից։

79 Եվ այնժամ ես տեսա հստակ, անաղոտ,
Ու զարմանքով հարցրի նրան, թե ով կա
Չորրորդ լույսում, որ երևում է մեզ մոտ։

82 Եվ տիրուհիս. «Այդ լույսի մեջ մերձավոր
Գտնվում է հոգին մարդու առաջին,
Ում ստեղծեց Զորությունը նախավոր»։

85 Ինչպես ճյուղը, երբ մի քամի է անցնում,
Նախ հակվում է դեպի գետին և ապա
Իր սեփական ուժով նորից բարձրանում,

88 Այսպես, գլուխս ես ապշահար հակեցի,
Սակայն շուտով բարձրացրի նորից այն
Եվ խոսելու տենչով վառված ասացի.

91 «Ո՛վ արարած, որ միայն դու չափահաս
Ստեղծվեցիր, ո՛վ մարդկության նախահայր,
Որին ամեն մի կին աղջիկ է և հարս,

94 Թախանձագին խնդրում եմ քեզ, որ խոսես.
Դու տեսնում ես իմ ցանկությունը այրող.
Ես կլռեմ, որպեսզի շուտ լսեմ քեզ»։

97 Եվ ինչպես ձին, որին սթար է պատում,
Երերվում է նրա ներքո, և ծածքի
Խաղացքներով իր ցանկությունն է հայտնում,

100 Նմանապես և այն հոգին նախաստեղծ
Պլպլումով իրեն պատող շողերի
Ինձ հայտնեց իր խնդակցությունը անկեղծ:

103 Ապա ասաց. «Թեպետև դու լռում ես,
Բայց քո իղձը ես ավելի լավ գիտեմ,
Քան այն, ինչ որ լավ հայտնի է թվում քեզ:

106 Ես տեսնում եմ դա Ճշմարիտ Հայելում,
Ուր ամեն ինչ ցոլանում է նրա մեջ,
Բայց ինքը լրիվ ոչ մի բանում չի ցոլում:

109 Դու ուզում ես իմանալ, թե ե՞րբ Աստված
Ինձ զետեղեց այն պարտեզում բարձրաբերձ,
Որտեղից քեզ բացվեց ուղին վերընթաց.

112 Որքա՞ն ատեն այնտեղ ուրախ ապրեցի,
Ի՞նչն էր պատճառն աստվածային բարկության,
Եվ ո՞րն էր այն լեզուն, որով խոսեցի:

115 Որդյակ, գիտցիր, որ պատճառն իմ արտաքսման
Եղավ ոչ թե ճաշակումը չար պտղից,
Այլ լոկ այն, որ չափ անցկացրի ու սահման:

118 Չորս հազար և երեք հարյուր երկու ամ
Ես բաղձացի երանության՝ այն վայրում,
Ուրկից Վիրգիլն եկավ քեզ մոտ փութակամ.

121 Բայց նախքան այդ, երբ ողջ էի դեռ երկրում,
Ինը հարյուր երեսուն հեղ ես տեսա
Արեգակի պտույտը իր ուղեծրում:

124 Իմ ստեղծած լեզուն հանգել էր իսպառ,
Երբ Նեմբրոթը իր մարդկանց հետ տակավին
Անմիտ գործին չէր ձեռնարկել խոլաբար:

127 Տևական չէ արդասիքը մտքերի,
Մարդկանց կամքի քմահաճության պատճառով,
Որ փոխվում է ազդեցությամբ աստղերի:

130 Ծատ բնական բան է խոսելը մարդկանց.
Բայց այս կերպ կամ այն կերպ խոսելը ոչ թե
Բնությունից, այլ մարդկանցից է կախված:

133 Երբ դեռ չէի իջել խորքը Դժոխքի,
Լ էր կոչվում երկրում Բարին Գերագույն,
Որի մեջ է լոկ աղբյուրն իմ բերկրանքի.

136 Այնուհետև նա EL կոչվեց, ըստ որում
Փոփոխվում է մարդկանց լեզուն, ճիշտ ինչպես
Տերևներն են տերևներին հաջորդում:

139 Եդեմական լեռան վրա երկնաձիգ
Ես մնացի, մեղքից առաջ և հետո,
Առավոտից մինչև ժամն այն փոխանցիկ,

142 Երբ քառորդ է փոխում արևն հարագո»:

ԵՐԳ ՔՍԱՆՅՈԹԵՐՈՐԴ

«Փառք Հօր, Որդւոյ, Հոգւոյն Սրբոյ» օրհներգեց
Դրախտն ամբողջ ձայնով այնպես դյութական,
Որ զգլխիչ արբեցություն ինձ տվեց:

4 Ինձ թվում է, թե իմ տեսածը բոլոր
Տիեզերքի մի ժպիտն էր, որ հոգիս
Համակում էր զմայլանքով անսովոր:

7 Ո՛վ անպատում խինդ ու խնծիղ անխոով.
Ո՛վ սիրո ու խաղաղության կյանք համակ.
Ո՛վ ճշմարիտ հարստություն ապահով:

10 Առջևս էին չորս ջահերը լուսավոր,
Իսկ այն ջահը, որ առաջինն երևաց,
Սկսեց դառնալ ավելի վառ ու բոսո

13 Եվ նա այնպես փոխվեց, ինչպես կփոխվեր
Լուսնթագը, եթե նրա գույնը բաց
Հրատի վառ կարմիր գույնին վերածվեր:

16 Տիեզերքի նախախնամությունն անթերի
Ամենուրեք լություն էր պարտադրել
Դասերի մեջ երանելի սրբերի,

19 Երբ լսեցի. «Մի զարմանա, եթե ես
Գույն եմ փոխում, հիմա սրանք էլ բոլոր
Գույն կփոխեն, երբ ես խոսեմ խստապես:

22 Նա, ով երկրում բռնի գահս է գրավել,
Գահիս, գահիս, որ թափուր է Աստուծո
Որդու աչքին, իմ գերեզմանն է դարձրել

25 Մի կոյանոց աղտեղության և արյան.
Որի համար՝ գահավիժյալն այստեղից
Դժոխքի մեջ կուրախանա անպայման»:

28 Այս խոսքերից պատեց երկինքը համակ
Այն շառ գույնով, որ ամպերն են ստանում
Այգի և կամ մայրամուտի ժամանակ:

31 Ինչպես կինը մաքուր վարքով ու բարքով,
Երբ լսում է մեկի հանցանքը միայն,
Ամոթանքից գունափոխվում է դեմքով,

34 Այսպես փոխվեց Բեատրիչեն հեղակարծ.
Ես կարծում եմ երկինքն այսպես մռայլվեց,
Երբ չարչարվեց Քրիստոսը խաչաբարձ:

37 Ապա հոգին մի ձայնով, որ այլայլվել
Ու փոխվել էր ոչ պակաս քան դեմքը իր,
Ծարունակեց այսօրինակ բարբառել.

40 «Աստուծո հարսն իմ արյունով չանվեց,
Ոչ էլ անվեց Լինի, Կլետի արյունով,
Որ ձեռք բերեր ոսկու դեզեր մեծամեծ,

43 Այլ անվեց, որ այս ջինջ կյանքը ձեռք բերվեր.
Քսեստը, Պիոսն, Ուրբանոսն ու Կալիստոն
Զոհ գնացին տանջանքներից կարեվեր:

46 Մեր իղձն այն չէր, որ քմայքով պապերի
Քրիստոնյա ժողովուրդը բաժանվեր
Աջակողմյան, ձախակողմյան խմբերի.

49 Որ ինձ տրված բանալիքը դառնային
Ջինանշան դրոշի վրա պապական
Եվ դրանով յուրայնոց դեմ կռվեին.

52 Որ իմ պատկերն իբրև կնիք ծառայեր
Վաճառելու արտոնագրեր ստանող,
Որի համար ես կարմրում եմ հանախ դեռ:

55 Երևում են երկրի ամեն արուտում
Հափշտակիչ գայլեր հովվի հագուստով.
Արդար Աստված, ինչո՞ւ նրանց չես դատում:

58 Պատրաստվում են Գասկոնցիք ու Կահորցիք
Մեր արյունը խմել: Ո՛վ լավ սկիզբներ,
Ինչքա՞ն տխուր, վատ վախճանի հանգեցիք:

61 Բայց Բարձրյալը, որ պաշտպանեց աշխարհի
Փառքն Հռոմում՝ Սկիպիոնի միջոցով,
Կփութա և սրան օգնել ըստ կարի:

64 Իսկ դու, որդի, որ մարմնով չես մեռածի,
Եվ պիտի վար վերադառնաս, մի լռիր,
Հայտնիր մարդկանց ինչ որ ես քեզ ասացի»:

67 Ինչպես երկրում ամպերն ի վար են իջնում
Զյան ծվեններ, իբրև սառած շոգիներ,
Երբ արևը Այծեղջյուրին է հասնում,

70 Այսպես այստեղ ելնում էին դեպի վեր
Այն լուսեղեն հոգիները հաղթական,
Որ մինչև այդ մեզ հետ էին կանգնել դեռ:

73 Իմ հայացքը նրանց շարժմանն հետևեց,
Մինչ որ աճած տարածությունը մեր մեջ
Նրանց տեսնել ինձ անկարող դարձրեց:

76 Երբ ես արդեն դադրել էի վեր նայել,
Իմ տիրուհին ասաց. «Նայիր դեպի ցած,
Տես, թե ինչքան տարածություն ես անցել»:

79 Այն պահից, երբ նայել էի ես ներքև,
Անցել էի մի կամարով, որ կեսից
Նախագոտու հասնում է ծայրը մինչև:

82 Եվ Գադեսից այն կողմ տեսա օվկիանն այն,
Որով Ուլիսն անցնել փորձեց, իսկ այս կողմ՝
Այն ափը, ուր լավ բեռ դարձավ Եվրոպան:

85 Երկրից ինձ դեռ բավական բան կերևար:
Բայց արևը հեռացել էր ինձանից
Ավելի քան մի անչրպետ լուսավառ:

88 Այնժամ, ահա, սիրատոչոր իմ հոգին,
Որ հարաժամ իմ տիրուհուն էր ձգտում,
Կարոտել էր նրա քաղցր նայվածքին:

91 Այն ամենը, ինչ բնությունն է երկնել
Կամ արվեստն է կերտել մարմնից մարդկային,
Որ կարող է մարդու հոգին առինքնել,

94 Այդ բոլորը մեկտեղ ոչինչ կթվար
Բաղդատմամբ այն աստվածային հմայքին,
Որ ես տեսա նրա դեմքին խանդավառ:

97 Այն ուժը, որ նրա նայվածքն ինձ տվեց,
Ինձ բաժանեց սիրուն բույնից Լեդայի
Եվ գերարագ երկնքի մեջ ինձ նետեց:

100 Այդ երկնքի տեղամասերն անհամար
Այնքան նման էին, որ ես չգիտեմ,
Թե տիրուհիս որ տեղն ընտրեց ինձ համար:

103 Սակայն նա, որ իմ ցանկությունն էր տեսնում,
Սկսեց խոսել այնպես ժպտուն, որ կարծես
Նրա դեմքին ինքը Աստված էր ժպտում.

106 «Այստեղից է ծագում աղնում տիեզերքի
Կառուցվածքը, որի կենտրոնն անշարժ է,
Իսկ մասերն այլ՝ շարժման մեջ են մշտակի:

109 Այս երկինքը ընկած է այն ոլորտում,
Ուր տիրում է աստվածային միտքը խոր,
Որի ուժը ստորև է հաղորդում:

112 Լույսն ու սերն են շրջապատում միշտ նրան,
Ինչպես և սա մյուս երկինքները բոլոր,
Որ վարվում են վերին կամքով տիրական:

115 Իր շարժումը չի որոշվում այլ չափով,
Բայց մյուսները սրանով են որոշվում,
Ինչպես տասը՝ հինգերորդով ու կեսով:

118 Հետևաբար քեզ բացահայտ է դառնում,
Որ ժամանակն իր արմատները ունի
Այս անոթում, տերևներն էլ՝ մյուսներում:

121 Ագահությո՛ւն, մարդկանց այնպես ես սուզել,
Քո անդնդում, որ ոչ մեկը չի կարող
Իր աչքերը քո ալքերից դուրս հանել:

124 Մերթ մարդկանց մեջ ծաղկում է կամքը բարի,
Բայց անձրևը համառորեն տեղացող
Լավ մրգերը փոխում է վատ մրգերի:

127 Հավատը և անմեղությունը մարդկանց
Մանկանց մեջ են միայն, ապա ցնդում են,
Դեռ չպատած մազով այտերը նրանց:

130 Մեկը, քանի թոթով լեզվով է խոսում,
Ժուժկալում է, իսկ երբ բացվում է լեզուն,
Որկրաժետ ու պոռոտախոս է դառնում:

133 Մեկը, քանի թոթով լեզվով է խոսում,
Մոթը միրում ու լսում է, իսկ երբ որ
Մեծանում է, նրա թաղվելն է ուզում:

136 Այսպես մարդու բնությունը մաքրածին
Խաթարվում է, երբ ենթակա է դառնում
Արեգակի սիրուն դստեր հմայքին:

139 Այս բոլորը պատահում է նրանից,
Որ աշխարհում չկա տեր ու տիրական,
Այստեղից էլ մարդկանց շեղումը ճամփից:

142 Բայց նախքան որ ընկնի հունվարը գարնան՝
Ձեր անտեսած հարյուրորդի պատճառով,
Երկինքները այնպես պիտի գոչ բառնան,

145 Որ մրրիկը, որ սպասվում է այնքան,
Պիտի խեղերն ուղղի անդ, ուր քթերն են,
Այնժամ նավերն ուղիղ գծով կընթանան.

148 Ծաղկից հետո լավ պտուղներ կհասանեն»:

ԵՐԳ ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ

Երբ իմ միտքը վեհացնող տիրուհիս
Ինձ բացատրեց ճշմարտությունը տխուր,
Հանդես գալով ներկա կյանքի դեմ մախիզ,—

4 Ինչպես մեկը, որ տեսնում է հայելում
Բոցը ջահի հանկարծ վառված իր ետև,
Երբ այդ մասին նույնիսկ չի էլ մտածում,

7 Եվ դառնում է ստուգելու, թե արդյոք
Իրա՞վ է այդ, և նկատում է, որ դա
Մի իսկության արտացոլումն է իրոք,

10 Այսպես անա ես հիշում եմ, որ արի,
Նայելով այն աչքերի մեջ գեղեցիկ,
Որոնցով Սերն ինձ դարձրել էր գերի:

13 Եվ երբ դարձա դեպի երկինք՝ ճշտելու,
Թե ինչ ցոլք է, որ պարզվում է աչքերիս,
Ամեն անգամ, երբ փորձում եմ նայելու,

16 Տեսա մի Կետ, որ արձակում էր մի լույս
Այնքան ուժգին, որ աչքերն իմ շլացյալ
Հարկադրված եղան փակվել ու տալ խույս:

19 Այն աստղը, որ փոքրագույն է երևում,
Նրա կողքին պիտի լուսին երևար,
Ինչպես աստղը աստղի կողքին երկնքում:

22 Որքան քիչ է հեռու ընկած իր աստղից
Այն պսակը, որ պատում է նրա շուրջ,
Երբ այն կազմող շամանդաղը շատ է խիտ,

25 Նույնքան քիչ էր հեռու ընկած այն Կետից
Մի հրե ծիր, որ դառնում էր նրա շուրջ
Ավելի քան արագ երկնի այս գնդից:

28 Այս վառ ծիրը իր շուրջն ուներ մի երկրորդ,
Սա՝ մի երրորդ և երրորդը՝ մի չորրորդ,
Սա՝ հինգերորդ, հինգերորդն էլ՝ վեցերորդ:

31 Յոթերորդը լայնատարած էր այնքան,
Որ Յունոնի սուրհանդակը իր բոլոր
Շրջանակով ընդգրկել չէր կարող այն:

34 Այսպես էին ութերորդն ու իններորդ.
Եվ ամեն ծիր այնքան դանդաղ էր շարժվում,
Որքան հեռու էր այն Կետից լուսաճորդ:

37 Եվ որքան հեռու էր պայծառ այն Կետին,
Այնքան վառ ու շառաչող էր երևում,
Չի ավելի հաղորդվում էր ճշմարտին:

40 Եվ տիրուհիս, իմ խորհուրդին լավ գիտակ,
Ասաց. «Ահա հենց այդ Կետից են կախված
Երկինքը և բնությունը բովանդակ:

43 Տես այն ծիրը, որ մոտագույնն է նրան.
Նա շարժվում է արագագույն ընթացքով
Իր բորբ սիրով, որից առնում է խթան»:

46 Եվ ես նրան. «Եթե աշխարհն այն կարգով
Դասավորվեր, ինչ կարգով են ծիրերն այս,
Ես գոհացած կլինեի քո խոսքով.

49 Բայց երկինքներն զգայական աշխարհում
Բուն կենտրոնից ինչքան հեռու են ընկած,
Այնքան նրանք սրընթաց են պտտվում:

52 Եթե պետք է հանգչեն իղձերս ամենայն
Հրեշտակային այս երկնքում հիանքանչ,
Որի սահմանն են սերն ու լույսը միայն,

55 Պետք է գիտնամ, թե ինչու են անհարիր
Կաղապարն ու կաղապարյալը միմյանց.
Դա հասկանալ ես ճգնում եմ առավիր»:

58 «Եթե միտքդ բավական չէ լուծելու
Այդ հանգույցը, զարմանալու բան չկա.
Մարդ չի փորձել այդ բարդ հարցը վճռելու»:

61 Այսպես ասաց իմ տիրուհին և հարեց.
«Արդ լավ լսիր այն, ինչ որ ես կասեմ քեզ,
Եվ այն դարձրու քո խոհերի նյութը մեծ:

64 Մարմինները երկնի անձուկ են կամ լայն,
Նայած նվազ կամ առավել ուժերին,
Որ կա նրանց մասերի մեջ ամենայն:

67 Ուժերն ինչքան մեծ են, այնքան բարվոք են.
Մեծ մարմինը բովանդակում է մեծ ուժ,
Եթե կուռ է իր տարերքի մեջ ամեն:

70 Արդ երկինքն այս, որ իր հետ է քարշ ածում
Ողջ տիեզերքն, հարակցում է այն ծիրին,
Որ ավելի սիրում է ու գիտակցում:

73 Բայց եթե դու ի նկատի ես առնում
Ուժը, ոչ թե մեծությունը ծիրերի,
Որոնցում քեզ գոյակներն են երևում,

76 Դու կտեսնես հարակցություն անթերի
Մեծ երկնքի և մեծ ուժի հենց միջև,
Ինչպես նաև միջև փոքրի ու փոքրի»:

79 Ինչպես օդի մեծ կիսագունդը մեր շուրջ
Հստակվում է, երբ Բորեասն է փչում
Իր այն կողմից, որ նվազ է խստաշունչ,

82 Եվ երկինքը, ազատվելով թուխպ ամպից,
Երևում է գեղածիծաղ ու վճիտ,
Իր բովանդակ պայծառությամբ մեջ անբիծ,

85 Այսպես բացվեց միտքս, երբ նա ինձ տվեց
Այս պարզորոշ պատասխանը և, ինչպես
Աստղը երկնում, ճշմարտությունն ինձ պարզվեց:

88 Եվ հենց որ իր խոսքն ավարտեց տիրուհիս,
Այն ծիրերը արձակեցին բյուր կայծեր,
Ինչպես երկաթն հնոցից դուրս հանելիս:

91 Ամեն մի կայծ հետն էր շրջում իր ծիրի.
Նրանց թիվը շատ ավելի խոշոր էր,
Քան գումարը ճատրակային թվերի:

94 Լսում էի նրանց օրհներգը ի փառս
Անշարժ Կետի, որը պահում է նրանց
Իրենց կայքում և կպահի հավիտյան»:

97 Եվ տիրուհիս, որ իմ մտքերն էր կարդում.
Հայտարարեց. «Երկու ծիրերն առաջին
Սերովբեներն, Քերովբեներն են կազմում:

100 Սիրո կապով նրանք կապված են Կենտրն,
Նմանվելով նրան, որքան կարող են,.
Որքան մոտ են իրենց վսեմ տեսիլքին:

103 Մյուսները, որ նրանց շուրջն են պտտվում,
Անվանվում են աստվածային Գահույքներ,
Որոնցով է մի երրյակը ավարտվում:

106 Նրանք բոլորն այստեղ զգում են բերկրանք
Այնքան, որքան թափանցում են տեսությամբ
Ճշմարտի մեջ, ուր հանգչում է ամեն կյանք:

109 Ուրեմն երկնի երանությունն հիմք ունի
Տեսությունը, ոչ թե սերը, ըստ որում,
Այս վերջինը արդյունք է լոկ առաջնի:

112 Իսկ տեսությունն արժանիքով է չափվում,
Արժանիքն էլ՝ շնորհով ու լավ կամքով.
Այս կարգով են աստիճաններն որոշվում:

115 Մյուս երրյակը, որ ծաղկում է զվարթուն
Այս անվախճան, հավերժական գարնան մեջ,
Ուր գիշերվա Խոյը չունի զորություն,

118 Եռաձայնով **«Ովսաննա»** է հար երգում,
Որ հնչում է դասերի մեջ այն երեք,
Որոնցից է այդ երրյակը բաղկանում:

121 Այդ երրյակը կազմող դասերը տարբեր
Անվանվում են իրենց կարգով հերթական՝
Տերություններ, Պետություններ և Ուժեր:

124 Նախավերջին երկու դասերը խնդուն
Իշխաններն ու Հրեշտակապետք են կազմում,
Իսկ վերջինը Հրեշտակներն են զվարթուն:

127 Ողջ դասերն այս դեպի վերև են պշնում,
Սքանչացած աստվածության տեսիլքով,
Որ բոլորին դեպի իրեն է ձգում:

130 Դիոնիսիոսն այս դասերը հերթական
Այնքան սիրով դիտողության ենթարկեց,
Որ անվանեց, ջոկեց նրանց ինձ նման:

133 Բայց Գրիգորը նրանց այլ կերպ բաժանեց.
Սակայն հենց որ երկինք ելավ, հասկացավ
Իր սխալը և իր վրա ծիծաղեց:

136 Եվ եթե մի մահկանացու մարդ նման
Երկրում հայտնվեց այսօրինակ մի գաղտնիք,
Մի զարմանա, զի այդ բաները նրան

139 Հայտնել էր նա, ով բարձրացել էր երկինք»:

ԵՐԳ ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ

Երբ Լատոնի երկու որդիք ակնապով,
Մեկը Խոյին, մյուսը Կշռին միացած,
Կապվում են նույն հորիզոնի գոտիով,

4 Այն պահից, երբ զուգակշիռ են նրանք,
Մինչև պահն այն, երբ կիսագունդն փոխելով,
Դուրս են գալիս այդ գոտիից երփներանգ,

7 Այնքան ատեն Բեատրիչեն մնաց լուռ,
Ժպտուն դեմքով նայելով այն վառ Կետին,
Որ ինձ այնպես շլացրել էր անլուր:

10 Ապա ասաց. «Ես քեզ կտամ պատասխան,
Զի հարցերդ ճշտիվ կարդում եմ այնտեղ,
Որտեղ որոշ երևում է ամեն բան:

13 Ոչ իր բարու անման համար ապարդյուն,
Այլ որպեսզի, նոր ցոլքերով շողալով,
Կարողանա ասել «ունեմ գոյություն»,

16 Հավերժ Սերը, ժամանակից առաջ դեռ,
Հավերժության մեջ ինքնակամ ստեղծեց
Սիրով զեղուն գոյեր իրեն առընթեր:

19 Առաջ էլ նա անգործունյա չէր կեցած,
Չի ոչ առաջ, ոչ էլ հետո կար այնժամ,
Երբ ջրերի վրա շրջում էր Աստված:

22 Ուժն ու նյութը և միացումը նրանց
Աստվածային մտքից ելան միասին,
Զերթ երեք նետ մի աղեղից արձակված:

25 Ինչպես սաթում, ապակում կամ բյուրեղում
Լույս է շողում, ընդ որում մուտքը լույսի
Եվ շողալը լոկ մի վայրկյան է տևում,

28 Այսպես արդյունքն արարչության անվախճան
Վայրկենապես եղավ լրիվ, ավարտուն,
Չունենալով հաջորդական աստիճան:

31 Գոյացությանց հետ ստեղծվեց և նրանց
Կարգն ու սարքը. տիեզերքի գագաթին
Զետեղվեցին էակները գերազանց:

34 Նախանյութը դրվեց ցածը ոլորտում,
Իսկ միջինում՝ երկինքները, որոնց մեջ
Ուժն ու նյութը միասնություն են կազմում,

37 Թեև գրեց Հերոնիմը երանյալ,
Թե հրեշտակներն ստեղծվել են շատ ու շատ
Դարեր առաջ, քան աշխարհը մնացյալ,

40 Բայց այս մասին ճշմարտությունն ամենայն
Բացատրել են գրիչները Սուրբ Գրքի.
Դա կիմանաս, եթե ուշով կարդաս այն:

43 Մարդու միտքն էլ անկարող է ընդունել,
Որ շարժիչներն երկար մնան անգբաղ
Եվ դերն իրե[illegible] տարեանան կատարել:

46 Արդ իմացիր, թե ո՛ւր և ե՛րբ, և ի՛նչպես
Ստեղծվեցին հրեշտակները. այսպիսով
Սպառվեցին երեք հարցերն հուզող քեզ:

49 Մինչև քանի այնքան արագ չեն հաշվում,
Ինչքան արագ մի մասը այն հրեշտակաց
Գահավիժեց երկնից երկրի անդնդում:

52 Իսկ մյուս մասը մնաց տեղում, Տիրոջ քով,
Եվ սկսեց պտույտը վառ Կետի շուրջ,
Որ դու դիտում էիր այնքան հաճույքով:

55 Պատճառն անկման գոռոզությունը եղավ
Անիծյալի, որին ճնշված դու տեսար
Ծանրության տակ տիեզերքի բազմախավ:

58 Իսկ նրանք, որ դու տեսնում ես անխափան,
Համեստ եղան ճանաչելու, որ իրենք
Ձեռակերտն են աստվածային բարության:

61 Դրա համար նրանց հայացքը ամեց
Լույս-շնորհով, արժանիքով սեփական,
Եվ արդ լի են նրանք կամքով ձեռնհաս:

64 Եվ դու պետք է հաստատապես իմանաս,
Որ շնորհը արժանիքից է բխում,
Արժանիքն էլ՝ սիրուց հավետ կամ նվազ:

67 Արդ եթե դու միտքդ լավ ես հասկացել,
Հրեշտակային համակարգի մասին այս
Դու կարող ես շատ այլ բաներ մակածել:

70 Բայց քանի որ մարդիկ երկրում պնդում են,
Թե բնությունն հրեշտակների այնպես է,
Որ նրանք միտք, հիշողություն, կամք ունեն,

73 Կավելացնեմ, որպեսզի քեզ պարզ լինի
Ճշմարտությունը, որ թյուրում են երկրում,
Շփոթելով մի բանը հետն այլ բանի:

76 Այն պահից, երբ էակներն այս նախածին
Երանացան հայեցությամբ Աստուծո,
Այնուհետև անդուլ նրան նայեցին:

79 Եվ քանի որ զմայլանքով նայելու
Նրանց տենչը չի ընդհատվում ոչնչով,
Նրանք կարիք չունեն անցածն հիշելու:

82 Ձեզ մոտ շատեր ցնորքներ են բարբաջում,
Ոմանք դրանց հավատալով, ոմանք՝ ոչ,
Բայց վերջիններն ավելի են մեղանչում:

85 Դուք աշխարհում չեք ընթանում նույն ճամփով
Ճշմարտության, այն աստիճան տարվում եք
Հնարամիտ երևալու մարմաջով:

88 Եվ դեռ սրան հանդուրժում են երկնքում
Նվազ ցասմամբ, քան երբ Գիրքը Սրբազան
Զանց եք առնում կամ թյուրաբար եք մեկնում:

91 Ձեք մտածում, թե նրա ցանքը որքան
Արյուն արժեց, և թե որքան է սիրվում
Նա, ով խոնարհ սրտով հարում է նրան:

94 Ցույցի համար շատեր ճգնում են հայտնել
Նոր կարծիքներ և քարոզում թեմերից,
Ավետարանն էլ ստիպում է լռել:

97 Ասում են, թե լուսինն իբր ետ դարձավ
Քրիստոսի խաչելության ժամանակ
Եվ արևի-երկրի միջև կանգ առավ.

100 Բայց դա սուտ է, զի մթնեց լույսը ինքնին,
Եվ խավարումն երկրում եղավ ընդհանուր
Իսպանացուն, հրեային ու հնդիկին:

103 Ֆլորենցիայում Լապոներ ու Պինդոներ
Ձկան այնքան, որքան նրա թեմերից
Քարոզում են այսօրինակ հեքիաթներ:

106 Եվ ոչխարներն ետ են դառնում արոտից
Հովով սնված, տգիտությունը սակայն
Չի ազատում նրանց մեղքի արատից:

109 Իր սաներին Քրիստոս պատվեր չտվեց,
«Գնացեք ու քարոզեցեք փուչ բաներ»,
Այլ ճշմարիտ ուսմունք նրանց ավանդեց:

112 Հոչակեցին նրանք ուսմունքն այդ միակ,
Երբ հավատի համար կռվի հանեցին
Ավետարանն իբրև վահան ու նիզակ:

115 Արդ քարոզ են կարդում տափակ խոսքերով.
Եվ բավ է, որ ունկնդիրը ծիծաղի,
Որ քարոզիչն ուռի, փքվի վեղարով:

118 Բայց վեղարում կա այնպիսի մի թռչուն,
Որ ամբոխը եթե տեսնի՝ կիմանա,
Թե իզուր է ինքն սպասում թողություն:

121 Հիմարությունն այնքան աճել է երկրում,
Որ ամբոխը առանց փաստի հավատի
Ամեն խոստման հեշտ է հավատ ընծայում:

124 Սուրբ Անտոնի խոզն ապրում է դրանով,
Ապրում են և վատթարները խոզերից,
Վճարելով կեղծ ու պատիր դրամով:

127 Բայց քանի որ շատ շեղվեցինք նյութից մենք,
Վերադառնանք նախորդ հարցին շոշափված,
Եվ մեր խոսքը ժամանակի հետ կարճենք:

130 Արանք թվով այնքան շատ են, անհաշիվ,
Որ մարդկային միտքն ու խոսքը չեն կարող
Պատկերացնել որոշակի ու ճշտիվ:

133 Թե ուշ դնես Դանիելի հայտնությանն,
Կտեսնես, որ բյուրերի մեջ իր հիշած
Անհնար է ճշտել թիվը բազմության:

136 Լույսն Առաջին, որը բաշխվում է նրանց,
Նրանք այնքան բազմակերպ են ընկալում,
Որքան թիվը բազմապատիկ է յուրյանց:

139 Եվ զի սերը տեսությունից է բխում,
Ապա սիրո չափն առավել կամ նվազ
Տեսանելու նրանց չափից է կախվում:

142 Արդ նկատիր Հավերժի ուժը անհաս,
Որ ստեղծեց այդքան բազում հայելի,
Որոնց մեջ նա բեկբեկվում է մաս առ մաս,

145 Բայց ինք մնում միաձույլ ու անհեղլի»:

ԵՐԳ ԵՐԵՍՈՒՆԵՐՈՐԴ

Մոտ վեց հազար մղոն հեռու մեր երկրից
Բոցավառ է դառնում ժամը վեցերորդ,
Եվ աշխարհի ստվերն հակվում է գծից,

4 Երբ խոր երկինքն սպիտակում է այնպես,
Որ մի քանի փոքրիկ աստղեր մարմրուն
Դադարում են երևալուց արդեն մեզ.

7 Եվ արևի պայծառ նաժիշտը որքան
Մոտենում է, այնքան աստղերը մեկ-մեկ
Կորցնում են շողերն իրենց ոչնչական.

10 Այսպես դասերն հրեշտակաց ցնծակյաց,
Որ դառնում են շլացուցիչ Կետի շուրջ,
— Որ, անպարփակ, երևում է պարփակված,—

13 Տակավ-տակավ իմ աչքերից չքացան.
Այդ պատկան և սերը ինձ մղեցին
Նորից հայացքս ուղղել կնոջն անմման:

16 Ինչ որ ասվեց նրա մասին մինչև արդ,
Բոլորն եթե մի գովքի մեջ ամփոփվեր,
Ներկա դեպքում քիչ կլիներ ու անզարդ:

19 Նրա գեղը մատչելի չէ մեր մտքին.
Կարծում եմ, որ լոկ արարիչը նրա
Կարող է այն գնահատել ի հարկին:

22 Այստեղ ես ինձ պարտըված եմ համարում,
Ինչպես երբեք մի Կատակերգ կամ Ողբերգ
Չի պարտըվել դժվարալույծ իր խնդրում:

25 Ինչպես աչքը շլանում է արևից,
Այսպես միտքըս անճրկում է ու շշմում
Նրա քաղցր ու աստվածային ժպիտից:

28 Եվ այն օրից, որ նրա դեմքը վսեմ
Ես առաջին անգամ տեսա մեր կյանքում,
Նրա մասին միշտ մի գովերգ հյուսել եմ:

31 Բայց հարկ է, որ ես դադարեմ գովերգել
Նրա անհուն գեղեցկությունն, ինչպես նա,
Ով արվեստի ծայրակետին է հանգել:

34 Այդ գովերգը ես թողնում եմ ավելի
Կարող գրչի, քան գրիչս է, որ արդեն
Ավարտում է նյութն իր դժվար մատչելի:

37 Եվ նա խոսեց ինչպես փութկոտ առաջնորդ.
«Մենք մեծագույն մարմնից արդեն դուրս ելանք
Ու բարձրացանք երկինքը ջինջ, լուսահորդ:

40 Այս երկինքը սիրով գեղում է համակ,
Բարությամբ ու երանությամբ լի սիրով,
Երանությամբ՝ ամեն բանից անուշակ:

43 Աստ կտեսանես երկու փաղանգ լուսափառ,
Մի փաղանգը քեզ կերևա այն տեսքով,
Որ կունենա դատաստանի օրն արդար»:

46 Ինչպես փայլակն հանկարծ շող է արձակում
Ու ջլատում տեսողությունը այնպես,
Որ աչքերը ոչ մի բան չեն նկատում,

49 Այսպես շուրջըս ճայթեց մի լույս թոցավառ
Եվ պարուրեց ինձ այնպիսի շողյունով,
Որ ոչ մի բան չէր երևում ինձ իսպառ:

52 «Այս երկինքը խաղաղեցնող սերն անհուն
Այսօրինակ ողջույնով է ընդունում
Երանության համար պատրաստ ջինջ հոգուն»:

55 Հազիվ էի այս կարճ խոսքերը լսել,
Երբ զգացի, որ իմ ուժերը ներքին
Աճել էին ու բարձրացել առավել:

58 Եվ օժտվեցի տեսողությամբ նորընկալ,
Այնքան ուժեղ, որ չկար լույս այնքան վառ,
Որին աչքերս չզորեին արդ տոկալ:

61 Եվ այնժամ ես տեսա մի գետ լուսեղեն,
Որի երկու ափերն ամբողջ երկայնքին
Պատած էին ծաղիկներով ոսկեղեն:

64 Գետից անվերջ ցայտում էին վառ կայծեր
Եվ տարածվում ծաղկանց վրա ափերի,
Ինչպես ոսկով շրջանակված հակինթներ:

67 Ապա կարծես արբած ծաղկանց բուրմունքից՝
Վերասուզվում էին գետի ալքերում.
Մեկը մտնում, մյուսը ելնում էր խորքից:

70 «Բուրը տեսնչը, որ քեզ մղում է հիմա
Հասկանալու այն, ինչ որ դու տեսնում ես,
Ավելի քան հաճելի է ինձ համար:

73 Բայց հարկ է քեզ առաջ ըմպել այս ջրից,
Որ հագեցնես քո ծարավը այնքան մեծ»:
Այսպես ասաց ինձ տիրուհիս փառալից:

76 Սայլ հարեց. «Գետն ու կայծերը կցորդ
Եվ ափերը պճնող ծաղկանքը ծիծաղուն
Իսկականի նախանշաններն են աղոտ:

79 Սակայն նրանք անկատար չեն թվալիս,
Այլ դու ինքդ ես քո թեությամբ անկատար,
Չի խորհատես աչքեր չունես տակավին»:

82 Ոչ մի մանուկ այնքան փոքրով չի ձգտել
Դեպի կաթը իր մայրական, երբ որ նա
Սովորական իր ժամից ուշ է զարթնել,

85 Ինչքան փոքրով ես ձգտեցի անձկալի
Գետը դեպի, նրա ջրից լվացվելու,
Որ աչքերս խոր տեսնեին ավելի:

88 Հենց որ աչքս գետի ջրից հաղեցավ,
Ինձ թվաց, թե այն գետը, որ նախապես
Երևալիկել էր, կլորակ ձև առացավ:

91 Ինչպես դեմքը, որ պատված է դիմակով,
Երբ դիմակը վար առնվի, կերևա
Սովորական ու բնական իր տեսքով,

94 Այսպես աչքիս եղևացին բուն տեսքով
Այն կայծերն ու ծաղիկները, և տեսա
Երկնի երկու շքախմբերն անցքով:

97 Ո՛վ վերին Լույս, որ ցոլացած ես տեսա
Վեհ հաղթանակն արքայության ճշմարիտ,
Տուր ինձ պատմել, թե ինչպես այն ես տեսա:

100 Արարիչը տեսանելի է դարձնում
Այդ Լույսը այն արարածին երկնային,
Որ նրան լոկ տեսնելով է ճանաչում:

103 Բոլորանձն նա տարածվում է այնքան,
Որ իր անվերջ շրջանակը կկազմեր
Արեգակի համար գոտի անչափ լայն:

106 Եվ այդ Լույսը բխում է այն շողերից,
Որ ցոլում են նախաշավիղ երկնքում
Եվ տալիս են նրան ուժեր կենսատից:

109 Ինչպես բարձր իրեն նայում է լեռում,
Ասես թե իր պաճուճանքը տեսնելու,
Երբ գարնանը ծաղկում է ու կանաչում,

112 Այսպես բոլոր հոգիները երանյալ
Լույսի շուրջը բազմաստիճան բոլորված՝
Նայում էին նրան համակ գմայլյալ:

115 Եթե ցածում այդպես կազմում էր լայն ծիր,
Ապա ինչքան լայնատարած կլիներ
Բացված վարդը իր թերթերում ծայրադիր:

118 Հայացքս այդ անհունի մեջ ճածելով
Չէր շլմորում, այլ ընդգրկում էր լրիվ
Երանությունն իր բովանդակ չափերով:

121 Այնտեղ հոգն են մոտակա ու հեռակա,
Չի այնտեղ, ուր Աստված անձամբ է վարում,
Էլ տեղ չունեն օրենքները բնական:

124 Մինչ ես նայում էի լուռ ու զմայլված,
Բեատրիչեն դեպի կենտրոնն ինձ տարավ
Հավերժ վարդի, որի թերթերը բացված

127 Գովքի խունկեր են առաքում առ Աստված.
Նա ինձ ասաց. «Տես բազմությունը սրբոց
Զյունասպիտակ հանդերձներով պարուրված:

130 Տես ինչքան է մեր քաղաքը տարածվում.
Տես մեր գահերն այնքան լցված են արդեն,
Որ անդ այլևս քիչ մարդկանց է սպասվում:

133 Այն մեծ գահին, որտեղ մի թագ կա դրված,
Եվ որին դու սևեռաբիբ նայում ես,
Դեռ մասնակից չեղած երկնի հարսանյաց,

136 Բազմելու է հոգին վեհանձն Հենրիկի,
Որ պիտի գա բարվոքելու Իտալիան,
Դեռ սա դրան չպատրաստված հայտնակի:

139 Բայց կույր շանը, որի դարձել եք գերին,
Ձեզ դարձրել է անմիտ՝ նման այն մանկան,
Որ, սովահար, վանում է իր դայակին:

142 Այն ժամանակ եկեղեցու հովվապետ
Կդառնա նա, ով հայտնապես կամ ծածուկ
Նույն ուղիով չի ընթանա վեհի հետ:

145 Բայց աստուծմով նա իր այդ սուրբ պաշտոնում
Կարճ կմնա, զի գահավեժ կսուզվի
Այնտեղ, որտեղ մոգ Սիմոնն է պատժվում,

148 Եվ Անանցուն ավելի խոր կխրի»:

ԵՐԳ ԵՐԵՍՈՒՆՄԵԿԵՐՈՐԴ

Այսպես տեսքով բացված վարդի սպիտակ
Ինձ երևաց այն սուրբ փաղանգը, որին
Քրիստոս գնեց իր արյունով բովանդակ:

4 Մյուս փաղանգը, որ թռչելով երգում էր
Փառքը Նրա, ով տոգորում է իրեն
Սիրո խանդով ու բարությամբ գերիվեր,

7 Մեղուների պարսի պես, որ մեկ ծաղկանց
Մեջ է մտնում, մեկ դեպ փեթակն է թռչում,
Ուր մեղրի են փոխվում հյութերը քաղած,

10 Իջնում էր մեծ ու բազմաթերթ վարդի մեջ,
Ապա նորից բարձրանում էր դեպ այնտեղ,
Ուր ապրում է հավետ իրենց Սերն անշեջ:

13 Նրանց դեմքերն հուրեր էին բոցավառ,
Թևերն՝ ոսկի, իսկ հանդերձանքը՝ ճերմակ,
Ավելի քան ձյունը թափված ամպն ի վար:

16 Երբ ծաղկանց մեջ էին իջնում ի հեռուստ,
Բերում էին խաղաղություն ու ավյուն,
Որ ստանում էին նրանք ի վերուստ:

19 Բայց հոծությունն անթվելի բազմության,
Որ թռչում էր միջև բարձանց ու ծաղկանց,
Արգելակ չէր նրանց պայծառ տեսության:

22 Աստվածային լույսը վառ ու մշտաշող
Թափանցում է տիեզերքի մեջ այնպես,
Որ ոչ մի բան այն խափանել չի կարող:

25 Երանելի հոգիները նոր ու հին,
Որոնցով է լցված երկինքն այս խաղաղ,
Բոլորեքյան նայում էին նույն Կետին:

28 Ո՛վ երրյակ Լույս, դու որ շողում ես միակ
Մի աստղի մեջ, գոհացնելով բոլորին,
Նայիր ներքև մեր մրրիկին անպարփակ:

31 Եթե գալով բարբարոսներն հյուսիսից,
Որի վրա ամենայն օր Հելիկեն
Պտտվում է իր որդու հետ միասին,

34 Տեսան Հոմն ու գործերն իր փառապանծ
Եվ զարմացան, զի կառույցները նրա
Գերազանցում էին ամեն շինության,

37 Ես, որ եկել էի երկրից առ երկինք,
Վաղանցիկից դեպի հավերժը անանց,
Ֆլորենցիայից դեպի արդար, ջինջ ազինք,

40 Որքան պիտի ապշահարված լինեի:
Զմայլության և ցնծության մեջ իմ այս
Լավ է, որ ես լուռ հայացքով դիտեի:

43 Ինչպես հանախ ուխտավորը ուշադիր
Նայում է ներսն իր ուխտական տաճարի,
Որպեսզի հուսկ նկարագրի տեսածն իր,

46 Այսպես ես պիշ ու թարթափուն աչքերով,
Նայում էի մերթ դեպի վեր և մերթ վար,
Բազմաստիճան վարդին՝ պայծառ շողերով:

49 Այնտեղ տեսա դեմքեր սիրով ներշնչված,
Փառազարդված ժպիտներով զվարթուն,
Եվ շարժումներ վայելչությամբ օծանված:

52 Երբ իմ հայացքն ընդհանրապես ընդգրկեց
Կառուցվածքն ու ձևը համայն Դրախտի,
Բայց դեռ ոչ մի բանի վրա չկանգնեց,

55 Նորոգ տենչով դարձա դեպի տիրուհիս
Հարցընելու համար որոշ բաներ դեռ,
Որոնք վարանք էին տալիս մտքերիս:

58 Սակայն ահա իմ տիրուհու փոխարեն
Ես տեսա մի պատկառելի ծերունի,
Պարեգոտված մյուսների պես պերճորեն:

61 Նրա դեմքին և աչքերին բարեմույն
Երևում էր գորովալի մի ժպիտ,
Ինչպես միայն հորն է հատուկ քնքշագույն:

64 «Ո՞ւր գնաց նա»— իսկույն հարցրի երեցին:
Եվ նա. «Այստեղ Բեատրիչեն ինձ հղեց,
Որ գոհացնեմ փափագները քո վերջին:

67 Բարձունքից վար երրորդ շարքին նայելով,
Դու կտեսնես նրան բազմած այն գահին,
Ուր սահմանվեց նա ձիրքերով իր հոլով»:

70 Լուռ ու անխոս նայեցի վեր ու տեսա,
Որ նա գլխին ուներ պսակ լուսեղեն,
Կազմավորված ճառագայթներից հարակա:

73 Որոտ ծնող մթնոլորտից բարձրագույն
Մահկանացու աչքը այնքան հեռու չէ,
Թեկուզ տուզված լինի ծովում խորագույն,

76 Որքան աչքըս հեռու էր իմ տիրուհուց,
Բայց այդ բնավ չէր խանգարում ինձ տեսնել
Նրա ջինջ ու պայծառ պատկերն անմատույց:

79 «Ո՛վ տիրունի, իմ հուսատուն անպատիր,
Դու որ արժան համարեցիր մինչև իսկ
Դժոխք իջնել իմ փրկության ի խնդիր,

82 Ես միմիայն քո բարությանն ու թափին
Պարտական եմ արժանիքն ու շնորհն այն,
Որով տեսա այնքան բաներ իմ ճամփին:

85 Գերությունից ազատության ինձ հասցրիր
Ուղիներով, միջոցներով այն բոլոր,
Որոնցում դու իշխանություն ունեիր:

88 Վեհանձնությունդ հավետ թող ինձ պահպանի,
Որպեսզի իմ հոգին, որ դու բուժեցիր,
Անջատվելիս մարմնից՝ արժան քեզ լինի»:

91 Աղոթեցի այսպես, և նա ժպտագին
Նայեց դեպ ինձ իր գահույքից հեռավոր,
Ապա դարձավ Հավերժաբուխ Ակունքին:

94 Եվ տուրք ծերն ինձ. «Որպեսզի դու ավարտես
Քո այս ուղին, որի համար ես եկա,
Թելադրված քո տիրուհու հայցով հեզ,

97 Մի ակնարկ տուր դրախտային պարտեզին.
Դա տեսնելով քո հայացքը այժմեն իսկ
Կընտելացնես աստվածային շողյունին:

100 Եվ թագուհին երկնի, որի սերն արդեն
Այրում է ինձ, մեզ զորավիգ կլինի,
Զի ես նրա հավատարիմ Բեռնարդն եմ»:

103 Ինչպես նա, ով Խորվաթիայից է եկել՝
Տեսնելու մեր Վերոնիկան սրբազան,
Որի քաղցից անկարելի է հագել,

106 Եվ դիտելով այն՝ ասում է մտովին.
«Տեր իմ Հիսուս Քրիստոս, Աստված ճշմարիտ,
Մի՞թե եղավ քո կերպարանքն այսպիսին»:

109 Այսպես դիտում էի դեմքը կենդանի
Այն հոգու, որ, հայեցությամբ վերացած,
Երկրում ապրեց խաղաղությունը երկնի:

112 Նա ինձ ասաց այնժամ. «Որդի շնորհաց,
Այս երջանիկ կյանքը դու չես ճանաչի,
Եթե դեմքդ շարունակես պահել ցած:

115 Նայիր վերև՝ մինչև ոլորտն հեռակա,
Եվ կտեսնես գահին բազմած թագուհուն,
Որին է այս արքայությունն ենթակա»:

118 Ինչպես այգուն արևելյան ջինջ կողմում
Հորիզոնը վառ է լինում ավելի,
Քան այն կողմում, ուր արևն է մայր մտնում,

121 Այսպես երբ ես վեր նայեցի պիշ ու լուռ,
Տեսա մի կետ աստիճանին վերնագույն,
Ուր ավելի լուսալիր էր, քան այլուր:

124 Ինչպես երկնի հորիզոնի այն մասում,
Ուր սպասվում է ձիակառքն արևի,
Լույսն աճում է, իսկ կողքերին նվազում,

127 Այսպես ոսկե բոցը շողում էր պայծառ
Իր կենտրոնում, իսկ շրջակա մասերում
Հետզհետե լույսը դառնում էր ցանցառ:

130 Եվ հրեշտակներ անթիվ, բացված թևերով,
Տոնախմբում էին այնտեղ ու ճիտում,
Ամեն մեկը ուրույն փայլով ու փառքով:

133 Մինչդեռ նրանք ցնծում էին ու երգում,
Գեղեցկուհին ժպտուն նայում էր նրանց
Եվ բոլորին երանությամբ համակում։

136 Թեկուզ լիներ լեզուս մտքիս համազոր,
Չէի փորձի նկարագրել բառերով
Նշին մասն իսկ այդ թովչության անսովոր։

139 Երբ Բեռնարդը տեսավ, որ ես հիացքով
Նայում էի նրա դեմքին անձկալի,
Ինքն էլ հայեց նրան այնքան հաճույքով,

142 Որ բորբոքեց իմ զմայլանքն ավելի։

ԵՐԳ ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Հայեցողն այն իր տեսիլքով վերացած,
Հոժարակամ ուսուցչի դեր ստանձնեց
Եվ բարբառեց այս խոսքերով սրբասաց.

4 «Այն կինը, որ հաջորդ շարքում է նստած,
Հենց նա է, որ մարդկության մեջ վերք բացավ,
Որը հետո բուժեց Մարիամը գթած։

7 Նրանից ցած՝ երրորդ շարքի գահույքին,
Հոաքելն է նստած, ինչպես տեսնում ես,
Բեատրիչեն ունենալով իր կողքին։

10 Ահա Սառան, Հուդիթը և Ռեբեկան,
Ահա և նա, որ մեծ հանին էր նրա,
Ով **«Ողորմեա»** երգեց վշտից հոգեկան։

13 Այսպես նրանք հաջորդական շարքերով
Զետեղված են մեկը մյուսից ստորև,
Ինչպես նրանց ես նշեցի անունով։

16 Իսկ յոթերորդ շաբաթից մինչև խորքը խոր
Հաշորդում են երբայեցի այլ կանայք,
Հատանելով վարդի թերթերը բոլոր:

19 Իսկ այդ բոլոր կանայք միջնորմ են կազմում,
Որի շնորհիվ ատենաբանները վարդի
Երկու ոլորան կարգերի են բաժանվում:

22 Զախակողմում, ուր գահերը լիովին
Զբաղված են, տեղավորված են նրանք,
Որ ունեցան հավատ գալիք Մեսիային:

25 Աջակողմում, ուր առկա են տակավին
Թափուր գահեր, տեղավորված են նրանք,
Որ ունեցան հավատ եկած Մեսիային:

28 Ինչպես այս կողմ գահը երկնի թագուհու
Եվ գահերը մյուս կանանց ենթակա
Կազմում են այս բաժանումը ընդհանուր,

31 Այսպես ներհակ կողմում գահը Հովհաննու
(Որ ապրեց սուրբ և մահացավ մարտիրոս)
Եվ այլ գահեր կազմում են այլ բաժանում:

34 Նրանից ցած մի միջնորմ են կազմում դեռ
Ֆրանկիսկը, Բենեդիկտոսն ու Ավգուստինն
Եվ բազմաթիվ կրոնական այլ պետեր:

37 Արդ հիացիր ատենաբանին տեսչությամբ,
Չի երկու կերպ դավանողներն հավատի
Այս պարտեզում միշտ կբաշխվեն համաչափ:

40 Իսկ սկսած ատենաբանից միջակա՝
Գտնվում են նրանք, որոնք փրկվել են
Ոչ թե իրենց արժանիքով սեփական,

43 Այլ ծնողի, այն էլ որոշ պայմանով.
Նրանք մարմնի կապանքներից լուծվել են,
Լավն ու վատը չհասկացած դեռ փորձով:

46 Նրանց դեմքից այդ զուշակել կարող ես,
Ինչպես նաև նրանց ձայնից մանկական,
Եթե նրանց դաշ նայես և ուշ դնես։

49 Բայց դու երկմիտ՝ լռությունս ես պահպանում.
Ես կարձակեմ այն փապանքները ամուր,
Որոնց մեջ քեզ նորք հարցերն են կաշկանդում։

52 Այս ընդարձակ արքայության մեջ քնավ
Պատահական մի բան չկա, ինչպես
Չկա թախիծ, կամ չկա քաղց ու ծարավ։

55 Այն բոլորը, ինչ դու աստեղ ես տեսնում,
Հաստատված է հավերժական օրենքով,
Ինչպես մատին մատանին է ագուցվում։

58 Մանուկները, որ վաղաժամ են մեռել,
Առանց հատուկ պատճառի չէ, որ աստեղ
Երանության տարբեր չափեր են գտել։

61 Արքան, որի արքայությունն երկնային
Այնքան լի է ցնծությունով ու սիրով,
Որ ոչ ոք չի կարող ցանկալ ավելին,

64 Ստեղծելով հոգիներին անհամար,
Նրանց տարբեր շնորհներով է օժտում,
Եվ այս փաստը բավական է քեզ համար։

67 Իսկ այդ փաստը քեզ հայտնի է Սուրբ Գրքից,
Ուր խոսվում է երկվորյակի մասին այն,
Որ դեռ անծին տարբերվում էր մեկ մեկից։

70 Եվ հարկ է, որ ամեն հոգի երանելի
Վարձատրվի այն շնորհի համեմատ,
Որով օժտվեց իր ծնունդից սկսյալ։

73 Մանուկներն էլ, որ անմեղ են ի բնե,
Երանության տարբեր չափեր ստացան,
Ճակատագրով տարբերվելով ի ծնե։

76 Սկզբնական շրջանում վաղ դարերի
Ի փրկություն անմեղ մարդկանց հերիք էր
Լոկ ունենալ հավատն իրենց հայրերի:

79 Երբ լրացան ժամանակները այդ հին,
Հարկ զգացվեց արուներին թլփատել,
Որ ուժ տրվեր անմեղության թևերին:

82 Բայց երբ եկավ ժամանակը շնորհքի,
Ապա դարձավ մկրտությունն անհրաժեշտ,
Առանց որի փակ էր մուտքը երկնքի:

85 Հիմա նայիր այն դեմքին, որ Քրիստոսին
Ծատ է նման, և նրա փայլը միայն
Քեզ թույլ կտա տեսանելու Քրիստոսին»:

88 Տեսա նրան երանությամբ համակված,
Շրջապատված հրեշտակներով սրբազան,
Որ բարձունքում թռչելու են սահմանված.

91 Եվ այն, ինչ ես տեսել էի մինչև արդ,
Զպատճառեց ինձ այնքան խոր զմայլանք,
Որքան դեմքն այդ աստվածակերպ, փառազարդ:

94 Սիրո ոգին, որ առաջինն անդ իջավ,
«Ողջույն, Մարիամ, լի շնորհոք» օրհներգեց
Եվ թևերը նրա առջև բաց արավ:

97 Ամեն կողմից աստվածային այն երգին
Պատասխանեց հույլը հոգվոց երանյալ,
Եվ դեմքերը ավելի վառ շողացին:

100 «Ո՛վ դու, սուրբ հայր, որ ինձ համար աստ իջար,
Մի պահ գահը քո թողնելով փառահեղ,
Որ առհավետ հատկացված է քեզ համար,

103 Ո՞ր հրեշտակն է այդ, որ այնպես հիացքով
Մեր թագուհու աչքերի մեջ է նայում,
Բոցավառված ասես սիրո կրակով»:

106 Այս խոսքերով ես դիմեցի դեռ նրան,
Որի դեմքը ցոլցոլում էր Մարիամով,
Ինչպես այգաստղն արեգակով հուրհրան»:

109 Եվ նա ասաց. «Հրեշտակի կամ հոգու մեջ
Ինչքան սեր ու հրճվանք կարող են լինել,
Նրա մեջ կան, և դա մեր իղձն է անշեջ.

112 Չի դա նա է, ով ավետիսը տարավ
Կույս Մարիամին, երբ որ Որդին Աստուծո
Մեր մարմնական բեռը կրել հանձն առավ:

115 Արդ աչքերովդ հետևիր իմ խոսքերին
Եվ լավ նայիր պատրիկներին մեծամեծ,
Որ գահ ունեն կայսրության մեջ երկնային:

118 Այն երկուսը, որ վերևում են բազմած
Եվ շատ մոտ են օգոստափառ կայսրուհուն,
Արմատներն են երկու՝ վարդի այս բացված:

121 Այն, որ նրա ձախակողմում է նստած,
Նախահայրն է, որի ճաշակն հանցավոր
Պատճառ դարձավ մարդկանց այնքան դառնության:

124 Աջ կողմինը եկեղեցու հայրն է հին,
Որին Քրիստոս լոկ վստահեց ու հանձնեց
Բանալիքն այս արքայության երկնային:

127 Այն, որ կյանքում նախատեսեց ու հայտնեց
Դժվարին ու ծանր օրերը հարսի,
Որ ձեռք բերվեց չարչարանքով դառն ու մեծ,

130 Սրա մոտ է նստած, մյուսի մոտ է նա,
Որի օրոք հեստ, ապերախտ, հեղհեղուկ
Ժողովուրդը կերավ միայն մանանա:

133 Պետրոսի դեմ անա նստած է Աննան,
Այնքան ուրախ իր աղջկան հայելուց,
Որ անքթիթ օրհնելգում է «Ովսաննայ»։

136 Իսկ դիմացը ընտանիքի նախահոր
Սուրբ Լուսիան է, որ քեզ փրկեց կորուստից,
Երբ դու գայթել էիր հովտում հախճթոր։

139 Բայց տեսիլքիդ ժամը անցնում է քանզի,
Այստեղ պետք է կասեմք, ինչպես լավ դերձակ,
Որ ձևում է ըստ ունեցած կերպասի.

142 Եվ մեր հայացքն ուղղենք Սիրույն Վեհագույն,
Որպեսզի դու ըստ կարելվույն խորանաս
Նրա պայծառ էության մեջ գերագույն։

145 Բայց որպեսզի խորանալու փափագով
Ետ չընկրկես, թևածելիս դեպի վեր,
Պետք է որ մենք շնորհ հայցենք աղոթքով,

148 Շնորհ նրանից, ով կարող է օգնել քեզ։
Հետևիր ինձ զգացումով ներշնչյալ
Եվ քո սրտում կրկնիր խոսքերս անձկակեզ»։

151 Եվ նա սկսեց սուրբ աղոթքը հետևյալ.

ԵՐԳ ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ

«Ո՛վ մայր կուսան և դուստրդ քո զավակի,
Խոնարհ ու վեհ քան ամենայն արարած,
Սահմանանիշ հավերժական խորհուրդի։

4 Դու մարդկային մեր բնությունը այնքան
Ազնվացրիր, որ ստեղծիչը նրա
Դարձավ նրա ստեղծյալը սոսկական։

7 Քո արգանդում սերը նորից բորբոքվեց,
Որի հրով խաղաղության մեջ հավերժ
Դրախտային այս վարդն այսպես բողբոջեց:

10 Ասա մեզ համար բոցապատ ջահ ես սիրո,
Իսկ աշխարհում, մահկանացու մարդկանց մեջ,
Դու անսպառ ու ջինջ աղբյուր ես հուսո:

13 Ո՛վ Տիրամայր, այնքան մեծ ես ու բարի,
Որ առանց քեզ շնորհ հայցել՝ կլիներ
Ինչպես թռչել ուզել առանց թևերի:

16 Դու ոչ միայն քո բարությամբ օգնում ես
Քեզ դիմողին, այլ շատ հաճախ ինքնակամ
Գոհացնում ես կարոտյալի հայցը հեզ:

19 Դու գթություն, ողորմություն ես համակ,
Դու վեհանձն ես, և քո մեջ է խտացած
Էակների բարությունը բովանդակ:

22 Այս մարդը, որ տիեզերքի հատակից
Մինչև այստեղ տեսավ վիճակը մեկ մեկ
Հոգիների, որ հեռացել են կյանքից,

25 Պաղատում է քեզնից այնքան զորություն,
Որ կարենա բարձրանալ այն տեսության,
Որի մեջ է երանությունն ավարտուն:

28 Այդ տեսությամբ ես չեմ այրվել դեռ այնպես,
Ինչպես հիմա նրա համար եմ այրվում.
Արդ աղոթքս վերընծայում եմ ես քեզ,

31 Որպեսզի նա քո օգնությամբ ազատվի
Ամեն մութից ու մշուշից երկրային
Եվ Գերագույն Բարիքն իրեն հայտնվի:

34 Ո՛վ թագուհի, աղաչում եմ քեզ դարձյալ,
Որ անարատ պահես տեսիլները նրա,
Տեսիլքներից հետո այնքան վերացյալ:

37 Հսկիր նրա մղումներին մարդկային.
Տես, ձեռնամած միանում են աղոթքիս
Բեատրիչեն ու մյուս սրբերն երկնային»:

40 Աղոթողին հառած աչքերն հիախանդ՝
Աստվածարյալ Տիրամայրը ցույց տվեց
Իր գոհությունն այդ աղոթքից ջերմեռանդ:

43 Ապա ուղղվեց դեպի Լույսը մշտավառ,
Ուր ոչ մի միտք չի թափանցի այնքան խոր,
Որքան նրա միտքը վճիտ ու պայծառ:

46 Ես, որ հասել էի բոլոր իղձերիս
Կատարածին, շատ բնական կլիներ,
Որ զգայի իմ մեջ լրումն հրայրքիս:

49 Բեռնարդն այնժամ առաջարկեց ինձ ժպտով,
Որ նայեի վերև, սակայն ես արդեն
Նրա ուզածն արել էի իմ կամքով:

52 Իմ հայացքը դառնալով ջինջ ու վճիտ,
Հետզհետե ավելի խոր թափանցեց
Ճանճանչի մեջ միակ Լույսի ճշմարիտ:

55 Այստեղ տեսածս անկարող եմ պատկերել.
Ձի մեր լեզուն, այդ տեսիլքին հանդիման,
Կարող է լոկ պապանձվել ու կարկամել:

58 Ինչպես նա, ով քնում երազ է տեսնում
Եվ, զարթնելով, մտաբերում է միայն
Այն հուզումը, որ ապրել է երազում,

61 Այսպես և ես, քանզի տեսիլքն իմ մտքի
Անհետացավ, թեպետև իմ սրտի մեջ
Դեռ ծորում է քաղցրությունը տեսիլքի:

64 Այսպես ձյունն է հալվում շողքից արևի.
Այսպես հողմից ցրվում էին Սիբիլյան
Պատգամները՝ գրված վրան տերևի:

67 Ո՛վ վերին Լույս, անմատչելի մեր մտքին,
Քո պատկերից, որ երևաց ինձ այնժամ,
Գեթ ցույց տուր ինձ չնչին մասնիկ մի կրկին,

70 Եվ լեզվիս տուր այնպիսի ուժ գերակա,
Որ կարենամ ես ավանդել քո հուրքից
Գոնե մի կայծ սերունդներին ապագա.

73 Թե կարենամ մի բան հիշել տեսիլքից
Եվ որոշ բան այս տողերում հնչեցնել,
Մարդիկ մի բան կհասկանան քո փառքից:

76 Թե հայացքս հառեր նրա ցոլքին վառ,
Ապա նրա շողյունների սուր ցայտքից
Ես շլացած կմնայի անպատճառ:

79 Այսուհանդերձ հանդգնեցիր այդ պահուն
Երկար տոկալ նրա տեսքին, մինչև որ
Զուլվեց հայացքս իր էության հետ անհուն:

82 Ո՛վ հորդ շնորհ, որ ինձ դարձրիր ընդունակ
Թափանցելու Հավերժ Լույսի մեջ այնքան,
Որ սպառվեց տեսության ուժն իմ համակ:

85 Տեսա Նրա խորության մեջ ընդգրկված
Ու սիրային կապով զոդված այն, ինչ որ
Տիեզերքում երևում է մասնատված.

88 Գոյեր, ձևեր և կապն իրենց միության,
Բոլորն այնպես առընչված են իրար հետ,
Որ ասածս լոկ նշույլն է իսկության:

91 Կարծես տեսա այդ միությունն ընդհանուր,
Ըստ որում ես, այս ասելով, զգում եմ
Մի ցնծություն անպարագիր ու անլուր:

94 Մեկ րոպեում ես զարմացա ավելի,
Քան Նեպտունը քսան և հինգ դար առաջ,
Երբ բաց ծովում տեսավ ստվերն Արգոյի:

97 Այսպես միաքը, զմայլանքից կարկամած,
Ուշի-ուշով ու սևեռուն նայում էր
Եվ տոգորվում պաշտամունքով երկյուղած:

100 Այդ վառ Լույսից նոգին դառնում է այնպես,
Որ այլ բանի համար խզվել նրանից,
Անկարելի բան կլիներ իրապես:

103 Չի Բարին, որ նպատակն է բոլորի,
Նրա մեջ է, և այն, ինչ որ նրա մեջ
Անթերի է, նրանից դուրս է թերի:

106 Այսուհետև լինելու է իմ լեզուն
Ավելի թույլ իմ տեսածը պատմելու,
Քան թե լեզուն երեխայի կաթնասուն:

109 Ոչ վառնգի այդ Լույսի մեջ կենդանետ
Կային պես-պես, հարափոփոխ վիճակներ,
— Նա այնպես է, ինչպես եղել է հավետ—

112 Այլ զի աչքս, թափանցելով նրա մեջ,
Ի զորու չէր միությունը տեսնելու
Իր այլազան ցոլացությանց մեջ անշեջ:

115 Այն վեհ Լույսի էության մեջ խոր ու ջինջ
Երևացին երեք ծիրեր իմ աչքին,
Երեք գույնի և միևնույն չափի ճիշտ:

118 Մեկը մյուսի, ինչպես Իրիսն Իրիսի,
Ցոլացումն էր, իսկ երրորդն էր հրի պես,
Եվ հավասար ազդասիքն էր երկուսի:

121 Օ՛, խոսքն ինչքա՜ն սակավազոր է մտքից,
Իսկ իմ միտքը իմ տեսիլքի հանդիման
Այնքան թույլ է, որ չի բավի ասել «քիչ»:

124 Օ՛ ինքնաբուխ ու ինքնագո Հավերժ Լույս,
Դու ես աղբյուրն իմացության ամենայն,
Դու ես միայն ներշնչողը սեր ու հույս:

127 Իսկ այն ծիրը, որ ցոլացումն էր քո վառ,
Ինչպես լույսից արտացոլված մի այլ լույս,
Երբ դիտեցի ուշի ուշով ու երկար,

130 Նրա ներսում տեսա պատկերը մարդու,
Ներկայացված մասնահատուկ իր գույնով,
Եվ հառեցի առ այն հայացքն իմ հատու։

133 Ինչպես ճիգ է երկրաչափը գործ դնում
Շրջանակը չափելու և, ճգնելով,
Չափերի մեջ հարակցություն չի գտնում,

136 Այսպես եղա հանդեպ այդ նոր տեսիլքին.
Իզուր էի ջանում գտնել, թե ինչպես
Մարդու պատկերն հարաբերում էր ծիրին.

139 Թևերս անզոր էին նման թռիչքի.
Բայց իմ մտքում փայլատակեց մի նոր լույս
Եվ ինչ պարզեց խորհուրդը այդ տեսիլքի։

142 Այստեղ կասեց իմ զմայլանքն հոգեթով.
Բայց արդեն իմ սիրտն ու կամքը վարում էր
Անվի նման դաշնաթավալ կշռույթով,

145 Սերն՝ որ շարժում է արևն ու այլ աստղեր։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԴԺՈԽՔ

ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

1. Կիսանամփին մեր այս կյանքի նախընթաց— *երեսունհինգ տարեկան հասակին։ Մարդկային կյանքի ճանապարհը Դանտեն նմանեցնում է աղեղի կորագծին, որի միջնակետը կամ գագաթը համարում է երեսունհինգ տարեկան հասակը («Խնջույք» Դ, 23), լիարժեք հասակը («ԴԺ.» ժԵ, 51)։*

31—60. Երեք գազաններ— *երեք գազանները* (հովազ *տ. 32,* առյուծ *տ. 45,* էգ գայլ *տ. 49*) *այլաբանորեն պատկերում են մարդկային երեք մեղքերը կամ մոլությունները-հեշտասիրությունը* (*հովազ*), *գոռոզությունը* (*առյուծ*) *և ագահությունը* (*էգ գայլ*)։ *Արդի դանտեագետներից ոմանք այս այլաբանության մեջ տեսնում են մեղքերի տեսակները, որոնք պատժվում են Դժոխքում՝ խաբեությունը* (*հովազ*), *բռնությունը* (*առյուծ*) *և անզսպությունը* (*էգ գայլ*)։

37—40. Եվ արևն այն աստղերի մեջ էր մտնում— *արևը Խոյ համաստեղության մեջ է մտնում և նրա հետ է ծագում գարնանը, այսինքն՝ տարվա այն եղանակին, երբ, ըստ քրիստոնեական ավանդության, աստված* (Սերն աստվածյան) *ստեղծել է աշխարհը և շարժում տվել երկնային մարմիններին։*

62. Մի հոգի— *հռոմայեցի նշանավոր բանաստեղծ Վիրգիլիոսն է (70—19 մ. թ. ա.), հեղինակը «Էնեական», «Հովվականքի» և «Մշակականքի»։ «Աստվածային կատակերգության» մեջ Վիրգիլիոսը ներկայացված է իբրև սիմվոլ բանականության, ինչպես նաև կայսերական իշխանության։ Բանականության պարտականությունն է մարդկանց առաջնորդել դեպի երկրային երջանկություն։ Վիրգիլիոսը Դանտեին ազատում է «մթամած անտառից» և Դժոխքի ու Քավարանի միջով նրան առաջնորդում է դեպի Երկրային Դրախտ։ Վիրգիլիոսը իր «Էնեական» երգել է կայսրությունը և նկարագրել Էնեասի այցելությունը հանդերձյալ աշխարհ («ԴԺ.» Բ, 13—15), իսկ «Հովվականքում», ըստ միջնադարյան մեկնաբանության, մարգարեացել է Մեսիայի գալուստը («Քավ.» ԻԲ, 70—72)։*

69. Մանտուայում— *Վիրգիլիոսը ծնվել է հյուսիսային Լոմբարդիայի Մանտուա (Մանտուա) քաղաքում, ավելի ճիշտ Մանտուայի մարզի Անդես (ներկայումս Պիետոլա) գյուղաքաղաքում։*

70. Ծնվել եմ ուշ, օրոքն Հուլիոս Կեսարի— *Վիրգիլիոսը ծնվել է 70 թվին (մ. թ. ա.), երբ Կեսարն ընդամենը երեսուն տարեկան էր և դեռ հեռու էր իշխանու-*

թյունից։ Վիրգիլիոսը ուշ է ծնվել, որովհետև Կեսարը, սպանվելով 44 թվին (մ. թ. ա.), հնարավորություն չունեցավ նրան ճանաչելու և ըստ արժանվույն գնահատելու, ինչպես արեց Օգոստոսը։

74. Անֆիստոդի— Անքիսի որդի Էնեասը, Վիրգիլիոսի «Էնեական» հերոսը։ Նրը Տրոյան ազատվեց ու կործանվեց Իլիոն միջնաբերդի հետ հուլունների ձեռքով, Էնեասը այնտեղից մեկնեց Իտալիա, ուր հիմքը դրեց ապագա հռոմեական կայսրության։

102. Քերծե— էդ գայլին դիմագրավելու և ընկճելու համար հարկավոր է մի քերծե (veltro)— այսինքն վարժեցված և արագավազ որսի շուն։ Քանի որ գայլը սիմվոլն է ագահության կամ ընչաքաղցության, հիմնական պատճառը հասարակական և բարոյական անկարգության, ապա Քերծեն կլինի սիմվոլը այնպիսի մի ուժի, որ կհալածի ագահությունը իր որջացած տեղերից և կհաստատի կարգն ու արդարությունը աշխարհում, մասնավորապես Իտալիայում (տտ. 106—108)։ Արդյոք Դանտեն Քերծեի այլաբանության տակ որևէ պատմական անձ նկատի ունի՞, եթե այո, ապա ո՞ւմ նկատի ունի, դժվարանում են պատասխանել մեկնիչները։

103. Սա ոչ հողով, ոչ մետաղով կընվի— Քերծեն չի հրապարակի երկրային տիրապետություններով և նյութական հարստություններով։

105. Նա Ֆելտրի և Ֆելտրի միջև կծնվի— եթե Քերծեն պատմական անձ է, ապա «Ֆելտրի և Ֆելտրի միջև» (tra Feltro e Feltro) արտահայտությունը ցույց է տալիս այն աշխարհագրական վայրը (Վենետիկի մարզի Ֆելտրեի և Ռոմանյայի մարզի Մոնտեֆելտրոյի միջև), ուր կծնվի Դանտեի սպասած բարենորոգիչը։ Իսկ եթե բնագրում Feltro պետք է կարդալ feltro (նշանակում է բրդյա հասարակ շուխա, թաղիք), ապա tra feltro e feltro (թաղիքի և թաղիքի միջև) արտահայտությունը ցույց է տալիս այն խոնարհ ու անշուք վիճակը, որի մեջ պետք է ծնվի Քերծեն։

108. Տուռնոն, Նիսոն, Էվրիալն ու Կամիլլան— «Էնեական» հերոսներ, որոնք զոհվեցին Լատինոսի (Իտալիայի) համար մղված մարտերում։

118. Ապա մուտք, որ տանվում են ճանապարհով— ապա կտեսնես Քավարանի հոգիներին, որոնք հանձնվում են վրում խրախճանքները, քանի որ դրանք հավիտենական չեն։

120. Երանելի հոգիներ Էվ— դրախտաբնակների մոտ։

122. Ինձանից արժանավոր մի հոգի— Բեատրիչեն (տե՛ս «Դժ.» Բ, 70 ծանոթ.)։

134. Դարպասը ասուր Պետրոսի— Քավարանի դուռը, որի պահնորդն է Պետրոս առաքյալի փոխանորդ հրեշտակը («Քավ.» Բ, 76—129)։

ԵՐԳ ԵՐԿՐՈՐԴ

13—21. Դու ասում էս Սիլվիոսի հոր մասին— Վիրգիլիոսը իր «Էնեական» Ջ երգում պատմում է, որ Սիլվիոսի հայր Էնեասը գնա կենդանվուն այցելեց Ջանդերձյալ աշխարհ և այնտեղ իր հորից՝ Անքիսից լսեց, որ ինքը նախասահմանված է դառնալու Հռոմի և հռոմեական կայսրության հիմնադիրը։

28. Ապա այնտեղ գնաց Պեռոն Ջնտրոյան— «Ընտրության Անոթ» է կոչվել Պողոս առաքյալը «Գործք առաքելոցում» (Թ, 15)։ Բան ավանդության Պողոս առաքյալը քարձրացել է Դրախտ և ապա իջել Դժոխք։

52. Հոգիների մեջ առկախ— ակնարկում է կիմբոսի հոգիներին, որոնք գտնվում են դատապարտության և երանության միջև առկախ վիճակում («Դժ.» Դ, 45)։

70. Բեատրիչե— Ֆլորենտացի Ֆոլկո Պորտինարիի դուստրը, որին Դանտեն սիրել է իր պատանի հասակում։ Բեատրիչեն մեռավ 1290 թվին, երիտասարդ հասակում։ «Անոմվածային կատակերգության» մեջ շարադրելով լինել սիրեցյալ կին, նա գլխավորապես ներկայանում է իբրև այլաբանական դեմք, իբրև խորհրդապատկեր հավատի, հայտնության և աստվածաբանության։ Երկրային դրախտից, այսինքն՝ երկրային կյանքի երջանկությունից, նա քանատեղծին առաջնորդում է դեպի երկնային դրախտ, այսինքն՝ հավիտենական կյանքի երանություն։

94. Եկեղեցում կա մի կին ազնիվ ու բարի— *ակնարկվում է Մարիամ աստվածածնին։*

97. Լուչիա— *քրիստոնեական սրբուհի, այլաբանորեն մարմնացնում է «լուսավորի շնորհը» (բառ. luce— լույս)։*

102. Նստել էի Հռաքելի հետ հնոտի— *Հռաքելը՝ Հակոբ նահապետի կինը, սիմվոլն է «հայեցողական կյանքի»։ Դրախտային ամֆիթատրոնի աստիճանների վրա, Մարիամ աստվածածնից երկու աստիճան ներքև, նստած է Հռաքելը, նրա կողքին՝ Բեատրիչեն։ Իսկ Ադամի դիմաց, վերին շարքում, նստած է Լուչիան (հմմտ. «Դր.» ԼԲ, 4—9 և 136—138)։*

107. Մահն— *հոգու մահը, դատապարտության վտանգը, որ այլաբանորեն ներկայացված է անտառում հանդիպած երեք գազաններով («Դժ» Ա, 31—60)։*

ԵՐԳ ԵՐՐՈՐԴ

1—9. *Այս առաջին ինը տողերը արձանագրված են Դժոխքի դռան վրա, ազդարարելու համար հոգիներին, որ մտնում են տանջանքի թագավորության մեջ։ Դժոխքը առաջացել է աստվածության դեմ ապստամբած Մաղայեցի անկումից («Դժ» ԻԴ, 121)։*

35. Ճղճիմ հոգիներ— *Դժոխքի դռան և Ախերոնի ափի (տ. 78) միջև եղած տարածությունը (Դժոխքի նախամուտքը) գրավում են ճղճիմ, անսիզբունք, փոքրոգի մարդկանց հոգիները։*

37. Նրանց հետ է հրեշտակների դասն այն վատ— *հրեշտակների այն խումբը, որ երկչոտությունից չկռվեց դիրք բռնեց աստծու և ապստամբ հրեշտակների միջև մղված պայքարում։*

42. Որ նրանց մոտ չպարծենա հոգին պիղծ— *Դժոխքի խորքերում դատապարտված մեղավոր հոգիները պիտի պարծենային իրենց հանցագործությամբ, եթե իրենց կողքին տեսնեին այդ ողորմելիներին։*

60. Որ վատությամբ հուժարվեց մեծ գործից— *հավանաբար նկատի ունի Կելեստին Ե-ին, որ 1294 թվին պապ ընտրվեց առաջացած տարիքում, բայց հինգ ամիս հետո հրաժարվեց պապությունից, իրեն զուրկ համարելով եկեղեցին դեկավարելու համար անհրաժեշտ հատկություններից։*

78. Ախերոն— *քան հին գիցաբանության ստորերկրյա գետ, որով հոգիներն անցնում են՝ Տարտարոսի պատիժներին գնալու համար։ Տարտարոսի գետերը հոսում են դանտեական Դժոխքում։*

94. Քարոն— *հին Տարտարոսում հոգիներին փոխադրող նավաքարը («Էնեական» Զ, 300—330)։ Դանտեական Դժոխքում նա դարձել է դև (տ. 110)։*

95. Ունի— *երկնքում։*

101. Անազորույն այն խոսքերը Քարոնի— *տտ. 84—87։*

126. Վախն իրեն է փոխվում— *զգալով աստծու դատաստանի անխուսափելիությունը, հոգիները ոչ միայն համակերպվում են իրենց վիճակին, այլև նրանց մոտ վախը վերածվում է իրենի, ինչպես մի մահապարտի մոտ մոտալուտ պատժի սարսափը վերածվում է որքան կարելի է շուտ պատիժ ստանալու փափագին։*

ԵՐԳ ՉՈՐՐՈՐԴ

7. Եվ սեռ ես ինձ գտնում եմ— *Դանտեն, արթնանալով, իրեն արդեն գտնում է Ախերոն գետի մյուս ափին։*

13. Աշխարհի անյայտ— *Դժոխքը։ Դանտեի Դժոխքը շրջված ձագարի կամ կոնի ձև ունեցող մի վիթխարի անդունդ է, որը խորանում է մինչև երկրի կենտրոն։ Այդ անդունդը վերևից մինչև հատակը ստորաբաժանված է ինը համակենտրոն պարուրակների։*

24. Վին պատող պարուրակը առաջին— *առաջին կամ վերին պարուրակը կոչվում է Լիմբոս (լատ. limbus— եզր)։ Այստեղ են մնում այն հոգիները, որոնք թեև չեն մեղանչել, բայց և այնպես չեն էլ փրկվել, որպեսզի կամ մեռել են մկրտություն ստանալուց առաջ և կամ ապրել են քրիստոնեությունից առաջ։*

45. Լիմբոսի մեջ ունեն առկախ մի վիճակ— *ունեն մի վիճակ փրկության և իսկական դատապարտության միջև («Դժ», Բ, 52)։*

52—54. Ես նոր էի ասած...— *Վիրգիլիոսը, որ մեռել էր 19-ին մ. թ. ա., Լիմբոս եկավ մի հինգամյակ առաջ այն օրից, երբ, ըստ քրիստոնեական ավանդության, Քրիստոսը (Հզորը) իր մահվան և հարության միջև ընկած ժամանակամիջոցում իջավ Դժոխք և այնտեղից դուրս բերեց Հին Կտակարանի արդարներին։ Դրախտը մարդկանց համար բացվեց միայն սկզբնական մեղքի քավությամբ, որ կատարվեց Քրիստոսի մահով։*

55. Մեր նախահոր— *Ադամին։*

57. Մովսեսին...— *որ ժողովրդի տերն էր և աստծո ծառան։*

59. Իսրայելին— *Հակոբին։* Նրա հորը— *Իսահակին։*

60. Եվ Հռաքելին սիրված սիրով կաթողին— *Հռաքելին այնպես էր սիրել Հակոբը, որ նրան կնության առնելու համար 14 տարի ծառայեց նրա հորը («Ծնն.», ԻԹ, 18—30)։*

86—90. *Լիմբոս վերադարձող Վիրգիլիոսին միաձայն ողջունում են (տտ. 79—81) հնադարյան չորս մեծ պոետները՝ հույն Հոմերոսը և լատիններ Հորատիոսը, Օվիդիոսը և Լուկանը։*

121—144. *Լիմբոսի դղյակի դալար մարգագետինի վրա Դանտեի աչքերին ներկայանում են նշանավոր դեմքեր—հռոմեական կայսրության հիմնադրությանը նպաստած առասպելական և իրական հերոսներ։*

ԵՐԳ ՀԻՆԳԵՐՈՐԴ

4. Մինոս— *Զևսի և Եվրոպայի առասպելական որդին, Կրետեի արդար թագավորն ու օրենսդիրը, որ մահից հետո դարձավ Տարտարոսի երեք դատավորներից մեկը (Էակոսի և Ռադամանտի հետ միասին)։*

61—62. Իսկ այն մյուսը եղավ սիրուց ինքնասպան,...— *Կարթագենի պառասպելական թագուհի Դիդոնը (տ. 85), որ ինքնասպանություն գործեց, երբ լքվեց Էնեասից, որի սիրույն դրժել էր իր հանգուցյալ ամուսին Սիքեի հիշատակին հավատարիմ մնալու իր խոստումը։*

74. Այնտեղ զույգի հետ համբնթաց...— *սիրահարների այդ զույգը անխզելիորեն իրար հետ կապված Ֆրանչեսկա դա Ռիմինիի և Պաոլո Մալատեստայի հոգիներն են։*

Ֆրանչեսկա դա Ռիմինին Ռավեննայի սինյոր Գուիդո դա Պոլենտայի դուստրն էր։ Նրան ամուսնացրին Ռիմինիի սինյոր Ջանչոտտո Մալատեստայի հետ, որ կաղ ու տգեղ մեկն էր։ Ապա Ֆրանչեսկան սիրահարվեց Ջանչոտտոյի եղբորը՝ Պաոլոյին. մի օր երկուսն էլ հանցանքի վրա բռնվեցին և սպանվեցին վիրավորված ամուսնուց։

97. Ես ծնվել եմ այն քաղաքում ծովամերձ...— *այսինքն Ռավեննայում, որ գտնվում է Ադրիական ծովի ափին։*

107. Կայենում— *Դժոխքի իններորդ պարունակի առաջին գոտում, որ կոչվում է Կայենի անունով։*

128. Լանչիլոտտի պատմությունը սիրային— *միջնադարյան ֆրանսիական Կլոր սեղանի վեպի ասպետ Լանչիլոտտոյի (Լանսելոտի) և թագուհի Ջինևվրայի (Ժենևվրի), Արթուր թագավորի կնոջ, սիրո պատմությունը։*

137. Գալեոտտո— *վեպում Գալեհոտոն (Գալեհոն) այն անձն է, որ միջնորդի դեր կատարեց Լանչիլոտտոյի և Ջինևվրայի մերձեցման համար։*

138. Է՛լ այն օրը չկարդացինք ոչ մի տող— *սիրը այդ զույգից Ֆրանչեսկային և Պաոլոյին միացրեց մինչև մահը և մահից էլ անդին։*

ԵՐԳ ՎԵՑԵՐՈՐԴ

13. Կերբերոս— *ըստ հին հունական դիցաբանության, երեքգլխանի շուն, որ պահում է Դժոխքի մուտքը («Էնեական» Զ, 417—423)։ Դանտեի մոտ նա երեքգլխանի գև է (տ. 31), գազանային և մարդկային գծերով։*

49. Քաղաքդ— Ֆլորենցիան։

52. Ձակկո— սա կամ հեգնանուն է, անարգական նշանակությամբ (իտ. ciacco նշանակում է խոզ), որ շատ հարմար է որկրամոլի համար, և կամ հատկանունն է մի անձի, որի ով լինելը հայտնի չէ։ Հավանաբար ականավոր մի դեմք է, որին Դանտեն կարեկցում է (տտ. 58—59) և որից տեղեկություններ է ուզում Ֆլորենցիայի ներքաղաքական անցքերի մասին (տտ. 60—63)։

64—72. Եվ նա ասաց...— Ձակկոն կանխագուշակում է Սև գուելֆների (որոնց պարագլուխն էր Կորսո Դոնատին) և Սպիտակ գուելֆների (որոնց պարագլուխն էր Վիերի դեի Ձերկին) միջև պատակված Ֆլորենցիայի մոտալուտ իրադարձությունները։ Երկար վեճից հետո տամ՝ կովի կանցնեն— երկար վեճերից հետո 1300 թվի մայիսին Ֆլորենցիայի երկու հակառակորդ կողմերը՝ Սևերն ու Սպիտակները կսկսեն կռվել. կհաղթեն գեղջուկները (այսպես է անվանում Սպիտակներին, որովհետև Ձերկիները գյուղից էին եկել քաղաք), կանցնեն քաղաքի իշխանության գլուխ և կհալածեն Սևերին։ Ապա երանք երրորդ տարվա ընթացքում...— ապա սպիտակները 1302 թվի սկզբներին կպարտվեն և Սևերը կհաղթեն շնորհիվ Բոնիֆակիոս Ը պապի։

Այս դեպքերը, ինչպես և «Կատակերգության» մեջ հիշատակված քաղաքական այլ իրադարձություններ, որոնք դուշակության ձևով են նկարկայացված, արդեն կատարված էին։

79—87. Դանտեն հետաքրքրվում է հանդուցյալ մի քանի նշանավոր ֆլորենտացիների ճակատագրով։

95. Մինչև ճնշելն հրեշտակային փողերի— այսինքն մինչև ահեղ դատաստանի օրը, երբ կհնչեն հրեշտակների փողերը և հարություն կառնեն մեռելները։

99. Դատավճիռն անալուր— հավերժական և վերջնական դատավճիռը, որ կորոշի հոգիների վիճակը։

106—111. Քո գիտությանն...— Արիստոտելի—Թոմմաս Աքվինացու ուսմունքին, որ Դանտեն ուսումնասիրել է և դարձրել «իրը»։ Ըստ այդ ուսմունքի, էակը ինչքան ավելի է կատարյալ, այնքան ավելի զգայուն է դեպի տանջանքն ու վայելքը։

115. Պլատոն— հարստության աստվածը հին հունական դիցաբանության մեջ։

ԵՐԳ ՅՈԹԵՐՈՐԴ

1. «Պապե սատան, պապե սատան ալեպպե»— Պլուտոսի արտաբերած հանելուկային այս բառերը արտահայտում են կատաղություն և սպառնալիք։

6. Այս ժայռից— այս զառիվայրից, որով իջնում են երրորդից դեպի չորրորդ պարունակ։

12. Միքայել հրեշտակապետը, ըստ «Հայտնության» (ԺԲ. 7—9), ընկճեց հրեշտակների մի խմբի ապստամբությունը։

22. Քարիբդես— ջրապտույտ Մեսինայի նեղուցում, ուր բախվում են Հոնիական և Տիրենյան ծովերի ալիքները։

38. Ձախակողմյան այս սավառներն խուզված— պարունակի ձախակողմյան կիսաշրջանում շարժվում են ժլատները (որոնց մեծ մասը խուզված գլխով կրոնավորներ են. տտ. 46—48). աջակողմյանում՝ շարժվում են շռայլները։

57. Քակ ափերով— ցույց է տալիս ամեն ինչ պահելու իրենց մոլությունը։ Կարած մազերով— ցույց է տալիս ամեն ինչ մսխելու իրենց մոլությունը, ըստ իտալական մի առածի, որ ասում է— «մսխել մինչև վերջին մազը»։

62—96. Բախա— Ֆորտունա, պատահականության աստվածուհին։

96. Նախասեղծ գոյերի հետ միասին— հրեշտակների հետ միասին, որոնք պտտեցնում և ղեկավարում են իրենց հանձնված երկնագնդերը։

108. Ստիքս— Դեպատի քաղաքը շրջապատող ճահիճը, որի մեջ պատժվում են բարկացկոտները։

ԵՐԳ ՈՒԹԵՐՈՐԴ

4. Երկու լույսեր— երկու լույսերը, որոնք վառվում են Գեպեսի քաղաքի աշտարակի գագաթին, ուղղանշանում են, որ երկու ուղեղներ են եկել։

19. Ֆեգիաս— դիցաբանական անձ, Մարսի որդին։ Վրեժ լուծելու համար Ապոլլոնից, որ հրապուրել էր նրա աղջկան, վառեց Դելֆյան տաճարը (Վիրգ. «Էնեակ.», Զ, 618—620)։ Այստեղ Ֆլեգիասը հինգերորդ պատուհանի պահապանն է, հոգիներին մակուլիով փոխադրողը Ստիքսի ճահճով։

27. Իմ մոնելով լոկ մակույկը ծանրացավ— որովհետև Դանտեն մարմնով է. Վիրգիլիոսը հոգի է։

32. Ինձ հանդիպեց տգմոտ մեկը— հարուստ, գոռոզ, բարկացկոտ Ֆլորենտացի ասպետ Ֆիլիպպո դելլի Ագիմարին։ Նրան անվանեցին Արչենտի (տ. 61), այսինքն «արծաթյա», որովհետև նա սովորություն ուներ իր ձին պայտել արծաթով։

68. Գեպեսի խաչ— Գեպեսը («Դժ.» ԺԱ, 65. ԺԲ, 39. ԼԳ, 20) Սաղայելն է, Էյուրիֆեսը. նրա անունով է կոչվում Դժոխքի պարսպապատ քաղաքը։

111. Իմ գլխում «ոչ»-ն ու «այո»-ն վիճեցին— իմ ուղեղում պայքարեցին երկյուղներն ու հույսերը դևերի հետ Վիրգիլիոսի բանակցությունների ելքից։

125—127. Նրանք նույն բանն ասին դրանց առստաֆին...— ըստ եկեղեցու ավանդության, երբ Քրիստոսը Լիմբոս իջավ («Դժ.» Դ, 53—54), դևերը փորձեցին ընդդիմանալ փակելով Դժոխքի արտաքին դուռը։ Բայց Քրիստոսը ջարդեց դուռը, որը այնուհետև մնաց բաց։

ԵՐԳ ԻՆՆԵՐՈՐԴ

23—24. Երիքթոն— թեսալացի առասպելական կախարդ էին, որ մեռելներին կենդանացնում էր և ստիպում գուշակել ապագան (Լուկան, «Ֆարսալիա» Զ, 507—827)։

27. Մարգից Հուդայի— Դժոխքի ամենախոր մասից, որ կրում է Հուդայի անունը («Դժ.» ԼԴ)։

38—48. Երեք Ֆուրիաներ (հուն. Երինեներ, տ. 45)— սրանք, ըստ դիցաբանության, անեծքի, վրեժի ու պատժի աստվածուհիներն են և կոչվում են Ալեկտո, Մեգերա և Տիսիֆոն (տտ. 46—48)։

52. Մեդուսա— ըստ հին հունական դիցաբանության, երեք քույր Գորգոնաներից (տ. 56) կրտսերը, որի տեսքից մարգիկ և գազանները քարանում էին։

54. Թեսեոսին զուր սեղմտիր թոդիկ մեջ— Թեսեոսը («Դժ.» ԺԲ, 17. «Քավ.» ԻԹ, 123) իր քարեկամ Պիրոթոոսի հետ Դժոխք իջավ Պրոզերպինային առևանգելու։ Պիրոթոոսը հոշոտվեց Կերբերոսից, իսկ Թեսեոսը դերի վերցվեց, բայց հետո ազատվեց Հերակլեսի ձեռքով։ Այստեղ Ֆուրիաները կամ Երինները ասում են, որ ժամանակին չսպանեցին Թեսեոսին։

85. Սուրհանդակին երկնքի— Երկնքից ուղարկված սուրհանդակը հրեշտակ է։

91. Երկնքից վտարվածներ— սրանք մի ժամանակ հրեշտակներ էին, որոնք, ապստամբելով աստծու դեմ, երկնքից վտարվեցին, ընկան Դժոխք և դարձան դևեր։

112. Արլ— քաղաք Պրովանսում Ռոդան (Ռոն) գետի ձախ ափին. միջին դարերում նրա գերեզմանոցում գտա կային բազմաթիվ հռոմեական դամբաններ։

113. Պալ (Պոլա)— քաղաք Իսթրիա թերակղզու հարավում, Կառնարոյի ծովածոցի մոտ։ Նրա շրջակայքում նույնպես եղել է ընդարձակ հռոմեական գերեզմանատուն։

130. Նմանն այստեղ եմ՝ անեք նեռ է թաղված— ամեն մի աղանդի սահմանված է մի շիրիմ, կամ շիրիմների մի որոշ խումբ։

131. Շիրիմներն են առավել կամ ավելի տաք— հերձվածողները կամ հերետիկոսները պատժվում են տարբեր աստիճան շիկացած շիրիմների մեջ, նայած նրանց հանցանքի ծանրության։

ԵՐԳ ՏԱՍՆԵՐՈՐԴ

11. Հովապաք— հովիտ Երուսաղեմի մոտ, ուր, ըստ եկեղեցական ավանդության, տեղի է ունենալու վերջին և ահեղ դատաստանը (հմմտ. «Դժ.» Զ, 95 ծանոթ.)։

14. Էպիկուր— հույն մատերիալիստ փիլիսոփա (341—270 մ. թ. ա.)։ Էպիկուրն ու էպիկուրյանները ժխտում էին հոգու անմահությունը։ Այդ հերետիկոսությունը բազմաթիվ հետևորդներ ուներ նաև Ֆլորենցիայում։

17. Փափաքիդ— հարգարժան Ֆարինատային տեսնելու ցանկությունդ (տե՛ս «Դժ» Զ, 79)։

26. Հայրենիքում այն ազնիվ— Ֆլորենցիայում։

32—51. Ֆարինատա դեյլի Ուբերտի— ֆլորենտացի ազնվական, ֆլորենտական գիբելլինների պարագլուխը ԺԳ դարի կեսերին։

52—72. Մի հոգի էլ— մի ուրիշ էպիկուրյան։ Սա Կավալկանտե Կավալկանտին է, Դանտեի մերձավոր բարեկամ, քանաստեղծ Գուիդո Կավալկանտիի հայրը։

60. Ուրդիս— Գուիդոն (1250—1300), Կավալկանտեի որդին, ԺԳ դարի երկրորդ կեսի ամենակարկառուն դեմքն էր Ֆլորենցիայի մշակութային կյանքում։ Ճանաչված էր իբրև բանաստեղծ և փիլիսոփա։ Դանտեն նրան համարել է իր «բարեկամներից առաջինը» («Նոր կյանք» Գ, 14 ԻԴ, 3. ԻԵ, 10)։

63. Ուրիշ, կարծեմ, ձեր Գուիդոն չի հարգել— ակնարկում է Բեատրիչեին։

68. Ինչ ասացի՞ր։ Նա չի հարգե՞լ— «չի հարգել» բայի անցյալ ձևից հայրը հետևցնում է, որ որդին արդեն մահացել է։ Մինչդեռ Գուիդոն դեռ կենդանի էր։

73. Անձն այն սեգ— Ֆարինատան։

79—81. Սակայն ճախճան ճիսուն անգամ շողա վառ դեմքն այն կնոջ— «սակայն չի անցնի հիսուն լիալուսին (հին առասպելներում լուսինը նույնացված էր Պրոզերպինայի՝ Դժոխքի թագավոր Պլուտոնի կնոջ հետ), այնինքն չի անցնի հիսուն ամիս, երբ սեփական փորձով կհասկանաս, թե արտորյալին ինչքան դժվար է հայրենիք վերադառնալը»։

83. Մերոնց դեմ— Ուբերտիների դեմ։

86. Աբրիա— գետ Տոսկանայում։

97—99. Ինձ թվում է...— Ֆարինատայի խոսքերը (տտ. 79—81) և Զակկոյի դուշակությունները («Դժ.» Զ, 64—72) Դանտեին բերին այն համոզման, որ Դժոխքում դատապարտյալներն օժտված են ապագան կանխատեսելու ընդունակությամբ, մինչդեռ Կավալկանտեի հարցը (տտ. 68—69) ցույց է տալիս, որ նրանք չեն տեսնում ներկան։

108. Երբոր փակվի ապագայի դուռն ընդմիշտ— երբ տեղի ունենա վերջին դատաստանը (տե՛ս 11 ծանոթ.), որից հետո ապես չի լինի ապագա ժամանակ։

119. Ֆեդերիկ Բ— Սվեվիայի Ֆրեդերիկ Բ կայսրը (1194—1250), Նեապոլի և Սիցիլիայի թագավորը, պապականության հակառակորդ. հաշվվել է իբրև էպիկուրյան և անհավատ։ Կարդինալ— Օտտավիանո դեյլի Ուբալդինին (մեռ. 1273 թ.), մոլեռանդ գիբելլին և էպիկուրյան։

123. Ձարագուշակ այն խոսքերի մասին— տես տտ. 79—81 և ծանոթ.։

130—131. Լույսին չթնաղ աչքերի— Բեատրիչեի, որ ամեն ինչ պարզորոշ տեսնում է ատոմ մեջ։

132. Կյանքիդ ուղին դու կիմանաս— պատեզ, Դանտեն ցույց է տալիս, որ Բեատրիչեից է սպասում իր մոտալուտ աքսորի վերաբերյալ գաղափարների արած զուշակությունների բացատրությունը, որը սակայն հետագայում Դանտեին փոխ Կաչչագուիդան («Դր.» Ժէ)։

ԵՐԳ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

8—9. Անաստաս պապ Բ (496—498)— այս պապն ապրել է արևմտյան և արևելյան եկեղեցիների պառակտման ժամանակ։

16—66. Վիրգիլիոսը իր սանին բացատրում է, որ Ստորին Դժոխքի («Դժ.» Ը, 73) անդնդում, որի վրա են իրենք կանգնել, կան երեք ուրիշ պարունակներ

(տ. 17)— յոթերորդը, ութերորդը և իններորդը։ Այդ պարունակներում պատժվում է իրավունքի խախտումը կամ անիրավությունը (բնագրում՝ ingiuria), *այսինքն անարդարությունը, որ մարդկանց դեմ գործվում է խաբեության կամ բռնության միջոցով (տտ. 22—24)։*

Խաբեությունը, *որ հատուկ է միայն բանականությամբ օժտված մարդուն, ավելի ծանր հանցանք է և պատժվում է Դժոխքի ավելի խոր մասերում (տտ. 25—27)։*

Բռնությունը *պատժվում է մոտակա յոթերորդ պարունակում, որ ստորաբաժանված է երեք համակենտրոն գոտիների. այս երեք գոտիներում պատժվում են երեք կարգի բռնությունները, որոնց ենթարկվում են աստված, սեփական անձը, մերձավորը և նրանց ունեցվածքները (տտ. 28—33)։*

Առաջին գոտում *(տտ. 34—39) պատժվում են մերձավորի և նրա ունեցվածքի դեմ բռնություն գործադրողները (մարդասպաններ, չարամիտ վիրավորողներ, ավազակներ և քանդողներ)։*

Երկրորդ գոտում *(տտ. 40—45) պատժվում են սեփական անձի և ունեցվածքի դեմ բռնություն գործադրողները (ինքնասպաններ, իրենց ունեցվածքը վատնողներ)։*

Երրորդ գոտում *(տտ. 46—51) պատժվում են աստծու և նրա հաստատած կարգի դեմ բռնություն գործադրողները (աստծուն հայհոյողներ, սոդոմականներ և վաշխառուներ)։*

Խաբեությունը, *նայած թե խաբողները խաբվողների վստահությունը վայելում են թե ոչ (տտ. 52—54), պատժվում է ութերորդ կամ իններորդ պարունակում։*

Ութերորդ պարունակում *(տտ. 55—60), որ կազմված է 10 ձորերից, պատժվում են վստահության մասնավոր պատճառ չունեցողներին խաբողները. 1—կավատներն ու հրապուրողները. 2—շողոքորթները. 3—սրբապիղծ սիմոնականները. 4—գուշակներն ու կախարդները. 5—զեղծարարներն ու կաշառակերները. 6—կեղծավորները. 7—գողերը. 8—նենգ խորհրդատուները. 9—գժտություն սերմանողները. 10—կեղծարարները։*

Իններորդ պարունակում, *Դժոխքի ամենախոր մասում, որ կազմված է Կոկիտի սառցալճից, պատժվում են վստահության մասնավոր պատճառ ունեցողներին խաբողները կամ դավաճանները (տտ. 61—66)։ Այս պարունակն էլ ստորաբաժանված է չորս գոտիների, ուր պատժվում են չորս կարգի դավաճաններ. առաջին գոտում՝ հարազատների դավաճանները, երկրորդում՝ հայրենիքի, երրորդում՝ բարեկամների, չորրորդում՝ բարերարների դավաճանները, իսկ մեջտեղում, երկրի կենտրոնում, սառցալճի մեջ խրված Դևպետը կամ Սաղայելը իր երեք երեսների մեջ տանջում է երկրային և երկնային մեծությունների դավաճաններին։*

45. Եվ ողբում անդ...— *և, աղքատության մեջ ընկնելով, ողբում աշխարհում, ուր, խելացիորեն գործածելով իր հարստությունը, կարող էր երջանիկ ապրել։*

50. Սոդոմն ու Կաճորն— *այսինքն սոդոմականներին (արվամոլներին) և կահորականներին (վաշխառուներին)։* Սոդոմը *բիբլիական քաղաք է, որ այրվեց երկնքից տեղացած կրակով՝ իր բնակիչների անբարոյականության համար։* Կաճորը *քաղաք է հարավային Ֆրանսիայում, որ մի ժամանակ դարերում հայտնի էր իր վաշխառուներով։*

67—90. *Պատասխանելով Դանտեի այն հարցին, թե ինչո՞ւ հեշտասերները, որկրամոլները, բարկացկոտները, ժլատները և շռայլները (տտ. 70—72) չեն պատժվում Բուտոչոր Բալաֆում կամ Ստորին Դժոխքի պարունակներում, Վիրգիլիոսը բացատրում է (տտ. 76—90), որ նրանք նվազ մեղավոր են և նվազ խստորեն պատժվում (նրանք պատժվում են Վերին Դժոխքի պարունակներում), քան բռնացողներն ու խաբողները, որովհետև նրանց մեղքերը անզսպության մեջ են։*

Անզսպությունը, *այսինքն՝ կրքերի և մարմնական հաճույքների չափազանցությունը, պատժվում է երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ պարունակներում։*

Անբանությունը, *այսինքն բռնության հանգեցնող ստոր մղումների գոհացումը, պատժվում է յոթերորդ պարունակում։*

Չարությունը, *այսինքն խաբեությամբ զինված ապականությունը պատժվում է ութերորդ և իններորդ պարունակներում։*

Վերին և Ստորին Դժոխքի սահմանին, Դանտեի քաղաքի պարիսպների ներսում, ուր կազմված է վեցերորդ պարունակը, պատժվում են հերետիկոսներն ու էպիկուրյանները։

79. Քո էթիկայի— *Արիստոտելի «Էթիկայի»։*

94—96. Վերադարձիր այնտեղ, ուր ինձ ասացիր— *տ. 48։ Վաշխառուն վիրավորում է աստծուն, որովհետև ոտնակոխ է անում նրա հաստատած բնական կարգը։*

97. Փիլիսոփան անվանի— *Արիստոտելը։*

101. Քո ֆիզիկան— *քո կողմից ուսումնասիրված Արիստոտելի «Ֆիզիկան» (հմմտ. տ. 79)։*

105. Նա Աստուծու թոռն է գալիս ըստ ինքյան— *ասված բնության հայրն է. արվեստը հետևում է բնության։*

106—108. Այս երկուսով, բնությամբ և արվեստով...— *բնական կարգով և աշխատանքով միայն պետք է մարդիկ ապրեն և առաջադիմեն։*

113—114. Ձկանց համաստեղությունը (Ձկները) *արդեն հորիզոնի վրա է, իսկ Մեծ Արջ համաստեղությունը* (Սայլը) *թեքվել է դեպի հյուսիս-արևմուտք։ Այդ նշանակում է, որ մոտ է նոր օրվա արշալույսը։*

ԵՐԳ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

4—10. Ինչպես ժայռն այն...— *Դանտեն յոթերորդ պարունակը տանող զառիթափ և քարքարոտ վայրէջքը համեմատում է Տրենտո քաղաքի մոտակայքում Ադիջն գետի վրա տեղի ունեցած փլուզման հետ։*

12—13. Նախահիերը Կրետեի...— *Մինոտավրը, կես-ցուլ կես-մարդ դիցաբանական հրեշ, որ ծնվել և ապրել է Կրետե կղզում։ Դանտեական Դժոխքում Մինոտավրը գտնվել է պահապանը յոթերորդ պարունակի, ուր պատժվում են բռնավորները։*

17—20. Դուքսը Աթենքի...— *Թեսեոսը, Աթենքի թագավոր Եգեոսի որդին, որ սպանեց Մինոտավրին։*

34. Առաջին անգամին— *հմմտ. «Դժ.» Թ, 22—27։*

37—45. Սակայն նախքան Դժոխք իջնելը նրա...— *ակնարկում է Քրիստոսին, որ, ըստ ավետարանական ավանդության, իր մահից հետո Դժոխք իջավ և այնտեղից երկինք տարավ հին Ուխտի արդարներին («Դժ.» Դ, 52—63)։ Իսկ Քրիստոսի մահվան պահին երկիրը ուժգին ցնցվեց, ցնցվեց նաև անդնդախոր Դժոխքը, որի հետևանքն են Դժոխքի փլատակները (հմմտ. «Դժ.» ԻԱ, 106—114. ԻԳ, 133—138. ԻԴ, 19—33)։*

41—43. Աշխարհ սիրով սարռռաց...— *Էմպեդոկլը («Դժ.» Դ, 138) ենթադրում էր, որ աշխարհի կազմությունն ու կարգավորությունը հետևանք է տարրերի անմիաբանության, և հենց որ անմիաբանությունը դադարել է և փոխարինվել միաբանությամբ (սիրով), հողը, հուրը, օդն ու ջուրը իրար են խառնվել և տիեզերքում քաոս է առաջացել։*

46. Արյան գետին այն եռուն— *Ֆլեգեթոնը («Դժ.» ԺԴ, 112—135), Դժոխքի երրորդ գետը, եռացող արյան գետը, որ կազմում է յոթերորդ պարունակի առաջին, արտաքին գոտին։*

49. Օ՛ մոլի շան, օ՜ բարկություն-խոլական— *շահամոլությունն ու բարկությունը բռնության մղող գլխավոր կրքերն են։*

65. Քիրոն— *Կենտավրոսների հեծնակավոր և իմաստուն ղեկավարը, Աքիլլեսի խնամակալը (տ. 71, «Քավ.», Թ, 37)։*

67—69. Նեսոս— *այս Կենտավրոսը փորձեց առևանգել Հերակլեսի կնոջը՝ Դեյանիրին, բայց հերոսը նրան մահացու վիրավորեց թունավոր նետով։*

72. Ֆոլոս— *ուրիշ Կենտավրոս, որ Պիրոթոոսի հարսանյաց ժամանակ հարբեց և փորձեց բռնի առևանգել հարսին և այլ կանանց։*

81. Ծտերը— *Դանտեն։*

84. Երկու բնույթներն— *բնությունները մարդու և ձիու։*

88. Մի կին երկնում պիտիաքն ընդհատեց— *Թեատրիչեն, իջնելով Լիմբոս՝ Վիրգիլիոսի մոտ, երկնքում մի պահ ընդհատեց իր օրհներգությունը։*

107. Այեքսանդր մակեդոնացին կամ, գուցե, Ֆիրեցին (Թեսալիա)։
107—108. Պոնեա— Միրակաստայի (Միկիկիա) բռնակալը։
110. Անձանին— Մարկա Տրեվիզանայի բռնակալ էձելինո դա Ռոմանոն։
111—112. Օրիձան խտեցի— Օրիձան Ա, Ֆերրարայի մարգիզը։
113—120. Աա ժամամ խաչեց սիրտը ազն...— Գի դը Մոնֆորը, Կարլոս Ա Անժուացու (աՀա «Քավ.» է, 113—114 ծանոթ.) տեղապահը Տոսկանայում, դաշունահարեց Անգլիայի էդուարդ Ա թագավորի զարմիկին։ Սպանողը ուզեց վրեժ լուծել թագավորից, որ մահվան էր դատապարտել իր հորը՝ Սիմոն դը Մոնֆորին։
134. Աստիլաս— Հոնների ահավոր թագավորը (433—453). Հորջորջվել է «աստծու պատուհաս»։
135. Քսեսաս— Պոմպեոս Մեծի որդին, նշանավոր ծովահեն։ Պյուռուս— Եպիրոսի թագավորը (319—272 մ. թ. ա.), ահ ու սարսափը և՛ թշնամիների, և՛ հպատակների։
137. Ռինիեր Կոռնետա և Ռինիեր դե՛ Պացցի— Ֆլորենցիայի երկու նշանավոր ազնվականներ Դանտեի ժամանակներում։

ԵՐԳ ՏԱՍՆԵՐԲԵՐՈՐԴ

7. Զեշինայից սկսած մինչև Կոռնետա— Զեշինա գետակից մինչև Կոռնետա փոքրիկ քաղաքը. դրանց միջև ընկած է Տոսկանական Մարեմման, որ հնում հարուստ էր թաթուտներով և վայրի գազաններով։
10—12. Հարպյաներ— կանացի դեմքով և գիշատիչ թռչնի մարմնով առասպելական էակներ, որոնք բնակվում էին Ստրոֆադյան կղզիներում։
25. Կարծեմ, թե ես կարծեց, որ ես կարծեցի— բառերի այսպիսի շինծու շարադրությունը հատուկ էր սիկիլյան դպրոցի ճաշակին։
48. Որ իմ երդում ես պատմել եմ արտամգին— Վիրգիլիոսը իր «Էնեականի» Գ գրքում պատմել է, որ երբ Էնեասը, հասնելով Թրակիա, սկսեց կարդալ մրտենու թուփը, որպեսզի ճյուղերով զարդարի զոհասեղանը, կեղևից դուրս եկավ արյուն և արմատներից լսվեց այդտեղ թաղված տրոյացի արքայազուն Պոլիդորի ձայնը։
58. Ես ես եմ...— խոսողը հոգին է Պիեր դելլա Վինյայի, որին Ֆրեդերիկ Բ դայսրը («Դժ.» Ժ, 119) դարձրեց իր քարտուղարը և ամենամտահեղ խորհրդականը։ Պալատականները, նախանձից դրդված, կայսեր մոտ նրան ամբաստանեցին դավաճանության մեջ, և նա 1248-ին բանտարկվեց և կուրացվեց. հաջորդ տարին, վշտից ընկճված, ինքնասպանություն գործեց։
64. Պոռնիկը— նախանձը (տ. 78)։
72. Ինձ՝ արդարիս հանդեպ դարձա անարդար— այսինքն՝ իմանալով հանդերձ, որ ես անմեղ եմ, ինքնասպանություն գործեցի։
102. Ցավացնում են...— առաջացնում են ցավոտ վերք, որը միաժամանակ բերան է, որի միջով ցավը պոռթկում է ոտքերով ու ճիչերով։
103. Անեղ որում— ահեղ դատաստանի օրը (հմմտ. «Դժ.» Զ, 97—98)։
115. Երկու հոգի— սրանք իրենց ունեցվածքը վատնողներ են։
118. Աոչեինը— սիենացի կանոն (տ. 120) «Վատնող խմբից» («Դժ.» ԻԹ, 130) մեկը, որ ընկավ Տոպպոյի մոտ տեղի ունեցած մարտում (1287)։
119. Մյուսը— պադուացի Ջակոմո դա Սանտ-Անդրեան (տ. 133)։
123. Մի թփի— այս թփի մեջ, ուր թաքնվեց Ջակոմո դա Սանտ-Անդրեան, փախչելով իրեն հետապնդող շներից (տտ. 124—126), փակված է հոգին Ֆլորենցիայի մի ինքնասպանի, որը, ըստ ոմանց, դատավոր Լոռատո դելլի Այրին է, ըստ այլոց, հարուստ Ռոկկո դեի Մոնձին։ Երկուսն էլ ինքնասպանություն են գործել։
143. Այն քաղաքում— Ֆլորենցիայում։
146—150. Եվ եթե դեռ անցքի վրա Առնոյի...— Դանտեի ժամանակ Ֆլորենցիայում, Առնոյի անցքի վրա (Առնո գետի Հին Կամուրջի— Ponte Vecchio— գլխին), դեռ կանգնած էր Մարսի ավերված արձանը (հմմտ. «Դր.» ԺԶ, 145—147)։ Արձանի մնացորդը գետն ընկավ 1333 թվին՝ վարարման ժամանակ։ Ավանդությունը հոների թագավոր Ատտիլային է վերագրել Ֆլորենցիայի կործանումը, իսկ պատմությունը՝ գոթերի թագավոր Տոտիլային։ Ինքնասպանի հոգին այստեղ

արտահայտում է ժողովրդի այն համոզումը, որ Ամբի պահպանված չլիներ Մարսի արձանի այդ մնացորդը, Ֆլորենցիան հորից կավերվեր, և իշուր կանցնեին քաղաքը վերակառուցողների ջանքերը։

ԵՐԳ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ

15. Որ Կատոնը ոտքերով էր կոխկռտած— *ակնարկում է Պոմպեոսի զորքի մնացորդների անցումը լիբիական անապատով Կատոն Ուտիկեցու առաջնորդությամբ։*

22—24. Ոմանք գետնին պառկած էին մեջքն ի վար— *սրանք ասածուն հայհոյողներն են։* Ոմանք նստած պպզած էին ծնկներովն— *վաշխառուներն են («Դժ.» ԺԷ, 34—78)։* Իսկ ոմանք էլ քայլում էին անդադար— *ողորմակամներն են («Դժ.» ԺԸ, ԺՉ, 1—90)։*

31—36. Ինչպես հնդկաց զավառներում նետասպ...— *ըստ Ալիքսանդր Մակեդոնացու մասին ավանդությունների մեկի (հմմտ. Պլուտարք Մեծ, «Մեծ հերոսներ» Ա, 4, 8), Հնդկաստանի անապատներում Ալիքսանդրը տեսնելով, որ հրեպեն անձրև է թափվում իր զորքի վրա, զինվորներին հրամայում է կոխկռտել գետին ընկած թոքերը։*

45. Այն դրան մուտքին— *Դեպքերի քաղաքի դարպասի առջև («Դժ.» Ը, 82—130)։*

46. Ո՞վ է մեծն այն, որ պառկած է...— *սա Կարդանեսն է (տ. 63), Թեբեի դեմ պայքարած և այն ինքնասպան ոգի արքաներից մեկը։*

52. Իր դարեին— *իր (Զևսի) որդի Հերեներսին (Վուլկան. տ. 57)., սատանան—դարդին, որի օգնությամբ Կիկլոպները (մյուսները տ. 55) Զևսի համար նետեր էին կռում էանա (Մանգիբելը. տ. 56) լեռան ընդերքում գտնված դարբնոցում։*

58. Ֆլեգրայի գոռ մարտում— *Զևսի և Հսկաների միջև այն ահեղ մարտում, որ տեղի ունեցավ Ֆլեգրայի հովտում (Թեսալիա)։ Հսկաները փորձեցին պրոհով գրավել Օլիմպոսը, բայց պարտվեցին Զևսի շանթերի հարվածների տակ (հմմտ. ԺԹ«.» ԺԲ, 21—33)։*

76. Մի գեղակ— *այս գեղակը Ֆլեգեթոնի (եռացող արյան գետի) մի ճյուղն է, որ հոսելով ինքնասպանների անտառի միջով, այժմ գալիս է գալիս ավազուրը և այն կտրում է՝ թափվելու համար Գժոխքի խորքը։*

79. Բուդիկամ— *Վիտերբոյի մոտակայքում (Հռոմի մարզ) հանքային տաք ջրերի լճակ, որ վաղուց ի վեր հայտնի էր իր բուժական հատկություններով։*

98. Մեռնեմ սար ամարտակիս իր բացած— *ցոհացում տար իմ հետաքրքրությանս, որ ինքն էր գրգռել։*

96. Որ եռջանիկ էին մարդիկ Ինքորյա— *Կրետեում, առասպելական առաջին թագավոր Սատուրնի օրոք։*

100—102. Ռեան այնտեղ ընտրեց մանկան թաքստոց...— *Երբ ծնվեց Զևսը, Ռեան, Զևսի մայրը և Սատուրնի կինը, երեխային տարավ ու հորից թաքցրեց Իդա լեռան մի քարայրի մեջ։*

103—111. Մերի արձան մի հսկա— *հսկա ծերունու այս պատկերը առնված է Աստվածաշնչից (Դանիել Բ)։ Գանտեի մոտ Կրետեի ծերունին նկարագրվում է ժամանակի ընթացքում փոխված և ոսկե, արծաթե, պղնձե ու երկաթե քարերի միջով անցած մարդկությունը։*

112—120. *Արձանի բոլոր մյուս մասերը, բացի ոսկե գլխից, ամեն տեղքեր, որոնցից կաթում են արցունքներ և, փոքրիկ ստորգետ ձևալը, իջնում են քարերի խորքերը և կազմում Գժոխքի գետերը։ Ամպսիսով Գժոխքում է հավաքվում աշխարհի ամբողջ չարն ու ցավը։ Գժոխքի գետերին Գանտեն տվել է մի ընդհանուր ծագում— Կրետեի ծերունու արձանից հոսող արցունքները, և Մերկայացրել է խրոն մի ընդհանուր գետ, որ անցնում է Գժոխքի ամբողջ գահավանդով, եռբեան լայնանալով օղակաձև լճի ձևով։ Այդ միակ գետը տյուրեմով ստանում է տարբեր անուններ՝ Ախերոն, Ստիքս, Ֆլեգեթոն, Կոկիտոս։*

134—135. Բայց եռանը այս ջրերի շտապությունն Գանտեին պետք է ենթադրել

տաք, որ սա հենց Ֆլեգեթոն է (Ֆլեգեթոն հուն. նշանակում է «եռում»), որի մասին Վիրգիլիոսը խոսել է իր «Էնեականում» (Զ, 550—551)։

136. Լեթեն *(Լեթե հուն. նշանակում է մոռացում), մոռացումի գետը, չի կարող լինել քրիստոնեական Դժոխքում (ինչպես կար հեթանոսական Դժոխքում), քանի որ դատապարտյալները չեն կարող մոռանալ իրենց գործած հանցանքները։ Դանտեն այն գետեղում է Քավարանի լեռան գագաթին, Երկրային Դրախտում («Քավ.» ԻԸ, 121—132)։*

ԵՐԳ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ

4—10. *Ֆլեգեթոն գետի բարձրադիր քարափները Դանտեն համեմատում է այն քարաթմբերի հետ, որ ֆլամանները կառուցում են Գուիսսանտ (Վիսսանդ) գյուղակի և Բրյուգե քաղաքի միջև, և այն պատնեշների հետ, որ պաղուացիք բարձրացնում են Բրենտա գետի երկայնքին՝ վարարումից պաշտպանվելու համար։*

30. Բռունետտո— *Բրունետտո Լատինի կամ Լատինո (1220—1294), Ֆլորենտացի գիտուն, փիլիսոփա, բանաստեղծ, գուելֆների կուսակից։*

36. Սա— *Վիրգիլիոսը։*

50. Մի հովտում— *մթամած անտառի հովտում։*

55. Թե հետևես Բ ատոդին— *ակնարկում է Երկվորյակների համաստեղությունը, որի տակ ծնվել է Դանտեն։ Այդ համաստեղությունը, ըստ ժամանակի աստղագուշակների, ընդունակ է մարդու մեջ հակում առաջ բերելու դեպի գրականությունն ու գիտությունը (հմմտ. «Դր.» ԻԲ, 111—117 և ծանոթ.)։*

58. Զմեռնի վաղաժամ— *վաղաժամ Դանտեի վերաբերմամբ, քանի որ Բրունետտոն մեռավ ծեր հասակում, 1294 թվին, երբ Դանտեն դեռ 29 տարեկան էր։*

61—63. Բայց ժողովուրդն այն ապերախտ ու անսիրտ...— *այսինքն Ֆլորենցիայի ժողովուրդը։*

64. Բարվոյդ համար— *հասարակական-քաղաքական կյանքում քո ուղղամտության համար։*

67. Մի հին առած անվանել է նրանց կույր— *առած, որ տարածված էր Ֆլորենցիայի գերիշխանությունը չհանդուրժող տոսկանական համայնքներում և հորինվել էր այն ժամանակ, երբ Ֆլորենտացիները կուրորեն հավատալով օստրոգոթների թագավոր Տոտիլայի խոստումներին, նրա առջև բաց արին իրենց քաղաքի մուտքը։ Տոտիլան այդ ձևով գրավեց քաղաքը և ավերեց այն։*

68. Նրանք ագահ, նախանձոտ են ու զոռոգ— *հմմտ. «Դժ.» Զ, 74—75։*

70—72. Երկու կողմերն ախոյան— *երկու հակամարտ կուսակցությունները, Սևերն ու Սպիտակները։* Կկամենան մեզ հաշտել— *նախ Սևերը, երբ Դանտեի դեմ աքսորի դատավճիռ են կայացնում իբրև իրենց քաղաքական հակառակորդի, և ապա Սպիտակները, երբ Դանտեն աքսորում կգժտվի նրանց հետ (հմմտ. «Դր.» ԺԷ, 61—69)։*

73. Ֆիեզոլյան անասուններ— *այսինքն Ֆլորենտացիները, որոնք մասամբ Ֆիեզոլյան սերունդներ են (տես տող. 61—63 ծանոթ.)։*

78. Որջը այնքան ապիրատ— *Ֆլորենցիան։*

88. Մյուսների հետ— *մյուս զուշակությունների հետ, որ լսեցի Չակկոյից («Դժ.» Զ, 64—72) և Ֆարինատայից («Դժ.» Ժ, 79—81)։*

110. Պրիշիանո— *լատիներենի նշանավոր քերական, որ ապրել է Զ դարի առաջին կեսերին։* Ֆրանչեսկո դ'Ակկորսո— *Բոլոնյական դպրոցի ականավոր իրավագետ (1225—1294)։*

112—114. Ում ծառայից ծառան շուտով փոխադրեց— *ակնարկում է Ֆլորենցիայի եպիսկոպոս Անդրեա դեի Մոռձիին, որին անվանել վարքի համար Բոնիֆակիոս Ը պապը (ծառայից ծառան— servus servorum Dei. այսպես է պապը կոչվում պաշտոնական գրություններում) 1295 թվին Ֆլորենցիայից (Առնո գետի վրա) տեղափոխեց Վիշենցա (Թակկիլյոնե գետի վրա)։*

119. Դանդրս— *«Դանդամատյանս»։*

122—124. Ինչպես նրանք, որ վազում են Վերոնում...— *ակնարկում է Վերոնայում ամեն տարի մեծ պահքի առաջին կիրակի օրը տեղի ունեցող վազքի մըր-*

ցումները։ Բրունետտոն այնպիսի արագությամբ հեռացավ իր խմբին միանալու համար, որ նմանվեց այդ մրցավազքի հաղթողին։

ԵՐԳ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ

5. Մի խմբից— *սոդոմականների մի ուրիշ խմբից, որը բաղկացած է ռազմական և քաղաքական գործիչներից։*

19. Նրանք նորից շարժվեցին— *նրանք մի պահ դադարեցրել էին իրենց ողբերը համաքաղաքացի Դանտեի հետ զրուցելու համար։*

37. Գուալդրադա— *Բելլինչոնե Բերտի դեի Ռավինյանիի («Գր.» ԺԵ, 112) դուստրը, կոմս Գուիդո Ավագի կինը, որից էին սերում Տոսկանայում համբավված կոմս Գուիդոնները։*

38—45. Գուիդո Գուերրա, *կոմս Գուիդո,* Տեգիայո Ալդոբրանդի *դեյլի Ադիմարի և Ռուստիկուչչիի Յակոպո (սա Դանտեի հետ խոսողն է)— ֆլորենտացի ականավոր պետական-քաղաքական գործիչներ ԺԳ դարի կեսերին։*

63. Երկրի կենտրոնում— *Դժոխքի խորքում, ամենախոր հատակում, որը միաժամանակ երկրի կենտրոնն է։*

70. Գուլլելմ Բորսիերե— *ֆլորենտացի ազդեցիկ պալատական։*

73. Նոր-նոր մարդիկ— *ոչնչությունից բարձրացած և ավանդություններից զուրկ վերաբնակիչներ։* Վատակներ նյութական— *վաշխառության և առևտրի միջոցով ձեռք բերված հարստություններ։*

94—101. Ինչպես գետն այն...— *Մոնտոնե գետը։*

106. Պարան— *այս պարանը հավանաբար ունի այլաբանական իմաստ, որ պարդ չէ մեկնիչների համար. պարդ է միայն, որ այն հրեշը, որ շուտով երևալու է պարանի աղդանշանով, ներկայացնում է խաբեությունը։*

128. Իմ Կատակերգով— *Դանտեն իր պոեմն անվանում է Կատակերգ կամ Կատակերգություն (հմմտ. «ԳԺ.» ԻԼ, 3)։ Իր բացատրությամբ («Նամակների» ԺԳ, 28—31) և միջնադարյան առումով կատակերգություն է կոչվում այն գրական ստեղծագործությունը, որ ունի միջակ ոճ, տխուր սկիզբ և զվարթ վախճան, և գրված է ժողովրդական լեզվով։ Դանտեի «Կատակերգության» աստվածային մակդիրը, որ տվել է Բոկաչչոն, ընդհանրացավ 1555 թ. վենետիկյան հրատարակությունից սկսած («Կատակերգության» առաջին տպագիր հրատարակությունը եղել է 1472-ին)։*

ԵՐԳ ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ

1. Անա զազանն իր տատանով սուր, երկայն...— Գերիոնն է *(տ. 97), պահապանը ութերորդ պարունակի, ուր պատժվում են խաբեբաները։*

18. Արաֆնե— *Լիդիայի առասպելական ոստայնանկուհին, որ իր արհեստի մեջ փորձեց մրցել Միներվայի հետ, բայց նրանից պարտվեց և սարդի փոխվեց։*

31. Այսպես իջանք աջակողմյան ուղղությամբ— *Դժոխքում երկու քանաստեղծները միշտ քայլում են դեպի ձախ ուղղությամբ («ԳԺ.» ԺԴ, 125—126), միայն երկու բացառություններ ենք գտնում, առաջինը՝ հերետիկոսների պարունակը մտնելիս («ԳԺ.» Թ, 132) և երկրորդը՝ Գերիոնի մոտ գնալիս։*

56. Որոշ զույնով ու նշանով մի խաչ— *սրանք դատարկ քսակներ են, որոնք կախված են վաշխառուների վզից՝ զարդարված զինանշանով այն տոհմի, որին պատկանել են նրանք։*

58—60. Դեղին ֆոնի վրա կապույտ առյուծը *ֆլորենտացի Ջանֆիլացցիների տոհմի զինանշանն էր։*

61—63. Կարմիր ֆոնի վրա սպիտակ սագը *ֆլորենտացի Ուբբրիակիների տոհմի զինանշանն էր։*

64—65. Սպիտակ ֆոնի վրա կապույտ խոզը *պադուացի Սկրովենյիների տոհմի զինանշանն էր։ Այստեղ հավանաբար նկատի ունի այդ տոհմի նշանավոր վաշխառու Ռեջինալդոյին։*

68. Վիտալիտնո դել Դենտե— *պադուացի աղնվատոհմիկ։*

72—73. Պետը մեր...— *Ֆլորենտացի Ջանի Բուլամոնտեն (մեռ. 1310)։*

82. Այսուհետև այսպես պետք է ցած իջնել— *այսուհետև հարկավոր է Դժոխքի մի պարունակից մյուսը իջնել այսպիսի անսովոր և ահավոր եղանակով, յոթերորդից ութերորդ պարունակ՝ Գերիոնի զավակին նստած, ութերորդից իններորդը՝ հսկա Անթեյի միջոցով («Դժ.» ԼԱ, 130—145). Կոկիտոնի մակերեսից դեպի երկրի կենտրոն՝ իջնելով Սադայելի բրդոտ մարմնի երկայնքով («Դժ.» ԼԴ, 70—93)։*

106—108. Ֆայետոն— *Արևի որդին։ Սա հորից թույլտվություն ստացավ վարելու նրա կառքը, բայց չկարողացավ ձիերի սանձը պահել, և ձիերը, դուրս գալով իրենց ճանապարհից, այրեցին երկնքի մի շերտը, մինչև որ Ջևսը, կանխելու համար համաշխարհային հրդեհը, շանթահարեց կառապանին և նրան նետելով Երիդանում («Այլակերպ.» Բ, 47—324)։*

109—111. Իկար— *Դեդալի որդին։ Դեդալը, փախչելու համար Կրետեի լաբիրինթոսից, ուր փակված էր իր որդի Իկարի հետ միասին, իրեն և որդու համար պատրաստեց մոմե թևեր. բայց Իկարը շատ բարձրից թռավ, արևի ճառագայթներից մոմը հալվեց, և նա ծովն ընկավ («Այլակերպ.» Ը, 183—235)։*

ԵՐԳ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ

1—18. Գեշ ձորերով մի տեղանք *(բնագրում* Malebolge— *չար պարկեր. հարմար գտանք թարգմանել գեշ ձորեր)— Դժոխքի ութերորդ պարունակը։*

25—27. Այստեղ երկու խմբեր կային տարբեթաց...— *ութերորդ պարունակի այս առաջին ձորում մեղավորների երկու խմբեր կան, որոնք պտտվում են միմյանց հակառակ ուղղությամբ և մտրակահարվում են եղջերավոր դևերից (տտ. 34—39)։*

28—33. Այսպես հռոմցիք հոբելյանի մեծ տարում...— *Բոնիֆակիոս Ը պապը 1300 թվականը հայտարարեց «հոբելենական տարի»։ Դյուրացնելու համար ուխտավորների հոծ բազմության երթևեկությունը Սուրբ Հրեշտակի կամուրջով, նրա երկայնքով մի միջնորմ դրվեց, այնպես որ ուխտավորների մի մասը կամուրջի մի կողմով գնում էր դեպի Սուրբ Պետրոսի բազիլիկան, իրենց դիմքը ուղղած դեպի Սուրբ Հրեշտակի ամրոցը, իսկ մյուս մասը կամուրջի մյուս կողմով վերադառնում էր, ուղղվելով դեպի Մոնտե Ջորդանո (մի բլուր, որ գտնվում է Տիբերիսի ձախ ափին, նույն ամրոցի դիմաց)։*

49. Վեներիկո Կաչչանեմիկո— *բոլոնյացի գուելֆների պարագլուխը։*

55—57. Ես դրդեցի իմ Գիզոլա Բելլային...— *Վեներիկո Կաչչանեմիկոն իր քրոջը՝ Գիզոլա Բելլային հարկադրեց դառնալու Ֆերրարայի մարկիզ Օբիձձո Բ-ի («Դժ.» ԺԲ, 111) սիրուհին, ավելի շուտ քաղաքական, քան դրամական պատճառով։*

59—62. Նրանք այնքան շատ են այստեղ...— *ավելի շատ բոլոնյացիներ կան Դժոխքում, քան կենդանի բոլոնյացիներ երկրում։ Բոլոնյա նահանգում* sia-*ի փոխարեն (իտալերեն* essere— *լինել բայի սորարդասական ներկայի եզակի ձևը) ասում են* sipa *իրենց բարբառով։*

83—96. Ցասոն— *Արգոնավորդների առաջնորդը, որ Կոլխիդա գնաց՝ Ոսկեգեղմը ձեռք բերելու համար («Այլակերպ.» Է, 1—158)։ Դեպի Կոլխիդա նավարկելու ճանապարհին Ցասոնը մտավ Լեմնոս կղզին, որտեղ կանայք, իրենց ամուսինների սառնությունից զայրացած, անխնա և անխտիր սպանել էին բոլոր տղամարդկանց։ Այնտեղ նա հրապուրելով խաբեց արքայադուստր Հիսիպիլին, որ տղամարդկանց կոտորածի ժամանակ իր հերթին խաբել էր մյուս կանանց, փրկելով իր հորը՝ թագավոր Տոանտին։ Ցասոնը բաժանվեց Հիսիպիլից, նրան թողնելով հղի վիճակում. ապա հրապուրեց Կոլխիդայի արքայադուստր Մեդեային, որից նույնպես հետո սառեց, սիրելով մի ուրիշ կնոջ, Կրևսին («Թեբեական» Ե, 403—485)։*

113. Մարդկանց մի խումբ կղզանքի մեջ սուզված— *սրանք շողոքորթներն ու ծծողներն են։*

122. Ալեսսիո Ինտերմինելլի— *լուկկացի հայտնի շողոքորթ Դանտեի ժամանակներում։*

133. Թայիս— Տերենտիոսի («Քավ.» ԻԲ, 97) «Ներքինի» կատակերգության հերոսուհին, տիպը այն կանանց, որոնք իրենց շողոմարար լեզվով խաբում են անփորձներին։

ԵՐԳ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ

1. Մոգ Սիմոն— ըստ «Գործք առաքելոցի» (Ը, 9—24) սամարացի մոգ Սիմոնը Պետրոս և Հովհաննես առաքյալներից փողով գնել ուզեց մկրտվածների վրա սուրբ հոգին իջեցնելու կարողությունը՝ ձեռքերը նրանց վրա դնելու միջոցով, ինչպես նրանք անում էին։ Բայց Պետրոսը նրան պատասխանեց. «Արծաթ քո ընդ քեզ լիցի ի կորուստ, զի զպարգևն Աստուծոյ համարեցար ընչիւք ստանալ» (Ը, 20)։ Սիմոնի անունով սիմոնականներ կոչվեցին նրանք, որոնք զբաղվեցին սրբությունների (հոգևոր բարիքների և եկեղեցական պաշտոնների) առուծախով։

Պայքարը սիմոնականության դեմ կարևոր տեղ է գրավում Դանտեի բարենորոգչական ընդհանուր ծրագրի մեջ։

17. Սան-Ջովաննին իմ չքեաղ— Ֆլորենցիայի սուրբ Հովհաննես Մկրտիչ (Սան-Ջովաննի Բատտիստա) եկեղեցին ու մկրտարանը։

19—21. Սրանցից մին... ես ջարդեցի— մկրտարանի մարմարե խոռոչներից (ավազաններից) մեկը Դանտեն մի օր ջարդել է ազատելու համար մի երեխայի, որ խաղալիս ընկել է նրա մեջ և խեղդվելիս է եղել։

31. Ո՞վ է նա— այս տանջվող մեղավորը Նիկողայոս Գ պապն է (1277-ից մինչև 1280), որի ազգանունն է Ջովաննի Գայետանո դելլի Օրսինի։

49—51. Կանգնած էի այնտեղ ինչպես քահանա, ում կանչում է մարդասպանը գետնամուկս... միջնադարյան Իտալիայում վարձու մարդասպանին պատժելու համար նրան գլխիվայր խրում էին փոսի մեջ, ուր ապա հող լցնելով խեղդում նրան։ Չարագործը հաճախ իր մահը ուշացնելու համար խոստովանահայր էր կանչում, իբրև թե ուրիշ մեղքեր էլ ուներ խոստովանելու։

52. Բոնիֆակիոս, այդ դո՞ւ ես— Նիկողայոս Գ-ը Դանտեին դնում է Բոնիֆակիոս Ը-ի տեղ, որ պապական գահ բարձրացավ 1294 թվին և պետք է Դժոխքում իրեն փոխարինելու գար 1303 թվին, իրեն հրելով հորանցքի խորքը (տտ. 73—78)։ Նա զարմանում է, որ Բոնիֆակիոսը երեք տարի վաղ է եկել։ Միշտ պետք է հիշել, որ պոեմի գործողությունը տեղի է ունենում 1300 թ. գարնանը։

54. Գիրք— ապագան գուշակող գիրքը, որի մեջ դատապարտյալները կարդում են ապագան («Դժ.» ժ. 97—108)։

56. Դու նենգորեն խաբեցիր— Բոնիֆակիոս Ը-ն իր նախորդ Կելեստին Ե պապին զանազան նենգություններով ստիպեց հրաժարական տալ գահից և նրան հաջորդեց նենգությամբ ու բռնությամբ կատարված անօրինական ընտրությամբ (հմմտ. «Դժ.» Գ, 59—60 ծանոթ.)։

57. Ձենաղ կնոջ— եկեղեցուն։ Միստիկների և աստվածաբանների լեզվում պապը անվանվում էր «եկեղեցու ամուսին»։

70—72. Ճշմարիտ է, որ ես եղա արջի ձագ— Նիկողայոս Գ-ը Օրսինիների տոհմից էր (իտ. orsa նշանակում է էգ արջ)։ Փոխաբերական իմաստով ուզում է ասել՝ եղա արջի պես անհագ։

79—84. Բայց նա այստեղ այնքան երկար չի մնա... ինչքան որ ես...— Բոնիֆակիոս Ը-ն այստեղ, սիմոնականների փոսի մեջ, ավելի քիչ կմնա (կմնա 11 տարի, 1303-ից մինչև 1314 թ.), քան մնացել է Նիկողայոս Գ-ը (մնացել է 20 տարի, 1280-ից մինչև 1300 թ.), որովհետև 1314 թվին Ֆրանսիայից Բոնիֆակիոսին փոխարինելու կգա Կլեմենտ Ե պապը, ավելի վատ ու անօրեն մի նովիվ։

85. Հասոն Մակաբյանց— ըստ Բ Մակաբյանց գրքի (Դ, 7—26. Ե, 5—10), հրեա քահանայապետ Հասոնը իր քահանայապետությունը գնեց Սիրիայի թագավոր Անտիոքոսից և փոխարենը հեթանոսական բարքեր մտցրեց Երուսաղեմում։

94—96. Ոչ Պետրոսը, ոչ մյուսները...— ոչ Պետրոսը, ոչ էլ մյուս առաքյալները Մատաթիայից ոչ մի վարձ չպահանջեցին, երբ նրան առաքյալ ընտրեցին Քրիստոսի մատնիչ Հուդա Սկարիովտացու տեղը։

99. Կաղլոսի— Կաղլոս Ա Անժուացու («Քավ.» էլ 113—114 ծանոթ.)։

102. Ուրախ կյանք— *ի հակադրություն գժոխային տանջանքի։*

106—111. Հովհաննեսը ձեզ ունեցավ նկատի...— *Հովհաննես Ավետարանիչը իր «Հայտնության» մեջ (գլ. ԺԷ) հեթանոսական Հռոմը պատկերեց յոթ գլխանի և տաս եղջերանի գազանի վրա նստած «մեծ պոռնիկի» կերպարանքով։*

114. Մեկի տեղ ճարյուր կուտ եք դուք պաշտում— *կռապաշտների յուրաքանչյուր կուռքի դիմաց պաշտում եք հարյուրը՝ յուրաքանչյուր դրամը, յուրաքանչյուր թանկարժեք մետաղի կտորը։*

115—117. Օ՛ Կոնստանտին, որքա՜ն շարյաց մայր դարձավ...— *եկեղեցին սկսեց ապականվել այն օրից, երբ Կոնստանդին կայսրը, իր մայրաքաղաքը փոխադրելով Բյուզանդիոն («Գր.» Զ, 1—3), իրեն բորից բուժած և քրիստոնյա դարձրած Սիլվեստր պապին («Դժ.» ԻԷ, 94—95) պարգևեց Հռոմը և նրա արևմտյան տիրապետությունները, և այսպիսով սկիզբ դրեց եկեղեցու աշխարհիկ իշխանության։*

ԵՐԳ ՔՍԱՆԵՐՈՐԴ

2. Առաջին նվագ— *«Աստվածային կատակերգության» առաջին մասի կամ կանտիկայի («Քավ.» ԼԳ, 140)։*

8. Մեղապարտներ— *գուշակներն ու կախարդներն են։*

31—39. Անֆիար— *Թեբեն պաշարած յոթ արքաներից մեկը։*

40—45. Տիրես— *Թեբեցի գուշակ, որ իր գուշակություններն անում էր հունական բանակում Թեբեի դեմ յոթ արքաների վարած մարտի ժամանակ։*

46—51. Առոնտ— *էտրուսկ գուշակ, որ նախատեսեց Կեսարի և Պոմպեոսի միջև ծագելիք պատերազմը և Կեսարի հաղթանակը (Լուկան, «Ֆարսալիա» Ա, 584—587)։*

52—55. Մանտով— *Թեբեցի գուշակ կին, Տիրեսի (տ. 40) աղջիկը, որը, հոր մահից հետո, ազատվելու համար Կրեոնտի բռնակալությունից, փախավ Թեբե և, երկար տարիներ թափառելուց հետո, եկավ Լոմբարդիա ու հաստատվեց այնտեղ, ուր հետո նրա անվամբ հիմնվեց Մանտովա (Մանտուա) քաղաքը (հմմտ. «Էնեակ.» Ժ, 198—200. «Ակյլակերպ.» Զ, 157. «Թեբեակ.» Դ, 463—466. Է, 758—759)։*

56. Այնտեղ, ուր ես եմ ծնվել— *Մանտովայի մարզում։ Վիրգիլիոսը ծնվել է Մանտովայի մոտ Անդրես գյուղաքաղաքում (տես «Դժ.» Ա, 69 ծանոթ.)։*

59. Բաքոսի քաղաք— *Թեբեն, Բաքոսի ծննդավայրը։* Սառուկ ճոչակվեց— *երբ Էդիպ արքայի որդիները՝ Պոլինիկեն և Էտեոկլը, Թեբեի տիրապետության համար սպանեցին միմյանց, քաղաքը ստրկացավ, ընկավ Կրեոնտի բռնակալության տակ։*

61—63. Բենակո *(լատ.* Benacus*)*— *Գարդա լճի հին անունը։*

67—69. Անդ կղզյակ կա...— *լճում կա մի կղզյակ դեի Ֆրատի (ներկայումս Լեկի) անունով, որի եկեղեցին ենթակա էր Վերոնայի, Բրեշիայի և Տրենտոյի եպիսկոպոսների եկեղեցական իրավասությանը։*

70—72. Պեսկիերա— *ամրոց Գարդա լճի հարավային ցածրադիր ափին։*

73—78. *Պեսկիերայի մոտ Գարդա լճից հոսում է Մինչո գետը, որը Գովերնո ավանի մոտ թափվում է Պադոսում (Պո գետի հին անունը)։*

106—112. Եվրիպիլ— *հնադարյան գուշակ։* Եվրիպիլն *ու* Կալկանտը *քուրմ էին զորքերի մոտ և գուշակություններ անելով որոշեցին այն հարմար օրը, երբ Ավլիդում հավաքված հունական նավատորմը պետք է խարիսխ վերցներ Տրոյա արշավելու համար։*

113. Վսեմ Ոդերզո— *«Էնեականը»։ (Հմմտ. «Դժ.» ԺԶ, 128 ծանոթ.)։*

116. Սկովտիացի Միքելե— *շոտլանդացի փիլիսոփա, որ ապրում էր Ֆրեդերիկ Բ կայսեր արքունիքում։*

118. Ռոնատի Գուիդո— *ֆոռլիցի աստղագուշակ ԺԳ դարում։* Աստենդե— *պարմացի կոշկակար, որ զբաղվել է գրքացությամբ։*

124—126. Կայենը իր փշերով...— *Լուսինը արդեն հասել է մեր (Երուսաղեմի) կիսագունդը մյուս կիսագնդից բաժանող սահմանին և Սեվիլիայի մոտ իջնում է ծով։ Ուզում է ասել՝ լուսինը մայր է մտնում Երուսաղեմի կիսագնդի հորի-*

զոնում։ Լուսինը այստեղ նշված է Կայենը իր փշերով շրջաբանությամբ։ Նախապարայալ ռամիկը լուսնի բծերի մեջ տեսնում էր պատկերը Կայենի, որ աքսորվել է լուսին և դատապարտվել է հավիտենապես իր ուսերին կրելու փշերի մի խուրձ (հմմտ. «Գր.» Բ, 51)։

ԵՐԳ ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ

7. Նավարանում Վենետիկի— *կառուցվել է ԺԲ դարի սկզբին, Եվրոպայի ամենագործունյա նավաշինարաններից մեկն էր Դանտեի ժամանակներում։*

37. Ջար ճանկեր (Malebranche)— *ընդհանուր անունը այս ձորի դևերի, որոնք զինված են ճանկերով ու կեռիքներով։*

38. Մի ավազ Սանտա Զիտայից— *Լուկկան (Սանտա Զիտան) կառավարող ավագներից մեկը։ Զիտան ԺԳ դարում պաշտամունքի առարկա դարձած սրբուհի էր Լուկկայում։ Այստեղ Դանտեի հեգնանքը ուղղված է Լուկկայի համայնքը կառավարող ամբողջ ավագանիին։*

41. Բոնտուրից զատ գոփողներ են բոլոր— *ասված է հեգնաբար, քանի որ Բոնտուրո Դատին, որ Լուկկայի ժողովրդական կուսակցության պարագլուխն էր, նշանավոր գոփող-կաշառակեր էր։*

48. Սուրբ դեմք— *եբենոսից պատրաստված հին բյուզանդական խաչելություն, որ այսօր էլ պահվում է Լուկկայի մայր տաճարում։*

49. Սերկիո— *Լուկկայի մոտով հոսող գետ։*

94—96. Կապրոնա— *պիզացիների ամրոցը, որի կայազորը 1289 թվին անձնատուր եղավ լուկկացիների և ֆլորենտացիների միացյալ զորամբին։*

106—111. *Ուզելով խաբել բանաստեղծներին, Ջարագի (Malacoda) կոչված դևը ճարպկորեն խառնում է ճիշտն ու սուտը։ Ճիշտ է, որ վեցերորդ կամուրջը փուլ է եկած, բայց սուտ է, որ այստեղից ոչ հեռու գոյություն ունի մի ուրիշ անցուղի։*

112—114. Երեկ... լրացավ հազար երկուհարյուր վաթսուն վեց տարին...— *անցել է ուրեմն 1266 տարի և մի օր, հինգ ժամ պակաս այն պահից, երբ տեղի ունեցավ վեցերորդ ձորի կամուրջի փլուզումը, որի պատճառն այն երկրաշարժն է, որ ցնցեց երկիրը և նաև Դժոխքը Քրիստոսի մահվան ժամին (տես «Գժ.» ԺԲ, 34—45 ծանոթ.)։*

139. Իսկ սա ոռից շեփորի ձայն ճանեց սուր— *դևերի առաջնորդ ու պետ Թավ Մորուքը (տ. 120) իր ջոկատին (տտ. 118—123) մեկնելու ազդանշան է տալիս այս կերպով։*

ԵՐԳ ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

4. Արեթինք— *արեթինները բնակիչներն են Արեցցո քաղաքի ու մարզի։*

10. Բայց այդպիսի փոզի ձայնով արտառոց— *ինչպիսին է այն, որի մասին ասվեց նախորդ երգի վերջում։*

14—15. Մատռան մեջ սրբի նետ եմ, գինետան մեջ՝ գինովի— *այս առածանման ասացվածքը նշանակում է, որ ընկերությունը միշտ համապատասխանում է այն տեղին, ուր մարդ գտնվում է։ Դժոխքում բանաստեղծը չէր կարող սպասել ավելի լավ ընկերություն։*

52. Տեքայլ Բ— *Շամպայնի կոմսը։*

65. Լատին— *այստեղ և այլուր լատին նշանակում է իտալացի, ինչպես լատինական երկիր կամ աշխարհ նշանակում է Իտալիա։*

67. Մի կղզիից մերձակից— *Սարդինիայից։*

81—87. Կոմիտան էր, վանականը Կալլուրի— *Գալլուրան Սարդինիայի չորս շրջաններից մեկն էր կղզու հյուսիս-արևելքում, Վանական Կոմիտան Գալլուրայի դատավոր Նինո Վիսկոնտիի տեղապահն էր, որ իր պաշտոնն ու վայելած վստահությունը չարաշահեց և կաշառքով բանտից ազատեց իր տիրոջ թշնամիներին. բայց մերկացվեց և կախաղան բարձրացվեց։*

88—90. Լոզոդորցի Միքել Զանկեն— *Լոզոդորը Սարդինիայի մյուս շրջանն էր, որ կառավարում էր Միքելի Զանկեն՝ Ֆրեդերիկ Բ կայսեր որդու, Սարդինիայի թագավոր Էնցոի անունից։*

ԵՐԴ ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ

3. Եղբայրներ փոքրավոր— *Ֆրանկիսկյան կրոնավորները։*

5—6. Եզոպոսի մի առակը ճինավուրց— *առակը, որ Եզոպոսինը չէ, բայց նրան է վերագրվել միջին դարերում, հետևյալն է. գորտը մտադիր լինելով մկանը խեղդել ջրափոսի մեջ, առաջարկում է իր կոնակի վրա նրան տանել ջրափոսի մյուս եզերքը. և մինչ իրագործելու վրա էր իր չար դիտավորությունը, վրա է հասնում մի ցին և երկուսին էլ մագիլներով բռնում է ու լափում։*

9. Սկիզբն ու վերջը նուանց— *սկիզբն ու վերջը առակի ու դեպքերի։ Սերուկը գնաց ըստ երևույթին, օգնելու Սուրթևին, բայց ըստ էության վնասելու նրան, ինչպես գորտը մկանը, և ի վերջո երկու դևերն էլ ընկան ձյութալճի մեջ, ինչպես գորտն ու մուկը ցինի ճանկերի մեջ։*

58. Մեղապարտներ ոսկեփայլ— *սրանք կեղծավորներն են։*

63. Մոնազները Կլունյիի— *Կլունյիի (Բուրգունդիա) վանքի բենեդիկտյան կրոնավորները, որոնք կրում էին լայն ու փայլուն փիլոն։*

66. Ֆեդերիկինը— *Ֆեդերիկի հագցրած կապարե վերարկուն։ Ֆրեդերիկ Բ կայսրը («Դժ.», 7, 119) հրամայում էր մերկացնել, կապարե հաստ վերարկու հագցնել և կրակարանի վրա դնել այն հանցավորներին, որոնք վիրավորանք էին հասցնում իր կայսերական վեհափառությանը։*

95. Մեծ քաղաքում գեղածիծաղ Առնոյի— *Ֆլորենտիայում։*

103. Վայելող եղբայրներ— *1261 թվին Բոլոնյայում հիմնվեց «Կույս Մարիամի ասպետների» կրոնական և ասպետական ուխտը, որի նպատակն էր խաղաղեցնել կուսակցական և ընտանեկան տարաձայնությունները և անզորներին պաշտպանել հզորների բռնություններից։ Ուխտի անդամներին ժողովուրդը հորջորջեց «վայելող եղբայրներ» (Frati godenti), հեգնորեն ակնարկելով այն դյուրակեցիկ և աշխարհիկ կյանքը, որ նրանք վարում էին։*

104—108. Կատալանո դեի Մալավոլտին, գուելֆ, և Լոդերինգո դելլի Անդալոն, գիբելլին, եղել են «Վայելող եղբայրներ» ուխտի գլխավոր հիմնադիրները։

115—117. Այս մեխվածը...— *սա հրեա քահանայապետ Կայիափան է (Հովհ., ԺԱ, 50). նա քահանաների ու փարիսեցիների ժողովում պնդեց, որ անհրաժեշտ է մահվան ուղարկել Քրիստոսին։*

122—123. Նրա աներն ու անդամներն այանի— *Աննա քահանայապետը և անդամները Սինեդրիոնի, որոնք մահվան դատապարտեցին Քրիստոսին, որը աղետաբեր եղավ հրեաների համար։*

140. Ուրեմբն մեզ խաբեց նա— *(տե՛ս «Դժ.», ԻԱ, 106—111)։*

143. Բոլոնյայում լսել եմ— *խոսողը բոլոնյացի է և դևի մասին լսել է Բոլոնյայի աստվածաբանական դպրոցներում։*

ԵՐԴ ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ

2. Ջրհոս— *համաստեղություն, որի մեջ է գտնվում արևը հունվարի 21-ից մինչև փետրվարի 21-ը։*

6. Իր ավազ քրոջ սպիտակ— *ձյան։*

19. Կամուրջը խորտակ— *փլված ժայռը, որի մասին խոսվեց «Դժ.» ԻԳ, 133—138։*

21. Լեռան տակ— *(տե՛ս «Դժ.», Ա, 61—62, 76—78)։*

31. Բեռնավորաց համար— *կապարե ծանր վերարկուներ կրող կեղծավորների համար։*

36. Երկարանիզ մի սանդուղք— *մի վերելք երկրի կենտրոնից մինչև Քավարանի լեռան գագաթը։*

92. Մերկ ճոգիներ անարբկ— *սրանք գողերն են։*

93. Հելիոտրոպ— *թանկագին քար, որին ակնագործները վերագրում էին օձե-րի խայթոցները բուժելու, ինչպես և մարդուն անտեսանելի դարձնելու հատկու-թյուն։*

125. Վանենի Ֆուչշի— *պիստոյացի Ֆուչշո դեի Լաձարիի խորթ որդին (դրա համար էլ նա իրեն անվանում է չորի, այսինքն՝ խառնածին), որը նշանակալից դեր է կատարել Պիստոյայի քաղաքացիական կռիվների մեջ։ Մեղադրվել է մի քանի սպանությունների ու կողոպուտների համար։*

143. Նախ Պիստոյան սեերին...— *1301 թ. մայիսին Սպիտակները Պիստոյայից արտաքսեցին Սեերին։*

144. Հուսկ Ֆլորենցիան կփոփոխի կարգուսարք— *հետո Սեերը Ֆլորենցիա-յում 1301 թ. վերջերին և 1302 թ. սկզբներին հաղթեցին և աքսորեցին Սպիտակ-ներին (տե՛ս «Դժ.», Զ, 64—72 ծանոթ.)։*

145—150. Մի շանթ— *այսպես է հորջորջված Լունիջանայի (Մագրայի հով-տի) մարկիզ Մորոելլո Մալասպինան. սա ղեկավարեց լուկացիների և դաշնակից Ֆլորենտական Սեերի մարտը Պիստոյայի դեմ, որ Սպիտակների միջնաբերդն էր։ Մարտը վերջացավ Պիստոյայի պաշարումով ու գրավումով (1305—1306)։* Փիշենի դաշտ— *Պիստոյայի դաշտավայրը։*

ԵՐԳ ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ

2. Զեոֆը ցցեց ու մատները ճանգուցեց— *ծաղրանքի, անարգանքի ու ար-համարհանքի լկտի ժեստ։*

12. Պղծության մեջ fn արմատին դու անցար— *ըստ ավանդության, Պիստո-յան հիմնվել է Հռոմայեցի պատրիկ և դավադիր Կատիլինայի (Ա դար մ. թ. ա.) ջախջախված բանակի տականքից, որ կազմված էր հրոսակներից և չարագործ-ներից։*

15. Նա ով ընկավ որմից Թեբեի— *Կապանեսը («Դժ.» ԺԴ, 46—72)։*

19. Մարեմմա— *Տիրենյան ծովի առափնյա շերտ, որի մի մասը կազմում է Տոսկանական Մարեմման, իսկ մյուս մասը՝ Հռոմի Մարեմման։ Այստեղ նկատի ունի Տոսկանական Մարեմման, ուր վխտում էին օձերը (հմմտ. «Դժ.» ԺԳ, 7 ծա-նոթ.)։*

25—33. Կակուս— *Վուլկանի որդին, մարդ-սատիր, որ բնակվում էր Ավենտին լեռան մի քարայրում և սպանում էր իր քարայրի մոտով անցնողներին։*

28. Եղբայրների հետ միասին չի հաճում— *որովհետև մյուս կենտավրոսները հսկում են Ֆլեգեթոն գետի դատապարտյալներին («Դժ.» ԺԲ, 55—75)։*

35. Երեք հոգի— *ինչպես հետո կպարզվի, այս երեք հոգիներն են Անջել Բրու-նելլեսկին (տ. 68), Բուոզա Դոնատին (տ. 140) և Պուչչո Շանկատո դեի Գալիգա-յին (տ. 148)։ Շուտով վրա է հասնում չորրորդը՝ Զանֆա Դոնատին (տ. 43), վե-ցոտնյա օձի կերպարանքով։*

73. Զարս մասերը դարձան երկու բազուկներ— *Անջելի երկու բազուկները և օձ-Զանֆայի երկու առջևի ոտները միաձուլվելով կազմում են նոր հրեշավոր էակի երկու բազուկները։*

94—95. Թող Լուկանը այսուհետև չխոսի...— *Լուկանը պատմում է Կատոնի բանակից երկու զինվորների մասին, որոնք լիբիական անապատում խայթվեցին օձերից. մեկը՝ Սաբելլոսը, մորթի վերածվեց, մյուսը, Նասիդը, սկսեց ուռել, մինչև որ տրաքվեց, գառնալով անձև նյութի մի դանդաղ («Ֆարսալիա» Թ, 762—804)։*

97—99. Թող լռի և Օվիդիոսը...— *Օվիդիոսը պատմում է, որ Թեբեի հիմնա-դիր Կադմոսը կերպարանափոխվեց օձի («Այլակերպ.» Դ, 564—603), իսկ հավեր-ժահարս Արեթուսը՝ աղբյուրի («Այլակերպ.» Ե, 572—641)։*

135. Եվ դադարեց նրանց մուխը ներգործուն— *որովհետև ավարտվել էր երկու էակների կերպարանափոխությունը, որի մեջ մուխը գործուն և տեսական մաս-նակցություն էր ունեցել։*

140. Մյուսին— *երեքից երրորդին՝ Պուչչո Շանկատոյին, որ չէր կերպարա-նափոխվել (տտ. 148—150)։*

151. Մյուսը նա էր, որից տուժեց Գավիլլեն— *մյուսը, օձիկը, որ Բուդոյին խայթեց և նորից մարդ դարձավ, Ֆրանչեսկո Կավալկանտին էր, որին գողության համար սպանեցին Գավիլլե ավանի (Առնոյի հովտում) բնակիչները։ Նրա աղաչանքները, վրեժ լուծելու համար, շատ մարդկանց կոտորեցին Գավիլլեում։*

ԵՐԳ ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ

9. Պրատոցիֆ— *Պրատո փոքրիկ քաղաքի բնակիչները, որոնք, դժգոհ լինելով Ֆլորենցիայի տիրապետությունից, նրան դժբախտություն և չարիք են մաղթում։*

26—28. Այն ժամանակ, երբ լուսատուն աշխարհի...— *այսինքն՝ ամառը. երբ մժեղը փոխարինում է ճանճին. այսինքն՝ երեկոյան։*

34—39. Ինչպես նա...— *Եղիսե մարգարեն։ Ըստ Աստվածաշնչի, Եղիսե մարգարեն ականատես եղավ թե ինչպես Եղիա մարգարեն երկինք էր համբառնում հրեղեն ձիակառքով։ Եղիսեն այստեղ ակնարկված է «նա, ով վրեժ լուծեց արջերով» շրջաբանությամբ, որովհետև, երբ նա անիծեց իր ճաղատությունը ծաղրող ազանիներին, անտառից դուրս եկան երկու արջեր և հոշոտեցին նրանց (Դ Թագ. Բ 11—12 և 23—24)։*

54. Ուր դրված էր Էտեոկլը եղբոր հետ— *հին բանաստեղծները պատմում են, որ երբ իրար նկատմամբ մահացու ատելությամբ լցված և իրար սպանած թեբեցի երկու եղբայրների՝ Էտեոկլի և Պոլինիկեի մարմինները խարույկի վրա դրվեցին, բացը երկուսի բաժանվեց, ասես վկայելու համար, որ նրանց ոխերիմ ատելությունը շարունակվում էր նույնիսկ մահից հետո («Թեբեական» ԺԲ, 429—432. «Ֆարսալիա» Ա, 551—552)։*

56. Ոլիս *(Ոդիսևս)* և Դիոմեդ— *տրոյական պատերազմի հերոսներ։*

58—60. Ձիու դավ— *փայտե ձիու դարանը, որի մեջ թաքնված հույն մարտիկները Տրոյա մտան և հրկիզեցին այն («Էնեական» Բ)։*

61—62. Դեյդամիա— *Սքիրոսի թագավոր Լիկոմեդի դուստրը, որ սիրահարվեց Աքիլլեսին։ Անմխիթար Դեյդամիան Լիմբոսում («Քավ.» ԻԲ, 114), դեռ ողբում է Աքիլլեսի կորուստը։*

63. Պալլադիոն— *Տրոյայում հարգված Աթենաս-Պալլասի արձանը, որ խորամանկությամբ հափշտակեցին երկու հույն մարտիկները, որովհետև կարծում էին, որ այդ արձանի առկայությունը քաղաքը դարձնում էր անառիկ։*

82. Երկն իմ վսեմ— *իմ «Էնեականը» (հմմտ. «Դժ.» Ի, 113)։*

83—84. Ձեզնից մեկը...— *այսինքն Ուլիսը։ Այստեղ Ուլիսի ճանապարհորդության և աղետավոր մահվան պատմությունը ըստ երևույթին ծագում է հետհոմերյան մի ավանդությունից, ըստ որի Ուլիսը, վերադառնալով Իթակե, ձեռնարկել է մի երկրորդ ճանապարհորդության, նավարկել է Ատլանտյան օվկիանոսում, հիմնել է Ուլիսիպոն (Լիսաբոն) քաղաքը և փոթորկից խորտակվել է Աֆրիկայի արևմտյան ափերին։*

91. Կիրկե— *կախարդ կին, որի մոտ Ուլիսը երկար մնաց Տրոյայից Իթակե վերադարձին։*

92—93. Գայետա *(ներկայումս Ձիրշեո)* լեռը, որից ոչ հեռու հետագայում էնեասը թաղեց իր դայակ Կայետային, այդ մարզը կոչելով նրա անունով *(հմմտ. «Էնեակ.» է, 1—4)։*

94—99. Ոչ զարովը որդուս...— *Ուլիսի որդին Տելեմակն էր, հայրը՝ Լայերտը, կինը՝ Պենելոպեն։ Հեռավոր աշխարհներն ու մարդկանց ճանաչելու փափագն ու ձգտումը այնքան ուժեղ էին Ուլիսի մեջ, որ նույնիսկ որդիական, հայրական և ամուսնական սերը չկարողացավ նրան հետ պահել վտանգավոր ճանապարհորդությունից։*

100. Ծովի— *Միջերկրական ծովի։*

103. Ափերն երկու— *Միջերկրականի եվրոպական և աֆրիկյան ափերը։*

104. Կոզին սարերի— *Սարդինիան։*

105. Եվ այլ կղզի— *Սիկիլիա, Կորսիկա, Բալեարյան կղզիներ։*

108. Ուր Հերկուլեսն իր սյուներն էր կանգնեցրել— *ըստ ավանդության, Հերկուլեսը Ջիբրալտարի նեղուցի երկու կողմերին (եվրոպական և աֆրիկական ափե-*

ին) երկու այուներ էր դրել և դրանով նշել հետազոտելի աշխարհի սահմանները։

110. Սեիլիա— *քաղաք Իսպանիայի հարավ-արևմուտքում։*

111. Սեուտա— *քաղաք աֆրիկական ափին, Ջիբրալտարի դիմաց։*

113. Արևմուտք— *այն ժամանակ ճանաչված աշխարհի արևմտյան սահմանը։*

117. Աշխարհն անբնակ— *մյուս կիսագունդը, որ, ինչպես դեռ կարծում էին Դանտեի ժամանակներում, ծածկված է ջրով։*

126. Ընթանալով միշտ դեպի ձախ— *այսինքն՝ միշտ ընթանալով Հերկուլեսյան այուներից դեպի հարավ-արևմուտք։*

128. Մյուս բեռի— *այսինքն հարավային բևեռի աստղերը։*

129. Իսկ մեռերը...— *իսկ հյուսիսային բևեռի աստղերը այնքան իջել էին, որ չէին երևում հորիզոնում։ Այդ նշանակում է, որ նավագնացները կտրել անցել էին հասարակածի գիծը։*

130—132. Արդեն վտանգել ու ճանգել էր ճիճգ անգամ...— *այսինքն՝ արդեն հինգ ամիս էր անցել այն օրից, ինչ մենք ձեռնարկել էինք վտանգավոր ուղևորությունը։*

134. Մի լեռ— *այն լեռը, ուր բանաստեղծը տեղավորում է Քավարանը։*

141. Կամքով Բարձրյալի— *կամքով աստծու, որ կենդանի մարդկանց արգելել է հասնել Քավարանի կղզին (հմմտ. «Քավ.» Ա, 131—132)։*

ԵՐԳ ՔՍԱՆՅՈԹԵՐՈՐԴ

4. Երբ մի այլ բոց, որ գալիս էր ետևից...— *այս բոցի մեջ ներփակված է հոգին մի ուրիշ նենգ խորհրդատուի. դա Գուիդո դա Մոնտեֆելտրոն է։*

7—12. Ինչպես ցուլը սիկիլյան...— *ակնարկում է այն պղնձե ցուլը, որ աթենացի արհեստավոր Պերիլլոսը շինեց Ագրիգենտի (Սիկիլիա) բռնակալ Ֆալարիսի համար. դա պատրաստված էր այնպես, որ նրա մեջ տանջամահ արվելու դատապարտված դժբախտի ճիչերը, երբ այն շիկացվում էր կրակի վրա, վերածվում էին կենդանի ցուլի մռնչյունների։ Ֆալարիսը, փորձելու համար տանջանքի ու մահվան այդ գործիքը, առաջինը նրա մեջ մտցրեց հնարողին։*

19—21. Ի՛նչ դու, ինչ եմ դիմում ես...— *Գուիդո դա Մոնտեֆելտրոն դիմում է լոմբարդացի Վիրգիլիոսին (հմմտ. «Դժ.» Ա, 68), և ուզում է նրանից իմանալ Լոմբարդիային սահմանակցող Ռոմանյայի քաղաքական իրադարձությունները։*

28. Ռոմանյա— *Տոսկանայի և Լոմբարդիայի միջև ընկած իտալական մարզ։*

29—30. Չի ծնեցյամբ լեռնավայրից եմ ես այն— *Գուիդոն ծնվել է Մոնտեֆելտրոյի կոմսությունում, որ տարածվում է մինչև Կոռնարո լեռը։*

40—42. Ռավենեան *1270 թվից գտնվում էր Պոլենտա տոհմի (որի զինանշանը արծիվ էր) իշխանության տակ։*

43—44. Քաղաքը, որ պաշարման դեմ դրեց քաջ...— *գիբելլինյան Ֆոլի քաղաքը, որը 1281—1283 թվերին արիաբար դիմադրեց ֆրանսիական վարձկանների և իտալական գուելֆներից կազմված պապական զորքին և քաղաքի պաշտպանության ղեկավար Գուիդո դա Մոնտեֆելտրոն ռազմական մի հնարագիտությամբ պարտության մատնեց հակառակորդին։*

44. Այժմ ընկած է ճիրանների տակ կանաչ— *1300 թ. քիչ առաջ Ֆոլիի սնյորները դարձան գիբելլինյան Օրդելաֆֆիները, որոնց զինանշանը կանաչ ճիրաններով առյուծ էր ոսկեգույն ֆոնի վրա։*

46—48. Վերուկկիոյի գամփռերն աճել ու ջանել...— *գուելֆ Մալատեստա դա Վերուկկիոն, և նրա ավագ որդին, Մալատեստինոն։ Այստեղ նրանք անվանված են գամփռեր, որոնք սովոր են հոշոտելու իրենց որսը, այսինքն դաժան լինելու իրենց թշնամիների հանդեպ։*

49—51. Կապույտ կորյուն...— *Մագինարդո Պագանին (զինանշանը՝ կապույտ կորյուն սպիտակ ֆոնի վրա), որ անընդհատ փոխում է իր քաղաքական ուղղությունը։*

52—54. Քաղաքն այն...— *Ջեզենան, որի միջով է հոսում Սավիո գետը։*

67. Կապավոր— *ֆրանկիսկյան կրոնավոր։ Ֆրանկիսկյանները իրենց մեջքին*

պարանե գոտի էին կապում. այստեղից էլ նրանք կոչվեցին կապավոr (cordiglie-ro)։

70. Հովվապետը— Բոնիֆակիոս Ը պապը (տես «Դժ.» ԺԹ, 52 ծանոթ.)։

85. Վենապետը փարիսեցոց մեroրյա— պապը։

86. Ոr կովում էr Լատերանի մոտերոում— այսինքն հենց Հռոմում, քրիստոնեության որտում։ Ակնարկում է 1297 թ. Բոնիֆակիոս Ը պապի ձեռնարկած կռիվը Հռոմի Կոլոննաների հզոր տոհմի և նրանց հետևորդների դեմ, որոնք չէին ուզում ճանաչել Կելեստին Ե պապի հրաժարման և նոր պապի ընտրության (տես «Դժ.» ԺԹ, 56 ծանոթ.) վավերականությունը։ Լատերանի պալատը պապական նստավայրն էր, որտեղից ոչ հեռու գտնվում էին Կոլոննաների տները։

87—90. Ոչ գեղերի դեմ հեթանոս կամ հրեա...— Բոնիֆակիոս Ը-ի կռիվը այլադավանների դեմ չէր, այլ հենց քրիստոնյաների դեմ, որոնք ոչ նպաստել էին Ակրի քաղաքի գրավմանը (Ակրին քրիստոնյաների վերջին պատվարն էր Պաղեստինում, որ 1291 թվին ընկավ սարակինոսների տիրապետության տակ), ոչ էլ շահի համար գնացել էին առնուտուր անելու մահմեդական երկրներում, հակառակ եկեղեցու արգելիչ հրամանների։

94—95. Ինչպես կանչեց Կոնստանդինը Սիլվեստրին...— ակնարկում է այն ավանդությունը, ըստ որի Կոնստանդին կայսրը ի վիճակի չլինելով բուժվել բորից, կանչել տվեց Սիլվեստր պապին, որի ձեռքով մկրտություն ստացավ, քրիստոնյա դարձավ և բորից ազատվեց (հմմտ. «Դժ.» ԺԹ, 115—117)։

102. Պենեստրինո (ներկայումս Պալեստրինա)— Հռոմի մոտ փոքրիկ քաղաք, ուր գտնվում էr Կոլոննաների ամրոցը։

103. Ես կարող եմ բանալ երկինքն ու գոցել— պապը, իբրև Պետրոս առաքյալի փոխանորդ, իշխանություն ունի մեղավորին մեղքերի թողություն տալու կամ չտալու (Մատթ. ԺՁ, 19)։

105. Նախորդը— Կելեստին Ե պապը։

110. Շատ խոսացիr, բայց մի պանիr խոստումներդ— Բոնիֆակիոս Ը պապը այդպես էլ արեց և դրանով հաղթեց իր թշնամիներին։

112. Ֆրանկիսկ— հովանավոr սուրբը ֆրանկիսկյան միաբանության, որի անդամը դարձավ Դուիդոն իր կյանքի վերջին շրջանում։

124. Մինոս— Դժոխքի դատավորը («Դժ.» Ե, 4)։

ԵՐԳ ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ

1. Նույնիսկ արձակ խոսfեroվ— նույնիսկ արձակով, որ ազատ է չափի ու հանգի կաշկանդումներից։

8. Պուլյա (լատ. Ապուլյա)— նահանգ իտալական թերակղզու հարավ-արևելքում, այստեղ նշանակում է ամբողջ հարավային Իտալիան, որ տեղի են ունեցել հաջորդ տողերում (9—18) ակնարկված մարտերը։

9. Ընկան ձեռքով հռոմայեցոց— ակնարկում է սամնիտական պատերազմները (343—290-ին մ. թ. ա.), երբ հռոմայեցիները նվաճեցին հարավային Իտալիան։

10—12. Երկար մարտերում...— ակնարկում է երկրորդ փյունիկյան պատերազմը, որ տևեց 16 տարի։

14. Ռոբերտ Գուիսկարդ— Նորմանդիայի դուքս Ռիչարդի եղբայրը, որ ԺԱ դարի երկրորդ կեսին նվաճեց հարավային Իտալիան, որտեղից նորմանները արտաքսեցին արաբներին։

16. Ջեյերանո— սարատեղիական կարևոր վայր նապոլիտանական թագավորության և եկեղեցական մարգի սահմանի վրա, որտեղ 1266 թվին պուլյացիները, այսինքն՝ նապոլիտանական թագավորության հպատակները, դավաճանաբար բաց արին ճանապարհը Կարլոս Անժուացու զորքերի առջև, որը ճակատագրական եղավ Մանֆրեդի համար Բենեվենտոյի ճակատամարտում («Քավ.» Գ, 103—145)։

17. Մեր Ալարդո— Ալարդ Վալերի, Կարլոս Անժուացու խորհրդականը, որի խորհուրդներով Կարլոսը Բենեվենտոյի ճակատամարտում հաղթեց հակառակորդին։

31. Մահմեդ (571—632)— *մահմեդականության կամ իսլամիզմի հիմնադիրը, որը, ըստ Դանտեի, իր նոր կրոնով պառակտեց աշխարհը։*

32. Ալի էրն Աբի Թալիբ— *Մահմեդի փեսան և նրա առաջին հետևորդներից մեկը, որը հիմնեց նոր աղանդ և հերձված առաջ բերեց մահմեդականության մեջ։ Սպանվեց 661 թվին։*

56. Եղբայր Դոլչինո— *Նովարացի (Պիեմոնտ) Դոլչինո Ֆոռնիելլին, աշակերտը պարմացի Գերարդո Սեգարելլիի, որը 1260-ին հիմնեց «առաքելական եղբայրներ» հերետիկոսական աղանդը։*

73. Պիետրո (կամ Պիեր) դա Մեդիչինա— *Մեդիչինայի (Բոլոնյա) ազնվական մի տոհմի անդամը։*

74—75. Հարթավայրն այն անուշակ...— *Պոի հովտի հարթավայրը։*

76—90. Պիետրո դա Մեդիչինան զուշակում է, որ Ֆանո քաղաքի (Անդրիականի ափին, Ռիմինիից հարավ) երկու ազնիվ ու ազդեցիկ անձինք, ինչպիսիք են Անջելլո դա Կարինյանոն և Գուիդո դել Կասերոն, կսպանվեն դավադրությամբ բռնակալի մի գծեյա, որը Ռիմինիի տիրակալ Մալատեստինոն է (տես «Դժ.» ԻԷ, 46—48 ծանոթ.)։

82. Կիպրոս կղզուց մինչև հեռու Մայորկա— *այսինքն ամբողջ Միջերկրական ծովում։*

84—87. Տեղ է այն քաղաքի, որ այստեղ մեզնից մեկը կուզեր տեսած չլինել— *այսինքն Մալատեստինոն՝ սինյորը Ռիմինիի, որ Կուրիոնը կուզեր տեսած չլինել, որովհետև այնտեղ գործեց այն մեղքը, որի համար դատապարտված է այստեղ։*

94—102. Կուրիոն Կայիոս— *հռոմայեցի տրիբուն, հարեց Պոմպեոսին, ապա վաճառվեց Կեսարին։*

103—108. Մոսկա դեի Լամբերտի— *սրա խորհրդով Ամիդեիները և նրանց մերձավորները որոշեցին վրեժ լուծել Բուոնդելմոնտեից ստացած վիրավորանքի համար (Բուոնդելմոնտեն զրժել էր Ամիդեիների տոհմից մի աղջկա հետ ամուսնանալու իր խոստումը)։ Մոսկայի «Պետք է վերջ տալ», այսինքն՝ «պետք է սպանել» խոսքով էլ, որն ի կատար ածվեց, սկսվեց Ֆլորենցիայի և ամբողջ Տոսկանայի պառակտումը երկու թշնամական խմբավորումների՝ գուելֆների և գիբելլինների։*

109. Եվ մահ ցեղիդ— *այսինքն քո խոսքը կործանում բերեց և քո տոհմին։ Եվ իրոք Լամբերտիները դրանից հետո շարունակ հալածվեցին և արտաքսվեցին Ֆլորենցիայից։*

133—136. Բերտրան դը Բորն— *Պերիգորի ալատապետը և Հոտքֆորի դղյակի տերը ԺԲ դարի երկրորդ կեսին. պրովանսալ գրականության նշանավոր տաղերգուներից մեկը։*

137—138. Աֆիտոֆել— *Խրայելի թագավոր Դավթի խորհրդականը, որ իր շար խորհուրդներով նրա որդուն, Աբիսողոմին, դրդեց ապստամբելու հոր դեմ (Բ Թագ. ԺԶ, 15—17)։*

142. Համատույժս— *հանցանքիս համապատասխան պատիժս։*

ԵՐԳ ՔՄԱՆԻՆՆԵՐՈՐԴ

10—12. Լուսիենն արդեն զտնվում է ճաղերում...— *Լուսինը Ծրուսաղեմին հակոտնյա Քավարանի միջօրեականի վրա է։ Նշանակում է կեսօրից հետո ժամը մեկն է։*

27. Ջերի բել Բելլո— *Դանտեի ազգականը հոր կողմից (հմմտ. «Դր.» ԺԵ, 94 ծանոթ.), որը եղել է գժտություններ սերմանող և սպանվել է ոմն Բրոդայո Սակետտիի ձեռքով։*

29. Հոտքֆորի բերդակալ— *Բերտրան դը Բորնը (տես «Դժ.» ԻԲ, 133—135 ծանոթ.)։*

38. Հաշորդ ձորակ— *ուիթերբոդ պաքանակի տաքը գեշ ձորերից («Դժ.» ԺԸ, 1) վերջինը, ուր պատժվում են խարդախները կամ կեղծարարները։*

49. Վալդիկիտնա, Մարեմմա, Սարդինիա— *ճահճային և տենդախտահար մարզեր Դանտեի ժամանակներում։*

59—64. Եգիպ— *Աթենքից ոչ հեռու մի կղզյակ։*

109—120. Ես Արեցցոյից եմ եկել— *խոսողը արետինցի ալքիմիկ Գրիֆֆոլինոն է, որ դժոխքի դատավոր Մինոսի կողմից դատապարտվել է մետաղներ կեղծելու համար։*

124. Մյուս բարոնը...— *ալքիմիկ Կապոկկիոն (տ. 136), Դանտեի դպրոցական ընկերը։*

125—126. Ստրիկկա— *հավանաբար Ստրիկկա դեի Սալիմբենին, Նիկկոլոյի (տ. 127) եղբայրը, որ մսխեց հայրական ժառանգությունը։*

127—129. Նիկկոլո դեի Սալիմբենի— *սա խորտիկների մեջ համեմունքներ (շանոֆրամներ) գործածելու սովորությունը մտցրեց խրախճանասեր Սիենայում (այգում)։*

130—132. Այն խումբը— *ԺԳ դարի երկրորդ կեսին սիենացի 12 հարուստ երիտասարդներից բաղկացած մի խումբ, որ նպատակ էր դրել կյանքն անցկացնել վայելքների ու խնջույքների մեջ։ Այդ խմբի մեջ էին Կաչչա դ՚ Աշանն ու Աբբալյատոն։*

ԵՐԳ ԵՐԵՍՈՒՆԵՐՈՐԴ

1—12. Աթամանտ— *Թեբեի թագավորը, խելագարության նոպայի մեջ կնոջը և երկու որդիներին էգ առյուծի և կորյունների տեղ դրեց և ցանցեր լարեց նրանց բռնելու համար, ապա մի որդուն՝ Լեարկոսին, ժայռին զարնելով սպանեց. նրա կինը՝ Ինոն, հուսահատությունից ծովը նետվեց մյուս որդու՝ Մելիկերտի հետ (Օվիդ., «Այլակերպ.», Դ, 464—530)։*

13—21. Հեկուբ— *Տրոյայի թագավոր Պրիամոսի կինը։*

25. Երկու ճոգի— *սրանք են Ջաննի Սկիկկին (տ. 32) և Միրրան (տ. 38)։*

28. Մեկը— *Ջաննի Սկիկկին, ֆլորենտացի Կավալկանտիների տոհմի ներկայացուցիչը։*

31. Արետինը— *Գրիֆֆոլինոն (տե՛ս «Դժ.», ԻԹ, 109—120)։*

37—41. Միրրա— *Կիսլրոսի թագավոր Կինիրի դուստրը։ Ազգապիղծ սիրով սիրահարվեց հորը և, ուրիշ երիտասարդ կին ձևանալով, իր կիրքը գոհացրեց դայակի ու խավարի օգնությամբ։ Հայրը, հասկանալով խաբեությունը, ուզեց սպանել աղջկան, բայց աղջիկը փախավ Արաբիա, ուր, աստվածների ձեռքով, այլակերպվեց Զմուռսի ծառի («Այլակերպ.» Ժ, 298—502)։*

48. Դարձա դեպի մյուս ճոգիներն հոռեծին— *Դանտեն այժմ անցնում է այս ձորում պատժված կեղծարարների երրորդ խմբին, դրամանենգներին. սրանք տառապում են ջրդողությամբ։*

61. Ադամ վարպետ— *սա ապրել է վերին Առնոյի հովիտ Կագենտինոյում, Ռոմենայի կոմս Գուիդոներին պատկանող դղյակում, ուր նրանց համար կեղծ ֆլորին (ֆլորենտական ոսկեդրամ) է կտրել, և 1281 թվին ֆլորենտական հանրապետության դատավճռով այրվել է խարույկի վրա (տտ. 73—75. 88—90)։*

74. Ոսկեդրամը Մկրտիչով զրոշմված— *ֆլորենտական ֆլորին ոսկեդրամը, որի մի երեսին զրոշմված էր քաղաքի հովանավոր Հովհաննես Մկրտիչը, իսկ հակառակ կողմի վրա՝ հանրապետության զինանշան շուշանը։*

77. Գուիդոյին, Ալեսսանդրին ու եղբոր— *վարպետ Ադամը այստեղ հիշում է Ռոմենայի կոմսերից երկուսին իրենց անուններով՝ Գուիդո Բ-ին և Ալեսսանդրո Ա-ին։*

78. Ֆոնտե Բրանտա— *Ռոմենայի մոտ աղբյուր։*

79. Մեկն եկել է արդեն— *ակնարկում է Գուիդո Բ-ին, որ մեռել է 1202 թվին։*

90. Երեք կարատ այլ մետաղի խառնուրդով— *կարատ է կոչվում 1/24 ունցիան։ Ադամը յուրաքանչյուր ունցիա ոսկուն խառնել է երեք կարատ հասարակ մետաղ։*

91. Այն երկուսը— *սրանք խոսք կեղծողներն են, որոնք կազմում են կեղծարարների չորրորդ խումբը. տառապում են սուր տենդով։*

97. Մեկն այն կինն է, որ զրպարտեց Հովսեփին— *Պետափրեսի կինը, չկա-*

բողանալով գայթակղեցնել իրենց տան ծառա Հովսեփին, իր ամուսնու առջև զրպարտեց նրան, իբրև թե նա ուզեցել է բռնաբարել իրեն, և ամուսինը բանտարկեց Հովսեփին («Ծննդ.» ԼԹ, 6—23)։

98. Սիմոն— հույն երիտասարդ, որ ստախոսությամբ իր ընկերներից հալածված ձանձալով, Պրիամոսի և տրոյացիների վստահությունը գրավեց և նրանց համոզեց Տրոյա տանել փայտե ձին (տես «Դժ.» ԻԶ, 58—60 ծանոթ.)։

129. Հայելին Նարգիսի— ջուրը, որի մեջ Նարգիսը տեսավ իր արտացոլված պատկերը և սիրահարվեց նրան («Այլակերպ.» Դ, 407—510)։

ԵՐԳ ԵՐԵՍՈՒՆՄԵԿԵՐՈՐԴ

1—6 Ամֆիլեսի նիզակն ու Վիրգիլիոսի լեզուն— ըստ դիցաբանության Աքիլլեսը իր հորից՝ Պելեոսից, ժառանգել էր հրաշագործ մի նիզակ, որի հարվածի առաջացրած խոցերը բուժվում էին լոկ նույն նիզակի մի ուրիշ հարվածով («Այլակերպ.» ԺԳ, 171—172)։ Այստեղ Դանտեն այդ նիզակին է նմանեցնում Վիրգիլիոսի լեզուն, որ նախ իր սիրտը խոցել էր, ապա՝ առել սիրալիր խոսքերով։

7. Մեեմ ճեռացանմ վերջին ձորից չարաշուք— երկու բանաստեղծները թողնում են ութերորդ պարունակի վերջին ձորը և ուղղվում դեպի կենտրոնական վիթխարի ջրհորը, որի հատակը կազմում է իններորդ և վերջին պարունակը (տես «Դժ.» ԺԸ, 1—20 ծանոթ.)։ Այդտեղ պատժվում են վստահողներին խաբողները կամ դավաճանները («Դժ.» ԺԱ, 61—66)։

16—18. Այն ողբալի կոտորածի ժամանակ...— ակնարկում է ֆրանսիական զորագնդի կոտորածը Ռոնսբվալի կիրճում (Պիրենյան լեռներ) 778 թվի ամռանը։

40. Մոնտերեջո— 1213 թվին կառուցված ղղյակ Սիենայի մարզում։

43—45. Հսկաները (Տիտաններ)— սրանք փորձեցին գրոհով գրավել երկինքը, բայց Զևսը նրանց շանթահարեց Ֆլեգրայի հովտում («Դժ.» ԺԴ, 58)։

46. Մեկի— Նեմբրոթի (տ. 77)։

49—50. Բնությունը...— Դանտեն այստեղ հետևում է հունական դիցաբանության, ըստ որի Հսկաները Երկրի որդիներն էին։

59. Ինչպես կոնը Սուրբ Պետրոսի՝ Հռոմում— ակնարկում է բրոնզից շինված սոճու այն կոնը, որ Դանտեի ժամանակներում դրված էր Սուրբ Պետրոսի բազիլիկայի գավթում, իսկ ներկայումս՝ Վատիկանի բակում է. նրա բարձրությունը չորս մետր է։

64. Երեք ֆրիզոն բավական— մեկը մյուսի ուսերի վրա բարձրացած երեք ֆրիզոն բավական չէին լինի հասնելու Նեմբրոթի գլխին։ Ֆրիզիայի (հոլանդական նահանգ) բնակիչները հայտնի էին իրենց բարձր հասակով։

67. Ռաֆել մայ ամեմ իզաբիալմի— հին մեկնիչները գտնում էին, որ զուր են փորձերը որևէ իմաստ վերագրելու Նեմբրոթի այս բառերին, որոնք հնարել է Դանտեն, որպեսզի որոշ գաղափար տա լեզուների բաբելական խառնակության մասին։ (տտ. 79—81)։

77. Նեմբրոթ— Բաբելոնիայի առաջին թագավորը, որ, ըստ եկեղեցական ավանդության, համարվում է գլխավոր պատասխանատու Բաբելոնի աշտարակաշինության, որից առաջացավ լեզուների խառնակությունը։

94. Ֆիալտ (Էֆիալտ)— երկնքի վրա գրոհող Հսկաներից մեկը։

99. Բրիարեա— Վիրգիլիոսը իր «Էնեականում» (Զ, 365—568) նրան պատկերել է հարյուր ձեռանի և հիսուն գլխանի Հսկա, իսկ Դանտեն այստեղ նրան ներկայացնում է սովորական մարդկային, թեև հսկայական, կերպարանքով, ինչպես Ֆիալտը։

100. Անթեյ— վթխուն կանգուն բարձրությամբ Հսկա, Երկրի ու Նեպտունի որդին։

115—117. Դաշտահովտում բարեբաստ...— Բագրադ գետի հովտում, Զամայի մոտ, ուր, ըստ Լուկանի պատմածի, բնակվում էր Անթեյը, և որտեղ Սկիպիոն Աֆրիկացին փառավոր հաղթություն տարավ Հաննիբալի դեմ։

120. Եղբայրներիդ— Հսկաները լինելով Երկրի որդիներ, եղբայրներ են։ Մեծ մարտում— Հսկաների գոտեմարտում Աստվածների դեմ։

124. Ֆիառն կամ Ֆիֆոն— ուրիշ Հսկաներ։
136. Կարիգնեռա— աշտարակ Բոլոնյայում։

ԵՐԳ ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

10. Անֆիոն— Զևսի և Անտիոպեի որդին։ Անֆիոնը վարպետ կֆիառածու էր։
13. Ο հառեգույն արարածներ...— բացադարձությունն ուղղված է դավաճաններին։
16. Մուր ջրհորի հատակին— ջրհորի հատակը կազմում է մի ընդարձակ սառցալիճ, Կոկիտ անունով («Դժ.» ԺԴ, 119. ԼԱ, 123. ԼԳ, 156. ԼԴ, 52)։
21. Եղբայրներիս— երկու եղբայրներիս (տ. 41)։
27. Տանայիս— Դոն գետի լատինական անունը։
28. Տամբեռնիկ— անունն է մի բարձր լեռան, որ Հայանի չէ, որտեղ է գտնվում։ Հին մեկնիչ Բուտին ենթադրում է, որ գտնվում է Հայկական լեռնաշխարհում։
29. Պիեռաչապանա (այժմ՝ Պանիա)— բարձր լեռ Տոսկանայում։
33. Երբ գեղջկուհին ճեռում է արտն իր հասած— այսինքն ամառը։
38—39. Բերանները՝ ցրտի, աչքերը՝ սրտի...— ատամների կափկափյունը ցույց էր տալիս ցրտից տանջանքը, իսկ աչքերի արցունքները՝ ներքին վիշտը։ այս մեղավորների տանջանքը և՛ ֆիզիկական է, և՛ հոգեկան։
41. Տեսա երկու հոգի— այսինքն երկու եղբայրներին ողբացյալ։
55—57. Այն երկուսը— այդ երկու եղբայրներն են Նապոլեոնեն և Ալեսսանդրոն, Ալբերտո դեյլի Ալբերտիի որդիները, Մանֆրեդիի կոմսերը։ Սրանք իրենց հորից ժառանգեցին Բիգենցիո գետի (թափվում է Առնոյի մեջ, Ֆլորենցիայից ներքև) հովտի դղյակները և փոխադարձ ատելության պատճառով միմյանց խոցխոցեցին 1286 թ.)։
61—62. Նա...— Մորդրեկը, Լանչիլոտտոյի վեպի («Դժ.» Ե, 128) հերոս։ Լինելով որդին (կամ թոռը) Արթուր թագավորի, փորձեց նրան սպանել և նրա թագավորությանը տիրանալ. բայց Արթուրը տեգի հարվածով այնպես ծակեց նրա կուրծքը, որ վերքի միջով թափանցեց արևի ճառագայթը։ Մորդրեկը մեռնելիս կարողացավ մահացու վիրավորել Արթուրին։
63. Ֆոկաչչա— մականունը պիստոյացի Վաննի դեի Կանչելիերիի։ Սա դավաճանաբար սպանեց իր մի քանի ազգականներին։
65—66. Մասկերոնի Սասսո— ֆլորենտացի, դավաճանաբար սպանեց իր խնամքին հանձնված եղբորորդուն, նրա ժառանգությանը տիրանալու համար։ Մարդասպանին ֆլորենցին սուր մեխերով պատած տակառի մեջ և գլխատեցին։
68. Կամիչոն դե՛ Պացցի— ֆլորենտացի, դավաճանաբար սպանեց իր մի ազգականին՝ նրա ունեցվածքին տիրանալու համար։
69. Կոռլ (կամ Կաուլինո) դե՛ Պացցի— Կամիչոնի ազգականը։ 1302 թվին դրամական հատուցում ստանալով՝ ֆլորենտական Սևերին հանձնեց Պիանտրավիկիչի ամրոցը, ուր դեռ պահվում էին աքսորված Սպիտակները։
70. Ադա տեսա...— այստեղ սկսվում է իններորդ պարունակի երկրորդ գոտին, Անտենորը (տ. 89), ուր պատժվում են քաղաքական (հայրենիքի և համախոհների) դավաճանները։
73—74. Դեպի Կենտորոն— դեպի երկրի և տիեզերքի կենտրոն, ուր ձգվում են բոլոր ծանրությունները («Դժ.» ԼԴ, 111)։
78—81. Մեկի գանգին...— սա դավաճան Բոկկա դեյլի Աբատին է (տ. 106)։ 1260 թվին Մոնտապերտիի մարտում (տես «Դժ.» Ժ, 32—51 ծանոթ.) կարեց ֆլորենտական հեծելազնդի գրոշակակրի ձեռքը. դա խուճապ առաջ բերեց գուելֆների մեջ և հանգեցրեց նրանց պարտության։
89. Անտենոր— տրոյացի հերոս, որի անունով է կոչվում իններորդ պարունակի երկրորդ գոտին։
94. Ձիրտ հակառակն եմ ուզում— դավաճանները, ի տարբերություն Դժոխքի մյուս պատասխանատուներին, ուզում են մոռացվել երկրում։
116. Դուերա— Բոլոնը կամ Դուերա, Կրեմոնայի տիրույթը։ 1265 թ. Մանֆրեդ

թագավորը նրան հանձնարարեց Լոմբարդիայում դիմադրել Կարլոս Անժուացու ֆրանսիական զորքերին, բայց նա ֆրանսիական փողով կաշառվեց և նրանց առաջ բաց թողեց առաջ շարժվելու դեպի հարավ։

119. Բեկկերիա— Տեզաուրո դեի Բեկկերիա, պավիացի, Վալլամբրոզայի վանքի աբբահայրը և պապական նվիրակը Տոսկանայում։ 1258 թվին գիբելլինների աքսորից հետո (տես «Դժ.» Ժ, 32—51 ծանոթ.) ֆլորենտական դուելֆները նրան մեղադրեցին դավաճանության մեջ և գլխատեցին։

121—122. Գաելլոն— դավաճան ասպետ, որի հանձնավոր կապը սարակինոսների հետ պատճառ հանդիսացավ Ռոնսըվալի կոտորածին («Դժ.» ԼԹ, 16—18)։ Ջաննի Սոլդանիերի— ֆլորենտացի ազնվական, գիբելլին։ 1266 թվին Ֆլորենտիայում տեղի ունեցած խռովության ժամանակ դավաճանեց իր կուսակիցներին։

122—123. Տեբալդելլո Զամբրաքի— ֆայենցացի։ 1280 թ. հայրենի Ֆայենցան հանձնեց բոլոնյացի գուելֆներին, նրանց առաջ բաց անելով քաղաքի դարպասները։

126. Որից մեկը մյուսին գլխարկ էր դարձել— որից մեկի գլուխը կանգնել էր մյուսի գլխի վրա, ինչպես գլխարկ, և կրծում էր այն։ Այս ահավոր տեսարանի մասին պատմվում է հաջորդ երգում։

130—131. Տիդեոս— Թեբեն պաշարած յոթ արքաներից մեկը։ Մահացու կերպով վիրավորվելով թեբեցի Մենալիպից, Տիդեոսը կարողացավ վրեժ լուծել, սպանելով նրան, և, ընկերներից պահանջելով իր մոտ բերել ոսոխի գլուխը, սկսեց թեև մահամերձ, կատաղորեն կրծել այն (Ստատիոս, «Թեբեական» Բ, 718—766)։

ԵՐԳ ԵԹԵՍՈՒՆԵՐԵՔ ԵՐՈՐԴ

13—14. Ուգոլինո դելլա Գերարդեսկա, Գոնորատիկոյի կոմսը։ Թեև գիբելլինյան տոհմից էր, բայց 1275 թվին իր փեսայի՝ Ջովաննի Վիսկոնտիի հետ համաձայնության եկավ գերիշխան դարձնելու համար գուելֆներին իր հայրենի Պիզայում։ դավադրության համար նա աքսորվեց, բայց հաջորդ տարին վերադարձավ Պիզա և ի վերջո դարձավ Պիզայի հանձնը—հանրապետության ղեկավարը։ 1288 թվի ամռանը գիբելլինյան կուսակցությունը արհեպիսկոպոս Ռուջերի դեմ ապստամբություն բարձրացրեց։ Ուգոլինը իր երկու որդիների և երկու թոռների հետ կալանավորվեց, և բերդ նետվեց, և, մի քանի ամիս բանտարկությունից հետո հինգն էլ սովամահ արվեցին 1289 թվի փետրվարին։

26. Զարագուշակ մի երազ— Ռուջերին, Գուալանդիները, Լաֆրանկիները, Սիսմոնդիները նրան երևում են երազում գայլին ու ձագերին հալածելիս. աչքը տեսնում է կենդանիներ, բայց հոգին ազոտ կերպով զգում է, որ հարցը վերաբերում է իրեն և իր որդիներին, և այն գայլն ու ձագերը մարդկային քառերով վերածվում են հոր և որդվոց։

38. Որդիքը— Ուգոլինոն միևնույն հայրական գորովանքի և անդոհանքի զգացումով համակված՝ չորսին էլ անվանում է իր որդիներ։ Իրականում երկուսը (Գադդոն տ. 68 և Ուգուչչոնեն թ. 89) նրա որդիներն էին, իսկ մյուս երկուսը (Բրիգատան տ. 89 և Անանեյմիկը տ. 50) նրա թոռներ։

80. Ուր si են ճնշում— ուր խոսում են իտալերեն (իտ. si նշանակում է այո)։

82. Կապրարա ու Գորգոնա— Տիրենյան ծովափին նայող երկու կղզյակներ։

89. Նար Թեբե— Պիզա, որ ըստ մի ավանդության, հիմնվել է Թեբեի թագավոր Տանտալոսի կողմից։ Ուգոլինոյի ու նրա սերնդի դեմ Պիզայում գործված անգթությունը հիշեցնում է Թեբեում Կադմոսի սերնդի դեմ կատարված խժդժությունը։

91. Մենք շարժվելով եկանք անդ...— Բանաստեղծները անցնում են իններորդ պարանակի երբորդ գոտին, ուր պատժվում են բարեկամների ու հյուրերի դավաճանները։ Այս գոտին կոչվում է Պտղոմեոսի անունով (տ. 124)։

105. Չէ՞ որ այստեղ չկա ոչ մի գոլորշի— Մի քանի դարերում քամու պատճառը համարում էին գոլորշիների տաքացումը արևի ճառագայթներից։

108. Դու կիմանաս քամու պատճառն հայանապես— քամու պատճառը Սատանայի թևերի թափահարումն էր (հմտ. «Դժ.» ԼԴ, 49—52)։

112. Այս կարծրը քոզն— *առաջին սառած արցունքները, որոնք քարացել են ինչպես «ամրակուռ բյուրեղ» (տ. 99)։*

118—119. Ալբերիգ եղբայր— *Ալբերիգո դեի Մանֆրեդի, «Վայելող եղբայրներ» ուխտի անդամ (տես «Դժ.» ԻԳ, 103 ծանոթ.), Ֆայենցայի գուելֆյան պարագլուխներից մեկը, որը ճաշկերույթի հրավիրեց և դավադրաբար սպանեց իր երկու ազգականներին։*

120. Ստանում եմ արմավ թուզի փոխարեն— *ստանում եմ ծանրագույն պատիժ իմ ծանր հանցանքի դիմաց։*

121. Ի՞նչ, ասացի,— դու մահացած չե՞ս իրավ— *Դանտեն զարմանում է Դրժոխքում հանդիպելով եղբայր Ալբերիգոյին, որ 1300 թվի գարնանը դեռ կենդանի էր։*

124. Պտղոմյան— *Կոկիտի երրորդ գոտին, որ կոչվում է դավաճան Պտղոմեոսի անունով։ Այստեղ կամ նկատի ունի Երիքովի կուսակալ Պտղոմեոսին, որ դավաճանաբար սպանեց քահանայապետ իր աներոջը, և կամ Եգիպտոսի թագավոր Պտղոմեոսին, որ սպանել տվեց իր մոտ ապաստանած Պոմպեոսին։*

126. Ատրոպոս— *Պարկաներից այն, որի պարտականությունն է խզել կյանքի թելը։*

129—133. Հենց որ մեկը...— *տարածված հավատալիք էր, որ դիվային ոգիները կարող են մտնել մարդու մեջ։ Դանտեական նորությունն այստեղ այն է, որ դևը ոչ միայն մտնում է մարդկային մարմնի մեջ, այլև հոգին քշում է Դժոխք, և, նրա տեղը բռնելով, ինքն է ղեկավարում մարմինը երկրում։*

137. Բռանկա դ՚ Օրիա— *գենուացի (ջենովացի) ազնվական, Միքելե Զանկեի փեսան (տես «Դժ.» ԻԲ, 88—90 ծանոթ.)։*

142—145. Այն խոր նորի մեջ...— *զեղծարար-կաշառակերների ձորում («Դժ.» ԻԱ—ԻԲ)։*

154. Ռոմանյո չար ոգի— *այսինքն՝ Ալբերիգոն։*

155. Ձեզնից մեկին— *գենուացի Բռանկա դ՚ Օրիային։*

ԵՐԳ ԵՐԵՍՈՒՆՁՈՐՍԵՐՈՐԴ

1. Դրոշք յառաջեն թագաւորին (Vexilla regis prodeunt)— *լատինական մի օրհներգի սկզբի բառերն են։ Դանտեն ավելացրել է* (inferni) *բառը։ Օրհներգի մեջ «թագավորի դրոշները» խաչն են, իսկ այստեղ Սադայելի վեց թևերն են, որոնք նկարագրված են 46—52 տողերում։*

10—15. Սկսանք այնտեղ...— *բանաստեղծները հասել են Դժոխքի իններորդ պարունակի չորրորդ, վերջին և կենտրոնական գոտին, որ Հուդայի (իտ.* Giuda) *անունով կոչվում է Ջուդեկկա (տ. 117)։ Այստեղ պատժվում են իրենց բարերարների դավաճանները։*

44. Նրանց— *սեամորթ եթովպիացիներին։*

46. Ձույց մեծ թեեր ուներ ամեն դեմքի տակ— *երկու թևեր երեք դեմքերից (տ. 38) յուրաքանչյուրի համար, ուրեմն Սադայելը ընդամենը ուներ վեց թև։*

55—67. Ամեն երանչ ժանիքներով...— *Սադայելի երեք երախներում տրորվում ու տանջվում են երեք մեղավորներ, որոնք դավաճաններն են Քրիստոսի, որից սկիզբ է առնում հոգևոր իշխանությունը, և Կեսարի, որից սկիզբ է առնում կայսերական իշխանությունը, այսինքն երկու գերագույն իշխանությունները, որոնք, ըստ Դանտեի, կոչված են մարդկությունը վարելու դեպի երկրային և անդրերկրային երջանկություն («Միապետություն» Գ, 16)։*

68—87. Բանաստեղծների համար ժամանակն է Դժոխքից դուրս գալու։ Վիրգիլիոսը Դանտեին շալակած իջնում է Սադայելի թավամազ մարմնով, և հասնելով մարմնի մեջտեղ, այսինքն երկրի կենտրոն, գլխիվայր է շրջվում և սկսում վեր բարձրանալ Սադայելի մարմնի ստորին մասերով։ Եվ այսպես դուրս են գալիս հարավային կիսագնդի ստորերկրյա մի քարանձավի առջև։

110. Այն կետում— *երկրի կենտրոնում, որը միաժամանակ տիեզերքի կենտրոնն էր, ըստ ժամանակի տիեզերագիտության։*

112—115. Առդ մենք տակն ենք մյուս երկնային կամարի...— *հարավային*

երկնակամարի տակ (որ ծածկված է ծովով, որի մեջտեղ բարձրանում է Քավարանի կղզին)։

121—126. Նա հենց այստեղ զահավիժեց երկնքից...— *Դանտեն յուրահատուկ ձևով է ներկայացնում բիբլիական պատմությունը Սադայելի անկման մասին։ Այդ անկումով է բացատրում Դժոխքի և Քավարանի լեռան ծագումը։*

139. Աստղեր— *այս բառով է վերջանում «Աստվածային կատակերգության» երեք մասերից յուրաքանչյուրը։ «Դա միայն համաչափության համար չէ, այլ նաև արտահայտությունն է այն գաղափարական նպատակասլացության, որ անցնում է ամբողջ պոեմով և նրան շարունակ բարձրացնում է դեպի իդեալը» (Ատտիլիո Մոմիլյանո)։*

ՔԱՎԱՐԱՆ

ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

4. Երկրորդ տեսլարան *(բնագրում «secondo regno»— «երկրորդ թագավորություն»)— Քավարան։ Սխոլաստիկ աստվածաբանները, ինչպես և ավանդապրության հեղինակները Քավարանը զետեղում էին ստորերկրյա աշխարհում, իսկ Դանտեն այն դնում է «բաց օդում», հարավային կիսագնդի օվկիանոսի մեջ բարձրացած վիթխարի մի լեռան լանջերի վրա։ Լեռը բաժանված է յոթը բոլորակների (համապատասխան յոթ գլխավոր մեղքերի), որոնք Նախաքավարանի երկու գոտիների հետ կազմում են ինը բաժանումներ, զուգահեռ Դժոխքի ինը պարունակներին։ Դրախտի ինը երկինքներին։*

9. Կապիոպե— *ինը Մուսաների ավագը. էպիկական քերթողության Մուսան։*

11. Անծեղներ— *Թեսալիայի թագավոր Պիերոսի դուստրերը. սրանք Մուսաներին երգի մրցման հրավիրեցին, բայց մրցման մեջ պարտվեցին և այլակերպվեցին անծեղների կամ կաչաղակների (Օվիդ. «Այլակերպ.» Ե, 294—678)։*

19—21. Սեր ներշնչող մոլորակը...— *Արուսյակը (Վեներան) իր պայծառությամբ լուսավորում էր ամբողջ արևելքը, նսեմացնելով իրեն ուղեկցող Ձկանց համաստեղությունը։*

22. Բեեռին— *հարավային երկնակամարի բևեռին («Դժ.» ԼԴ, 112)։*

23—24. Չորս աստղեր— *սրանք հավանաբար այն աստղերն են, որ կազմում են «Հարավային խաչը» և պատկերում են չորս գլխավոր բարոյական առաքինությունները (հմմտ. «Քավ.» ԼԱ, 106), ինչպես երկրային իշխանավորների հովտում երևացող երեք աստղերը ներկայացնում են երեք աստվածաբանական առաքինությունները (հմմտ. «Քավ.» Ը, 89—93)։*

30. Սայլը— *Մեծ Արջը։*

31. Մի ծերունի մենավոր— *Կատոն Ուտիկեցին, հռոմեական հանրապետական ազատությունների անկումն պաշտպանը։*

40. Գետն ի վեր— *ստորերկրյա աստվի հոսանքն ի վեր («Դժ.» ԼԴ, 127—134)։*

53. Մի կին— *Բեատրիչեն (հմմտ. «Դժ.» Բ, 53 և ԺԲ, 88)։*

58. Սա չի տեսել դեռ իր գիշերը վերջին— *սա դեռ չի մեռել։*

71. Ազատության— *կամքի ազատության։*

75. Մի օր— *հարության օրը։*

78. Մարկիա— *Կատոնի կինը, որը նույնպես գտնվում է Լիմբոսում («Դժ.» Դ, 128)։*

82. Ոլորտներով քո յոթնյակ— *Քավարանի յոթ բոլորակներով։*

88. Ժանտ գետից— *Ախերոնից («Դժ.» Գ, 71), որից այն կողմ Լիմբոսն է։*

89. Այն օրենքով— *որ փրկվածները բաժանում է ոչ փրկվածներից։*

95. Կնյուն— *դյուրաթեք եղեգնաբույս, սիմվոլը խոնարհության (տ. 134)։*

34—677

98. Պաշտոնեին առաջին— Քավարանի դռան պահապան հրեշտակին («Քավ.» Բ, 78)։

128. Նա երեսն հանեց գույնն իմ բնական— Վիրգիլիոսը ինձ շաղով լվանալով, նորից երեսն բերեց դեմքիս բնական գույնը։

ԵՐԳ ԵՐԿՐՈՐԴ

1—5. Արևն արդեն...— Դանտեի ժամանակի աշխարհագրագիտության համաձայն, բնակելի երկիրը տարածվում էր հյուսիսային կիսագնդում, 180 աստիճան երկայնությամբ, Երրոս գետի ակունքից (Իսպանիա) մինչև Գանգեսի գետաբերանը (Հնդկաստան), և Երուսաղեմը գտնվում էր այս երկու ծայրամասերի մեջտեղ («Քավ.» Իէ, 1—5)։ Ուրեմն Դանտեն այս տողերում ասում է, որ այն կիսագնդում, որի միջօրեական ծիրը իր գագաթով ընկած է Երուսաղեմի վրա, արևը հորիզոնին էր հասել արևմտյան կողմում, այսինքն՝ սկսում էր մայր մտնել, իսկ գիշերը, որ այդ միջոցին պատվում է երկրի շուրջը արևի անցած կիսագնդին հակադիր կիսագնդում, ծագում էր Գանգեսից, այսինքն՝ երեսում էր Երուսաղեմի հորիզոնի արևելյան կողմում։ Ուրիշ խոսքով Իսպանիայում կեսօր էր, Հնդկաստանում՝ կեսգիշեր, իսկ Երուսաղեմում՝ մայրամուտի պահը։

6. Ոլեկցությամբ իր Կշեռքի— գարնանային գիշերահավասարի ժամանակ գիշերն ու կշեռքը դառնում են ուղեկիցներ, որովհետև այդ ժամանակ գիշերը գտնվում է Կշեռքի համաստեղության մեջ։

7—9. Որով երկու այտերը վառ ու ճերմակ...— մինչ Երուսաղեմում մայրամուտ է, Քավարանում, որ հակոտնյա է Երուսաղեմին, շուտով կծագի արևը։ Այստեղ նշվում են այն գույները, որոնցով հաջորդաբար ներկվում է Քավարանի կըղզու արևելյան հորիզոնը արևածագից առաջ։

13. Լույս մի բոսոր— երևացող բոսոր լույսը հրեշտակի պայծառությունն է։

43. Նավարդն երկնային— հոգիներին մակույկով Քավարանի կղզին փոխադրող հրեշտակը։

46. «Յեգիպտոսէ Իսրայելի յելանելն»— սկզբի բառերն են ՃԺԳ սաղմոսի, որ ակնարկում է Իսրայելի ժողովրդի ազատագրությունը եգիպտական ստրկությունից։ Այստեղ այլաբանորեն ակնարկում է հոգիների ազատագրությունը իրենց մեղքերից։

91. Կազելլա— Դանտեին ծանոթ երաժիշտ ու երգիչ։

92. Որ վերստին այստեղ դառնամ— մահից հետո արժանանամ այստեղ վերադառնալուն։

98—105. Հիմա արդեն երեմ ամսից ի վեր...— այսինքն՝ 1299 թ. ծննդյան տոներից, երբ սկսվեց պապի հռչակած հոբելյանական տարին, Տիբերի գետաբերանին սպասող բոլոր հոգիները ընդունվում են հրեշտակի մակույկի մեջ, օգտվելով հոբելյանի առթիվ շնորհված մեղքերի թողությունից («Դժ.» ԺԸ, 28—33)։

112. «Սերը մտքումս ինձ հետ զրույց է անում»— այս տողով է սկսում Դանտեի «Խնջույքի» երրորդ գրքում այն տաղը, որ նվիրված է փիլիսոփայության, բանաստեղծի «ազնիվ տիրուհուն»։

119. Ծերունին— Քավարանի պահապան Կատոնը։

ԵՐԳ ԵՐԲՈՐԴ

7. Նա եղել էր խղճանար— առաջնորդի և ուսուցչի իր առաքելության մեջ թերանալու համար։

25—26. Հիմա արդեն իրիկնաժամ է այնտեղ...— երբ Քավարանում առավոտ է, Նեապոլում երեկո է։

27. Բրանդիզիում էր գտնվում նա մի ճեղ, ուր Վիրգիլիոսը մեռավ 19 թ. (մ. թ. ա.), բայց նրա մարմինը Օգոստոս կայսեր հրամանով փոխադրվեց Նեապոլ և այնտեղ թաղվեց։ Բրանդիզի լատիներեն անվանումն է ներկայումս Բրինդիզի քաղաքի (Ադրիական ափին հարավ-արևելքում)։

30. Երկինքներն իրար լույս չեն խափանում— երկնագնդերը թափանցիկ են,

թափանցիկ են նաև հոգիներին հատկացված օդային մարմինները (հմմտ. «Քավ.», Իե, 79—108)։

36. Եռանձնյա Գոյ— *աստված, որը մեկ է գոյացությամբ և երեք անձերով։*

58. Մի խումբ հոգիներ— *սրանք բանադրանքի մեջ մեռած, աստվածային ողորմածությունից ներված, բայց եկեղեցուց չներված մարդկանց հոգիներն են։*

112—113. Մանֆրեդ— *Ֆրեդերիկ Բ կայսեր որդին և Կոստանցայի («Դր.», Գ, 109—120) թոռը։ 1250 թվին, հոր մահվան ժամանակ, հազիվ տասնութամյա, իրապես ստանձնեց հաբսբուրգյան Իտալիայի և Սիկիլիայի կառավարությունը։ 1266 թ., որպես նապոլիտանական թագավորության ղեկավար, զոհվեց Բենևենտոյի ճակատամարտում։*

117. Իմ մասին պատմիր ստույգը նրան— *պատմիր, որ իմ բանադրվելուս պատճառով չեմ ընկել Դժոխք, այլ գտնվում եմ փրկության վայրում։*

120. Նրան— *աստծուն։*

124—131. Կոզենցայի եպիսկոպոսը— *Կոզենցա քաղաքի եպիսկոպոսը, որը կարգադրեց հոգի տակից հանել Մանֆրեդի դիակը, փոխադրել թագավորության սահմաններից դուրս և անթաղ նետել Վերդե (ներկայումս Գարիլյանո) գետի ափին։*

126. Աստծու խոսքը— *«Որ գա առ իս, ոչ հանից արտաքս (Հովհ. Զ, 37)։*

132. Կերոններով շիջանուտ— *շուռ տված և հանգցրած կերոններով, ինչպես սովորաբար տանում էին բանադրվածների ու հերետիկոսների դիակները։*

133—135. Սակայն նրանց նզովքների պատճառով...— *սակայն եկեղեցականների անեծքների (բանադրանքների) պատճառով նավեցի սերը (աստվածային ողորմածությունը) իսպառ չի կորցնում նա, ով դեռ կյանք ու հնարավորություն ունի ապաշխարելու։*

ԵՐԳ ՉՈՐՐՈՐԴ

5. Այն սխալը— *ակնարկում է Արիստոտելի հերքած պլատոնական ուսմունքի այն սխալը, ըստ որի մարդու մեջ ժամանակի ընթացքում հաջորդաբար կազմվում են և ապա մեկը մյուսի կողքին ապրում են իրարից անջատ մի քանի հոգիներ։*

15—16. Արևը բարձրացել էր...— *արևը, որ յուրաքանչյուր ժամ անցնում է 15 աստիճան. բարձրացել էր 50 աստիճան. այսինքն արևածագից անցել էր մոտավորապես երեք և կես ժամ։*

26. Սանլյո, Նոլի, Բիզմանտովա— *դժվարամատչելի լեռնավայրեր Իտալիայում։*

61. Կաստորն ու Պոլլուքսը— *Երկվորյակների համաստեղությունը։*

68—71. Սիոնն ու լեռը այս...— *Երուսաղեմի լեռը և Քավարանի լեռը գտնվում են հակադիր կիսագնդերի մեջտեղում և ընդհանուր աստղաբաշխական հորիզոն ունեն։*

71—72. Այն ուղին...— *արևի անցած ճանապարհը, որից Ֆայիտոնը շեղեց հոր կառքը (տես «Դժ.» ԺԷ, 106—108 ծանոթ.)։*

80—84. Միջին ծիրն...— *հասարակածը։*

104. Հոգիներ— *սրանք հոգիներն են նրանց, որոնք անփութությունից ու ծուլությունից իրենց մեղքերի զղջումն հետաձգեցին մինչև իրենց կյանքի վերջը, և պետք է բուն Քավարանից դուրս մնան՝ այնքան ժամանակ, որքան տևեց իրենց կյանքը (տտ. 130—132)։*

123. Բելակուա— *ֆլորենտացի, Դանտեի ժամանակակիցն ու ծանոթը, հայտնի ինչպես երաժշտական գործիքներ սարքելու իր վարպետությամբ, այնպես էլ իր ծուլությամբ։*

137—139. Անա արևը արդեն...— *Քավարանում արդեն կեսօր է, իսկ հակադիր կիսագնդում իջել է գիշերը և տարածվել մինչև Մարոկկո և օվկիանոսի ափը։*

ԵՐԳ ՀԻՆԳԵՐՈՐԴ

3. Հոգիներ— *սրանք հոգիներն են նրանց, որոնք մեռել են բռնական մահով և միայն մահվան ժամին են զղջացել իրենց մեղքերը (տտ. 52—57)։*

24. «Ողորմեա ինձ»— Ս սաղմոսն է, ապաշխարանքի յոթ սաղմոսներից մեկը։

64—84. Մեկը ասաց— սա Յակոպո դել Կասերոն է, ֆանոցի ազնվատոհմիկ, որ նշանակալից դեր է կատարել ժամանակի քաղաքական կյանքում։

68—69. Երկիրն այն...— Մարկա Անկոնայի երկրամասը, ուր գտնվում է Ֆանո քաղաքը։

75. Անտենորի գավառում— Պադուայում, որի հիմնադիրը, ըստ ավանդության, եղել է տրոյացի Անտենորը։

77. Էստեցի— Ազզո Ը, Ֆերրարայի սինյորը 1293-ից մինչև 1308։

79. Միրա— գյուղաքաղաք Օրիակոյի և Պադուայի միջև։

88—93. Բոնկոնտե— Գուիդո դա Մոնտեֆելտրոյի («Դժ.» Իէ, 19—132) որդին։

89. Ջովաննա— Բոնկոնտեի այրին։ Մյուսները— մյուս հարազատները։

92. Կամպալդինո— հարթավայր Կազենտինոյում (Առնո գետի վերին հովտում), ուր 1289 թվին տեղի ունեցած մարտում ֆլորենտական գուելֆները պարտության մատնեցին արետինյան գիբելլիններին, այդ մարտին մասնակից էր նաև երիտասարդ Դանտեն (տես «Դժ.» ԻԲ, 4 ծանոթ.)։

95. Արկիանո— Առնոյի վտակը։

97. Այնտեղ, ուր նա...— այնտեղ, ուր Արկիանոն իր ջրերը խառնելով Առնոյի ջրերին, կորցնում է իր անունը։

101. Մարիամ— Մարիամ աստվածածինը։

104—108. Հրեշտակն եկավ ինձ տանելու...— Բոնկոնտեի հոգուն տիրանալու համար պայքար է տեղի ունենում հրեշտակի և դևի միջև։ Բոնկոնտեի զղջման պատճառով հաղթում է հրեշտակը։ Չկարողանալով տիրանալ հոգուն, դևը իր կատաղությունը թափում է Բոնկոնտեի մարմնի վրա։

116. Պրատոմանից մինչև...— Պրատոմանյո լեռից մինչև Ապենինյան դրլխավոր լեռնաշղթան տարածված է Կամպալդինոյի դաշտավայրը, ուր զոհվեց Բոնկոնտեն։

122. Գետը լայն— Առնոն։

133—136. Պիա դեի Տոլոմեի— սիենացի ազնվականուհի, որի ամուսինը խանգից դրդված նրան սպանեց Մարեմմայում ունեցած դղյակներից մեկում։

ԵՐԳ ՎԵՑԵՐՈՐԴ

1. Բախտախաղը զառայի— խաղ, որ խաղացվում է երեք զառերով։

12. Խոստումներ տալով— խոստանալով որ երկրում նրանց մերձավորներին աղոթել կտա իրենց հոգու շուտափույթ փրկության համար։

13—14. Արետին...— Արեցցոյի դատավորը ԺԳ դարում։

15. Մյուսը...— մյուս արետինը, Գուչչո դեի Տառլատին, գիբելլին, խեղդվեց Առնոյում։

16. Ֆեդերիկո Նովելլո— կազենտինցի կոմս Գուիդոների տոհմից, սպանվեց արետինցի հակառակորդի ձեռքով։

17—18. Պիզացի...— սրա անունն է Ֆարինատա. երբ սա սպանվեց իր ոսոխի ձեռքով, նրա ծերունի հայրը՝ Մարցուկկոն, սպանեց իր որդուն սպանողին։

19. Օրսո կոմս— ֆլորենտացի ազնվական, որին սպանեցին ազգականները։

19—24. Պիեր դը լա Բրոսս— Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ Գ-ի պալատի ոնենկապետը, որը թագուհի Մարի Բրաբանտի ու պալատականների նախանձի ու զրպարտության զոհը դարձավ։

39. Սիրո ճուրը— ողջերի ջերմեռանդ աղոթքը։

40. Այնտեղ հեթանոսական աշխարհում։

74. Սորդելլո— ԺԳ դարի խոալացի (ծնվել է Մանտուայի նահանգում) նշանավոր տաղերգու։

76. Ստրուկ Իտալիա— կայսրի բացակայությամբ Իտալիան թողնված էր տեղական կամայական ու բռնակալական իշխանությունների տնօրինությանը։

88—90. Հուստինիանոս— բյուզանդական կայսր Զ դարում (տես «Դր.» Զ, 10 ծանոթ.), որը Բելիսարի («Դր.» Զ, 25) և հայ զորավար Ներսեսի ձեռքով Իտալիան ազատելով գոթերի տիրապետությունից, նրա համար կազմեց օրենքներ (սանն)։

91—96. Ո՛դուք, որոնց պարտքն էր նոգվույն նվիրվել...— *Դանտեն խոսքն ուղղում է եկեղեցու հայրերին, որոնց պարտականությունը պետք է լիներ հոգևոր գործերին նվիրվելը։*

97. Ալբերտ գերմանացի— *Ռուդոլֆ Հաբսբուրգցու որդին, կայսր 1298-ից մինչև 1308, որ բարձի թողի էր արել երբեմնի ծաղկուն Իտալիան։*

107—108. Կաոպպելլետտի՛, Ֆիլիպպեսկի՛, Մոնալդի՛ ու Մոնտեկկի՛— *նշանավոր տոհմեր հյուսիսային Իտալիայի տարբեր մարզերում։*

111. Սանտաֆիոր— *Ալդոբրանդեսկիների կոմսությունը Սիենայի մարզում, որի դեմ հենց 1300 թվին արշավանք էին սկսել Սիենայի համայնքն ու պապը։*

115. Մարդիկ ինչպե՞ս սիրում են իրար— *դառն հեգնանք։*

126. Դանտեում է մի Մարկելլո— *ստանում է հպարտ ու հավակնոտ կեցվածքը Մարկելլոսի, այսինքն՝ կայսերական իշխանության հակառակորդի։*

128. Բնավ չի դիպչում քեզ— *բնավ չի վերաբերում քեզ. ասված է հեգնաբար. Ֆլորենցիան, ընդհակառակը, Իտալիայի քաղաքական խռովությունների կենտրոնն էր Դանտեի համար։*

135. «Բեռը բարձի՛ իմ մեջքին»— *ֆլորենտացիք շահախնդրական կամ փառասիրական նկատառումներով միշտ պատրաստ են կրելու հանրային դործերի բեռը։*

127. Դու ճարուստ ես— *հոռի միջոցներով ձեռք բերած հարստություններով։* Դու խաղաղ ես— *դառն հեգնանք է, քանի որ ֆլորենտացիք միշտ կռվի մեջ էին հարևանների հետ կամ իրար միջև։* Դու խելոք— *հեգնանքը շարունակում է։*

147. Նարոգել գործիչներդ աչքառու— *փոխել կազմը քաղաքականապես աչքի ընկնող քաղաքացիներիդ։*

149—151. Նման ես այն ճիվանդին...— *Ինչպես հիվանդը ամոքելու համար իր ցավերը անվերջ փոփոխում է իր դիրքը անկողնում, այնպես Ֆլորենցիան դարմանելու համար իր ցավերը անընդհատ փոփոխում է իր կարգոսարքը։*

ԵՐԳ ՅՈԹՆԵՐՈՐԴ

9. Օկտավիանոս— *Օգոստոս կայսրը (տես «Քավ.» Գ, 27 ծանոթ.)։*

17. Մեր լեզուն— *լատիներենը։*

25—27. Ոչ անեղուս, այլ չանեղուս համար լոկ...— *Վիրգիլիոսը զրկված է աստված (վեն Աուրը) տեսնելու երանությունից ոչ մեղք գործելու, այլ ճշմարիտ հավատ չդավանելու համար (տտ. 7—8)։*

28—36. Ցածում տեղ կա...— *ակնարկում է Լիմբոսը (տես «Դժ.» Դ, 25—151), ուր հոգիները չեն ճչում, որովհետև դրական տանջանքներ չեն կրում, այլ հառաչում են, որովհետև զրկված են երկինք ելնելու երանությունից։*

46. Հոգիներ— *սրանք հոգիներն են բարձրաստիճան անձանց։*

53. Երբ արևը մայր մտնի...— *արևը պատկերում է աստվածային շնորհի լույսը։*

62. Դու մեզ տար այնտեղ— *դեպի գեղատեսիլ հովիտը։*

84. «Ողջ լեր, թագուհի»— *աղոթք, որ հավատացյալները երեկոյան ժամերգությունից հետո ուղղում են Մարիամ աստվածածնին, հայցելով նրա հովանավորությունը «արցունքի հովտում»։*

91—96. Ռոդոլֆ կայսր— *Ռուդոլֆ Հաբսբուրգցի, Ալբերտ գերմանացու հայրը («Քավ.» Զ, 103), կայսր 1273-ից մինչև 1291։*

97—102. Օտտոկար Բ— *Բոհեմիայի թագավորը 1253-ից մինչև 1278։ Ռուդոլֆի կատաղի հակառակորդը. սպանվեց Վիեննայում, նրա դեմ մարտնչելիս։ Քավարանում երկուսն էլ մոռացել են իրենց փոխադարձ թշնամությունը։*

103—111. Քրիկն այն...— *Ֆիլիպ Գ Խիզախը, Ֆիլիպ Դ Գեղեցկի հայրը, Ֆրանսիայի թագավորը 1270-ից մինչև 1285։ Սպանվեց Պետրոս Գ Արագոնցու դեմ մղված ծովամարտում, արատավորելով ֆրանսիական արքունիքի զինանշանը (ոսկե շուշաններ կապույտ ֆոնի վրա)։ Նրա զրուցակիցը Հենրիկ Գերն է, Նավարրայի թագավորը 1270-ից մինչև 1274։*

112—114. Դարձյալ երկու թշնամիներ կյանքում, որ այստեղ երգում են միա-

ձայն. մեկը, հաղթանդամը, Պետրոս Գ Արագոնցին է, իսկ մյուսը՝ Քեղը, Կառլոս Ա Անժուացին։

Պետրոս Գ-ը Արագոնի թագավորն էր 1276-ից մինչև 1285։ 1282 թ. «Սիկիլյան իրիկնաժամի» դեպքերից հետո հռչակվեց նաև Սիկիլիայի թագավոր, պայքարելով Կառլոս Ա Անժուացու տիրապետության դեմ։ Կառլոս Ա Անժուացին Ֆրանսիայի թագավոր Լուդովիկոս Ը-ի որդին էր, Պրովանսի կոմսը և, 1266-ից հետո, Նեապոլի ու Սիկիլիայի թագավորը. մեռավ 1285 թվին։

116. Պարմանին— ակնարկում է Պետրոս Գ Արագոնցու կրտսեր որդուն՝ Պետրոսին։

119—120. Յակոբ Բ և Ֆեդերիկ Բ— Պետրոս Գ Արագոնցու երկրորդ և երրորդ որդիները, որոնք վատ գահաժառանգներ դուրս եկան։

124—126. Ժառանգների հարցում Պետրոս Գ Արագոնցուց ոչ պակաս դժբախտ է Քեղը, Կառլոս Ա Անժուացին։

127—129. Որդին հորից այնքան պակաս է...— այլ կերպ՝ Կառլոս Բ-ն իր արժանիքներով այնքան ցածր է Կառլոս Ա-ից, որքան Կառլոս Ա-ն Պետրոս Արագոնցուց։

130—132. Անգլիայի արքա Հենրիկը— Հենրիկ Գ թագավորը (1216—1272), որի որդին՝ Էդուարդ Ա-ն, հաջորդելով հորը Անգլիայի գահի վրա, արժանացել է ժամանակակիցների դրվատանքին։

133—136. Գույլելմ է Եթիպտասուսեր— Մոնֆերատի և Կանավեզի մարկիզը (1254—1292), կայսերական տեղապահը և գիբելլինների պարագլուխը։ 1290-ին Ալեսսանդրիա քաղաքի բնակիչները նրան գերի վերցրին և մինչև մահը պահեցին երկաթե վանդակում։ Նրա սերունդների և ալեսսանդրացիների միջև ծագեց պատերազմ, որից խիստ տուժեցին Մոնֆերատի ու Կանավեզի մարկիզության բնակիչները։

136. Արտասվեցին— «Երկրային իշխանավորների տխուր տողանցը ավարտվում է հպատակների արցունքների մասին ցավագին ակնարկումով» (Ֆրանչեսկո Տորրակա)։

ԵՐԳ ՈՒԹԵՐՈՐԴ

13. «Վախնան յուսոյ»— սկզբի բառերն են եկեղեցական մի օրհներգի, որով երկնային օգնություն են հայցում գիշերային փորձություններ գեմ։

53. Նինո կամ Ուգոլինո Վիսկոնտի— Դալլուրայի մարզի «դատավորը» (կառավարիչը) Սարդինիայում (տես «Դժ.» ԻԲ, 81—87 ծանոթ.)։

64. Մեկը— Սորդելլոն։

65. Մյուսը— Նինոն։

66. Կուրրադ— տես տե. 115—120 ծանոթ.։

70. Ջովաննա— Նինո Վիսկոնտիի միակ դուստրը, որը 1300 թվականին ինը տարեկան էր։

73—75. Նրա մայրը— Ջովաննայի մայրը՝ Բեատրիչեն։ Նրան կոչել ոչ «իմ կինը», այլ «նրա մայրը», կարեկցության հանդիմանություն է նինոյի կողմից։ Նինոյի մեռնելուց հետո Բեատրիչեն ամուսնացավ Գալեացցո Վիսկոնտի անունով միլանցի մի ազնվականի հետ, բայց դառնապես տուժեց, որովհետև երկրորդ ամուսինը երկու տարի հետո (1302 թվին) աքսորվեց Միլանից, ապրեց ու մահացավ թշվառության մեջ։

79—81. Եվ տոհմային նշան իժը Միլանի...— Միլանի Վիսկոնտիների տոհմանշանը (իժը), դրվելով Բեատրիչեի դամբանի վրա, նրան այնպես չպիտի զարդարեր, ինչպես կզարդարեր Դալլուրայի Վիսկոնտիների տոհմանշանը (ագռավաղը)։ Բայց Բեատրիչեի դամբանի վրա, երբ նա մեռավ 1334 թվին, երկու տոհմանշանները՝ իժն ու ագռավաղը, միասին դրվեցին։

85—93. Դանտեն, ակնածելով նինոյի արդարացի զայրույթից, չի պատասխանում նրան, այլ աչքերն ուղղում է երկնքի հարավային բնեռի կողմը և տեսնում է երեք վառ աստղեր (ջահեր)։

98. Մի օձ— այլաբանորեն փարձիզ՝ դակդիշ սատանան։

104. Երկնային սակռերը— *հրեշտակները, որոնք նմանեցված են որսի վրա խոյացող գիշատիչ թռչուններին՝ սակռերին։*
109. Այն հոգին— *Կուրրադոն։*
114. Գանը զմռուխտ— *Քավարանի լեռան զմրուխտ գագաթը։*
115—120. Մալասպինա Կուռրադս *Կրտսեր— Լունիջանայի մարդի մարկիզը (մեռ. 1294-ին). Վալդիմազրա— Մագրա գետի հովիտը Լունիջանայում։*
123. Որտեղ նրա անունն հայտնի չլիներ— *Լունիջանայի անունը հայտնի էր Մալասպինաների վեհանձնության համբավից։*
134—138. Սրեն յոթ հեղ չի հանգչելու իր մահնում...— *արևը յոթ անգամ չի վերադառնա խոյ համաստեղության մեջ, այսինքն՝ չի անցնի յոթ տարի, երբ Դանտեն Լունիջանայում սեփական փորձով կհամոզվի Մալասպինաների սրտաբացության մեջ։*

ԵՐԳ ԻՆՆԵՐՈՐԴ

1. Տիթոնի հարսը— *Արշալույսը։ Ըստ դիցաբանության Տիթոնը Լաոմեդոնի որդին և Պրիամոսի եղբայրն էր։ Արշալույսը նրան սիրահարվեց, առևանգեց և նրա հետ ամուսնացավ։ Այստեղ «հարճ» (concubina) գործածված է «կողակից» իմաստով։*
4. Ակներով— *աստղերով։*
5. Կենդանու սառեցության— *ձկան, այստեղ Զկանց համաստեղություն։*
9. Իսկ Լեոսոդին խոնարհում էր իր թևերն— *երրորդ քայլին խոնարհում էր իր թևերը, այսինքն երրորդ ժամն անցնում էր։ Գիշերվա քայլերը ներկայացված են թևավոր, ինչպես ինքը՝ գիշերը։*
12. Հինգս ճիասին— *Դանտեն, Վիրգիլիոսը, Սորդելլոն, Նինոն և Կուրրադոն։*
14—15. Միածեռնակը...— *առասպելական Ֆիլոմելան, Պրոգնեի քույրը, որ կերպարանափոխվեց ծիծեռնակի (հմմտ. «Քավ.» ԺԷ, 19—21)։*
22—24. Այնտեղ... ուր Գանիմեդին...— *Տրոյայի Իդա լեռան վրա (տարբեր է Կրետեի Իդա լեռից. հմմտ. «Դժ.» ԺԴ, 97), ուր արծվի կերպարանափոխված Զևսը, հանկարծ իջնելով, Գանիմեդին առևանգեց և բարձրացրեց երկինք աստվածներին մատուցվակ գարձնելու։*
30. Հրեղեն գունդ— *այս գունդը, ժամանակի տիեզերագիտության համաձայն, զետեղված էր մթնոլորտի և լուսնի երկնքի միջև։*
34—39. Այնպես ինչպես Սիիլեսը...— *Թետիսը՝ Աքիլլեսի մայրը, իմանալով, որ իր որդին, մասնակցելով տրոյական պատերազմին, կորցնելու է կյանքը, նրան Թեսալիայից քնած վիճակում փոխադրեց Սիիրոս կղզին։ Այստեղ Աքիլլեսը ապրեց ծպտված, մինչև որ Ուլիսն ու Դիոմեդը նրան իրենց հետ տարան պատերազմ (հմմտ. «Դժ.» ԻԶ, 61—62)։*
55. Լուչիա— *տես «Դժ.» Բ, 97 ծանոթ.։*
76. Դուռ— *Քավարանի դուռը, որը հակապատկերն է Դժոխքի դռան՝ լայն է, բաց և առանց պահապանի։*
78. Պանոարդ— *Քավարանի դռան պահապան հրեշտակը։*
88. Երկնի մի կին— *Լուչիան (տ. 55)։*
112. Յոթը Մ-ներ *(Մ բնագրում* P, Peccato *բառից, որ նշանակում է մեղք)— նշանները յոթը դլխավոր մեղքերի, որոնցից հոդիները մաքրվում են Քավարանի յոթը բոլորակներում։*
117—118. Երկու տեսակի բանալի, ոսկե և արծաթե— *Քրիստոսից Պետրոս առաքյալին հանձնված բանալիները, որոնցով բաց են անում երկնքի արքայությունը (Մատթ. ԺԶ, 19)։ Ոսկե բանալին պատկերում է մեղքերն արձակելու խոստովանահոր իշխանությունը, արծաթե բանալին՝ մեղքերը քննելու ու դատելու հմտությունն ու զգուշությունը։*
132. Ով շուտ գա ու ետ նայի՝ կարտաֆալի— *ով վերադառնա նախկին մեղքերին, կկորցնի ստացած շնորհը։*
136—138. Տարպեան ժայռը ոչ այնպես սուր ճռնչաց...— *Տարպեան ժայռի դուռը նվազ սուր ճռնչաց, քան Քավարանի դուռը բացվելիս։ Լուկանը պատում*

է («Ֆարսալիա» Գ, 154—155), որ կեսարը, Հռոմ գալով, ուզեց ախրանալ Տաքպեհան ժայռի մեջ պահված պետական գանձին. քաջարի տրիբուն Կեկիլիոս Մետելլոսը փորձեց արգելել բռնագրավումը, բայց ուժով վտարվեց։

ԵՐԳ ՏԱՍՆԵՐՈՐԴ

2. Սիրուց ախտավոր— *ախտավոր կամ վատ սիրո պատճառով, որը մարդկանց տանում է Դժոխք։ Սերը, ըստ Դանտեի, հիմքն է մարդկային ամեն լավ կամ վատ արարքի։*

22. Այդ բոլորակը— *Քավարանի լեռը պարուրող առաջին բոլորակը, ուր պատժվում են գոռոզները։ Բոլորակի ուղղաձիգ զառիթափի ստորին մասը մարմարապատ է, որի վրա մեծ վարպետությամբ քանդակված են խոնարհության օրինակներ։ Առաքինության առաջին օրինակը միշտ Մարիամն է։*

33. Պերիկլեսի դարի հույն քանդակագործ։

34—45. Առաջին խորաքանդակը պատկերում է կույս Մարիամի խոնարհությունը և ավետման տեսարանը։

34—36. Հրեշտակը...— *Գաբրիել հրեշտակը, որ երկիր իջավ Մարիամին ավետելու Քրիստոսի ծնունդը (Ղուկ. Ա, 26—28) և բերավ երկար ժամանակ սպասված հաշտությունը աստծու և մարդու միջև, որը մարդկության առաջ բացեց Ադամի մեղքից հետո փակված երկինքը։*

44. «Աստիկ կամ աղախին Տիառն, եղիցի ինձ ըստ բանի քում» (Ղուկ. Ա, 38)— *Մարիամի պատասխանն է Գաբրիել հրեշտակին։*

55—69. Երկրորդ, *խորաքանդակը պատկերում է խոնարհությունը Իսրայելի թագավոր,* սաղմոսերգու *Դավթի։*

57. Որ դեռ վախ է ազդում մարդուն անօրեն— *այդ տապանի հուշը մինչև հիմա էլ երկյուղ է ներշնչում այն մարդուն, որ հանդգնում է սեփականել օրինապես իրեն չվերաբերող մի գործ։ Ղևտացի Օզան, տեսնելով որ տապանակը երերում էր և ընկնելու էր կառքից, ձեռքը մեկնեց պահելու համար. բայց որովհետև տապանակին ձեռք տալ թույլատրված էր միայն քահանաներին, աստված զայրացավ ու շանթահարեց նրան։*

59—60. Որի մասին աչքս ասում էր...— *արվեստագետի գործն այնքան կենդանի էր, որ աչքիս տալիս էր երգեցողության պատրանքը, թեև ականջս ոչինչ չէր լսում։*

63. Քիթս ու աչքերս իրար չէին համաձայն— *մինչ հոտառությունս ժխտում էր խունկի ծուխի գոյությունը, տեսողությունս հաստատում էր։*

73—93. Երրորդ *խորաքանդակը վերարտադրում է* Տրայանոս կայսրի *(98—117 թթ.) մասին ավանդությունը, ըստ որի նա լսեց այրի կնոջ դանդաղը և արդարություն ցույց տվեց նրան։*

75. Պատճառ դարձավ Գրիգորի հաղթության— *Տրայանոսը իր առաքինությամբ պատճառ հանդիսացավ, որ Գրիգոր Մեծ պապը հաղթանակ տանի մահվան և Դժոխքի ուժերի դեմ։*

81. Արծիվները ոսկեհոտ— *հռոմեական դրոշները՝ սև արծիվներ ոսկեգույն ֆոնի վրա։*

94. Նա— *աստված։*

101. Խուռն հոգիներ— *սրանք հոգիներն են գոռոզների։*

121—129. Ո՛վ մեծամիտ երիստոնեայք դժխեմ...— *այս բացագրությունը սկիզբ է առնում Քավարանում գոռոզների հոգիներին սահմանված պատժի տեսարանից և ուղղվում է աշխարհում ապրող գոռոզներին։*

130. Անդրի— *կարիատիդ։ Կարիատիդները կարևոր տարր էին ռոմանական և գոթական ճարտարապետության մեջ և քանդակված էին ցայտուն ռեալիստական ոգով։*

ԵՐԳ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

1—24. «Ո՛վ հայr մեr...»— *խմբերգային աղոթքը, քավչական պատիժների և խրատական օրինակների կողքին, կարևոր տարր է կազմում Քավարանի հոգիների կյանքում։*

13. Հանապազօրդ մանանան— *այստեղ աստվածային շնորհը, հոգու սնունդը։*

14. Սնապատում այս դժպին— *Քավարանում։ Անապատի պատկերը համապատասխանում է մանանային, այն սնունդին, որ աստված ուղարկեց իսրայելացիներին անապատում։*

20. Հին ոսոխի— *դևի («Քավ.» Ը, 95. ԺԴ, 146)։*

22. Այս վերջին հայցը...— *19—21 տողերում արտահայտված հայցը քավող հոգիները իրենց համար չեն անում, որովհետև նրանք այլևս ենթակա չեն փորձությունների կրելու։*

31—36. *Եթե Քավարանի հոգիները այսպես աղոթում են նաև ապրողների համար, ապա վերջիններն պարտավոր են իրենց աղոթքներով օգնել նրանց մաքրվելու մեղքերից։*

58—69. Ես լատին եմ...— *խոսողը Սանտաֆիորի («Քավ.» Զ, 111) կոմս Գուլյելմո Ալգոբրանդեսկիի որդի կոմս Օմբերտո Ալգոբրանդեսկին է (տ. 67), որ հակառակորդ էր Սիենայի հանրապետական համայնքին, և սիենացիները մի օր նրան սպանեցին (1259-ին) Կամպանատիկո (տ. 66) դղյակում։*

63. Մոռնալով թե ունենք մայr ընդհանուr— *մոռանալով թե բոլոր մարդիկ ընդհանուր ծագում ունեն և եղբայրներ են։*

79. Օդերիզի դա Գուբբիո— *ԺԴ դարի երկրորդ կեսի մանրանկարիչ (մեռ. 1299-ին)։*

82. Բոլոնյացի Ֆրանկո— *նույնպես մանրանկարիչ, Դանտեի ժամանակակիցը։*

93. Եթե անկման ժամանակներr չգային— *եթե չհաջողեին մշակույթի անկման ժամանակաշրջանները։*

94. Չիմաբուե Ջովաննի— *ֆլորենտացի նկարիչ (մեռ. 1302-ին)։*

95. Ջոտտո— *իր ժամանակի ամենանշանավոր իտալացի նկարիչը (մեռ. 1337-ին)։*

97. Այսպես զիջեց մեկ Գուիդոն մյուսին— *այսպես նսեմացավ բանաստեղծ Գուիդո Գուինիցելլին («Քավ.» ԻԶ, 92), երբ հրապարակ եկավ Գուիդո Կավալկանտին («Դժ.» Ժ. 58—72)։*

99. Նա— *ենթադրում են, որ Դանտեն այստեղ ակնարկում է իրեն։*

109—114. *Ժամանակի մշակույթի պատմությունից բերած օրինակներից հետո Օդերիզին մի օրինակ էլ բերում է ժամանակի քաղաքական պատմությունից՝ հաստատելու համար երկրային փառքի կարճատևությունն ու ունայնությունը։*

133—138. *Օդերիզին պատասխանում է, որովհետև նա իր բարձրության ժամանակ կատարեց կամավոր և անսովոր խոնարհության մի արարք՝ իր ընկերոջը փրկելու համար։ Երբ Կարլոս Ա. Անժուացին պատերազմում գերի էր բռնել ու բանտարկել Սալվանիի ընկերոջը, հպարտ Սալվանին գնաց մուրալու Սիենայի Կամպոյում (հրապարակում), հավաքելու համար այն մեծ գումարը, որ Կարլոսը պահանջել էր իբրև գերյալի փրկագին։*

139—141. *Օդերիզին գիտե, որ Դանտեի համար մութ է իր «Նա դողդողաց նյարդերովը իr ամբողջ» խոսքը, որ արտահայտում է ուրիշի օգնությանը դիմելու հարկադրված հպարտ մարդու հոգեվիճակը։*

ԵՐԳ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

13—24. *Ինչպես առաջին բոլորակի զառիթափի ստորին մասի վրա պատկերված են խոնարհության օրինակներ («Քավ.» Ժ, 28—96), այնպես այստեղ բոլորակի սայահատակի վրա պատկերված են գոռոզության օրինակներ։*

25—27. *Պատժված գոռոզության առաջին օրինակը Արուսյակն է կամ Սաղայելը։*

28—30. *Երկրորդ օրինակը Բրիարեոն է, հարյուր ձեռանի հսկան, որ մաս-*

նակցելով Տիտանների մարտին ընդդեմ Աստվածների, տապալվեց Զևսի շանթով («Դժ.» Լա, 99)։

31—33. Երրորդ պատկերում երևում են Տիմբր (այսպես էր կոչվում Ապոլլոնը Տրոյայի Տիմբրա քաղաքի անունից, ուր պաշտվում էր իրեն նվիրված մեհյանում), Մարս և Պալլաս աստվածները, որոնք զինված ու խմբված Զևսի շուրջ, գիտում են Ֆլեգրայի մարտում ջախջախված Հսկաների մարմնանդամները («Դժ.» Լա)։

34—36. Չորրորդ դրվագում երևում է Նեմբրոթը. Բաբելոնի Սենաարի դաշտում կառուցվող երկնահաս աշտարակի գլխավոր հեղինակը։

37—39. Հինգերորդ դրվագում պատկերված է Նիոբեն, Տանտալոսի դուստրը, Թեբեի թագավոր Անֆիոնների կինը։ Սա հպարտանալով պահանջեց որ թեբեցիները ավելի շուտ իրեն զոհ մատուցանեն, քան Լատոնային. վերջինս, վիրավորված, իր երկու զավակներին՝ Ապոլլոնին ու Դիանային, հրամայեց նետերով սպանել Նիոբեի տասնչորս զավակներին. և Նիոբեն ծանր վշտից արձան դարձավ («Այլակերպ.» Զ, 146—312)։

40—42. Վեցերորդ դրվագում ներկայացված է Իսրայելի առաջին թագավոր Սավուղը, որ ասածուց լքվեց իր դողոջ անհնազանդության համար։

43—45. Յոթերորդ պատկերում երևում է գողոջ ոստայնանկուհի Արաքնեն աստղի փոխվելիս («Դժ.» Ժէ, 18)։

46—48. Ութերորդ պատկերում ներկայացված է Ռոբովամը փախուստի պահին։ Ռոբովամը՝ Իսրայելի թագավոր Սողոմոնի որդին, երբ գահ բարձրացավ, իսրայելացիները խնդրեցին թեթևացնել Սողոմոնի կողմից իրենց վրա դրված ծանր լուծը. գողոջ Ռոբովամը սպառնաց՝ ասելով. «Իմ հայրը ձեզ խրատեց գավազանով, ես ձեզ կխրատեմ խարաղանով»։ Իսրայելի տասը ցեղեր ապստամբեցին, և Ռոբովամը Երուսաղեմ փախավ (Գ Թագ. ԺԲ, 1—18)։

49—51. Իններորդ պատկերը ներկայացնում է մի դեպք Անֆիարոսի («Դժ.» Բ, 33) պատմությունից։ Անֆիարոսը թաքնվել էր, որպեսզի չմասնակցի Թեբեի դեմ մղվող պատերազմին, և Պոլինիկեն՝ Էտիպ արքայի որդին, մի զարդամանյակ նվիրելով Անֆիարոսի մնափառ կնոջը, նրանից իմացավ ամուսնու տեղը. Անֆիարոսը ստիպված եղավ մասնակցել կռվին, ուր և մահ գտավ։ Անֆիարոսի որդին՝ Ալկմեոնը, հոր վրեժը լուծեց, սպանելով մորը («Այլակերպ.» Թ, 407—412. «Էնեակ». Զ, 445—446)։

52—54. Տասներորդ պատկերը ներկայացնում է Ասորեստանի թագավոր Սենեքերիմի սպանությունը։

55—57. Տասնմեկերորդ պատկերը վերարտադրում է սկյութացիների թագուհի Տամիրիսի պատմությունը։ Տամիրիսը զայրանալով պարսից թագավոր Կյուրոսի դեմ, որ սպանել էր իր որդուն, կոտորեց նրա բանակը, կտրել տվեց Կյուրոսի դիակի գլուխը և այն դնել տալով մարդկային արյունով լի մի թասի մեջ՝ ասաց. «Ահա կշտացիր այն արյամբ, որին այնքան ծարավի էիր կյանքում» (Օրոսիոս «Պատմություն» Բ, 7. 6)։

58—60. Տասներկուերորդ պատմությունը ներկայացնում է Ասորեստանի գողոջ զորավար Հոլոփեռնի վախճանը։

61—63. Տրոյացիների գողոջության մասին Դանտեն ակնարկել է այլուր («Դժ.» Ա, 75. Լ, 14)։ Այստեղ Տրոյայի կործանումը պատկերված է որպես պատժված գողոջության տասներեքերորդ և վերջին օրինակ. Տրոյա ասելով Դանտեն նկատի ունի քաղաքը, իսկ Իլիոն ասելով՝ քաղաքի միջնաբերդը։

71. Եվայի qarմ— Դանտեն այսպես է կոչում մարդկանց, կամ որովհետև Եվան առաջին գողոջը եղավ, որ ճաշակելով արգելված պտուղը, և կամ հիշեցնելու համար մարդկանց, որ, բոլորն էլ լինելով որդիները միևնույն մոր, պատճառ չունեն հոխորտալու միմյանց նկատմամբ։

79. Մի հրեշտակ— Քավարանի յոթ բոլորակները հաղորդակցում են միմյանց հետ ժայռափոր սանդուղքների միջոցով։ Յուրաքանչյուր սանդուղքի ստորոտին կանգնած է մի հրեշտակ, որ ընդունում է մի բոլորակից մյուսը բարձրացող ապաշխարողին և նրանից ջնջում վերջին հետքերը այն մեղքի, որ պատժվում է ստորակա բոլորակում։

80—81. Վեցերորդ սպասումին արևի...— դիցաբանության մեջ ժամերը ներկայացված էին իբրև սպասուհիներ Արևի կառքի («Այլակերպ.» Բ, 118—121)։ Ուզում է ասել՝ արևի ծագումից անցել է ավելի քան վեց ժամ, այսինքն կեսօրն անցել է։

96. Հովից իսկ չնչին— ամենաթեթև փոփոխությունից մոլության։

98. Թեևով նա հարվածեց իմ ճակատին, այնտեղից ջնջելով յոթ Մ-երից առաջինը, այսինքն՝ գոռոզության մեղքը (տտ. 118—136)։

100—108. Դեպի երկրորդ բոլորակը տանող աստիճանավոր վերելքը Դանտեն համեմատում է այն ժայռափոր աստիճանների հետ, որոնցով բարձրանում են Ֆլորենցիայի մերձակա բլուրը, ուր գտնվում է Սան-Մինիատո հին եկեղեցին։

102. Լավ կառավարված քաղաքին— Ֆլորենցիային. ասված է հեգնաբար։

105. Երբ դեռ գեղծում չկար հաշվի, կշեռքի— երբ դեռ Ֆլորենցիայում գեղծումներ չէին կատարվում հաշվեմատյանների և չափ ու կշռքների մեջ։

110. «Եռանի հոգով ադքատաց, զի նոցա է արքայութիւն երկնից» (Մատթ. Ե, 3)— ավետարանական այս առաջին երանությունը խոնարհության գովքն է, որ երգում է հրեշտակը, ճանապարհ դնելով գոռոզության մեղքը ապաշխարողին։

121. Մ-երը— տես «Քավ.» Թ, 112 ծանոթ.։

ԵՐԳ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

25—27. Ինչպես գոռոզների բոլորակում քանդակված պատկերները խոնարհության օրինակ են ծառայում, այսպես նախանձոտների բոլորակում անտեսանելի ոգիների ձայները արտաբերում են սիրո օրինակներ։

29. «Գինի ոչ ունին»— գիտասիրտ հոգածությունից թելադրված այս բառերով Մարիամը հորդորում է Քրիստոսին Կանայի հարսանիքում կատարելու իր առաջին հրաշքը, ջուրը փոխելով գինու (Հովհ. Բ, 1—10)։

32. «Ես եմ Օրեստը»— Երբ Օրեստը՝ Ագամեմնոնի որդին, Պիլադեսի հետ Արգոս գնաց և հոր մահվան վրեժը լուծեց, հայտնաբերվեց ու ձերբակալվեց. Պիլադեսը փորձեց Օրեստ ձևանալ՝ նրա փոխարեն կրելու համար անխուսափելի պատիժը։

36. «Սիրեցեք դուք ձեր թշնամուն»— Քրիստոսի խոսքն է լեռան քարոզում (Մատթ. Ե, 44. Ղուկ. Զ, 27—28)։

39. Եվ մտրակի թելերն հյուսված են սիրուց— և օրինակները, որոնք խթան են ծառայում նախանձի հակառակ առաքինության, վերցված են սիրուց։

40. Սանձը պետք է լինի ներեալ բնության...— սանձ է կոչում այն հանդիմանությունները, որոնք պետք է տրվեն հակառակ օրինակների միջոցով։

94. Հավերժական քաղաք— երկնային Երուսաղեմ։

106. «Սիենայից եմ...»— խոսողը սիենացի ազնվականուհի Սապիան է, Սալվանի Պրովենցանի («Քավ.» ԺԱ, 109—142) հորաքույրը և նրա քաղաքական հակառակորդը։

109. Թեև Սապիա կոչվեցի— թեև իմ Sapia անունը հնչում է savia (նշանակում է խելոք, իմաստուն)։

114. Երբ թեքվել էր արդեն աղեղն ճասակիս— երբ անցկացրել էի արդեն միջին տարիքս (հմմտ. «Դժ.» Ա, 1)։

115. Կորլե— ավան Տոսկանայում, ուր Սալվանի Պրովենցանի զեկավարությամբ գոռծող գիբելին սիենացիները 1269 թվին պարտություն կրեցին ֆլորենտացիներից։

123. Ինչպես ծվաց սարյակն օդում մեղմացած— քամ ժուպիրական մի տոռապելի, սարյակը, որ շատ է վախենում ցրտից, ձմեռային մի գեղեցիկ օր, կարծելով որ արդեն դարուն է եկել, բացականչել է. «Տեր, էլ չեմ վախենում քեզնից, որովհետև պրծա ձմեռից»։

127. Պիեր Պետտինեյո— սանրավանք Սիենայում. դարձավ ֆրանկիսկյան կրոնավոր։

137. Ստորակա տանջանքներից— առաջին բոլորակի տանջանքներից։

151. Մարդկանց մեջ ունայն— ունայնամիտ սիենացիների մեջ (հմմտ. «Դժ.» ԻԹ, 121—122)։

152. Տալմոնե— *ծովափնյա ավան, որ 1303 թվին սիենացիները գնեցին մի վանքից, որպեսզի ծովային և առևտրական ելք ունենան Տիրենյանի ափին։*
153. Դիանա— *ստորերկրյա գետ, որ իբր հոսում է Սիենայի տակով. նրա որոնման համար սիենացիները ապարդյուն շատ ջանքեր թափեցին։*

ԵՐԳ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ

10. Մեկը— *Գուիդո դել Դուկան (տ. 81)։*
16—18. Մի գետ— *Առնոն (տ. 24)։*
21. Չի անունը շատ չի հնչում դեռ երկրում— *1300 թվականին Դանտեն դեռ հայտնի էր միայն իբրև քնարերգակ բանաստեղծ։*
25. Մյուսը— *Ռինիերի դա Կալբոլին (տ. 88)։*
31—36. Իր ակից... մինչև այնտեղ...— *Առնոյի ակունքից... մինչև ջենովական ծովը... այսինքն՝ ամբողջ Տոսկանայում։*
32. Պելուռո— *լեռ Սիցիլիայի հյուսիս-արևելյան ծայրին։*
42. Կարլե— *առասպելական վհուկ, որ իր կախարդանքներով մարդկանց անասունի էր փոխում (հմմտ. «Դժ.» ԻԶ, 91. «Էնեակ». է, 10—20)։*
43—54. Առնո գետը իջնելով իր ակունքից՝ նախ հանդիպում է խոզերին *(Կազնտինոյի բնակիչներին), ապա, շարունակելով իր ընթացքը, գտնում է վայրահաչ շներին (արտաքինցիներին), ապա հանդիպում է գայլերին (ֆլորենտացիներին), և, վերջապես, գտնում է խորամանկ աղվեսներին (պիզացիներին)։ Թվարկում է Առնոյի շարաբախտ գետահովտի (Տոսկանայի) քաղաքների բնակիչներին անուններով և պատկերներով, որոնք տալիս են յուրաքանչյուրի բնութագիրը։*
56. Սրան— *Դանտեին։*
58—66. *Խոսողը՝ ռոմանյացի Գուիդո դել Դուկան, նախատեսում է այն վայրագությունները, որ իր զրուցակից և հայրենակից Ռինիերի դա Կալբոլիի գարմիկը գործելու է Առնոյի ափերին։ Վերջինս՝ Ֆուլչիերի դա Կալբոլին, 1303 թ. ֆլորենտացի Սեներից հրավիրվելով և ընտրվելով Ֆլորենցիայի պոդեստա, դաժանորեն հալածեց և կոտորեց քաղաքում մնացած Սպիտակներին ու Գիբելլիններին։*
81. Գուիդո դել Դուկա— *Ռոմանյայի քաղաքից. եղավ դատավոր Ռոմանյայի տարբեր քաղաքներում (մեռ. ԺԳ դարի կեսերին)։*
92. Միչև Պոյի, լեռան, ծովի, Ռենոյի— *այսինքն Ռոմանյայում։*
97—111. *Գուիդոն այստեղ ափսոսանքով հիշում է հին ժամանակների ռոմանյացիներին, որոնք փառավորվել են իրենց քաղաքացիական և ասպետական առաքինություններով։*
112—114. Բերտինոր— *փոքր քաղաք Ռոմանյայում Ֆուլիի և Չեզենայի միջև։*
115—117. Լավ է, որ է Բանյակավալն անսերունդ...— *լավ են անում Ռոմանյայի այն տոհմերը, որոնք չեն շարունակում սերնդագործել և վատ են անում նրանք, որոնք շարունակում են բերել այլասերված ու ապականված սերունդներ։*
119. Նրանց դեր— *Մագինարդո Պագանին (տես «Դժ.» Իէ, 49—51 ծանոթ.)։*
121. Ուգոլին դե՛ Ֆանտոլին— *ֆայենցացի ազնվատոհմիկ, որի երկու որդիները մահացել էին 1300 թվականից առաջ, առանց արական սերունդ ունենալու։*
133. «Ով ինձ գտնի, ուզում է ինձ սպանի»— *Կայենի խոսքերն են։*
139. «Ես Ագլաուրն եմ...»— *Ագլաուրը Աթենքի առասպելական թագավոր Կեկրոպի դուստրն էր, որ, նախանձից Մերկուրին արգելից սիրելու իր քրոջը, և քարի փոխվեց նրա ձեռքով («Այլակերպ.» Բ, 708—832)։*
145—147. Բայց խայծն է ձեզ հրապուրում անդադար...— *բայց ձեզ, ապրողներիդ, միշտ հրապուրում են երկրային բարիքները (խայծ)։*

ԵՐԳ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ

6. Աստ, *այսինքն Քավարանում, երեկո էր, անդ, այսինքն Իտալիայում, գիշեր էր։*
21. Գիտությունը— *էվկլիդյան կատոտրիկան, որ բացատրում է լույսի անդրադարձման երևույթը։*

38. Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն» (Մատթ. Ե, 7)։ «Երանի ծածկեցեալ և ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս» (Մատթ. Ե, 12)։

45. Անբաժնելի բարյաց մասին հիշելով— հմմտ. «Քավ.» ԺԴ, 87։

49—75. Վիրգիլիոսը էական տարբերություն է դնում նյութական և հոգեկան բարիքների միջև. նյութական բարիքները եթե վայելում են ոմանք, ապա չեն կարող վայելել ուրիշները, որոնց մեջ, հետևաբար, առաջանում է նախանձ. հոգեկան բարիքները՝ ընդհակառակը։

80. Վերքերդ— Մ-երը կամ մեղքերի նշանները, որ բարապան հրեշտակը դրոշմել էր Դանտեի ճակատին («Քավ.» Թ, 112—114)։

84. Մի ուրիշ բոլորակ— երրորդ բոլորակը, ուր քավում են բարկությամբ մեղանչողները։

85—86. Այստեղ ասես գրավվեցի...— այստեղ Դանտեն կիրառում է մի նոր եղանակ՝ հափշտակիչ տեսիլքները։

87—92. Մի տաճարում բազում մարդկանց հավաքված...— ակնարկում է պատանի Հիսուսի մասին ավետարանական պատմությունը, ըստ որի ծնողները երեք օր անձկագին որոնումներից հետո իրենց որդուն գտել էին Երուսաղեմի տաճարում, ուր նա նստել էր վարդապետների մեջ։

94—105. Հեզության երկրորդ օրինակը մի դեպք է Աթենքի բռնակալ Պիսիստրատի կյանքից։ Մի պատանի, սիրահարված լինելով Պիսիստրատի աղջկան, նրան համբուրեց մարդկանց ներկայությամբ։ Եվ երբ Պիսիստրատի կինը պահանջեց պատժել հանդուգն պատանուն, Պիսիստրատը հեզությամբ հանգստացրեց նրան և ամոսնացրեց սիրահարված զույգին։

98. Որի անվան համար վեճի մտան զիմ— քաղաքի անունը որոշելու համար վիճեցին Պոսեյդոն և Աթենաս աստվածները. հաղթեց Աթենասը, որի անունով էլ քաղաքը կոչվեց Աթենք։

106—114. Երրորդ օրինակը Ստեփաննոս նախավկան է, որին հրեաները կատաղորեն քարկոծեցին իրենց դեմ ուղղված նրա քարոզների համար, բայց նա, փոխանակ զայրանալու, աստծուց թողություն հայցեց նրանց համար («Գործք առ.» է, 54—59)։

131. Խաղաղության ջրերին— հեզության զգացումներին, որոնցով հանգցվում է բարկության կրակը։

142—145. Բանաստեղծները երրորդ բոլորակում աստիճանաբար պարուրվում են դեպի իրենց առաջացող թանձրահոծ ծխով. այդ ծխի մեջ քավում են բարկացկոտների հոգիները։

ԵՐԳ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ

46. Լոմբարդցի եմ և Մարկո եմ ես կոչվում— լոմբարդացի պալատական Մարկոն է։ Հին մեկնիչները նրան ներկայացրել են իբրև խելոք և աշխարհաճանաչ մարդու։

53—63. Սակայն իմ մեջ մի տարակույս ծագեց արդ— Դանտեի տարակույսի առարկան հետևյալն է՝ ի՞նչ պատճառի վերագրել ժամանակակից բարքերի ապականությունը, աստղերի ազդեցությա՞ն, թե՞ մարդկային բնության վատացման։ Դանտեն Մարկոյից խնդրում է տալ հարցի լուծումը։

96. Որ քաղաքի միջնաբերդը գեթ տեսներ— որ գոնե ի վիճակի լիներ որոշելու քաղաքի ամենաբարձր և ամենատեսանելի մասը։ Միջնաբերդը արդարությունն է, երջանկության հիմքը։ Միապետը կայսրն է, որին է միայն վերաբերում աշխարհում արդարությունը իրականացնելու պարտականությունը։

98—99. Հիմա ոչ nf, որովհետև կայսրի դահը թափուր է («Քավ.» Զ, 89), իսկ նովիվը՝ պապը, որ բռնագրավելով աշխարհիկ իշխանությունը, հոտին առաջնորդում է, չգիտե զանազանել աշխարհիկ գործերը հոգևոր գործերից։ Որոճում է, բայց չունի ճեռն կնդակներ— Մովսիսական օրենքը հրեաներին արգելում էր սընվել այն կենդանիների մսով, որոնք չեն որոճում և չունեն ճերձ կնդակներ (Ղևտ. ԺԱ, 3—8)։ Ըստ սխոլաստիկ աստվածաբանների այլաբանական մեկնության՝ որո-

նալ նշանակում է ուղիղ հասկանալ Ս. գիրքը, իսկ ներՀ կնդակներ ունենալ նշանակում է բարին ու չարը տարբերել գիտենալ։

103. Վարչությունը վատթար— պապերի վատ ղեկավարությունը։

107. Երկու լուսատուներ— երկու իշխանություններ՝ կայսրը և պապը։

109. Մեկը մյուսին մարեց...— պապական իշխանությունը Հռոմում հանգցրեց կայսերական իշխանությունը, և նույն անձի մեջ աշխարհիկ իշխանությունը (սուրը) միաձուլվեց հոգևոր իշխանությանը (մական)։

113. Նայիր հասկին— նայիր պտղին, նայիր արդյունքին երկու գերագույն իշխանությունների այս միաձուլման։

115. Այն երկրում— Լոմբարդիայում՝ Մարկոյի հայրենիքում։

117. Երբ Ֆեդերիկն սկսած չէր դեռ վիճել— երբ դեռ չէին սկսվել հակամարտությունները Ֆրեդերիկ Բ կայսեր (տես «Դժ.» ժ, 119 ծանոթ.) և եկեղեցու միջև։

124—125. Կուրուադո դա Պալացցո— բրեշիացի ազնվական և քաղաքական գործիչ։ Գերարդո դա Կամինո— Տրեվիզոյի գլխավոր կապիտանը։ Գուիդո դա Կաստել— ռեջջոցի ազնվական։

129. Թեռը դույն— աշխարհիկ գործերի վարչությունը, որի բեռը իր վրա է վերցրել հռոմեական եկեղեցին։

132. Ղևի տոդիֆ— դևատացիք, որ կազմում էին Իսրայելի ժողովրդի հոգևորական դասը։

140. Գայա— Գերարդոյի դուստրը։ Մարկոն այստեղ նրան հիշում է նրա անառակության համար, ի հակադրություն հոր պարկեշտության, մի անգամ ևս ցույց տալով հին և նոր սերունդների բարքերի հակապատկերը։

ԵՐԳ ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ

3. Ինչպես մաշկի միջով խլուրդն է տեսնում— Հնում և Դանտեի ժամանակներում կարծում էին, որ խլուրդի աչքերը ծածկված են բարակ մաշկով, որը աղոտացնում է նրա տեսողությունը։

19—21. Պատժված բարկության առաջին տեսիլքի մեջ երևում է Պրոդնենն։ Սա բարկացած ամուսնու դեմ, որ բռնարարել էր իր քրոջը՝ Ֆիլոմելային, անգթորեն սպանեց իր որդուն և ամուսնուն կերցրեց։ Աստվածների ձեռքով Պրոդնեն այլակերպվեց սոխակի, իսկ Ֆիլոմելան՝ ծիծեռնակի (հմմտ. «Քավ.» Թ, 12—15. Օվիդ. «Այլակերպ.» Դ, 424—672)։

25—30. Երկրորդ տեսիլքի մեջ երևում է Ամանոսը, պարսից թագավոր Ասուերոսի ազդեցիկ նախարարը։ Ամանոսը զայրանալով հրեա Մարդոքեի, թագուհի Եսթերի քեռու դեմ, ուզում էր նրան սպանել բոլոր հրեաների հետ միասին։ Թագավորը հրամայեց նախարարին նրան խաչել այն նույն փայտի վրա, որ նա պատրաստել էր Մարդոքեի համար (Եսթեր Գ—Է)։

34—39. Երրորդ տեսիլքում երևում են Լատինոս թագավորի աղջիկը՝ Լավինան («Դժ.» Դ, 125—126) և կինը՝ Ամատան։ Թագուհի Ամատան կատաղությունից իրեն կախեց, սխալմամբ կարծելով, որ Տուռնոսը, իր աղջկա նշանածը, արդեն սպանվել է Էնեասի ձեռքով և իր Լավինան դարձել է (ինչպես հետո դարձավ) հաղթողի կինը (հմմտ. «Էնեական» ԺԲ, 595—607)։

67—69. Ես զգացի հողմահարում իմ դեմքին— հրեշտակը, թևը թափահարելով, Դանտեի ճակատից ջնջում է երրորդ մեղքի (բարկության) նշանը («Քավ.» Թ, 112—114)։

76—139. Չորրորդ բոլորակի շեմին, Վիրգիլիոսը բացատրում է, որ նոր բոլորակում քավվում է դաղջ սերը դեպի բարին և այնուհետև պարզում, թե ինչպես է սերը հանդիսանում սկզբնապատճառը ամեն առաքինության և ամեն մեղության։

95—96. Իսկ մյուսը սխալվում է...— իսկ հոգեկան կամ բնտրական սերը սխալվում է երեք կերպով. 1) ձգտելով մի վատ բանի. 2) ձգտելով մի լավ բանի ոչ բավականաչափ եռանդով. 3) ձգտելով մի լավ բանի չափից ավելի եռանդով։

112—114. Եթե այսպես ճիշտ եմ դատում...— եթե մարդ չի կարող ատել ոչ իրեն (տտ. 106—108), ոչ իր արարչին (տտ. 109—111), ապա նրան մնում է

ատել մերձավորին, որն արտահայտվում է երեք կերպով— գոռոզությամբ, նախանձով, բարկությամբ։

115—117. *Գոռոզներն են։*

118—120. *Նախանձոտներն են։*

121—123. *Բարկացկոտներն են։*

125—126. Սերը մյուս...— *այն սերը, որ ձգտում է լավին հարկավոր չափից քիչ կամ ավելի եռանդով (տ. 96)։*

133—139. Կա այլ բարիք...— *կան և խաբուսիկ, երկրային բարիքներ, որոնք լիակատար երջանկություն չեն տալիս մարդուն. եթե մարդկանց սերը դեպի այդ բարիքները չափից ավելի է, դա կբավվի Քավարանի վերին երեք բոլորակներում։ Բայց թե ինչպես է այդ սերը բաժանվում երեք տեսակի և ծնունդ տալիս երեք մեղքերի (ագահության, որկրամոլության, բղջախոհության), Վիրգիլիոսը Դանտեին է թողնում գլխի ընկնելու։*

Այսպիսով պարզվում է Քավարանի բարոյական կառուցվածքը՝ հիմնված սրբալ սերերի վրա։

Ա, Բ, Գ բոլորակներում քավվում է սերը դեպի մերձավորի չարիքը (գոռոզություն, նախանձ, բարկություն)։

Դ բոլորակում քավվում է ոչ բավականաչափ եռանդուն սերը դեպի ճշմարիտ բարիքը (պղերգություն)։

Ե, Զ, Է բոլորակներում քավվում է չափից ավելի եռանդուն սերը դեպի խաբուսիկ բարիքները (ագահություն, որկրամոլություն, բղջախոհություն)։

ԵՐԳ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ

4. Ծարավով— *գիտենալու փափագով։*

17. Կույրերի— *այն քարոզիչների, որոնք ինչպես ասելու է քիչ հետո (տտ. 34—39), պնդում են թե ամեն սեր գովելի ու լավ է ըստ ինքյան։*

29. Ձգռում է վեր— *դեպի հրեղեն գունդը (տես «Քավ.» Թ, 30 ծանոթ.)։*

43—45. Եթե սերը մեր մեջ դրսից է ծագում...— *եթե սերը մարդկային հոգում ծագում է արտաքին առարկաներից, ապա հոգին, որ բնական մղումով է ձգտում դեպի այդ հաճելի առարկաները, ազատ չէ, հետևաբար և պատասխանատու չէ իր լավ կամ վատ արարքների համար։ Իսկ սա հակասում է այն մտքին, որ Վիրգիլիոսն արտահայտեց նախորդ երգի 103—105 տողերում։*

49—54. Գոյացություն ձևավոր կամ գոյաձև (forma substantialis) *միջնադարյան փիլիսոփայական լեզվում նշանակում է այս կամ այն գոյացությունը բնորոշող ձևը, հատկանիշը։ Մարդու գոյաձևը բանական հոգին է։*

61—63. Արդ որպեսզի...— *արդ որպեսզի այս բնածին, և բնականաբար բարի, ձգտմանը համակերպվեն կամ հետևեն մյուս ձգտումները, մարդու մեջ կա բնածին բանականություն, որ պահապանի պես հսկում և կամքին թելադրում է ընդունել բարի և մերժել չար ձգտումները։*

64—66. Այդ ուժն է...— *այդ կարողությունը, այդ բանականությունն է այն սկզբնաղբյուրը, որից ծագում է մարդու պատասխանատվությունը իր արարքների համար։*

73—75. Թեատրիչեն կարողությունն այս ազնիվ— *այդ ազնիվ կարողությունը՝ մարդու գործողությունները ղեկավարող բանականությունը, Թեատրիչեն իր լեզվով կոչում է ազատ կամք։*

83. Պիետոյա— *ավան Մանտուայի մոտ, Վիրգիլիոսի ծննդավայրը։*

91—93. Իսմեն ու Ասոպ— *դեսեր Թեովտիայում, որոնց երկայնքով Թեբեցիները գիշերը վառ ջահերով վազում էին խուճիխուճն, երբ անհրաժեշտ մի կարիքի համար գիմում էին իրենց հովանավոր Բաքոսին (Ստատիոս, «Թեբեական» Թ, 434 ևն.)։*

100—102. *Փութկոտության երկու օրինակներ, որոնցից առաջինը, ինչպես միշտ,* Մարիամն *է, որ շտապեց այցելելու իր ազգականուհի Եղիսաբեթին (Ղուկ. Ա, 39). երկրորդը՝* Կեսարն *է, որ ապատամբած* Մարսիլիան *պաշարումով դրավելու հոգսը թողնելով Բրուտոսին (հմմտ. «Դր.» Թ, 93), անհապաղ արշավեց Իս-*

պանիա և Իլերդա (Լերիդա) քաղաքի մոտ պարտության մատնեց Պոմպեոսի տեղապահներին («Դր.» Զ, 64)։

120. Որի մասին վատ են խոսում Միլանում— Միլանցիների մեջ տխուր հիշատակ է թողել Ֆրեդերիկ Բարբարոսան 1162 թվին Միլանում կատարած ավերածության համար։

121. Եվ մեկը, որ արդեն զառամ է դարձած— ծերունի Ալբերտո դելլա Սկալան, Վերոնայի սինյորը (մեռ. 1301-ին)։

133. —135. Մեռան այն մարդիկ...— հրեաները, որոնց առջև բացվեց Կարմիր ծովը, որպեսզի ազատվեին փարավոնի հալածանքներից, մեռան անապատում, չտեսնելով Պաղեստինը (Հարդանանը), Ավետյաց երկիրը։ Ատված պատժեց նրանց, որովհետև նրանք ծույլ և անսաստ գտնվեցին հետևելու Մովսեսի հրամաններին։

136—138. Եվ այն մարդիկ...— Էնեասի ընկերները, որոնք փոքրոգությամբ այլևս չուզեցին նրա հետ կրել ճանապարհի նեղություններն ու վտանգները և մնացին Սիկիլիայում։

ԵՐԳ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ

1—3. Այն ժամին...— արևածագից քիչ առաջ։

4—6. Երբ գուշակներն...— ակնարկում է այն գուշակներին, որոնք իրենց գուշակություններն անում էին գետնի կամ թռչի վրա պատահական կարգով նըշված կետերի միջոցով, որոնցից, զանազան գծեր քաշելով, կազմվում էին երկնային մարմինների նմանությունը հիշեցնող պատկերներ։

7—18. Սրազիս մեջ երեաց կին մի թլվատ...— Դանտեի երազում երևացած այլանդակ կինը, որ կերպարանափոխվում է հրապուրիչ դառնալու աստիճան, ներկայացնում է (և դրա սիմբոլը Վիրգիլիոսը պարզում է 58—60 տողերում) սրախալ կամ մոլորեցնող սիրո առարկան, այսինքն՝ երկրային բարիքները։

19—21. Սիրեն— սիրենները ըստ դիցաբանության գեղեցիկ կանայք էին մեջքից վեր, տգեղ ձկներ մեջքից վար, նրանք իրենց քաղցրաձայն երգով գրավում, գերում էին նավորդներին և նրանց կորստյան մատնում («Քավ.» ԼԱ, 45)։

22. Ես իմ երգով Ուլիսին էլ թակեցի— ըստ հոմերական ավանդության Ուլիսը (Ոդիսևսը) խուլս տվեց սիրենների թովչանքներից։ Դանտեն Հոմերոսի երկերին ծանոթ չէր։ Հետևաբար նա կամ սիրեն է համարում կախարդ Կիրկեին, որ իրոք հրապուրեց Ուլիսին և մի տարուց ավելի պահեց իր մոտ («Դժ.» ԻԶ, 91—93) և կամ սիրեն է ասում փոխաբերական իմաստով, որպես խորհրդանիշ խաբուսիկ հրապուրանքների։

26—33. Մի կին սուրբ ու վեն— այս կինը հակապատկերն է սիրենի և խորհրդանիշն է առողջ դատողության, որ հանդես է գալիս՝ քողազերծելու խաբուսիկ բարիքների էությունը։

49—51. Թափահարելով իր թևերը փետուրավոր...— չորրորդ բոլորակի հրեշտակը, թափահարելով իր թևերը, Դանտեի ճակատից ջնջում է մի ուրիշ Մ («Քավ.» Թ, 112—114)։

58—60. Տեսար այն կախարդին ինձավուրց...— տես տտ. 7—18 ծանոթ.։ Այդ կախարդով շատ հրապուրվելու համար մարդիկ պատժվում են Քավարանի վերին երեք բոլորակներում։

71. Տեսա մարդիկ— սրանք ագահներն են, որ պատժվում են հինգերորդ բոլորակում։

73. «Մեռնեցաւ անձն իմ ի հողդ»— Սաղմոս ՃԺԸ, 25։

77. Ամոքում եմ արդարությամբ ու հույսով— Քավարանի հոգիները իրենց տանջանքներն ամոքում են այն գիտակցությամբ, որ արդար է իրենց պատիժը և այն հաստատ հույսով, որ իրենց տանջանքներին հետևելու է հավիտենական երանությունը։

99. Գիտա զի ես եղէ յաջորդ Պետրոսի— իմացիր որ ես եղա Պետրոս առաքյալի փոխանորդ։ Խոսողը ասելու համար, որ ինքը պապ է եղել, գործածում է եկեղեցու պաշտոնական լեզուն։ Սա Լավանյայի կոմս չենովացի Օտտոբուոնո Ֆիես-

կին է. պապական գահ բարձրացավ 1276 թվին Ադրիանոս Ե անունով և մնաց իր ընտրությունից 38 օր անց։

100—102. Կիավերի և Սիեստրի միջև...— *ջենովական ծովածոցի ափին երկու փոքրիկ քաղաքներ, որոնց միջև ծովն է թափվում Լավանյա կոչված հեղեղասատ գետը, որի անունից Ֆիեսկիներն ստացան «Լավանյայի կոմսեր» տիտղոսը։*

103. Ամսից ֆիշ աց— *38 օրից (տես տ. 99 ծանոթ.)։*

104. Պատմուճանը— *պապական պատմուճանը, պապական բարձր պարտականությունների բեռը։*

111. Անդենի— *անդենականի, հանդերձյալ աշխարհի։*

134—135. Մառայակից եմ ես քեզ...— *այստեղ բոլորս հավասարապես ծառաներ ենք նույն Տիրոջ։*

136. «Ոչ կանայս...»— *Հիսուսի պատասխան խոսքերն են սադուկեցիներին, որոնք ցույց տալու համար մարմինների հարության անհեթեթությունը, նրան հարցրել էին թե հանդերձյալ կյանքում ում կինը պետք է համարել այն կնոջ, որ հաջորդաբար ամուսնացել է յոթ եղբայրների հետ. «Ի յարութեան ոչ կանայս առնեն և ոչ արանց լինին, այլ են իբրև զհրեշտակս Աստուծոյ յերկինս» (Մատթ. ԻԲ, 30)։ Հանդերձյալ կյանքում ջնջվում են մարդկային բոլոր հարաբերությունները ու տարբերությունները։*

142. Ալաջա— *Նիկոլո Ֆիեսկիի աղջիկը և Մորոելլո Մալասպինայի (տե՛ս «Դժ.» ԻԴ, 145—150 ծանոթ.) կինը։*

ԵՐԳ ՔՍԱՆԵՐՈՐԴ

1—3. Լավ կամքի դեմ...— *բարի կամքին Ադրիանոսի, որ ուզում է արագացնել իր ապաշխարանքը («Քավ.» ԻԹ, 139—141), չի ընդդիմանում կամքը Դանտեի, որ պիտի ուզեր շարունակել դրությը նրա հետ, և Դանտեն ակամա հեռանում է նրանից, առանց գոհացնելու իր բոլոր հետաքրքրությունները։*

8. Ջարիֆն աշխարն ճամկող— *ագահությունը, ընչաքաղցությունը։*

10. Վաղնջական զայլ— *ագահությունը։*

15. Ե՞րբ պիտի զա երկրից վանողը սրան— *ակնարկում է Քերծեին, որի գալը Վիրգիլիոսը նախատեսել էր «Դժոխքում» (Ա, 101—111)։*

19. Եվ նրանցից մեկը ձայնով ողբական— *այստեղ ևս օրինակները արտաբերում են իրենք՝ ապաշխարողները։ Օրինակների առաջին խումբը վերաբերում է ագահության հակառակ առաքինությանը՝ հարստությունների արհամարհանքին, որ արտահայտվում է և՛ աղքատության հոժարակամ ընդունմամբ (Մարիամ, Ֆաբրիկիոս), և՛ թե առատաձեռնությամբ (Նիկողոս)։*

20—24. Մարիամ— *կույս Մարիամը, որ, աղքատության մեջ, Հիսուսին ծընեց Բեթլեհեմի ախոռում (Ղուկ. Բ, 7. Հովհ. ԺԶ, 21)։*

25—27. Ֆաբրիկիոս *Կայիոս— Հռոմայեցի հյուպատոս (282-ին մ. թ. ա.). մերժեց նվերները սամնիտների, որոնց համար հաշտություն էր ձեռք բերել, ապա մերժեց Պյուրոսի ընծաները։*

31—33. Նիկողոս— *եպիսկոպոս Լիկիայում (մեռ. Դ դարի սկզբներին), որի նյութական աջակցությամբ իր չքավոր հայրենակցի երեք աղջիկները ամուսնացան։*

43—45. Ես արմատն եմ շառաբաստիկ այն ծառի...— *ես հիմնադիրն եմ ներկայումս իշխող ֆրանսիական արքայատոհմի, որ իր շարաշուք ստվերը տարածել է ամբողջ քրիստոնեական աշխարհի վրա և ապականել է այն։*

46—48. Դուե, Լիլլ, Կանդ, Բրյուգգե...— *Ֆլանդրիայի գլխավոր քաղաքները։ Խոսողը նկատի ունի Ֆիլիպ Դ-ի (տես «Քավ.» է, 103—111 ծանոթ.) 1297 թվին վարած նվաճողական քաղաքականությունը Ֆլանդրիայի կոմսության դեմ և 1299 թվին գործած դավաճանական արարքը Ֆլանդրիայի կոմսի դեմ։ Ֆլամանները շուտով լուծեցին իրենց վրեժը նախ Բրյուգգեի ապստամբությամբ և ապա, 1302 թվին, Կուրտրեի տակ ֆրանսիական բանակը ջախջախիչ պարտության մատնելով. սա է վրեժը, որ նախատեսում և որին կոչ է անում Դանտեն։*

49. Հյուգ Կապետ— *հիմնադիրն ու առաջին թագավորը (987—996) ֆրանսիական արքայատոհմի, որ իր անունով կոչվեց Կապետինգների արքայատոհմ։*

50. Ֆիլիպներ ու Լուիներ— *1060 թվականից հետո Ֆրանսիայի բոլոր թագավորները, Հյուգի սերունդները կոչվում էին Ֆիլիպ կամ Լուի։*

52. Ես որդին եմ մի փարիզցու մսագործ— *մի զրույցի համաձայն Հյուգը եղել է մսագործի որդի. իրականում նա Ֆրանսիայի դուքս և Փարիզի կոմս Մեծ Հյուգի որդին էր։*

53. Երբ շքացան ինձ արքաները բոլոր— *երբ վերացան Կարոլինգների բոլոր սերունդները։*

54. Բացի մեկից, որ զգեցավ խորհրդանշան— *բացի Կարոլինգների վերջին շառավիղ Լոթարինգիայի դուքս Կարոլոսից, որ, դարձյալ տարածված մի ավանդույթի համաձայն, դարձավ վանական (զգեցավ խորհրդանշան)։ Իրականում Կարլոսը, երբ փորձեց վերանվաճել թագավորությունը, ընկավ Հյուգի ձեռքը և վախճանվեց բանտում 992 թվից հետո։*

58—60. Իմ որդին նրա գահը բարձրացավ...— *Հյուգ Կապետը, ապահովելու համար իր թագավորության ժառանգականությունը, դեռ կենդանության դահ բարձրացրեց նաև իր որդուն, Ռոբերտին, որից հետո սկսեցին հաջորդաբար գահակալել Կապետինգյան թագավորները։*

61. Մեծ օժիտը պրովանսյան— *Պրովանսի կոմս Ռայմոնդի հարուստ կոմսությունը, որ Լուի Թ-ի եղբայրը՝ Կարլոս Ա Անժուացին («Քավ.» է, 112—114) 1245-ին ձեռք բերեց իբրև օժիտ, ամուսնանալով Ռայմոնդի աղջկա՝ Բեատրիսի հետ («Դր.» Զ, 127—142)։*

65. Իբր հատուցում (per ammenda)— *այս արտահայտությունը, որ կրկնվում է երեք անգամ տողերի վերջում (հմմտ. տ. 67 և 69), դառն հեգնանք է, որ նշանակում է՝ քավելու համար մի հափշտակություն ու չարագործություն, կատարեց ավելի մեծ հափշտակություն ու չարագործություն։*

66. Նորմանդիան, Պոնտն ու Գասկոնիան ձեռք բերեց— *Նորմանդիան Անգլիայից նվաճեց Ֆիլիպ Բ-ը ԺԳ դարի սկզբներին, իսկ Պոնտյոյի կոմսությունն ու Գասկոնիան, որոնք նույնպես պատկանում էին Անգլիային, նվաճեց Ֆիլիպ Դ-ը ԺԳ դարի վերջերին։*

67—69. Կարլոսն եկավ Իտալիա...— *Կարլոս Ա Անժուացին Իտալիա եկավ 1265 թվին՝ սվեվներից բռնագրավելու համար հարավային Իտալիայի թագավորությունը։*

74—78. Ֆրանսիայից կգա ուրիշ մի Կարլոս— *ակնարկում է Անհող կոչված (հմմտ. տ. 76) Կարլոս Վալուային, Ֆիլիպ Դ-ի որդուն, Ֆիլիպ Դ-ի եղբորը։*

73. Տեզով Հուդայի— *դավաճանության զենքով։*

79—81. Մյուսը— *մյուս Կարլոսը, Կարլոս Բ Անժուացին։*

86—90. Դա շուշանի ներխուժումն է Անանյա...— *ակնարկում է Բոնիֆակիոս Ը պապի և Ֆիլիպ Դ թագավորի միջև տեղի ունեցած բանակռվի ամենասուր միջադեպը։ 1303 թվի սեպտեմբերի 3-ին թագավորի մինիստր Գիյյոմ Նոգարեն և պապի հակառակորդ Շարրա Կոլոնեան զինյալ ջոկատով, ֆրանսիական արքունի տան զինագրոշներով (որոնց վրա շուշան էր պատկերված) ներխուժեցին Անանյի պապական նստավայրը և պապին ձերբակալեցին։*

88—90. Ես տեսնում եմ նրան նորից այստեղված...— *Ես տեսնում եմ Քրիստոսին մի անգամ ևս ծաղրված ու անարգված հանձին իր փոխանորդի, և մի անգամ ևս սպանված։*

91. Նոր Պիղատոսին— *Ֆիլիպ Դ-ին։ Ֆիլիպ Դ-ին «նոր Պիղատոս» է կոչում թե այն պատճառով, որ նա պապին հանձնեց Կոլոննաների (պապի հակառակորդի տոհմի. տես «Դժ.» Իէ, 86 ծանոթ.) ձեռքը ինչպես Պիղատոսը Քրիստոսին հանձնել էր հրեաների ձեռքը, և թե այն պատճառով, որ շտապեց իրենից հեռացնել ամեն պատասխանատվություն քահանայապետին հասցված վիրավորանքների համար, ինչպես արել էր Պիղատոսը Քրիստոսի վերաբերմամբ։*

93. Ազանության կիրքը տանում է Տաճար— *ագահության կիրքը պոռթկում է Տաճարականների ասպետական-կրոնական ուխտի դեմ։*

97. Հարսի մասին Սուրբ Հոգու— *Մարիամի մասին (տտ. 19—24)։*

100. Մյուսների հետ— *աղքատասիրության մյուս օրինակների հետ (տտ. 25—33)։*

103—105. Պիզմալիոն— *Տյուրոսի թագավորը, Դիդոնի եղբայրը, սպանեց իր քրոջ ամուսնուն, Միքեոսին՝ նրա հարստությունները տիրանալու համար («Էնեակ.» Ա, 340—356)։*

106—108. Միդաս— *Փռյուգիայի թագավորը. հարստանալու մարմաջով բռնված՝ նա Բաքոսին աղաչեց իրեն կարողություն տալ ոսկու վերածելու այն ամենը, ինչին կդիպչի. աղաչանքը լսվեց, և ոսկու վերածվեցին նաև ուտելիքները. և Միդասը, սովի մատնված, ստիպված եղավ պաղատելու աստվածներին, որ իրեն ազատեն այդպիսի կարողությունից («Ալյակերպ.» ԺԱ 85—145)։*

109—111. Ակար— *Հրեա, որ գողացավ Երիքովի գրավման ժամանակ ձեռք բերված ավարի մի մասը։*

112. Անանիային ու կնոջ— *Անանիան ու կինը՝ Սափիրան, ագահաբար փորձեցին խաբել առաքյալներին, իրենց համար պահելով համայնքի բարիքների վաճառքից գոյացած դրամի մի մասը, բայց մերկացվեցին Պետրոս առաքյալից և շանթահարվեցին աստծուց («Գործք առ.» Ե, 1—11)։*

113. Հելիոդոր— *սա մինչ Սիրիայի թագավոր Սելևկիոսի հրամանով պատրաստվում էր կողոպտել Երուսաղեմի տաճարը, հարձակում կրեց մի խորհրդավոր ձիավորից և ստիպված փախավ։*

114—115. Պոլիենատ— *Թրակիայի թագավորը և Պրիամոսի փեսան, դավաճանաբար սպանեց իր աներձագ Պոլիդորին, նրա հարստությունները յուրացնելու համար։ Նա սպանվեց կուրացվելով Հեկուբի՝ Պոլիդորի մոր ձեռքով։*

116—117. Կրասսոս— *Հռոմայեցի զորապետ, հռչակված իր հարստությամբ, սպանվեց պարթևների դեմ մղած պատերազմում և գլխատվեց (53-ին մ. թ. ա.)։*

130—132. Զէր տատանվում Դելոսն այնպես ուժգնակի...— *ըստ դիցաբանության Դելոս կղզին, որին Նեպտունը ջրերից էր դուրս բերել, առաջ ծփում էր ալիքներից ու հողմերից կոծված ծովի վրա. կղզու ծփանքը դադարեց, երբ Լատոնան աղաչվելու համար Յունոնի բարկությունից, այնտեղ ապաստանեց ծնելու Ապոլլոնին և Դիանային (արևին և լուսնին, երկնքի երկու աչքերին)։*

136. «Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» (Ղուկ. Բ, 14)— *փրկությունը մի հոգու, որ պատրաստվում է Դրախտ բարձրանալ, ողջունվում է այս նույն խոսքերով, որոնցով հրեշտակները օրհներգեցին փրկչի գալուստը։*

ԵՐԴ ՔԱՆԱՄԵԿԵՐՈՐԴ

1. Բնական սուր ծարավից— *ճշմարտությունն իմանալու, ճանաչելու բնական պահանջից («Ինչ.» Ա, 1)։*

2—3. Որ միմիայն հագենում է այն ջրով...— *այդ ծարավը հագենում է միայն այն «կենդանի ջրով» (ճշմարտության իմացությամբ), որ սամարուհին խընդրեց Քրիստոսից (Հովհ. Դ, 6—15)։*

7—9. Ըստ Ղուկասի գրածի.— *ըստ Ղուկաս ավետարանիչի, երբ Քրիստոսը հարություն առավ, երկու աշակերտների երևաց Եմմավուսի ճանապարհին (Ղուկ. ԻԴ, 13—16)։*

10. Մեկը— *Ստատիոսը (տ. 91)։*

13. «Եղբայրներ, ձեզ խաղաղութիւն տա Աստված»— *հարուցյալ Քրիստոսի ողջույնի խոսքն է աշակերտներին. «Խաղաղութիւն ընդ ձեզ» (Ղուկ. ԻԴ, 36)։*

18. Մշտական սաստում— *Դրախտից մշտապես աքսորված վիճակում (հմմտ. «Դժ.» ԻԴ, 125)։*

23. Նշաններին— *մեղքերի նշաններին («Քավ.» Թ, 112—114), որոնցից երեքը դեռ մնացել են Դանտեի ճակատին։*

25—27. Բայց զի կյանքի թելը մանող տիրուհին...— *բայց քանի որ յուրաքանչյուր մարդու կյանքի թելը մանող Պարկա Լաքեզիսը («Քավ.» Իե, 79) դեռ ամբողջովին չի մանել նրա համար հատկացված թելաբաժինը, որ տրամադրում է մյուս Պարկան՝ Կլոթոսը։ Ուզում է ասել «սա (Դանտեն) դեռ չի ավարտել իր կյանքի ընթացքը, այսինքն դեռ չի մեռել»։ Ըստ դիցաբանության, Պարկաները տիրուհիներն են մարդկային կյանքի։ Նրանցից ամենակրտսերը, Կլոթոսը, յուրա-*

քանչյուր մարդու ծննդյան ժամանակ լաքեզիսին տրամադրում է մանածաթելի որոշ բաժին, որ լաքեզիսը մանում է, իսկ Ատրոպոսը («Դժ.» ԼԳ, 126) կտրում։

48. Եռասփեան կարճ սանդուղքից— *Քավարանի դռնից։*

50. Դուսարը Տավմանսի— *Սիածանը, որին հնադարյան բանաստեղծները նույնացնում էին Տավմանսի և էլեկտրայի դուստր Իրիդայի հետ (հմմտ. Օվիդ. «Այլակերպ.» Ա, 270—271. ԺԴ, 585—632)։*

52. Չոր գոլորշի— *արիստոտելյան «Ֆիզիկան» երկրային փոփոխություններ պատճառը վերագրում էր երկրից ծագող գոլորշիներին. խոնավ գոլորշիները առաջացնում են մթնոլորտային տեղումներ, չոր ու նոսր գոլորշիները՝ քամի, իսկ երկրի ընդերքում ներփակված չոր ու խիտ գոլորշիները՝ երկրաշարժեր։*

68. Ավելի քան հինգհարյուր ամ— *Ստատիոսը մեռած լինելով ավելի քան 1200 տարի առաջ (տես տ. 91 ծանոթ.), ավելի քան հինգհարյուր տարի անցկացրել է այս բոլորակում, չորսհարյուր տարի՝ չորրորդ բոլորակում («Քավ.» ԻԲ, 92—93), իսկ մնացած ժամանակը՝ Քավարանի ստորակա բոլորակներում և Նախաքավարանում։*

73. Սարավ— *տես տ. 1 ծանոթ.։*

82—84. Երբ Տիտոսը...— *Տիտոսը, Վեսպասիանոս կայսեր որդին, 70 թվին կործանելով Երուսաղեմը, աստծու կամքով վրեժ լուծեց Հուդայից մատնված Քրիստոսի չարչարանքների ու մահվան համար (հմմտ. «Դր.» Զ, 92—93)։*

85. Համբավով— *բանաստեղծի համբավով։*

91. Ստատիոս Պուբլիոս— *ամենահայտնի բանաստեղծներից մեկը լատինական գրականության արծաթե դարում և շատ գնահատված միջին դարերում (ծնվ. շուրջ 50-ին և մեռ. 96-ին)։ Գրել է «Թեբեական» և «Աքիլլեական» դյուցազներգություններ։*

127—129. Ժպտիս պատճառը...— *Դանտեի ժպտալու պատճառը այն խոսքերն են, որոնցով Ստատիոսը Վիրգիլիոսի մասին բարձր գովասանքներ անելուց հետո ցավում է, որ չի կարողացել նրան անձամբ ճանաչել (տտ. 94—102), մինչդեռ Վիրգիլիոսը նրա առաջն էր։*

ԵՐԳ ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

2. Մի այլ նիշ— *մեղքի մի ուրիշ նշան («Քավ.» Թ, 112—114)։*

4—6. «Երանյալ են երանք որ...»— *«Երանի որ քաղցեալ և ծարավի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին» (Մատթ. Ե, 6)։ Արդարության հրեշտակը ոսկու քաղցին ու ծարավին հակադրում է արդարության քաղցն ու ծարավը։*

13. Յուվենալ— *լատին նշանավոր երգիծաբան բանաստեղծ, Ստատիոսի ժամանակակիցը։*

22—24. Ինչպե՞ս եղավ որ քո սրտում տեղ գտավ...— *Վիրգիլիոսը զարմանում է որ իմաստությամբ օժտված Ստատիոսին գտնում է ագահությամբ մեղանչողների բոլորակում, որովհետև իմաստությունը անհամատեղելի է այդ մոլության հետ։*

35—36. Սակայն ախտն էլ ճակատակ...— *սակայն ագահության հակառակ մոլությունը, շռայլությունը, նույնպես պատժվում է այստեղ, ինչպես այդ երկու հակադիր մոլությունները միասին պատժվում են Դժոխքում։*

40—41. «Ո՞ւր չես տանում օ՛ անիծյալ քաղց ոսկու...» *(«Էնեակ.» Գ, 56—57)— «ինչպիսի՞ չափազանցություններ չես հասցնում»։*

42. Արդ կզգայի բախումները անարկու— *այժմ ընկած կլինեի Դժոխքի չորրորդ պարունակում, ուր ագահները (ժլատները) և շռայլները դատապարտված են հավիտենապես իրար բախվելու («Դժ.» է, 25—35)։*

55—56. Երբ երգեցիր այն զինամարտը վայրագ...— *Ստատիոսը իր «Թեբեականում» երգեց Յոկաստայի երկու որդիների՝ Էտեոկլի և Պոլինիկեի, եղբայրասպան կռիվը (հմմտ. «Դժ.» ԻԶ, 54), որը կրկնակի վիշտ պատճառեց դժբախտ մորը։*

57. Բանաստեղծը հովվերգակ— *«Հովվականքի» հեղինակ Վիրգիլիոսը։*

58. Կլիո— *պատմության Մուսան, որին Ստատիոսը բազմիցս ոգեկոչել է իր «Թեբեականում»։*

63. Որ դու դարձար հետևորդը ձկնորսի— այսինքն որ դու դարձար քրիստոնյա, հետևորդը Պետրոս առաքյալի, որ արհեստով ձկնորս էր։

70Մ-72. «Նորոգվում է դարը արդ...»— Վիրգիլիոսի «Հովվականքի» Դ երգի 5—7 տողերն են, որոնք հռչակում են վերանորոգված ոսկեդարը Օգոստոսի կայսրության օրոք։

78. Բանբերները երկնի— Քրիստոսի առաքյալները։

83. Դամիտիան— հռոմեական կայսր 81-ից մինչև 96 թ.։ Ըստ ավանդության, կատաղի հալածանքների է ենթարկել քրիստոնյաներին։

88. Եվ դեռ չերգած նուռնաց արշավը Թեբե— և դեռ չգրած իմ «Թեբեականի» այն դրվագը, ուր նկարագրում եմ Պոլինիկեի դաշնակից հույների արշավանքը Թեբե։

93. Զորոդ զոռում— Քավարանի չորրորդ բոլորակում (հմմտ. «Քավ.» ԻԱ, 67—69)։

97—111. Լատին և հույն գրողների, բանաստեղծության և գիցաբանական դեմքերի այստեղ ներկայացված ցանկը լրացումն է Լիմբոսում թվարկված նշանավոր անձանց շարքի (տես «Դժ.» Դ, 88—90 և 121—144)։

97. Տերենտիոս— լատին կատակերգակ բանաստեղծ (192—159 մ. թ. ա.)։

98. Վարրոս— լատին դրամատիկ բանաստեղծ. Վիրգիլիոսի ու Հորատիոսի ժամանակակիցն ու բարեկամը։ Պլավտոս— լատին կատակերգակ գրող (254—184 մ. թ. ա.)։ Կեկիլիոս— ուրիշ կատակերգակ գրող (մեռ. 167-ին մ. թ. ա.)։

100. Պերսիոս— լատին երգիծաբան (34—62 մ. թ. ա.)։

101. Այն նույնի— Հոմերոսի։

103. Մութ զնդանի պարունակում եմ վերի— Դժոխքի առաջին պարունակում (Լիմբոսում)։

106—107. Եվրիպիդ, Անտիֆոն, Ագաթոն— հին հույն ողբերգակ բանաստեղծներ։ Սիմոնիդ— հին հույն քնարերգակ բանաստեղծ։

109. Հետևյալ տողերում Վիրգիլիոսը թվարկում է Ստատիոսի երկերում երգված հերոսուհիներին։

110. Անտիգոնե— Էդիպի ու Յոկաստայի դուստրը, Էտեոկլի ու Պոլինիկեի (տտ. 55—56 ծանոթ.) քույրը։ Դեիֆիլե— Տիդեոսի («Դժ.» ԼԲ, 130) կինը և Դիոմեդի («Դժ.» ԻՁ, 56) մայրը։ Արզիյա— Դեիֆիլեի քույրը և Պոլինիկեի կինը։

111. Իսմենե— Էդիպի մյուս դուստրը. վշտանար է, որովհետև ականատես եղավ իր բոլոր հարազատների և նշանածի եղերական մահվան։

112. Նա, որ ցույց տվեց Լանգիյան— Հիսիպիլը, որ Թեբեի դեմ մաքառող յոթ ծարաված հերոսներին ցույց տվեց Լանգիյա աղբյուրը Նեմեայի մոտ (հմմտ. «Քավ.» ԻՁ, 94—95)։

113. Տիրեսիասի դուստրը— Մանտոն։ Այստեղ Մանտոնին հիշատակելով Լիմբոսի բնակիչների շարքում, Դանտեն հավանաբար մոռացել է, որ նրան զետեղել էր գուշակների ու կախարդների ձորում (տես «Դժ.» Ի, 52—93)։

114. Թետիս— Աքիլլեսի մայրը, ծովային դիցուհի։ Դեյդամիա— Աքիլլեսի սիրուհին, Սքիրոսի թագավոր Լիկոմեդի աղջիկը (հմմտ. «Դժ.» ԻՁ, 61—62)։

118—120. Անցել էին չորս ճաժիշտները օրվա...— արևի ծագումից արդեն անցել էին առաջին չորս ժամերը։

131. Մի ծառ— հանդիպում են պտղաբերձ մի ծառի, որի տերևների միջից հնչող մի ձայն որկրամոլությամբ մեղանչած հոգիներին արգելում է ճաշակել ծառի պտուղներից ու տերևների ջրից (տ. 141) և արտասանում է ժուժկալության օրինակներ (տտ. 142—154)։

142—144. Մարիամ կուսանը բարի...— կույս Մարիամը Կանայի հարսանիքի ժամանակ հոգաց ոչ իր ուտելիքի մասին, այլ այն մասին, որ հարսանյաց հանդեսը լինի պատվով ու անթերի։

145—146. Հին Հռոմի կանայք...— ըստ լատին պատմագիր Վալերիան Մաքսիմոսի, հին Հռոմում կանայք գինի չէին գործածում։

146—147. Դանիելն Լ...— Դանիել մարգարեն հրաժարվեց Նաբուգոդոնոսոր արքայի ճոխ սեղանից և գոհացավ միայն ջրով ու ընդեղենով, փոխարենը ստա-

նալով իմաստություն և տեսիլքներ ու երազներ մեկնելու ընդունակություն (Դանիել Ա, 3—20)։

148. Նախադարը ոսկու նման էր պայծառ...— *ակնարկում է նախնադարյան աշխարհի առասպելական ոսկեդարը, երբ մարդիկ ապրում էին երջանիկ պարզության մեջ։*

151—154. Անապատում Հովհաննեսը...— *Հովհաննես Մկրտիչը անապատում սնվում էր միայն վայրի մեղրով ու մարախով (Մատթ. Գ, 4)։*

ԵՐԳ ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ

11. «Ով Տէր, եթէ զշրթունս իմ բանաս, բերանն իմ երգեսցէ զօրհնութիւն քո» (Սաղմոս Ս, 17)— *սաղմոսի այս խոսքերը երգելով, որկրամոլների հոգիները շնորհ են հայցում միայն աստուծո փառաբանությանը նվիրելու իրենց շրթունքն ու բերանը։*

22—24. Աչքերն անփայլ ու փոս էին բոլորի...— *որկրամոլները զարհուրելիորեն նիհարած են, որովհետև նրանք կարոտաբաղձ դիտում են ծառի պտուղները և տերևների ջուրը, չկարողանալով ճաշակել ոչ մեկից, ոչ մյուսից։*

25—27. Երեսիքթոն— *Թեսալիայի առասպելական թագավորի որդին. սա կտրելով մի կաղնի Կերերեի նվիրական անտառում, դիցուհուց պատժվեց սոսկալի քաղցով։ Հագեցնելու համար այն, վատնեց իր բոլոր ունեցվածքը, սնունդի համար վաճառեց հարազատ աղջկան և, վերջապես, սկսեց ուտել սեփական մարմինը (Օվիդ. «Մետամորֆ.» Ը, 725—878)։*

29—30. Անա ցեղը...— *Երուսաղեմի բնակիչները 70 թվի պաշարման ժամանակ, երբ սովը այնքան սաստկացավ, որ Մարիամ անունով մի կին սպանեց ու լափեց իր միակ որդուն։*

32—33. Ոմքեր մարդկանց դեմքին կարդում են ՕՄՕ— *միջին դարերում կարծում էին, որ մարդկային դեմքի կառուցվածքի մեջ կարելի է կարդալ ՕՄՕ (մարդ) բառը, ըստ որում այտոսկրների գիծը, հոնքերի կամարները և քիթը կազմում են Մ, իսկ աչքերը՝ երկու Օ։ Ոսկրացած դեմքի վրա Մ տառի նմանությունն ավելի ցայտուն է երևում։*

42. «Այս շնորհն ինձ ո՞ւրտեղից»— *ինձ ո՞րտեղից է քեզ այստեղ տեսնելու բարեբախտությունը (հմմտ. «Քաղ.» է, 19. «Դժ.» ժԵ, 24)։*

48. Ֆարեզե Դոնատի— *ֆլորենտացի, Դանտեի բարեկամը, երիտասարդ ժամանակ միասին վարել են սանձարձակ կյանք և իրար հետ փոխանակել են դեռահիկ սոնետներ։*

74. «Աստուած իմ, Աստուած իմ, ընդե՞ր թողեր զիս» (Մատթ. Իէ, 46)— *խաչ հանված Քրիստոսի խոսքերն են մահից քիչ առաջ։*

83—84. Ներեռում— *նախաքավարանում, ուր մնում են նրանք, որոնք մինչև իրենց մահվան ժամը անփութորեն չեն զղջացել իրենց մեղքերը։*

85. Նելլա— *Ֆորեզեի այրին։*

86. Այս օշինդրը դառնաձայն— *Քավարանի տանջանքները, որոնք դառն են ըստ ինքյան, բայց քաղցր են մեզ համար, որովհետև փրկարար են (հմմտ. տտ. 72—75)։*

94. Սարդինիայի Բարբաջան— *Բարբաջան Սարդինիայի կենտրոնում լեռնային մարդ է, որի բնակիչները կիսավայրենիներ էին։*

96. Քաղաքն այն— *Ֆլորենցիան։*

107—108. Թե երկինքը ինչ է նրանց պատրաստում...— *Թե երկինքը ինչ պատուհաս է նրանց համար պատրաստում մոտակա ժամանակներում։*

114. Ուր քո չլափն ես ձգել— *ուր քո մարմինը չվաք է ձգել, նշանակում է կենդանի և իրական մարմին ունես, ուրեմն ողջ ես։*

119. Այդ ախտավոր կենցաղից, *որի սիմվոլն էր «մթամած անտառը», ուր ընկավ ու մոլորվեց Դանտեն իր կյանքի որոշ շրջանում (հմմտ. «Դժ.» Ա, 1—3)։*

120. Երբ դարձել էր արևի քույրը կոր— *Երբ դարձել էր լիալուսին (հմմտ. «Դժ.» Ի, 12)։*

122. Հոգիները մեռած— *դատապարտյալները։*

131. Մյուսը— *Ստատիոսը։*

8. Նա— *Ստատիոսի հոգին, ներկայացված նախորդ երգի 131—133 տողերով։*

10. Պիկկարդա— *Ֆորեզեի քույրը։ Դանտեն նրան հանդիպելու է Ոլիմպոսի մեջ վերի (տ. 15), այսինքն Դրախտում (տես «Դր.» Գ, 34—108)։*

19—20. Լուկկացի Բոնաջունտա *Օրբիչչանի— լուկկացի բանաստեղծ։*

20—24. Մյուսն այն— *սա Մարտինոս Դ պապն է, որի որկրամոլությունը զրույցների ու երգիծանքների նյութ էր դարձել։*

29—30. Ուբալդին *դեյլի Ուբալդինի— եղբայրը կարդինալ Օտտավիանոյի («Դժ.» Ժ, 120) և Ուգոլինո դ՝ Ացցոյի («Քավ.» ԺԴ, 105) և հայրը արքեպիսկոպոս Ռուջերիի («Դժ.» ԼԳ, 14)։* Բոնիֆացիո Ֆիեսկի— *Ռավեննայի արքեպիսկոպոսը 1274-ից մինչ 1295։*

31—33. Մեսսեր Մարկեզե *դեյլի Ալգուլյոզի— ֆոլիցի ազնվական, Ֆայենցայի պոդեստան։*

35. Լուկկացուն— *Բոնաջունտային։*

37. Ջենտուկկա— *հավանաբար Ջենտուկկա Մոռլան, գեղեցիկ և անմոռ (տ. 43), այսինքն՝ չամուսնացած մի կին, որի հետ Դանտեն կծանոթանա Լուկկայում իր տարագրության տարիներին։*

49. Նոր տաղեր— *տաղերգություններ նոր արվեստով* (նոր քաղցրալուր ոճով), *որի հնարքը Դանտեն վերագրում է իրեն։*

51. «Կանայք, դուք որ ձեր մեջ ունեք ազնիվ սեր»— *այսպես է սկսվում Դանտեի «Նոր կյանքի» առաջին տաղը։*

52—54. Ես մեկն եմ որ...— *այս եռատողում Դանտեն տալիս է իր «նոր տաղերի» և ընդհանրապես «նոր քաղցրալուր ոճի» քերթողական ուղղության հիմնական սկզբունքը, որ կայանում է խոսքերի և զգացմունքների սերտ համապատասխանության մեջ։*

56. Նոտար— *սիկիլիացի նոտար Յակոպո դա Լենտինո։* Գուիտտոնե դ՝ Արեցցո— *տոսկանական (ֆլորենտական) բանաստեղծների պարագլուխը «նոր քաղցրալուր ոճից» առաջ։*

57. Նոր ոճ քաղցրալուր (dolce stil nuovo)— *ֆլորենտական դպրոցին հատուկ ոճը։*

58. Գուիտ— «*նոր քաղցրալուր ոճի» ներկայացուցիչներդ. դրանք էին Դանտեն, Գուիդո Կավալկանտին, Լապո Ջանին, Դինո Ֆրեսկոբալդին, Ջանին Ալֆանին և ուրիշներ։*

77—78. Բայց չի լինի աստ վերադարձս այնքան շուտ...— *Դանտեի վերադարձը Քավարան (որ տեղի կունենա նրա մահից հետո) չի լինի այնքան շուտ, որքան ինքը կըզաղձար։*

79. Քաղաքը— *Ֆլորենցիան։*

82—90. Ով այդ բանում մեծ մեղք ունի...— *Ֆորեզեն Ֆլորենցիայի պայմանների վատթարացման գլխավոր պատճառը համարում է իր եղբորը՝ Կորսո Դոնատիին և աղոտ կերպով գուշակում է նրա եղերական վախճանը։ Կորսո Դոնատին Ֆլորենցիայի Սևերի պարագլուխն էր։ 1308 թվին, դատապարտվելով իբրև ապրստամբ և դավաճան, հարկադրված եղավ փախչել քաղաքից, բայց բռնվեց և կալանավորվեց. մինչ նրան Ֆլորենցիա էին վերադարձնում, ընկավ ձիուց և սպանվեց վարձկանների ձեռքով։*

88. Եվ շատ պիտի չպտտվեն աստղերն այն— *և պիտի չանցնեն շատ տարիներ։*

115—117. Առաջ անցեք, մի մոտենաք դուք սրան...— *ինչպես առաջին ծառից («Քավ.» ԻԲ, 131), այնպես էլ այս ծառից (տ. 104) դուրս է գալիս մի ձայն, որ ժուժկալության կոչ է անում հոգիներին, և ապա արտասանում է պատժված որկրամոլության օրինակներ (տտ. 121—126)։ Այս ծառը ծլել է Երկրային դրախտի ծառից, որի արգելված պտուղը ճաշակել է մայր Եվան։*

121—123. Նգովելոց ամպածին...— *ակնարկում է Կենտավրոսներին, ամպի և Իքսիոնի որդիներին, որոնք լավ կերած խմած և գինովությունից սանձարձակ դարձած, փորձեցին կանանց բռնաբարել Պիրիթոոսի և Իպոդամիայի հարսանյաց հան-*

գեսին, բայց դանակոծվեցին և շատերը սպանվեցին Թեսեոսի ձեռքով (Օվիդ. «Այլակերպ.» ԺԲ, 210—535)։

124—126. Հրեից...— *ակնարկում է այն հրեա զինվորներին, որոնք մադիանցիների դեմ մղվող պատերազմի ժամանակ չկարողացան զսպել իրենց ծարավը և ծունկ չոքելով կուշտուկուռ խմեցին հանդիպած աղբյուրից. դրա համար դատավոր-զորավար Գեդեոնը նրանց անպիտան ճանաչեց և ետ ուղարկեց (հմմտ. Դատ. Զ, 11. է 25)։*

139. *Մեկը— ժուժկալության հրեշտակը։*

ԵՐԳ ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ

2—3. Զի արևը...— *արևը, առաջանալով Խոյ համաստեղության մեջ, անցել էր միջօրեականից, այն թողնելով Ցուլ համաստեղությանը, իսկ գիշերը, որ արևի հակադիր կողմում է պտտվում («Քավ.» Բ, 4), անցնելով Կշեռք համաստեղությունից, միջօրեականը թողել էր Կարիճ համաստեղությանը։ Ուզում է ասել՝ ժամը մոտ ցերեկվա երկուսն է Քավարանում։*

20—21. Ինչպե՞ս կարող են հյուծվել...— *ինչպե՞ս կարող են հյուծվել այս օդային մարմինները կամ ստվերները, որոնք կարիք չունեն նյութական սնունդի։*

23. Մելեագր— *կալեդոնիայի թագավոր Օենեոսի և Ալթեայի որդին։ Օվիդիոսը պատմում է («Այլակերպ.» Ը, 260—546), որ Մելեագրի ծննդյան միջոցին Պարկաները նրա կյանքը կապեցին նույն պահին բոցավառված մի խանձողի տեղության հետ։ Ալթեան փորձեց որդուն փրկել աղետավոր ճակատագրից, կրակը հանգցնելով և խանձողը թաքցնելով, բայց երբ Մելեագրը մի վեճի պատճառով սպանեց իր երկու քեռիներին, Ալթեան, զայրացած, դուրս հանեց խանձողը և կրակի մեջ նետեց, և Մելեագրի կյանքը կարճ ժամանակում սպառվեց խանձողի հետ։*

26. Զեր պատկերն է արտացոլում հայելին— *ինչպես հայելին, օդային մարմինը, որով օժտված են հոգիները, արտացոլում է հոգու ներքին ապրումները։*

30. Բուժիչը fo վերfերի— *լուծողը քո տարակույսների։*

37—42. *Ստատիոսի երկար զեկույցը (տտ. 37—108) շատ հեռու է գնում Դանտեի առաջադրած հարցից (տտ. 20—21) և իսկական բանախոսություն է մարդկային մարմնի ու հոգու առաջացման մասին։*

43—45. Նորից զոված...— *այսինքն ձևափոխված, սպերմա դարձած այդ արյունը հոսում է սեռական օրգաններում, որտեղից կաթում է կնոջ արյան վրա արգանդում* (անոթում բնական)։

48. Ըստ որում սա ուճի զորեղ զտարան— *քանի որ արական սերմը իր ներգործող զորությունը ստանում է սրտից (տ. 40)։*

61. Բայց ինչպե՞ս է ասուն դառնում տնասնից— *ինչպե՞ս էակը զարգանալով և օժտվելով շարժումով ու զգայությամբ, անբանականից դառնում է բանական։ Բանական հոգու ծագումը այլևս կախված չէ սերմի ներգործող ուժից. ստված է այն ստեղծում ու ներարկում սաղմի մեջ, երբ վերջինս հասնում է իր զարգացման որոշ աստիճանին (տտ. 67—72)։*

62—66. Դա այնպիսի հարց է բարդ... *դա այնպիսի բարդ հարց է, որ մոլորության մեջ գցեց նույնիսկ քեղանից ավելի իմաստուն փիլիսոփա Ավերրոյսին («Դժ.» Դ, 144)։ Ավերրոյսը նկատելով, որ մտքի գործունեությանը չի համապատասխանում մարմնական որևէ օրգան (ինչպես աչքը տեսողության համար, ականջը լսողության համար և այլն), եզրակացրեց, որ ներքին իմացականը առանձին մի սուբստանց է, որ անջատ է մարդու անհատական հոգուց և մեկ է բոլոր մարդկանց համար։*

76—78. Եվ որպեսզի շատ չմնաս զարմացած...— *զարմանալին այստեղ այն է, որ ստվածային ծագում ունեցող բանական հոգին կարողանում է սաղմի մեջ համակցվել, միաձուլվել բնական ծագում ունեցող բուսական և զգայական հոգու հետ և կազմել մի միասնական հոգի բուսական, զգայական և բանական կարողություններով (տտ. 73—75)։*

79. Երբ Լաֆեզիսն սպառում է մանածոն— *այսինքն երբ մարդ մեռնում է։*

86—87. Զույգ ափերից մեկին և կամ մյուսին...— Ախերոնի ափին, եթե դատապարտված է, Տիբերի ափին, եթե սահմանված է փրկության (տես «Քավ.» Բ, 94—105)։

88—96. Հենց որ այստեղ...— հենց որ հոգին, հասնելով իրեն սահմանված տեղը, շրջապատվում է օդային տարածությամբ, իսկույն հաստիչ ուժը (տ. 40), որ կա նրա մեջ, սկսում է ճառագայթել, գործել շրջակա օդում, ինչպես գործում էր իրական մարմնում, և հոգուն շրջապատող օդը ստանում է այն պատկերը, որ նրա մեջ դրոշմում է հոգու ներքին արարիչ, հաստիչ ուժը։

109. Վերջին դուռս— Քավարանի յոթերորդ և վերջին բոլորակը, ուր պատրաստվում են բոլոր հոգիները հրեղեն բոցերի մեջ։

122. «Տէր վեհագոյն գթութեան»— առաջին բառերն են եկեղեցական մի օրհներգի, որ արտասանվում է շաբաթ առավոտյան։

128. «Զայր ոչ գիտեմ»— Մարիամի ողջախոհությունը վկայող խոսքերն են։ Երբ Գաբրիել հրեշտակը եկավ Մարիամին ավետելու՝ «Ահա յղասջիր՝ և ծնցես որդի, և կոչեսցես զանուն նորա Յիսուս ևն.», Մարիամը պատասխանեց. «Զիա՞րդ լինիցի ինձ այդ, քանզի զայր ոչ գիտեմ» (Ղուկ. Ա, 31—34)։

130—132. Դիանան անտառ վազեց...— Դիանան, անարատ մնալու համար, իր ընկերուհիների հետ ապրեց անտառում, և խստորեն պատժեց հավերժահարս Հելիկին (Կալիստոյին), որին հրապուրել ու գայթակղեցրել էր Զևսը։ Հետագայում Հելիկը Հերայի ձեռքով վերածվեց արջի և, որդու հետ միասին, զետեղվեց երկնքում՝ կազմելու համար Մեծ Արջի համաստեղությունը, որ կոչվում է նաև Հելիկե (հմմտ. Օվիդ. «Այլակերպ.» Բ, 401—530. «Դր.» ԼԱ, 32—33)։

ԵՐԳ ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ

8. Հուրն ավելի շառագույն էր երևում— արևը իր ճառագայթներով հուրը դարձնում է նվազ վառ, բայց այնտեղ, ուր այդ ճառագայթները խափանված են Դանտեի մարմնով, հուրն ավելի վառ կարմիր է երևում։

18. Ծարավից— իմանալու սուր պահանջից— դու ողջ է՞ս, թե՞ ոչ։

25. Մի հոգի— Գուիդո Գուինիցելլին (տ. 74 և 92)։

28—36. Բոցավառ ճանապարհի վրա իրար են հանդիպում և միմյանց ողջունում են ողջախոհների երկու հակընթաց խմբեր, որոնցից մեկը բաղկացած է հակաբնական սիրով մեղանչողներից (տտ. 76—81), իսկ մյուս խումբը՝ բնական, բայց անասնական սիրով մեղանչողներից (տտ. 82—87)։

41—42. Պասիֆայեն...— ակնարկում է Պասիֆայի հրեշավոր զուգավորումը ցուլի հետ (փայտաշեն կովի մեջ), որից ծնվեց Մինոտավրը (հմմտ. «Դժ.» ԺԲ, 12—13)։

44. Ռիֆե— Ռիֆեյան կամ Հիպերբորյան լեռները Եվրոպայի հյուսիսում։

47—48. Եվ լալագին կրկնում...— և արտասվագին վերսկսում էին երգել «Տէր վեհագոյն գթութեան» օրհներգը («Քավ.» Իե, 122) և գոչել յուրաքանչյուրի մեղքին համապատասխան ողջախոհության օրհնակները («Քավ.» Իե, 127—135)։

77—78. Մեղքն այն...— սոդոմականության (արվամոլության) մեղքը։ Կեսարը այդ մեղքը գործեց Բյութանիայի թագավոր Նիկոմեդեսի հետ, և դրա համար Գալլիական հաղթանակի ժամանակ զինվորներից ծաղրաբար ողջունվեց «բամբիշ» հորջորջումով։

86. Անունը այն կնոջ— Պասիֆայի (տտ. 41—42)։

92. Գուինիցելլի Գուիդոս— բոլոնյացի նշանավոր բանաստեղծ, սկզբնավորողը «նոր քաղցրալուր ոճի» (տես «Քավ.» ԻԴ, 52—54 ծանոթ.)։

94—97. Ինչ զգացին երկու որդիք հիսորյա...— ըստ Ստատիոսի («Թեբեական» ե, 720— 722) Հիսիպիլը, ծարված հույներին Լանգիյա աղբյուրը տանելու համար (հմմտ. «Քավ.» ԻԲ, 112), խոտերի վրա թողեց Նեմեայի թագավոր Լիկուրկոսի մանկանը, որ հանձնված էր իր խնամքին. մանկիկը օձից խայթվեց ու մահացավ։ Լիկուրկոսի կողմից մահվան դատապարտելով, Հիսիպիլը ճանաչվեց ու փրկվեց իր որդիներից, որոնք վազեցին գրկելու նրան, երբ նա արդեն դահիճների ձեռքում էր։

106. Քո խոսքերը այն մասին, որ դու անձնաշնորհություն ես վայելում կենդանվուն այցելելու մեռյալների աշխարհը (տտ. 55—60)։
116. Հի ճոգի— Առնալդո Դանիելլոն (տ. 142) կամ Առնո Դանիելը, պրովանսյան տրուբադուր։
120. Լիմոժցի— Ժիռո դը Բոռնել, տրուբադուր, Առնալդոյի ժամանակակիցը։
124. Գուիտտոնե— տես «Քավ.» ԻԴ, 56 ծանոթ.։
140—147. Այս տողերը բնագրում պրովանսերեն լեզվով են. Առնալդոն Դանտեին պատասխանում է իր մայրենի բարբառով։

ԵՐԳ ՔՍԱՆՅՈԹԵՐՈՐԴ

8. «Երանի այնոցիկ, որ սուրբ են սրտիւ, զի նոքա զԱստուած տեսցեն»— ավետարանական վեցերորդ երանությունն է (Մատթ. Ե, 8)։
13. Երգ մի նոր— երգը մի ուրիշ հրեշտակի։
15. Ում խրել են մի փոսի մեջ գետնափոր— ում դատապարտել են ողջ-ողջ գլխիվայր թաղվելու տանջանքին (հմմտ. «Դժ.» ԺԹ, 49—51)։
17. Այն մարդկանց— հերետիկոսներին կամ չարագործներին։
36. Այս խուրն է լոկ ելեզ բաժանում Բեատրիչից— այս բոցն է միայն արգելակը, որ քեզ բաժանում է Բեատրիչից։
37—39. Ինչպես ի լուր Թիսբէ անվան...— երկու բաբելոնցի պատանիներ Պիրամոսն ու Թիսբեն, սիրահարված լինելով իրենց ծնողների կամքին հակառակ, և որոշելով միասին փախչել, ժամադրվեցին մի թթենու տակ, Նինոսի գերեզմանի մոտ։ Թիսբեն առաջինը հասնելով պայմանավորված տեղը, հանդիպեց մի առյուծի և փախուստի դիմեց։ Փախչելիս գետին գցեց իր քողը, որը ներկվեց գազանի արյունով։ Վրա հասած Պիրամոսը, տեսնելով արյունոտ քողը և մտածելով որ իր սիրուհին մահացել է, հուսահատվեց և սուրը իր կուրծքը խրեց։ Թիսբեն, վերադառնալով, նրան գտավ մահամերձ վիճակում, նրան կանչեց և իր սեփական անունը տվեց։ Պիրամոսը լսելով Թիսբե անունը, մի պահ աչքերը բացավ, նայեց աղջկան և հոգին ավանդեց։ Իսկ թթենին, որի արմատները թաթավված էին Պիրամոսի արյունով, այն օրվանից իր սպիտակ պտուղները կարմրացրեց (Օվիդ. «Այլակերպ.» Դ, 55—166)։
58. «Եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցեք զպատրաստեալ ձեզ զարքայութիւն ի սկզբանէ աշխարհի» (Մատթ. ԻԵ, 34)— խոսքերն են, որ Քրիստոսն ասելու է ընտրյալներին վերջին դատաստանի օրը։
94. Կիբեբա— Արուսյակը (Վեներան). այսպես է կոչվում Արուսյակը Կիբեբա (ներկայումս Ջերիկո) կղզուց, որի մոտ նա ծնվել է ծովի փրփուրներից և որտեղ հատկապես պաշտվել է։
101. Լիա— Հակոբ նահապետի առաջին կինը, ոչ գեղեցիկ, բայց բեղմնավոր, սիմվոլն է գործունյա կյանքի։
104. Հռաքել— Լիայի քույրը, նահապետի երկրորդ կինը, գեղեցիկ, բայց ամուլ, սիմվոլն է հայեցողական կյանքի։
115. Քաղցր պտուղը— երկրային իսկական երջանկությունը, որի սիմվոլն է երկրային դրախտը։
127. Հուրն անցավոր ու անանց— ժամանակավոր և հավերժական կրակի բոցերը, Քավարանի և Դժոխքի տանջանքները։
135. Այստեղ հողում անում են ինքնին, առանց մարդու կողմից սերմանվելու և մշակվելու, ինչպես առասպելական ոսկեդարում (Օվիդ. «Այլակերպ.» Ա, 101—102)։
136. Նրա— Բեատրիչի։
139. Դու այլես ինձնից խոսք մի սպասիր— Վիրգիլիոսը Դանտեից բաժանվում է լոկ Բեատրիչի երևալու պահին («Քավ.» Լ. 22—57), բայց այս պահից սկսած նա մնոց ընկեր է։
142 Աչդ պոսկ ու բաց եմ ցնում ֆո գլխին— այժմ քեզ հռչակում եմ լիակատար տերը քո գլխի։

ԵՐԳ ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ

2. Աստվածային անտառը— *Եղեմի այս անտառը հակապատկերն է «մթամած... վայրի, դժնի ու մռայլ անտառի» (Դժ.», Ա, 3—6)։*

19. Քիսսի *(ներկայումս* Classe *հնում* Classis)— *հռոմեական կայսրության ժամանակ ավան ու նավակայան Ադրիական ծովի ափին, Ռավեննայից հարավ։*

21. Եվդոս— *հողմերի արքան, որը նրանց փակում է քարանձավի մեջ։*

25. Խոր մի գետ— *Լեթե գետը (տտ. 121—133)։*

28. Երկրի ջրերն ամենից ցինչ ու զուլալ— *Դանտեն հավանաբար նկատի ուներ ռավեննական սոճաստանով հոսող վճիտ ջրերը։*

39. Մի կին...— գեղանձնյա— *սա Մաթելդան է, որին հանձնարարված է Դանտեին ուղեկցել և կատարել որոշ անհրաժեշտ ծիսակատարություններ երկրային դրախտում։*

49—51. Պրոզերփին— *Կերերեի ջահել ու չքնաղ դուստրը, որին Պլուտոնը առևանգեց և իր կառքով տարավ Դժոխք (Օվիդ. «Այլակերպ.», 5, 385—408)։*

71—72. Բայց Հելլեսպոնտն, ուր Քսերքսեսը պարտվեց...— *պարսից թագավոր Քսերքսեսը 480-ին (մ. թ. ա.) մի մեծ բանակով Հելլեսպոնտը (Դարդանելի նեղուցը) անցավ նավակամուրջների վրայով, Հունաստանը նվաճելու և համաշխարհային տիրապետություն հաստատելու համար, բայց, ամոթալի պարտություն կրելով Սալամինայի մոտ, հարկադրված եղավ խուճապահար փախուստի դիմել նույն Հելլեսպոնտով։*

73—75. Լեանդրոսը ավելի չէր անիծել... — *Լեանդրոսը ավելի չէր անիծել Հելլեսպոնտը, բան ես անիծեցի այդ գետակը, որը ինձ թույլ չէր տալիս մոտենալու Մաթելդային։ Ըստ ավանդության հույն երիտասարդ Լեանդրոսը, որ բնակվում էր Հելլեսպոնտի ասիական ափին, այցելելու համար իր սիրուհուն, որ բնակվում էր հակադիր ափին, ամեն գիշեր լողալով անցնում էր նեղուցը, բայց երբեմն ծովի ալեկոծությունը անհնարին էին դարձնում անցումը նեղուցով։*

80. «Որախ արարեր զիս, Տէր, լարարածս քո, և ի գործս ձեռաց քո ցընծացայց» (սաղմոս ՂԱ, 5)— *սաղմոսի այս խոսքերն են պատճառ Մաթելդայի ժպիտի և ուրախության։*

85—87. Ջուրն ու սոսափն անտառի...— *Դանտեն ներքևի բոլորակում Ստատիոսից իմացել էր («Քավ.» ԻԱ, 43—54), որ Քավարանի դռնից վեր մթնոլորտային փոփոխություններ չեն լինում, իր այդ իմացածին հակասում է այստեղ, Երկրային դրախտում, ջուր և հողմ (սոսափն անտառի) լինելու փաստը։*

97—102. Այս լեռն այսքան բարձրացել է դեպ երկինք...— *Քավարանի լեռը այսքան բարձրացել է այն պատճառով, որ նրա գագաթին ապրելու սահմանված երջանիկ մարդուն չանհանգստացնեն երկրային գոլորշիները։*

103—108. *Մինչև այստեղ Մաթելդան հաստատում է այն, ինչ Դանտեն լսել էր Ստատիոսից («Քավ.» ԻԱ, 43—54) իսկ հիմա հայտնում է այն ուրույն պատճառները, որոնցից են ծագում հողմերն ու ջրերը Երկրային դրախտում։*

112—126. Ապա Մաթելդան խոսում է ջրի գոյացման պատճառի մասին։

130. Լեթե— *հին բանաստեղծների մոտ Դժոխքի գետերից մեկն է, որ կյանքի չարիքների ու դժվարությունների մոռացում է բերում հոգիներին (հմմտ. «Էնեական» Զ, 714—715 և 748—754)։* Եվնոյե— *Դանտեի հնարած անուն, որ կազմել է Եվ ու նոուս (հուն. բարի միտք, բարի հուշ) բառերից։*

131—132. Եվ ճարկ է նախ...— *և հարկավոր է նախ երկու հոսանքներից էլ խմել ջուրը, որպեսզի նա ազդեցություն գործի, այսինքն մարդուն արժանի դարձնի երկինք բարձրանալու։*

134. Քո պապակը— *գիտենալու քո ցանկությունը, հետաքրքրությունը։*

139—144. Երանի որոնք ի վաղնջյան երգեցին...— *հին դասական բանաստեղծները, հատկապես Օվիդիոսը, որը իր «Այլակերպության» Ա գրքում նկարագրել է առասպելական ոսկեդարը։*

ԵՐԳ ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ

3. «Երանի այն մեզաց եղն թողութիւն, և ծածկեցան ամենայն յանցանք նորա»— *սաղմոս ՂԱ, 1։*

17. Ճայթռեց մի լույս— *այս լույսը ծագում է յոթը վառ աշտանակներից (տ. 50)։*

25. Երկինքն ու երկիրը— *բոլոր արարածները։*

27. Ձեռնդուրժեց մնալու մի ֆոդի տակ— *չհանդուրժեց մնալու բարու և չարի ճանաչողության թույլատրված սահմաններում։*

37. Սուրբ Կույսեր— *Մուսաներ։*

40. Հելիկոն— *Պառնասի գագաթը։*

41. Ուրանիա— *գերբնական գիտության մուսան։* Իր խմբի հետ— *իր ընկերների, մյուս Մուսաների հետ։*

47. Հաճույ առարկան կամ, *ինչպես սխոլաստիկներն էին ասում,* հանուր զգալին (sensibile comune) *այն է, որ կարող է ընկալվել մի քանի զգայարաններով և տեղիք տալ թյուրիմացությունների։*

50. Աշտանակներ են դրանք— *այս յոթ վառ աշտանակները կամ ջահերը, պատկերում են «Աստուծոյ յոթ հոգիները» (Հայտ. Դ, 5), որոնցից բխում են Սուրբ Հոգու յոթ պարգևները՝ իմաստություն, հանճար, խորհուրդ, զորություն, գիտություն, աստվածապաշտություն, աստվածավախություն (Եսայի ԺԱ, 2—3)։*

61. Կինը— *Մաթելդան։*

65. Անձինք— *քանչորս ծեր այրերը (տ. 83)։*

78. Արփին կամար, Դելիան պսակ է կազմում— *արևը կազմում է իր ծիածանը և Դելիան (լուսինը) իր պսակը։ Դելիան մականունն է Դիանայի, որ նույնացված էր լուսնի հետ (հմմտ. «Քավ.» Ի, 130—132)։*

83. Քանչորս ծերեր— *խորհրդանշում են հին Կտակարանի գրքերը։*

86—87. «Օրհնյալ ես դու դստերաց մեջ Ադամա...»— *այս օրհներգը հարություն է եղիսաբեթի խոսքերի ի փառաբանություն Մարիամի (Ղուկ. Ա, 42)։*

92. Չորս կենդանի— *չորս Ավետարանները, ըստ ավանդաբար ընդունված սիմվոլի։*

94. Վեց թև— *վեց թևերը սերովբեների որոշիչ նշանն էին (հմմտ. Եսայի, Զ, 2)։*

96. Արգոս— *Իոյի բազմաչվի պահապանը, որին խաբեց ու սպանեց Մերկուրը (հմմտ. Օվիդ. «Մյլակերպ.» Ա, 622—723. «Քավ.» ԼԲ, 65)։*

105. Հովհաննեսը թևերն հաշվում է ինձ պես— *Հովհաննես ավետարանիչը իր «Հայտնության» մեջ կենդանիների թևերն ինձ պես հաշվում է վեց, և ոչ թե չորս, ինչպես է եզեկիելի մոտ։*

107. Երկանիվ կառք հաղթական— *հաղթական կառքը խորհրդանշում է եկեղեցին, իսկ երկու անիվները՝ երկու կտակարանները, որոնց վրա հենվում ու շարժվում է եկեղեցին։*

108. Գրիֆոն (*արծվի գլխով ու թևերով առյուծ, արծվառյուծ*)— *խորհրդանշում է Քրիստոսին, որի մեջ միաձուլված են մարդկային և աստվածային բնությունները։*

115—116. Ափրիկեցու կառքը կամ Օգոստոսինը...— *այն շքակառքերը, որոնք գործածվել են Հռոմում Սկիպիոն Աֆրիկացու և Օգոստոս կայսրի հաղթանակների համար։*

117—120. Արևի կառքը...— *կառքը, որ անճարակ կերպով ղեկավարվելով Ֆայեթոնից, այրվեց երկրի աղաչանքներից խղճահարված Զևսի ձեռքով («Դժ.» ԺԷ, 106—108)։*

121—129. Երեք կին— *անձնավորում են աստվածաբանական երեք առաքինությունները՝ Սերը (վառ կարմիրը), Հուրը (զմրուխտ կանաչը) և Հավատը (ձյուն սպիտակը)։*

130—132. Չորս կին— *անձնավորում են չորս հիմնական բարոյական առաքինությունները՝ Արդարությունը, Արիությունը, Ժուժկալությունը և Խոհեմությունը, սրանց ղեկավարն է վերջինը, որ երեք աչքանի է։*

133—141. Երկու ծերուկ— *մեկը Ղուկաս ավետարանիչն է, որին Պողոս առաքյալը անվանել է «սիրելի բժիշկ» (Կող. Դ, 14), այստեղ ներկայացված է իբրև հեղինակ և խորհրդանիշ «Գործք Առաքելոցի»։ Մյուսը Պողոս առաքյալն է, հեղինակն ու խորհրդանիշը՝ «Թղթերի»։ Ավանդաբար ներկայացված է սրով։*

142. Զորս անձ— *խորհրդանշում են Պետրոս, Հովհաննես, Հակոբոս և Հուդա առաքյալների կաթողիկյա «Թղթերը», սրանք խոնարհ, համեստ տեսք ունեն, քանի որ նվազ կարևոր և նվազ ծավալով են, քան մյուս «Թղթերը»։*

143—144. Վերջում մենակ մի ծերունի էր գալիս— *թափորի վերջում մենակ գալիս է «Հայտնությունը», նոր Կտակարանի վերջին և միակ մարգարեական գիրքը։*

145. Այս յոթ հոգին— *վերջին հիշվածները (տե՛ս. 134, 142 և 143)։*

ԵՐԳ ԵՐԵՍՈՒՆԵՐՈՐԴ

11. «Եկ, հարսն, *ի Լիբանանէ, եկ այսր ի Լիբանանէ» («Երգ Երգոց» Դ, 8)— այս կոչը ուղղված է Բեատրիչեին։*

13. Վերջին կոչը— *վերջին հրավերը վերջին դատաստանի օրում։*

18. Հավերժ կյանքի բանբերները— *հրեշտակները։*

19. «Օրհնյալ որ գայիս»— *բառերն են, որոնցով հրեաները ողջունեցին Քրիստոսի գալուստը Երուսաղեմ (Մատթ. ԻԱ, 9)։ Այս բառերը դարձյալ ուղղված են Բեատրիչեին։*

21. «Նուշանս ածէ լիաբուռն»— *«Էնեականի» բառերն են (Զ, 883), որոնք Անքիսն արտասանում է ի պատիվ Մարշելլոյի։*

31. Մի կին տեսա ձիրեանով պսակված— *Բեատրիչեն է։*

34. Վաղուց ի վեր— *Բեատրիչեի մահից (1290) անցած տասը տարիներում։*

48. Ճանաչում եմ ես նշանները հին բոցի— *«Էնեականի» բառերն են (Դ, 23)։ Իր սիրո խոստովանությունը Վիրգիլիոսին նույն Վիրգիլիոսի բառերով, այն բազմաթիվ եղանակներից մեկն է, որով Դանտեն հայտնում է իր սրտակցությունը իր քաղցր հոր ու վարպետի հետ։*

52. Այն բոլորը— *Երկրային դրախտի այն բոլոր գրաշալիքները։*

53. Դեմքը՝ ցողով լվացված— *տես «Քավ.» Ա, 121—129։*

68. Մեներվայի ոստերով— *ձիթենու ճյուղերով (տ. 31)։*

83—84. «Ով տէր, ի քեզ յուսացայ»— *Լ սաղմոսի սկզբի բառերն են։*

85—90. Իտալիո ողնաշար— *Ապենինյան լեռնաշղթան։* Սլավոնիա— *Խորվաթիա, որ գտնվում է Իտալիայի հյուսիս-արևելքում։* Սավերազուրկ աշխարհ— *Աֆրիկա։*

91—99. Այսպես եղա մինչև երգելը նրանց...— *Նախքան հրեշտակների երգեցողությունը Դանտեն ներքնապես քարացել ու սառել էր, դարձել էր գրեթե կարծրացած ձյուն։*

100—145. *Բեատրիչեն անհողդողդ իր խստության մեջ, այժմ խոսքն ուղղում է հրեշտակներին, այն դիտավորությամբ, սակայն, որ լսելի ու հասկանալի դառնա Դանտեին, որին են վերաբերում այդ խոսքերը։*

109—111. Ազդեցությամբ աստղերի— *Դանտեն ծնվել էր Եկվորյակների համաստեղության տակ, որը նրա մեջ հակում էր առաջացրել դեպի գիտությունն ու գրականությունը (հմմտ. «Դժ.» ԺԵ, 55—60. «Դր.» ԻԲ, 112—120)։*

115. Նոր կյանքում— *այսինքն՝ երիտասարդ հասակում (հմմտ. «Նոր կյանք», ԻԳ, 17)։*

121—123. Ես միառժամ նրան նեցուկ կանգնեցի...— *1274 թվից, երբ Դանտեն առաջին անգամ տեսավ Բեատրիչեին, մինչև 1290 թիվը, երբ վախճանվեց Բեատրիչեն։*

124. Շեմին երկրորդ հասակի— *երիտասարդության սկզբին, որ, ըստ Դանտեի («Խնջույթ» Դ, 24), պատանեկության է հաջորդում 25 տարեկանի ավարտին։ Այդ տարիքում վախճանվեց Բեատրիչեն։*

126. Հանձնվեց այլ կյանքի— *այլ նախասիրություններ։ Ակնարկում է այն «ազնիվ կնոջ» («Նոր կյանք» Լ6—Լէ), որ, ըստ «Խնջույթում» (Բ, 12) տրված այլաբանական մեկնության, խորհրդանիշն է փիլիսոփայական պարապմունքների, որոնց Դանտեն նվիրվեց՝ սիրտիանք գտնելու համար Բեատրիչեի մահվանից։ Ակնարկում է նաև Դանտեի ուրիշ նախասիրություններ (հմմտ. «Քավ.» ԼԱ, 59—60)։*

138. Յույց տալ նրան հոգիներին մեղավոր— *ցույց տալ նրան դատապարտյալների վիճակը, նրա մեջ սարսափ առաջացնելու համար մեղքից ու մոլորությունից։*

140. Նրան— *Վիրգիլիոսին։*

ԵՐԳ ԵՐԵՍՈՒՆՄԵԿԵՐՈՐԴ

19. Իմ բեռից— *խռովքի ու վախի (տ. 13) բեռից։*

23. Այն Բարին— *ճշմարիտ, գերագույն բարին։*

42. Շեղրին հեսանն ճակառակ է պտտվում— *պատկերը առնված է հեսանողի անվից, որը պտտվելով սուրի շեղրին հակառակ ուղղությամբ, բթացնում է այն, փոխանակ սրելու։ Ուզում է ասել՝ անկեղծ խոստովանությունը փոխանակ սրելու, բթացնում է երկնային արդարադատության սուրը։*

45. Սիրեննեի— *կեղծ ու պատիր բարիքների, որոնք իրենց գրավիչ տեսքով հրապուրում, գայթակղեցնում, մոլորեցնում են մարդուն (հմմտ. «Քավ.» ԺԹ, 19)։*

57. Ոգի զուտ— *զուտ ոգի՝ մնայուն գեղեցկությամբ։*

68. Մորուրդ վեր բարձրացուր— *Բեատրիչեն փոխանակ ասելու դեմքդ, առում է մորուքդ, հասկացնելու համար Դանտեին, որ նա այլևս երեխա չէ։*

69. Ինձ ճայելով դու ավելի կզգաս ցավ— *ինձ նայելով կրկնապատկվի քո վիշտը, որովհետև տեսնելու ես, թե ինչպիսի երկնային գեղեցկություն դու մոռացար, ընկնելով երկրային խաբուսիկ բարիքների հետևից։*

73. Ցարբասի երկրից— *Լիվիայից (Աֆրիկա), ուր թագավորում էր Ցարբասը։*

81. Այն Գազանը, որ մի աճն էր երկրնույթ— *Գրիֆոնը (հմմտ. տ. 122, «Քավ.» ԻԹ, 108, ԼԲ, 26 և 96)։*

90. Գիտե նա, ով դրա պատճառն էր եղած— *գիտե Բեատրիչեն, որը իր հանգիմանություններով և ապա իր տեսքով պատճառն էր եղել իմ ուշաթափության։*

92. Կնոջ մեծավոր— *Մաթելդային («Քավ.» ԻԸ, 39—40)։*

98. «Ցողեա յիս մշտկաւ և սուրբ եղէց, լուա և քան զձիւն սպիտակ եղէց» *(սաղմոս Ս, 9)— սաղմոսի այս խոսքերն արտասանվում են այն ժամանակ, երբ քահանան օրհնյալ ջուր է ցանում խոստովանող մեղավորի վրա, որին արձակում է։*

104. Չորս կանանց— *չորս գլխավոր բարոյական առաքինությունների (տես «Քավ.» ԻԹ, 130—132 ծանոթ.)։*

106. Նիմֆաներ եմք այստեղ, երկնում՝ վառ աստղեր— *այստեղ երկայանում ենք հավերժահարսների տեսքով, իսկ երկնքում՝ աշխարհը լուսավորող աստղերի տեսքով (հմմտ. «Քավ.» Ա, 22—24 «չորս աստղերը»)։*

107—108. Բեատրիչեն աշխարհ չեկած տակավին...— *Բեատրիչեն իբրև կին «բարության, աղնվության տիպար կին է» (հմմտ. «Դժ.» Բ, 76. «Նոր կյանք» Ժ, 2), իբրև խորհրդանիշ՝ երկայացնում է Հայտնության ճշմարտությունները, որոնց դալուստը նախաքրիստոնեական աշխարհում նախապատրաստվեց չորս գլխավոր առաքինությունների կողմից։*

109—110. Երեք կանայք— *մյուս երեք կանայք՝ աստվածաբանական առաքինությունները (տես «Քավ.» ԻԹ, 121—129), որոնցով մարդ հասկանում է Հայտնության ճշմարտությունները։*

122—123. Այսպես երկկերպ այն Գազանը...— *այսպես Գրիֆոն-Քրիստոսը (աստվածամարդը) մերթ աստվածային, մերթ մարդկային կերպարանքով էր ցոլում Բեատրիչեի աչքերում։*

138. Քո ողորկած գեղեցկությունը երկրորդ— *քո բերանը։ Բեատրիչեի առաջին գեղեցկությունը աչքերն են, որոնք Դանտեն արդեն տեսավ (տտ. 115—120)։*

139. Օ՛ ցոլացում ճավերժական վառ լույսի— *Բեատրիչեն երեսից քողը հանում է և ճառագայթում, անդրադարձնելով աստվածային լույսը։*

2. **Ոմ** տասնամյա ծառավը— *տաս տարվա կարոտը Բեատրիչեից։*

6. **Սիրացանցով իր նախկին**— *այստեղ Դանտեն վերհիշում ու վերզգում է ամբողջ ուժով հին սերը հանդեպ երիտասարդ երկրային կնոջ։*

8. **Երեք դիցուհիները**— *երեք աստվածուհիները, աստվածաբանական առաքինությունները պատկերող երեք կանայք (հմմտ. «Քավ.» Իթ, 121—129)։*

14. **Բաղդատմամբ այն լույսին վառ**— *համեմատած Բեատրիչեի դեմքից ճառագայթող շլացուցիչ լույսին (հմմտ. «Քավ.» ԼԱ, 139)։*

28. **Ջրեղաղ գինը**— *Մաթելդան։*

37. **«Աղամ» մոմնջեցին**— *ողբացին ու նզովեցին առաջին մեղքը։*

38. **Մի ծառ**— *սա բարու և չարի գիտության ծառն է, որ աստված դրել է Եդեմում (հմմտ. «Ծննդ.» Բ, 8—9 և 17, Գ, 3)։*

43. **Փառք թեզ, Գրիֆոն, որ չես կտցում ծառն այս լավ**— *այստեղ Քրիստոսը (Գրիֆոնը) դրվատվում է, որ վիրավորանք չի հասցրել աստվածային արդարության։*

48. **Այսպես պահեմ հիմքը ամեն արդարի**— *շրջաբանությունն է այն խոսքի, որ Քրիստոսն ասաց Հովհաննես Մկրտչին. «այսպէս վայել է մեզ լնուլ զամենայն արդարութիւն» (Մատթ. Գ, 15)։*

53—54. **Երբ մեծ լույսը...**— *զարնանը։*

56—57. **Նախքան արևն իր ճծոյզները լծեր...**— *նախքան արևն ընթացակցեր ցուլ համաստեղության, որի մեջ է նա մտնում, բաժանվելով Խոյից։*

65—66. **Աչեզ աչքերն Արգոսի...**— *հարյուր աչքերը Արգոսի, Խոյի հսկողը պահապանի։*

73—84. **Ինչպես Պետրոսն, Հակոբոսն ու Հովհաննեսն...**— *ինչպես Պետրոս, Հակոբոս և Հովհաննես առաքյալները երբ հանգիստես եղան, Քրիստոսի (խրճոռեանու պտղի. հմմտ. «Երգ երգոց» Բ, 3) այլակերպությանը թաքոր լեռան վրա, ուշաթափվեցին. և ապա, ուշքի գալով իրենց Տիրոջ ձայնից, տեսան որ իրենց ընկերներից երկուսը, Մովսեսն ու Եղիան, չքացել են և մնացել է միայն իրենց Տերը՝ իր սովորական տեսքով (հմմտ. Մատթ. Ժէ, 1—8), այսպես Դանտեն, ոթափվելով, իր մոտ տեսնում է միայն Մաթելդային և չի տեսնում Բեատրիչեին կառքի վրա, Գրիֆոնին և թափորի մյուս անդամներին։*

88. **Կանանց**— *յոթ Նիմֆաներին (յոթ առաքինություններին), որոնցից յուրաքանչյուրը մի վառ աշտանակ էր բռնել իր ձեռքին (տող. 97—98)։*

102. **Այն Հռոմում**— *երկնային Հռոմում, Դրախտում։*

112—117. **Զնսի թշուն**— *արծիվը, խորհրդանիշն է կայսրության, որ, ծանր վնաս հասցրեց աստվածային արդարությանը (ծառին) և եկեղեցուն (կառքին)։*

118—123. **Աղվես**— *պատկերում է հերետիկոսությունները, որոնց հալածում է Բեատրիչեն՝ ուղղափառ հավատի խորհրդանիշը։*

124—129. **Արծիվ**— *արծիվը, կայսրության խորհրդանիշը, նորից իջնում է կառքի մեջ և այնտեղ թողնում իր փետուրները։ Փետուրները այն հարստություններն են, որոնք կայսրերը պարգևել են եկեղեցուն։*

130—141. **Վիշապ**— *վիշապի պատկերը վերցված է «Հայտնությունից» (ԺԲ, 3—9) և ներկայացնում է սատանային։*

142—147. **Այսպես փոխված կառքը...**— *եկեղեցին հարստության ձեռքբերումով և աշխարհիկ իշխանության հարձուն ձգտումով այլափոխվում, ապականվում է և վերածվում «Հայտնության» մեջ նկարագրված հիվանդին (Ժէ, 1—18)։*

148—160. **Պոռնիկն ու Հսկան** *«մեծ պոռնիկը» խորհրդանիշն է Դանտեի ժամանակներում Հռոմեական եկեղեցու վարքագծի, իսկ Հսկան ֆրանսիական արքունիքն է, որին էր ենթարկվել պապականությունը այդ ժամանակ։*

ԵՐԳ ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ

3. **«Ասուած, մտին հեթանոսք ի ժառանգութիւն քո, պղծեցին զտաճար սուրբ քոյ արարին զերուսաղեմ որպես զհիւղս մրգապահաց (սաղմոս ՀԺԹ, 1)— սաղ-**

մոսի այն խոսքերով յոթ նիմֆաները (յոթ առաքինությունները) ողբում են Երուսաղեմի տաճարի կործանումը։

6. Խաչին ընդառաջ— խաչի առջև, որի վրա տանջվում ու մահանում էր Քրիստոսը։

10—12. «Փոքր մի և ոչ երես զիս տեսանէք, և ապա սակաւիկ մի՝ և զիս կրկին տեսանէք» (Հովհ. ԺՁ, 16)— Քրիստոսի խոսքերն են աշակերտներին, հայտնելու համար նրանց, որ ինքը շուտով մահանալու է և կարճ ժամանակ անց հարություն է առնելու։

13—15. Ապա յոթին անցկացրեց իր առջև— Բեատրիչեի կամքով բոլորը հեռանում են ծառից թափորի կարգով— առջևից գնում են յոթ նիմֆաները իրենց ջահերով, ապա դալիս է Բեատրիչեն, վերջում՝ Դանտեն, Մաթելդան և Ստատիոսը։

34. Այն կառքը...— եկեղեցու կառքը, որի հատակը մասամբ ջարգեց վիշապը։

35. Եղավ և չէ (հմմտ. «Հայտ.» ԺԷ, 8)— եկեղեցին ընկավ այնպիսի ապականության և գերության մեջ, որ կարծես այլևս գոյություն չունի։

37—39. Արծիվը, ur կառին թողեց իր փետուրք...— կայսրությունը (արծիվը), որ եկեղեցուն շնորհեց հարստություններ (փետուրներ), որոնց հետևանքով վերջինս նախ վերածվեց ճիվաղի, ապա ավար դարձավ հսկային («Քավ.» ԼԲ, 124—160), մշտապես զրկված չի մնա օրինական ժառանգից։

43—45. Հինգհարյուր Տասնեհինգը երկնառաք...— մեկնիչների համար պարզ չէ, թե ով է երկնառաք այս անձը (Հինգհարյուր Տասնեհինգը), որ դալու սպանելու է պոռնկացած ավազակին և հսկային («Քավ.» ԼԲ, 148—160)։ Հավանական են գտնում, որ Դանտեն այստեղ նկատի ունի Հենրիկ է կայսրին։ Արդարև Դանտեն իր նամակում Հենրիկ է-ին կոչ է անում ոչնչացնել Ֆրանսիայի թագավորին («Գողիաթին») և վերահաստատել քրիստոնյա ժողովուրդների ազատությունը։

46. Սֆինքս— կանացի դեմքով և վայրագ բնությամբ առասպելական հրեշ, որ բնակվում էր Թեբեի մոտակայքում և սպանում իր առաջադրած հանելուկը չլուծող անցորդներին. այդ հանելուկը ի վերջո լուծեց Էդիպը (հմմտ. Օվիդ. «Մետամորֆոզներ» է, 759—761 և Ստատ. «Թեբեական» Ա, 66—67)։ Թեմիս— դիցաբանական անձ, Ուրանի և Երկրի որդին, որի պատգամները մթամաստ էին (հմմտ. Օվիդ. «Մետամորֆ.» Ա, 347—415)։

49—51. Բայց դեպքերը Նայադներ են լինելու...— բայց մոտալուտ իրադարձությունները կլուծեն իմ խոսքերի մեջ թաքնված հանելուկը։

57. Որ մատնվեց երկու անգամ ավարի— ծառը երկու անգամ ավարի մատնողներն են կամ արծիվն ու հսկան, կամ Ադամն ու հսկան, կամ Ադամն ու արծիվը։

61—63. Կծելով այն, նախամարդը...— այդ ծառի արգելված պտուղն ուտելով, Ադամը ավելի քան հինգ հազար տարի անձկությամբ սպասեց, որ Քրիստոսը դար իր գործած մեղքը քավելու։ Ավելի քան 5000 տարին ստացվում է գումարելով Ադամի ապրած 930 տարիները երկրի վրա («Ծնն.» Ե, 5) և մահից հետո անցկացրած 4302 տարիները Լիմբոսում։

67—69. Էլսա— Առնոյի վտակը, որի ջրերը կրային խավով են պատում որոշ ժամանակ նրանց մեջ մխրճված առարկաները։ Պիրամ— տես «Քավ.» ԻԷ, 37—39 ծանոթ.։

77—78. Այնպես ինչպես ցույց են տանում ուխտական...— Պաղեստինից վերադարձող ուխտավորները արմավենու տերևներով զարդարված ցույց էին տանում իրենց հետ իրրև հիշատակ և վկայություն, որ իրենք եղել են սրբազան երկրում։

96. Խմեցիր դու Լեթեն— Լեթեն ջնջում է միայն մեղքերի ու մոլորությունների հիշողությունը։

103—104. Ավելի վսա և ավելի ճամբաքայլ...— արևը միջօրեականում էր. կեսօր էր։

112—113. Կարծես տեսա գետերն Եփրատ ու Տիգրիս...— Դանտեն տեսնում է Լեթե ու Եվնոյե գետերի ընդհանուր ակունքը. այդ գետերը նրան երևում են ինչպես Եփրատն ու Տիգրիսը, որոնք, ըստ բիբլիական ավանդության, եդեմական գետեր են և ծագում են միևնույն ակունքից («Ծնն.» Բ, 10—14)։

141. Արվեստի սանձ— *արվեստի կանոնները, հատկապես այն կանոնը, որ պահանջում է համաչափություն պահպանել ստեղծագործական երկի մասերի և ենթամասերի միջև։*

ԴՐԱԽՏ

ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

1. Փառաձեղ լույսն ամեն շարժման ակունքի— *աստվածային լույսը (հմմտ. «Նամականի» ԺԳ, 61 և 64. «Խնջ.» Գ, 15)։*

4. Այն երկնում— *էմպիրեյում, ամենաբարձր, ամենալուսավոր երկնքում։ Պողոմեոսյան սիստեմի ինը շարժուն երկինքների վրա Դանտեն, հետևելով եկեղեցու ավանդության, դնում է մի նոր երկինք, անշարժ էմպիրեյը (հուն. հրեղեն), աստվածության բնակավայրը։*

13. Ո՛վ Ապոլլոն— *«Դժոխքում» և «Քավարանում» բանաստեղծը օգնության կոչեց Մուսաներին, այստեղ, «Դրախտում»՝ Մուսաների ղեկավար Ապոլլոնին։*

15. Քո դափնին— *դափնին Ապոլլոնի նվիրական բույսն էր, որովհետև հավերժահարս Դափնեն, Ապոլլոնի սիրուհին, այլակերպվեց ու դարձավ դափնի (հմմտ. Օվիդ. «Այլակերպ.» Ա, 452—567)։*

16—18. Յարդ բավ եղավ մի գագաթը Պառնասի— *մինչև հիմա բավական եղավ Մուսաների օգնությունը, այժմ ինձ հարկավոր է նաև Ապոլլոնի օգնությունը։ Պառնաս լեռան երկու գագաթներից մեկը՝ Նիսան, հատկացված էր Մուսաներին, մյուսը՝ Կիրրան, Ապոլլոնին։*

21. Երբ մրցման մեջ դուս Մարսիային հաղթեցիր— *Ապոլլոնը, երաժշտական արվեստը ցուցադրելու մրցման հրավիրվեց սատիր Մարսիայից և հաղթեց՝ նրան պատժելով հանդգնության համար (հմմտ. «Այլակերպ.» Զ, 382—400)։*

31. Աստվածությունդդ դելֆյան— *Ապոլլոնը, որի պաշտամունքը կատարվում էր Դելֆում։*

33. Տերևին պենեյան— *պեննեյան տերև է անվանում դափնին։*

34. Փոքրիկ կույծին հետեում է մեծ հրդեհ— *համեստ հանճարի փորձին կարող են հաջորդել մեծահանճար բանաստեղծների գործեր։*

36. Խնդրարկուներ— *բանաստեղծական ներշնչում հայցողներ։* Կիրրա— *(տես տող. 16—17 ծանոթ.)։ Այստեղ գործածված է Ապոլլոնի փոխարեն։*

37—48. Թեմայի առաջադրանքին և Մուսաների կոչին հետևում է, ինչպես Քավարանի առաջին երգում, ճանապարհորդության շարունակության սկզբնական պահի նշումը, որ արտահայտված է, ինչպես ուրիշ անգամներ, աստղաբաշխական շրջաբանությամբ։

39. Ուր չորս ծիրերն երեք խաչեր են կազմում— *չորս ծիրերն են հասարակածը, էկլիպտիկան, գիշերահավասարի կոլյուրը և հորիզոնը, առաջին երեքը հատում են չորրորդը, կազմելով երեք խաչեր։*

43. Աստ.— *Քավարանի հորիզոնում։* Անդ— *Երուսաղեմի հորիզոնում։*

44—45. Եվ քիչ առ քիչ այս կիսագունդը համակ...— *ժամանակի ընթացքում ամբողջ հարավային կիսագունդը լուսավորվել էր արևի ճառագայթներով, մինչդեռ հյուսիսային կիսագունդը ծածկվել էր գիշերային խավարով։*

48. Արծիվն անգամ երաս այնպես չէր ճայած— *բոլոր ավանդության, արծիվը իր ձագերին վարժեցնում է նայելու արևի սկավառակին (հմմտ. Լուկան, «Ֆարսալիա» Թ, 902—905. «Դր.» Ի, 31—33)։*

49. Եվ ինչպես որ շողը ծագում է շողից— *ինչպես անդրադարձ ճառագայթը ծագում է ուղղաձիգ ճառագայթից։*

68—69. Գլավկ— *բեոոտեացի առասպելական ձկնորս, սա տեսնելով, որ իր բռնած ձկները վերակենդանանում էին ինչ-որ խոտ ուտելով, ինքն էլ փորձեց ու-*

տել և իսկույն կերպարանափոխվեց ու դարձավ ծովային աստված (հմմտ. Օվիդ. «Այլակերպ.» ԺԳ, 898—968)։

78. Հնչյուններով իրենց մեղմ ու դաշնավետ— ըստ Պլատոնի, երկնագնդերը իրենց հոլովույթի ժամանակ առաջացնում են ներդաշնակ մի համանվագ (հմմտ. «Քավ.» Լ, 93. «Դր.» Զ, 126)։

90. Եթե բեգնից այդ կարծիքը բոթափես— եթե քեզնից թոթափես թյուր կարծիքդ, թե դու իբր դեռ երկրի վրա ես։

99. Թեթև տարերք— օդն ու հուրը կամ նրանց ոլորտները։

106. Վեհ էակները— իմացական և բանական էակները։

109. Գոյակները ամենայն— բոլոր շնչավոր և անշունչ գոյացությունները կամ արարածները (տ. 103)։

122—123. Երկինքն այն...— էմպիրեյը (տ. 4), որի ներքև պտտվում է ամենասրընթաց երկինքը կամ նախաշարժումը։

124. Այնտեղ— էմպիրեյ։

140. Անխոչ— ազատ մեղքերի ու մոլորությունների խոչընդոտից։

ԵՐԳ ԵՐԿՐՈՐԴ

1—6. Օ, դուք, որ փոքր ու երեռուն մակույկով...— այս տողերով բանաստեղծը ազդարարում է ընթերցողներին, որ այն նյութը, որի մասին ինքը խոսելու է «Դրախտում», բարդ ու խոր է, և նրանք չեն կարողանա լիովին հասկանալ այն, առանց փիլիսոփայական և աստվածաբանական դիտելիքների պատշաճ պատրաստության։

7. Այստեղ ոչ ոք չի ճավարկել տակավին— Դանտեից առաջ, իհարկե, եղել են Դրախտի մասին բանաստեղծական երկեր, բայց բանաստեղծը կամ ծանոթ չէր և կամ առանձին արժեք չէր տալիս դրանց։

8—9. Ինձ վարում են Ապոլլոնն ու Միքեռվան...— դժվարին ձեռնարկում Դանտեին ղեկավարում և օգնում են բանաստեղծական բարձր երևակայությունը (Ապոլլոնը), իմաստությունը (Միքեռվան) և արվեստը (Մուսաները)։

30. Առաջին երկնագունդը— լուսինը։

41—42. Այն էությունը...— Քրիստոսը։

43. Անդ— երկնքում։

45. Ճշմարտությունն առաջին— աքսիոմաները։

49. Բայց ասացեք՝ ի՞նչ են թծերն այս մարմնի— լուսնական մարմնի թծերի հարցը կապվում էր (ոչ միայն Դանտեի, այլ ամբողջ միջնադարյան մտածողության մեջ) երկնային ազդեցությունների ավելի լայն հարցի հետ. հետևաբար այստեղ Բեատրիչեի լուծած հարցը կապվում է «Դրախտի» առաջին երգում շոշափված հարցի հետ և վերջինիս լուսաբանումն ու լրացումն է։ Դրախտի շեմին Դանտեն իրեն նպատակ է դրել բացահայտել ազդեցությունների կոսմոլոգիական սիստեմը, և, ինչպես առաջին երգում ներկայացրել էր բոլոր գոյակների փոխադարձ կարգը և էակի բարձրացումը դեպի վեր, այս երգում ներկայացնում է աստվածության ճառագայթումը բարձրից դեպի ցած։

51. Առասպելներ հյուսելու շուրջ Կայենի— ժողովրդի երևակայությունը լուսնի թծերի մեջ տեսնում էր Կայենին փշերի խրձով (հմմտ. «Դժ.» Ի, 126)։

59—60. Այստեղ լույսի տարբեր տեսքերը, ըստ իս...— լուսնի մակերեսի վրա երևացող տարբեր աստիճանի լուսավորությունները, իմ կարծիքով, հետևանք են լուսնի տարերքի առավել կամ նվազ խտության։ Իր այս կարծիքը Դանտեն վերցրել է ԺԲ դարի արաբ իմաստասեր Ավերրոյից։

82. Դա չէ— արևի խավարման ժամանակ արևային ճառագայթները չեն թափանցում լուսնի միջով։ Որևէմն ճիշտ չէ առաջին ենթադրյալ պարագան, ըստ որի լուսինը նոսր ու թափանցիկ է իր ամբողջ զանգվածով։ Ճիշտ չէ նաև երկրորդ վարկածը, այսինքն երկրորդ ենթադրյալ պարագան, ըստ որի լուսնի զանգվածի մեջ կան նոսր ու խիտ հաջորդական խավեր։

90. Այն ալակուց, որի ետևն է կայար— հայելուց։

107. Ձյան գոյնոյությունը— ջուրը։

112—114. Աստվածությանն անշարժական երկնի տակ...— *էմպիրեյի, բարձրագույն անշարժ երկնքի («Դր.» Ա, 4 և 122) տակ պտտվում է ինն երրորդ երկինքը, Նախաշարժունք, որի ազդեցությունն է կրում տիեզերքի ամեն գոյացություն։*

115. Հաջորդ երկինքը— *ութերորդ կամ աստղավոր երկինքը։*

118. Մյուս երկինքները— *մյուս ստորակա յոթ երկինքները կամ երկնագունդները։*

125. Քո ցանկացած ճշմարտությունը— *քո հետամտած ճշմարտությունը լուսնի բծերի պատճառի մասին։*

128. Շարժիչների եռանյալ— *շարժիչ ոգիների կամ հրեշտակների, որոնց միջոցով են երկնագնդերը շարժվում և գործում իրենց ազդեցությունները (հմմտ. «Դժ.» է, 73—76)։*

130. Երկինքն այն— *տես տ. 115 ծանոթ.։*

143. Զուլված ուժը— *երկնային թանկագին մարմնի հետ (տ. 141) միաձուլված շարժիչ ոգու ազդեցությունը։*

145—148. Այդ ուժից, *այսինքն՝ շարժիչ ոգու այդ ներգործությունից են առաջանում լուսավորության այլազանությունները երկնային մարմինների միջև, ինչպես և միևնույն մարմնի տարբեր մասերի միջև, ինչպես է լուսնի պարագան իր բծերով (պիտ այն եզրակացությունը, որին Դանտեն հիմա կարող է հասնել անձամբ. տ. 126)։ Շարժիչ ոգուց հաղորդված այդ ուժը կամ ներգործությունն է այն իսկական պատճառը, որը որոշում է լույսի չափը, մութն ու պայծառը, նայած նրա ներգործության չափին։*

ԵՐԳ ԵՐՐՈՐԴ

1. Արևն այն— *Բեատրիչեն։*

2. Քաղցր դեմքը ճշմարտության գեղեցիկ— *այն ճշմարտության, որ Բեատրիչեն ի ցույց դրեց, խոսելով երկնային ազդեցությունների և տիեզերքի համակարգության մասին։*

17—18. Եվ ունեցա ճերեկակ պատրանքը նրա...— *հակառակ պատրանքը Նարցիսի։*

30. Եվ այստեղ են ուխտի խախտման պատճառով— *լուսնի մեջ երևում են աշխարհում իրենց ուխտը ակամա կամ ուրիշների բռնությամբ չկատարած մարդկանց հոգիները։*

46. Կուսական քույր— *միանձնուհի։*

49. Պիկկարդա Դոնատի— *քույրը Ֆորեզեի («Քավ.» ԻԴ, 48. ԻԴ, 10—15) և Կորսոյի («Քավ.» ԻԴ, 82—90). միանձնուհի Սանտա Կիարա վանքում։ Կորսոն բռնությամբ նրան հանեց վանքից և ամուսնացրեց Սեների կուսակցության մոլեռանդ հետևորդ Ռոսելլինո դելլա Տորայի հետ։*

98. Վեն կյանքի և արժանիքի տեր մի կին— *սա Կիարա (կամ Կլարա) դ՚Ասսիզին է, համաքաղաքացուհին սուրբ Ֆրանկիսկի («Դր.» ԺԱ, 43—117), որի խորհրդով ու ղեկավարությամբ հիմնեց մի կուսանոց (1212-ին), որ կոչվեց իր անունով։*

101. Փեսայի— *Քրիստոսի, ըստ ավետարանական արտահայտության։*

117. Այդ սուրբ քաղը սրտի խորքում պահեց— *սրտի խորքում միշտ հավատարիմ մնաց իր ուխտին։*

118—120. Կայսրուհի Կոստանցա *(1154—1198)— նորմանների թագավորի վերջին ժառանգը, Հենրիկ Զ կայսրի կինը և Ֆրեդերիկ Բ կայսրի մայրը։ Այստեղ երկրորդ հողմ է անվանում Հենրիկ Զ-ին, Սվեվիայի արքայատոհմի երկրորդ կայսրին (առաջինը նկատի ունի նրա հորը՝ Ֆրեդերիկ Ա Բարբարոսային), երրորդը՝ Ֆրեդերիկ Բ-ին, նույն արքայատոհմի երրորդ կայսրին, որ, ըստ Դանտեի («Խնջույք» Դ, 3), «հոհոմայեցիների վերջին կայսրն է» (հմմտ. «Քավ.» ԼԳ, 37—39 ծանոթ.)։ Հողմ բառով արտահայտում է Սվեվների իշխանության բուռն, բայց վաղանցիկ բնույթը։*

ԵՐԴ ՁՈՐԲՈՐԴ

1—9. *Դանտեի մտքում առաջանում են երկու հարցեր, հավասարապես ծանր ու տանջալի, և նա լռում է, չկարողանալով վճռել թե առաջ ո՞ր հարցով դիմի Բեատրիչին։*

13—15. Բեատրիչեն Դանիելի նիշտ նման...— *Դանիել մարգարեն կարողացավ գուշակել և մեկնել Նաբուգոդոնոսոր արքայի տեսած և մոռացած երազը, այսպիսով հանգստացնելով թագավորի բարկությունը, որից բորբոքված նա հրամայել էր սպանել Բաբելոնի բոլոր իմաստուններին, որոնք չէին կարողացել գուշակել ու մեկնել իր տեսած երազը (Դանիել Բ, 1—45)։ Այսպես Բեատրիչեն գուշակում ու լուծում է Դանտեին հուզող հարցերը։*

19—21. Եթե կամքս հաստատ է...— *եթե կամքս անհողդողդ է բարի նպատակի ձգտման մեջ, ապա ինչպես ուրիշի բռնությունը, որ ինձ թույլ չտվեց հասնելու իմ բարի նպատակին, կարող է նվազեցնել իմ արժանիքը։ Սա Դանտեի մտքում ծագած առաջին հարցն է։*

24. Ինչպես որ դա Պլատոնն էր ուսուցում— *Պլատոնը ուսուցանում էր, որ հոգիները նախքան մարմնանալը բնակվում են աստղերի մեջ, և աստղերին են վերադառնում մարմինների մահից հետո։ Սա երկրորդ հարցն է։*

27. Այն հարցի շուրջ— *երկրորդ հարցի շուրջ։*

28—39. *Բոլոր երանելի հոգիները, ոկսած մեծագույն սրբերից մինչև լուսնի մեջ երևացող հոգիները, բնակվում են էմպիրեյում և եթե նրանք տարբեր երկինքներում են երևում, դա սոսկ տեսանելի և հասկանալի դարձնելու համար է նրանց երանության տարբեր աստիճանները։*

29. Հովհաննեսները երկու— *Հովհաննես Ավետարանիչն ու Հովհաննես Մկրտիչը։*

47. Գաբրիելին, Միքայելին— *երկու հրեշտակապետերին։*

48. Եվ այն մյուսին...— *Ռաֆայել հրեշտակապետերին, որ կուրությունից բժշկեց ծերունի մարգարե Տոբիային։*

49. Տիմեյ— *Պլատոնը «Տիմեյ» վերնագիրը կրող իր տրամախոսության մեջ, ուր խոսվում է հոգիների աստղերին վերադառնալու մասին։*

63. Որ նրանց Ձևս, Մերկուր ու Մարս անվանեց— *որ աստղերին տվեց աստվածությունների անուններ, այսինքն՝ աստղերն աստվածացրեց ու պաշտեց։*

64. Մյուս հարցը— *19—21 տողերում արտահայտված հարցը։*

74. Բռնադատիչի բռնությանը չի օգնել— *բռնադատչի բռնությանը չի նպաստել իր սեփական համաձայնությամբ, տեղի տալով կամ զիջում անելով բռնությանը։*

80. Սրանք— *Պիկկարդան և Կոստանցան։*

83. Լավրենտ— *Գ դարի հռոմայեցի սարկավագ, որին այրեցին կասկարայի վրա։* Մուկիո— *երիտասարդ հռոմայեցի, որ այրեց իր այն ձեռքը, որ վրիպել էր էտրուսկների թագավոր Պորսեննային հարվածելիս։*

94—96. Ես ասացի ինձ— *տես «Դր.», Գ, 31—33։* Առաջին ճշմարտության— *աստծուն։*

97—99. Դու Պիկկարդայից իմացար...— *տես «Դր.», Գ, 115—117։*

103—105. Ալկմեոն— *տե՛ս «Քավ.», ԺԲ, 49—51 և ծանոթ.։*

109—114. Ըստ էության կամքը դեմ է բռնության...— *Բեատրիչեն հարցը լուծում է, տարբերելով բացարձակ կամքն ու պայմանական կամքը. առաջինը բացարձակապես դեմ է բռնությանը, երկրորդը զիջում է բռնությանը, հաշվի առնելով ստեղծված պայմանները։*

115. Հասանքը սուրբ առակի— *Բեատրիչեի բանավարության ընթացքը։*

117. Իմ ծարավը կրկնակի— *երկու հարցերի լուծման իմ փափագը։*

130—132. Ճշմարտության այդ ձգտումից է ծլում...— *այդ ձգտումից է ծլնվում մի տարակույս, որ խթան է դառնում նոր ճշմարտության նվաճման։*

ԵՐԳ ՀԻՆԳԵՐՈՐԴ

10. Այլ բան— *երկրային բարիքը։*

13—15. Դու ուզում ես գիտենալ...— *տե՛ս «Դր.», Դ, 136—138։*

28. Դաշինք են կնքում— *ուխտի միջոցով։*

29. Թանկագին զանձ— *կամքի ազատությունը (տ. 21 և 22)։*

34. Հիմնական հարցը— *որ ուխտը անփոխարինելի է։*

37—39. Սեղանին միշ էլ նստես— *ինձ լսելու համար։* Զոր պատառը, որ կերար— *դժվար նյութը, որ ընդունեցիր։* Օգնություն է դեռ պտեհանչում, որ մարսես— *կարիք ունի լրացուցիչ պարզաբանումների, որպեսզի հասկանաս ու յուրացնես այն։*

44. Զոհի համար— *ուխտի համար, որ մի զոհ է, ինչպես բացատրվեց 28—30 տողերում։*

48. Վերևում— *31—33 տողերում։*

49—51. Հրեից մոտ զոհը հարկ էր կենսական...— *հրեաների մոտ զոհաբերությունը անհրաժեշտ էր իբրև մովսիսական օրենքի բացարձակ պատվեր։*

59—60. Եթե զոհի հին առարկան...— *եթե զոհի նախկին տեսակը իր արժեքով զգալիորեն չի գիջում նոր տեսակին, կամ եթե զոհի նոր տեսակը իր արժեքով զգալիորեն չի գերազանցում նախկինին։*

66. Եփթայե— *Խորայելի դատավոր, որ ուխտեց զոհել նրան, ով առաջինը տնից դուրս կգար, երբ ինքը հաղթանակով վերադառնար ամոնացիների դեմ մղվող մարտից։ Առաջինն իրեն ընդառաջ դուրս եկավ իր միակ դուստրը, և նա իր ուխտը պահելու համար զոհեց իր աղջկան (Դատ. ԺԱ, 1—40 և ԺԲ, 1—7)։*

69—72. Ավագն հույների— *Ագամեմնոնը, որ աստվածներին խոստացավ զոհաբերել իր չքնաղ ու ջահել դուստր Իփիգենիային, եթե նրանք բարենպաստ հողմ ուղարկեին հունական նավատորմի նավարկության համար։ Աստվածները լսեցին նրան, և նա զոհեց իր աղջկան։*

75. Մի կարծեք թե ձեզ կլվա ամեն գուշ— *մի կարծեք թե ամեն ուխտ ընդունելի կլինի և ձեզ կմաքրի ձեր մեղքերից։*

93. Երկրորդ երկնքում— *Փայլածուի երկնքում։*

103. Լուսապայծառ հոգիներ— *թե ովքեր են սրանք, ասվելու է հաջորդ երգում («Դր.» Զ, 112—126)։*

108. Իրենց խորհից ճառագայթող լույսի մեջ— *Դրախտում երանելի հոգիները պարուրված են լույսով, որ բխում է նրանց ներքին խնդությունից։*

116. Գահերն հաղթական— *երանելի հոգիների հաղթական գահերը էմպիրեյում։*

121. Մեկը— *Հուստինիանոսը ինչպես ասվելու է հաջորդ երգում («Դր.» Զ, 10)։*

129. Մի այլ զեղով լուսատու— *Արևով, որի շողերով է ծածկված Փայլածուն։*

ԵՐԳ ՎԵՑԵՐՈՐԴ

1—2. Երբ Կոստանդինն ուղղեց արծիվն հռոմյան...— *Կոստանդին Մեծ կայսրը 330 թվին հռոմեական արծիվը Հռոմից տարավ Բյուզանդիոն, արևմուտքից դեպի արևելք, երկնքի՝ արևելքից դեպի արևմուտք շարժման հակառակ ուղղությամբ։ Կայսերական գահը տեղափոխելու որոշման մեջ, որ կապվում է, ըստ այն ժամանակ ընդունված ընդհանուր կարծիքի, Կոստանդինի աղետաբեր պարգևի հետ (տես «Դժ.» ԺԲ, 115—117), Դանտեն տեսնում է բնական կարգի խախտում։*

2—3. Որին հետևեց...— *հռոմեական արծիվը նախապես հետևեց երկնքի շարժմանը, երբ արևելքից (Տրոյայից) գնաց արևմուտք (Իտալիա) հռոմայեցիների նախահայր Էնեասի հետ, որի կինը հետագայում դարձավ Լատինոս թագավորի դուստրը՝ Լավինիան («Դժ.» Դ, 126. «Քավ.» ԺԷ, 37)։*

4—9. Աստծու թշնամն ավելի քան երկու դար...— *330 թվից, կայսերական մայրաքաղաքը Բյուզանդիոն տեղափոխվելու թվականից, մինչև 527 թիվը, Հուստինիանոսի գահակալության թվականը, անցել էր մի քիչ նվազ քան երկու դար։*

Եվրոպայի ծայրամասում— *Բյուզանդիոնում։* Այն լեռանց մոտ— *Տրովական լեռների մոտ։*

10. Հուստինիան— *Հռոմի կայսր Հուստինիանոս Ա. (525—567)։ Թերի և անճիշտ տեղեկությունների հիման վրա Դանտեն նրան դարձնում է կայսրի իդեալական տիպար։*

13. Այդ գործին— *Օրենքներ մշակելու գործին։*

14—15. Ես հավատում էի...— *ես հետևում էի միաբնակների մոլար վարդապետությանը (եվտիկյանների աղանդին), ըստ որի Քրիստոսի մեջ կա միայն մեկ բնություն՝ աստվածային, որի հետ միանալով՝ կլանվում, ոչնչանում է մյուսը, մարդկային բնությունը։*

16. Ազապիտ— *Հռոմի պապ 533-ից մինչև 536։*

21. Ամեն հառում հակամարտ— *ամեն հակաճառության մեջ։*

25. Բելիսար— *Հուստինիանոսի զորավարը, որի ղեկավարությամբ կայսերական բանակները հաղթանակներ տարան պարսիկների, վանդալների ու գոթերի դեմ։*

28. Հարցիդ առաջին— *Դանտեի առաջին հարցն էր՝ «Բայց չգիտեմ, թե վեհ հոգի, ով ես դու» («Դր.» Ե, 127)։*

32—33. Նրանք...— *գիբելիններն ու գուելֆները։*

35. Պալլանտ— *թագավոր Էվանդրի որդին, որ զոհվեց հերոսաբար՝ կռվելով Էնեասի համար ռուտուլների թագավոր Տուռնոսի դեմ։*

36. Նա— *Հռոմեական արծիվը։ Ինչպես այստեղ, այնպես էլ հետագա տողերում, նա դերանունով միշտ նկատի ունի հռոմեական արծիվը։*

37—39. Ալբա կամ Ալբալոնգա— *քաղաք Լատիումում, որտեղ Էնեասի սերունդները թագավորեցին երեք դարից ավելի։*

42. Հռոմի յոթ արքաների ժամանակ— *սկսած Հռոմի առաջին թագավոր Հռոմուլոսից մինչև վերջին թագավոր Տարկուինիոս Գոռոզը։*

43—48. Գիտես, որ նա մարտեր մղեց հաղթական...— *Հռոմեական արծիվը հանրապետության առաջին իսկ շրջանում հերոս հռոմայեցիների միջոցով հաղթական մարտեր մղեց գալլերի առաջնորդ Բրենների, Եպիրոսի թագավոր Պյուռոսի և այլ իշխանավորների դեմ, որոնք փորձում էին. արգելք հանդիսանալ իր առաջընթացին. այդ մարտերում հռչակվեցին հյուպատոս Կինտ Կինկինատոսը, զորավար Տորկուատը, քաղաքացի Դեկյանները ու պատրիկ Ֆաբյանները։*

49—51. Արաբաց— *այսպես է անվանում կարթագենացոց։*

52—54. Սկիպիոնն ու Պոմպեոսը...— *Սկիպիոն Աֆրիկացին և Պոմպեոս Մեծը դեռ երիտասարդ հասակում հաղթանակ տարան առաջինը Հաննիբալի դեմ, իսկ երկրորդը Մարիուսի դեմ։*

57. Հռոմի կամքով Կեսարն իր ձեռքն այն վերցրեց— *Հռոմի սենատի կամքով Կեսարը իր ձեռքը վերցրեց հռոմեական արծիվը։*

58—60. Ինչ որ արեց Վարոսից մինչ Հռենոս...— *ակնարկում է Կեսարի արշավանքները անդրալպյան Գալլիայում, որի Արևմտյան և հյուսիսային սահմաններն են Վարոս ու Հռենոս գետերը։*

61—63. Ինչ որ արեց Ռավեննայից դուրս գալով...— *Կեսարը Ռավեննայից դուրս գալով կայծակի արագությամբ անցավ Ռուբիկոնը (գետակ Ռավեննայի և Ռիմինիի միջև) և սկսեց քաղաքացիական պատերազմը Պոմպեոսի և նրա կուսակիցների դեմ։*

64. Դեպ Իսպանիա պլացավ— *ընդդեմ Պոմպեոսի տեղապահներ Պետրեոսի, Աֆրանիոսի և Վարրոնի (հմմտ. «Քավ.» ԺԸ, 101—102)։*

65—66. Դուրացցո— *ծովափնյա քաղաք Իլլիրիայում։* Ֆարսալիս— *քաղաք Թեսալիայում։*

67. Տեսավ Անտանդրն ու Սիմոյիսն իր օրրան— *Ֆարսալիայի հաղթանակից հետո արծիվը Կեսարի հետ գնաց Տրոյայի երկրամասը, որ եղել էր նրա օրրանը (տ. 6)։* Անտանդր— *նավահանգիստ Փռյուգիայում։* Սիմոյիս *(ներկայումս՝ Մենդես)— գետակ Տրոյայում։*

69. Հուսկ խոյացավ Պտղոմեի շեշտ վրան— *ապա արծիվը խոյացավ Պտղ-*

զոմեոսի վրա, որից վերցրեց Եգիպտոսի թագավորությունը և տվեց Կլեոպատրային։

70. Յուբա— *Մավրիտանիայի թագավորը, պոմպեոսականների դաշնակիցը, որին Կեսարը գահընկեց արեց։*

71—72. Պեպ արմոտոմ...— *դեպի Իսպանիա։*

73. Վեհապետի հետ հաջորդ— *Օկտավիանոս Օգոստոս կայսեր հետ։*

74. Բրուտոսն ու Կասիոն— *Կեսարին սպանողները։*

75. Մոդենա— *քաղաք հյուսիսային Իտալիայում, որ տեսավ Անտոնիոսի պարտությունը և կեսարական հյուպատոսների մահը։* Պերուջա— *քաղաք կենտրոնական Իտալիայում, որ գրավվեց և ավարի մատնվեց Օկտավիանոսի բանակի կողմից, որովհետև այնտեղ էին ապաստանել Անտոնիոսի եղբայրն ու կինը։*

76—78. Կլեոպատրա— *Եգիպտոսի թագուհին, որ ինքնասպանություն գործեց Ակտիումում կրած պարտությունից և Անտոնիոսի մահից հետո։*

81. Տաճարն Յանոսի— *Յանոսի տաճարը Հռոմում, որի դռները փակվում էին միայն այն ժամանակ, երբ Հռոմը պատերազմի մեջ չէր լինում։*

87. Երրորդ կայսեր— *Տեբերիոսի, որի կայսրության ժամանակ մահացավ Քրիստոսը։*

88—93. Քանզի այնժամ...— *որովհետև Տիբերիոսի կայսրության ժամանակ աստված* (Արդարությունը Կենդան) *հռոմեական արծվի վրա բարձր պարտականություն դրեց մեղմելու Ադամի մեղքից առաջացած երկնքի արդար զայրույթը՝ այդ մեղքի արդար պատժով, այսինքն Քրիստոս— աստվածամարդու չարչարանքով ու մահով, որ կատարվեց հռոմայեցի կուսակալ Պոնտիոս Պիղատոսի հավանությամբ։ Արծիվը, որ Քրիստոսի չարչարանքով արդարորեն վրեժ էր լուծել սիզբնական մեղքի համար, Տիտոսի հետ շտապեց պատժել այդ վրեժը, կործանելով Երուսաղեմը (տես «Քավ.» ԻԱ, 82—84 և ծանոթ.)։*

94—96. Երբ ատամը լանգոբարդյան կծոտեց...— *երբ լանգոբարդները հարձակվեցին եկեղեցու վրա, Կառլոս Մեծը արծվի թևերի տակ օգնեց նրան և հաղթեց եկեղեցու հակառակորդներին։*

97. Նրանց մասին— *գուելֆների և գիբելլինների մասին (տտ. 31—33)։*

100—101. Մեկն հանրային դրոշին է հակադրում...— *գուելֆյան կուսակցությունը կայսրության հանրային զինադրոշին (արծվին) է հակադրում ոսկե շուշանները ֆրանսիական արքունի տան, որի ներկայացուցիչները Իտալիայում Անժուացիներն էին։*

106. Նոր Կառլոս— *Կառլոս Բ Անժուացին, Նեապոլի թագավորը 1285-ից։*

107. Ճանկերից— *արծվի ճիրաններից։*

109. Հանախ որդիք տուժել են հոր հանցանքով— *այստեղ հավանաբար նկատի ունի նույն Կառլոս Բ-ին, որ հատուցելու էր իր հոր անարգար հափշտակությունների համար։*

110—111. Եվ թող ոչ ոք չմտածի...— *արծիվը՝ աստծու կամեցած համաշխարհային կայսրության զինանշանը, չի կարող փոխարինվել ֆրանսիական արքունիքի ոսկե շուշանով։*

112—126. *Հուստինիանոսը այժմ պատասխանում է Դանտեի երկրորդ հարցին («Դր.» Ե, 128)։ Փայլածուի երկնագնդում են այն հոգիները, որոնք, ճիշտ է, բարեգործ—առաքինի են եղել, բայց եղել են համբավ ու պատիվ ստանալու սիրուց, այսինքն փառասիրությունից դրդված։ Դա որոշ չափով նվազեցնում է նրանց արժանիքը, ուստի և նրանց երանության աստիճանը համեմատաբար նվազ է, քան վերևի երկնագնդերում երևացող հոգիներինը, բայց գա նրանց մեջ չի կարող նախանձ կամ դժգոհություն առաջացնել իրենց վիճակից, որովհետև գիտակցում են, որ այդ վիճակը համապատասխանում է իրենց արժանիքին (հմմտ. «Դր.» Գ, 70—87)։*

127—142. Ռոմեո դի Վիլլանովա *(Ռոմեո կամ Ռոմյե դը Վիլնյով)— Պրովանսի կոմս Ռայմոնդ Բերենգեր Դ-ի մինիստրը։*

ԵՐԴ ՅՈԹԵՐՈՐԴ

5. Լակը ճոգեղեն— *Հուստինիանոսը։*

6. Լույս մի կրկնակ— *Հուստինիանոսի վրա շրջացող այս երկու լույսերը խորհրդանշում են օրենքներն ու զենքերը, որոնք զարդն են կայսերական իշխանության։*

14. Բե կամ իշ— *Բեատրիչե անվան մասնիկները։*

20—21. Ինչպե՞ս կարող է արդար վրեժն արդարորեն պատժվել— *տես «Դր.» 2, 88—93 և ծանոթ.)։*

24. Պիտի մի մեծ ճշմարտություն ցեզ հայտնեմ— *հետագա տողերում Բեատրիչեն շոշափում ու լուծում է արարչագործության, սկզբնական մեղքի, մարդու փրկագործության և մարդկային հոգու անմահության հարցերը։*

25. Ոչ-ծնյալը— *Ադամը, որ չծնվեց, այլ ուղղակի ստեղծվեց աստծուց։*

30. Բանն Աստուծո— *աստվածորդին, Քրիստոսը։*

31. Հավերժ Սիրո— *Սուրբ հոգու։*

34—35. Այդ բնությունն երբ Արարչին միացավ— *մարդկային բնությունը Քրիստոսի անձի մեջ, երբ միացավ նրա աստվածային բնության հետ, դարձավ անեղծ և կատարյալ։*

40—45. Իսկ պատիժն այն...— *իսկ այն մահապատիժը, որը Քրիստոսը կրեց խաչի վրա, արդար էր իր վերցրած մարդկային բնության վերաբերմամբ, որը, դատապարտված լինելով Ադամի մեղքով, արժանի էր այսպիսի պատժի, բայց այդ մահապատիժը անարդար էր նրա աստվածային բնության վերաբերմամբ, որի հետ միացել էր մարդկային բնությունը։*

47—48. Մահն այդ...— *Քրիստոսի մահը պետք էր աստծուն, որովհետև դա ծառայեց մարդկանց փրկությանը, պետք էր և հրեաներին, որովհետև նրանք այդ ձևով հագեցրին իրենց ատելությունը մի անմեղի նկատմամբ. այդ մահը ցնցեց երկիրը և երկինքը բացեց մարդկանց համար։*

50—51. Արդար վրեժը լուծվեց...— *Քրիստոսի մահվան արդար վրեժը լուծվեց արդար դատաստանով Տիտոսի, որ կործանեց հրեաների Երուսաղեմը (տես «Դր.» 2, 92—93)։*

57. Միջոցն այդ— *իր որդու՝ Քրիստոսի մահը։*

67. Անմիջորեն— *ուղղակի, առանց երկրորդական պատճառների գործակցության։*

76. Մարդն օժտված է շնորհներով այս բոլոր— *մարդն ստեղծվելով աստծուց՝ օժտվեց երեք առանձնաշնորհությամբ՝ անմահությամբ (տ. 68), աղատությամբ (տ. 71) և աստծու նմանությամբ (տտ. 73—75)։*

86. Հանձին իր հոր— *հանձին իր նախահոր՝ Ադամի։*

100. Որքան ուզեց անսաստությամբ բարձրանալ— *սկզբնական մեղքը անհնազանդությամբ աստծուն հավասարվելու ձգտման մեջ էր։*

105. Մեկ կամ երկու ուղիներով ներգործուն— *այսինքն՝ կամ ողորմածության, կամ արդարադատության միջոցով, և կամ այդ երկու միջոցներով միասին։*

111. Ամեն կերպերով— *միաժամանակ թե ողորմածությամբ և թե արդարադատությամբ։*

112—114. Նախալույսից մինչ վերջալույսը վերջին...— *աշխարհի սկզբից մինչև վերջը ժամանակի բովանդակ տևողության մեջ չի եղել և չի լինի այնպիսի վեհ գործ, ինչպիսին է մարդու փրկագործությունը աստծու ողորմածության և արդարադատության միջոցով (տ. 105 և 111)։*

122. Հարց մի հիշված— *այն հարցը, որ շոշափվեց վերևում (տտ. 67—72)։*

124—125. Հուրն ու ջուրը, հողն ու օդը և նրանց խառնուրդները— *տարրերը և նրանց բաղկացությունները առաջացած մարմինները։*

128. Նրն հիշա է ասվածը վերի— *վերևում ասվեց, որ աստծուց անմիջորեն կամ ուղղակի ստեղծվածը անվախճան է, հետևաբար և՝ անջնջելի կամ անեղծանելի (տտ. 67—69)։*

130—132. Հրեշտակները և երկինքները, *ինչպես և նախնական նյութը և էներգիան (տտ. 136—137) ուղղակի ստեղծված են աստծուց, հետևաբար անվախճան են։*

133—135. Իսկ տարրերն այն...— *իսկ վերոհիշյալ չորս տարրերը և նրանցից կազմված մարմինները (տե. 124—125) ստեղծված են ոչ ուղղակի աստծուց, այլ երկնագնդերի ազդեցություններից (այլ ուժերից գալատու), որոնք գործում են իբրև երկրորդական պատճառներ։*

139—144. Հոգիները կենդանյաց ու բույսերի...— *կենդանիների ու բույսերի հոգիները անուղղակի ստեղծված են աստծուց։*

145—148. Դու կարող ես մակաբերել այստեղից...— *այս մտքից (որ այն ինչ ուղղակի ստեղծված է աստծուց, ենթակա չէ վախճանման) դու կարող ես եզրակացնել ոչ միայն մարդկային հոգու անմահության, այլև մարդկային մարմնի հարության հնարավորությունը։ Նախածնողների— Ադամի և Եվայի— մարմինները ևս անմիջականորեն ստեղծված են աստծուց և օժտված են անմահությամբ, այդ առանձնաշնորհությունը, որ մարդիկ կորցրին սկզբնական մեղքի հետևանքով, վերահաստատվեց Քրիստոսի զոհաբերությամբ։ Ուրեմն, մարդկային մարմնի վախճանումը ժամանակավոր է, և վերջին դատաստանի օրը մարդկային մարմինները հարություն կառնեն միանալու համար հոգիներին։*

ԵՐԳ ՈՒԹԵՐՈՐԴ

1. Աշխարհն ամբողջ— *հնթանոսական աշխարհը։* Կիպրոսինն— *Արուսյակը կամ Վեներան, որ ծնվել է Կիպրոսում (հմմտ. Օվիդ. «Այլակերպ.» Ժ, 270)։*

3. Երրորդ ծիրով երկնային— *յուրաքանչյուր մոլորակ ունի իր ուղեծիրը, որով պտտվում է երկրի շուրջը։ Երրորդ ուղեծիրը Արուսյակ մոլորակինն է։*

9. Որն, ասում են, նստեց գրկում Դիդոնի— *Կուպիդոնը՝ Վեներայի որդին, ինչպես պատմում է Վիրգիլիոսը իր «Էնեական»ում, Էնեասի որդու՝ Ասկանիոսի կերպարանքն առած, նստեց Կարթագենի թագուհի Դիդոնի գրկում և նրա մեջ սեր արթնացրեց Էնեասի հանդեպ («Էնեակ.» Ա, 685—688)։*

15. Որ երևաց Է՛լ ավելի պերճագեղ— *Բեատրիչեի փայլն ու գեղը աստիճանաբար աճում են Էմպիրեյ բարձրանալուն զուգընթաց։*

19. Լույսեր— *երանելի հոգիներ, որոնք այստեղ կերևան ինչպես լույսեր։*

35. Իշխանների հետ երկնի— *հրեշտակների այն դասի հետ, որ վարում է երրորդ երկինքը (Արուսյակի երկինքը)։*

37. «Դուք, որ երրորդ երկրագունդն եք շարժում հար»— *առաջին տողն է Դանտեի մի տաղի։*

49—50. Սա երկրում քիչ ապրեցի...— *խոսողը Կարլոս Մուրճն է (1271—1295), Կարլոս Բ Անժուացու և Հունգարիայի արքայադուստր Մարիայի անդրանիկ որդին. վախճանվեց երիտասարդ հասակում։*

51. Շատ չարիքներ չեին լինի աշխարհում— *Կարլոս Մուրճը ընդհանուր կերպով ակնարկում է իր հոր և մանավանդ իր եղբոր՝ Ռոբերտի վատ կառավարության հետևանքով առաջացած չարիքները նրանց ենթակա տիրություններում։*

58—63. Այն ձախ ափը, որ Ռոդանն է ողողում...— *Պրովանսի կոմսությունը այստեղ ցույց է տրված ինչպես երկիր, որ տարածվում է Ռոդան (Ռոն) գետի ձախ ափին, երբ վերջինս ընդունել է Սորգա վտակի ջրերը։*

65—66. Այն երկրի— *Հունգարիայի։*

67—75. *Այս տողերի իմաստն է. «Սիկիլիան (այստեղ Սիկիլիան անվանված է* Տրինակրո— *եռածայր, նրա եռանկյունաձևության համար) նույնպես կունենար ինձ և իմ սերունդներին իբրև թագավոր, եթե Անժուացիները այն չկորցնեին Կարլոս Ա-ի հոռի վարչության հետևանքով։ Սիկիլիան այստեղ նշված է շրջաբանությամբ. նա մի կղզի է, որ մշուշապատվում է* Ֆարո *հրվանդանից մինչև* Պասսարո *հրվանդանը, ոչ թե, ինչպես պատմում են հին պոետները (հմմտ. Օվիդ. «Այլակերպ.», Ե, 352—353), այնտեղ թաղված հսկա* Տիֆոեի *փնչոցի, այլ էթնա հրաբխային լեռան ծծմբային արտաշնչումների պատճառով։ «Թող սատկեն ֆրանսիացիները»— այսպես գոչեցին (Սիկիլիայի գլխավոր քաղաք՝ Պալերմոյի բնակիչները, երբ զինված ապստամբություն բարձրացրին Անժուացիների ֆրանսիական տիրապետության դեմ 1282 թ. այս ապստամբությունը պատմության մեջ հայտնի է «Սիկիլյան իրիկնաժամ» անունով։*

76—78. Եվ եղբայրս եթե այս բանն հասկանար...— *եթե կրտսեր եղբայրս, Ռոբերտը, նախքան դահ բարձրանալը (գահ բարձրացավ 1309-ին) հասկանար վտանգավոր հետևանքները հոռի կառավարության, իր մոտից կհեռացներ ագահ ու ընչաքաղց կատալոնցիներին, որոնց հետ բարեկամացավ Կատալոնիայում, ապա տարավ Նեապոլ՝ նշանակելով բարձր պաշտոններ։*

110. Աստղերի շարժիչները— *տե՛ս «Դր.», Բ, 128 ծանոթ.։*

120. Ձեր ուսուցիչը— *Արիստոտելը։*

124—126. Ահա ինչու մեկը ծնվում է Սոլոն...— *ահա ինչու մեկը ծնվում է օրենսդրի ու քաղաքագետի կոչումով, ինչպես Սոլոնը, մյուսը ծնվում է ռազմավարի կոչումով, ինչպես Քսերքսեսը. մեկը կոչված է քահանայության, ինչպես Մելքիսեդեկը («Քահանայ Աստուծոյ բարձրելոյ». «Մնեդ.», ԺԴ, 18), մյուսը՝ հնաբագիտության, ինչպես Դեդալը (հմմտ. «Դժ.», ԺԷ, 109—111)։*

130. Սաղմից նասվն անեման է Հակոբին— *գեռ սաղմից բիբլիական նասվը ամեն ինչով տարբերվում էր իր եղբայր— երկվորյակ Հակոբից։*

131—132. Իսկ Կվիրինը...— *Հռոմուլոսը՝ Հռոմի հիմնագիրն ու առաջին թագավորը, այնքան տարբերվում էր աննշան հորից, որ նրան ծնելու պատիվը վերագրվում էր Մարս աստծուն։*

139—141. Երբ մարդ հարմար պայմաններում չէ ընկած...— *երբ մարդ չի գտնվում իր ընդունակություններին ու կոչմանը համապատասխան գործունեության մեջ, հետևանքը վատ կլինի և՛ իր, և՛ հասարակության համար։*

142. Հիմիթեն— *այն հակամին, որ բնությունը դնում է ամեն մարդու մեջ։*

145—147. Բայց դարձնում եմ դամ ճանան...— *Հին մեկնիչները այս տողերի մեջ տեսնում են ակնարկություն Կառլոս Մուրճի երկու կրտսեր եղբայրների մասին. մեկը Լուին է, որը դարձավ քահանա և ապա Տուլուզի եպիսկոպոս, մյուսը՝ Ռոբերտը, որ 1309-ին դարձավ Նեապոլի թագավոր (տե՛ս 76—78 տողերի ծանոթ.)։*

ԵՐԳ ԻՆՆԵՐՈՐԴ

1. Չիճաղազեղ Կլեմենցա— *Կառլոս Մուրճի կինը և ոչ դուստրը, որ նույնպես կոչվում էր Կլեմենցա։*

3. Զարմն իր— *Կառլոս Մուրճի որդիները, հատկապես Կառլոս-Ռոբերտը։*

6. Արդար պատիժ— *Դանտեն այստեղ ընդհանուր և աղոտ կերպով ակնարկում է Անժուացիների ապագա գժբախտությունները։*

7. Լույս նոգին— *լուսահոգի Կառլոս Մուրճը։*

11. Ունայնությանց— *երկրային ունայն բարիքներին։*

13. Եվ մեկն, աճա...— *սա Կունիցցա դա Ռոմանոն է (տ. 32), քույրը Էձելինո Գ-ի (տե՛ս 29—30 ծանոթ.)։ Տուիոտ կին, ունեցել է երեք ամուսին և մի քանի հոմանիներ, որոնցից մեկն էր սաղերգու Սորգելլոն («Քավ.», Զ, 58—75)։ Զառամյալ հասակում զղջաց իր անցյալ վարքի համար և ապաստություն շնորհեց իր հոր և եղբայրների հպատակներին ու արժանացավ փրկության։*

23. Երգում էր ֆիչ առաջ— *մյուս հոգիների հետ երգում էր «Ովսաննա» («Դր.», Ը, 28—30)։*

25—27. Ապականված Իտալիայի այն մասում...— *ակնարկում է Մարկա Տրևիզանայի (Տրևիզանա) մարզը։*

28. Մի բլուր— *Ռոմանոյի բլուրը, ուր գտնվում էր Էձելինոների ժառանգական դղյակը։*

29—30. Մի մարդ հուր ու բոց— *սա Կունիցցայի եղբայր Էձելինո Գ դա Ռոմանոն է, որ համարվել է վայրագ բռնակալ (հմմտ. «Դժ.», ԺԲ, 109—110)։*

33. Ըստ որում ես նույժ ազդվեցի այս ատողից— *որովհետև ես կյանքում խորապես կրեցի Արուսյակ (Վեներա) մոլորակի ազդեցությունը, այսինքն՝ անձնատուր եղա սիրո կրքին։*

36. Ռամիկները չեն հասկանա հեշտությամբ— *հասարակ ժողովուրդը հեշտությամբ չի հասկանա, թե ինչպես աշխարհիկ սիրո հակումը, որ իմ մեջ նախ*

վավաշանքի վերածվեց, հետագայում, ուղղելով, դարձավ երկնային սեր և պատճառ հանդիսացավ իմ ներկա երանության։

37. Այս նոգին— Ֆոլկո Մարսիլիացին (տ. 95)։

42. Մի ուրիշ կյանք— ավելի տևական կյանք, ինչպիսին է համբավինը։

43—44. Ամբոխը ներկա...— Մարկա Տրևիզանայի մարզի բնակիչները։

46—48. Սակայն շուտով նեստ ու ըմբոստ պադուացիք...— ակնարկում է գուելֆյան պադուացիների կրած պարտությունը 1314 թվին. Դանտեն այն համարում է արժանի պատիժ Պադուայի համար, որ համառորեն չէր ուզում ենթարկվել Հենրիկ է կայսրին և ապա նրա տեղապահ Կանգրանդեին։

49—51. Անդ ուր Սիլեն ու Կանյանն են միանում...— Տրևիզոյում, ուր միանում են Սիլե և Կանյանո գետերը, տիրակալում է Ռիցցարդո դա Կամինոն, «լավ Գերարդի» («Քավ.», ԺԶ, 124) որդին։ Վերջինս հանկարծ գուելֆյանից անցնելով գիբելլինյան քաղաքականության, գժգոհություն առաջացրեց Տրևիզոյում և 1312 թվին դավաճանաբար սպանվեց գուելֆյան դավադիրների ձեռքով։

52—60. Ֆելտրեն նույնպես ողբալու է դառնորեն...— Ֆելտրե քաղաքը ևս արժանի պատիժ կստանա իր անօրեն եպիսկոպոսի դավաճանության պատճառով, որը գլխատման հանձնեց իր մոտ ապաստանած ֆերրարացի մի քանի տարագիրների։

61—63. Գանույֆ— այսպես է կոչվում հրեշտակների երրորդ դասը («Դր.», ԻԸ, 104)։

67. Մյուս խնդալին, ուր ծանոթ էր արդեն ինձ— Ֆոլկո Մարսիլիացին, պրովանսալ տաղերգու, որ ծանոթ էր Կոնիցցայի խոսքերից (տտ. 37—42)։

78. Ուռեմ վեցյակ թեերով են պատկերվում— սերովբեները։

83—87. Մեծագույն ձորն...— Միջերկրական ծովը՝ երկրային խոռոչներից մեծագույնը։

88—90. Ես ծնվել եմ այնտեղ, ուր կա մի ավան...— Ֆոլկոն ծնվել է Մարսիլիայում՝ Միջերկրականի ափին, Էբրոյի և Մագրայի գետաբերանների միջև։

91—93. Նույն արևմուտքն ու արևելքը ունեն...— գրեթե նույն միջօրեականի վրա են՝ գտնվում Ալժիրի ծովափնյա քաղաք Բուջան և Ֆոլկոյի ծննդավայր Մարսիլիան։

96. Ես կրեցի ազդեցությունն այս երկնի— հմմտ. տ. 33։

97—98. Դուստրը Բելոնի— Կարթագենի թագուհի Դիդոնը։

100—101. Ֆիլիդը, որը եղավ...— Թրակիայի արքայադուստր Ֆիլիդը ինքնասպանություն գործեց Դեմոֆոնդի հանդեպ ածած սիրուց, կարծելով, որ մոռացվել և դավաճանվել է նրանից։

101—102. Հերակլը, որ մեռավ...— Հերակլեսը մեռավ Թեսալիայի արքայադուստր Յոլի հանդեպ զգացած խելահեղ սիրուց (հմմտ. «Դժ.» ԺԲ, 67—69)։

115. Ռահաբ— Երիքովի պոռնիկը, որ իր տան մեջ ապաստան տվեց Հեսուի ուղարկած հետախույզներին, այսպիսով նպաստեց պաշտպված քաղաքի գրավմանը և որբազան կամ Ավետյաց Երկրի նվաճմանը հրեաների կողմից։ Այս արարքի շնորհիվ նա արժանացավ փրկության։

118. Այս երկնքում, որտեղ ստվերն է ընկած ձեր աշխարհի— ըստ Ալֆրագանոցի տեսության, երկրի կոնաձև ստվերի ծայրը հասնում է մինչև Արուսյակի երկինքը։

120. Ուռնց Քրիստոսն հաղթանակով էր փրկած— որոնց Քրիստոսը փրկել էր՝ հաղթանակ տանելով մահվան և Դժոխքի դեմ։

127. Քո քաղաքը...— Ֆլորենցիան, որի ծագումը Ֆոլկոն վերագրում է դևին։

130. Մաղիկը անիծյալ— ֆլորենտական ոսկեդրամ ֆլորինը (որի անունը դալիս էր նրա մի երեսի վրա դրոշմված շուշանից)։

133. Դրա համար— հարստության այդ տենչի համար (հմմտ. տ. 136)։

135. Եվ սերտվում են լոկ կանոններն իրավանց— և միայն սերտվում են կանոնական իրավունքի տեքստերը։

137—138. Եվ չեն նոգում Նազարեթի մասին այն...— կարդինալներն ու պապերը հարստության ետևից ընկած չեն մտածում մահմեդականների տիրապետու-

թյան տակ գտնվող Սրբազան Երկրի (Պաղեստինի) մասին, ուր գտնվում է Քրիստոսի ծննդավայր Նազարեթը։

139. Վատիկան— *այն բլուրը, ուր, ըստ ավանդության, խաչվեց ու թաղվեց Պետրոս առաքյալը։*

142. Նուտ կազատվեն պղծությունից այդ անսանձ— *շուտով կազատվեն սանձարձակ սրբապղծությունից կղերականների։*

ԵՐԳ ՏԱՍՆԵՐՈՐԴ

1—6. Առաջին և անճառելի Ուժն երկնից...— *հայր աստվածը (առաջին և անճառելի Ուժն երկնից) նայելով իր աստվածային Որդու մեջ և նայելով Սիրով, այսինքն Սուրբ Հոգով, որ բխում է Հորից ու որդուց, ստեղծեց տեսանելի և անտեսանելի աշխարհը այնպիսի անմահ կատարելությամբ, որ հիացում է պատճառում դիտողին։*

9. Ուր ճառվում են շարժումները հակադիր— *որտեղ հանդիպում են երկնային մարմինների հասարակածային ամենօրյա շարժումը արևելքից դեպի արևմուտք և մոլորակների զոդիակային տարեկան շարժումը արևմուտքից դեպի արևելք։ Երկու շարժումների հանդիպման կետերը համապատասխանում են աշնանային և գարնանային գիշերահավասարներին։*

13. Միրը շեղ— *զոդիակային ուղեծիրը, որի մեջ շարժվում են արևն ու մյուս մոլորակները։*

28. Մայր բնության ամենամեծ լուսատուն— *Արևը։*

31. Այն մասի հետ...— *գարնանային գիշերահավասարի կետի (հմմտ. տտ. 8—9) և հետևարար խոյ համաստեղության հետ։*

32—33. Պտտվում էր պտուտաձև ուղիով...— *օրական և տարեկան շարժումների հետևանքով արևը, պտղոմեոսյան սիստեմի համաձայն, թավալվում է պտուտաձև ուղիով, երբ վեց ամսում ընթանում է մի արևադարձից դեպի մյուսը։*

34. Լուսագունդը վիթխարի— *արևի երկինքը։*

49. Հոգվոց ջոկատը չորրորդ— *Արևի (չորրորդ երկնքի) մեջ երևացող երանելի հոգիների խումբը։ Սրանք իմաստուններն են՝ փիլիսոփաները, աստվածաբանները, միստիկները։*

53. Արևին հոգեկան— *աստուծուն։*

82. Մեկն սկսեց ինձ բարբառել— *խոսողը Թովմաս Ակուինացին է։*

92. Պսակն այս— *երանելիների խումբը, որ պսակ է կազմել Բեատրիչեի և Դանտեի շուրջ։*

94. Հոտի սրբազան— *քարոզիչների միաբանության, որ հիմնել է սուրբ Դոմինիկը («Դր.» ԺԲ, 46—105)։*

96. Ուրկից ովքեր չնեռանան՝ կուռանան— *ովքեր չշեղվեն հիմնադրի նշած ճանապարհից՝ օրթոդոքս կաճեն հոգեկան սնունդով։*

98. Ալբերտ Քյոլնցի— *աստվածաբան և փիլիսոփա Ալբերտ Մեծը (1193—1280)։ Դոմինիկյան եղբայր և ապա եպիսկոպոս։ Թովմաս Ակուինացու ուսուցիչը Քյոլնում և Փարիզում։*

99. Ակուինացի Թովմաս— *Ալբերտ Մեծի աշակերտը, նշանավոր աստվածաբան և փիլիսոփա (1226—1274)։ Ուսուցիչ Քյոլնում, Փարիզում և Նեապոլում։ Մեռավ, հավանաբար, թունավորումից, Լիոնի եկեղեցական ժողովին գնալու ճանապարհին (հմմտ. «Քավ.» Ի, 69)։*

103—105. Գրանցիանո Ֆրանչեսկո— *ԺԲ դարի նշանավոր կանոնիկ։*

106—108. Պիետրո Լոմբարդո— *ԺԲ դարի աստվածաբան և փիլիսոփա։ Նրա* Sententiarum-*ի չորս գրքերը դպրոցներում դարձան դոգմատիզմի ուսուցման պաշտոնական տեքստ։*

109—114. Հինգերորդ լույսն...— *ակնարկում է Սողոմոն թագավորին, որի հետմահու վիճակի մասին վիճում էին աստվածաբանները։ Համարվել է «Երգ Երգոցի»՝ միստիկական սիրո պոեմի հեղինակ։*

115—117. Լույսը ճոգու...— *ակնարկում է Դիոնիսիոս Արեոպագացուն, որին քրիստոնյա դարձրեց Պողոս առաքյալը («Գործք առ.» ԺԷ, 34)։*

118—120. Ջատագովը քրիստոնեական դարերի...— *Հավանաբար նկատի ունի Ե դարի իսպանացի պատմաբան Պավլոս Օրոսիոսին։*

124—129. Այն սուրբ հոգին...— *ակնարկում է հռոմայեցի գրող և սենատոր Բեռվտիոսին, ծնված 480-ին և բանտարկված ու մահվան դատապարտված 526-ին գոթաց թագավոր Թեոդորիկի կողմից։ Միջին դարերում նրան համարել են սուրբ և մարտիրոս։ Չելդորը— Պետրոս առաքյալի բազիլիկան Չելգորոյում (Պավիա), ուր թաղվեց Բեռվտիոսը։*

131. Իզիդոր— *իսպանացի եպիսկոպոս, հեղինակը աստվածաբանական և պատմական երկերի։* Բեդա Պատկառելի— *անգլիացի աստվածաբան։* Ռիկկարդ— *ԺԲ դարի միստիկ աստվածաբան։*

133—138. Սիգեր *Բրաբանցի— ԺԴ դարում ավերրոյության հոսանքի նշանավոր փիլիսոփա։ Դասավանդել է Փարիզի համալսարանում։*

139—141. Այն ժամին— *առավոտյան։* Հարսը Աստուծո— *եկեղեցին։* Իր սիրակեզ փեսային— *Քրիստոսին։*

ԵՐԳ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

4—5. Մին ձգտում է իրավագետ դառնալու...— *սկսում է թվարկումը մարդկային սին հոգսերի, սկսելով նրանցից, որոնք առերևույթ ավելի ազնիվ են. շահադիտական նպատակով ձեռք բերվող մասնագիտությունների անօգտակարության մասին Դանտեն խոսում է նաև իր «Խնջույքում» (Գ, 11)։*

16. Եվ այն հոգին...— *Թոմմաս Ակուինացին։*

26. Ապա մյուսը՝ «Դեռ չի ծնվել... երա պես»— *տես. Ժ, 114։*

34. Նրա համար կարգեց երկու իշխաններ— *եկեղեցու ամրապնդման համար պահմանեց երկու հոգևոր առաջնորդներ, մեկը Ֆրանկիսկ Ասսիզեցին, մյուսը՝ Դոմինիկը։*

40. Ես միմիայն կանեմ զովեստը մեկի— *այսինքն՝ Ֆրանկիսկ Ասսիզեցու (1182—1226)։ Սա ավետարանական պարզ կյանքի ու եղբայրական սիրո քարոզիչ էր, «կրտսեր եղբայրների» (մինորիտների, ֆրանկիսկյանների) ուխտի հիմնադիրը։*

43—48. Տուպինի և Կյաշի միջև...— *նշում է Ասսիզիի՝ Ֆրանկիսկի ծննդավայրի, աշխարհագրական դիրքը Տուպինո և Կյաշո գետակների հովիտների միջև։*

50. Մագեց արև մի պայծառ— *ծնվեց Ֆրանկիսկը։*

54. Աշեգի— *Ասսիզի քաղաքի հին անունը։*

55. Նա իր ծագից այնքան էլ չէր շատ հեռու— *այսինքն՝ Ֆրանկիսկը դեռ շատ չէր առաջացել տարիքով։*

58—63. Դեռ պարմանի՝ վեճի մտավ հոր հետ նա— *դեռ երիտասարդ հասակում Ֆրանկիսկը գժտվեց հոր հետ՝ ի սեր մի այնպիսի կնոջ (Աղքատության), որին ոչ ոք հաճույքով չի ընդունի, այլ բոլորն էլ կատեն նրան և կխորշեն նրանից, ինչպես մահից։*

64. Նա— *այդ կինը, Աղքատությունը, որ այրիացել է Քրիստոսի մահից հետո։*

67—69. Զօգնեց և հուշն Ամիկլատի...— *Աղքատության նկատմամբ սեր արթնացնելուն չօգնեց նաև Ամիկլատի դեպքի հուշը։ Ամիկլատը մի աղքատ ձկնորս էր, որ Կեսարի և Պոմպեոսի զորքերի արշավանքների ժամանակ քնում էր իր խղճուկ հյուղակում, առանց դուռը փակելու և անխոով մնաց նույնիսկ այն պահին, երբ հանկարծ իր խրճիթը մտավ նույն ինքը Կեսարը (Լուկան, «Ֆարսալիա», Ե, 521—531)։*

79. Բեռնարդ— *Ֆրանկիսի հետևորդներից առաջինը Ասսիզիում։*

80. Բոբկացած— *Ֆրանկիսկի օրինակով նրա աշակերտները քայլում էին բոկոտն։*

82. Անհայտ զանձ— *հոգեկան հարստություն։*

83. Եգիդիո և Սիլվեստրո— *Ֆրանկիսկի ուրիշ երկու աշակերտներ։*

85—86. Ապա այս հայրն ու ուսուցիչն համարձակ...— *ապա Ֆրանկիսկը իր 11 աշակերտների հետ (հանգերձ ամբողջ ընտանյոք) գնաց Հռոմ, որպեսզի ին-*

նովկենտ Գ պապից թույլտվություն ստանար ավետարանական պատվիրանների վրա հիմնված վանական նոր կարգ հիմնելու և նախնական թույլտվություն ստացավ 1210 թվին։

87. Պարտե ճատարակ— այն հատարակ պարանը, որ ֆրանկիսկյանները, ի նշան խոնարհության, կապում էին իրենց մեջքին կաշվե գոտու փոխարեն (հմմտ. «Դժ.» Իէ, 67 ծանոթ.)։

98. Երկրորդ անգամ Օնորիոսը գոհացրեց— երկրորդ անգամ և վերջնականապես Օնորիոս Գ պապը գոհացրեց նոր ուխտ հիմնելու Ֆրանկիսկի ցանկությունը։

100—105. Իսկ երբ որ նա, տանջակրության ծարավի...— ակնարկում է իր 11 աշակերտների հետ Ֆրանկիսկի առաքելությունը Արևելք 1219 թվին։

107—108. Քրիստոսից վերջին կնիքն ստացավ...— Սերովբեի կերպարանքով նրան երևացած Քրիստոսից ստացավ վերջին կնիքը, այսինքն ձեռքերում, ոտքերում և կողում ստացավ Քրիստոսի վերքերի նշանները, որոնք նա կրեց մինչև իր մահը։

113. Իր կնոջը թանկագին— Աղքատությանը։

117. Եվ այլ դագաղ չկամեցավ իր մարմնին, բացի Աղքատության ծոցից, այսինքն դագաղ անգամ չկամեցավ իր մարմնի համար։ 1226 թվի հոկտեմբերին, մահանալիս, Ֆրանկիսկը փափագեց փոխադրվել իր նախասիրած եկեղեցին և այնտեղ մերկ պառկել մերկ գետնին։

118—120. Նա...— Դոմինիկը, որ Ֆրանկիսկի հետ առաջնորդեց եկեղեցին (Նավը Պետրոսի, հմմտ. «Քավ.» ԼԲ, 129) աշխարհի փոթորկահույզ ծովի միջով։

121. Հիմնադիրը մեր ուխտի— հիմնադիրը դոմինիկյան միաբանության, որին պատկանում է այստեղ խոսող Թովմաս Ակուինացին։

125. Նոր ճարակի— կղերական պաշտոնների հետ կապված նյութական բարիքների։

127—129. Որքան նոտի զառնուկները ուխտակից...— որքան ավելի դոմինիկյան միաբանության անդամները հեռանում են իրենց հովվի պատվիրաններից ու օրինակից, այնքան ավելի նրանց մեջ նվազում է այն հոգեկան հաթաստությունը, որով նրանք պետք է սնվեն և սնեն ուրիշներին։

136. Դու կլինես ճիմա մասամբ գոհացած— քիչ առաջվա իմ խոսքերի մութ կետերը լուսաբանված տեսնելու քո ցանկությունը հիմա գոհացած կլինի մասամբ, այսինքն՝ այն կետը, որ վերաբերում է քո առաջին հարցին (տտ. 22—25)։

137. Ինչու փտում է ծառն այն— ինչու է այլասերվում դոմինիկյան միաբանությունը։

ԵՐԳ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

1. Օրհնյալ հաւրը— Թովմաս Ակուինացին։

2. Հոգվոց պտակը ճիշյալ— նախորդ երգում հիշված տասներկու հոգիների կազմած շրջանակը։

10—21. Ինչպես երբեմն ամպերի մեջ ներծիր...— հոգիների երկու պսակների ներդաշնակ շարժումը համեմատում է կրկնակ մի ծիածանի համակենտրոն աղեղների հետ։

11. Յունոնը... իր նաժիշտին— Յունոնի նաժիշտն ու թամբերը Ծիածանն է՝ Տավմանտի գուստրը («Քավ.» ԻԱ, 50)։

13—15. Եվ ներսից է ծագում աղեղը դրսի...— Դանտեի ժամանակներում կարծում էին, որ ծիածանի ներսի աղեղի անդրադարձումից է առաջանում դրսի աղեղը, ինչպես ձայնի անդրադարձումից առաջանում է արձագանքը։

18. Ըստ Աստուծո դաշնի Նոյի հետ կնքած— համաշխարհային ջրհեղեղից հետո աստված Նոյ նահապետի հետ հանդիսավոր դաշինք կնքեց, որի համաձայն այլևս ջրհեղեղ չէր լինելու աշխարհում և, իբրև նշան ու հաստատում այդ դաշինքի, ուղարկեց ծիածանը («Ծնն.» Թ, 9—14)։

28. Մեկի խորից— սա ֆրանկիսկյան Բոնավենտուրն է։

32. Պետի մասին մյուս— կրոնական համայնքի մյուս ղեկավարի մասին,

որը իսպանցի Դոմինիկն է (1170—1221), դոմինիկյանների միաբանության հիմնադիրը։

33. Իմ պետը— *Ֆրանկիսկ Ասսիզեցին։* Այստեղ— *Ժա երդում։*

38. Դռոշին— *խաչին, երբև փրկության դրոշի։*

39. Եվ թվով էլ բավականին նվազել— *և թվով էլ աստիճանաբար նվազել էր հերետիկոսությունների պատճառով։*

43. Իր ճարսին— *եկեղեցուն (հմմտ. («Դր.» Ժ, 140)։* Ինչպես ասվեց— *տես ԺԱ, 31—36։*

46—48. Անդ, ուրկից է ծագում Ջեփյուռն աղվական...— *արևմտյան կողմում, որտեղից է ծագում Ջեփյուռը՝ կենդանացնելու համար բուսականությունը, որով զարնանը ծածկվում է Եվրոպան։ Ակնարկում է իսպանական թերակղզին։*

52—54. Գալատոգա— *քաղաք հին Սասաիլիայում (Իսպանիա), Դոմինիկի ծննդավայրը։* Հավանու տակ մեծ վաճառի...— *հովանավորության տակ կաստիլիայի թագավորների զինանշանի, որի քառաթաժան վահանի մեջ պատկերված են երկու առյուծներ և երկու դղյակներ։*

60. Հղության մեջ նրա մասին գուշակեց— *ըստ ավանդության, Դոմինիկի մայրը իր հղիության ժամանակ երազ տեսավ, որ ինքը ծնելու է ճերմակ ու սև մի շուն, դնչին պահած մի վառ ջահ, որով հրդեհում էր աշխարհը։*

64—66. Կնքամայրը իր երազի մեջ տեսավ...— *ըստ մի այլ ավանդության, Դոմինիկի կնքամայրը երազում տեսավ, որ իր մանկիկը ճակատին ուներ մի աստղ, որով նա իր հետևորդների հետ լուսավորում էր աշխարհը։*

70. Դոմինիկուս (Dominicus)— Dominus *(Տեր) բառի ստացական ածականը, ըստ միջնադարյան քերականների սահմանման։ Ուզում է նշել Դոմինիկի լիակատար նվիրվածությունը Տիրոջ։*

72. Իր այգում— *եկեղեցում։*

75. Առաջնագույն պատվերն եղավ Քրիստոսի— *եղավ Քրիստոսի կարևորագույն պատվերը խոնարհության ու աղքատության մասին։*

79. Նրջանիկ— *Դոմինիկի հայրը Նրջանիկ էր ոչ միայն անունով այլև իրապես։*

80. Հովհաննես— *եբրայերեն նշանակում է աստծուն հաճելի կին։*

83. Օստիացի— *Օստիայի եպիսկոպոս Էնրիկո դի Սուզա, կանոնական իրավունքի մասնագետ (մեռ. 1271-ին)։* Թադդեոս— *բոլոնյացի Թադդեո Պեպոլի՝ Դանտեին ժամանակակից նշանավոր կանոնագետ։*

86. Այգին— *տես տ. 72 և ծանոթ.։*

88. Սուրբ գահից— *պապական գահից։*

95—96. Մոլորությանց ընդդեմ ճոգտա այն սերմի...— *քրիստոնեական աշխարհը պառակտող մոլորությունների դեմ՝ ի պաշտպանություն ուղղափառ վարդապետության, այն սերմի, որից ծլեցին Դանտեի շուրջը պսակ կազմած քսանչորս տունկերը՝ քսանչորս իմաստունները։*

101—102. Այնտեղ, ուր...— *Պրովանսում, ուր հերետիկոսությունը ավելի շատ էր տարածված և ավելի համառորեն էր դիմադրում։*

103. Տարբեր առուներ— *տարբեր հետևորդներ։ Դոմինիկին նեղեղ անվանելով (տ. 98), նրա հետևորդներին էլ անվանում է առուներ։ «Տարբեր առուներ» արտահայտությամբ գուցե ակնարկում է այն երեք ճյուղերը, որոնց բաժանվեցին դոմինիկյանները Դոմինիկի մահից հետո։*

106—108. Մեկ անիվը...— *Դոմինիկը՝ մեկը երկու անիվներից, որոնց վրա վարվեց կառքը, որով եկեղեցին մարտնչեց, պաշտպանվեց և հաղթեց ներքին կռիվներում։*

109. Երկրորդի— *երկրորդ անվի, Ֆրանկիսկ Ասսիզեցու։*

115. Հոտը— *Ֆրանկիսկյանների համայնքը։*

116—117. Նրա կրունկ դրած տեղ...— *Ֆրանկիսկի և նրա առաջին հետևորդների կրունկ դրած տեղը այժմյան ֆրանկիսկյանների համայնքը իր ոտքի մատն է գնում, այսինքն՝ իրենց նախորդների հակառակ ուղղությամբ են ընթանում այժմյան ֆրանկիսկյանները։ Վերջիններս գժվեցին ու պառակտվեցին երկու հավասարների «հոդեկանների» և «վանականների»։*

118—120. Եվ այդ բանի շուտով արդյունքը հոռի...— *ֆրանկիսկյանների մեջ ծագած գժտություններին հարմարեցնում է ավետարանական առակը (Մատթ. ԺԳ, 24—30). «Վատ մշակության արդյունքը կերևա, երբ որոմը կայրվի և չի կարողանա իրրև բարի ցորենահատիկ մտնել շտեմարան, այսինքն ֆրանկիսկյանների երկու հատվածները, որոնք իրենց ծայրահեղություններով («հոգեկանները» պահանջում էին ուխտի կանոնադրությունը խստացնել, իսկ «վանականները» պահանջում էին թուլացնել) հեռացել են Ֆրանկիսկի նշած ճանապարհից, կպատժվեն իրենց սխալի համար, երբ ընդմիշտ արտաքսվեն երկնքի թագավորությունից»։*

121—123. Ով որ ուզի մեր գիրքը թերթել...— *ով ցանկանա մեկ-մեկ քննել ֆրանկիսկյան եղբայրներին, կգտնի դեռ ոմանց, որոնք հավատարիմ են սկզբնական ավանդությանը։*

124—126. Սակայն դա ոչ Ակուասպարտում կգտնես, ոչ Կազալում...— *ակնարկում է ֆրանկիսկյանների ավագերեց Մաթթեո Ակուասպարտցուն (մեռ. 1302-ին), որ ուխտի կանոնադրությունը խիստ գտավ և թուլացրեց, և «հոգեկանների» պարագլուխ Ուբերտինո Կազալցուն (մեռ. 1388-ին), որ ուխտի կանոնադրությունը թույլ գտավ և պահանջեց խստացնել։*

127. Բոնավենտուր Բանյորցի *(1221—1274)—ֆրանկիսկյան ուխտի գեներալ, կարդինալ, աստվածաբանական բազմաթիվ երկերի հեղինակ. անվանվել է «սխոլաստիկների Պլատոն»։*

130. Իլլումինատե ու Ավգուստին—*Ֆրանկիսկ Ասսիզեցու առաջին աշակերտներից։*

133. Սուրբ Վիկտորի Հյուգոն—*ֆրանսիացի միստիկ աստվածաբան։*

134—135. Մանչգոր *(այլ անունով Կոմեստոր)*—*ֆրանսիացի աստվածաբան։* Խպանցի—*քնիկ լիսարոնցի, բժիշկ և աստվածաբան, հետագայում պապ՝ Հովհաննես ԻԱ անունով (մեռ. 1227-ին)։*

136—137. Նաթան—*հրեա մարգարե, որ պախարակեց Դավիթ թագավորին՝ Ուրայի կնոջ հետ ունեցած մեղավոր կապի համար (հմմտ. Բ Թագ. ԺԲ, 1—14)։* Ոսկեբերան հորջորջված պատրիարքը—*Կոստանդնուպոլսի պատրիարք Հովհաննես Անդիոքզին, որ «ոսկեբերան» է անվանվել իր փայլուն պերճախոսության համար։*

137—138. Անսելմ— *Քենտրբերիի արքեպիսկոպոս, աստվածաբան (մեռ. 1109-ին)։* Դոնատո— *Դ արի քերական, Տերենտիոսի ու Վիրգիլիոսի կենսագիր ու մեկնաբան։*

139. Ռաբան—*Թ դարի աստվածաբան, Մայնցի արքեպիսկոպոս։*

140—141. Հովակիմ *(Joachim)* Ֆլորացի— *Ֆլորա վանքի (Կալաբրիա) աբբահայրը և ԺԲ դարի հետաքրքրքրական դեմքերից մեկը (մեռ. 1202-ին)։ Աստվածաշնչի մեկնությանը նվիրված իր երկերում առաջարկել է կրոնական կարգերի խոր փոփոխություն և նախատեսել է բարոյապես ու սոցիալապես բարեփոխված աշխարհի ծնունդը։ Նրա գաղափարներից շատերը դատապարտել է եկեղեցին։*

142—144. Տողերի իմաստն է. «Ֆրանկիսկի մասին դոմինիկյան Թովմաս Ակուինացու գովեստի խոսքերն էին, որ ինձ՝ ֆրանկիսկյան Բոնավենտուրիս, մղեցին պանծացնելու հավատի այնպիսի մի պաշտպանի, ինչպիսին է Դոմինիկը»։

ԵՐԳ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

1—21. *Հենց որ Բոնավենտուրը դադարեց խոսել, կենդանի լույսերի երկու պսակները վերսկսում են երգել և միաժամանակ պտտվել Դանտեի ու Բեատրիչեի շուրջ, մի պսակը մյուսին հակառակ ուղղությամբ։ Որպեսզի ընթերցողը որոշ գաղափար կազմի իրողության մասին, բանաստեղծը նրան հրավիրում է երևակայության մեջ միացնել երկնքում 15 վառ աստղեր, Մեծ Արջի յոթ աստղերը և Փոքր Արջի երկու մեծ աստղերը և ապա պատկերացնել, որ այս 24 աստղերը երկնքում կազմեն երկու համաստեղություն, համակենտրոն և իրար հակառակ պտտվող։*

7—9 Սայլակ— *Մեծ Արջի համաստեղությունը։*

10. Բեռանն այն եզջյուրին— *երկու վերջին աստղերը Փոքր Արջ համաստեղության։*

14. Ինչպես այն, որ կազմեց դուստրը Մինոսի— *ինչպես այն պսակաձև համաստեղությունը, որին կերպարանափոխվեց Արիադնան (դուստրը Մինոսի)։*

24. Քիանա— *դեռ Տոսկանայում։*

25. Այնտեղ չէին երգվում Բաքոսն ու Պեան— *24 իմաստունների այդ երկու շրջանակների մեջ չէին օրհներգվում ու փառաբանվում հեթանոսական աստվածությունները, ինչպիսիք են Բաքոսն ու Ապոլլոնը (որի մականուններից մեկն է Պեան)։*

31. Այն լուսաշող ճոգին— *Թովմաս Ակուինացին։*

32. Աստվածասեր աղջիկը— *Ֆրանկիսկ Ասսիզեցու։*

35. Քո մի հարցը— *տես ԺԱ, 25։*

36. Մյուս հարցդ— *տես ԺԱ, 26։*

37. Նախահայրը— *Ադամը։*

38. Այն կնոջ— *Եվային։*

40. Մյուսը— *Քրիստոսը։*

46—48. Զարմանում ես ուստի խոսքից իմ ասած— *վերևում, Ժ երգի 109—114 տողերում, Թովմաս Ակուինացին ասել էր, թե դեռ չի ծնվել մի իմաստուն Սողոմոնի նման. դա Դանտեին զարմացնում է՝ մի՞թե Սողոմոնն ավելի իմաստուն է քան Ադամն ու Քրիստոսը, որոնք անմիջականորեն ստեղծված են աստծուց։*

59. Երկնաբնակ գոյակների մեջ ինձյակ— *Հրեշտակաց ինը դասերի մեջ։*

83. Կավահողից կերտված մարդը առաջին— *Ադամը։*

84. Նա, ով Կույսից էր ծնյալ— *Քրիստոսը։*

87. Ինչպես երկու այն անձանց մեջ— *ինչպես Ադամի և Քրիստոսի մեջ։*

92. Նա— *Սողոմոնը։*

93. «Խնդրիր ինչ որ ցանկանաս»— *ըստ Աստվածաշնչի ավանդության Սողոմոն թագավորը գիշերային քնի մեջ էր, երբ երազում աստված երևաց և ասաց նրան. «Խնդրիր ինչ տամ քեզ»։ Սողոմոնը պատասխանեց. «Քո ծառային իմաստուն սիրտ տուր, որպեսզի կարողանամ ժողովրդին դատել (կառավարել) և բարին ու չարը զանազանել»։ Եվ աստված ասաց նրան. «Ահա քեզ կտամ իմաստուն և հանճարեղ սիրտ, այնպես որ քեզ նման ոչ ոք եղած չլինի քեզանից առաջ և ոչ ոք չլինի քեզանից հետո» (հմմտ. Դ Թագ. Գ, 5—12)։*

97—102. Ոչ որպեսզի իմանա...— *Սողոմոնը իբրև թագավոր աստծուց խնդրեց իմաստություն, որպեսզի լավ գատի կամ արդարորեն կառավարի ժողովրդին, և ոչ որպեսզի իմանա վերացական գիտելիքներ։*

106. «Չի ծնվել»— *Թովմաս Ակուինացու ասած «Դեռ չի ծնվել մի իմաստուն նրա պես» (Ժ, 114) խոսքը ուրեմն նշանակում է «Դեռ չի ծնվել այնպիսի մի իմաստուն թագավոր, ինչպիսին եղավ Սողոմոնը»։ Այդ նշանակում է, որ Սողոմոնը եղավ ամենաիմաստուն թագավորը, բայց ոչ ամենաիմաստուն մարդը։*

125. Պարմենիդ, Բրիս ու Մելիս— *հնադարյան հույն փիլիսոփաներ։*

127. Սաբելիոս և Արիոս— *Գ—Դ դարերի հերետիկոսներ։*

130. Մարդիկ պետք չէ հախուռն դատեն բնավին— *այս և հետագա տողերում Թովմաս Ակուինացին պախարակում է թեթևամտությունը նրանց, որոնք հախուռն դատաստաններով վճռում են գալիքը, հատկապես ուրիշների փրկությունն ու դատապարտությունը։*

139. Սեր Մարտինո կամ Բերտա— *մի որևէ հասարակ այր կամ կին։*

ԵՐԳ ՏԱՍՆԶՈՐՍԵՐՈՐԴ

1—8. *Թովմաս Ակուինացու խոսքը ուղղված շրջանակից դեպի կենտրոն և Բեատրիչեի խոսքը ուղղված, ընդհակառակը, կենտրոնից դեպի շրջանակ, բանաստեղծին հիշեցնում են կլոր ամանում գտնված ջրի ալեծուփ շարժումը եզրից դեպի կենտրոն և կենտրոնից դեպի եզր։*

10—18. *Այստեղ առաջադրված երկու հարցերը (1. երանելի հոգիներից ճառագայթող լույսը տեսլո՞ւ է հավիտենապես, նաև մարմինների հարությունից հետո, 2. եթե տեսլու է, ապա գա վնաս չի՞ տա նրանց տեսողական օրգաններին) հետագա տողերում լուծվում են Թովմաս Ակուինացու սխոլաստիկ վարդապետության համաձայն։*

34. Ամենասքանչելի լույսից— *Սողոմոնի լուսատճառնչ հոգուց, որ շրջանակի հոգիներից ամենավառն էր (Ժ. 109)։*

36. Հրեշտակի ձայնը ուղղված Մարիամին— *Մարիամին ավետիս բերող Գաբրիել հրեշտակապետի ձայնը (հմմտ. «Քավ.» Ժ, 3.—40)։*

84. Նոր քարձրադիր մի երկնքում— *Հրատի երկնքում (տ. 100)։*

96. Հելիոս— *հունարեն նշանակում է արև։ Արև է Դանտեն երբեմն անվանում աստծուն («Դր.» Թ, 8. Ժե, 76)։*

103. Հիշողությունն աստ հաղթում էր հանճարին— *որովհետև վերջինս անկարող է արտահայտել այն, ինչով տպավորվել է հիշողությունը։*

108. Նա կտեսնի այդ լուսափառ Քրիստոսին— *Քրիստոսին հետևողը, լավ քրիստոնյան, արժանի դառնալով երկինք բարձրանալու, անձամբ կտեսնի այդ լուսափառ և հրաշափառ Քրիստոսին՝ Հրատի խաչի վրա։*

125. «Ելիր» և «հաղիր»— *երկու բառերը մի օրհներգի, որով այն հոգիները կոչ էին անում Քրիստոսին հաղթանակ տանել մահվան և դժոխքի դեմ։*

135. Իսկ ես չէի այն աչքերը դեռ դիտած— *իսկ ես դեռ չէի նայել Բեատրիչեի աչքերին, որոնք ավելի էին գեղեցկացել նոր երկնքում։*

136. Կներեք որ չեմ մեղադրում ինքս ինձ— *կների որ ինքս ինձ չեմ մեղադրում ետ դասելուս համար Բեատրիչեի գեղեցիկ աչքերի հմայքը հոգիների երջանկության հմայքից (տտ. 127—132)։*

ԵՐԳ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ

4. Քնարի ձայնն հաճելի— *երանելի հոգիների հաճելի խմբերգը։*

20. Մի լույս— *մեկը այն լուսահոգիներից, որոնցից կազմված է Հրատի խաչը («Դր.» ԺԴ, 94—102)։ Այս մեկը Կաչչագուիդան է՝ Դանտեի ապուպապը։*

25—27. Այսպես սիրով վառվեց ոգին Անֆիսի...— *այսպես խանդաղատեց Անֆիսի ոգին, երբ իր որդուն՝ Ենեասին, կենդանի տեսավ Սիցիլյան դաշտում՝ մեռելների թագավորության մեջ։ Նույնպիսի զգացումով տոգորվեց Կաչչագուիդան, երբ երկնքում տեսավ իր զարմիկ Դանտեին։*

30. Երկու անգամ— *հիմա և մահից հետո։*

53. Մատյանը մեծադիր— *աստվածային կանխագիտության մատյանը։*

55. Նախավորից— *առաջին էակից, աստծուց։*

62. Հայելու մեջ ցոլացիկ— *աստծու մեջ։*

74. Առաջնագույն հավասարին— *Արևին (տ. 76), աստծուն։*

84. Երախտիքս միայն արտով եմ հայտնում և ոչ նաև խոսքերով։

88. Ես արմատ եմ— *արմատը այն ծննդաբանական ծառի, որի վերջին ընձյուղն է Դանտեն։*

93. Քավարանի նախագոտում— *Քավարանի առաջին բոլորակում։*

94. Իմ որդին էր, և քո մեծ պապն հարազատ— *Կաչչագուիդայի որդին կոչվում էր Ալիգիերո. Ալիգիերոյից ծնվեց Բելլոն, հայրը Ջերիի («Դժ.» ԻԹ, 27) և Բելլինչոնեի. այս վերջինից ծնվեց մի ուրիշ Ալիգիերո, հայրը Դանտեի։*

97. Ֆլորենցիան, հին պարսպով շրջափակ— *Ֆլորենցիան շրջապատող հին պարիսպը ըստ ավանդության կառուցվել է Կարլոս Մեծի ժամանակներում։ Ապա, 1173 թվականին կառուցվեց մի երկրորդ, ավելի լայն պարիսպ. ապա մի երրորդ պարիսպ, որի կառուցումն սկսվեց 1284 թ. և ավարտվեց ԺԴ դարի ընթացքում։*

106. Մարդաթափուր տներ— *ընտանիքի պահանջից ավելի մեծ տներ ավելորդ սենյակներով։*

107. Սարդոնապալ— *Ասորեստանի թագավոր (է դար. մ. թ. ա.). ըստ ավանդության հռչակված էր մեղկ և ապականված բարքերով։*

109. Ուշելլատոն Մոնտեմալից չէր անցել— *Ֆլորենցիայի շքեղությունը, ինչպիսին երևում է Ուշելլատոյ լեռան բարձունքից, դեռ չէր գերազանցել Հռոմի շենքերի շքեղությանը։*

112. Բելլինչոնեն Բերտի դեմ Ռավինյանի— *ԺԲ դարի ազդեցիկ ֆլորենտացի։*

115. Նեոլիներ և Վիկկիներ— *ֆլորենտացի հին մեծահամբավ տոհմեր։*

118—119. Ամեն մեկը իր տեղում...— *յուրաքանչյուր ֆլորենտացի վստահ էր, որ ինքը գերեզման կմտնեն հայրենիքում և ոչ թե աքսորավայրում։*

120. Ֆրանսիայի համար, ուր գնում էին ֆլորենտացի աղամարդիկ գլխավորապես առևտրական կամ դրամական գործերով։

127. Լապո Սալտերելլո— Դանտեին ժամանակակից ֆլորենտացի իրավաբան, որ գործուն մասնակցություն ունեցավ Ֆլորենցիայի քաղաքական կյանքին։ Զանզելլա— Դանտեին ժամանակակից ֆլորենտուհի, որ հայտնի էր իր անպարկեշտ և գայթակղիչ բարքերով։

129. Կինկիննատա— տես «Դր.» Զ, 46։ Ուղղամիտ պետական գործչի տիպար։ Կոռնելիա— տե՛ս «Դժ.» Դ, 128։ Առաքինի կնոջ տիպար։

134. Ձեր եկեղեցում ճինավուրց— Ֆլորենցիայի Սան-Ջովաննի եկեղեցում («Դժ.» ԺԹ, 17)։

136. Մարոնտոն և Էլիսե եղան ինձ եղբայր— Կաչչագուիդայի այս եղբայրների մասին ոչինչ հայտնի չէ մեկնիչներին։

137—138. Պադոսի ճովտից— Պո գետի հովտից. հավանաբար նկատի ունի Ֆերրարա քաղաքը, ուր հիրավի, ԺԱ դարից մինչև ԺԴ դարի կեսերը ապրել է Ալիգիերի անունով մի ընտանիք. մայրական այդ աղգանունից առաջացավ Կաչչագուիդայի որդու անունը, և ապա, չնչին փոփոխությամբ, Դանտեի հոր և ընտանիքի անունը։

139. Մառայեցի ապա կայսր Կոնրադին— Սվեվիայի Կոնրադ Գ կայսրը Ֆրանսիայի Լուդովիկոս Է թագավորի հետ մասնակցեց Խաչակրաց երկրորդ արշավանքին (1147—1149), որին միացան մի քանի ֆլորենտացիներ։

143—144. Դավանողները որի...— մահմեդական կրոնի հետևորդները, դավանողները Հռոմի պապի մեղքով բռնաբարում են քրիստոնեության իրավունքները։

ԵՐԳ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ

1. Ազնվություն արյան— ցեղային կամ ժառանգական ազնվականություն, ի հակադրություն իսկական ազնվականության, որ գալիս է անհատապես օժտված հոգուց։

6. Ես էլ մի պտն հպարտացա դրանից— ես էլ մի պահ հպարտություն զգացի իմ ազնվական ծագման համար։ Դանտեն նախորդ երգի վերջում իմացավ, որ իր ապապապ Կաչչագուիդան եղել է ասպետ, այսինքն՝ ազնվական (Ժե, 139—141)։

8. Եվ եթե դու չնորոգվես օր առ օր— այսինքն՝ եթե ժառանգական ազնվականությունը քիչ-քիչ չնորոգվի, չամրապնդվի նոր սերունդների արժանավոր գործերով։

10. «Դուք»— հարգանքի նշան արտահայտող դերանուն։ Դանտեն այն գործածում է միայն Բրունետտոյին, Ֆարինատային, Կավալկանտեին և Բեատրիչեին դիմելիս. հիմա գործածում է նաև Կաչչագուիդային դիմելիս, որին սկզբում դիմել էր «դու»-ով (Ժե, 87)։

14—15. Ինչպես նա, ով հազաց, երբ տեսավ...— ակնարկում է Մալեհո դամային Լանչիլոտտոյի ասպետական վեպում («Դժ.» Ե, 127—137)։ Հեռվից ներկա գտնվելով Լանչիլոտտոյի և Ջինեվրա թագուհու միջև զրույցին, երբ վերջինս ասաց խոսքեր, որոնք իրենց փոխադարձ սիրո բացահայտ վկայությունն էին, դաման բազմանշանակ կերպով հազաց՝ ասպետին իմացնելով իր ներկայությունը և հասկացնելով, որ ինքը գիտե նրա գաղտնիքը։

25. Փարախը սուրբ Հովհաննի— Ֆլորենտիան, փարախը (հմմտ. «Դր.» ԻԵ, 4—6), որի հովանավորն էր սուրբ Հովհաննես Մկրտիչը (սան Ջովաննի Բատիստա)։

41. Թաղի մեջ ճինավուրց— Սան Պիերո կոչված հին կենտրոնական թաղում, ուր ապրում էին ֆլորենտական հին ընտանիքները։

46—48. Մարսից մինչև Բատիստա...— Հին Կամուրջի վրայի Մարսի արձանից (տ. 146) մինչև Ջովաննի Բատիստա (Հովհաննես Մկրտիչ) տաճարը, այսինքն քաղաքի հարավային ծայրից մինչև հյուսիսային ծայրը, Ֆլորենցիայի սահմանները Կաչչագուիդայի ժամանակներում։

49—50. Ֆիզզիե, Զերտալդա, Կամպի— *գյուղաքաղաքներ Ֆլորենցիայից ոչ հեռու։*

53. Դալուցցո ու Տրեսպիա— *ավաններ Ֆլորենցիայի սահմաններից դուրս։*

56. Ագուլյացու կամ Սինյացու պես մարդկանց— *ակնարկում է Բալդո Ագուլյացուն և Ֆացիո Սինյացուն, որոնք տխրահռչակ քաղաքական գործիչներ էին Ֆլորենտական հանրապետության մեջ Դանտեի ժամանակներում։*

58—66. *Տողերի իմաստն է. «Եթե հոգևորական դասը դուրս չգար իրեն սահմանված դերից (հմմտ. «Քավ.» 2, 91—93) և դրանով չնպաստեր Իտալիան պառակտող գժտություններին, ապա շատերը կմնային իրենց նախնիների տեղերում, և Ֆլորենցիան չէր նեղվի նորաբնակների խռնումից և բարքերի այլասերումից»։*

61. Նա ով հարստացել է փողով— *հավանաբար նկատի ունի Վիլլուտիների տոհմը, հատկապես Լիպպո Վիլլուտին, որ ԺԳ դարի սկզբին Սեմիֆոնտեի դղյակից փոխադրվեց Ֆլորենցիա՝ առևտրական և դրամական գործերով զբաղվելու։*

64. Մոնտեմուլո— *դղյակ, որ պատկանում էր Գուիդո կոմսերին։*

65. Զերկիներ— *Ակոն բնակավայրից Ֆլորենցիա փոխադրված ազդեցիկ տոհմ, որ գլխավորեց Սպիտակների կուսակցությունը ֆլորենտական համայնքում։*

66. Բոնդելմոնտիֆ— *նշանավոր տոհմ, որին պատկանում էր Մոնտերուոնոյի դղյակը Գրեվե (Առնոյի վտակը) գետի ափին։*

73. Ուրբիսալ ու Լուսի— *հին ծաղկուն քաղաքներ հյուսիսային Իտալիայում, որոնք Դանտեի ժամանակ արդեն ավերակ էին դարձել։*

75. Սինիգալյա ու Կյուզի— *իտալական հին քաղաքներ, որոնք անկման էին հասել Դանտեի ժամանակներում։*

82—84. Եվ ինչպես որ լուսնի երկինքը...— *ինչպես լուսինը մերթ բարձրացնելով, մերթ իջեցնելով ծովերի ջրերը, փոփոխակիորեն ծածկում ու բացում է ափերը, այնպես Բախտը մերթ բարձրացնում, մերթ իջեցնում է Ֆլորենցիան։*

88—93. *Այս տողերում, ինչպես և հետագա տողերում կաչչագուիդալի թվարկած հին ֆլորենտական տոհմերը Դանտեի ժամանակ կամ անհետացել էին, կամ նսեմացել։*

94—96. Դարպատի մոտ...— *դարպասի մոտ Սան Պիերո թաղի (տ. 41), ուր ներկայումս ապրող Զերկիները (տ. 65) իրենց դավաճանական քաղաքականությամբ շուտով կործանման կհասցնեն պետական նավը։*

97—99. Ռավինյանֆ— *ազդեցիկ տոհմ, որի գլուխն էր Բելլինչոնե Բերտին («Դր.» Ժե, 112)։*

105. Եվ նրանք, որ կեղծից ամոթ զգացին— *ակնարկում է Կյարամոնտեզիներին, որոնք ամաչեցին իրենց մի ազգականի գեղծարարության համար։*

106. Այն բուռը— *Դոնատիների տոհմը, որի մի ճյուղն էին Կալֆուչչիները։*

109. Նրանք— *Ուբերտիները։*

111. Գնդերն ոսկե— *ոսկեգնդերը տոհմանշանն էին Լամբերտիների՝ գիբելլինյան մի ընտանիքի։*

112—114. Այսպես շենցնում էին նախնիքը նրանց...— *այսպես էին Ֆլորենցիան ծաղկեցնում նախնիները այլասերված Վիստոմինիների և Տոզինգիների, որոնք, վայելելով ֆլորենտական թեմը վարելու ավանդական իրավունքը, հավաքվում են եպիսկոպոսարանում և կերուխումով զբաղվում։*

115. Ժպիրն տոհմը— *Ադիմարիների տոհմը։*

119—120. Բայց Ուբերտին Դոնատոյին դուր չեկավ...— *բայց Ուբերտինո Դոնատոյին դուր չեկավ, որ իր աներ Բելլինչոնե Բերտին իրեն ազգական դարձրեց Ադիմարիներին։*

121. Կապոնսակկո— *Կապոնսակկիները եկել էին Ֆիեզոլեից և բնակություն հաստատել Հին Շուկայի մոտ։*

124—126. Տարարինակ, բայց ստույգ բան բեզ ասեմ— *Դանտեի ժամանակ տարօրինակ էր թվում, որ հին քաղաքի դարպասներից մեկն իր անունն ստացել էր Պերա տոհմից, քանի որ այդ տոհմն արդեն հանգել էր։*

127—132. Ով որ կրեց տոհմանշանը մեծ բարոնի...— *այս մեծ բարոն կոչվածը Ուգոն Մեծն է, Տոսկանայի մարկիզը, որից ասպետության աստիճան ստա-*

ցան մի քանի ֆլորենտացիներ և ընդունեցին նրա տոհմանշանը այս կամ այն տարբերությամբ։

134. Բորգոյում— *Բորգո Սանտի-Ապոստոլի թաղում։*

135. Նոր դրացիք— *Բոնդելմոնտիք (տես տ. 66 և ծանոթ.)։*

136—141. Այն տոհմը, որ փոռձանք բերեց ձեր գլխին...— *ակնարկում է Ամիդեիների տոհմը։*

143. Էմա— *Գրեվի գետի (տ. 66) վտակը։*

146. Հին Կամուրջը պահող Մարսի բեկորին— *ակնարկում է Առնո գետի Հին Կամուրջի գլխին գտնվող Մարսի արձանի մնացորդը (տես «Դժ.» ԺԴ, 146—150 և ծանոթ.), որի մոտ սպանվեց Բոնդելմոնտեն։*

152—154. Սպիտակ շուշանը՝ Ֆլորենցիայի զինադուշը, երբեք գլխիվայր շուռ չէր տրված թշնամու նիզակի ծայրում (ինչպես արվում էր պարտված դրոշներին), ոչ էլ դեռ կարմիր էր դարձել ներքաղաքային կռիվների պատճառով, ինչպես արվեց հետագայում, 1251 թվին, գուելֆների կամքով։

ԵՐԳ ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ

1—3. Ինչպես եկավ Կլիմենի մոտ...— *Ֆայետոնը տագնապով եկավ իր մոր՝ Կլիմենի մոտ, նրանից իմանալու, թե իսկապես ճի՞շտ էր այն, ինչ ասել էր Յուպիտերի որդի Էպաֆը (վերջինս ասել էր, թե Ֆայետոնը Արևի որդի չէ), այն Ֆայետոնը, որի օրինակը պատճառ եղավ որ հայրերը իրենց որդվոց խնդրանքների նկատմամբ զառնան անզիջող։*

4. Այոպես էի ես— *այսպես անհանգստացած էի ես, փափագելով Կաչչագուիդայից ճշմարտությունն իմանալ իմ ճակատագրի մասին։*

6. Որ միչ առաջ ինձ համար էր տեղ փոխած— *տես «Դր.» ԺԵ, 19—24։*

17. Հավերժական Կետ— *տես «Դր.» ԻԸ, 16։*

22. Իմ ապագա կյանքի մասին լսեցի— *Վիրգիլիոսի ուղեկցությամբ Դժոխքում և Քավարանում ճանապարհորդելու ընթացքում Դանտեն իր ապագա կյանքի մասին ասել էր իրեն անհանգստացնող խոսքեր։*

43. Այդտեղից— *Հավերժ Մտքից։*

46—47. Ինչպես մեկնեց Հիպպոլիտը Աթենքից...— *ինչպես Հիպպոլիտը իր խորթ մայր Ֆեդրայի զրպարտիչ մեղադրանքների պատճառով ստիպված եղավ հեռանալ Աթենքից։*

48. Այոպես պեաք է դու հեռանաս Ֆլորենտից— *այսպես անմեղ, ինչպես Հիպպոլիտը, դու պետք է աքսորվես Ֆլորենցիայից։*

50. Այնտեղ— *պապական կուրիայում։*

52—54. Եվ, ինչպես միշտ, ամբողջ մեղքը կրենծյվի...— *եվ, քաղաքացիական խռովությունների ամբողջ մեղքը, ինչպես միշտ, մարդկանց կողմից կվերագրվի պարտվողներին, բայց իսկական հանցագործների պատիժը ճշմարտության վկայություն կլինի։*

61—69. Բայց այն ինչ որ ցեզ կենչի ծանրապես...— *այս տողերից երևում է, որ Դանտեն խորապես վիրավորվել է Սպիտակներից, աքսորի ընկերներից։ Այդ վիրավորանքը, որ հանգեցրեց գժտության, բացատրում են Դանտեի և իր կուսակիցների միջև ծագած տարաձայնությամբ ֆլորենտական Սևերի հետ վարելիք քաղաքականության վերաբերյալ։ Դանտեն կողմնակից էր խոհեմ քաղաքականության. բայց ծայրահեղական Սպիտակներն ու Գիբելինները չլսեցին նրա խորհուրդները, 1304-ի հուլիս 20-ին վաղամեմ փորձ կատարեցին զենքի ուժով Ֆլորենցիա վերադառնալու և չարաչար պարտվեցին։ Այդ օրվանից Դանտեն առանձնացավ, կազմեց առանձին մի կուսակցություն, որի պարագլուխն ու միակ անդամը ինքն էր (տ. 69) և իր մենախոհությունների ու մտահոգությունների առարկա դարձրեց ոչ թե սոսկ իտալական իրականությունը, այլ համամարդկային պրոբլեմները։*

71—72. Մեծանոգի Լոմբարդցին— *Բարթոլոմեո դելլա Սկալան, Վերոնայի սինյորը, որի մոտ է Դանտեն ապաստանել 1304 թվի առաջին ամիսներին։*

76. Նրան— *սա Կանգրանդե դելլա Սկալան է, Բարթոլոմեոյի կրտսեր եղբայրը։*

77. Այս ասողից— *Հրատ (Մարս) մոլորակից։*

82. Դասկոնցին դեռ չխաբած Հեռիկին— *դասկոնցի Կլեմենտ Ե պապը 1310 թվին Հենրիկ է կայսրին հրավիրեց գալ Իտալիա և հետո հակառակվեց նրա հետ («Դր.» I, 136—148)։*

85. Վիճաբանությամբ այնքան աչքի նա կընկնի— *Կանգրանդե դեպքա Սկալայի մեծահոգության և վեհանձնության մասին խոսում են նաև Վիլլանին, Պետրարկան ու Բոկաչչոն։*

92—93. Եվ ինձ նայոնեց դեռ քաներ...— *այն անհավատալի քաները, որ անելու է Կանգրանդեն, հայտնի չէ որոնք են. դրանք ավելի շուտ արտացոլում են այն մեծ հույսերը, որ Դանտեն որոշ ժամանակ ուներ Վերոնայի սինյորի նկատմամբ՝ իբրև գիբելլինյան իդեալի մարմնացումի։*

95. Մեկնությամբ էեզ ճայոնված խոսքերի— *բացատրությունը այն զուշակությունների, որոնք արվեցին Դժոխքում և Քավարանում (տես. տ. 22 ծանոթ.)։*

112—114. Հավետ տխուր ու ցավատանջ աշխարհում...— *Դժոխքում, Քավարանում և երկնքում (հմմտ. տտ. 136—137)։*

122. Գանձն իմ գտած— *իմ թանկագին կաչչագուիդան, որին գտել էի երկրնքում։*

134. Գազաթները բարձրագույն— *աշխարհի իշխանավորները։*

ԵՐԳ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ

1. Երանելի այն հոգին— *Կաչչագուիդան։*

33. Մուսային— *պոեզիային։*

34. Հաչը բառյակ թեմով— *տե՛ս «Դրա», ԺԴ, 109. ժե, 19—24։*

37. Հեսու— *հրեա ժողովրդի առաջնորդը. Մովսեսից հետո և Ավետյաց երկիրը նվաճողը (հմմտ. «Քաղ.», Ի, 109—111. «Դր.» Թ, 124—125.)։*

40. Մակաբե— *հրեա հերոս, որ իր ժողովրդին ազատեց Սիրիայի թագավոր Անտիոք Էպիփանի բռնակալությունից (Բ դար մ. թ. ա.)։*

43. Կաղոս Մեծ և Օղանդ— *ֆրանսիական միջնադարյան էպոս «Ռոլանդի երգի» հերոսներ (հմմտ. «Դժ.» ԼԱ, 16—18. «Դր.» Զ, 94—96)։*

46. Գուլիելմո (Գիլյոմ.) և Ռենուարդ (Ռենուար)— *ֆրանսիական միջնադարյան էպոսի հերոսներ։*

48. Դուքս Կոֆրեդ— *Կոֆրուա Բուլյոնցին, Խաչակրաց առաջին արշավանքի պարագլուխը և Երուսաղեմի առաջին քրիստոնյա թագավորը։ Ռաքերա Գոֆրեդո— տես «Դժ.», ԻԸ, 14 ծանոթ.։*

70. Նոր երկնքում— *վեցերորդ երկնքում, որ Լուսնաթագն է (տ. 95)։ այստեղ բնակվում են արդարասերների հոգիները։*

82. Բեզաս— *այստեղ նկատի ունի ընդհանրապես Մուսան կամ պոեզիան։*

91—93. Diligite iustitiam qui indicatis terram— *«Սիրեցեք արդարությունը, դուք որ դատում (կառավարում) եք երկիրը» (Սողոմոն իմաստունին վերագրված «Իմաստություն» գրքի սկզբի բառերը)։ Աղաղակողությունն է աշխարհը կառավարողներին։*

113. M-ից կազմված շուշան— *գրքական M. տառի ձևը հիշեցնում է վինա-նշանային շուշանի պատկերը։*

119. Այն ծիրքն— *պապական կուրիային, անաղարտության և ապականության բնին։*

121—123. Թող նա. նորից խարազանի այն անձանց...— *ինչպես խարազանեց և հոր տաճարից վռնդեց առևտուր անողներին (հմմտ. Մատթ. ԻԱ, 12—13. Մարկ. Բ, 15—17. Ղուկ. ԺԹ, 45—46. Հովհ. Բ, 14—17)։ Այստեղ Դանտեի զայրույթն ուղղված է պապերի դեմ։*

126. Օրինակին վատշվեր— *պապերի վատ օրինակին։*

128. Արդ կռռում են մարդիանց ճացից զրկերով— *այժմ պապերը կռվում են բանագրաքներեր և արգելանքներով միջոցով, որոնցով մարդկանց զրկում են հոգևոր սնունդից։*

130. Սակայն դու որ բանադրում ես, որ ջնջես— *ակնարկում է Հովհաննես*

ԻԲ պապին (1316—1334), որ մարդկանց հեշտությամբ բանադրում էր և հետո բանադրանքը վերացնում փողի համար։

132. Այգու համար— *տես «Գր.», ԺԲ, 72 և ծանոթ.։*

133—136. Դու կարող ես ասել. *«Ես այնպիսի սեր ունեմ դեպի Հովհաննես Մկրտիչը, որ ոչ մի առաքյալ չեմ ճանաչում, ո՛չ Պետրոսին, ո՛չ Պողոսին»։ Հասկանալի է, որ այստեղ Հովհաննես Մկրտիչը ֆլորենտիական ոսկերչարան է՝ ֆլորինը, որի վրա դրոշմված էր Ֆլորենցիայի Հովհաննավորի պատկերը (հմմտ. «Գր.», Լ. 74)։*

ԵՐԳ ՏԱՍՆԵՆՆԵՐՈՐԴ

11—12. Արծվի կտուցն արտաբերեց «ես» և «իմ»...— *արծիվն, ինչպես մի էակ, սկսեց խոսել եղակի դեմքով, թեև խոսքերը բխում էին արծվի պատկերը կազմող բոլոր հոգիներից և տրամաբանորեն պահանջում էին հոգնակիի գործածություն։ Այս սիմվոլը նշանակում է. արդարությունը, որի մարմնացումն է արծիվը (տես «Գր.» ԺԸ, 108 ծանոթ.), ինչ տեղում և ժամանակում էլ լինի, ով էլ լինի այն գործադրողը, մեկ է, հետևաբար մեկ է արդարության ձայնը։*

25. Իմ խաղը— *Ճշմարտությունն իմանալու իմ ծարավը։*

27. Ոչ մի սնունդ— *ոչ մի լուծում։*

32. Դուք գիտեք, որ մի տարակույս կա իմ մեջ— *Դանտեին անհանգստացնող տարակույսը հետևյալն է. «Ինչո՞ւ արդարադատ աստված հավիտենապես դատապարտում է առաքինի և անմեղ հոգիներին միայն Նրա համար, որ նրանք չեն հավատացել Քրիստոսին։ Ինչպե՞ս հաշտեցնել աստվածային արդարադատության մտքի հետ անհավատ արդարների և անկնունք մանկանց դատապարտությունը»։*

40. Նա— *աստված։*

46—48. Դրա փաստը այն գոռոզն է առաջին...— *աստվածային մտքի քերաբանությունն իր ստեղծածի նկատմամբ հաստատվում է Լյուցիֆերի (առաջին գոռոզի) օրինակով, որը, թեև բարձր բոլոր էակներից («Քավ.» ԺԲ, 25—26), գահավիժեց, որովհետև չուզեց սպասել իր աճին, իր կատարելությանը։*

107. Վերջում— *վերջին դատաստանի օրը։*

111. Մի մասն հավետ դարձած հարուստ, մյուսն ադքատ— *մի մասը վարձատրվելով հավիտենական հարստությամբ (երանությամբ), մյուս մասը դատապարտվելով հավիտենական թշվառության։*

113—114. Այն մասյանը...— *աստվածային արդարադատության մասյանը, որի մեջ արդարության արծիվը կարդում է քրիստոնյա թագավորների շարադրությունները։ Այդ մասյանում արձանագրվում են յոթանասնչորս մարդու քարի և չար գործերը (հմմտ. «Հայտ.» Բ, 12)։*

115—141. Այս ինը եռատողերում կա դարձյալ դանտեական արվեստի մի հնարանք, որպիսին արդեն տեսանք «Քավարան»-ի ԺԲ երգի 25—63 եռատողերում։ Այստեղ ինը եռատողերը բաժանված են երեք խմբի. առաջին խմբի երեք եռատող տները (տտ. 115—123) սկսում են Անդ կերևա (բնագրում Li si vedrà). հաջորդ խմբի երեք եռատող տները (տտ. 124—132) սկսում են Դուք կտեսնեք (բնագրում Vedrassi). հաջորդ խմբի երեք եռատող տները (տտ. 133—141) սկսում են Ով (բնագրում E)։ Երեք խմբի եռատողերի առաջին տողերը կազմում են աբբրևիատուրա՝ LVE կամ LUE (հնում v և u տառերը գրվում էին դրեթե նույնանման), որ նշանակում է «ժամանակաց»։*

Ուզում է ասել, որ վատ թագավորները, ինչպիսիք են այս ինը եռատողերում ներկայացված անձինք, ժամանակաց են երկրի համար։

115—117. Ալբերտ— *Ալբերտ Հաբսբուրգցի կայսրը («Քավ.» Զ. 97)։*

119—120. Երբ կեղծ դռամ կնատի ՝նա...— *ակնարկում է Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ Գեղեցկին՝ «Դաղդին ցավին» («Քավ.» է, 109), որը Ֆլանդրիայի դեմ մղվող պատերազմի ծախսերին դիմանալու համար սակավարժեք դրամներ բաց թողեց։*

122—123. Սկովտիացին ու անգլիացին— *Սկոկոտիայի թագավոր Ռոբերտ*

Բրյուսը և Անգլիայի թագավոր Էդուարդ Բ-ն. տիրապետության անհաղ ծարավը թշնամացրեց նրանց։

125—126. Խսպանացի— *Կաստիլիայի թագավոր Ֆերդինանդ Դ-ն (1295—1312), Բոնեմ արքա— Չեխիայի թագավոր Վենցեսլավ Դ-ն («Քավ.» է, 101—102)։*

127—129. Կաղոտաճի արքա— *Կառլոս Բ Անժուացին («Քավ.» Ի, 79—81)։*

131—132. Որ տերճ է կղզուն հրաբորբ...— *սա Ֆրեդերիկ Բ Արագոնցին է (1272—1337), թագավորը Սիկիլիայի («Քավ.» է, 119)։*

137. Նրա եղբոր ու հարեղբոր— *Ֆրեդերիկի եղբայրը Սիկիլիայի և ապա Արագոնի թագավոր Յակոբ Բ-ն էր («Քավ.» է, 119—120), իսկ հորեղբայրը՝ Մայորկայի թագավոր Յակոբը։*

140—141. Պորտուգալցի— *Պորտուգալիայի թագավոր Դիոնիսիոս Հողագործը (1279—1325)։* Նորվեգցի— *Նորվեգիայի թագավոր Ակոն է-ն (1299—1319)։* Սերբ— *Սերբիայի, Խորվաթիայի և Դալմատիայի թագավոր Ստեփան Ուրուս Բ Միլուտինը (1282—1321)։*

142—144. Եռյանիկ է Հունգարիան, եռյանիկ է Նավարրան, *եթե նրանք թոթափեն Ֆրանսիայի թագավորական տան լուծը։*

146—147. Ֆամակոստա, Նիկոսիա— *գլխավոր քաղաքները Կիպրոսի։*

ԵՐԳ ՔՍԱՆԵՐՈՐԴ

1—12. *Այս տողերով ուզում է ասել, որ ինչպես արևին փոխարինելու են գալիս բազմաթիվ աստղեր երկնակամարում, այնպես էլ արծվի խոսքերին հաջորդում են երգերը առանձին հոգիների, որոնցից էր կազմված արծիվը։*

9. Խորհրդանիշն աշխարհի ու կայսրերի— *արծիվը, հռոմեական կայսրության և կայսրերի խորհրդանշանը (հմմտ. «Դր.» ԺԹ, 101—102)։*

31. Իմ այն մասը, որ տեսնում է— *աչքը։*

37—72. *Այս եռատողերում նույնպես կա դանտեական արվեստի մի եղանակ։ Արդարության արծվի աչքը կազմող վեց հոգիներից յուրաքանչյուրին հատկացված է մի եռատող, որին հաջորդող եռատողը սկսում է* Արդ նա գիտե (Ora conosce)։ *Վեց հոգիներն էլ արդար են և լուսավորված։ Բայց միայն այժմ՝ Դրախտում, նրանք ճանաչում են իսկական արդարությունը։*

37—42. Սրբազնագույն հոգու երգիչը...— *սաղմոսերգու Դավիթ թագավորը։*

43—48. Այն անձն է, որ սփոփեց այրուն...— *Տրայանոս կայսրն է, որ սփոփեց այրի կնոջ, պատժելով նրա որդուն սպանողներին (հմմտ. «Քավ.» Ժ, 73—93)։* Փառքով ճանաչում է...— *Տրայանոսը սեփական փորձով ճանաչում է քաղցրությունը Դրախտի, ուր գտնվում է այժմ, և դառնությունը Դժոխքի, ուր գտնվել է անցյալում իբրև անհավատ (հմմտ. տտ. 106—117)։*

49—51. Հաջորդը...— *Դավթի որդի Եզեկիան. սա ծանրապես հիվանդանալով և Եսայի մարգարեից իմանալով իր մոտալուտ մահը, չերմապես աղոթեց և 15 տարի ևս ապրելու արտոնություն ստացավ աստծուց (Դ Թագ. Ի, 1—11, Եսայի ԼԸ, 1—22)։*

55—60. Մյուսը— *Կոստանդին կայսրը։*

61—66. Գուլյելմո— *Գուլյելմո Բ Բարին, թագավորը Սիկիլիայի ու Պուլիայի (1166—1180), ուր հարգված էր իբրև արդարասեր ու խաղաղասեր արքա։*

67—72. Տրոյացի Ռիֆեոս— *Վիրգիլիոսի «Էնեականում» հիշատակված հերոս, որ զոհվեց հույների դեմ Տրոյայի պաշտպանության համար մղված մարտերում։*

83. Այդ երկուսը— *հեթանոսներ Տրայանոսն ու Ռիֆեոսը։*

106—117. Մեկը երկինք ելավ խորհից Դժոխքի...— *Տրայանոսի հոգին, ըստ ավանդության, Դժոխքից ելավ, կյանքին վերադարձավ, երկրորդ անգամ մեռավ իբրև քրիստոնյա և Դրախտ բարձրացավ շնորհիվ Գրիգոր պապի աղոթքների (հմմտ. («Քավ.», Ժ, 75)։*

118—126. Մյուս հոգին...— *Ռիֆեոսը։*

127—129. Երեք կանայք, որ տեսար մոտն անվի աջ...— *աստվածաբանական*

երեք առաքինությունները, որ Դանտեն տեսավ խորհրդավոր կառքի աջ անվի մոտ երեք կանանց կերպարանքով («Քավ.», ԻԹ, 121—129), Ռիֆեոսի համար ծառայեցին իբրև մկրտություն։

130. Մեծ խորհուրդ— *նախասահմանության խորհուրդ։*

145. Երկու լույս-հոգիները— *Տրայանոսն ու Ռիֆեոսը։*

ԵՐԳ ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ

5—6. Դու կդառնաս Սեմելեի նիշտ նման...— *այսինքն՝ դու կշլանաս իմ փայլից, մոխիր կդառնաս, ինչպես Կադմոսի դուստր Սեմելեն, երբ նա, խանդոտ Յունոնից դրդված, իր սիրած Յուպիտերին տեսավ բովանդակ պայծառափայլության մեջ (հմմտ. «Դժ.», լ. 1, «Աշլակերպ.» Դ, 256—309. «Թեբեական.», Դ, 184—185)։*

13. Յոթերորդ պայծառ երկինքը— *երևակ մոլորակն ու երկինքը։*

14—15. Որ ընկնելով Առյուծի տակ...— *երևակ մոլորակը, ներկայումս գտնվելով Առյուծ համաստեղության մեջ, նրա հետ ճառագայթներ է արձակում երկիր։*

26—27. Այն արքայի...— *Սատուրն արքայի— ապտծու, որի թագավորության օրոք առասպելական ոսկեդար էր երկրում (հմմտ. «Դժ.», ԺԴ, 96. «Քավ.», ԻԸ, 140)։*

62—63. Այն պատճառով... ինչ պատճառով...— *երանելիների չերգելու և Բեատրիչեի չժպտալու պատճառն այն է, որ Դանտեն, ունենալով մահկանացու մարդու լսողական և տեսողական օրգաններ, չէր դիմանա գերմարդկային երգեցողությանն ու ժպիտին։*

105. Նրան հարցրի, թե ինքն ով էր իսկապես— *Դանտեի խոսակիցը ասովածաբան և կարդինալ Պիեր Դամիանոն է (1007—1072)։*

106. Քո հայրենի քաղաքից— *Ֆլորենցիայից։*

107. Մովսիսերի միջև երկու— *Ադրիական և Տիրենյան ծովերի ափերի միջև։*

Լեռներ— *Ապենինյան լեռնաշղթան։*

109—110. Կատրիա— *բարձր լեռ Ապենինյան լեռնաշղթայի կենտրոնական մասում։*

122—123. Մեղապարտ Պետրոս (Petrus Peccator)— *այսպես էր իրեն կոչում և իր գրվածքներն ստորագրում Պիեր Դամիանոն, որը, ըստ ավանդության, եղել է Ռավեննայի մոտ գտնվող Սանտա Մարիա վանքում։*

125. Խույրը— *կարդինալական խույրը։*

127. Սիմոն Կեփաս— *Սիմոն Պետրոս, Պետրոս առաքյալը (հմմտ. Հովհ. Ա, 42)։* Անոթն Ընտրության— *Պողոս առաքյալը (հմմտ. «Դժ.», Բ, 28)։*

134. Իբրև երկու անասուն մեկ մորթի տակ— *անասուն է ձին, անասուն է և ձիավորը, երբ շեղվում է բանականության ճանապարհից և ղեկավարվում է ցանկություններով, և երկուսն էլ ծածկված են կարդինալական շուրջառով։*

140. Եվ նշացին ձայնով այնպես անազին— *հոգիները բարձրաձայն ճչոցով հայցում են ասծու արդար պատիժը ապականված կղերականների համար (հմմտ. «Դր.», ԻԲ, 13—15)։*

ԵՐԳ ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

16—18. Երկնի սուրը...— *երկնային պատիժը ոչ շատ շուտ է հասնում, ոչ շատ ուշ։*

31. Եթե որ դու տեսնեիր...— *խոսողը Բենեդիկտն է (480—543), բենեդիկտյանների միաբանության հիմնադիրը։*

37—42. Կասինո...— *հռոմեական Կասինում քաղաքը հարավային Իտալիայում, ուր Բենեդիկտը քրիստոնեություն տարածեց և հիմնեց իր վանքը։*

49. Մակար Ալեքսանդրացի— *Ս. Անտոնի աշակերտը, արևելյան վանականության հիմնադիրը։* Ռոմալդ Ռավեննացի— *Կամալդուլցիների միաբանության հիմնադիրը։*

50. Իմ եղբայրները— *բենեդիկտյանները։*

60. Իսկական fa պատկերով— *քո մարդային պատկերով, զերծ այն լույսի քողից, որով պարուրված ես հիմա։*

62. Ամենաբարձր երկնագնդում— *էմպիրեյում։*

67. Երկնագունդն այդ ոչ տեղ ունի, ոչ շարժում— *էմպիլեյը տեղ չունի տարածության մեջ, այսինքն՝ տարածությունից դուրս է և անշարժ է (հմմտ. «Դր.» Ա, 4)։*

70—72. Այս սանդուղքը միանգամ զգաքն ճեռավոր...— *մինչև էմպիրեյ հասնող այս սանդուղքը երազում տեսավ Հակոբ Նահապետը։*

77—78. Սիեմներն էլ վանական...— *իսկ վանական սքեմները նմանվել են փչացած ալյուրով լցված պարկերի, որովհետև ծածկում են ապականված մարդկանց։*

79. Վաշխը նվազ ասելի է երկնքին— *հմմտ. «Դժ.» ԺԱ, 95—96։*

88—90. Պետրոսը...— *Պետրոս առաքյալը։*

93. Կտեսնես, որ ճերմակը սև է դարձած— *կտեսնես, որ սկզբնական առաքինությունները հակադիր չարիքի են վերածվել նրանց հաջորդների մոտ։*

96. Եռ բաշվեցին Կարմիր ծովն ու Հորդանան— *Կարմիր ծովի և Հորդանան գետի ջրերը եռ քաշվեցին Մովսեսից և Հեսուից առաջնորդված հրեա ժողովրդի անցման համար։*

111. Ասողանույշն այն, որ գալիս է Ցլից ճեռ— *Երկվորյակների համաստեղություն։*

115—117. Զեզ ճեռ ծագում և ձեզ ճեռ էր մայր մտնում...— *Արևը (ստեղծողը մանկանացս կյանքիդ) Երկվորյակների համաստեղության հետ էր միացած։*

119. Այն երկինքը...— *ութերորդ կամ աստղավոր երկինքը։*

123. Դժվար բայլը— *Դրախտի ամենավերջի հրաշալիքները ներկայացնելու դժվար փորձը։*

131. Հաղթանակի բանակին— *Քրիստոսի հաղթանակն հռչակող երանելիների խմբին (հմմտ. «Դր.» ԻԳ, 19—21)։*

139. Լատոնայի վառ աղջկան— *Լուսնին (հմմտ. «Քավ.» Ի, 131—132)։*

140—141. Առանց սակայն այն բծերի...— *առանց այն բծերի, որոնք Դանտեն սխալմամբ վերագրել էր Լուսնի մարմնի տարբեր խտությանն ու նոսրությանը (հմմտ. «Դր.» Բ, 59—60)։ Այդ բծերը նկատվում են Լուսնի այն երեսին, որ երեսում է երկրից. մինչդեռ հիմա Դանտեն տեսնում է նրա մյուս երեսը՝ ամբողջովին լուսապայծառ։*

142. Հիպերիոն— *Հելիոսի կամ Արևի հայրը։*

144. Մայան ու Դիոն— *Փայլածուն և Աբուլյակը (համապատասխանորեն որդիները Մայայի և Դիոնի. հմմտ. «Դր.» Ը, 7)։*

145. Յուպիտերը մեղմարար— *Յուպիտերը (Լուսնթագ մոլորակը), զետեղված իր հայր Սատուրնի (=Երեկի) և իր որդի Մարսի (=Հրատի) միջև, մեղմացնում է առաջինի ասունությունը և երկրորդի ջերմությունը։*

154. Գնմիին գեղաթով— *Բեատրիչեի թովիչ գեղեցկությամբ դեմքին։*

ԵՐԳ ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ

11—12. Դեպի այն կողմն երկնքի...— *դեպի միջօրեականը, որտեղ արևը գտնվում է կեսօրին։*

25—26. Տրիվիան—*Լուսինը, Դիանան։* Նիմֆաների մեջ հավերժ— *աստղերի մեջ։*

28—30. Լույսերի մեջ— *լուսավոր հոգիների մեջ։* Մի վառ արև— *Քրիստոսը։* Ինչպես մերը— *ինչպես մեր արևը։*

38. Որ երկնի ու երկրի միջև անցք բացավ— *մեռնելով խաչի վրա, Քրիստոսը վերահաստատեց հաշտությունը երկնքի ու երկրի, աստծու և մարդու միջև (հմմտ. «Քավ.» Ժ, 34—36)։*

56. Պոլիմն— *քնարական բանաստեղծության Մուսան։* Քույրերը մյուս բոլոր— *մյուս բոլոր Մուսաները։*

67—69. Ուղին, որով ճանդուզն նավ է անցնում...— *հմմտ. «Դր.» Բ, 1—15։*

72. Այս պարտեզին դյուրական— *երանելիների այս խմբին։*

73—74. Վարդ— *եկեղեցական օրհներգում Կույս Մարիամը անվանված է «խորհրդավոր վարդ»։* Շուշաններ— *առաքյալները։*

88. Այն ծաղիկը— *Բեատրիչի ակնարկած խորհրդավոր վարդը (տ. 73)։*

93. Որ երկնում ու երկրում եղավ ճաղթական— *Մարիամը երկնքում իր պայծառությամբ գերազանցեց բոլոր երանելի հոգիներին, ինչպես երկրում իր առաքինությամբ գերազանցեց բոլոր մահկանացու էակներին։*

94. Մի չան— *սա Գաբրիել հրեշտակապետն է, որ հետագայում («Դր.» ԼԲ, 94—114) նորից կներկայանա փառաբանելու Մարիամ—* Գոնարին *(տ. 101)։*

112. Կամար կազմող երկնագունդը տիեզերքի— *ինքնորոգ երկինքը։*

134. Գանձերը— *հոգեկան հարստությունները։*

135. Բաբելոնյան աշտարակում— *երկրում։*

139. Նա, ում ձեռքն են բանալիները այդ փառքի— *ակնարկում է Պետրոս առաքյալին, որին Քրիստոսը հանձնեց երկնքի արքայության բանալիները (հմմտ. «Դր.» ԻԹ, 34—36)։*

ԵՐԳ ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ

1. Ա՛վ կոչեցյալք օրհնյալ Գառի ընթրիքի...— *Բեատրիչի այս կոչը ուղղված է երանելիներին և հատկապես առաքյալներին. (Մատթ. ԻԲ, 14, Ղուկ. ԺԴ, 15—17. Հայտ. ԺԹ, 9)։*

8. Ակից— *աստվածային իմաստության ակունքից։*

20. Մի եռանելի— *Պետրոս առաքյալն է։*

38—39. Որով դու ծովի վրա քայլում էիր տեղդեղ— *ըստ ավետարանական ավանդության, Պետրոս առաքյալը հավատի ուժով քայլեց ջրերի վրա՝ նավի մեջ գտնվող աշակերտների մոտ գնալու համար (Մատթ. ԺԴ, 28—29)։*

41—42. Չի դու նայում ես այնտեղ...— *հմմտ. «Դր.» ԺԵ, 61—63. ԺԷ 37—39. ԻԶ, 106—108։*

48. Փաստարկելու համար և ոչ վճռելու— *ուսուցչի կողմից առաջադրվելիք հարցերին ի նպաստ փաստեր բերելու, և ոչ թե վճռելու կամ եզրակացնելու։*

59. Նախամարտիկդ վեհագույն— *հավատի համար առաջին վեհ մարտնչողիդ։*

62. Քո եղբայրը— *Պողոս առաքյալը։*

64—65. Հավատն հիմքն է ամեն բանի հուսացված...— *Դանտեն այստեղ կրկնում է հավատի այն բանաձևումը, որ Պողոս առաքյալը տվել է եբրայեցիներին ուղղած իր Թղթում (ԺԱ, 1)։*

89. Այդ գանձը թանկագին— *հավատը։*

97. Սուրբ Մատյանները երկու— *երկու Կտակարանները։*

126. Ընկերիցդ առաջ իջար գերեզման— *Մարիամ Մագդաղինացուց լսելով, որ Քրիստոսի գերեզմանը դատարկ է, Պետրոս ու Հովհաննես առաքյալները շտապեցին այնտեղ, բայց Պետրոսը առաջինը իջավ գերեզման, համոզված, որ Քրիստոսը հարություն է առել (Հովհ. 1—9)։*

137. Դուք— *առաքյալներդ։*

141. Որին «է» ու «են» կցվում են անթերի— *մեկ և երրյակ աստվածությունը նշելու համար կարելի է հավասարապես կցորդել բայի եզակի ու հոգնակի ձևերը։*

145. Սա է հիմքը...— *այս մեկ և երրյակ աստծու գոյությունը այն հիմքն է, որից ծագում են քրիստոնեական հավատի բոլոր մյուս մասերը։*

ԵՐԳ ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ

5. Փարախից— *Դանտեի ծննդավայրը Ֆլորենցիայից (հմմտ. «Դր.» ԺԶ, 25)։*

9. Մկրտությանս ավազանում— *Ֆլորենցիայի Սան-Ջովաննի եկեղեցում («Դժ.» ԺԹ, 17)։*

15. Քրիստոսի փոխանորդը առաջին— *Պետրոս առաքյալը։*

17—18. Իշխանն հոգևոր...— *Հակոբ առաքյալը։*

22—23. Մեկը իշխաններից... մյուս իշխանին— *Պետրոս առաքյալը Հակոբ առաքյալին։*

29—30. Դու, որ զրեցիր...— *Հակոբ առաքյալը իր Կաթողիկյան Թղթի Ա գլխի որոշ տեղերում ակնարկել է աստծու վեհանձնության և ողորմածության մասին։*

32—33. Դու գիտես, որ եղար նշանը դրա...— *ըստ Ս. Գրքի միջնադարյան մեկնիչների՝ Հակոբ առաքյալը խորհրդանիշն է հույսի, Պետրոս առաքյալը՝ հավատի, Հովհաննես առաքյալը՝ սիրու։ Քրիստոսը ամենից շատ սիրում էր այս երեք աշակերտներին։*

56. Եգիպտոսից Երուսաղեմ երթալու— *երկրից երկինք գնալու, ինչպես հին հրեաները եգիպտական աքսորից գնացին ավետյաց երկիր։*

67. «Հույսն,— ասացի,— սպասումն է...»— *Դանտեն կրկնում է հույսի մասին այն սահմանումը, որ տվել է Պիետրո Լոմբարդոն («Գր.» Ժ 106—108)։*

70—72. Այդ լույսը ինձ շատ աստղերից է գալիս...— *ճշմարտության այդ լույսը ես ստացել եմ սրբազան հեղինակներից և ամենից առաջ սաղմոսերգու Դավթից։*

73—74. «Թող հուսան ի քեզ նրանք...»— *սաղմոս Թ, 11։*

76. Թղթովդ— *տես տտ. 29—30 ծանոթ.։ Հակոբ առաքյալը իր Թղթի մեջ հույսը չի դարձրել հիմնական նյութ, բայց ինչ-ինչ հատվածներում ունի ակնարկություններ հույսի մասին (Ա, 12. Բ, 5. Դ, 7—10. Ե, 8)։*

91—93. Եսային ասում է...— *տես Ես. ԿԱ, 7։*

94. Քո եղբայրը— *Հովհաննես առաքյալը, որ իր «Հայտնության» մեջ (է, 9—17) խոսում է աստծու գահի առաջ հավաքված երանելիների ցնծության մասին։*

98. «Ի քեզ յուսացին» *վերևում հիշված սաղմոսի խոսքերն են (տտ. 73—74)։*

99. Որին ամբողջ խումբը տվեց պատասխան— *մյուս երանելիները պատասխանում են, երգելով սաղմոսի նույն հատվածի շարունակությունը։*

100. Մի լույո շողաց— *սա Հովհաննես առաքյալն է։*

106. Մյուս երկուսին— *Պետրոս և Հակոբ առաքյալներին։*

112—114. Սա նա է, որ իր գլուխը հանգչեցրեց...— *ըստ ավետարանական ավանդության Հովհաննես առաքյալը խորհրդավոր ընթրիքի ժամանակ իր գլուխը հանգչեցրեց Քրիստոսի (Հավալուսնի) կրծքին (Հովհ. ԺԳ, 23)։*

123. Աշխատելով տեսնել այն ինչ չկա աստ— *Քրիստոսի աշակերտները հավատացել էին, որ Հովհաննեսը չի մեռել, այլ երկինք է բարձրացել իր մարմնական հանդերձով։ Այս հավատալիքը, որ տարածված էր միջին դարերում, չի ընդունում Դանտեն։*

128. Երկու էակ— *Քրիստոսն ու Մարիամը։* Իրենց կրկնակ հանդերձով— *իրենց հոգով ու մարմնով։*

138. Ձկարեցա նրան տեսնել— *որովհետև Դանտեի աչքերը շլացել էին Հովհաննեսին պարուրած լույսից։*

ԵՐԳ ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ

2. Այն վառ լույսից— *Հովհաննես առաքյալի լույսից։*

7. Ո՞ւր է ձգտում քո հոգին— *ի՞նչ բանի է ուղղված քո սերը, ի՞նչն է քո սիրո առարկան։*

12. Անանիայի ուժը ունի իր աչքում— *Բեատրիչեն իր նայվածքով կարող է Դանտեին վերադարձնել տեսողությունը, ինչպես Քրիստոսի առաջին հետևորդներից Անանիան Պողոս առաքյալին վերադարձրեց տեսողությունը, երբ նրան մկրտեց («Գործք առ.» Թ, 10—12)։*

16—17. Վեհ բարիքը...— *գերագույն բարիքը, աստված։*

38. Նա— *Հավանաբար Արիստոտելը։*

42. «Ամեն բարիք ես քեզ պիտի արդ ցույց տամ»— *տես «Գիրք Ելից» ԼԳ, 17—19։*

44. Երկրդ վոեմ— նկատի ունի Հովհաննեսի «Հայտնություն» կամ, գուցե, «Ավետարանը»։

52. Քրիստոսի արծվի— Հովհաննեսի։

64—66. Իսկ տերևներն...— քանի որ հավերժական պարտիզպանը աստված է, ըստ ավետարանական պատկերի (Հովհ. ԺԵ, 1), ապա պարտեզը նրա կողմից կառավարված աշխարհն է, իսկ տերևները, աստվածային շնորհով օժտված էակներն են, որոնց պետք է տիրել ըստ նրանց օժտվածության աստիճանի։

93. Որին ամեն մի կին աղջիկ է և հարս— եթե Ադամը հայրն է բոլոր մարդկանց, ապա ամեն կին նրա աղջիկն է, իբրև նրա սերունդ և նրա հարսն է, իբրև նրա սերնդի կին։

106. Ձմարիտ հայելում— աստծու մեջ։

110. Պարտեզում բարձրաբերձ— երկրային դրախտի դյութական անտառում։

115—117. Պատճառն իմ արտահայտման...— Ադամը չորս թվարկված հարցերին պատասխանում է ոչ ըստ նրանց հերթականության, այլ ըստ կարևորության. և պատասխանելով առաջին հերթին երրորդ հարցին, ասում է, որ նեղմից իր արտաքսվելու պատճառը եղավ ոչ թե արգելված պտղի ճաշակումը, այլ դրանով գիտակցաբար խախտելը աստծու կողմից մարդու համար նշված լափն ու սահմանը։

118—123. Չորս հազար և երեք հարյուր երկու ամ...— Ադամը 4302 տարի մնացել է Լիմբոսում, իսկ դրանից առաջ երկրի վրա ապրել է 930 տարի։

126. Անմիտ գործին— Բաբելոնի աշտարակաշինության (հմմտ. «Դժ.» ԼԱ, 77—78. «Քավ.» ԺԲ, 34—36)։

134. I— մեկ, միակ. այսպես է Դանտեն կոչում աստծու սկզբնական անունը։

136. El— եբրայերեն լեզվում աստծու սովորական անունը։

139—142. Եղեմական լեռան վրա երկնածիգ...— պատասխանելով երկրորդ հարցին։ Ադամն ասում է, որ ինքը երկրային դրախտում մնաց ընդամենը վեց ժամ։

ԵՐԳ ՔՍԱՆՅՈԹԵՐՈՐԴ

10. Չորս ջահերը լուսավոր— Պետրոսը, Հակոբը, Հովհաննեսը և Ադամը։

11. Իսկ այն ջահը, որ առաջինն երևաց— Պետրոսը։

13. Եվ նա այնպես փոխվեց...— և Պետրոս առաքյալը կարմրեց բարկությունից, որը նա հետագա տողերում արտահայտում է ապականված եկեղեցու և եկեղեցականների դեմ ուղղված կրակոտ խոսքերով։

22. Նա, ով երկրում բռնի գահս է գրավել— Բոնիֆակիոս Ը պապը։

24. Իմ գերեզմանը— իմ նահատակությամբ սրբագործված գահը (հմմտ. «Գր.» Թ, 139—141)։

25. Աղտեղության և արյան— գարշելի բարքերի և պապական ընչաքաղցությունից ծագած կռիվների մեջ թափված արյան։

26. Դահավիժյալն այստեղից— Սադալելը։

40—45. Իմ արյունով...— հավատի համար մարտիրոսված Պետրոսի և նրա առաջին հետևորդների արյունով։ Լինն դե Կլետը (Անակլետ) պապական գահի վրա Պետրոսին հաջորդեցին Ա դարի երկրորդ կեսին, իսկ Քսեստը, Պիոսը, Ուրբանոսն ու Կալիստոսն՝ Բ և Գ դարերին։

48. Աջակողմյան, ձախակողմյան խմբերի— պապերին հաճելի գուելֆների և պապերին ոչ հաճելի գիբելլինների, ընտրյալների և մերժյալների (հմմտ. Մատթ. ԻԵ, 31—33)։

50. Զինանշան— 1229 թվից պապական բանակը իրեն զինանշան կրում էր եկեղեցու բանալիները։

51. Եվ դրանով յուրյանց դեմ կովեին— հմմտ. «Դժ.» ԻԷ, 85—90։

52. Իմ պատկերը— Պետրոս առաքյալի պատկերը պապական կնիքում։

55. Երկրի ամեն արոտում— եկեղեցու բոլոր թեմերում։

58—59. Պատրաստվում են գասկոնցիք ու կանորցիք...— գասկոնցիները և կահորցիները պատրաստվում են փչացնել մարտիրոսների արյան գնով ձեռք բերված եկեղեցու հոգևոր ժառանգությունը։ Ակնարկում է գասկոնցի պապ Կլեմենտ

ե-ին («Գր.» ԺԷ, 82), անօրեն Հովվին («Գժ.» ԺԹ, 82—87) և կահորցի պապ Հովհաննես ԻԹ-ին («Գր.» ԺԸ, 130—136)։

59—60. Ո՛վ լավ սկիզբներ— *եկեղեցու և պապական իշխանության։*

62. Սկիպիոնի միջոցով— *Հռոմեական կայսրությանն սպառնացող Հաննիբալի դեմ Սկիպիոն Աֆրիկացու տարած հաղթանակի միջոցով («Գր.» Զ, 52—53)։*

69. Երբ արևը Այծեղջյուրին է հասնում— *երբ արևը ձմեռվա եղանակին Այծեղջյուր համաստեղության է միանում (դեկտեմբերի 21-ից մինչև հունվարի 21-ը)։*

79—84. Այն պահից, երբ նայել էի ես ներքև...— *այն պահից, երբ առաջին անգամ ես նայել էի երկրին («Գր.» ԻԹ, 127—153), նկատեցի, որ անցել եմ երկնակամարի այն մասով, որը երկրի վրա համապատասխանում է նախագոտու մեջտեղից մինչև արևմտյան ծայրը հասնող տարածությանը։ Հին աշխարհագրագետները երկրի բնակելի կիսագունդը բաժանում էին յոթը հորիզոնական գոտիների՝ սկսած հասարակածից մինչև հյուսիս։ Այդ գոտիներից առաջինը տարածվում էր Գանգեսից մինչև Գադես (Կադիքս) 180 աստիճան։ Երբ Դանտեն առաջին անգամ երկրին նայեց Երկվորյակների համաստեղությունից, գտնվում էր Երուսաղեմի միջօրեականի վրա. հիմա, անցած լինելով 90 աստիճան կազմող կամարով, ուղղաձիգ գտնվում է Գադեսի միջօրեականի վրա։*

98. Բույնից Լեդայի— *Երկվորյակների համաստեղությունից։ Երկվորյակներ Կաստորն ու Պոլլուքսը, ըստ դիցաբանության, ծնվել են կարապ-Յուպիտերից հրապուրված ու բեղմնավորված Լեդայի ձվից։*

99. Գեռարագ երկնքի մեջ— *իններորդ երկնքի կամ Նախաշարժունի մեջ։*

107. Կենտրոնը— *երկիրը։*

117. Ինչպես տասը հինգերորդով ու կեսով— *ինչպես տասը թիվը որոշվում է իր հինգերորդականով, որ է երկու, և իր կեսով, որ է հինգ (և իրոք տասը արտադրյալն է հինգով երկուսի բազմապատկության), այնպես բոլոր մյուս շարժումները որոշվում են իններորդ երկնքի շարժումով։*

130. Մեկը, քանի թոթով լեզվով է խոսում— *մեկը քանի երեխա է (հմմտ. տ. 133)։*

135. Նրա թաղվելն է ուզում— *որպեսզի ազատվի մոր հանդիմանություններից, կամ որպեսզի վաղաժամ տիրանա նրա ժառանգությանը։*

138. Արեգակի սիրուն դոտեր հմայքին— *Կերկեի («Էնեական», է, 11) կախարդանքներին։*

140. Որ աշխարհում չկա տեր ու տիրական— *որովհետև աշխարհում չկա վստահելի մի ղեկավար։*

142—143. Թայց նախքան որ ընկնի հունվարը զարնան...— *հուլիանյան տոմարի տարին արևային տարուց երկար էր օրվա մոտ հարյուրերորդական մասով և յուրաքանչյուր 128 տարին նրանից հետ էր մնում մեկ օր, այնպես որ հունվարը աստիճանաբար տեղաշարժվում էր և ընկնում գարնանը։ Բեատրիչեն ուզում է ասել, որ շուտով բարեփոխություններ կլինեն և հարկ չի լինի սպասել ,որ «հունվարը ընկնի գարնան»։*

145. Մարիկը— *նա, ով կփոխի իրագործությունների տխուր ընթացքը և մարդկության նավատորմը կտանի ուղիղ ճանապարհով։*

ԵՐԳ ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ

16. Մի կետ— *այս աննյութական, անչափելի, անբաժանելի լուսաճաճանչ կետը յուրատեսակ խորհրդանիշն է աստվածության։*

26. Մի հրե ծիր— *այս հրե ծիրը կամ շրջանակը, ինչպես և մյուս ութ ծիրերը, որոնք տարբեր հեռավորությամբ պտտվում են համակենտրոն Կետի շուրջը, կազմված են հրեշտակային ինը դասերից, որոնք բաժանված են երեք երրյակի։ Առաջին երրյակը կազմում են Սերովբեները, Քերովբեները և Գահերը (տտ. 98—105), երկրորդը՝ Տերությունները, Պետությունները և Ուժերը (տտ. 115—123), երրորդը՝ Իշխանները, Հրեշտակապետերն ու Հրեշտակները (տտ. 124—126)։*

32. Յոհաննի ոտուհանդակ— *Իրիսը կամ ծիածանը (հմմտ. «Գր.» ԺԹ, 11)։*

46—51. Եթե աշխարհն այն կարգով...— *եթե զգայական աշխարհի ոլորտնե-*

ը (երկիրն ու երկինքները) դասավորված լինեին այն կարգով, ինչ կարգով դասավորված են հրեշտակային այս ծիրերը, զոհացած կլինեի քո բացատրությունից։ Բայց ծիրերը պտտվում են այնքան ավելի արագ, որքան ավելի մոտ են իրենց կենտրոնին. մինչդեռ զգայական աշխարհում կատարվում է հակառակը՝ երկնագնդերը այնքան արագ են պտտվում, ինչքան հեռանում են իրենց երկրաչափական կենտրոնից (երկրից)։

54. Սերն ու լույսը— *հմմտ. («Դր.» Իէ, 112։*

56. Կաղապարն ու կաղապարյալը— *գերզգայական աշխարհն ու զգայական աշխարհը։*

64—78. Մարմինները երկնի...— *երկնագնդերի ծավալը համեմատական է նրանց վարող ուժերին. և այդպես էլ պետք է լինի, քանի որ այդ ուժերն ինչքան մեծ են, այնքան լայն ասպարեզ են պահանջում, որի վրա կարողանան գործել իրենց բարերար ազդեցությունը։ Հետևաբար կաղապարի և կաղապարյալի միջև հարաբերակցության մեջ, երկինքներից ամենամեծն ու ամենասրընթացը՝ իններորդ երկինքը, համապատասխանում է աստծուն ամենամոտ հրեշտակային ծիրին, և որ հրեշտակային ծիրերի և երկնային մարմինների միջև համապատասխանությունը պետք է որոնել ոչ թե իրենց շրջանակի չափի մեջ, այլ այն ուժերի քանակի, որ զուգահեռաբար արտահայտվում է և առաջինների և երկրորդների մեջ։*

80. Բոբեասը— *հյուսիս-արևմտյան քամին։*

92—93. Նրանց թիվը շատ ավելի խոշոր էր...— *կայծ-հրեշտակների թիվը շատ ավելի էր, քան $2^{64}-1$ (18 446 744 073 709 551 615),— քանակը ցոլենի հաթիկների, որ, ըստ ավանդության շախմատը հնարողը պահանջել էր պարսից թագավորից ի վարձատրություն իր գյուտի։*

108. Ճշմարտի մեջ— *աստծու մեջ (հմմտ. տ. 39)։*

117. Գիշերվա խոյը— *աշունը, երբ գիշերով տեսանելի է խոյ համաստեղությունը։*

130. Դիոնիսիոս *Արեոպագեցի*— *ենթադրյալ հեղինակը* De coelesti hierarchia *երկի, ուր խոսվում է հրեշտակների դասակարգության մասին ըստ անունների (տես «Դր.» ժ, 116—117 և ծանոթ.)։*

133. Գրիգորը— *Գրիգոր Մեծ պապը (հմմտ. «Քավ.» ժ, 75)։*

139. Հայտնել էր նա, ով բարձրացել էր երկնք— *ակնարկում է Պողոս առաքյալին։*

ԵՐԳ ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ

1—9. Երբ Լատոնի երկու որդիք...— *արևն ու լուսինը* (Լատոնի *երկու որդիները. հմմտ. «Քավ.» Բ, 130—132)։*

11. Հարցերդդ ճշգիվ կարդում եմ...— *պատասխանելով Դանտեի չարտահայտած հարցերին, Բեատրիչեն այժմ խոսելու է հրեշտակների ստեղծման, նրանցից ոմանց ապստամբության և մյուսների հավատարմության, հրեշտակների կարողության և, վերջապես, նրանց անհամար բազմության մասին։*

16. Հավերժ սերը— *աստված։* Ժամանակից առաջ— *արարչագործությունից առաջ։*

18. Սիրով զեղուն գոյեր— *հրեշտակներ։*

19—21. Առաջ էլ նա անգործունյա չէր կեցած...— *արարչագործությունից առաջ էլ աստված անգործ չէր, քանի որ առաջ և հետո հասկացողությունները տեղ չունեն հավերժության մեջ։*

37. Հերոնիմ— *լատին եկեղեցու սուրբ և աստվածաբան (մեռ. 420-ին)։*

40. Այս մասին ճշմարտությունը— *հրեշտակների և զգայական աշխարհի միաժամանակյա ստեղծման մասին ճշմարտությունը։*

44. Շարժիչները— *այսինքն հրեշտակները, որոնց ոահմանված է երկնագնդերը պտտեցնելու գերը (հմմտ. «Դր.» Բ, 128)։*

46. Ուր— *տարածությունից դուրս՝ էմպիրեյում։* Երբ— *հավերժության մեջ։* Ինչպես— *վայրկենապես լրիվ, ավարտուն երկինքների ու նախանյութի հետ միաժամանակ։*

56—57. Անիծյալի— *Սադայելի։* Որին նշված դու տեսար...— *հմմտ. «Դժ.» ԼԴ, 110—111։*

84. Բայց վերջիններն ավելի են մեղանչում— *այսինքն՝ նրանք, որոնք իրենք էլ չեն հավատում իրենց ասածներին և ասում են միայն ինքնատիպ և հնարամիտ երևալու համար։*

91. Նրա ցանքը— *Սուրբ Գրքի հայտնած ճշմարտությունների տարածումը։*

97—102. Ասում են, թե լուսինն իբր ետ դարձավ— *իրրև օրինակ եկեղեցու բեմերից քարոզված առասպել-հեքիաթների (տ. 105), Դանտեն բերում է կարծիքը նրանց, որոնք ճգնում են գիտական բացատրություն տալ Քրիստոսի մահվան ժամանակ տեղի ունեցած խավարման երևույթին։*

103. Լապոներ ու Պիգոներ— *միջնադարյան Ֆլորենցիայում տարածված անուններ։*

118—120. Թոշուն...— *դև, որ եթե ամբոխը նկատի, շուտով կհասկանա թե ինչ արժեք ունեն և ինչքան վստահության արժանի են այդպիսի քարոզիչների խոստացած թողությունները կամ ինդուլգենցիաները։*

124—126. Սուրբ Անտոնի խոզն ապրում է դրանով...— *ժողովրդի այս գյուրահավատությունից օգուտ են քաղում անտոնյան վանականները իրենց խոզերի հետ և նրանցից ավելի վատ խոզերը, հավատացյալների անկեղծ ողորմածությունների ու նվիրատվությունները փոխանակելով կեղծ դրամներով, այսինքն անարժեք ինդուլգենցիաներով։ Սուրբ Անտոն ճգնավորը սովորաբար ներկայացվում էր ոտքերի մոտ մի խոզով (փորձիչ դևի խորհրդանիշ). բացի դրանից, անտոնյան վանականները սովորություն ունեին պահելու խոզեր, որոնք բուծվում էին հանրային միջոցներով։*

130. Սրանք— *այս հրեշտակները։*

133—135. Դանիելի հայտնությանն...— *Դանիել մարգարեի «հազարք հազարաց» և «Բիւր բիւրուց» արտահայտությունները հրեշտակների մասին (Դանիել է, 10) ցույց են տալիս միայն նրանց անհամար բազմությունը (հմմտ. «Դր.» ԻԸ, 92—93)։*

136. Լույսն առաջին— *աստվածային լույսը։*

143. Հայելիներ— *հրեշտակներ։*

ԵՐԳ ԵՐԵՍՈՒՆԵՐՈՐԴ

1—13. *Տողերի իմաստն է. «երբ մոտ մի ժամ է մնում արևի ծագմանը, առաջին աստղերը սկսում են աղոտանալ, ապա բոլորը մեկ-մեկ հանգում են և ծագում է արշալույսը (արևի պայծառ ճառագիշերը). այսպես իմ աչքից քիչ-քիչ չքանում են հրեշտակային ծիրերը»։*

23. Մի կատակերգ կամ ողբերգ— *մի հեղինակ կատակերգության կամ ողբերգության։*

38. Մեծագույն մարմնից— *Նախաշարժունից, որ մեծագույնն է երկնային մարմիններից։*

39. Երկինքը ջինջ, լուսաճոռդ— *Էմպիրեյը։*

43—45. Երկու փաղանգ լուսափառ— *առաջին փաղանգը կազմում են հրեշտակները, երկրորդ փաղանգը՝ սրբերը։*

95. Այն կայծերն ու ծաղիկները— *հրեշտակներն ու սրբերը։*

112—114. Այսպես բոլոր հոգիները երանյալ...— *այսպես բոլոր սուրբ հոգիները բազում աստիճաններով բոլորված արևի շրջագծից ավելի լայն ծիր կազմող լույսի լճի շուրջ (տտ. 103—105), զմայլանքով նայում էին նրա մեջ, իրրև հանդիսատեսներ մի անծայրածիր ամֆիթատրոնի։*

117. Բացված վարդը— *երանելիների այդ բազմաստիճան և անսահման շրջանակը Դանտեին ներկայանում է իրրև անսահմանորեն բացված վարդ։*

121. Այնտեղ նույնն են մոտական ու հեռական— *Էմպիրեյում մոտավոր և հեռավոր առարկաները երևում են հավասար հստակությամբ։*

130. Մեր քաղաքը— *երկնային Երուսաղեմը։*

136—141. Հենրիկ է *Լյուքսեմբուրգցի (1262—1313)— կայսր ընտրվեց 1308*

թվին, 1310 թվին եկավ Իտալիա այնտեղ վերահաստատելու համար կայսերական իշխանությունը. 1313 թվին փորձեց կոտրել գուելֆների, հատկապես Ֆլորենցիայի գուելֆների դիմադրությունը, բայց հաջողություն չունեցավ և մահացավ նույն թվի օգոստոսին։

142—148. Այն ժամանակ եկեղեցու հովվապետ կդառնա...— Հենրիկ Է-ի օրոք Հռոմի պապ կդառնա Ներսամիտ Կլեմենտ Ե-ը («Դր.» ԺԷ, 82)։ Բայց աստված նրան կպատժի, նետելով Դժոխք, սիմոնականների ձորը, որտեղ կգնա գրավելու այն տեղը, ուր առաջ ընկել էր Բոնիֆակիոս Ը պապը (հմմտ. «Դժ.» ԺԹ, 76—87)։

ԵՐԳ ԵՐԵՍՈՒՆՄԵԿԵՐՈՐԴ

2. Սուրբ փաղանգը— երանելի հոգիները։

4. Մյուս փաղանգը— հրեշտակները։

12. Իրենց Սերն անշեջ— իրենց անշեջ սիրո առարկան՝ աստված։

25. Երանելի հոգիներ նոր ու հին— նոր և հին Կտակարանների արդար հոգիները։

27. Կետին— աստվածությանը։

30. Մեր մերկին անպարփակ— մեր երկրային աշխարհը հուզող ու ծվատող կրքերի փոթորիկներին։

32—33. Հելիկեն— Մեծ Արջ համաստեղություն։ Իր որդու հետ— Փոքր Արջ համաստեղության հետ։ Ըստ դիցաբանության, Հելիկե հավերժահարսը և նրա որդի Արկադը խանդոտ Յունոնի ձեռքով համապատասխանորեն փոխվեցին Մեծ և Փոքր Արջ համաստեղություններին (հմմտ. Օվիդ. «Այլակերպ.» Բ, 401—530)։

59. Մի պատկառելի ծերունու— սա բուրգունդցի Բեռնարդն է (տ. 102), Կլերվոյի աբբայության հիմնադիրն ու առաջին աբբան (1090—1153). միստիկ աստվածաբան, Աբելարի ռացիոնալիստական ուղղության հակառակորդ, երկրորդ խաչակրաց արշավանքի նախաձեռնողը։

68. Դու կտեսնես նրան բազմած այն գահին— երկնային ամֆիթատրոնի երրորդ շարքում, սկսած ամենաբարձր աստիճանից, Բեատրիչեն ունի իր գահը Հռաքելի կողքին (հմմտ. «Դր.» ԼԲ, 7—9. «Դժ.» Բ, 102)։

73. Որոտ ծնող մթնոլորտից բարձրացույն— տես «Քավ.» ԻԸ, 97—102 ծանոթ.։

81. Դժոխք իջնել իմ վերկության ի խնդիր— տես «Դժ.» Բ, 52—118։

85. Գերությունից— մեղքերի գերությունից։

100. Թագուհին երկնի— Մարիամ աստվածածինը (տ. 116)։

104. Վերոնիկա (vera icona. ճշմարիտ պատկեր)— այսպես էր կոչվում Հռոմի սուրբ Պետրոսի բազիլիկայում պահվող այն դաստառակը, որով Քրիստոս սրբրեց իր քրտնաթոր դեմքը Գողգոթա բարձրանալիս, նրա վրա թողնելով սեփական պատկերի գրոշմը։

125. Ձիակառքն արևի— արևը իր ձիակառքով, որ վարեց Ֆայեթոնը։

127. Ոսկե բոց (oriflamme)— ֆրանսիական թագավորների մարտական կարմիր դրոշը։ Այստեղ, ոսկե բոց ասելով, ակնարկում է երկնային վարդի կամ ամֆիթատրոնի ամենաբարձր մասը, որի կենտրոնում շողում էր Մարիամը։

ԵՐԳ ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

1. Հայեցողն այն— Բեռնարդը։

4—6. Այն կինը, որ հաջորդ շարքում է նստած...— դրախտային վարդի կամ ամֆիթատրոնի վերևից երկրորդ շարքում նստած է Եվան։

7—9. Հռաքելը— Հակոբ նահապետի երկրորդ կինը, հայեցողական կյանքի խորհրդանիշ։

10. Սառա— Աբրահամի կինը և Իսահակի մայրը։ Հուդիթ— հերոս կին, որ

հրեաներին ապաստեց ասորեստանցիների սպառնալիքներից, սպանելով Հողոփեռնին (հմմտ. «Քաջ.» ԺԲ, 58—60)։ Ռեբեկա— *Աբրահամի որդի Իսահակի կինը։*

11—12. Նա...— *Հաստիք, մեծ տատը սաղմոսների հեղինակ Դավիթ թագավորի։*

16—21. Իսկ յութերորդ շարքից մինչև...— *իսկ յոթերորդ շարքից մինչև վերջին շարքը մեծյանց հաջորդում են հին Կտակարանի կանայք։*

28 Երկնի թագուհու— *Մարիամի (հմմտ. տ. 119)։*

31. Հովհաննու արքազան— *Հովհաննես Մկրտչի։*

35. Ավգուստին— *եկեղեցու նշանավոր հայրերից մեկը, աստվածաբան (354—430)։*

38. Երկու կերպ դավանողներն հավատի— *և՛ գալիք Մեսիային, և՛ եկած Մեսիային հավատացողները։*

49. Բայց դու երկմիտ՝ լռություն ես պահպանում— *Դանտեի երկմտությունը կամ տարակույսը այն է, թե ինչո՞ւ մանուկները, որոնք չեն գտնեցել սեփական արժանիք, գտնվում են Դրախտում, զբաղեցնելով երկնային վարդի կամ ամֆիթատրոնի ստորին աստիճանները։*

67—69. Իսկ այդ փաստը քեզ հայտնի է Սուրբ Գրքից...— *Սուրբ Գրքում ակնարկվում է Իսահակի և Ռեբեկայի երկվորյակ որդիների՝ Եսավի ու Հակոբի տարբեր ճակատագրի մասին, դեռ նախքան նրանց ծնվելը (հմմտ. «Դր.» Ը, 130)։*

76—84. Սկզբնական շրջանում...— *աշխարհի վաղագույն ժամանակաշրջանում՝ Ադամից մինչև Աբրահամ, մանուկների փրկության համար բավական էր, որ նրանց անմեղությանը ավելանար իրենց ծնողների հավատը դեպի գալիք Քրիստոս։ Հաջորդ շրջանում, Աբրահամից Քրիստոս, բացի դրանից անհրաժեշտ դարձավ արտների ենթարկումը թլփատության։ Վերջապես քրիստոնեության դարաշրջանում փրկության համար անհրաժեշտ պայման դարձավ մկրտությունը։*

85. Այն դեմքին— *Մարիամի դեմքին։*

94. Սիրո ոգին— *Գաբրիել հրեշտակապետը (հմմտ. տտ. 112—114)։*

106. Նրան— *Բեռնարդին։*

121—123. Այն, որ նրա ձախակողմում է նստած...— *Մարիամի ձախ կողմինը և վարդի մի արմատը Ադամն է («Դր.» ԻԶ, 115—117), առաջինը գալիք Մեսիային հավատացողներից։*

124—126. Աջ կողմինը...— *Պետրոս առաքյալն է («Դր.» ԻԳ, 139. ԻԴ, 34—36), առաջինը եկած Մեսիային հավատացողներից։*

127—130. Այն, որ կյանքում նախատեսեց ու հայտնեց...— *Հովհաննես ավետարանիչը, որ իր «Հայտնության» մեջ մարգարեաբար գուշակեց եկեղեցու (աստծու հարսի) ապագա հալածանքները, նստած է Պետրոսի մոտ։*

130—132. Մյուսի մոտ է նա...— *Ադամի մոտ է նստած Մովսեսը, որի առաջնորդությամբ հրեա ժողովուրդը դուրս եկավ Եգիպտոսից և դեպի Ավետյաց երկիրը ուղևորվելու ճանապարհին սնվեց միայն մանանայով։*

133. Աննա— *Մարիամի մայրը։*

136—138. Լուչիա— *Սիրակուսայի մարտիրոսուհին։ Անհանդստանալով Դանտեի ճակատագրի համար, նա Բեատրիչեին ուղարկեց բանաստեղծին օգնելու և փրկելու կորստից (հմմտ. «Դժ.» Բ, 100—108)։ Նա նստած է մարդկային ընտանիքի նախահայր Ադամի դեմաց։*

ԵՐԳ ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ

1. Ո՛վ մայր կուսան և դուստր քո զավակի— *այս առաջին տողը արդեն հատկանշում է Մարիամի առանձնաշնորհյալ վիճակը— կույս և միաժամանակ մայր, աստուծո դուստր և միաժամանակ նրա մայրը։*

3. Սահմանանիշ հավերժական խորհուրդի— *աստվածային խորհրդի վճռով սահմանվել էր, որ Մարիամով պետք է սկսվեր փրկանավորված մարդկության պատմությունը։*

5—6. Ստեղծիչը նրա...— *այսինքն՝ մարդկային բնության ստեղծողը հոժարեց դառնալ մարդկային ստեղծյալ և կոչվել «մարդու որդի»։*

7—9. Քո արգանդում սերը նորից բորբոքվեց...— *քո արգանդում Քրիստոսի հղացումով վերահաստատվեց սիրո կապը աստուծո և մարդկանց միջև (հմմտ. «Քավ.» ժ, 41—42)։*

65—66. Այսպես նողմից ցրվում էին Սիբիլյան պատգամները— *ըստ ավանդության, կումեացի մարգարեուհի Սիբիլլայի պատասխանները գրվում էին տերևների վրա, որոնց քամին, թափանցելով քարանձավի մեջ, դեսուդեն էր ցրում (հմմտ. Վիրգ. «Էնեական.» Գ, 443—451)։*

85—93. Եվ ես տեսա նրա խորհուրդը...— *Դանտեն աստվածային լույսի կամ էության մեջ տեսնում է միաձուլումը այն ամենի, ինչ բաժանված ու ցրված է երեվում տիեզերքում։*

94—96. Մեկ ոտպեում ես զարմացա ավելի...— *աստվածային խորհրդին ի տես Դանտեն ավելի է զարմանում, քան Նեպտունը զարմացավ քսանհինգ դար առաջ, երբ տեսավ Արգոնավորդների արշավանքը բաց ծովում (հմմտ. «Դր.» Բ, 16—18)։*

115—120. *Դանտեին երևացած երեք ծիրերը երեք տարբեր գույներով և հավասար մեծությամբ՝ աստվածային երրորդության երեք անձերն են։ Առաջինը՝ ցոլացնող ծիրը, հայր-աստվածն է, ցոլացվածը՝ որդի-աստվածը, իսկ երրորդը՝ սիրո վառ հուրը, որ հավասարապես բխում է հորից ու որդուց, մուրբ հոգին է։*

127—132. Իսկ այն ծիրը...— *երկրորդ ծիրի մեջ, որ ցոլացումն է առաջինի, Դանտեն տեսնում է աստվածամարդու պատկերը։*

133—138. Ինչպես նիզ է երկրաչափը գործ դնում...— *ինչպես երկրաչափը ճգնում է լուծել շրջանակի կվադրատուրայի խնդիրը և լուծման ոչ մի հիմք չի գտնում, այսինքն չի գտնում ճիշտ հարաբերակցությունը տրամագծի և շրջագծի միջև, այսպես Դանտեն չի կարողանում հասկանալ թե ինչպես և ինչ հարաբերակցությամբ են միաձուլված մարդկայինն ու աստվածայինը աստվածամարդու մեջ։*

145. Աստղեր— *տե՛ս «Դժ.» ԼԴ, 139 ծանոթ.։*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գժոխք 5
Քավարան 171
Դրախտ 335
Մանրագրություններ . . . 501

ԴԱՆՏԵ
ԱԼԻԳԻԵՐԻ

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Հրատարակության է
ներկայացրել
համալսարանի
արտասահմանյան
գրականության
ամբիոնը

Հրատարակչության
խմբագիր
Ս. Ե. Փաճոսյան

Նկարիչ
Լ. Ա. Սադոյան

Գեղարվեստական
խմբագիր
Ն. Ա. Թովմասյան

Տեխնիկական
խմբագիր
Ֆ. Գ. Տոնոյան

Վերստուգող
սրբագրիչ
Ս. Ա. Ղալթախչյան

ԻԲ 467
Պատվեր 677։ Տպաքանակ 30000։
Հանձնված է շարվածքի 13. 05. 1982 թ.։
Ստորագրված է տպագրության 11. 01. 1983 թ.։
Թուղթ № 2, չափսը՝ 60×84 1/16։
Տառատեսակը՝ «Նորք»։
Տպագրության եղանակը՝ «Բարձր»։
Հրատարակչական 29,7 մամուլ։
Տպագրական 37,5 մամուլ
=31,8 պայմանական մամուլի
+1 ներդիր։
Գինը՝ թղթե կազմով 2 ռ. 40 կոպ.,
լաթե կազմով 2 ռ. 60 կոպ.։
Երևանի համալսարանի հրատարակչություն,
Երևան, Մռավյան փող. № 1։
Издательство Ереванского университета,
Ереван, ул. Мраряна № 1.

Շարվածքը կատարվել է
Երևանի համալսարանի տպարանում,
Երևան, Արովյան փող. № 52։
Տպագրվել է Հակոբ Մեղապարտի
անվան պոլիգրաֆկոմբինատում,
Երևան, Տերյան-փող. № 91։

«Ուսանողի գրադարան» մատենաշարով

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

Մովսես Խորենացի, Հայոց պատմություն
Խաչատուր Աբովյան, Վերք Հայաստանի
Սփյուռքահայ բանաստեղծություն
Հին Արևելքի պոեզիա
20-րդ դարասկզբի ռուսական բանաստեղծություն
Ֆրանսիական կլասիցիզմ
Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն
Ֆրիդրիխ Շիլլեր, Պատմական դրամաներ

ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

Ագաթանգեղոս, Հայոց պատմություն
Եղիշե Չարենց, Պոեմներ, բանաստեղծություններ
Վրացական պոեզիա
20-րդ դարի արտասահմանյան արձակ, հ. I